



ԹՈՒՏՈՒ

# ԱՌԱՋՈՒՄ

ՄԱՀՈՒԱՆ ՎԱԹՍՈՒՆԱՄԵԱԿԻՆ ԱՓքին



1979



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶԵ ՄԵԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ



## ԳԵՐԱԶԱՆՑՈՐԵՇՆ ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆԸ

Ուստո՞մ:

Զաւարեանի մահէն ետք, եւ յատկապէս 1915-1918 բախտող քառամեակին, միակ վերապրողը Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հիմնադիր Երրորդութենէն:

ԱՅ՝ որուն յեղափոխական գաղափարականն ու սլաքը, որուն կազմակերպչական տաղանդն ու աշխատունակութիւնը, անհատականութիւնը եւ աներեր վճռակամութիւնը ամենէն աւելի ուժեղ դրոշմը ձգեցին մեր կուսակցութեան կառոյցին, ըմբռնումներուն, աշխարհահայեացըին եւ գործելակերպին վրայ:

Ուստո՞մ ամբողջ երեք տասնամեակ ներկայ ամենուրեք, Ժընեվե Թիֆլիս, Կարինէն Պարսկաստան, Պուլկարիայէն ու Պոլսէն Բագու, լղացած, կազմակերպած, երթեմն նաեւ ուղղակիօրէն դեկավարած Դաշնակցութեան ապստամբական եւ զինական ձեռնարկներէն շատերը՝ Խանասորի արշաւանք եւ Պարսկական Յեղափոխութիւն, Եկեղեցական կալուածներու գրաւման դէմ ծառացում եւ հայթաթարական կոհիներ, Հ. Յ. Զինուորական Վարժարան եւ Բագուի հերոսամարտ:

Ուստո՞մ գերազանցօրէն Յեղափոխականը եւ մեծ Վարպետը գործին: ԱՅ՝ որուն համար կենադի աշխատանքը չէր ճանչնար «մեծ» ու «փոքր» տեսակներ, որ միշտ ամստեղ էր ուր կար վտանգ կամ ընդյատակեայ ձեռնարկ, յեղափոխական կոիւ կամ քաղաքական-յարաբերական գործ. որ խմբագիր էր բայց ի պահանջել հարկին՝ նաեւ գրաշար, կազմակերպական գործից էր եւ ուսուցիչ միաժամանակ, դեկավար էր բայց Յեղափոխութեան մարտի՛կ միանգամայն:

Ուստո՞մ, վերջապէս, որուն առինքնող եւ հմայող դէմքը չի պարփակուիր միայն Հայ Յեղափոխութեան եւ հայ ազատագրական պայքարի սահմաններուն մէջ. որ ընկերակիցն ու մտերիմն էր Ուստական Յեղափոխութեան տիտաններուն, կեղրոնական բեւոններէն մէկը՝ պարսիկ ժողովուրդի յեղափոխական կոուին. որ անժխտելի

հեղինակութիւն էր ե՛ւ մակեդոնացի, ե՛ւ պոլկար, ե՛ւ քիւրտ, ե՛ւ վը-րացի յեղափոխականներուն մօտ:

Անոր մահուան վաթսունամեակին առթիւ, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիւրոն, բոլո՞ր մարմիններն ու ընկերները կը խոնարհին Մեծ Յեղափոխականին ու Գործի Վարպետին անկորնչելի վաստակին, ճառագայթող Էութեան ու յաւերժօրէն անմահ յիշատակին առցեւ:

Ուստոմի սակաւաթիւ խմբագրականներուն, կորուստէ փըրկըւած քանի մը տասնեակ նամակներուն եւ անոր խառնուածքին ու գործունեութեան կենդանի վկայութիւնը բերող յուշագրութեանց եւ յօդուածներու շարքի մը ընդմէջն՝ անոր մահուան վաթսունամեակին նուիրուած այս հատորը թող նոր ներշնչարան մը ըլլայ մեր յեղափոխական եւ ազատագրական պայքարի ներկայ ու գալիք սերունդներուն համար: Ո՛չ մեկ հատոր կրնայ անշուշտ սպառիչ կերպով պատկերել եւ կատարելապէս բնութագրել Ուստոմի եւ Ուստոմներու դիմագիծը, կեանքն ու վաստակը: Անոնց պատմութիւնը Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պատմութիւնն է՝ մասնաւրաբար իր առաջին երեսնամեակի արիւնոտ այլ պանծալի շրջանին, որ մեզ կերտեց իբրեւ մարդ, իբրեւ հայ եւ իբրեւ անկախ պետականութիւն: Գիր ու յուշ ըլլալէ առաջ՝ ապրում է այդ պատմութիւնը, հաւատոյ հանգանակ եւ անխորտակելի կամքի մը արտայայտութիւն:

Ուստոմի եւ Ուստոմներու յաւերժական ներկայութեամբ, այդ ապրումը, այդ հաւատքն ու անխորտակելի կամքն է որ կը փոխանցըլին այսօր մեզի, բայց մանաւանդ մեր երիտասարդ սերունդին, իբրեւ սրբազն եւ ընդմիշտ կենդանի աւանդ:

Յունիս 1979





## ԱՅՍ ՀԱՏՈՐԸ

Ռոստոմի մահուան վարսունամեակին առիթով հրատարակուող այս հատորը, հիմնականին մէջ, կը պարտինք Փրեզնոյաբնակ բնիկը Յովակիմ Յովակիմեանի (Յ. Արշակոնի) հաւաքումի բծախնդիր աշխատանքին, ինչպէս նաև, մասամբ, անոր նիւրական նիզերուն:

Լուսավառնէններու, մեժնազրուած թէ ձեռագիր արտագրութեանց ձեւին տակ, մեր վաստակաւոր բնկերը մեզի հայրայրած է ներկայ հատորին մէջ տեղ գտած գրեթէ բոլոր գրութիւնները: Եթ այդ համբերատար աշխատանքին վրայ, մեճք կատարած ենք կարգ մը յաւելումներ միայն, ինչպէս նաև ներկայացման շարքի մասնակի վերադասաւորում մը:

Հատորին մէջ տեղ գտած գրութիւնները, Ռոստոմին թէ Ռոստոմի մասին, մեծ մասով անտիպներ չեն: Անոնք բաղուած են մեր պարբերական մամուլէն, յատկապէս ԴԻՕՇԱԿԻ, ՀԱՅՐԵՆԻՔ ամսագրի եւ Վէլի համարներէն, ինչպէս նաև ԴԻՒԱՆ Հ. ՅԱՇՆԱՑՈՒԹԵԱՆ երկու հատորներէն. ՅՈՒՇԱՊԱՏՈՒՄԷԿԻ եւ կուսակցական թէ անհատական զանազան այլ հրատարակութիւններէ: Օգտագործուած աղբիւրը, իբրև կանոն, յիշատակուած է իւրաքանչիւր գրութեան տակ:

Հատորը կը բաղկանայ գլխաւոր չորս մասերէ:

Առաջին մասը կոչուած է տալու. Մեծ Յեղափոխականին բարոյական դիմագիծն ու արժէքը՝ հիմնական գիծերու մէջ, յարակցուած անոր կեանիք ամփոփ պատմութեան եւ գործունեութեան կարեւոր հանգրուաններուն հետ: Այս բաժնին մէջ յաջորդարար տեղ գտած են ողբացեալ Սիմոն Վրացեանի ՅՈՒՇԱՊԱՏՈՒՄԷԿԻ՝ Ռոստոմի նուիրուած գլուխը, Միքայէլ Վարանդեանի

բնութագրումը՝ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ գրքի (Ա. հատոր) «Ղեկավարները» գլուխէն առնուած, Ծոստումի մահուան տասնամեակին առիրով ԴՐՈՇԱԿի մէջ լոյս տեսած «Ծոստում եւ Արամ» ակնարկը եւ Զապէլ Եսայեանի «Յիշողութիւններ եւ տպաւորութիւններ»ը. Ծոստումի մասին, 1920 Յունուարի ՎԵՐԱԾՆՈՒՆԴի համարներէն առնուած:

Երկրորդ բաժինը յատկացուած է ԴՐՈՇԱԿի այն խմբագրականներուն եւ յօդուածներուն որոնք, Սիմոն Վրացեանի, Վահան Նաւասարդեանի եւ ուրիշներու վկայութեամբ, կը պատկանին Ծոստումի գրչին, ինչպէս նաև Ծոստումի կարգ մը այլ գրութիւններուն (Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆԻ հասորներէն եւ զանազան այլ հրատարակութիւններէ բաղուած): Զանց ըրած ենք ԴՐՈՇԱԿի 1895–97ի համարներուն մէջ լոյս տեսած կարգ մը բրդակցութիւններ եւ յօդուածներ («Նամակներ պարսկա-տանկական սահմանագլխից», «Նամակ Կարինից» եւ այլ խորագիրներով), որոնք կը վերագրուին Ծոստումին, բայց որոնց Ծոստումի կողմէ գրուած ըլլայուն ապահով փաստը չունինք: Զանց ըրած ենք նաև Հ. Յ. անդրանիկ Մրագրի ներածականը որ, ամենայն հաւանականութեամբ, նոյնպէս կը պատկանի Ծոստումի գրչին (Քրիստափորի եւ Սիմոն Զաւարեանի աշխատակցութեամբ), բայց որ բանի մը առիթներով հրատարակուած է արդէն<sup>(1)</sup>: Ի դեպ. անձնութելի է նաև Ծոստումի, եթէ ոչ ոնին, գէրշունչին ներկայութիւնը Հ. Յ. Երկրորդ (1907ի) Մրագրին մէջ եւս<sup>(2)</sup>:

Երրորդ բաժինը յատկացուած է Ծոստումի իննուուն նամակներու, որոնք լոյս տեսած են ԴԻԻԱՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ գոյզ հասորներուն, Վ.ԿՄի համարներուն եւ զանազան այլ հրատարակութեանց մէջ: Նկատի ունեցած ենք ե՞ւ Ծոստումի կողմէ անձնապէս սոորագրուած նամակները, ե՞ւ անոնք, որոնք գրուած են ԴՐՈՇԱԿի Խմբագրութեան կամ Արեւմտեան Բիւրոյի անունով, բայց բացայայտօրէն կը պատկանին Ծոստումի գրչին

(1) Վերթին անզամ՝ ներթեր Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ շարքի բ. հասորին մէջ, էջ 11–14: Տեսնել նաև, նոյն հասորին մէջ, էջ 8, անդրանիկ Մրագրի մասին տրուած բացատրութիւններն ու համապատասխան ծանրագրութիւնները:

(2) Տեսնել ներթեր Հ. Յ. Դ. ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ շարքի գ. հասորը, ամբողջութեամբ յատկացուած Հ. Յ. Դ. Չորրորդ Ընդհանուր Ժողովին (1907): Ծոստում մաս կը կազմէր նմի Յամանամողովին (տեսնել ի մասնաւորի էջ 294):

(Դիմակնի հատորներուն մէջ Սիմոն Վրացեանի կողմէ տրուած վկայութեամբ)։ Հ. Յ. Դ. Կեդրոնական արխիվի հնագոյն թրդթաճրաբներու արագ ժննութիւնները հնարաւորութիւն տուաւ մնզի ունենալու լուսապատճենները Ռոստոմէն կարգ մը այլ նամակներու, որոնց նոյնական արխիվին մէջ վստահաբար կը գտնուին Ռոստոմէն այլ նամակներ ու ձեռագրեր՝ տակաւին անտիպ։ Անոնք ժամանակի բնիքներն կը հրատարակուին անշուշտ Նիկիթեր Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ շարքին մէջ։

Հատորի չորրորդ եւ վերջին մասը յատկացուած է զանազան հեղինակներու, յեղափոխական ընկերներու եւ յօդուածագիրներու կողմէ Ռոստոմի մասին գրուած յուշերու եւ տպաւորութիւններու, ինչպէս նաև Հ. Յ. Դաշնակցութեան պատմութենէն կարգ մը դրուածներու (պայքար հայ եկեղեցական կալուածներու գրաւման ցարական որոշման դէմ, մասնակցութիւն Պարսկական Յեղափոխութեան, Բագուի հերոսամարտ եւն.), որոնց մէջ կարեւոր, յանախ նաև որոշիչ դեր ունեցած է Ռոստոմ։ 43 յօդուածներ տեղ գտած են այս բաժնին մէջ, սկսելով Սիմոն Վրացեանի «Կենսագրական ուրուագիծ»-էն (առնուած ԴԻՌՕՆԱԿի 1929 Ցունուար-Փետրուարի համարէն) եւ յանգելով ԱԶԴԱԿ ՇԱԲԱԹՕՐԵԱԿ-ԴԻՌՕՆԱԿի «Առաջնորդը» Խմբագրականին (24 Փետրուար 1974, Ռոստոմի մահուան յիսունքինզամեակին առքիւ)։ Երկար յօդուածներու պարագային յանախ գոհացած ենք հատուածներով միայն, զանց ընելով այն բաժննեները, որոնք ուղղակի կերպով չեն առընչուիր Ռոստոմի անձին կամ գործութեութեան հետքայց չենք վարանած լրիւ տալու առանձին շահեկանութիւն ներկայացնող կարգ մը յօդուածաշարքեր՝ ինչպէս, օրինակ, Արամ Ալշուշեանի «Ռոստոմը Բագրում» երկար յուշագրութիւնը, առնըւած ՀԱՅՐԵՆԻՔ ամսագրի 1956-57ի համարներէն։ Ըստ հետարաւորի յարգուած է դէպքերու ժամանակագրական կարգը (Ռոստոմի ուսանողութենէն մինչեւ անոր մահը)։

Սիմոն Վրացեանի «Կենսագրական ուրուագիծ»ը կ'ամբողջացնէ միեւնոյն հեղինակի «Ռոստոմ» ակնարկը, ՑՈՒՆԱՊԱՏՄՈՒՄ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ հատորէն առնուած եւ տեղ գտած ներկայ աշխատութեան առաջին մասին մէջ։ Միասնաբար, այս երկու գրութիւնները կու տան Մեծ Յեղափոխականի կեանքին, գործութեութեան եւ բարոյական դիմագծին մասին մօտաւորապէս

ամբողջական պատկեր մը: Մեծ բացական իրասպէ՛ս ամբողջառ-  
կան պատկերն է սակայն, առանձին հասոր մը (եթէ ոչ հասոր-  
ներ)՝ նուիրուած Ռոստոմի կեանիքն, դէմքին, զործունէկուրեան:  
Յաւալի է նկատել, որ Հ. Յ. Դաշնակցուրեան հիմնադիրներուն  
մասին մենք ցարդ չունինք ֆիշ թէ շատ ամբողջական ուսումնա-  
սիրուրի հիմներ<sup>(3)</sup>, իսկ Ռոստոմի մասին ոչ իսկ յուշագրական թէ  
Քննական բնդիանուր ակնարկ մը՝ նման ողբացեալ ընկեր Արշա-  
լյան Աստուածառորեանի «Արամք» աշխատուրեան, որ առաջին  
եւ հիմնական բաժինը կազմած էր տասը տարի առաջ հրատա-  
րակուած համանուն հասորին: Գիտենք որ իր պաշտած Ռոստո-  
մին առանձին հասոր մը նուիրելը կեանքի առաջդրանքներէն  
մէկն էր եղած մեր մեծ բնկերոց՝ Սիմոն Վարցեանի, եւ իր վեր-  
ջին տարիներուն նման աշխատանք մը տակաւին իրագործած չըր-  
լալը՝ անոր մեծազոյն ցաւերեն մէկը: Գիտենք նաեւ, որ ան ան-  
հրածեցու թելադրանքն ու ցուցմունքը ըրած էր իր աշակերտմե-  
րէն՝ բնկեր Վարդան Գրիգորեանի — ներկայիս Փեճսիլվանիոյ  
Համալսարանի փոխ-նախազաքահ Փրոֆ. Վարդան Գրիգորեան —  
անոր վաստակելով Ռոստոմի մասին Քննական ուսումնասիրութիւն  
մը պատրաստելու գործը եւ իր մօտ գտնուող փաստաբուդքերը:  
Յոյս ունինք, որ Փրոֆ. Վարդան Գրիգորեանի այդ աշխատու-  
րիւնը անպայման լոյս կը տեսնէ:

#### Հ. Տ.

(3) Նոհեկան են անշուշտ Աւետիս Ահարոնեանի ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ ՄԻՒԱՅԵԼԵԱՆՆ և  
Միքայէլ Վարդանեանի ԱԽՄՈՆ ԶԱԽԱՐԵԵՆԸ. առանձին զբոյլներով հրատարակուած 1926ին  
և 1927ին («Հայրենիք» մասնակար): Բայց անոնք անժնական ծանօթուրեան թերմամբ եւ  
մեծ առաջնորդներու կորուսին զգացական տպանորուրեան տակ զրուած կենսագրական  
սկզբակներ եւ արժեւորման փոքրեր են աւելի, քան կեանքի, դէմքի եւ մամաւանգ գործու-  
նէութեան սպառիչ ուսումնասիրութիւններ:

ԱՌԱՏՈՄԻ  
ԲԱՐՈՅԵՎԻԿԱՆ ԴԻՄԱԳԻՆԵ



Ռ Ո Ս Ո Մ

Տարբեր կարգի անհատականութիւն էր Ռուսումը: Ոչ Քրիստովորի մտքի անմիջական ուժն ու հմայքը ուներ նա, ոչ Էլ Զաւարեանի բուռն խառնուածքը: Արտօքիմով հակապատկերն էր Երկսի: Միջահասակ, ամուր կազմուածքով, առողջ, ուժեղ: Լայն ուսերի վրայ՝ սոկրատեան գլուխ: Դժացական լայն ճակատ՝ վշտի կամ զայրութի պահերին ծածկուած խորունկ կնճիռներով: Սեւ մօրուքն ու զիսի գանգուր մապերը՝ ցրիւ ու խառնափնթոր: Թուխ յօնքերի տակ՝ խոհուն ու խօսուն աչքեր, յաճախ գուարը ու հեգնական: Ժայիտց՝ անմոռանայի: Անուանայի՝ եւ ցասումը: Հագուստը՝ պարզ ու համեստ: Պարզ ու համեստ՝ եւ իր շարժուձևը, վերաբերումը դեպի մարդիկ:

Առաջին տպաւրութիւնը Ռուսումից — սովորական մարդ: Երեւոյթ՝ սովորական: Խօսքը՝ անպատճյ եւ հասարակ: Հետաքրքրութեան նիւթը՝ առօրեայ, գործնական հարցեր: Ճառախօս չէր, աւելի ձեռքերն էին խօսում, քան յիշուլն: Որեւէ տեղ երբեք առաջին շարքերում կարեի չէր տեսնել նրան, որիշներին էր առաջ քշում, ինքը մնում էր սոսուկի մէջ, շատերի հետ: Անձնական հետաքրքրութիւն չունէր, ինչպէս և չունեցան անձնական կեանք: Միշտ գործի վրայ էր, եւ Ռուսումի համար կարեւոր ու անկարեւոր գործեր չկային: Գործեր միայն կային, որոնց վրայ անխնայ թափում էր իր ուժն ու եռանդը: Միշտ շարժման մէջ էր Ռուսատան, Թուրքիա, Պարսկատան, Երոպայի գանական երկրներ, Հայաստանի քաղաք ու գիտ — Ռուսումը ամէն տեղ էր, ուր կուսակցութիւնը անհրաժեշտ էր գտնում իր ներկայութիւնը: Եւ միշտ կեանքով յի, լաւատես ու գործունեայ: «Ենդափոխութիւնը, ասում էր Ռուսումը, նախ գործ է, յետոյ՝ զաղակար — այս է ճշնարսութիւնը: Աւելի ճիշդ՝ յևդափոխութիւնը գործ է զաղակարի համար»: Եւ մինչեւ մաս հաւատարին մնաց այս պկրունքին:

Որոշ չափով նաև իր բնագիտական մասնագիտութիւնն էր, թերեւս, պատճառ, որ Ռուսումը ուներ դրական, չասելու համար նիւթապաշտ միտք: Նրան «մարքսիստ» էին կոչում կուսակցութեան մէջ եւ, անշուշտ, ոչ առանց իրաւունքի: «Կաշնակցութեան առաջին ծրագրի մարքսիստական տարրերը Ռուսումից էին գախ գլխաւրպապէս:

Հատ կարդացող չէր, բայց ինչ որ կարդում էր՝ իւրացնում էր իիմնովին: Իր սիրած հեղինակներն էին Շարլէ, Սերվանտէս, Գոգոլ: Վերջինիս «Տարաս Բուլգա»ն զիտէր գրեթե զոց: Տարասից շատ բան կար եւ Ռուսումի մէջ:

Քրիստովոր եւ Զաւարեան շեշտուած անհատականութիւններ էին որոշ մարդերում: Ռուսուոյի մէջ համարդուած էին Երկսի կարողութիւններն էլ: Նա ուներ մտաւրական բարձր յատկութիւններ, զօրաւոր եւ յարատել կամք, օժտուած էր կազմակերպական-վարչական ընդունակութիւններով: Անհունօրէն նըմիրուած էր հայ ժողովրդի դատին: Մարդկային էր եւ յաշխարհէ: Քրիստովո-

թից եւ Զաւարեանից երկար ապրեց, աւելի գործեց եւ իր մտքի ու գործի դրոշմը աւելի տևանելի է < 3. Դաշնակցութեան վրայ: Եթէ Քրիստոփորը եղաւ < 3. Դաշնակցութեան միաբն ու կամքը, եւ Զաւարեանը՝ նրա սիրան ու խիդճը, Ռուսում ե՞ւ միաց էր, և՛ կամք եւ խիդճ՝ Դաշնակցութիւնը ինքը իր բովանդակ եւրեամբ:

Ռուսում եւս գոլքնից էր՝ Քրիստոփորի հայրենակից: Ծնուած էր Ցղնա գիւղու 1867 Յունուար 18ին, բռն անունով՝ Ստեփան Զօրեան: Նորեան, Քրիստոփորից 8 տարիով փոքր էր եւ գրեթէ իս սակակից Զաւարեանին: Նահասիտական ունեւոր ընտանիքի զատակ էր եւ մանկութիւնը անցկացրեց գիւղում, զեղցիկ բնուրիան ծոցում, զուար հայկական միջամայրում: Գիւղի ծխական դրաբոցում, փոքր հասակից երեւան ըերեց առանձին սէր դեպի հայերէն բարու և պատմութիւնը, ինչպէս նաեւ եկեղեցական երգեցողութիւնը: Միրու էր, յաւ տրամադրութեան մէջ, գրաքար կառներ արտասանել եւ շարականներ երգել: Հակառակ որ երածշատական կրոռութիւն չունէր, ոչ էլ երգելու ընդունակութիւն, որ որ յինք՝ փոքրում էր երգեցիկ խարեր կազմել եւ ապօային ու ժողովրդական կամ յեղափոխական երգեր ասուրեցնել:

Գիւղական դպրոցը շաւարտած՝ ծնողները տանում են սպասանի Ստեփանին թիֆիլս, որ նա, Բեղաքրեան նախաւոր դպրոցում նախապատրաստուելուց յետոյ, 1882ին, մտնում է պետական մէակական դպրոցը, որ աւարտում է 1886ին: Ռէակական դպրոցը ընդունակ աշակերտներից է յիսում և առանձնապէս աչքի է ընկնում ընափառական և մատենամատիկական՝ առարկաների մէջ: Եւ արդէն դպրոցական նախարանի վրայ՝ սկսում է հետաքրքրուել հասարակական խցնդիրներով և գործու մասնակցութիւն է ունենում աշակերտական ինքնապարզացման խմբակների մէջ: Նրա դպրոցական ընկերները վկայում են, որ հանդարտ ու խոհուն տղայ էր. չէր սիրում մասնակցել խասերին. շատ կարդում էր եւ շատ մտածում: Ընկերները նրա անունը դրել էին Քորոք՝ քորոքի նմանուող կազմուածքի պատճառով. այդ անունը մեաց վրան միշտէն վերջ: Քրիստոփորի եւ Զաւարեանի պէս նա են գրաւուեց ուսու հագիտական ու մուսաւոր շարժումներով, բայց հայկականութիւնը իր մէջ աւելի զօրաւոր էր:

Ռէակական դպրոցը աւարտելոց յետոյ, նա, նոյն տարին իսկ, մտաւ Նովո-Ալեքսանդրեան Գիւղատնտեսական ձեմարանը, Վարչաւայի մօս, որ, սակայն, երկար չմնաց. ուսանողական խորութեան մասնակցելու պատճառով ձերբակարուեց եւ ոստիկանի հսկողութեան տակ աքսորուեց ծննդավայրը՝ Ցղնա վրկուելով ուրիշ դպրոց մտնելու իրաւունքից: Ցղնայում Ռուսում ձարեց Արքահամեան անունով մի անցագիր, մեկնեց Թիֆիլս եւ մտաւ յեղափոխական խմբակների մէջ: Քրիստոփորի լուցերից տեսնում ենք, որ, 1887ին, նա վոր ձում է գտանի տպարան պահել Թիֆիլսում, Քրիստոփորի հետ, որ, սակայն, նիւթական միջոցների բացակայութեան պատճառով, չի յաջողութու:

Թիֆիլսից Ռուսում անցնում է Բագու, որ Արքահամեան անունով քընութիւն է տայիս ռէակական դպրոցում էւ 1889ին մտնում է Սովորուայի Պետրովկայու Գիւղատնտեսական ձեմարանը, որ ուսանում էին Ս. Զաւարեանը, Աւ. Սահակյանը եւ ուրիշներ, որոնք յետոյ < 3. Դաշնակցութեան հիմնադիր կամ դեկանար ուժերը դարձան: Ռուսում էնծ նուստով մասնակցում է հայ եւ

Ամենայն Զօրեան  
1867—1919



Սիսկոն Զահարյան  
1866—1913

Գևորգ Դավթյան

Քրիստոփոր Միքայելյան  
1859—1905



Հ. Յ. Դ.



Barnard College

ուսանողական շարժումներին: Եւ 1890ին, ուսանողական ցոյցի ժամանակ, ձերքակալուով եւ նորից աքսորուում է ծննդավայր: Աքսորի ժամանակը կուզադիպում է <. Յ. Դաշնակցութեան հիմնադիր ժողովներին, որով Ռուսուում անմիջական բաժին չի ունենում Դաշնակցութեան կազմակերպութեան գործում:

Երբ Ռուսուում Թիֆլիս հասաւ, <. Յ. Դաշնակցութիւնը արդէն կազմակերպուած էր: Նա ամբողջ էութեամբ նետուում է գործի մէջ եւ դառնուում է Կեղունական Վարչութեան աջ բազուկը, իբրև մտերիմ գործակից Քրիստափորի եւ Զաւարեանի: «Նա վարչութեան մէջ չէր վկայում է Ս. Շարիթեանը, բայց ամէնից գործունեայ անհամն էր դարձել մեր կազմակերպութեան: Խմբեր կապմել, թուուցիկներ հրատարակել, վիսնավարժութեան գործը վարել — բոլորը նրա վրայ էր ընկած»:

Հիմնադիր ժողովից անմիջապէս վերջը, տեղի ունեցաւ գործոն ուժերի բաժանում շշանների վրայ. Զաւարեանը, Արլութեանը եւ Յ. Խառութեանը նշանակուեցին Տրապիչոն, Արամ Արամեանն ու Տ. Օքանեանը՝ Կարին, Պետոն՝ Վան, Յովսան Դաթեանը մի խումբ ընկերներով՝ Թաւրիկ: Ռուսուում եւս մեկնում է Թաւրիկ, ուսուցական պաշտօնով, որ մնում է մեկ տարի՝ վրադուելով գիշատրապէս Դաշնակցութեան գործերով:

Վերադառնալով Թիֆլիս՝ նա մասնակցում է <. Յ. Դ. Առաջին Ընդհ. ժողովին, 1892ին, որ հաստատուում է Դաշնակցութեան Ծրագիրը: Ռուսուում, Քրիստափորի եւ Զաւարեանի հետ, ժողովի միջէ ոգին է հանդիսանում եւ ծրագրի հեղինակներից սէկը. նրա գրչին է պատկանում ծրագրի ներածական մասը, որ աւելացուեց ծրագրին Ընդհ. Ժողովից յետոյ՝ վաւերացուելով յաջորդ՝ Երկրորդ Ընդհ. Ժողովում:

1893 սկիզբը, Բիլորի որոշումով, Ռուսուում անցնում է Ռումանիա կազմակերպելու համար «Իրօշակ»ի հրատարակութիւնը, սակայն քաղաքական պայմանները բոլով չէին տալիս Ռումանիայում հրատարակել «Իրօշակ»ը: Նա Քրիստափորի թողած տառերը փոխադրում է Ժընեւ, որը եւ հաստատուում է «Իրօշակ»ի խմբագրութիւնը՝ Ռուսուուի ընկավարութեան տակ: Նա ե՛ւ խմբագրի է, ե՛ւ գրաշար եւ ամէն ինչ, եւ միաժամանակ վարում է կուակցական թղթակցութիւնը: Խմբագրատուունն ու գրաշարանոցը նրա ուսանողական համեստ սենենակն էր: Միեւնոյն ժամանակ դասախոսութիւններ էր լուսու համալսարանում բնագիտութիւնից եւ ընկերային գիտութիւններից: Գործոն մասնակցութիւն է բերում տեղական հայ ուսանողական կեանքին: Իրեն աջակից էին ուսանող Սիմոն Ծիեսանը, որ իննանական բուականների Դաշնակցական աջքի ընկենող գործիչներից էր. Օր. Լիպա Մելիք-Չահնավարեանը՝ իր ապագայ կեանքի ընկերը եւ Ժընեւ գտնուող մի քանի ուսանող-ուսանողութիւններ:

Ժընեւը, սակայն, բաւարարութիւն չէր տալիս Ռուսուուի եռուն եւ յարաշարժ բնաւորութեան: Նա Երկար մէկ տեղ նստող եւ խաղաղ աշխատանքին նըւկրուող մարդ չէր: Նրա հոգին ձգտում էր կննդանի գործի ասպարեւ, Երկիր, ժողովրդի մէջ, ուստի բազմաթիւ անգամներ խնդրում է Բիլորի ընկերներից ապատել իրեն «Իրօշակ»ի խմբագրութիւնից: «Ես խեղուում եմ այստեղ, ոտ չըկայ», գրում էր նա իր նամակներից մէկում: Եւ, ի վերջոյ, յաջողեց «ապատուել» Ժընեւից. 1895ին, պարսկական անցագրով, իբրև «սամովարի վաճառական»,

Տրապիզոնի վրայով, մեկնեց Կարին: Ճանապարհին, Պոլսի նաւահանգստում, Նախ վրայ, տեսնուեց Յ. Խոստֆենսի հետ, որ Բիբրոյի ներկայացուցիչն էր Պոլսում: Տրապիզոնում մի օր մեաց ընկերների հետ՝ յահնենեղով նրանց հետոց բերած ատքանակները, Կարինում հրահրուեց ուսուցիչ ազգային վարժարանի եւ նովիդուեց կուսակցական աշխատանքների տեղական ընկերների եւ Ղարա-Մելիքի հետ, որ այդ օրերին Կարին էր:

Ռուսումը նոր էր հասած Կարին, երբ սկսուեցին հայկական շրջանների ընդհանուր կոստորածները: Նրա շանքերով երիտասարդներից կազմուեցին ինք-նապաշտանութեան խմբեր, որոնք, Կարինի կոստորածի օրը, դիմադրեցին շար-դարարներին, որի շնորհիւ կոստորածը, համեմատաբար, լայն ծաւալ չստացաւ: Ծուտով, սակայն, ձերբակալուեց եւ, իբրև պարսկահայատակ, Ղարա Մելիքի հետ միասին, աջարուեց Պարսկատան: Թէ՛ Կարինից եւ թէ՛ թուրք-պարսկական սահմանագիշից Ռուսումը հետաքրքրական թթակցութիւններ ուղարկեց «Դրօ-շակ»ին:

Պարսկատանից Ռուսումը անցաւ Թիֆլիս, որ մի առ ժամանակ լրաց-ուեց Կովկասնա կոսակցական գործերով: 1898ին մասնակցեց < Յ. Դ. Երկ-րորդ Ընդհ. Ժողովին, ուր, ի միջի այլոց, որոշուեց «կապեր հաստատել մակե-դոնացիներու, յոյներու եւ ուրիշներու հետ»՝ թթական բռնակալութեան դէմ ընդ-հանուր ճակատ ստեղծելու նպատակով: Ռուսումը առանձնապէս հետաքրքրուած էր գործակցութեան գաղափարով մակերնացիների հետ եւ ուսուրութեամբ փա-րեց այդ գործին: Ցաջորդ տարիները նա անցկացրեց Բականներում՝ հետա-պնդելով հայ-մակեդոնական գործակցութեան ծրագիրը: Կովկասում ամուսնա-ցել էր Օր. Լիզա Մելիք-Շահնազարեանի հետ. կնոջ հետ միասին նա Ֆիլիպ-պէտու մասնաւոր դպրոց հաստատեց, որպէսզի հնարաւորութիւն ունենար ապ-րելու Բուլգարիայում: Այդ դպրոցը դարձաւ մի տեսակ հնոց նոր սերունդը դաշ-նակցական գաղափարներով թթենու:

1902ին Ռուսումը վերադարձաւ Կովկաս եւ երբ 1903ին, ցարական կա-ռավարութիւնը ձեռք դրեց հայ ազգային-եկեղեցական կալուածների վրայ, եւ < Յ. Յաշնակցութիւնը ուրի հանեց հայութիւնը ի պաշտպանութեան ազգային իրաւուքների, Ռուսումը դարձաւ այդ շարժման ոգին: Յանուն < Յ. Յաշնակ-ցութեան նա այցելեց Կարողիկոս Խրիմեան Հայրիկին, Եջմիածնում՝ յայտնելով Նրան կոսակցութեան կամքը, որ մերժէ գործադրել ցարի հրահանզը: Խրիմեան Հայրիկի համար, անցուշտ, մեծ նշանակութիւն ունեցաւ Դաշնակցութեան ա-շակցութիւնը ազգային իրաւուքների պաշտպանութեան գործում:

Եւ ախուհետեւ Ռուսումը անընդհատ շրջում էր գաւառից գաւառ՝ տե-ղական ուժերի հետ կազմակերպելով եւ ղեկավարելով համազգային դիմադրու-թիւնը ընդդէմ ոռու բռնապետութեան ոտնձգութիւնների: Նա ամէն տեղ էր եւ բոլորի հետ, ոգեւորում ու պայքարի էր մղում ժողովրդական գանգուածները: < Յ. Դաշնակցութեան կազմակերպած դիմադրութեան շնորհիւ, ցարական կա-ռավարութիւնը, ի վերջոյ, դիմեց անփառունակ նահանջի՝ յետո կոչելով հայկա-կան կալուածների գրաման հրամանը:

1904ին Ռուսումը մասնակցեց < Յ. Դ. Երկրորդ Ընդհ. Ժողովին, Սոֆիա-յում, որտեղ գլխաւոր հարցերն էին թթահայաստանի յեղափոխական ձեռնարկ-

ները. Կովկասի ինքնապաշտպանութիւնը եւ Սուլթանի մահափորձը: Ռուսուսը համաձայն չէր Սուլթանի մահափորձի ձեռնարկին. մանաւանդ, հակառակ էր, որ Քրիստոնութիւնը վրայուի այդ գործով: Քրիստոնութիւն մահից յետոյ, երբ արդեն սկսուած էին հայ-բարբարական ընդհարութեանը, նա վերադարձաւ Կովկաս եւ անցաւ ինքնապաշտպանութեան գործի գործիքը: Կովիների ամբողջ տեսողութեամ ընթացքին նա շրջում էր լուսավորած վայրերը եւ Վարդանի, Նիկոլ Դումանի, Արմեն Գարոյի, Ա. Գիշխանշանեանի եւ ուրիշ զեկավար դէմքերի հետ վարում դիմադրութիւնը մահմետական հորդաների եւ կառավարական շահատակութիւնների դեմ: < 3. Դաշնակցութեան շնորհի հայ ժողովուրդը այս պայքարից էլ դուրս եկաւ յաղթանակով: Ռուսումը այդ պայքարի ոգին ու միջ ուժն եր՝ ցատ սովորութեան միջու եւ ամեն տեղ մնալով ստուերի մէջ:

Ռուսաստանի 1905ի յեղափոխութեան եւ Կովկասեան ինքնապաշտպանութեան հետեւանքով առաջ եկած «երիտասարդ դաշնակցականների» եւ «միհրամական» շարժումները, այլև բրձահայ-ռուսահայ դատերի եւ ընկերվարական-հակացնկերվարական հարցերը մի պահ վրդովեցին < 3. Դաշնակցութեան ներքին անդորրութիւնը՝ սպառնալով նրա միասնականութեան: < 3. Դ. Չորրորդ Ընդի. Ժողովը, Վիճննայում, 1907ի գարնանը, կոչուած էր հաշուեյարդարի ենթակելու այդ խնդիրները: Եւ Ռուսումը, իր բարոյական անսահման հեղինակութեամբ ու խոհականութեամբ, նախախնամական դեր կատարեց այդ հարցերի լուծման մէջ: Առաւելապես Ռուսումին ենք պարտական, որ < 3. Դաշնակցութիւնը այդ ժողովից դուրս եկաւ միակամ, համերաշխ եւ աւելի ուժեղ: Ռուսումի պեղումի վրայ էր նաեւ, որ Ընդի. Ժողովը իւրացրեց Պարսկաստանի ապատագրական շարժման մասնակցելու առաջարկը:

Ընդի. Ժողովից յետոյ, Ռուսումը անցաւ Բուլգարիա < 3. Դ. Զինուորական Վարժարանի գործով, որ հաստատուած էր զիյաւորապէս իր ջանքերով: Ապա՝ ներկայ եղաւ Ընկերվարական Միջազգային Համագումարին, Ծովուտագրում, ուր < 3. Դաշնակցութիւնը ընդունուեց Ընկերվարական Միջազգային կամի անդամ: Այստեղից անցաւ Կովկաս ու Թաւրիկ, որպէս դեկավար Պարսկաստանի յեղափոխական կոփիների՝ Նիկոլ Դումանի եւ Քեռիի հետ:

Թաւրիկի ուսեւերի կողմից գրաւուելուց յետոյ, 1909ին, Ռուսումը Նիկոլ Դումանի հետ անցաւ Թուրքիա: Նոյն տարուայ ամառը մասնակցեց < 3. Դ. Հինգերորդ Ընդի. Ժողովին, Վանայում եւ միաժամանակ, որպէս Բիլրոյի անդամ գործերով Պոլսում, 1910ին, իբրև անդամ < 3. Դ. Բիլրոյի Հայաստանի հաստուածի եւ որպէս Ազգային վարժարանների ընդհանուր տեսուչ, հաստատուեց Կարսում, ուր մնաց մինչեւ 1914ի ամառը, յաջորդաբար մասնակցելով նաեւ < 3. Դ. Վեցերորդ, Եօթներորդ եւ Ութերորդ Ընդի. Ժողովներին: Ռուսումի ներկայութիւնը Կարինում, կարելի է ասել, յեղաշրջեց այդ քաղաքի ազգային կեանքը:

< 3. Դ. Ութերորդ Ընդի. Ժողովը, 1914ի ամառը, որոշեց Ռուսումին մէկ տարուայ «հանգիստ» տալ Ժընեվում պարտք դնելով նրա վրայ, որ գրէ նաեւ Դաշնակցութեան պատութիւնը: Բայց ի՞նչ հանգիստ կարող էր ունենալ պատերազմի եւ Մեծ Եղեռնի արհարաջից օրերին: Արտասահմանում էլ նա հանգիստ ու հոգեկան անդորրութիւն չտեսաւ: Գերազոյն ճիզ թափեց ամոքելու

համար հայութեան տառապսնքները, բայց ի՞նչ կարող էր անել աշխարհապատճեան պատերազմի խօսկան մըրթիկների մէջ:

1915ին, Ականտինավայի վրայով, Ռուսուուր անցաւ Կովկաս: Հայութիւնը արտեղ գերազոյն յուսերի և տագնայի օրեր էր սպառու: Մի կողմից՝ կրմաւրական շարժումն ու ռուս քաղաքականութեան նենդութիւնները: Միևս կողմից՝ տեղահանութեանց ու շարժերի գարութեան յուրերը Թուրքիայից: Ճնշուած սրուուր Ռուսուուր նետուեց դէպքերի մէջ, իբրև դիկայար դէմք Դաշնակցութեան: Նրա ներկայութիւնը նոր բափ ու ոգեւորութիւն ներշնչեց նաև տեղական ուժերին: Վիսուենուա նրան տեսնում ենք ամեն առաջ և բորբ գործերի մէջ — Ապօ. Բիւրո, Կամաւրական շարժում, գաղղականներին օգնող կապակերպութիւնների մէջ, արևմտահայերի գործերում, քաղաքական ձեռնարկներում, կրտսակցական ասպարեզում: Նա ճաշակեց ցարական նենդ քաղաքականութեան բորբ դատարկութեան առաջնորդ: Առանց առաջնորդութեանը, տեսաւ Թրքահայաստանի անապացումը և հոգեւէս տառապեց, առանց ցոյց տալու ուրիշներին իր ներքին խողովք:

1917ի ռուսական լրափոխութեանը շիամնդապաշտոնց Ռուսուուրին. նա թաղդորէն սպասափում էր ռուսական գործութեան անժամանակ վրուցուից: Հայրառակ դրան, ստիպուում էր նամակացյալ լրափոխական շարժումներին, իբրև դաշնակցական շարքերի հեղինակուայր առաջնորդը: Ռուսուուր գործում էր անյօնում, խօսում էր հրաշաքարական վրուցուիցին մոլունքում, Դաշնակցութեան էր ներկայացնուու յեղափոխական խորհրդաւեցուների ու մարտիների մէջ. ներկայ էր յիսուս Խանակալեաստան կարմակերպութիւնների ժողովներին. Ճամբորդում էր գաւառները, թքա-հայեական նուաճուած վարերը, ուպամանկան: Կարինը գրաւուելոց յատոյ՝ շատայից ախտեղ՝ տեսնուու և ողբարու համար այդ շեն և քաղցր յիշատակներով ինցուն քաղաքի կործանուաւը:

Իբրև Դաշնակցութեան առաջին ներկայացուցիչը, Ռուսուուր ընտրուեց Համառուսական Սահմանադրի ժողովի անդամ և 1917ի աշնանը մեկնեց Պետրոգրատ, ուր, տեղական Հայկական Կոմիտեի գործակցութեանը, յաջողեց հայկական պահանջներն եւս մացնել Ժամանակաւոր Կառավարութեան հաշութեան պայմանների մէջ: Վայ անցաւ Սովորով, ներկայացնելու համար <. Յ. Դաշնակցութիւնց, գուանարուելիք Ընկերութարական Միջազգային Համաժողովին: Այսուեղ եւս, Կապիտելայից Մարտում, ընդունել տուեց Հայկական Հարցը, իբրև պատերազմի նպատակների մէկը:

Երբ վերադարձաւ Ռուսաստան, իշխանութիւնը արդէն անցել էր բոլեւիկների ձեռքը, եւ ողջ Երկիրը բռնուած էր քաղաքացիական պատերազմի հերդեհով: Ռազմական արագ կերպով քայլաւում էր: Յարաբերութիւնները Կովկասի հետ կորուած էին: Ժողովրդական Կոմիտարների Խորհուրդը, Լենինի զինաւրութեամբ, պատրաստում էր հաշութեան դաշնագիր կերպել Գերմանիայի եւ սրա պիտակից պետութիւնների հետ: Ռուսուուր, Պետրոգրատի եւ Մոսկուույի հայ գործիների հետ միասին աշխատեց կապեր հաստատել Խորհրդային իշխանութեան հետ և Թրքահայաստանի պատութեան պահանջն էլ մտցնել խաղաղութեան ռուսական պայմանների մէջ: Եւ որոշ խոսուումներ ստացաւ էլ, բայց Բիւրո-Լիտովսկում բոլեւիկները ոչ միայն Թրքահայաստանից ձեռք քաշեցին, այլ Ռուսահայաստանի մի մաս էլ փիշեցին թուրքերին:

Ռուսաստանի զանազան լրայրերում՝ գերման-աւստրիական ճակատից մեկնած բարեմաթիւ հայ վիճակութեանը էին հաւաքուած, որոնք ձգուու էին հայրենիք՝ Կովկաս վերաբանալ, բայց խորհրդային իշխանութիւնը արգելք էր հաւաքանուու: Միւս կողմից, Բագուն, մերժելով Անդրկովկասան Սէյսի իշխանութիւնը, Ենինի կողմից նշանակուած Անդրկովկասան Կոմիսար Առ. Շահումնիսի և Հարոց Ազգային Խորհրդից զիանարութեամբ, ուժեր էր համափառում բուքք-այրեթշանեան սպանակիքի դեմ: Ռուսուուր և ուրիշ դաշնակցական գործիչներ, ինչպէս թօ. Յ. Զարեւանը, Լիպ. Նազարեանցը, կարողացան հստակ խորհրդային իշխանութեան, որ արտօնեց հայ սպաներին և վիճուրիներին վենքով և ուսպանամերեքով անցնել Բագու: Քիչ յատոյ, Ռուսուուր ինք եւս մեկնեց Բագու և մինչեւ վերջ մնաց այստեղ, իբրև Բագուի հերոսամարտի դեկապար ոդին:

Բացուի ոդքերգական անկումից յատոյ, Ռուսուուր բազմահազար հայերի հետ մեկնեց Պարսկաստան, որ մի կողմից շանաց ասպանուեց զայթականութեան օգնութեան գործը՝ ազգային մարդիմների ու պարսիկ և անզիական իշխանութիւնների օժանակարութեամբ, միս կողմից յարաքերութեան մէջ մոտ Եւրոպայի և Ամերիկայի ազգային ու քաղաքական կապմակերպութիւնների հետ՝ Հայաստանին օգնութիւն փուրացնելու համար: Հակառակ զնոյհանուր յուսալք-քութեան, Ռուսուուր երբեք չընկառուց և միշտ մնաց բաւառն ու կորովի:

Ըստանուր զիանարութարից յատոյ, 1918 Նոյնմերին, երբ ձանապարհ-ները բացուեցին, Ռուսուուր շառացեց վերայանալ Կովկաս: Հայաստանը այնու անկախ համբավետութիւն էր: Նոր յուսեր ու նոր հեռանկարներ էին բացւու հայութեան առջեւ: Բայց Թիֆլիսում նրան սպասում էր սարսափեկի մի հարուած. Վրաստանը, իր մտերիմ ընկեր Նոյ Ժորդանիայի զիանարութեամբ, պատերազ-մի մէջ էր Հայաստանի հետ, և Թիֆլիսի հայ բնակչութիւնը խուժիւթ հալածակի առարկայ՝ վրացիների կողմից: Ռուսուուր վերագոյն ձիգ բավեց վերջ տալու այդ անհմատ, անպատճ արիւնահեղութեան: Անձանը զիմեց ժորդա-նիային: Բախեց ամէն դուռ, մինչեւ որ անզիացների միջանառութեամբ պատե-ռազմը վերջ գտաւ: Իր կեանքում հապի թէ Ռուսուուր երբեւից: այդքան տառա-պած լիներ, որքան այդ օրերին:

Գիշեր ու ցերեկ Ռուսուուր հանգիստ չուներ: Անվերջ ուրի լրայ էր, ժո-ղովների և խորհրդակցութիւնների մէջ, ձմեռուայ ցրտին, մի թերեւ վերար-կուով ու ծակ կօշիկներով, անփոյք դէպի իր առողջութիւնը, անտես առնելով ընկերների բախանձանքը՝ խնայելու իր անձը: Ու մի գիշեր էլ, ժողովից ուշ վերադառնալով տուն, անկողին ընկաւ ու այլեւս ուրի չելաւ. պարզուեց, որ վա-րակուած էր թծաւոր տիֆու: Քիչ անցած՝ տիֆը վերածուց բորերի բորբքման: Բժշկական գիտութիւնն անզօր էր այլեւս օգնելու: Եւ 1919 Յունուար 19ի գի-շերը, Ռուսուուր յափսենապէս փակեց աչքերը: Մեծ սիրտը, որ յոցնել չզիտէր, կանգ առաւ: Ռուսուուր մեռաւ անկախ Հայաստանց չշնասած...

«ՑՈՒՇԱՎԱՏՈՒՄ Հ. Յ. ԴԱՅՆԱԿՑՈՒԹԵԱՆ».

Պարզ, 1950



**Եւ ահա Ռոստոմը:** Նա ինքն ալ խոշոր «լրացուցիչ» մըն էր, ինքն ալ ոչ պակաս անհրաժեշտ Երրորդութեան մէջ՝ թէ՝ իր նույր իմացականութեամբ եւ թէ՝ իր աւելի հանգիստ, հարբ ու հաւասարակշռուած խառնուածքով։ Միայն զիտէր ինքսինք ջնջել միւսներու առջեւ — եւ այդ Կ'ընէր սիրով, բնականորէն, առանց ցոյցի ու կեղծ համեստութեան։ Մեծամորութեան արատը, որ իր հիւանդագին արտայախութիւններով այնքան յատովէ է հայ մուտորականին առհասարակ, խորք, օտար էր մեր Երրորդութեան անդամներուն, — այն օտար էր մանաւանդ Ռոստոմին։ Դժուար է գտնել մեր հին ու նոր, ոռուահայ ու բրահայ բարձր մուտորականութեան շարքերուն մէջ ուրիշ դէմք մը, որ յինելով ի ընէ այնքան լայնօրէն օժտուած, ունենաւոյն խելքի, եկամուրի, արիութեան ու անձնապուրական այնքան առատ պաշար մը, միեւնոյն ժամանակ այն աստիճան վերծ ինչէր ինքնապաշտումի, փառասիրութեան, ունայնամութեան հակումներէն, ինչպէս Ռոստոմ։

«Կասոարինք մեր պարտը մեր թշուառ ժողովրդի հանդէայ... Փա՞ռք, ծա՞փ, դափնինե՞ր — ունայնութիւն ունայնութեանց»... Այդպէս կ'ըսէր մեսի անոր մշտակուարք ու ժպտուն դէմքը, անոր իբրաքանչյուր խօսքը եւ ժեսքը։

Գիծ մը՝ որ այնքան կը գեղեցկացնէ գաղափարական զործիչը, կու տայ անոր փայլ ու իբրապոյր, կը դարձնէ զայն մուտորականութեան ու զանգուածներու սիրելին։

(\*) Քիխոտափորք շատ կը սիրէր Զաւարեանց, բայց առանձին բնշուրիւմ մ'աւմէր դէսի Ռոստոմը։ Գետք էր տեսնել, զզա Քիխոտափորի տառապանց ամէն անզամ, նոր որեւէ շարազուշակ լուր կ'անմէր իր սիրելի Քորորի մասին։ Օր մը, 1903ին, ըստ սովորութեան երկուունք յօմագրաբուռն էինք, աշխատանիշ սեղանին շուրջ։ Այդ օրը մեզի լուր հասեր էր Կարսի ուժանակային պայրօտմէ մասին, որուն զոհ զացն չըսք ընկերներ։ Բնականաբար, ամէնք Ֆիշշառ ընկերուած էինք, յօրինով, որ բանկացին կեանինք զոհուեր են եւ որ դէսէք անշուշտ ուռւ ու բուրք կուտավառութիւններու ուշադրութիւնն է երաւիրեր մարմիններուն վրայ։ Բայց Քիխոտափոր աւելի ծանրակիշին պատճառ մ'ունէր յուզուելու։ Ամրոց օրը մոայլ, սզաւոր տրամադրութեան մէջ էր։ Բայ մը չէր արտասաներ, ստէպ կը բռնուր աշխատանիք, կը բալէր սրակին մէջ ու ամէքր կը ծիւէր։ Եւ մինչ ես լուր կը գրէի, յարգելով իր մոտահող լուրինը, նա կանց առա ենին ու դոդողուն ծայնով։

— Գիտե՞ս, մեզ մի ծանր հարուած է պատում...

Ցայտարարութեան խորիզաւոր տոնը ցնցեց զիս, բռնի գրիչս ու հարցական արտայախութեամբ դարձայ դէսի Քիխոտափորը, որ շարունակեց աւելի յուզուած։

— Եւ հայուով Ռոստոմը այց պայրըմի միշցցին կար պիտի գտնուէր...

Աւ լոեց։ Մնացածը պարզ էր։ Ռոստոմը «Դաշնակցութեան ուժանակային» զործի մասնագետներէն էր եւ այդ օրերը Կարս էր, բնականաբար, յժբախտ փորձին ներկայ պիտի իմէր եւ ուրեմն, սպանուածներէն մէկը նա էր։

Չադարացաւ Քիխոտափորի ենթադրութիւնը։ Ռոստոմ զեռ ողջ էր եւ ինչը Քիխոտափորն էր, որ շօւտով զոհ պիտի երրար ուժանակային ազէտուար արկածին...

Մուկուայէն Թիֆլիս վերադառնալով (1890ին) . Ռուսութիւն իր ընկեր Զաւարեանին հետ առաջին փարողներէն եղան նորածին Հ. Յ. Դաշնակցութեան եւ անոր ամենէն գործօն անդամներէն մէկը: Ֆընա զիսդէն էր, նոյն Գողթանէն, որ ծներ է Քրիստովորը: Ըստու մըն էր արդէն Մուկուայի Պետրոսան Ճեմարանին մէջ, որ մասնակցեր էր ուսանողական ժանոր խառնակութիւններուն: Սպարտական տիպ մըն էր, խստաքարոյ, չարքաշ կեանքի եւ դժուդակ աշխատանքի մարդ մը: Ֆիվիքապէս ամենէն ուժեղն ու յատրանդամն էր Երրորդութեան մէջ, որու կրոսեր անդամն էր: Փոքր ինչ զանդաղ էր Քրիստովորի պէս եւ անոր պէս կամքու ու կորովու: Առողջ, համաշափ մարմին մը, խիտ ու ցիւ մազերով, կարճ ու ցանցառ մօրովով: Աչքերուն մէջ մշտական, հեղնախառն ժայիտ մը: Սուր ըմբռնողութիւն, որ օժոտած էր նաև որախօնելու անումոր կարողութեամբ: Վերին աստիճանի բարի, ընկերանէր եւ մարդառէր, ինչպէս իր երկու մատերիմները: Զափազանց պարզ իր շարժուձեւի եւ ամրոջ կեցուածքի մէջ:

Ժընեւում, 1892էն ի վեր, խմբագիրն էր «Դրօշակ»ի եւ ինքն իսկ գրաշարը: Տարի մը յետոյ, իրեն միացան նոյն կրկնակ պաշտօնին մէջ՝ Յովլան Դաթեան, Գարեգին Խամակ, Մինոն Շխեան եւ ուրիշները: Թիֆլիսէն եռք, մտերիմկ ընտանիք մըն այ հաստատուեցաւ Լեմանի ափերուն: Ռուսութիւն — անոր իմացական, յեղափոխական գլուխը:

Գրելու ձիրք մը չուներ, թէեւ յաւագոյնն էր եղածներուն մէջ: «Դրօշակ»ի խմբագրակիւնն էր եւ ինքն առաջինը կը խնդար իր տիտղոսին վրայ: Յօդուած մը գրել, ձառ մը ըսել, բանախօսութիւն մը ընել — ճշնարիտ տառապանք էր իրեն համար: Մեծ մասամբ ընկերներուն գրել կու տար «Դրօշակ»ի յօդուածները եւ ինքը սիրով կը շարէր: Քիչ կը կարդար, բայց լաւ կը մարտէր կարդացածը:

Խմբագրութիւնը եւ իր ամբողջ ժընեւեան կեանքը տաղտուկ կը բերէր ծնեալ դաւադիր-յեղափոխականին եւ 1895ի սկիզբները նա ձգեց «Դրօշակ»ը իր ընկերներուն, անցաւ Կովկաս ու նոյն տարրուան ամառը մտաւ Թուրքաց Հայաստան, Էրզրում, որպէս սամովարի [ինքնաեռ] լիածառական:

«Հ. Յ. Դաշնակցութիւն ՊԱՏՄՈՒԹԻՒՆ».

Ա. հատոր

## ՌՈՍՏՈՄ ԵՒ ԱՐԱՄ

(ՔԱՆԻ ՄԸ ԳԻՇԵԲ)

Տարբեր սերունդի եւ տարբեր տարիքի մարդիկ, բայց մեր այս երկու թանկացին ընկերները որքա՞ն կը նուանէին իրարու շատ մը տեսակէտներով:

Ամենէն առաջ՝ իբրև սերմանացան: Ուսուցիչ՝ երկուքն ալ, իրենց տըք-նութիւնը խոր հետքեր կը ձգէր նոյնիսկ այս տարրական եւ խաղաղ ասպարեցին մէջ: Կը իշենք Ռուսունը, եր թուաբանութեան դաս կու տար 8-10 տարեկան մանուկներու, ի հարկին ամբողջ դասամասը յատկացնելով միայն մէկ դանուազամիտ աշակերտի դասը սորվեցներու: Եւ այս տարրուկայի ճիզը՝ ամենէն հասուն տարիքին մէջ, թէեւ ծանրաբեռնուած՝ իր բուն պաշտօնին մտահոգութիւններով, բայց առանց տրոնջալու, միշտ բարի ժայռ մը դէմքին: Տեսնելու էր, դարձեալ, թէ ի՞նչ ոգեւորութեամբ հարիւրաւոր աշակերտներ կ'առաջնորդէր դէսի դաշտներն ու սարերը, իրագիտական դասեր տպով ձամբան հանդիսած բարի կոսորի մը, բայսի մը, ծաղիկի մը, ծառի մը կամ ձձի մը մասին: Եւ այս՝ ոչ միայն քաղաքին մէջ, այլ ամէն ուր որ կ'երթար, Կարինէն մինչեւ Մուշ եւ Սասուն, իր հետ առած՝ 10-15 դպրոցականներ, խոսմբ մը շրջիկներ ոլլ ետեւէն:

Ուսուցիչ էր նաեւ Արամը: Օմանեան Սահմանադրութեան արջալոյսին, հապի ակատած Վանի քաստինի նկուղներէն, կը հանգստանար Ժընեւ, յետոյ կ'անցներ Օրուու, Սիւ Շովիւ ափը, իբրև դպրոցի ուսուցիչ, յետոյ նորէն Վասպուրական, իբրև գործիչ եւ ուսուցիչ: Դժուա՞ր է ըսեւ ուսուցի՞չն էր որ կը լրացնէր յեղափոխականը, թէ յեղափոխականն էր, որ սովորական դաստիարակ-վարժապետի միօրինակութենեն կը բարձրացնէր վինքը կախարդական ուժի մը: Աշակերտը, ինչպատճ ամրոխը, ոչ թէ դաս կ'առնեւ, այլ կը խորուէ՞ր, իր նայուածքին տակ, կը բրծուէր ինքնաբերաբար, հասարակ ընթերցարանը կը դառնար կենդանի աշխարհ մը, ուր պճտուն աչքեր հաճուրեամբ կը գտնէին ինչ որ կ'ուսէր սորվեցնել ուսուցիչը:



Այս նոյն թարաւուն, անզգայի այլ տիրական եւ յարատեւ գիծը՝ նաեւ կուսակցական կեանքի մէջ, քաղաքական-յեղափոխական գործունեութեան ընթացքին:

Ճիշդ է, որ խառնուածքի տարբերութիւնը կը շեշտուէր այստեղ: Ռուսունը՝ միշտ լրակեաց իւ սոուերի մէջ, կը խուսափէր աղմուկէն եւ ամբոխէն, բայց կ'երեւար ամէն տեղ: Աւելի շատ՝ պարզ խմբական ժողովներու քան միթինկներու: Եթէ ստիպուէր բեմ ելլել, համեստորէն կը նստէր աթոռին վրայ,

«կրոյց անելու», ոչ թէ ձառ խօսելու համար: Իսկ իր պրոյցները... Ափա՞ս՝ որ ոչ իսկ պատճեն մը կայ բռնդիքի վրայ: Ինքն իսկ արգիլած է զրի առնել:

Արամը, աւելի տաքարիւն, նոյնքան սիրելով հանդերձ մըշիւնի աշխատանքը, վախ չուներ ամբոխն, եւ ուրբածի բառեր կը հոսէին իր ըերնեն, բեմի վրայ: Հուսոր չէր, բայց պողպատի ձայն կու զար իր խօսքերն: Կը պոյթիք անձիգ եւ անարուեստ, բայց կը զգայիր որ միտքն ու կամքը վուզընթաց կ'երրան:

Ինչպէս տարբերութիւնը, միացման գիծն ալ այստեղ կը շեշտուի: Բեմն, հրապարակն, աղբուկն յնույ, երկուքն ալ, նուստում եւ Արանց, կարծես միեւնոյն մարմնին երկու թեւերն էին, որ առանց նեղութիւն պատճառելու կը գրաւէին, գործի կը կապէին բոլոր պիտանի տարբերը: Կը բուի թէ — արդեօք իրենց գիտութեա՞ն բերուանվ — երկուքին հանար ալ զարտնիք չուներ մարդիկը տարբարութելու յատկութիւնը: Մէկ տղայ, մէկ աղջիկ, գիւղացի, մտաւրական, խումբ մը երիտասարդներ, վոյք չէ, կը բաւէ որ հանդիպեցան մէկուն կամ միւսին տուր հայեացքին, իրենց այս կամ այն գիծով, այլևս ազատում չկար: Միայն մէկ յաւ յանկանից բաւական էր, որ երկուքն այ մոռնային թեկնածուին գէշ կողմնը ու ձգնին գործի մղել վայն, այդ մէկ բարեմասնութեանը սրբազնու համար թերիները:

Այսպէս էր որ, եւ Ռուսումին եւ Արամին հետ կապուած անուններ, ամենէն համեստէն միմշեւ ամենէն փայտունը, դարձած են հաւատարիմ եւ գործոն վինուրեալները Հ. Յ. Դաշնակցութեան: Սովորական խնասով աշակերտներ չեն եղած անոնք, այլ մասնիկները կամ ժառանգործները վարպետներուն պանպան յատկութեանց:

\* \*

Ամենի լերան մը կողքին թառած կաղնի մըն էր Ռուսուուց: Աւելի ձիշդ՝ ժայոյի ստորոտն բխած վճիռ առու մը, որ կը հոսի ու կը ժպտի, որ հետքեր կը ձգէ ու կը խուսափի, մերք ծածկուած՝ թուփերու տակ, մերք յառնուած՝ մեծ ջուրերուն: Ե՛ւ ներկայ ե՛ւ բացակայ, ե՛ւ այստեղ ե՛ւ այստեղ: Իրեն համար չկար գործին մեծն ու պատիկը, խոնարին ու շքեղը: Եւ իրեն համար չէին մեծ ուստաններն ու քաղաքները, Տարին մէկ անգամ Պոլսի կու զար Կարինէն, օրեք համբորի: Երեք օր կամ մէկ շարաբ՝ կուսակցական գործերու համար: Յեսոյ երեք օր ալ Ծընել՝ կիսը տեսնելու: Եւ շոգեափնդ վերադարձ՝ դէպի Կարին: Այն աստիճան արագ, որ կը մերժէր ձամբորդի կառք առնել Տրավիլուն ու կը նատեր թղթատարական սայլը, որպէսպի, փոխանակ վեցի, երեք օրէն հասնի Կարին, անշուշտ, զիշեր ցերեկ քշելով սայլը, սուրհանդակին հետ բռվ քովի: Յաձախ կը պատահէր, որ ընկերները թելաղորդին Պոլսի մասը, իրեւ Բիւրոյի անդամ, քանի որ այստեղ էր կուսակցութեան վարիչ կեղրուն: Շատ կարձ էր Ռուսումի պատասխանը.

— Եթէ դժգոհ էք Երկրում կենալէս, պատրաստ եմ Խարբերդ անցնելու:

Եւ մինչեւ Մեծ Պատերազմը մնաց Ասթին, թէ՝ իբրև Բիւրոյի անդամ, եւ թէ իբրև ազգային դպրոցներու տեսուչ, — լիշելով միայն իր զիսաւոր պաշտօնները:

Զիփազանց բարեհամբոյր՝ ընկերական կեանքի մէջ, փիխտոփայի պէս ներողայիս՝ ոչ-դաշնակցականներու հանդէպ, աղիծի պէս կը մնչէր Ռուտոմը, ապացուցուած յանցանքի մը ատեն: Միս-մինակը, մէկ նայուածքով եւ երկու բառով, վիճաբայի կ'ընէր ամենէն անոպայ վեղծարարը, կը խոստովանցրներ ամենէն քարացած խարերան: Իր կեցուածքն իսկ ահ ու դոդի կը մատնէր յանցաւորը, կամ խումք մը յանցաւորներ միասին, դէմ դիմաց: Թերեւ, մեր անդրանիկ ընկերներէն ոչ մէկուն առջեւ այնքան սարսուռ զգացած են մեր շատ մը ընկերները, որքան Ռուսուսի բարոյական սաստին տակ: Լեռ ըլլար՝ կը փէր անոր երեւուրապէս խաղաղ, ժպտուն, այլ հասու ակնարկէն:

Այլապէս եկակի տիփապար մըն էր Արամը: Վարժ՝ բուօն ձեւերու, յաճախ ձեռքը մառվէրին, ան կրանիտ կը դառնար վտանգի պահուն, ու վճիռներ Կ'արձակէր կատարեաւ ինքնախստահութեամբ: Գրեթէ անսխայ էր, բոպէի պահանջը ըմբռներու տեսակէտէն: Ամբոխը շատոնց մոռցած էր նախասահմանադրական շրջանի դաւադիր Արամը, եւ իր առջեւ կը տեսնէր հանրային գործիչը, մշակութային աշխատանքի նուիրուած ուսուցիչը:

Եկա՞ 1915 Ապրիլը, հայաշինչ սարսափներու բոլոր նախանշաններով: Շշանելը սպամնուած՝ դաւադրաբար, Վումենը ձերբակալուած՝ նոյն խարդախութեամբ:

Եւ Արամը կու տայ Վանի ապատամբութեան մարտակոչը, առանց մէկ վայրկեան տատանելու: Ուսուցիչը կ'անհետանայ յանցուզն յեղափոխականին առջեւ:

Նոյն վճռական թափը՝ 1918 Մայիսին: Վասպուրականը՝ նահանջի հարկադրուած այնքան գերաւարդկային ճիգերով շահուած նուածումները՝ վը-տանգի տակ, Երեւանը՝ շրբայակապ եւ հեղձամահ, հարիր հազարաւոր փախչատականներ գալարուն՝ կեանքի եւ մահուան ալիքներուն մէջ, ո՛չ բարեկաս ուժ, ո՛չ ապամն: Թշնամին սրբնթաց կը քրքայ, դանակը շողացնելով...

— Կոխ՛, կը գուսայ Արամը: Ու իր մողական խօսքին տակ, ամբողջ ժողովորդ մը մէկ մարդու պէս ոսքի կանգնած, կը խոյանայ դէսի Սարդարապատ եւ Ղարաբիխէ, զարներու եւ զարնուերու համար: Թերեւ ինքն ալ կը կասկածէր յաղթական եքեւն բայց պատրանք չէր այլեւս. Խայլի փաշաները խաղաղութեան դափնիներու կը դիմաւորէին արժանաւոր հակառակորդը:

Դաշնակցութիւնը չի սիրեր աստուածացնել անհատները, ինչքան այլ բարձր արժանից ունենան: Դաշնակցութեան համար անհատը՝ խտացումն է հաւաքական առաքինութեանց: Անդամի, տեսանեփի եւ շօշափելի արտայայտիչը՝ հաւաքական կամբին: Բայց ժողովուրդը, որ ունի իր առանձին աշխարհահետաքը, այնքան տարերային ու հարապատ, 1918 Մայիս 28էն յետոյ, Արամը հոչակեց հիմնադիր հայկական անկախութեան: Եւ, անշուշտ, սխալ չէր այս եղակացութիւնը, մէր ժամանակակից պատմութեան ամենէն ձակատագրական օրերուն համար:

Անխոցելի՝ բոլոր կոյսներուն եւ վատանգներուն մէջ, մեզմէ բաժնուեցան երկուքն ալ՝ ամենէն անյուսայի պատահարով, — համաձարակ հիւանդութեամբ: Ու զացին այնպիսի ատեն մը, երբ այնքան կարօտ էինք երկուքին ալ, ինչպէս նման տիպարներու: Մեր ճակատագրական դժբախտութիւններէն մէկին ալ՝ այս: Դրարու ետեւէ, խումբ-խումբ կամ հատ-հատ, հայշինչ սարապիներու ընթացքին կամ տիտիւր դիպուածներու հետեւանքով, կորսնցուցինք ամբողջ փաղանգ մը, որ չարաշար տցնեցաւ յաղթանակը փութացնելու համար, բայց չհասաւ յաղթանակի օրուան: Կամ տեսաւ զայն քառային վիճակի մէջ, տակավին չձեւաւորուած: Ամբողջ սերունդ մը, որ կոչուած էր բախտորոջ դեր կատարելու: Մնացինք որբեւարի, Ե՛ւ իբրեւ ժողովուրդ, Ե՛ւ իբրեւ կուսակցութիւնն:

Այդ կակիծը շատ աւելի խոր է այսօր եւ աւելի ուժգուօրէն կը խոցուէ մեր սիրոց օրուան այս ժամուն, երբ այնքան մոռալ է հորիկոնը, եւ այնքան միօրինակ՝ հայկական իրականութիւնը:

Բայց, մենք մեծապոյն անարգանքը ըրած պիտի ըլլանք Ռուսուումներու եւ Արամներու յիշատակին, եթէ, նկուն եղերամայրերու պէս, տարուինք հառաշանենքով, — «մեռանք-կրոանք» — փոխանակ տասն անգամ տասնու բազմապատկելու մեր կորովը:

Անփիսարինելի են Ռուսուուն ու Արամը, ինչպէս այնքան ուրիշներ, որ անդարձ զացին. բայց <. Յ. Դաշնակցութիւնը միշտ ալ ընդունակ է Ռուսուումներ եւ Արամներ յարուցաներու, ո՞րեւէ ճակատագրական ժամուն. Կը բաւէ, որ անթարթ աչքերով եւ սրբազն հաւատքով նայի անոնց բողած յեղափոխական հանգանակին. տիրաբար, խորապէս ըմբռնէ անոնց կորովին ինասոց, եւ անդաման յարանուորեամբ քայէ անոնց ճամբէն: Յեղափոխական միտքը չի հանդուրժեր քարացած կաղապարներու: Եւ Ռուսուումներն ու Արամները կը նըսմանան ա՛յն օրը, կամ <. Յ. Դաշնակցութեան դիմագիծը Կ'աղճատովի ա՛յն ժամուն, երբ յաջորդ սերունդը մոռնայ ողին, տառը միայն հողովելով, կամ իրական ձիգը շփոթէ մնամէջ «քիշէ»ներու հետ:

Առաջմորդոց յօդուած «ԴՐՈՇԱԿԻ», թիւ 1-2,  
Յանմաւար - Փետրուար 1929

## Ռ Ո Ս Ո Մ

(ՅԻՇԱՐԱԲԻԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՏՊԱԿՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ)

Մարդիկ կան, որոնց մասին խօսից դժուար է, գրելը ա՛լ աւելի դժուար: Ապրացատրելի պայման մը կարծեան մեզ բառթեան կը հրափրէ, որովհետեւ կը զգանք խորապիս, որ մարդկային արտայայտութեան միջոցները անբաւական են ևս պատկերացներու այն բարոյական պատկերը, որ ամէն **մէկս** մեր յիշողութեան մէջ կը պահպանենք երկիւղածութեամբ: Քանի անգամենք փորձեր եմ գրել Ռուսուսի մասին և զգացեր եմ անկարուղութիւնս, քանի անգամենք փորձեր եմ խօսի իր մասին և կցեսուր բառեր եմ արտասաներ միայն. այսուանենային տարի, մը ի վեր է, որ անիկա իր աչքերը փակեր է բայց անդադար կենդանի մասցեր է իմ մոռածուսին մէջ և եղեք են օրեր, որ իմ **մարիս** բոլոր հորիվները ամբողջութեամբ գրաւուեր են իր յիշատակովը:

Ինձ համար եւ մեզմէ շատերուն համար, ան դեռ մեռեալ չէ, անոր դիմացից յարաւետ կերպով կանգնած է մեր դիմաց, յանախ կը խօսինք իրեն հետ եւ յաձախ վարանուսի և անձլութեան չաշչառող ժամերու մէջ, կը զգանք ու կ'ընդունինց իր համառութիւնը կամ **մերժումը**. աւելի բափանցող, աւելի կատարեալ, աւելի անառարկելի կերպով մը կենդանի է անիկա մեզ համար և խօսքերը որ արտասանած է, վերաբերունեցը որ ունեցած է այս կամ այն ձզգնամանին օրերուն՝ բարոյական օրիներեւ են դարձած և անխախտելի հիմք ուրիշ օրերու և զայիթ դէպքերու մէջ մեր ունենալիք վարուունքին ու կեցուածքին:

Քիչ անգամ կը պատասի, որ մարդ մը այնքան ուժեղ եւ լուսեղէն հետք մը թողու իր ետեւը, որ մարդ կարողանայ այդքան մեծ բարոյական տիրապետութիւն ունենալ հոգիներու վրայ. բանեկացին և հաղուացիւս բան է այդ յետ մահու զօրութիւնը, որ այդեւս ալատազրուած ժամանակի եւ հեռաւորութեան տահմանափակումներէն՝ կայ ու կը մնայ ամէն տեղ ու ամէն ատեն և որոն ապրեցութիւնը պիտի կընն գիտակցարար թէ: անզիտակցարար ամէն անոնք որոնց հոգին որեւէ բարեբախտ ասիրով մը հաղորդակցութեան մտած է Ռուսուսի հոգիին հետ:



Հեղինակաւոր անձեր, իր ուղղակի աշխատակիցները, շատ բաներ կ'ունենան գրեթե անշուշու իր մասին: Ռուսուսի կենսագրութիւնը հարուստ է դէպքերով եւ այնպիսի նիւթերով, որոնք սերու կերպով կապուած են մեր պատահակցարար ամէն անոնք գրութեան պատմութեան հետ: Անոր կեանքի պատմութիւնը միեւնոյն ատեն

պատմութիւնն է: Խայ ժողովուրդի ամենամեծ եւ ամենեն հաստատ կերպով կառուցուած կուսակցութեան պատմութեան. իր հասարակական գործունեութիւնը սերտ կերպով կը սկսի ‘Խաչնակցութեան հետ, որուն իխնադիրներէն մէկն է, որուն ամուռ սիւներէն մէկը եղած է: Եւ որուն բայց գմրէթին բոլոր ծանրութիւնը միջոց մը մինակը տարա իր անձիւի ուսերուն վրայ: Ես չեմ ուսեր սակայն ծանրանայ իր հասարակական գործունեութեամ մասին, այդ բանը ըներու ոչ միջոցները ունիմ և ոչ հարկ եղած ձևոնաւութիւնը, եւ պիտի շանան ներկայացնել իր բազմալինի հոգիին մէկ երևս, ներքին մարդը, իր հոգիին ժպիտները, այս ինչ որ շատ շատերուն անծանօթ մնացած է, որովհետեւ իր բազմապարզ եւ եւս ի եւս կանքին մէջ, առիջ չուներ, ժամանակ չուներ արտայայտուելու եւ որ տարօրինակ եւ խիստ վերապահութեանը մը կարծես քողարկուած կը պահէ:



Ամէն անոնք որոնք Ռուսուուր անձամբ ճանչցած են, զիտեն որ անիկա սակաւախօս էր, յաձախ լուսկեաց. իր դէմքը խոժու էր եւ անժպիտ, իր խիստ դիմագիծը, խորշուներոյ ծածկուած՝ առաջին հանդիպութիւնը կը մնային անհաղորդ եւ ներաւափով: Անիկս կարողութիւնը ունէր ըլոյմիշտ անհաղորդ մնալու անոնց համար: Իր խորաքափանց աչքերը մէկ անզամէն կը սուպուէին մարդոց հոգիին միջնէ խորքը եւ այդ էր պատճառը, անշուշտ, որ անիկա մէկ անզամէն կը միրէր, կամ ոչ. իր ատեղութիւնները եւ սէրերը հօգոր էին եւ գրեթէ մշտնչենական. իր գօրաւոր խառնուածքը չէր հաշուուեր այնպէս, գաղց համակրութիւններու, փոքրիկ պատմութիւններու, միջակ գնահատութիւններու եւ անցողակի տրամադրութիւններու հետ: Այսպէս էր կամ այնպէս, կ'ընտրէր կամ կը մերժէր եւ անոնք որոնք բախտը ունէին իր համակրութիւնը վայելելու, անոնք որոնք իր սրտին ճամբան գտած էին, անոնք միայն զիտեն թէ գորովանքի, սիրոյ, անձնութուրեան եւ ներդաստութեան ինչ անսահման ծով մը կար այդ խիստ, խոժու եւ անհաղորդ երեւոյով մարդուն հոգույն խորքը. անոնք միայն զիտեն արժէքը այս դժուարին ժպիտին, որ իր դէմքին վրայ կը ծաղկէր, որ իր ամբողջ եւրիւնը կը լուսաւորէր եւ որուն լիշտակը շատ բանկագին բանի մը նաև կ'ընկերանար մարդուն մտածութիւն եւ զգացուներուն:



Առաջին անզան իրեն հանդիպեցայ Պոլսոյ մէջ. Առանայէն նոր վերադարձեր էի. ճաշի սեղանի մը շուրջն էինք. իր անունը խած էի բայց իր դէմքը անձանօթ էր ինծի. անձնական սուզ մը մթազնած էր զինքը. ուշադրութեամբ կը նայէի այդ խիստ դէմքին մեծութեան եւ տարօրինակ ու անբացատրելի զգացում մը կը ներշնչէր ինձ. լոյն էր ու ճաշի ամրող տեսողութեան բառ մը չարտասանեց: Խո քոյս նատած էր Կարոն. հարցուցի իրեն թէ ո՞վ է. անմիշապէս մեկ ծանրացուց. իր նայուածքը քանի մը անզան ծանրօրէն սեւեռեց իմ վրաս. իմ տաժանելի ճամբորութենէս դրուագներ կը պատմէի. ամէնցն ալ հետաքրքրութիւն էր իմ խօսքերուս վրայ ու երբ

սեղանեն կ'ելլայինք. ինձ մօտ եկաւ, ձեռքս սեղմեց. կարծես բան մը ուպեց ը-սել, ոնզանքը յայնացան, շրթները շարժեցան անձան եւ լոեց ու իր զայտուան յուպումով դէմքին արտայայտութիւնը այնեւս դրոշմուած մնաց ին մորին մէջ:

Քանի մը շաբաթներ յետոյ Երպուուն նամակ ստացայ իրսէն: Ազգային վերածնունդը իր մէծ քափին մէջ էր և այդ մեծանոցի մարդը իրը դպրոցի տե-սուչ գացեր էր Երպում, երկրի կուրծքին մէջ, իր կամքի ուժովը զդրդելու ժո-ղովուրդին գանգուածը, որպէսի գիտակցելով իր դերին՝ դիմէր դէպի ձակա-տագիրը: Այս նամակով եւ յաջորդող ուրիշ նամակներով կը հրավիրէր վիս եր-թալ Երպում, կը յայտնէր թէ գաղափարական եւ կրթուած կնոջ մը դերը ինչ մէծ կրնար ըլլալ այդ բնամսաւոր շրջանին մէջ: Աւաղ, անձնական պատճառ-ներ, պայտիկ պատճառներ արգելք եղան ինձ այդ հրաւէրին պատախաններու, ու երբ յաջորդեցայ վերջապէս այդ արգելքներուն յաղթելու, երբ պատրաստուած էի ձամբայ ելլելու, ելրոպական պատերապմը ծագեցաւ եւ ամէն ինչ իր հիմե-րէն խախտեցաւ:

\* \*

Ռուսուու կրցեր էր սահմանը անցնիլ եւ գիտէի որ Կովկաս էր. եւ երբ Պուլկարիա եւ անկից այ Ռուսանիա ապաստաններու ստիպուեցայ, Պուլքարեսուի մէջ իմ դիմաց երկու ձամբաներ կը քացուէին, դէպի Կովկաս կամ դէպի Փա-րիզ, ու հետեւցայ առաջին ձամապարիին. Ռուսուուն հեռազրեցի իրեն, հա-կի թէ վինքը կը ձանչնայի անձամբ, բայց ներքին խոր զգացումը ունէի, որ դէպի հարազատ քարեկան մըն է որ Կ'երթայի:

Սուսկայի էր հոգեկան դրութիւնը որուն մէջ էինք այդ միջոցին... սուգե-րու ահազին շղայ մը կապուած էր մեր ուղերերուն. պատառուտած սրտերով, հոգինիս թեռնաւորուած հապար ցաւով, խելացնոր, շիղերս քայլայուած, հա-լածական մշտատես մշձաւանչէն՝ հասանք թիֆիիս: Ամբողջ ամիսներ, հակա-ռակ այն սիրայիր եւ տաք մթնոլորտին որուն մէջ սկսանք վերապիլ, հակապ-դեցութիւնը մեր կրած տառապաւաքներուն այնքան ուժգին էր որ ինձ բոււցաւ որ այլւան երթեք, բայց երթեք մայտը պիտի չերեւայ մեր դէմքերուն վրայ եւ թէ մեր ուղեները միանքամընդիմու խեղանդամուած պիտի մնան:

Աւելի բան երկու ամիս մնացի Ռուսուու տան մէջ, հարազատ եղօր գորգուրանքով վարուեցաւ անիկա ինձ հետ. հոգեայէս հիւանդ, ֆիսիքապէս հիւանդ, մատուած մոսային ասիկիարութեան, անտանելի ինձ եւ ուրիշներուն համար, իմ թմրած ուղեղիս ընդմէշէն կարողացայ ընթշմարել վերջապէս գո-րովանքի, համբերութեան, ներողանուութեան եւ անձուութեան այն անսահ-ման գանձը՝ որ այդ խոժոո, անհաղորդ եւ խախտ երեւոյշով մարդը շայլելով կ'ընծայէր ինձ եւ այլքան ուրիշներու համար:

Այդ անդրադարձումն իսկ եղաւ առաջին լոյսի նշոյլը, որ ծագեցաւ իմ մքազնած ելուեանս մէջ եւ խաւոր փարատեցաւ հետովետէ:

Վերջին օրերը որ անցուցի իր յարկին տակ անմոռանայի պիտի մնան ինձ համար: Ամրող օրը վրադուած տենդազին գործունեութեամբ մը, անիկա տուն կը վերադառնար ձաշի ժամուն յաձախ ընկերակցած հիւերով: Բոլոր անանուն մարդիկը, բոլոր այն ընկերները որ որեւէ գործով թիֆիս էին, իր հիւերն էին,

իր համեստ սեղանին շուրջ բալրուած էին միշտ ամէն դասակարգի եւ ամէն աստիճանի պատկանող մարդիկ. ընդհանրապէս, իր սովորութեան համեստան քիչ կը խօսէր ինքը բայց իր արտասանած բառերը Կ'ընդունուեին պատզամ-ներու նուան. թիշ չէր պատահեր նաև, որ ուեւ մէկու մը շատախօսութիւնը բնի-լիս, մերժուեն կը ննջէր ընկուած մշտատե յովնուրենէ: Ամէն կարգի իմուիր, ամէն կարգի լիւնէր կու գային այդ սեղանին շուրջը եւ պէտք էր շատ խորարա-ժանեց ու խորանանկ ըլլալ կարենալ գուշակելու համար թէ ի՞նչ էր իր անձ-նական տրամադրութիւնները այդտեղ յուզուող խնդիրներու մասին, այնքա՞ն իր դէմքը կ'ըլլար անքափանցեն:

Ճաշէն յտոյ կրկին կը մենակը եւ կը վերադառնար կէս զիշերը անց, յա-ձախ շատ ուշ, ես եւ իր սիրելի մայրիկը կը սպասէինց իրեն ընթրիքի, ու շատ ուշ զիշերներուն մէջ, ընթրիքէն յտոյ Ռուսոսու Կ'այբափիսուէր, կը վերադառ-նար իր եսին ու եթէ յաւ տրամադրուած էր՝ Երկարօրէն կը պատմէր իր ման-կութեան շիշողութիւնները, իր առաջին երիտասարդութեան ոգեւորութիւնները, իր ներքին զգացումները, գնահատութիւններն եւ յուզումները:

Օ՛հ այդ զիշերները, կը տեսնեմ իր սիրելի մայրիկին վսիմ սիլուէրը որ հակառակ իր յառաջացած տարիքին իիքն եր կորովով եւ ոգեւորութեամբ. անի-կա հակառակ օրուան յովնուրիւններուն չէր երթար հանգչելու մինչեւ որ իր Սունիկանը չընէր, ու յաձախ իր գոց աչքերով որոնց մէջ երիտասարդական ցոլք մը յանեցած էր, կը հետեւէր սիրական զաւկին վերյշումներուն. խօսքով մը, բառով մը Կ'արծարծէր գանոնք, վերասին կը յուզուեր եւ բարմ կեանքի ալիք մը կարծես կը բարձրանար սենեալին մթնոլորտին մէց:

Ինչպէս յաւ կը պատմէր Ռուսոսու, եւ ինչպէս իր հոգին կը յայտնուէր հարուստ ու ծանրաբեն յուզումներով, տապաւորութիւններով եւ զգացումներով — Երեմն, շատ թիշ անգամ, կը խօսէր իր ունեցած յուսախարութիւններուն եւ դանութեան նասին, այն այ միայն անձին կամ այս կամ այդ դէպին վերա-բերմամբ, բայց ընդհանրապէս իր պատմութիւնները ոսկեպօծուած էին ուրա-խութիւնով, յաղբանակի լաւառնութեամբ: Կարծես նորօրինակ արեւ մը կը ծա-գէր, կարծես լոյսի մէց Կ'ողողէր մեզ, կարծես թեւեր կու տար մեր հոգիններուն եւ իրականութենէն վեր կը սաւառնէինք զաղափարի եւ խուայի աշխարհի մը մէց, հաղորդակցութեան մէց մոնելով տիեզերական յուզումներու:

Ընդյանուած հոգիով, խաղաղած ու պայծառացած հրամեց Կ'առնէի եւ կը քաշուէի իս սենեակու. հոգեկան հապուադէպ վիճակներ կան, որոնց մի-ցոյին մարդուն ներքին հայեցողութեան սահմանները, չափերը կը վերնան, ուր ամէնեն վերացական մտածումներու եւ երազներու անմիթական սիլուէրն իսկ կ'անհետիք, որովհետեւ մարդուն հոգին անանպ երկնակամար մը կը դառնայ լիացած իր լոյսով, իր անսահմանութիւնով:



Եյն ժամանակ Անդրկովկասի հայերու կեանքը եռուսէո վիճակի մէց էր: Ռուսոսու զնաց դէպի նոր գրաւուած հայկական զաւանները, ես գացի մինչեւ Դետրոկրատ եւ վերադարձիս մնացի Բագու: Ընդմիջաբար կը հանդիպէինց ի-

բարու եւ ամէն անգամուն զինքը նոյնը կը գտնէի. նոյն բարձրութեան վրա. պէտք էր աչքերը շատ վեր բարձրացնել իրեն մակարդակին հասնելու համար եւ ինչքա՞ն տիրութիւնով կը մտածնա որ մարդկային տկարութիւններ մեզ արգելք կ'ըլլայ յարատե կերպով այդքան անհատչելի որորտներու մէջ մնալու: Իր անսպաս ներուղամուռեանց շնորհիւ անշուշտ մինչեւ վերջը բախտը ունեցայ վայելելու իր համակրումը, ինչ որ իս ներքին ամենամեծ գանձերէս մէկը կը համարեմ: Բագուի կոփևներուն նախօրեակին հասաւ այնտեղ եւ մնաց մինչեւ վերջը, մինչեւ թուրքերուն բաղաք մտնելը:

Իր կեցուածքը, իր վարմունքը ոչ միայն ահագին նշանակութիւն ունեցան, այլև ինքը էր որ փրկեց մեր պագային պատիւր, իր հեղինակաւոր խօսքով, իր ցասունով վերջ դնելով ըորոր վարանումներուն եւ մտավախտութիւններուն: Իր կեանքին այդ դրուազը, իր կենսագրութեան ամենն գեղեցիկ էցերէն մէկն է, որուն պատանութիւնը կարող է սերունդներ դաստիարակել եւ ապնըւացնել: Թէեւ իս գրութեան շրջանէն դուրս է իր կենսագրութիւնը՝ բայց չև կարող այստեղ չլիշել իր խօսքը, որ վճռական ապդեցութիւն ունեցաւ եւ որուն առաջ բոլոր կուսակցութեանց ներկայացուցիչները խոնարհեցան:

Եթի առարկութիւն եղաւ, որ թուրքերու հետ կոտի մտնելէ առաջ պէտք է հաջուի առնենք մեր ուժերը և կշռնեք թէ հաւանակա՞ն է: որ յալթող դուրս պիտի զանք էւ թէ հակառակ պարագային պէտք է հապատակութիւն յայտնենք կեանքերիս փրկելու համար, Ռուսուն ընդուած դարձաւ դէպի ժողովը եւ ցասմակից աչքերով գոռաց.

«Եթի թուրքը բաղաքին առաջքն է, այլեւ ընտրութիւն չկայ մեզի մեռնելու եւ ապելու մէջ, այլ մեռնելու եղանակին մէջ»:



Վերջին անգամ Ռուսուուին հանդիպեցայ Պարսկաստանի մէջ: Թեհրանէն Ղազուին եկեր էի Միջագետքի վրայով Երկուպա զարու համար: Նոք Ենզիշին եկեր էր Թեհրան երթալու համար: Տարբեր ճամբաններով նոյն օրը հասեր էինք Ղազուին. ինձ հեռազերեր էր նախապէս, որ առանց զինք տեսնելու չմեկնիմ, բայց ինձմէ բոլորուին անկախ պատճառներով հարկադրուած էի ճամբայ ելիք: Մեծ եղաւ ուրախութիւնս երբ ինացայ, որ վերջապէս պիտի տեսնեմ զինքը մեկնելէ առաջ: Ուզ առեն հասեր էի Ղազուին ու դեռ ճամբու փոշին չքօթուած փութացի իր մօս: Սիրտս ճնշուած էր շատ դաստիարակուններով եւ մոռահող էի մասնաւրաբար այն պատճառով, որ ինքը կարող էր մոլորուած ըլլակ կարգ մը թիւր տեղեկութիւններէ: առաջին խկ հանդիպումին իր սիրելի ժափտօ զիս հանգստացուց: Կարծենով թէ հետեւնալ առաւօտ կանուխ պիտի մեկնիմ, շատ երկար ատեն մնացինք միասին եւ խօսեցանք, բոլոր թիրիմացութիւնները հարթուեցան որովհետեւ իր մոտի խորքին մէջ հարթուած էին արդէն, զիս բաջանք ու ոգեւորեց եւ զգացումը ունեցայ, որ իր ամուր ձեռքովը ձեռքս բռնած զիս դուրս կը հանէր մասնաւծապատ եւ մթին ճամբէ: մը: Խօսեցաւ ինձի գորովանքով եւ համարումով եւ իրեն հաշից տալով իս գործունէութեանս, իր հաւանութիւնը ստանալով, ըսի իրեն խորին անկեղծութեամբ.

— Ռուսուն, եթէ քեզ համար այսպէս լաւ է, բոլոր մնացածը ինձ համար նշանակութիւն չունի:

Այդ խօսքերը որ արտասանեցի այդ անգամուան համար չեին միայն այլեւ զայիք օրերուն, այլիւ իմ կեանքի բայոր հանգրուաներուն համար: Եւ հիմա որ մեռած է անիկա, որ այլեւ երբեք այս աշխարհիս վրայ պիտի չհանդիպիմ իրեն, որ այլեւ երբեք իր համոզիչ, իր ոգեսրիչ ձանը պիտի չլսեմ, դարձեալ անդինայրդի կերպով իմ վարանուսի, երկբայութեան ժամերուա, մըտքով կը խօսիմ իրեն հետ, կը խորհրդակցիմ իրեն հետ, զիտեմ թէ ինչն է լաւ եւ ինչն է լաւ իրեն համար եւ անիկա ընդունու կենցանի է, եւ պիտի մնայ բոլոր անոնց համար, որոնք մեծ բախտը ունեցած են իր հոգեկան շերմութիւնը զգալու, որոնց վրայէն իր լաւ շունչը անցած է:

Նախախնամութիւնը ուզեց, որ հետեւալ առաւօտը չկարենամ մեկնիլ եւ երբեք օր շարունակ երկար ժամեր անցուցինք միասին խօսելով օրուան յուզումնայի կացութեան վրայ, մեր անմերջ ցաւերուն եւ անմերջ յոյսերուն վրայ: Թուրքերու հետ վիճակայրը կերպուած էր եւ լայն հորիզոններ կը բացուէին մեր անխոնչ յոտերուն: Տաճկական Հայաստանի պատագրութիւնը կատարուած փաստ կը համարէր եւ մեր դդեակները կը կաբմէինք վատահութեամբ եւ հաւատքով:

Պէտք էր տեսնել զինքը թէ ինչ մեծ ոգեսրութեամբ ինքն էր, թէ ինչ անսահման ուրախութեամբ կ'անդրադառար կատարուածին, թէ ինչ արագութեամբ իր բոլոր ցաւերը եւ վիշտերը կը սպիտակին եւ ինչպէ՞ս պատրաստ էր նուիրուելու նոր կեանքի կառուցումի հորիզոնական աշխատութեան:

Աւա՞ղ, ո՞վ կարող էր երեւականի, որ այդ անյաղը եւ անխոնչ մարդը իր մէջ կը կրէր մօտալուս մահը:



Մարտիհա հասած առաջին օրս տարօրինակ դիպուածով մը հիւրանոցին սպասման սրահին մէջ հանդիպեցայ Վահան Փափագեանին, որ նոյն օրը նոյն միջոցին կը հասնէր Մարտիհա՝ Կովկասէն: Ու առաջին բանը որ ինձ ըստ Ռուսումի մահուան լուրն էր, անիկա այնպիսի անհաւատայի, անսպասեիլ, անհընարին լուր մըն էր, որ կարծես չբափանցեց իմ ներքին եւրեխան, ես այդ գոյցը ընդունեցայ մոտքով բայց հոգիս մերժեց ընդունիլ, ու այդ է անշուշտ ճօշմարտութիւնը: Ռուսումը չի կրնար մեռնի, մահը անկօր է իր դէմ. այն ինչ որ կայ լաւագոյն, ինչ որ կայ մաքոր եւ լուսեղէն՝ անմահ պիտի մնայ, անիկա պիտի ապրի մեր մէջ, մեր հոգիներուն մէջ, մենք զինքը կենդանի պիտի պահենք ինչպէս անգին զանձ մը ու պիտի աւանդենք զայիք սերունդներուն իր համարական արժէքին մէջ, որպէսպի իր կեանքը, իր խուալները բեղմնաւոր դառնան եւ որպէսպի վերջապէս հեարաւոր ըլլայ իրականացնել այն՝ որուն իրականացումը չտեսաւ ինքը մարմնեղին աչքերով:



Ա Ա Ս Ա Մ Ե Ն  
Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Ր



## ԱՌԱՋԻՆ ՔԱՑԼԵՐ

Հ. Յ. Դաշնակցութեան առաջին քայլերի մասին որոշ գաղափար է առաջին թուատում մէկ յօդուածը, որ ձեռագիր վիճակում մնացել է Հ. Յ. Դ. Կենտրոնական Դրամի թղթերի մէջ։ Այդ յօդուածը զրուած պէտք է յինք 90ական թուականների կէսերին, Հ. Յ. Դ. առաջին (1892) և հրկորց (1894) Ընդհանուր Ժողովների արանքում։ Դժրախտարար, մերժին մաս կրկի է թուատում զրածով Հ. Յ. Դ. Առաջին Ընդհանուր ժողովը հրաւիրուած է Կենտրոնական վարչութեան կողմից։ որու տեղեկութիւններ արուած էն ժողովի կազմի և աշխատանքների մասին։ Այդ յօդուածը տային ենք այսուհետ, բրեւ Հ. Յ. Դ. առաջին քայլերը եւ ժամանակի պայմաններն ու ժամանութիւնը լուսարանոց մի վաւերագիր։

ԽՄԲ. «ԴԻՒԱՆՆԻ

1892ը բնդիհանրապէս ծանր տարի էր հայ ազգաբնակութեան համար։ Տանիկ կառավարութիւնը հայկական շարժումը խեղդիլու նպատակաւ ամենամծարյացի միջոցների պատրաստութիւններ էր սկսում տեսնել։ Ամէն մի փոքրիկ յեղափոխական դէպէին նա պատասխանում էր դժոխային խառութիւններով։ Զարուածը ոչ միայն յեղափոխական ամհատների դէմ էր, այլ շարժման արմատի՝ համայն հայ տարրի դէմ։ քէեւ այդ տարրի բնդիհանրութիւնը ստրկարար շարունակում էր կրկի ծանր շղթաները։ Մասսային ձերբակալութիւնները տարածուում էին Մուշ, Ասուն, Վան, Կարին, Տրավրդն, Երզնիս, Գարսիասը, Արարիլը, մինչեւ իսկ կիլիկիա։

Կառավարութիւնը զուգբրացարար զգուում էր մահմետական ամբոխը հայ ազգաբնակութեան դէմ հաւատացնելով նրան, թէ հայերը ձգտում են ազգային զերիշխանութեան, մահմետականների ստրկացման։ Խոկ նորակոցի համբաւի կամաց զնները ամենազօրեղ զէնքն էին կառավարութեան ձեռքին, բոլորովին ուժապատ անելու հայ տարրը։

Ասպարէզ մտած ամէն զոյնի, ուղղուրեան, դիրէի տէր «զործիչներ», որոնիք համախմբուել էին բնդիհանրու ոգեւորութիւնը սկսեց աստիճանարար իշնել։ Բուն յեղափոխական զործը շատ ծանր պայմաններ էր ներկայացնում, իսկ այդ պայմաններին բչեր էին պատրաստ ներպարկուելու, եւ աւելի բչեր՝ բնդունակ մինչեւ վերջը տանելու յեղափոխական կեանքի բոլոր դառնութիւնները։ Շատերը, մանաւանդ «խոհեմները», լուր ու մունջ ֆաշուեցին իրենց տեղերը եւ շարունակեցին վարել նախկին անվրդով, ապահով կեանքը։ Ասպարէզի վրայ գտնուածների մէջ սկսեցին երեւան զալ ներքին երկապառակութիւններ։ Դաշնակցութիւնից բաժանուեց մի խումբ «Ֆրակցիա» Միու-

թիւն անոնով, որն ունեցաւ իր կեդրոնական վարչութիւնը, իր մասնանիւթերը եւ որք արդարացնում էր իր գոյութիւնը նրանով, որ Դաշնակցութեան կենտրոնի հարկաւոր եռանդով չէ զործում: «Թրակցիա» Միութեան կողքին բուսաւ մի նոր կազմակերպութիւն եւս, «Տաճկահայաստանի Ազատութեան Վարչութիւն» անունով: Այս բաժանումները, որ պարզ հետեւանք էին յեղափոխական զործունելութեան իսկական պայմանների պարզուելուն, անժամանակ ոգեւորութեան իշխելուն, համարուեցաւ պատճառ յեղափոխական զործի դանդաղ թթեանալուն: Հասարակութիւնը, անընդունակ տվյալ հասկանալու զործի դանդաղութեան իսկական պատճառները եւ ամրոջ շարիքը տեսմելով կուտակցական բաժանումների մէջ, միաբերան «միութիւն» էր պահանջում: Դաշնակցութեան կենտրոնական Վարչութիւնը երկար բանկցութիւններից յետոյ (\*), իր կողմից մեծ զիջումներ անելով, յաջողեցրեց միութիւնը: Բայց այդ, ի հարկէ, զործի ընթացքին շատ ժիշ օգնեց, հասարակութիւնը, մանաւանդ հարուստ դասը, որ անընդհատ պահանջում էր միութիւն, որպէսզի իր «առատ նույնեները» քափի, ոչ մի կոպէկ աւելի շարուց: Ռէկակցիան աւելի եւ աւելի սկսեց սաստկանալ, մանաւանդ, երբ անցան զարունը, ամառը, աշունը, եւ տաճկահայ ժողովուրդը բնաւ չմտածեց շարժուել:

Ստեղծուեց մի ցաւալի դրութիւն: Հիմնուած հասարակութեան ոգեւորուած տրամադրութեան վրայ, Դաշնակցութեան կենտրոնը լայն-լայն ծրագիրներ էր կազմում, դաշնակցական զործակալները բուն երկրում մեծ աջակցութիւն էին ինստանտում, տեղական զործիները մեծ-մեծ յոյսերով սևում, սակայն ոգեւորութիւնն իշխելուն պէս հասարակութեան խոստամեներն չկատարուեցան, կենտրոնի լայն ծրագիրները կիսակատար մնացին, իսկ աւելի ցանկալին այն է, որ թէ՛ հարուստ դասը, թէ՛ կենտրոնը, թէ՛ զործակալները, թէ՛ բուն երկրում զործիները՝ բռնորն էլ իրենց փոխադարձարար խարուած տեսան եւ մէկու հետ թշնամացան: Ո՞վ էր իսկական յանցաւորը: Ռէկակցիան իր զագարնակէտին էր հասել: «յուսախար» ուուսահայ ժողովրդի ականջները խլացել էին. յեղափոխական շարժման այլեւս չէին հաւատում:

Ահա այս հանգամանեներումն էր, որ 1892ի սկզբին միտք յղացաւ Դաշնակցութեան բնդիանուր ժողով կազմելու, որը եւ իրազործուեց 1892ի ամառը: Ներկայ էին Դաշնակցութեան Ռուսաստանի միութեան համարուած կազմակերպութիւնը:

(\*) ՌԱՍՏՈՒՐ. ԹԱՍՏՈՒՐԻ. — Այսուհետ անձորդ չէ յիշել, որ տաճակցութիւններին ժամանակութիւնների կազմակերպութիւնը յիտոյ, Հեշտական կուսակցութիւնը պաշտօնապէս միացած էր Համարուած Դաշնակցութեան, բայց յիտոյ յայտնուեց, որ Հեշտակի հօժրագրութիւնը ոչ մի պայմանով Համաձայն չէ այդ տեսակ ժիութեան: Նա ցանկանում է տառանձն լինել: Դաշնակցութեան միացած մի-երկու Հեշտական անհանդաւոր էնսական կուսակցութիւնը պաշտօնապէս տառանձն (Թուրքի եան-Ազգան՝ ԱՄԲ.): բառական ժամանակ զաշնակցական համարուելով, Դաշնակցութեան հաշուով ապրելուց յիտոյ, Դաշնակցութեան զործերով Թիֆիսից մեկնելով, անսպասելի կերպով ճանապարհ ճանց դէպի ժընել է միացաւ Հեշտակի խմբագրութեան: Դաշնակցութեան մէջ մասց սակայն Հեշտական կենտրոնը, որն այդ ժամանակ Տրապիզոն էր:

կաստանի ներկայացուցիչները : Հրաւեր ուղարկուեց նույն միւս կուսակցութիւններին (Արևմենիայի եւ Հնջակի) . քայլ անպատճախան մնաց :

Երկրարմեայ դառը փորձառութեամբ զինուած , ժողովի անդամներն անողոք Քննադատութեան ենթարկելով անցեալի գործունեութեան ձեր եւ ուղղութիւնը . կենսական փորձերի հիմուն վրայ զժեցին այն նախապարհը , որի վրայ մինչեւ այժմ կանգնած է Գաշնակցութիւնը :

Աւերոյ ենթ համարում երկար կանգ առնել ժողովի պարապմունքների վրայ : Իաշնակցութեան Ռազդիր , որ մշակուած է այդ ժողովում , կարող է ամփոփ զադափար տալ նրա մասին : Յիշասակենք միայն մի կշտ : Ժողովը ուներ խորհրդակցական բնաւորութիւն . առաւել՝ մտքերի փոխանակութիւն . այդ պատճառով բոլոր այն հարցերը , որ դրուում էին . ենթարկում էին վիճարանութեան մինչեւ այն ժամանակ , երբ բոլորն էլ համաձայնում էին հարցի այս կոմ այն վերջնական ձեւակերպման վրայ . ո՞չ մի հարց չէ ևնթարկուել բուկարկութեան . բոլորը բնդունուել են միաձայն հաւասութեամբ :

Ժողովութեանները հասկանում էին . որ յեղափոխական կազմակերպութեան բոլորն ընաւ նշան չէ հայ ժողովրդի յեղափոխական ձգառումների բուլանալուն . շարժման կանգ առնելուն . որ բնդհանուր հիսարափութիւնը անհուսափելի էր . ժամի որ ուստահայ հասարակութիւնը շատ մեծ ակնկալու թիւններ ուներ . որոնք ոչ մի դեպքում իրազօրծուել չեն կարող այն ժամանակուայ հանգամանքներում . որ կուսակցութիւնը չեր կարող չըուլանալ , ժամի որ գործունեութեան նախկին ծրագիրը չեր համապատասխանում զրիխաւոր կէտերում յեղափոխական կեանիքի խնկական պահանջներին : Պարզ էր նոյնպէս , որ յեղափոխութեան յենարանը պէտք էր փնտուել ոչ Կովկասում եւ ոչ արտասահմանում . ուր կարող են շատ շուտով ոգեւորուել եւ նոյն արագութեամբ էլ սառչել եւ անտարբերութեան մէջ թնկդմուել , այլ այնտեղ , հեռո՞ւ , հայ ժողովրդի տանջուող սրախ մէջ , եւ որ յեղափոխութիւնը կանգ չի առնի ոչ մի խորտակիչ ուժի առաջ , ժամի զոյուրին ունին կեանիք տանջուուցիչ անտարբերութիւնը , կեանիք դառը պայմանները . — նա միայն կը փոխի իր ձեւը . յարմարուելով նոր պայմաններն , երբեք իր Համբարձուութիւնը :

Ժողովը ցրուեց շատ անմասստ պայմաններում : Գաշնակցութիւնը նիւթական միջցոներից բոլորովին գորիկ էր : Ոչ միայն գործիչների համար նանապարհածախ չեր զտնուում , այլև ժողովին եկած պատզամատ որների շատ համեստ ապրուստ համարեա թէ չեր հայրայրուում : Բայց հասարակութեան վրդովեցուցի անտարբերութիւնը , կեանիք դառը պայմանները . փոխանակ յուսահատեցնելու , աւելի եռանիք էին ներշնչում բան գործիչների սրտերում : Մի շատ նեղ դրամական շրջանի աջակցու . . .

(Զեռագրի գերջին ժամը կորած է : Գէտք է լինի՞ մի շատ ներ չընանի դրամական աջակցութեամբ ժողովականները ցըւուու են իրեց տեղերը . և . Գաշնակցութիւնը ձեռնաբեկում է զործունէութեան , Համաձայն ընդհանուր ժողովի տուած որոշումների : ԱՄԲ .):

Ծիծիւն Հ. 8. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ :

Ա. հասոր , էջ 80-91 :

## ԱՅԲ ՈՒ ԲԵՆ

ԱՅԲ ՈՒ ԲԵՆ յօդուածալարքի առաջին երկու մասերը կը պատկանին, իրականութեան մէջ, Թրիստափոր Մէքայէեանի գըրցին. բնագիրը կը գտնուի Հ. Յ. Դ կեդրոնական արհիւէ թուղթերուն մէջ. Այժմն Վրացեանի վկայութեամբ, Թրիստափոր այդ երկու բաժինները զատ է Ամինն Զատարեանի աշխատակցութեամբ: Այդ բնագիրի և ԴԻՌՕՇԱԿԻ 1893 նոյեմբերի ու 1894 Ծունդուրի համարներուն մէջ հրատարակուած ԱՅԲ ՈՒ ԲԵՆի բաղդառութիւնը ցոյց կու տայ, որ Խերազդրութիւնը (Խոսուու) կատարած է մասնակի փոփոխութիւններ և յաւելումներ միայն: Բայց ամենայն հաւատականութեամբ Խոսուուի դրչին կը պատկանին շարքին վերջին երկու բաժինները (1894 Մարտ և Մայիս), որոնց բնագիրը զատ չէնց կեդրոնական արհիւէն մէջ:

Հ. Տ.

Նոյեմբեր, 1893

Այր ու բեն կայ կարդալ-զրել սովորելու համար, կայ այր ու բեն, այսինքն՝ տարրական օրէնքներ՝ զանազան մասնագիտուրի նեների համար. կայ այր ու բեն նաև հասարակական խնդիրների շրջանում:

Դժբախտաբար, այս վերջին տեսակի այր ու բենն անհասկանալի կամ տարօրինակ է համարուում շատերի համար: Զնայելով, որ հասարակական երեւոյքներն աշխարիխ բոլոր անկիւններուում պատմութիւնը դարձ ցդար կրկնում է զարմանալի նմանութեամբ՝ մեր յեղափոխականներից շատերի համար, կարծես, հայր և Հայատանիր մի բացառութիւն են. որ դուրս պիտի համարուին համամարդկային բնդիանուր օրէնքների ազդեցութիւնից: Հայցեղափոխականը չէ ուզում որեւէ առնչչարին ունենալ մարդկային պատմութեան ենս: Անմեզների անարաստ արիւնով շաղախուած, անարդարաւթեան սի դրույնով կենուած, միլիոնաւոր ժողովուրդների հառաջանքներով եւ սպով արատաւորուած պատմութեան էշերը մենք չենք ուզնի ուզում նանաչել: Այս, յեղափոխական այբուրենը զտնուած, բնդունուած չէ մեր զանազան գործիչների կողմից:

Բայց չէ՝ որ այդ այր ու բենը կայ, եւ չէ՝ որ նրա բնդունելը կը լինէր ամենանպատակայարմար միջոց մեր երկրի յեղափոխական ծգուումները մի բնդիանուր լեզուով եւ ոզով արտայայտելու համար:

Այս, այդ այր ու բենը կայ, եւ մեզնով չէ. որ նա որոշուած է: Մի միայն, բնականաբար, նա կը մնայ անըմբնելի բոլոր այն «զործիչների» համար, որոնք չեն արտայայտում ո՛չ բաւականաչափ զգացմանք դեպի մեր

ամբախտ ժողովրդի անդաշտպան շահերը եւ ոչ էլ առողջ միտք՝ համամարդկային պատմութեան եւ ներկայ ժամանակների ուսումնասիրութեամբ հայի դրութիւնը լուսաբանելու համար :

Հայ ժողովուրդը ազատութիւն է ուզում, — այս ամենին համար պարզ է, եւ այս խօսքը միակ տառն է. միակ այլն չ, որի անհրաժեշտութիւնն ընդհանութիւնից ընդունուած պէսք է համարել։ Բայց մի տառ այլը ու բեն չէ կազմում. այլրից յետոյ զալիս է բենը։

Ի՞նչ է նշանակում ազատութիւն. ի՞նչ է հասկանում մեր ժողովուրդը ազատութիւն խօսքը արտասանելիս։

Շատերը կ'ասեն. քաղաքական ազատութիւն, ազգային անկախութիւն, հայկական կոստամարութիւն առանձկանի տեղ։

Դա, ի հարկէ, շատ որոշ պայման է. բայց բովանդակում է արդեօք իր մէջ ժողովրդի բոլոր իդաերը, զագափարները, նրա բոլոր պահանջներն ազատ դրութիւնից։ Ազատութեան ձգտելով՝ արդեօք մեր ժողովուրդն ուզում է միմիշայն իր ազգային ինքնասիրութեանը բաւականութիւն տալ, քէ այդ դրութեան հետ նա անշուշտ կապում է առհասարակ իր կեցութեան ընդհանութ բարեփոխումը։ Մենք չենք հերեւում առաջին մօտիկի նշանակութիւնը, բայց հակառակ ենք այն հայեացներին, որոնք ժողովրդի դրութեան բարեփոխումն անպայման կապում են նրա անկախութեան հետ, համարելով այդ բարեփոխումը իմ ինքնասիրնեան հասկանալի, բնական, անհրաժեշտ հետամուս անկախութեան։ Սա է այն բենը, որի վրայ անհրաժեշտ է կանգ առնել։ Բայց համաձայնուենք հանօրէն, որ իսկապէս ժողովուրդն ազատութիւն է կամենում ոչ քէ լոկ ազգային ինքնասիրութիւնից դրդուած, այլ զիխաւորապէս իր առօրեայ կեսամբ մաշող, նմշող հանգամանեների ազգեցութեան ներքոյ։

Խօսեցրէ՛ Հեքեարի, Մանազկերտի, Սասնոյ մի մասի հային, որը յայտնի է իր տեղում Փլաս (ստրոկ) անուան տակ։ Դա պատկանում է այս կամ այն ժիրտ աղային, որը հարստահարում է նրան ուզածին պէս, ծախում է նրան ուրիշին 10-20-30 լիրայով, եւ միեւնոյն ժամանակ հռվանաւորում է հայ վաշխառուի եւ միւս ժիրտ աղանդերի դէմ. այդ հայը, որ տարին մի երկու ամեցամ հազի է տեսնում տէրութեան պաշտօնեայ, դժուար քէ հետաքրքուի հայկական օրէնսդիր ժողովով կամ ազգային ազատ մամուլով. նրա համար, ի հարկէ, աւելի բնական է ազատութեան տակ հասկամալ Փլասի դրութիւնից դուրս զալը, Գէոդալ քէկի կամայականութիւնից անկախ լինելու եւայլին...

Վերցրէ՛ Կարնոյ դաշտի, Փոքր Հայաստանի, Վանայ շրջակայքի ժողովուրդը. Քրտերի յարձակումներն այս կողմերում նուազում են այն նշանակութեան առաջ, որ ունեն հարկերի չափազանց ծանրութիւնը եւ վաշխառումների կողովումները՝ վարչական կազմակերպութեան փոտածութեան հետ միասին։ Հարկային բարեփոխումները, հոդի եւ նրամից ստացուած արդիւնքների ապահովութիւնը զանազան էքիննդիների նաևկերից. — ահա այն պայմանները, որ առաջնակարգ տեղ են բանում այս հայերի կեամբում։

Ալաշկերտի հայը, իր յետին չքաւորութեան մէջ, ազատութիւնից ա-

ւելի շուտ կ'ուզենար խաղաղ դրացի : Թէ որքան նշանաւոր է նրա համար այս պայմանը , այդ պարզ է նրանից , որ գիտենալով հանկերձ , որ ազգային անկախութիւնը Ռուսաստանի սահմաններում հայերի համար կատարեալ ցնորդ է , գիտենալով . որ ազգային ինքնասիրութիւնը պահանջում է հաստատ լինել իր ազգային կրօնին . այսուամենային իր անհանգիստ դրացից — քըրտից — ազգաստելու համար՝ նա այսօր պատրաստ է ամբողջ զաւառներով Ռուսաստան զադրել եւ . երէ պահանջուի , նաեւ ռուսադաւանութիւն ընդունել :

Խօսեցրէ՛ք հայ գիրպացուն , հայ արեհստաւորին , վաճառականին կամ հայ ինտելիգենցին . թնդհանուր եզրակացութիւնը բոլոր լսածներից կը լինի՝ աղտառաթիւն ցանկանալով , հայ ժողովութիր ձգուում է այնպիսի գրութեան , որ ապաստած լինի՝ ինչպէս մահմեդականներից հայածուողի իր անարզ դրաւթիւնից . ինչպէս օրէնքի առաջ եղած անհաւասարութիւնից , նոյնպէս և հարկերի ծանրութիւնից . Քրտերի եւ պաշտօնեաների յափշտակութիւններից . բէկերի և վաշխառուների իշխանութիւնից . Խողին վերաբերեալ զեղծումներից . իր յուսահատ շատորութիւնից , իր աստանդական մուրացկանի դրութիւնից եւայլին .

Այժմ հարցնում ենի մենք . ի՞նչ կարգեր կարող են ապահովել այդ պահանջները . ի՞նչ կորզեր կարող են բաւականութիւն տալ իր նակատի քրտինքով ապրող մեծամասնութեան բոլոր արդար պահանջներին :



Յունուար , 1894

Անցեալ անգամ մենք վերջացրինք այս հարցով . թէ ինչ կարգեր կարող են ապահովել ժողովրդի արդարացի պահանջները :

Հարկաւոր է պարզ դնել հարցը եւ աներկիւթ ֆնանել դրան . որովհետեւ անխողնութիւն է բաղցածին հացի տեղ քար տալ . որովհետեւ ապշութիւն է դարման շամել հիւանդի այն վերքին . որից խսկապէս տանջուում է ինքը հիւանդը :

Սակայն «Դաշնակցութեան» սկիզբ առնելուց առաջ այդ հարցերը դրել եւ բառ իւրեանց մշակել են երկու աւելի հին հայ յեղափոխական օրգաններ , — «Արմենիա» եւ «Ճնշակ» : Խնչալու են հասկացել այդ օրգանները հայի ցաւը եւ նրա ապագան բարութելու անհրաժեշտ պայմանները :

Խսկապէս «Արմենիա»յի մասին . այն «Արմենիա»յի , որը . ինչպէս ինքը վաղուց յայտարարել է . դադարել է յեղափոխական կազմակերպութիւն , յեղափոխական կինդամանի զործի օրգան լինելուց . որն այժմ գրադուած է աւելի փողի եւ ուրիշ տեսակ վիճակի խաղեր կատանելով իր բաժանորդների համար . — խսկապէս . ասում ենք . «Արմենիա»յի մասին չարժէր խօսել . չարժէր . որովհետեւ պարզ է . որ հանդերձ իր յեղափոխական երեմիականներով , այդ բերրը հասել է բարոյական մահուան . իր նիւթականն ապահովելու միակ եւ թշուառ խնդրին :

Բայց մեր միտքը պարզելու համար, աւելի լաւ է, խօսենք՝ աչքի առաջ ունենալով հասարակութեան մէջ պտտող, փոքր ի շատէ յայտնի կարծիքներ, ծրագիրներ, ուղղութիւններ : Խնչքան եւ անորոշ լինէր «Արմենիա»յի, այդ նախկին «Հայքենասիրաց Միուրեան» օրգանի նախկին ծրագիրը, այն ծրագիրը . որը տարեցտարի շաբարը երկու ամգամ նոյն ոչինչ չպարզող խմբագրութեամբ լոյս էր տեսնում քերքի առաջին սիւնակում՝ սակայն այս եւ այն խմբագրական առաջնորդողներից նկատելի էր, որ «Արմենիա»յի համար առաջնակարգ տեղ էին բռնում Թուրքիայում տիրող ժարշական-քաղաքական թերութիւնները : Վերացնել այդ քերութիւնները՝ եւ հայի լացը բախտաւոր ժամի, հայի քշուառ կենցաղը կատարեալ անդորրութեան պիտի վերափոխուին : Այդպէս է արդեօք :

Ասուուած զիտէ, ինչ էր հասկանում Պրմ . Փորբուգալեանը վարչական բարեփփոխումներ ասելով . բայց ամենայն համբերութեամբ կարդալով այդ ժարողները՝ մտածում էինք . ենթագրենք թէ, գիւրական մի շարժուածքով Թուրքիայում իրականացաւ ներկայ ժամանակներիս համար առաջնակարգ մի եւրոպական ժարշական դրութիւն . ի՞նչ կը լինենք մենք դասուած դորանով : Ի հարկէ շատ բան . բայց ոչ այն բոլորը, ինչ հարկաւոր է ժողովրդին . ոչ այն դրութիւնը, որի անունով միայն մենք ձեռներս սրտերիս վրայ դրած, առանց մեր խնդի առաջ ամաշելու, կարող լինէինք բարձրաձայն գոչել ժողովրդին . «Հայ ժողովուրդ, ուս դի՛ք յեղափոխուրեան դժոխային ուղին . կոռի՛ր, մենի՛ր, զոհի՛ր որդիէդ ու ունեցածդ . եւ երբ կը ստանաս այդ վարշական դրութիւնը . գու բախտաւոր կը լինեն անպատճառ» . . .

Պարսկի զիւղացին անկափ է, իր երկրում նա հաղաքականապէս իշխող է, բայց ապահով է նրա կացութիւնը . ազա՞տ է նու . ոչ, նա սարուկ է եւ ազգաւուս : Ռումանիան ազա՞տ է . նրա հաղաքական կարգերն՝ առնուած են եւրոպական սահմանադրական մոդելներից . բայց ի՞նչ է նրա զիւղացու դրութիւնը, երբ ոչ կատարեալ նորտուրիւն . բոլոր աշխատաւոր . բայց մեծ մասամբ անհոգ զիւղացիք իրականապէս պատկանում են մի ժամի հազար հոդատէր ազնուականների : Խոալական ժողովուրդը, որը դեռ երեկ քօրափեց իր վրայից Աւստրիայի լուծք եւ ձեռք քերեց հաղաքական ազատուրիւն, ներկայումս հեծում է դառն աղքատուրեան տակ : Եւ Սիցիլիան, այն Սիցիլիան, որ խոալական ապատամբուրեան յենարանն էր կազմում, որ համարակ բարձրացրեց ապատամբուրեան դրօշակն օտար կառավարուրեան դէմ, հենց այս բոլոշէս զէնէր ձեռ ֆին կուում է իր սեփական, իր արիւնով ստեղծուած կառավարութեան դէմ . . . Ուրսուն միլիոն ռուս ժողովուրդը . հաղաքականապէս ազատ լինելով հանդերձ՝ այսօր այնքան աղքատ է եւ տգէտ . որ համարեալ կենցանեների կեանէ է վարում : Վերջապէս Եւրոպայի առաջնակարգ ազատ սահմանադրական երկրներում, ժողովրդի առնուազն երկու երրորդ մասը ապրում է օրէցօք, խաղում է ապրանք ստեղծու հասարակ մեմենայի դեր . ամենական եւ հասարակական յարաբերուրիւնները մարդու համար այդ երկրներում այնքան խիստ որոշուել են, որ ոչ մի երկրում, նոյնիսկ ամենայետաղէմ երկրների հետ համատած, անհատն այնքան երկիւդ չէ կարող ունենալ հենց վաղն անգործ մնալ եւ փողոցի մէջ սովից մեռնել, որքան հենց

այդ քաղաքակրութեան մեծահոչակ օրբաններում։ Ով փոքր ի շատէ ծանօթ է երրուստկան ներկայ կեանիքն՝ նա կարու չէ բացատրութիւնների ։ յամենայն դէպս յիշենք, որ Լոնգոն քաղաքը միայն ունի 100.000 փողոցային մուրացկաններ, որ բանուորթների մշտական գործադուլներն աննկարազերի չարիքներ են առաջ բերում այդ միջինաւոր դասակարգի համար, դասակարգի, որը բացի իր ձեռքից եւ ոտքից չունի ուրիշ ոչ մի սեփականութիւն, որ երրուստկան բոլոր պարլամենտներում սոցիալիստ դեպուտատների բոու տարեցտարի աւելանալը, բանուորական յուգումները եշան են խիստ դժգոհութեան տիրող կարգերի դէմ, որ վերջապէս անորոշիցմի սարսափինար գործունեութիւնը, իբրև մեծամասնութեան դրութեան վերաբերեալ անգուսու բողոք՝ ծնուել եւ զարգանում է ենթաց այդ երկրներում։

Ընդհանրացնելով մեր ասածները երոպական կարգերի բացասական կողմերի մասին՝ մենք կը կամենայինք բնրերցողի հետ զայ հետեւեալ եղակացութեան պարզ է, որ Երրուստի իր քաղաքական կազմակերպութիւններով այսօր բարձր է ուրիշ երկրներից, միեւնոյն ժամանակ ապացուցուած պիտի համարել, որ այդ կազմակերպութիւններն անկարող են ապահովիլ ժողովրդի բարեկեցութիւնը եւ հետեւարար իբրենց տիպով դեռ շատ եւ շատ սոսոր պիտի համարուին։

Մեզ կարսդ են ասել, որ նոյնիսկ Երոպայում չենք զտնում այնպիսի քաղաքական մեւեր, որոնց մենք հաւանէինք, նախանձէինք։ — Ճիշդ է՝ սակայն հարցը հաւանելու, չհաւանելու մէջ չէ. հարցը միմիայն նրանունն է, որ մենք պարասաւոր ենք շծածկել մեր հասարակութիւնից Երոպական քաղաքական կազմակերպութիւնների անկարողութիւնն իբրենց ժողովրդի բարորդինն ապահովելու, տալու նրան այն, ինչի նա այսօր ճգնում է։

Նածկել այս ամէնք ժողովրդից, երբ մենք նրան բարօրութեան անունով կոչում ենք դէպի յեղափոխութիւն՝ այդ անխոնութիւն է մի կողմից եւ անհայի կարինատեսութիւն միսս կողմից։ Թո՞ղ նա իմանայ այս ամէնք, որպէսզի յեղափոխական մի շարժումից յետոյ, իրականացած չտեսնելով իր իգձերը՝ յուսախարութեան եւ ռէակցիայի շիակի. թո՞ղ նա իմանայ այդ ամէնք, որպէսզի երեք նա երես շդարձնի երկրի յառաջադէմ թնտելիգենտ-յեղափոխականներից, որպէսզի վաղը կարնատեսութեամբ չմերժէ այն, ինչ այսօր արեան գետեր բափելով՝ ձեռք բերած կը լինի...



Մարտ, 1894

#### Անցնենք «Հնչակ»ին։

Հնչակեան խումբը առպարէզ դուրս եկաւ, իբր սոցիալիստ-յեղափոխականն ին հենց սկզբից յայտարարեց, որ ինքը չի բաւականանալու միայն ռամկավարական ազգային անկախութեամբ, այլ նրա նպատակն է սոցիալիզմը։ Բայց թէ ինչ բան է սոցիալիզմը, ինչպէս կարող է նա իրականանալ, դրա մասին չէր կարելի ոչ մի որոշ զադափար կազմել «Հնչակ»ի սուած յօդ-

ուածներից, չեր կարելի, որովհետեւ հենց ինքը, «Հնչակ»ի խմբագրութիւնը, որոյ զաղափար չուներ նրա մասին եւ չունի միջնեւ այսօր էլ:

Հայեացների ժառու, խառնաշփորութիւն եւ ինքնուրոյնութեան կատարեալ բացակայութիւն, — ահա թէ ինչ կարելի է նկատել «Հնչակ»ի տեսական հայեացների մէջ: Ես երէ «Հնչակ»ի խումբը ասպարեզ դուրս եկաւ բոլորովին անպատճատ, առանց դրական համոզումներ ունենալու, պէտք էր սպասել, որ զանէ իր Շամեայ զոյութեան բնբացքում նա այդ ձեռք կը բերէր: Սակայն այդ չեղաւ, եւ ներկայումս էլ չհայելով այն փոփոխութիւններին. որոնց ենրարկուել են «Հնչակ»ի տեսական համոզումները, նա նոյն ժառու է ներկայացնում, նոյն անիմքնուրոյնութեան կնիքն է կրում, ինչպէս եւ առաջ:

«Հնչակ»ը առաջ իրեն երատարարեց սոցիալիստ-յեղափոխական. վերցրում աւելացրել է եւ երկու ուրիշ կոչումներ. մարքսիստ եւ սոցիալ-դեմոկրատ: Հենց այդ երկու նոր տերմինները բացատրելու համար «Հնչակ»ի խմբագրութիւնը ֆերդ. Լասալի «Սահմանադրութեան էութեան մասին» գրքոյի բարգմանութեան կցել է մի երկու յառաջարան: Գիրքը նոր է լոյս տեսել, այսպէս որ այդ յառաջարանը նրա վերջին խօսքը կարելի է համարել, ուստի կանգ առնենք ինչ դրա վրայ: Այդ յառաջարանը մեր բնբերցողներից շատ շատերը կարդացած չեն լինիլ, եւ երէ կարդացած էլ լինեն, հաւատացած ենք. շատ էլ բան հասկացած չեն լինիլ նրա էնզելական խրքին նախադասութիւններից. աւելորդ չենք համարում այս պատճառով կրկնել այստեղ նրա մէջ արտայայտած մի ժանի մտքերը, որոնք նշանակութիւն ունեն այժմ:

Հասարակական, հաղաքական կազմակերպութեան կիմքը կազմում են երկիր տնտեսական պայմանները: Ուստի, երբ մի երկրի տնտեսական պայմանները փոխուում են, անպայման պէտք է փոխուեն եւ նրա հաղաքական ձեւերը: Հայութեան մէջ ներկայումս կատարուում է մի այդպիսի պրոցես: Հայ ժողովրդի տնտեսական պայմանները փոխուում են, նոյն ձեւով, ինչ ձեւով այդ եղել է ներոպայում. մանր սեփականատիրութիւնը բայցայում է հետրզիւտէ եւ տեղի տալիս խոչըր սեփականատիրութեան: Տանկահայ զիւղացու համար հարկերի պատճառով իր սեփական հողը դառել է «Ճամբ թե», որ չէ տալիս ոչ մի շահ, այլև մի շարաբաստիկ զործիք, որ ծառայում է միայն շահազործողներին»: Նա բռնում է իր հողը, զնում արդիւնաբերական բաղաբները եւ դառնում յարձկան բանուուր: Նոյն վիճակին են ենրարկուում ե՛ւ արհեստաուրները, որոնք անկարու են լինում մրցել խոչըր զործարանատերների հետ: Այսպիսով՝ մեր մէջ պատրաստուում է պրոլետարիատ, բանուուր դասակարգ: Դրա հետ զուգընթացարար զարգանում է մի ուրիշ դասակարգ, բութուազականը, որը իր ձեռքի տակ ունենալով կապիտալը, երեւան կը զայ, իբրև բանուուր դասակարգի մշտական կեղենից—

«Դա է այն պատմական բնական պրոցեսը, որ սկսել է տեղի ունենալ Հայութեան մէջ եւ որի առաջադիմական բնթացքն անխուսափելի է եւ միեւնոյն ժամանակ ինքն էլ պայման Հայութեան ընդհանուր յառաջադիմութեան: Հայութեան մէջ ծագող տնտեսական այդ նոր յարաբերութիւններն իրանց

շաբունակ գարզացումով ազգին աւելի եւ աւելի կը զատեն երկու ժամի, երկու դասակարգի վրայ, բութուա եւ պրոլետարիատ, որոնք հնաց այժմ, իւսանց կազմութեան ներկայ սկզբանառութեան մէջ, ունեն միմեանց հակառակ տնտեսական շահեր, որ՝ զնալով՝ աւելի ու աւելի կ'որոշուեն եւ վերջը կ'առնեն արցէն սուր կերպարանքը:

Կանց առնենք այս վերջին կետի վրայ միասմանակ:

Ուրեմն այդ պրոցէսն անխուսափելի, նակատազրական է, ուրեմն կապիտալիզմը պէտք է անպայման մեր մէջ մուտք գործի, պէտք է տակնուվրայ անի ներկայ բոլոր կարգերը, մտնեն խոշոր արդիւնազործութեան ձեւեր, հարստութիւնը պէտք է կենտրոնանայ փոքրաբիւ կապիտալիստների ձեռքը, ընդհանրութիւնը անպատճառ իր բոլոր սեփականութիւնից զրկուի, եւ այս բոլոր ցաւերից յետոյ միայն կարող է իրազործուել սոցիալիզմը:

Այսպէս է. չէ...

Սակայն նոյն «Հնչակ»ի խմբազրութիւնը աւելի մեծ ապլումբով պնդում էր մի ժամանակ, թէ իսայ ժողովուրդը կարող է խուսափել կապիտալիզմի շարիքներից, որ յանցանք է աջակցել նրա մուտք գործելուն, որ պէտք է դրա առաջն առնել, որ հենց դրա համար է սոցիալիզմը. հարկաւոր է միայն ձեռք թերել բնդարձակ ուամկավարական կառավարութիւն, որը երկրի բոլոր հարստութիւնը կը դարձնի հասարակական, հաւաքական սեփականութիւն եւայլի: Եւ երբ «Արմենիայի էցերում Պ. Սիմենի յանդզնեց ասելու, թէ անհարելի քան է, թէ մինչեւ իսկ ձգուում «արզելի կապիտալիզմի մուտքը» հակասում է նշանաւոր սոցիալիստների քէորդիաներին, ահա թէ ինչ պատասխանեց «Հնչակ»ը իր օլիմպիական քարձութիւնից Պ. Սիմենի հասցէին.

«Մէր կարծիք այն է, որ եթէ Հայաստանն ամփոփուէ ուամկավարական-հանրապետական պայմաններում, նաև իր տնտեսական սովորութիւններով ու առանձնայտութիւններով կարող կը լինի խուսափել կապիտալիստական բուն կազմակերպութիւնից, միանդամայն օգտուելով զրա հարկաւոր ու առողջ պատուղներից: Մէր այս միտոքր, ինչպէս ասացինք, Ա. Սիւնին կարծում է թէ հակասում է նշանաւոր սոցիալիստների թէորդիաներին: Տեսնենք, ուրեմն, թէ Կ. Մարքսն, սոցիալիզմի հայրը, ինչ է ասում իր «Նամակում» հրատարակութիւն սոցիալիզմի երկրորդ հօր՝ Ֆրիդրիխի կնդելուի: «Ես այն կարծիքն ունեմ, — ասում է Մարքսը, — որ կարելի է իւրացնել կապիտալիստական կազմակերպութեան պատուղներն. առանց կրելու այն չարչարակքները, որ նրանից անրաժման ևն ևն գարզանալ սեփական, ինքնուրոյն պատմական պայմանների համեմատ: Ռուսաստանը, որ այնքան ձգուում է զառնալ կապիտալիստական երկիրը՝ Արեւմտեան Եւրոպային նմանելու, նա այդ քայլն անելով կը կորցնէ ամենայարմար առիթներից մէկը, որ իրերի պատմական ընթացքը տուել է նրան խուսափելու համար կապիտալիստական կազմակերպութեան ամէն ձախորդութիւններից: Իսկ Արեւմտեան-Եւրոպական կապիտալիզմի ծագման ու ընթացքի իմ նկարագիրն (այսինքն՝ թէ Եւրոպայում կապիտալիզմը կը կերպարանափոխուէ ապազայում սոցիալիզմի) գարձնել պատմական-փիլիսոփայական մի ամրող թէորդա եւ ասել, թէ ամէն ժողովուրդ անպատճառ պիտի այդպէս ընթանայ (կապիտալիստական շաւ-

զով գեղի սոցիալիզմ), — ներուզութիւն։ թէորիայիս այդպիսի բացատրութիւնն ինձ համար միանկամայն թէ՛ չառ պատուարեր է և թէ շափազանց ամօթալիք»։ Այսպէս, Համեւարար, ամէն երկրին պարաւաւորեցոցից չէ սոցիալիստական կազմակերպութեան համելու համար կատիստալիմի չաւզով անցնել։ Կան Երկիրներ, որ անհնարով իրենց պատմական ինքնուրոյն պայմանները և կամ ամփափելով նրանց հասարակական նորասակայարմար կերպերում, «կարող կը լինեն իրացնել կափիսալիքի առողջ պատուիներն, առանց կրելու նրա շարժարանֆիերը», կարող կը լինեն օգտուել նրա բարիք-ներով, առանց զգալու նրա շարիքները, «կարող կը լինեն և առանց կապիտալիստական շաւզի համելու սոցիալիստական կազմակերպութեան»։ Այժմ պա՞րզ է ձեզ, ո՞վ դիտուն Մինի, որ նոյն իրեն Մարքսի և մեր ասածն իրար չեն հակասում։ Ինչո՞ւ համար էք ձեր փայտէ զրչով Կ. Մարքսի մեծ անունը մրուտում»։

Խոկ «այժմ պարզ է ձեզ, ո՞վ գիտուն» «Ճնշակ»ի խմբագրութիւն, որ դուք ձեզ սարսափելի կերպով հակասում էք, որ դուք կրկնում էք նոյնը, ինչ որ Փոքրութանի «այս ձեռք քերած դիտահաս արբանեակներից մէկը. ուն Ա. Սլունին» էր ասում. պա՞րզ է նոյնակա որ անուանելով ձեզ մարքսիստ, հակասում էք Կ. Մարքսի վերոյիշեալ խօսքերին։ «Ինչո՞ւ համար էք ձեր փայտէ զրչով Կ. Մարքսի մեծ անունը մրուտում»։



Մայիս, 1894

Անցեալ համարում մենք ցոյց տուինք, քէ ի՞նչ արմատական հակասութիւնների մէջ է ընկել «Ճնշակ»ը և ինչպէս է ինքն իրեն ապակներ հասցընում։

Նարունակենք, սակայն, մեր ընդհատուած քաղուածքը։

Հայութիւնը բաժանուում է երկու իրար բշնամի դասակարգերի՝ բուրժուատ և պրոլետարիատ։ Սակայն այդ երկու բշնամիներն ունեն և մի բնդիհանուր բշնամի, դա միապետական կարգերն են։ Հայկական հարցն այսպէս բարդ լինելով՝ բարդ է և հայ աշխատաւոր ընդհանրութեան ու դրա հետ միասին հայ սոցիալիստների դերը։ Դոքա մի կողմից պէտք է ձգուն առայիկու միապետական կարգերը բուրժուազիայի հետ ձեռք ձեռքի տուած։ Միւս կողմից միոց պէտք է տան հայ աշխատաւոր տարրին պաշտպանելու իր շահերը բուրժուազիայի դէմ, որը միապետական կարգերի անկումից յետոյ աւելի մեծ ուժ է ձեռք քերելու։ Բայց ի՞նչպէս այդ կատարել։ — Հարկաւոր է զեմի տալ ծողովրդի ձեռքը։ Այդ գէմեր հետեւալի է։ —

«Բացատրել աշխատաւոր բնդ հանրութեանն իր պատմական դերը, իր սոցիալական-քաջարական ինքնիրենը ու շահերը, գարդացնել նրա դասակարգային դիտակցութիւնը, լուսարանն ու որոշել նրան իր քաղաքական իւրաքանչիւր պահանջը և այդպիսով դարձնել կողմնակից նրան իր շահերի

Համապատասխան յեղափոխութեան, պատրաստել նրա այդ անելիք յեղափոխութիւնը, եւ պրոպագանդայի ու ազիտացիայի հետ միաժամանակ համախմբել ու կազմակերպել նրա ուժերը մէկ բնդ հանուր կազմակերպութեան մէջ ընդհանուր յեղափոխութեան համար — առաջ հայ սոցիալիստի, հայ յեղափոխականի բռնելիք բնթացքն ու աշխատութիւնները»:

Այդ տեսակ զենք տալու դէմ մենիք ոչինչ չունենիք ասելու. սակայն մի հանգամանիք անորոշ է մնում այդ կտորի մէջ, պարզ չէ, թէ ուժ ձեռքը պէտք է տալ այդ զենքը: Մեր աշխատաւոր ընդհանրութիւնը, որ ըստ «Հնչակ»ի անհուսափելի կերպով պէտք է պրոլետարիատ դառնայ, գեռ եւս չէ դառել. դեռ եւս սաղմային դրութեան մէջ է. ինչպէս խոստվանում է ինքը՝ «Հնչակ»ը խօսում է վերոյիշեալ կտորում «դպասկարգային զիտակցութեան» մասին, որ պէտք է մտցնէ աշխատաւոր ընդհանրութեան մէջ հայ սոցիալիստը, նա պարզ չէ յայտնում. թէ ինչ դիրք պէտք է բռնի հայ սոցիալիստը, իրեւ սոցիալիստ, դեպի ներկայումս զգութիւն ունեցող աշխատաւոր ընդհանրութեան ամենահական մասը, դէպի զիտական դասակարգը: Պարզ չէ թէ այդ սոցիալիստական զենքը դրա ձեռքն էլ պէտք է տալ, թէ միմիայն սաղմի ձեռքը:

Մեզ բում է, որ ըստ «Հնչակ»ի սոցիալիզմն ոչ մի առնչութիւն չունի եւ չպէտք է ունենայ զիտական դասակարգի անմիջական շահերի հետ. հայ սոցիալիստը, իրեւ սոցիալիստ, զործ ունի միմիայն բանուորների հետ, հաւատացած լինելով, որ այսօր-էկուոց հայ աշխատաւոր ընդհանրութիւնը դառնալու:

Մեր այս կարծիքը կազմելուն տեղի են տալիս «Հնչակ»ի թէ՝ ընդհանուր դատողութիւնները եւ թէ մեր վերեւում բերած կտորի անմիջական շարաւակութիւնը, որտեղ նա պարզ ասում է, որ հայ ժողովրդի խկական պաշտպանները կը կատարեն բուն սոցիալիստական զործ՝ բանուորներին կազմակերպելով: Պէտք է խոստվանուենք, որ այս կտորն էլ բաւականաշափ չէ պարզում հարցը, մեր դրած հարցին դրական պատախան չի տալիս, որպիսիտեւ, զուցէ, բացի «քուն» սոցիալիզմից բանուորների համար՝ կայ մի այլ սոցիալիզմ, ոչ այնին «քուն», զիտական դասակարգի համար: Պարզ եւ դրական պատախան մենիք զունում ենք «Մի շարք հարցեր», յօդուածում («Հնչակ», № 16, Դեկտ. 1891): Այդ յօդուածում որոշ կերպով ասուած է, որ սոցիալիստական ձգուումներն ուղղակի արդիւնք են բանուորական շահերի. որ պէտք է արդիւնաբերութեան կենտրոն կազմող վայրերում բանուորների մէջ տարածել եւ բացատրել սոցիալիստական ձգուումները:

Խոկ «զիտակցի ժողովուրդը»:

Բանից դուրս է զալիս, որ այդ «զիտակցի ժողովուրդը» «իր տնտեսական տարրեր պայմանների շնորհով ընդունակ չէ իւրացնելու սոցիալիզմի զաղափարները»:

Եւ այս տողերը գրողը նոյն «Հնչակ»ն է, որը մի ժամանակ ձգուում էր գիւղական համայնական դրութեան վրայ Հայաստանում հաստատել սոցիալիզմը: Խոկ այժմ նա ոչ միայն բողել է սոցիալիզմը հաստատելու այդ

հանապարհը, այլ մինչեւ իսկ անհնարին է համարում որեւէ կերպով «զիւզացի ժողովրդին» ըմբռնել տալ սոցիալիզմի սկզբութեները:

«Հնչակ»ի բնրեցողները լաւ՝ զաղափար կը կազմեն նրա քարոզած գիտական սոցիալիզմի» մասին:

Սակայն տեսնենք, ինչպէս է ցանկանում «Հնչակ»ը իրականացնել սոցիալիզմը բանուորների միջոցով: Առաջ բերենի այդ կտորն էլ —

«Հայ սոցիալիստները . . . . կը կատարեն մի բուն սոցիալիստական գործ. Հայ բանուորներից, այդպիսով, նրանք պատրաստում են, կազմակերպում են «տաղապայի դիմուրական կուսակցութիւնը», որին ձեռք բերած ուժեկագրական սահմանադրական պայմանները «կը ծառային իրեւ գործիք» մզելու համար՝ միապետական կարգերի անկումից անմիջապէս յետոյ՝ իր գառակարգային կուրը շահերով իրան հակառակ իշխող դասակարգերի դէմ եւ ձգտելու այլեւս իր անմիջական նպատակ դարձած սոցիալիստական կազմակերպութեան հաստատութեան»:

Այս ի՞նչ «ապագայ դիմադրական կուսակցութիւն» է: Հարկաւոր է ֆիշ կանգ առնել որև վրայ, մի քիչ պարցիք:

Բանուորական հարցն իբրև ինքնուրայն դասակարգային հարց, հասունացած միմիշայն բառանական բռնականներում: Այդ ժամանակ եւրոպական մի քանի երկրներ ազատ էին բռնորովին միապետական ուժիմից, մի քանի տեղ էլ այդ ուժիմիք քեւը զոյւրին ուներ, սակայն բոյլ էր, մերգործական դեր չէր կարող խաղալ: Ուստի այդ երկրներում բանուոր դասակարգին մնում էր ուղղակի կոի մզել անմիջապէս բռնութական կառավարութեան դէմ: Իսկ Գերմանիայում. ուր օրեղ էին դեռ միապետական կարգերը, զերմանական սոցիալիստ-յեղափոխականները ձգտում էին կռուել այդ կարգերի դէմ՝ միացած բռնութափիայի հետ, միեւնոյն ժամանակ չմոռանալով, որ իբրեն սոցիալիստներ են, որ պիտի շարութակեն իրենց գործը բանուորների մէջ, կազմակերպեն նրանց, ստեղծեն «ապագայ դիմադրական կուսակցութիւնը», որպէսից յազդութիւնը տանելուց յետոյ կապ լինեն իրենց դաշնակից բռնութափիայի դէմ կանգնեցնել մի զորութիւն, մի ուժ եւ բոյլ չտան նրան ամբողջ արգիւնքը կլանելու եւ իրենց զլիին նստելու: Այդ ուղղութեամբ զերմանական սոցիալ-դեմոկրատներն ահազին քայլեր են առել առաջ, զերմանական բանուորները շատ բազակական արտօնութիւններ են ձեռք բերել: Այս մենք այսօր տեսնում ենք:

Նոյն բնրացքն առաջարկել են ուստի սոցիալ-դեմոկրատները ուսւ յեղափոխականներին, նոյնին առաջարկում են մեզ մեր հայ «սոցիալ-դեմոկրատները»:

Դասեր շառնել պատմութիւնից. միւս ազգերի օրինակից՝ մահացու մեղք է ամէն մի յեղափոխական մարմնի համար. ուստի շատ զովելի է «Հընչակ»ի այդ ձգտումը: Բայց խրատ, դաս վերցնել կեանքից եւ ոչ քերնակակել նոյնութեամբ այն, ինչ որ յայտնու են եւ յայտնում են այս կամ այն երկրի յեղափոխականները: Երբ զերմանական սոցիալ-դեմոկրատը ձգտում է միաժամանակ քերակարգերը ոչնչացնել եւ քէ «ապագայի դիմադրական կուսակցութիւն» կազմակերպել, կատարելապէս հաս-

կանալի՛ է բոլորի համար նրա անելիքը : Մասսամբ հասկանալի է եւ ուստ սոցիալ-դեմոկրատի բնբացքը, որովհետեւ թէ՝ միապետական կարգերը, ո- րոնց դէմ նրանք ուզում են կոռուլ, եւ թէ բանուորները, որոնց պէտք է կազ- մակիրապել, գտնում են մժեւնոյն երկրում : Խոկ ի՞նչպէս են մեր երկրի պայ- մանները :

«Հնչակ»ը միշտ կրկնում է, թէ Հայութիւնը բաժանում է երկու դա- սակարգի՛ հայ պրոլետարիատի, հայ բուրժուատ դասակարգի . որ հայ զի- դացին բողոքում է հողը եւ զնում արդինաբերական հաղափները եւ դանում է վարձկան բանուորը եւայլն : Խնչ նշանակուրի իւն ունեն այսուղ ամէն մի ժայլափոխում կրկնուող Հայութիւն, Հայ բանուոր, Հայ բուրժուատ խօսքերը . ի՞նչ արժէք ունեն դրանք սոցիալիստի համար : Երէ հայ զիւդացին բողոքում է հողը, երէ հայ դարբինը բողոքում է իր մուրիք, նա չի մնում իր մայրենի երկրում, նա զադրում է օտար երկրներ, զնում է Պալմի, Շտասատան, Յու- նաստան, Ռումանիա, Ամերիկա, Աստրալիա... եւ այսուղ միայն . Հայա- տանից դուրս, նա կարուղանում է դաւանալ «վարձկան բանուոր» : Վերադար- ձաւ իր երկիքը՝ նա դադարում է բանուոր լինելուց . նա նոյն հոդազործն է . նոյն արիեատաւորը : Եւ երէ նա կարող է «տիմադրական կուսակցութիւն» կազմել, դա այն երկրներում կարող է անել . որտեղ ինքը բանուոր է : Խոկ թէ ի՞նչպէս Ամերիկայի . Յունաստանի, մինչեւ խոկ Պալմի բանուորներից «Հնչա- կ»ը պէտք է «ապազայի դիմադրական կուսակցութիւն» ստեղծի Հայատանի համար, այդ միայն Աստուած զիտէ :

Կրկնում ենք. այստեղ ուշադրութեան պէտք է առնել ոչ թէ հայը, հայութիւնը, հայ բանուորը, հայ բուրժուատ, այլ այն երկիքը . որի համար ձգում կայ հաղափական ազատութիւն ձեռք բերել . ուշադրութեան պէտք է առնել նոյն երկրի տնտեսական պայմանները . նրա մէջ զոյութիւն ունեցող բուրժուային, բանուորին, լինեն դուքս հայ, բուրք . նասրանի . այդ փոյք չէ սոցիալիստի համար :

Ահս թէ ի՞նչպէս է հաշուեցրել «Հնչակ»ը սոցիալիստական զաղափարն ազգայնականութեան զաղափարի հետ, եւ ի՞նչ խառնաշփորչութիւն է առա- ջացել դրանից :

Ինչի՞ն վերագրել այս բոլոր անորոշութիւնները, ինչո՞վ բացատրել «Հնչակ»ի հայեացքների փոփոխութիւնը : Մի՞րէ Հայատանի տնտեսական պայմաններն այդպէս զգայի կերպով փոխուեցան . զիւդական համայնքներն սկսեցին առնելի արագ ժայկայուլ, թէ կապիտալի ահազին ժայլեր արաւ, կամ մի որեւէ ուրիշ հշանաւոր փոփոխութիւն պատահեց մեր երկրի հետ, որի ազգեցութեան տակ «Հնչակ» էլ փոխեց իր հայեացքները : — Ո՞չ այս եւ ո՞չ այն . «տնտեսական մատերիալիզմը», «մարկսիզմը», — որի ասելով զաղափարների փոփոխութեան պատահանները պէտք է որոնել երկրի տնտե- սական պայմանների փոփոխութեան մէջ, — անզօր է գտնում բացատրելու, պարզելու այս երեւոյքը : Խոկապէս մի բան փոխուել է, եւ այդ փոփոխու- թիւնը կատարուել է ո՞չ թէ Հայատանում տիրոն արդինագործութեան ձե- ռիք մէջ, այլ... արտասահմանեան ուսւ յեղափոխական գրականութեան մէջ :

Քանի դեռ այդ զրականութեան մէջ տիրապետում էր «Նարողնայա վոյիս» կուսակցութեան հայեացքները, «Հնչակ»ը կրկնում էր նրա ասածը. նա «համոգուած էր», որ կապիտալիզմը կարող է եւ մուտք զգործել Հայաստանում, որ կարելի է, մինչեւ իսկ պէտք է արգիլի նրա մուտքը, որ զի դական համայնքները կարող են ծառայել իբրև հիմք ապագայ սոցիալիստական կազմակերպութեան: Բայց հետզիետէ այդ կուսակցութեան ձայնը քույրացաւ եւ ասպարէզը (զրական) մնաց սոցիալ-դեմոկրատական կուսակցութեանը: «Հնչակ»ն այն ժամանակ «համոգուեց», որ կապիտալիզմն անխուսափելի կերպով պէտք է մեր երկիրը մտնի, որ անկարելի է նրա առաջն առնել, որ զի դական համայնքները պէտք է հայտայունին, որ զի դացին դառնում է վարձկան բանուոր, եւ այդ բանուորներից պէտք է կազմակերպել «դիմադրական կուսակցութիւնը» եւայլն:

Եւ այդ «փոխառութիւնը» կատարուել է այնքան պարզ, քնական, անմեղ կերպով, որ «Հնչակ»ի խմբագրութիւնը չի զգացել իր կրած փոփոխութիւնը, կարծել է եւ կարծում է, թէ ինքը միշտ միեւնոյն ուղղութեանն է հետեւել: «Հնչակ»ի գոյութեան առաջին օրից մինչեւ այժմ մեր սկզբունքները միշտ եղել են սոցիալ-դեմոկրատական», պնդում էր նա վերջերումն («Հնչակ», № 11 եւ 12, 1893): Այս տողերը կարդալիս մեզ մնում է միայն ուսերը վեր հաշել եւ զարմանալ «Հնչակ»ի անշափ միամտութեան վրայ:

Բաւական է որքան խօսեցին ուրիշների մասին: Միւս համարում մենք կ'անցնենք մեր ծրագրին, որ կազմուած է 1892 թ. ամառը «Դաշնակցութեան» նդիանուր ժողովում, որից յետոյ «Դաշնակցութեան» հայեացքները հիմնաւրապէս որոշուեցին եւ կազմակերպական ձեւերն արմատականապէս փոխուեցին:

## ԿՈՒԿՈՒՆԵԱՆ ԽՄԲԻ ԱՐՀԱՆԱՆՔԸ

Կուկունեան արշաւանքի միտքը յղացաւ Կարնոյ դէպֆից անմիջապէս յետոյ և կազմակերպում էր յեղափոխական խմբերի բանակցութիւնների հետ միաժամանակ :

Երբեմն Գէորգեան ձեմարանի, ապա Պետքը բարդի համալսարանի ուսանող Սարգիս Կուկունեանը, իր երկու բնկերների՝ Կոստանտին Լիսինեանի եւ Ռուբեն Յովհաննեսանի հետ բաղնում է Պետքը բարդի գալիս Կովկաս եւ տեղական խմբերի միջոցով պատրաստում արշաւանքի :

Դրա մանրամասն պատմութիւնն արդէն յայտնի է հայ հասարակութեան «Լուկունեան խմբի արշաւանքը». Հ. Յ. Դաշնակցութեան տպարան. 1894» ծանօթ զրեսիկից : Աւելացնենք միայն, որ խմբի անդամները որոշ կերպով չեն ներկայացնում իրենց, թէ ի՞նչ պէտք է անեն Տաճկահայաստանում, ինչպէս պէտք է անեն, ի՞նչ է սպասում իրենց : Սահմանագլխում ժողովուած այդ հարիւրառը երթասարդները (բացի 78 հոգուց, որոնք մասնակցեցին արշաւանքին, կային զեռ շատ շատերը, որոնք սպասում էին իրենց եկերպին) զործնական միջոցների մասին չեն մտածում, չեն խորհում, կարծես կամովին կորացած՝ դիմում էին դեպի անդունիք : Մի բան նրանց համար շատ պարզ էր. հարկաւոր էր արիւն քափել, հարկաւոր էր զրէծինուի լինել բազմարի անենդ զոհերի ամրիծ արեան համար : Սա մի տարբերային հոսանք էր, ազինի, վեհ, ոգեւորիչ հոսանք, որի առաջն անկարելի էր առենլ ոչ մի յորդորանելով, ոչ մի խելացք պատճառարանութիւններով, ոչ մի սարափելի պակազայի նկարազրութիւններով :

Համառօտակի յիշենք, որ խումբը սահմանն անցնելով՝ բարձրանում է Բոզ-Դաղը, կուում Թոփքալ-Խալէից եկած զօրքերի եւ շրջակայ զիւկերից ժողովուած քրդերի հետ եւ փախցնում նրանց : Պաշարի պակաս զգալով՝ խումբը դիմում է դէպի Թեմափո-Քինա ձորը, այնտեղից՝ Աղրուլազի ձորը անցնելիս սպասում է նանապարհին պատահած 5 բուրքեր : Անձանօթ լինելով բոլորովին երկրին (ուղեցոյցները, դժբախտաբար, հենց առաջուանից փախած են լինում), խումբը շատ դէս ու դէն ապարդին քափառելուց յետոյ, քաղցած, ծարաւ՝ որոշում է անդամների մեծամասնութեամբ վերադառնալ Խուտաստան՝ զարման նոր արշաւանքի պատրաստուելու համար : Սահմանագլխի հար զիւղում ընդհարում է տեղի ունենալ սահմանապահ ուսս կողակեների ու կուտակուած քրդերի հետ եւ խումբը ցրում է : Մի մասը ձերակալում է կառավարութեան ձեռք, դատում եւ դատապարտում է :

Խումբն արշաւեց եւ անոնք իրականութեան զարնուելով՝ հայքայուեց, անկարող լինելով իր իղձերը լինվին իրականացնելու : Նրա մի մասը ընկաւ պատերազմի դաշտում, միևն մասը, խմբապետի հետ միասին փառում է Սիրիքիայի խորհերում, մի մասն էլ դեռեւս շարունակում է հայդուկային խըմբերի մէջ զործել :

Հ. Յ. Գ. Կեղրոնական Արխիւէն.

«Վէմ», Գ. տարի, թիւ 1, Յունուար-Ապրիլ 1965

## ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԱՄԲՈԽԻ ԴԵՐԸ

Ա.

Ամէն անգամ, երբ հայ յեղափոխական շարժումը սաստիանում էր եւ ստիպում երոպական պետութիւններին աւելի խսիր պահանջել սուլրանից Տանկահայաստանի մէջ տիրող անկարզ իրերի փոփոխումը, սուլրանը նարպիկ կերպով օգտուելով շահերի այն հակառակութիւնից, որ կարող է առաջ զալ Երրորդյում Հայկական խնդրի այս կամ այն եղանակով լուծուելուց, ամէն անգամ զանազան առարկութիւններ էր անում կամ «սեփական միջոցներն» առաջարկում։ Երրոպական պետութիւնները շատ լաւ էին հասկանում այս խաղը, որ իրենց հետ խաղում է սուլրանը, հասկանում էին, բայց եւ այնպէս վախճնալով հետեւեալ վայրին անելուց, որ կարող էր բարդութիւններ առաջ քբերի եւ վնասել անմիջապէս իրենց շահերին կամ զօրեղացնել այս կամ այն հակառակորդին, իրենց տալիս էին լուրջ կերպարանք, սուլրանի ակնյայտնի ծաղրածութիւններն ստիպուած ընդունում էին իրը խելահաս, նպատակայարմար միջոցներ եւ բարձրացայն աւետում աշխարհին, որ այսուհետեւ ամէն ինչ լաւ կ'ընթանայ:

Բայց ով որ էլ խարուէր, չէր կարող խարուել հայ ժողովուրդը, որի զլիին էին կատարում այդ բոլոր «օյխնագուռթիւնները», որը դարերի ընթացքում լաւ էր ուսումնասիրել իր վեհափառ պետի գործ դրած «հայրախնամ բարենորդումները» եւ որը վնալի էր միանգամ ընդմիշտ խմել մինչեւ վերջը յեղափոխութեան դառը բաժակը։

Սուլրանի ամենալուրջ առարկութիւններից մէկն էլ հետեւեալն էր։ Եթէ ծրագիրն ընդունուի, եթէ քրիստոնեայ ազգաբնակութեան տրուի առանձնաշնորհումներ, այն ժամանակ մահմեդական մոլեռանդ ամբոխը կը գրգռուի, կը յարձակուի քրիստոնեանների վրայ եւ բոլորին կը կոստրի։ Իսկ եւ իմ ուժերով անկարող կը լինեմ դրա առաջն առնել։ Այս իւր առարկութեամբ նա խսկապէս երկիւր էր ազդում շատ շատերի վրայ եւ շատ միամիտներ անտեղեակ էին, որ ինքը սուլրանն է ամէն միջոց գործ դնում՝ գրգելու մահմեդական տարրը, որպէսզի պատրաստ գէնք ունենայ ձեռքին՝ իր դժոխային ծրագիրն իրազործելու համար, երբ այդ հարկաւոր կը համարի։

Ներկայ յօդուածով մենք նպատակ չունինք բնաւ ցոյց տալ սուլրանի եւ երոպական դիպլոմատիայի կեղծութիւնն ու փարիսեցիութիւնն։ Դա իմբնըստինքնան պարզ է եւ մեկնարանութիւնների կարօտ չէ։ Մեր նպատակն է միայն ցոյց տալ մեր ունեցած փաստերի հիման վրայ կառավարութեան եւ մահմեդական ամբոխի դերերը, իւրաքանչիւրի նշանակութիւնը, մասնակցութեան աստիճանը վերջին եղեննական գործերում։

Թէ ներկայ ընդհանուր կոտորածի հրամանը բխում էր ուղղակի սուլ-քանի պալատից, թէ դրանով սուլքանը եւ իր խորագէտ խորհրդատունները նպատակ ունեին ի սպառ լուցնել բողոքով հայ ժողովրդի ձայնը, դրա մէջ դժուար թէ այժմ մէկր կատակածի : Թող դեռ կառավարութիւնը բանտերը լցնի հարիւրաւոր պատահական անձնաւորութիւններ, միայն թէ ցոյց տուած լինի, թէ «ապստամբները» ձերքակալուած են, բող լրաբար գուր ամբատա-նութիւններ անի սրա, նրա վրայ, որոնց գոյութիւնը զանազան պատճառներով անհանոյ է իրեն. բող շարունակի գործ դնել նրանց վրայ իր բոլոր դժոխա-յին տանչանքները՝ զանազան խոստովանուք իւնենքր կարգելու նպատակաւ... Թող նա իր զիշատի նամկերով, որոնց վրայ դեռ չի չորացել հարիւր հա-զար անմենների արիւնը, պատափ հայ ժողովրդի արիւնակամ կուրծքը. նրա վերքները բրերելով. բող վնասի ամենայն եռանդով «կոտորածի հեղինակ-ներին», նա ոչ ոքի խարել չի կարող. ամէնի համար պարզ է, որ դա նոյն-պէս առիր է հայ ժողովրդի վրայ ահ ու սարսափի միշտ վառ պահելու, նրան ի սպառ վիտաեցնելու. եւ յեղափոխական շարժման միանգամից վերջ տալու :

Միամիտ հայ հասարակութիւնը կարող էր խարուել. կոտորածից առաջ նա դժուարութեամբ էր իրեն բոյլ տալիս մտածելու, որ կառավարութիւնը ընթունակ է մի այդպիսի տամարդի գործողութեան. այդ տեսակ զագանական եւ միեւնոյն ժամանակ՝ յիմար բնբացք. որ մարդկային պատմութեան մէջ բացառիկ դէպէրի շարքը կը դասուի. հայ ժողովուրդը չէր սպասում մին-չեւ իսկ սուլքանի կառավարութեան նման ապուշ եւ վայրենի կառավարու-թիւնից :

Սուլքանի բաղանմէր կատարուեց. երկիրը ծածկուեց քիւրաւոր դիակ-ներով, բազմարին բազմանքներ եւ զիւգեր ամայի դարձան :

Ի՞նչ դեր կատարեց ինքը ամբոխը. որով տարիների բնբացքում սար-սափեցնում էին մեզ. ի՞նչ կարող էր նա անել առանց կանոնաւոր գօրքի ու-ժեղ մասնակցութեան :

— Աչի՞ն, համարձակ կարող ենք ասել մենք, զոնէ այն տեղերի վե-րաբերմամբ, որոնք մեզ հաջ յայտնի են. բայց բող խօսեն փաստերը :

Կարենյ մէջ տանիկ ազգաբնակութիւնը անհամեմատ շատ է հայերից: Բացի այդ, դրսից հաւաքուել էին ամէն տեսակ զիշատիչներ՝ լազեր, չեր-քէնիներ. բարակամաններ. քրդեր... բուռվ մօտ 20.000: Այդ ահազին բազ-մուրիւնը խոնուած էր Կարենյ փողոցներում. անցնելու տեղ չկար: Բայց եւ այնպէս՝ հարկաւոր էր ՀՅՈՒԽ աւել լաւ զինուած զինուորներ, որ համար-ձակուիչն հայերի վրայ յարձակում գործել: Կոտորածի ժամանակ բաւական էր մի ատրճանակի ձայն՝ այդ «ահոնելի» ամբոխը ցիրուցան անելու համար: Հայերի կողմից ամենար երեւ ընդդիմադրութիւնը ընդհատում էր մահմե-դական ամբոխի «յաղրական» բնբացքը: Այդ ժամանակ օգնութեան էին հա-մուտ մարտինի հրացաններով զինուած զինուորները եւ ամբոխի համար նա-նապարի բաց անում: Ի՞նչ կարելի է անել ատրճանակով մարտինների դէմ: Զինուորները բանում էին չուկաների երկու կողմն էլ. հեռուից զնդակահար անում եւ յետոյ դիակների վրայից ատրճանակները ժողվում: Մի ընդդիմա-դրող հայի վրայ միանգամից 20-25 հրացաններ էին ուղղաւում: Խանութիւնը,

տների ամուր կողակեները փշուր փշուր էին լինում նրանց գնդակներից։ Դրանց յետոյ միայն ամբոխը համարձակուում էր առաջ ընթանալ։ Նա այդ ժամանակ առի ծ էր գանուում, քարանուում էր, առերուում, բռնաբարուում, սրի էր անցկացնուում դեռ կիսուանի մնացածներին, յօշուում, այլանձակուում էր արդէն զինուորների գնդակներուու ծակծկուած դիակները, գուարհանուում էր նրանց կաշին եկրելով, վիրաւորուածներին այրելով եւայլին։ Կոտորածի երկրորդ օրուանից սկսած զերեկմանառուն էին քերել 315 դիակն ։ Նրանի երկար ժամանակ շարուած մնացին ծառերի տակ։ Ամէն մէկը կարող էր զալ եւ իր աշխավ տեսմէլ։ Դիակների վրայ ոչ մի հազուստ չէր մնացել շատերը բռնուուին մերել էին. դիակների միայն մի մասի վրայ դեռ կային կամ շապիկ կամ ոսաշոր. դա մի անբացատքելի բարեխզնութիւն էր բալանզների կողմէց... Այնուշա որ ոչ մի դժուարուրիւն չկար զինել դիակներու(\*)։ Շատերը զննեցին, նաև իրենք՝ հիւապատուսները. չկար մի դիակ. որ իր վրայ չկրեց զննէ մի բանի հրացանի կամ զինուորական ատքնանակի գնդակների վերեւու։ Կարծես քէ բաղադի մէջ զանուող հետեւակ զինուորների ահազին բազմուրիւնը բաւական չէր, բաղադ իշեցրին նաև բնդանօրածիգ զօրքերը, որոնք զլինաւորապէս զինուած էին իրենց խոչոր ատքնանակներու եւ «զանիափաղի» հրացաններով։ Խոկ բնդանօրապէս դիակները կրում էին. բացի արի, կացնի, կասարուրայի վերքերից. 5-10 եւ աւելի զնդակի վերքեր։ Ցովհաննէս Կորիկուսնեմի վրայ հաշուրիւած է 23 զնդակի վերքեր։

Թարերդ հայերը կազմուու են տեղական մահմեթական ազգարժակութեան 10րդ մասը։ Զնայելով դրան, այնուեղ կուտակուած են եղել եւ անըին բանակութեամբ լազեր, բայց կոտորածը չի սկսուել, մինչեւ Երզնկայից դորք չի եկել։

Ինչպէս յայտնի է. Թարերդի շրջակայ զիւղերը բռնուովին զահ զնացին խուժանի վայրագութեան, որովհետեւ անզէն էին եւ անպաշտպան։ Դեռ նոր էր այնուեղ զէնիի կարիքը մուտք զործել, դեռ նոր էր սկսում այնուեղ կանոնաւոր յեղափոխական զործունեուորիւնը. երբ կոտորածն առաջ եկաւ։ Այդ ժամանակ այնուեղի դաշնակցական հրոսակային խումբը ցրուած էր գիւղերում՝ ձևուուան պատճառաւ։ Լուսիանք զիւղում այդ խմբի անդամներից մէկը հրացանը ձեռէին կարողանում է պաշտպանել հարիւրաւոր ամբոխի դէմ մի տուն. լիքր հարսներով ու աղջիկներով։ Մի ուրիշ զիւղում նոյն խմբի անդամներից մէկը լինում է մխակ հրացանաւորը ամբողջ զիւղում։ Երբ լազերի վոհմակը մօտենում է, անվեհեր երիտասարդը առնում է հրացանը, դուրս զայիս դրանց դէմ եւ երկար ժամանակ բռյու չէ տալիս այդ ահազին բազմութեամբ զիւղը մտնել։ Նրա բնկենելուց յետոյ միայն լազերը կարողանում են մուտք զործել բռյուովին անպաշտպան զիւղը։

Տրապիզոնի մէջ, ինչպէս յայտնի է. Սեպտեմբեր 22ին, դէպէի ժամանակ, երբ մասնակցում էր միմիայն ամբոխը, հայերից ոչ մի մարդ չըսպանուեց։ Մինչեւ Սեպտեմբեր 26ը կառավարութիւնը պատրաստեց իր կա-

(\*) Դրանց լուսանկարներն ուղարկուած են եւրոպական լրագրուց։

նոնաւոր գօրքը, իր սեփական հրացաններով զինեց տեղական խուժանը ու բազմաթիւ լազերին եւ յետոյ միայն կարողացաւ յաջողցնել կոտորածը:

Զօրքերը նոյն դերն են կատարել եւ Բաղեշում:

Մինչեւ այժմ կոտորած չէ եղել Վանայ մէջ շնորհիւ միմիայն այն հանգամանքի, որ տեղական զինուորական ուժը անրաւական է համարւում: Կառավարութիւնը լուրջ պատրաստութիւններ է տեսնում. զինել է հրացաններով տեղական մահմեդականներին, ժողովել է պահեստի զինուորներին, հրաւիրել է մահմեդականներին, բնդանօթները ուղղել է դէպի հայոց քաղերը. կտրուի է Այզեստանի ծառերի մի մասը, որպէսզի թնդանօթների ռումբերին արգելվ չհանդիսանան, վերջապէս ուղարկել է այստեղ Բաղեշի կոտորածը կարգադրող փաշային... Կոտորած չի եղել դեռևս, նշանակում է այդ բոլոր պատրաստութիւնները դեռ ֆիշ են համարւում: Սպասենք...

Խոկ Կարճոյ եւ նրա ջրակայ զաւանների, զիների պաշտպանութիւնից, որի մասին անցեալ անգամ զրեցինք, լուսոյ պէս պարզ է, քէ մինչեւ ո՛ր աստիճան անզօր են եղել հարիւրաւոր, հագարաւոր քրդերը ու լազերը մի խումբ զինուած կտրինների դիմաց, երբ յարակում է եղել առանց կանոնաւոր գօրքի օգնութեան:

Կրկնում ենք. որ մահմեդական ամբոխի ընդդիմադրական ուժը չափանցրած է, որ առանց կառավարութեան դրդման, առանց նրա քառալիքութեան. առանց նրա վարժուած զօրքերի ջերմ աջակցութեան, մահմեդական ամբոխը չէր համարձակուիլ շարժուել իր տեղից, եւ երեւ շարժուեր էլ, շատ տեղ անհամեմատ մեծ կորուստ կ'ունենար եւ դա լաւ դաս կը լիներ ապագայի համար:

«ԹՐՈՅԱԿ», № 5, 10 Փետրուար 1896

## Բ.

Մենք միշտ գործ ենք ածում «մահմեդական ամբոխ»: Բայց մահմեդական ամբոխի վրայ ընդհանրապէս կարելի էր նայել սրանից մի քանի դար առաջ: Այժմ նրա կեանքը բաւականաչափ բարդացել է եւ նրա մէջ առաջացել են տարրեր խաւեր, որոնք ունեն իրենց որոշ առանձնայատկութիւնները ու ձգումները եւ որոնք, բնականարար, տարրեր կերպով պէտք էր վերաբերուէին դէպի հայերի կոտորածը: Բայց նախ քան այդ տարրերութեան մասին խօսելը, ընթերցողի ուշադրութիւնն ենք դարձնում մի հանգամանքի վրայ: Զնայած, որ լոյսի պէս պարզ է, որ վերջին շարժումները լոկ քաջական բնաւորութիւն ունեին, որ նրանք նախագծուում էին սուլրանի ձեռքով եւ նախառակ ունեին ահարեկել գլուխ բարձրացրած հայ ժառավուրդը, բայց եւ այնպէս մեր մէջ զարմանալի յամառութեամբ շարութակում են տեղի ունեցած ընդհարումներին տալ կրօնական կերպարանի եւ ամբողջ մեջքը ձգել մահմեդական մոլուանդութեան, դուրսի, սօֆտաների վրայ, եւայլն: Դեռ դրանք չեն ուզում տեսնել, որ այս դէպում, ինչպէս եւ մարդկային

ամբողջ պատմութեան մէջ, կրօնը եղել է մի ժող, որի տակ պատսպարուած առաջ են տարել ամէն տեսակ ամենական շահեր եւ կեդուու միտումներ: Միթզդես կան ակեյայտնի փաստեր, որոնք պէտք էր խախտէլին այդ հիմաւուրց համոզումք: Տանկահայատանում բացի հայերից պարում են եւ ուրիշ քրիստոնեաներ: Խնչո՞ւ երրապացիք ազատ մնացին, ինչո՞ւ ասորիներին շմօտեցան, ինչո՞ւ վերջապէս ամենայն հոգատարութեամբ ու խնամքով պատսպարում էին յոյներին, որոնք մի ժամի տեղեր այնքան էին լրբացել կառավարութեան փաղաքշներից, որ զգուանք էին պատճառում թոլորին: Դրա հակառակ մի ժամի տեղեր իրենք՝ մահմեդական հոգեւորականութեան ներկայացուցիչները՝ շէյխերն են նախաձեռնող հանդիսացել հայերի պաշտպանութեան, ինչպէս օր՝ Պարագիլիսա, Խոգիբարան:

Գալով մահմեդական ամբոխի տարբեր խաւերի խաղացած դերերին, սեսմում ենք, ինչպէս եւ հարկանոր էր սպասել, որ ամենաժիշ մասնակցութիւն ունեցաւ տանիկ զիւղացի երկրագործ դասր: Յարձակողները զիխաւրապէս լեռնարնակ անասնապահ կամ կիսաերկրագործ ազգարնակուրիւն էր՝ քրդերը, լազերը եւ Ծուսաստանից գաղքած չերքէզները. իսկ երկրագործ դասր շատ շատ հետեւի է նրանց՝ բալանից բաժին ձեռք ձգելու համար, իսկ զիխաւրապէս կամ անտարբեր են մնացել, կամ թէ, — որքան էլ դա զարմանալի բռուայ, — պաշտպանել է իր գարեւոր հարեւան հայ ազգարնակուրիւնը եւ սաստիկ բնդդիմադրութիւն է ցոյց տուել յարձակուող խուժանին: Բացի այդ, պաշտպանուրիւն են ցոյց տուել մի ժամի տեղ արեստաւոր եւ վանառական դասր: Աւելի անսպասելին այն է, որ քրդերը, այդ հայերի անհաջու համարուած քնամիները, նոյնպէս պաշտպանել են:

Ընթերցողը կը համաձայնի, որ այսպիսի ժամանակ սմինքը է շատ փաստեր հաւաքել, բերենք մեր ձեռքի տակ ունեցածները:

## \* \*

Հասան-Ղալան(\*), կարնոյ մօս գտնուած կան զիւղը, Բասենի Ամրագումը, մասամբ Խոգիբարը, Ալաջկիրտի Ղարաւիլիսան, Բայազէդը, Երգրնկայի, Խնուսի մի ժամի զիւղերը պաշտպանուել են տեղական մահմեդականների շնորհիւ, Նարիմանի զիւղերը պաշտպանուել են շնորհիւ Կմիր աղայի, Ծուսաստանից գաղքած՝ Խասքուր-Մուստաֆա աղի տղերի:

Խալլու, Ամար, Խայարեկ, Երից զիւղ՝ պաշտպանել է զիլանցի Սելիմ փաշան:

Խչէքիլսէկի Ս. Ցովհաննու վանքը եւ իր շրջակայ զիւղերը՝ Զուգան, Ղարաբաղը, Վանի զիւղ, Ղումուպունաղ, Բողին պաշտպանել է հայդարանցի Մուստաֆա թէկը: Բացի այդ, պաշտպանուրիւն են ցոյց տուել Միքրու աղէն, Նարի աղէն:

Նոյնիսկ կարնոյ մէջ, որտեղ կառավարութիւնը հոգեւորականութեան

(\*) Հասան-Ղալայիք վանքը, որ աւերուել ու թալանուել է, գտնուած է Հասան-Ղալայիք մէկուկէս ժամ հեռաւորութեան վրայ:

հետ միասին տարիների թիրացքում զրգում էին տեղական մահմեդական-ներին, որոնց էր այդ ժամանակ բոլոր կոսորածների հերոս՝ Շահիր փաշան, որ ամենից սաստիկ պէտք էր արտայայտուէր տանիների կատաղութիւնը, ազգաբնակութեան մի մասը, զլխաւորապէս վանառական եւ արեսաւուր դասը, հետու օրանեց իրեն կոսորածից: Մինչեւ իսկ բազմաթիւ հայր պատասպարուեցին տաճրկների մօտ կոսորածի տմբնախիսու ժամանակը:

Մինչ արդէն սպասում ենք թիրեցողից զանազան առարկուրիններ եւ վերոյիշան պաշտպանների վարմունքի համար քացարուրիններ: Մինչ էլ շատ լաւ զիտենք, որ մի տեղ ազգաբնակութիւնը երկիւղ է կրել ռուսաստանցից հայերից, որոնց հետ բնդիարումներ է ունեցել եւ որոնց վրեժնընդրութիւնից տեղի ունի երկիւղ կրելու, մի ուրիշ տեղ նա դողալով է յիշում ուստական արշաւանքը. երբորդ տեղում աւելի հեռատես գտնուելով, մտածում է ապագայի մասին, հաւատացած լինելով, որ իրերի դրուրինը անշնչութ կր փոխուի, չորրորդ տեղում զգում է, որ հայերի հետ կապուած է սերտ կերպով, տնտեսական շահերով, հիմնգերորդ տեղում հայերը այս կամ այն քէկի մարարաններն են, եւայն... Այս բոլորը մենին շատ լաւ զիտենք, մենին ոչ մի բռնէ բոլի չենք տալ մեզ մտածելու, որ այդ զանազան Մուսափաները կարող են դէպի հայերը մի առանձին պլատոնական սէր տածել:

Մեզ համար առանձնապէս նշանակութիւն ունի այն, որ իրերի այս խառը դրուրեան մէջ, երբ կառավարութիւնը ինքն է մղում մահմեդականներին դէպի կոսորած, դէպի քալան ու աւերում, երբ նա ինքն է ամբոխի առաջ թիրանում եւ իր մարտիններով նրա համար նաևապարի հարրում, երբ այդքան նախատաւոր պայմաններ է ստեղծում կիսավայրենի ամբոխի զազնական կրեմբի անարգել կերպով դուրս ժայրենաւու համար. այդ տգետ, մոլեռանդ, ֆանտակոս ամբոխի մի մասը կարողանում է ի նկատի առնել զանազան հանգամանեններ. չառրուի հոսանքով. զապի իր կրերը եւ մինչեւ իսկ դիմագրուրին ցոյց տալ կառավարութեան ուսնագուրիններին:

Դա պարզ ապացոյց է, որ ազգաբնակութեան մի մասը արդէն նկատում է շահերի այն անհամերաշնուրինը, որ վազուց ի վեր զոյուրին ունի սուլրանի եւ բոլոր հպատակների մէջ. բայց որք մնում էր մինչեւ այժմ խորին մրուրեան մէջ. շնորիի սուլրանի եւ տիրապետող տարրերի համերաշին գործունեութեան:

Նա նկատում է այն տնտեսական կապը, որով կապուած է իր հարեւան հայերի հետ եւ որի ահազին նշանակութիւնը նա ընդունակ է դարձել զնահատել:

Վերոյիշեալներից մենին տեսանք, որ վերջին եղերական կոսորածների մէջ մահմեդական ամբոխի դերը բոլորովին երկրորդական էր. մենին տեսանք, որ նրա մի մասը դուրս է եկել մասամբ տղիսութեան. խաւարի, անզիտակցուրեան մրնուրածից. սկսել է ժառանալ իր իրական շահերը. եւ մենին սրտանց ողջունում ենք նրա այդ առաջին եւ գժուարին քայլը:

## ՎՆԱՍԼԿԱՄ ՏԱՐՐԵՐ

Ամէն անգամ, երբ յեղափոխական փոքրամասնութեան անձնազոհ, տոկուն եւ անվիատ գործունէութեան շնորհիւ յեղափոխական կազմակերպութիւնը ձեռք է քերում ուժ եւ ազդեցուրիւն, կեանի մէջ ստեղծում է հաւատ դէպի գործի յաջողութիւնը եւ հարրուում է որոշ աստիճանով յեղափոխական ուղին. ամէն անգամ էլ հասարակութեան տարրեր խաւերի մէջ իրարանցում է թիկուում: Բայց բնդիանութեան յեղափոխական ոզու բարձրանալու հետ միատեղ, ամէն մի տեղից վերկացող բախտախնդիր, ամէն մի վաշխառու, կեղեքիչ, մինչեւ իսկ մատնիչներ, դաւանաններ, մի խօսքով ամէն տեսակ սողուններ, որոնք զիտեն հիմանալի կերպով յարմարուել հանգամաններին եւ ամէն տեսակ ջրերում ձուկ որսալ, ասպարեզ են դուրս գալիս, իրքեւ «յեղափոխականներ» կամ յեղափոխութեան համակրող բարեկամներ: Վճառակար են այդ սողունները այդպիսի բռայէններում, երբ փեռն խօսքեր փշելով ու փարիսեցիական ձեւեր բանեցնելով, շահագործում են ամբոխի դիւրահաւատութիւնը ու տղիտարիթիւնը: Իսկ ամուսնելի են, ցաւ ու պատուհաս են դրանք յեղափոխական շարժման համար այն ժամանակ, երբ յեղափոխութիւնը կրում է ժամանակաւոր անյաջողութիւն եւ սկսում են տիրել աւելի փատրար պայմաններ յեղափոխական գործիչների համար: Այդ ժամանակ այդ զագրալի արարածները սուս ու փուս քաշուում են իրենց բները, եւ արդէն «Խոհեմուրիւն», «Հեռատեսութիւն», «Ժողովրդասիրութիւն», «Միութիւն» եւ այլ դիմակների տակ դարձեալ շարունակում են խաղալ ժողովրդի հետ, աշխատելով մի կերպ եռզարկել իրենց իսկական զոյնը: Շարունակելով կրել «յեղափոխական», «ազգասէր» տիտղոսները, դրանք դառնում են իսկական յեղափոխական գործի ամենավիճակար խոշընդուներ:

Այդ արարածները աղբեր են, որոնք մեծ ու փոքր կոյտերով, տեսակ տեսակ բուրմունքներով եւ զոյներով բափուած յեղափոխական հանապարհի վրայ, ապականում են յեղափոխական միջավայրը:

Ամէն մի յեղափոխական գործիչ ստիպուած է ժամանակ առ ժամանակ բողնել իր բուն գործը եւ զրադուել այդ աղբերով, որոնք ընկնաւմ են ուտքերի տակ եւ խանգարում իր կանոնաւոր ընթացքը: Ժամանակ առ ժամանակ, կամայ ակամայ նա իւր վրայ պէտք է առնի այդ զգուելի աշխատանքը, իմանալով հանդերձ, որ իւր ցախաւելի հենց առաջին հարուածից այդ կոյտերը միանգամից կը բացուեն եւ կը լցնեն օդը իրենց զարշահոսութիւններով: Արձակուած բարեասանների, զրպարտութիւնների, ինտրիզանների մքնոլորտի միջով պէտք է դիմի յեղափոխական իսկական գործիչը դէպի իւր բուն նպատակը:

Կեանի մէջ տեսնում էինք կուսակցութիւնների միութիւն ֆարօզող ուստափիստներ, այդ միութեան անունով նոր, իրենց անձնական կուսակցու-

թիւններ կազմողներ եւ այս ձեւով բուն գործից խոյս տուող սմափառներ, անմիեք պատրաստութիւնների ձգող եւ ոչ մի պատրաստութիւն չտեսնող խոհեմ յեղափոխականներ. զանազան տեսակ խարերաններ, շարլատաններ. այժմ էլ ժիշ չէ բարեսրտութեան դիմակի տակ մուած բախտախօնիքների թիւր, որոնք իրենց ետիւից տանում են միամիտների մի բանակ: Դրանք սկսել են նոր ձեւի տակ մի նոր արշաւանք «Դաշնակցութեան» դէմ, որի առքի աւելորդ չենք համարում մի բանի խօսք ասել.

«Ժամանակ չէ այլին յեղափոխութեամբ պարապուել, այժմ հաց պէտք է տալ ժողովրդին եւ ոչ թէ զէնք», լուս ենք ամէն կողմից ժողովրդի դրութեան վրայ կոկորդիլոսեան աղի արցունիք քափող փարփսեցիներից:

Խսկապէս, ահա ամենայարմար բովէն երեւան զալու իր վերին աստիճանի բարի, զգայուն, փափուկ սրտի տէր մարդ. իր խոհեմ. ժամանակի պահանջներին յարմարուող, ժողովրդի ցաւերը նաևաչող գործիչ: Բացի այդ, բարեգործութեան դիմակի տակ կարելի է եւ վտանգի չենքարկել իւր անձը, որն այնքան քանի է հայրենիքի համար. իր արքուն հովիւ պէտք է հսկել իւր սիրեցեալ ժողովրդի վրայ, չինք թէ նա մարորակ եւ տարուի «Ճայրայեղ» յեղափոխականների դէպի կորստեան ամդունդը տանող գործունեութեամբ: Ահա ամենայարմար բովէն ամենաարժան զնով ու ամենաանվտանգ նաևապարեսկ խսկական ազգասէրի մեծ հոշակ ձեռք քելու:

«Ժողովրդին հաց պէտք է տալ», ասում են մեր ժողովրդի «Խսկական բարեկամները»: Ո՞վ է հակառակը պնդում. ո՞վ է ասում, թէ հարկաւոր չէ հաց տալ: Բայց դուք ինքններդ ինչո՞ւ զննէ այդ չէք անում. ինչո՞ւ այդ պարտին էլ ծանրաբենում էլ յեղափոխական կազմակերպութիւնների վրայ: Ո՞ւր էիք դուք, երբ Սասունի կոտորածից յետոյ «Դաշնակցութիւնը» սափուուծ եղաւ մասամբ չեղուել իւր բուն գործունեութիւնից եւ բարեգործութեամբ գրադուիլ՝ իւր սեփական միջոցներից դրամական նապաստներ բաժանելով բարորդին անօքնական մնացած երկրին: Ո՞ւր էիք դուք վերջին կոտորածներից յետոյ, երբ դարձեալ «Դաշնակցութիւն» առաջինն եղաւ քըշուառ, բալանուած, արիւնաբամ ժողովրդին անմիջական դրամական օգնութիւն հասցնողը:

Այժմ էլ, երբ դուք գրազուած էլ միայն հայրենասիրական ֆարոզներ արտասանելով եւ չնշին կոպէկներ էլ միայն հանում ձեր հաստափոր բարեկամների գրապաններից, դարձեալ ամերիկացի, անգլիացի, մինչեւ իսկ գերմանացի եւ չվեցցարացի պաստորներն են մեր ժողովուրդին օգնութիւն հացընողը:

Ամօ՛ք ձեզ...

«Ժողովուրդին այլիւս զենք չպէտք է տալ»: Այս խօսքներն արտասանուած են այն ժամանակ, երբ փաստերը պարզ ցոյց են տուել, որ կոստորւել, բալանուել, սեւրուել են այն գիւղերը. ուր ինքնապաշտպանութեան համար զինքի հարկաւոր բանակութիւնը չկար. երբ արդէն ձեռքի տակ ունիմիք փայլան ապացույցներ, որ այն տեղերը, որտեղ մենք ունեցել ենք զէնք կամ զինուած հայդուկներ. կոսւել, պաշտպանել են իրենց կայքը, գոյքը կամ թէ

բոլորովին ազատ են մնացել յարձակումներից: Այս խօսքերն արտասահման են այն ժամանակ. երբ Տանիահայաստանի ամէն կողմերում, մասնաւանդ ազատ մնացած վայրերում, օրէ որ սպասում են նորանոր թիգհարումներ, երբ կառավարութիւնը դատրաստ իր տրամադրութեան տակ է պահում իրեն ծառայութիւններին: երբ միւս կողմից գենէի նշանակութիւնը հասկացած հայ ժողովուրդը յուսահատական աղաղակներ է հանում և ձեռքերը պարզած գենէ է հայցում: երբ թարանուած գիւղերն իրենի իրենց մէջ հանգանակութիւն են բաց անում, իրենց վերջին կոպէկները դուրս են հանում զէնք ձեռք բերելու համար:

Ժողովուրդը զէնք է պահանջում, խոկ մեր խոհեմ զործիցներն աշխատում են հաւատացնել ժողովրդին, որ նա սխալում է: Օրան ոչ քէ գենէ է հարկաւոր, այլ հաց...: Հաւատա՞նք այդ խոհեմների անկեղծութեան:

«Հարկաւոր է դադարեցնել յեղափոխական շարժումը», պահանջում են նրանք: Այս կետում դրանց հետ միանում են եւ նրանք, որոնք վերջին կոտարածների տպաւորութիւնից դեռ չեն ազատուիլ եւ խօսում են աւելի զգացմունքով, քան ոչ յիշելով:

Մինչ արդէն խանից անգամ առիր ենք ունեցել ցոյց տալ, որ յեղափոխական շարժումն անհնարին է կանգնեցնել, քանի որ հետեւանք է Տանկահայաստանում տիրող անտառնելի պայմանների, եւ քանի վատքարածան այդ պայմանները, այնքան աւելի սաստիկ պէտք կը զգացուի ուժեղ յեղափոխական շարժման: Միմիշյան իրերի անկարգ դրութեան բարեփոխումը կարող է վերջ տալ յեղափոխական շարժման:

Պահանջելով դադարեցնել յեղափոխական շարժումը, դրանք կողմնակի կերպով մեղադրում են յեղափոխականներին, համարելով նրանց այդ բալոր աղետների պատճառ: Կոտորածների պատասխանատուութիւնը յեղափոխականների վրայ բարդելով եւ յուսահատութեան մէջ ընկնելով, այդ կարճամտները մոռանում են մարդկային պատմութիւնը. մոռանում են, որ ուրիշ ազգեր աւելի սոսկայի արհաւիրենների միջից են անցել եւ իրենց ազատութեանը հասել. մոռանում են եւ հայոց պատմութիւնը, դարերի ընթացքում հայերի կրած դժոխային տանքանները:

Դանաւով վերջին կոսորածներին, հարցնում ենք. չե՞նք շափազանցում արդեօֆ դրանց բացասական նշանակութիւնը:

Վերջին դէպէերը մեծ հարուած էին հայ ժողովուրդի համար, այդ անհերենի է. ամէնն այլ զգացին եւ սոսկացին՝ քէ մենք եւ քէ ուրիշները. զգացինք, որովհետեւ մեր թշնամինները զործում էին սրերով, հացանեներով, որովհետեւ ամէնի աշքի առաջ արիւն էր հոսում եւ այդ բալորը կատարում էր ազատ համարձակ:

Սակայն մենք մինչեւ այժմ էլ նոյնակս գոհեր էինք տալիս, հայ ժողովուրդն արիւնակամ էր լինում, հայաբնակ զաւաներն ամայանում էին կամ բռնուում քրիերով, չերքէզներով եւ այլ լինականներով, բայց ոչ ոքի վրայ այս հանգամանքը հարկաւոր աղդեցութիւնը չէր բռնուում, ոչ ոք չէր սոսկում, չէր կատաղում, ոչ ոք չէր մտածում հարկաւոր շափով ժողովուր-

դի այս անտանելի պայմանների մասին։ Այսուեղ սուրբ հազի՞ւ էր խաղում, արիւնը հազիւ էր հոսում. բայց եւ այնպէս ժողովուրդը ուժասպառ էր լինում եւ լուռ ու մունջ կառուրում երկրի ընդհանուր պայմանների ննշման տակ։ Ա՞ր են մեր բազմանարդ հայաբնակ զաւատները, ո՞ր են նրանց չարքաշ բնակիչները։ Թողնենք հեռու անցեալր։ Մեր աչքի առաջ դատարկում են զգալի կերպով Մշոյ դաշտը. Վասպուրականը, Կարսոյ եւ Բարերդի շրջակայքը. Խնուսը. Բասենը... Մեր աչքի առաջ Ալաշկերտը Բայազէդի հետ միասին կորցրին իրենց բնակիչների 9/10 մասը. գուտ հայաբնակ հիգանում մնացել է հազի՞ւ մի երկու գիւղ։ Մինչդեռ ոչ ո՛ք չի լսել, որ այդ կետերում կուսորած եղած լինի։

Զէ՛, հայ ժողովուրդը անկարող է ապրել Տաճկահայաստանում տիրող կարգերում. նա ուժասպառ է լինում, նա մենանում է. նա չէ կարող չրողութել, ոտի չկանգնել եւ չդիմել յեղափոխութեան, իբրև իւր միակ փրկարքին։

Մեր «խոնեմ ազգասէրների» բոլոր քարոզները շատ-շատ կ'ունենան բացասական նշանակուրին, կը դանդաղեցնեն յեղափոխական ընթացքը։ Կարո՞ղ է՞ արմատախիլ անել հայ ժողովուրդի արեան մէջ մոած կեանքի նորանոր պահանջները. Կարո՞ղ է՞ փոխել նրա ուղեղը եւ նեարդները, յոյս ունէ՞՛ նրան դնել ստրկական. անասնական դրութեան մէջ, — երէ այս՝ փորձեցէ՞՛, եւ այն ժամանակ միայն դուք կարող է՞ յոյս ունենալ յեղափոխուրեանը վերջ տալու։

Ժողովուրդը սկսել է յեղափոխուրինը եւ նա կը տանի մինչեւ վերջը, իսկ առայժմ նրան մնում է լաւ նանաչել յեղափոխական նամապարհի վրայ ընկած զանազան տեսակ աղբերի իսկական նշանակուրինը եւ մի կազմը շպրտելով դրանց, անարգել կերպով շարունակել իւր փրկարար կուրիը։

«ԻՐՈՇԱԿ», № 12, 1 Մայիս 1896

## ԴԻՊԼՈՄԱՏ ՀՐԵՇՆԵՐ (\*)

Հասարակական կեանի մէջ պատահում են այնպիսի ահոելի չարիքներ, որ շշմեցնում են ամենամեծ յունախնի անգամ։ Յռախնեար, որը միշտ ամենավաս գոյներով է ներկայացնում ապազան իր երեւակայութեան մէջ դարձեալ ունենում է մի սահման, որից չի կարող անցնել, նրա կարծիքով, այս կամ այն հասարակական չարիքի աստիճանը։ Բայց, դժբախտաբար, մենք աւելում ենք, որ մեր ներկայ կեանի մէջ յունախնի երեւակայած սահմանն էլ ոչնչանում է, եւ չարիքը տարածում է իր քեները աւելի հեռու ու հեռու . . .

Ամէն անգամ, եթք առիր ենք ունեցել խօսելու երոպական դիպլոմատայի մասին, որը պաշտօնապէս իր «հովանաւորութեան» տակ է առել արեւելի բրիստոնեաներին, մենք հեռու որեւէ յունախնութիւնից, յենուած միմիշայն պարզ իրականութեան վրայ, պնդել ենք միշտ, որ ո՞չ մի դիպլոմատի համար գոյուրին չունեն ո՞չ բրիստոնեանան, ո՞չ մարդասիրական, ո՞չ բաղախոկրթական եւ ոչ այլ նոյնանման նպատակներ։ Մենք ընդունում էինք, որ դիպլոմատիան կարող է եւ ոչ թէ միայն չօգնել մեզ, անտարբեր մնալ, այլ մինչեւ խոկ վճառել մեզ, աշխատել կանգնեցնել ծնունդ առած շարժումը, երէ այդ իր շահերին վճասակար նկատուի։ Բայց մենք — եւ մեզ հետ նոյնիսկ ամենամեծ յունախները — դժուար կարող էինք երեւակայել, որ բաղախոկրթական աշխարհի «բաղախակիրք» ներկայացնութիւնները հասնեն անխղնութեան, տմարդութեան ու լրուրթեան այն ծայրայեղ աստիճաննեն. որի վրայ նրանք կանգնած են այժմ, եւ ոչ թէ միայն մեր, այլև ամբողջ արեւելեան հարցի վերաբերմամբ։

Երբոպական դիպլոմատները «գրութեան ենյուրի» նման շրջապատել են «հիւանց մարդուն» եւ ամենանիների միջոցներ գործ դնելով՝ աշխատում են պահպանել նրա նկատուած կեանիքը։ L'homme malade (հիւանդ մարդը) դառել է ենֆան ցատէ (երես առած երեխայ), որին պահում, պահպանում, շոյում, փայփայում են ամէն կողմից։ Հոգատար դիպլոմատները ամենայն աշողութեամբ մրցում են իրար հետ այդ ասպարիզում։ Մէկն իր արջի քարի գորութեամբ միջոց է տալիս նրան կոտորել, ջարդել տասնեակ հազարաւոր հայեր՝ երկրի «խաղաղութիւնը» վերականգնելու համար։ Միւսը իր հաստ գրպանն է բաց անում եւ առաջարկում իր ոսկիները՝ տնտեսական

(\*) Գրուած է Վասպուրականի կոտորածի առթիւ եւ Հրատարակուած «Երաշակշում իրեւ առաջորդող յօդուած, առանց ստորագրութեան».

բացարձակ բայեայումից ազատելու համար . երրորդի նախաձեռնութեամբ թիժհանուր ննջում են զործ դնում ու սպանալիքներ կարում ազստամբ կրեստացիմերին : Ճնշում են Յունաստանին , որ անուղղակի կերպով օգնում է իր արիւնակից եղբայրներին . ննջում են Բոլգարիային , որ չի խանգարում մակեդոնական շարժմանը . . . Բայց ոչ մի տեղ , ոչ մի պարագայում եւրոպական դիվլումատր շարտայայտեց իր էւուրիներ այնքան ստոր . զգուելի եւ կոպիտ կերպով . ո՛չ մի տեղ նա ցոյց չտուեց իր բարոյական այլանդակութիւնը այնքան շօշափելի փաստերով . որքան Վանի եւ թիժհամբապէս Վասպուրականի վերջին աղէտալից դէպֆերի ժամանակ : Այդ դէպֆերն այնքան սրտանմիկ էին , որ ամենաչոր , ամենաքարասիրու դիվլումատն անզամ պէտք է յիշէր , որ իմբը ո՛չ միայն դիվլումատ է , այլև մարդ : Բայց այդ շեղաւ : Պետերսի եւ Ալֆրիկայի այլ հերոսների արժանաւոր բնկերակիցը՝ Վանի անզիական հիւպատոսը , որը շատ առաջ էր ստացել վանեցիներից «ոստիկանի հիւպատոս» տիտղոսը եւ քրիստոնեութեան սկզբունքը տարածող բողոքական միսիոնար Ռէյնլար հաւասարապէս զգուելի են մեզ քէ՝ իրենց բացարձակ լրբարիւններով եւ քէ՝ իրենց զաղսնի խարդաւանանեներով :

Մատու զօրծելով Տաճկահայաստան , շփուելով յանախակի վայրագ կառավարութեան հետ , դրանք կարծես մոռանում են իրենց ծագումը , մռանում են այն միջավայրը , ուր ծնուել եւ սնուել են . մռանում են այն դարը , որի մէջ ապրում են : Առանց խղճահարութեան , առանց ամօրի , բացարձակ կերպով պաշտպան հանդիսանալով սուլքանի կառավարութեան՝ դրանք ամենանենց նանապարհներով ստիպում են յեղափոխական զնդերին՝ հեռանալ բաղաքից . դրանք մատում են այդպիսով անզէն ժաղովրդին վրէժիրնդիր զինուորների ու վայրագ խուժմանի կատաղութեան , իսկ յեղափոխական զնդերին՝ Պարսկաստանի հանապարի վրայ պատրաստուած զինուորների եւ համբիդականների անհամար բազմութեան :

Կատորածի այդ սարսափից յետոյ նրանք դեռ համարձակուում են բարդել բոլոր յանցաներ հայերի վրայ , մեղմացնել կառավարութեան եւ բաշիբողուների վոհմակների զործած զագանութիւնները . ուրանալ բաղաքի որմբակածութիւնը , բաղաքի եւ շրջականների աւերուիլը . բալանուիլը , հազարաւոր զահերի թիւը . . . եւ այս դեռ բաւական չէ . մրանք յանդզուում են համբագրութիւններ պատրաստել հայերի կողմից , ստիպում են ստորագրել ահարեկուած ժաղովրդին , իբր քէ նա ինքն է մեղանոր , որ իրեն կոտորել են , քէ նա շնորհակալ է կառավարութիւնից , որ կոտորածը չի շարունակուում . . . Սա արդէն շափից դուրս է . այս դէպիում մարդ դժուարանում է հաւատալ , քէ դրանք մարդկային արարածներ են եւ ոչ քէ հրէշներ մարդկային կերպարանենով . . .

Վասպուրականի կոտորածի ահելիսութիւնը անյայտ մնաց շատ շատեց . դիվլումատները կարող են դրանով պարծենալ : Բայց ոմքակծուած տմերը , արիւնաների փողոցները . անրա դիակները , մոխիր դարձած զիւգերը դեռ մնայան վկաններ են սուլքանի զագանութիւնների եւ դիվլումատիայի լիտիութեան : Անօրի , մերկ , բարիկ մնացած բազմարի . կենանի դիակների խուլ հեծեծանելը , առեւնուածների , բնաբարուածների ապար-

դիւն ճիշերը, հազարաւոր անմեղ զոհերի բարձրածայն անէծքը... այս բոլորը դառը բողոք են Եւրոպայի հասարակական դատաստանի առաջ՝ իր ներկայացուցիչների տմարդութիւնների դէմ:

Վասպուրականն աւերուեց. սուլրանը, Շահիրը, Սաադէտտին և այլ փաշանները հրեւում են: Հրեւում են ե՛ւ դիպլոմատները. նրանցից իւրաքանչիւրը հասաւ իր նարատակին: Խակ մե՞նք...

Ճիշդ է, մենին կրեցինք սոսկալի հարուած, անհամեմատ աւելի զոհեր տուինք, քան մեր քշնամին. կորցրինք մեր լաւագոյն բնկերներից շատերին, բայց, մեր ժամանակաւոր պարտութիւնը, մեր քշնամինների հրեւանքը մեզ չեն վհատեցնի: Տասնեակ հազարաւոր դժբախտների յուսահատական նիշերը պահանջում են մեզանից արդար վրէժխնդրութիւն. մեր հարիւրաւոր նահատակուած ընկերների ստուերները կոչում են մեզ դէպի անձնազոհ գործունէութիւն:

«ԴՐՈՇԱԿ», № 19, 15 Օգոստոս 1896

## ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՇ

(Հ. Յ. ԴԱՇՆԱՅՈՒԹԵԱՆ ԻՍԱՄԵԼԻԻՆ ԱՌԻԹՈՎ)

Հայ յեղափոխական շարժման տիտուր անցեալի մէջ մտեալ խորասուգուելիս, մեր աշխի առջեւ են զալիս բնկած նահատակների ու բառականների հետ միասին յեղափոխական կենդանի նահատակների դժբախտ շարքերը :

Ցեղափոխական փորորկալից կենթի մէջ շատ քչերն են յաջողում յարատեւել: Նատերը մեր իին զորձիշներից, մեր զինուորներից, երէ միայն չեն սպասուել կամ մենել, այսօր կամ տառապում են բանտերի խորշերում, կամ դեգերում են Տանկաստանից դուրս՝ ցամաք հացի կարօտ:

Երկար տարիների բնրացքում հայ յեղափոխականը կռուել է պատմութեան մէջ բացատիկ անձնութիւնութեամբ: այդ երկար տարիների բնրացքում ահազին ուժեր են խորսութեան ու ցրուել: ասեղծուել է մի մեծ բանակ բանարքիւալների, ախորեալների, անկարների: հաշմանդամների, ուժապատների, որոնց վրայ աւելանում են նաև ժամանակաւորապէս զադար տոած զինուորները: Եւ այդ երկար տարիների բնրացքում հայ հասարակութիւնը, նրա ունիւոր դասը իր սորքային բրացած զացումներով՝ անտարբեր հանդիսատես է եղել յեղափոխական զաների կրած բոլոր տանշանեներին: Տա նոյնին մարդասիրական տեսակետից ոչ մի դրական: յարատեւ միաց չի ձեռն առել նրանց դրայի վիճակը ինչ ըէ շատ բերեացնելու համար:

Երբ մենք լուսում ենիք, թէ ինչ փառաւոր բնդունելուրին են զանում կռուից վերացարած զինուորները Երոպայում, նոյնիսկ Ծովասատանում, թէ ինչ հացկերոյը ներ են արւում Տրանսվալից եկած անզլիացի կամաւորներին եւ ինչ միջոցներ են ձեռն առնեում նրանց ապագան ապահովելու: — ակամայ մեր մտի առջեւ են զալիս զործից վերացարած հայ կամաւորները՝ նարերու երկար նրակար նախապարհից տրեխները բրէրուած, ոսի տակի մարքը պլուկած եւ ուրախ ու երջանիկ: Երէ կարողանում են զամի մի անկիւնում զադարացողի ապաստարան գտնել ու մի կառը չոր հացով կշտանալ:

Անզլիացի զինուորը, որ կռուի է զնում տաք հագնուած, զգեստի ա-

Հ. Յ. Դ. Դաշնակցութեան Հրմանարթեան առաջին խնկ օրերից պահանջ է գտացուել յեղափոխական պայքարի զույգերն ոզնող մի կազմակերպութեան: Այդ նպատակով, այսուհետ ու այժմակ առկղծուել են մանզակ մայմբներ կամ էկարմիր ետաշի բները: Կարմիր ետաշ ընդունուր կազմակեղուութեան ունենալու հայցը ընթեր է Դաշնակցութեան ժողովներու: Առառներ այս յօդուածը, ոյս տեսութ էկրոզակը տառեամեակի համարուն ն. Ա. սուրբագրութեամբ, արծարեամ է նոյն հայցը: Այսուհետեւ յացնուած ենք Առառներ ընդունութեամբ:

Նելորդ պաշարը ետեւից, նաշին, ընթրիքին մի ժանի տեսակ կերպուր վայելելով, որը պատերազմ զնալիս չի մոռանում հետը տանիլ եւ իր Փութ-բութ (ոտնազնդակ), որի համար ամէն բովէ պատրաստ կանգնած են բժիշկները, վիրարոյժները, գրուրեան բոյրերը...

Այս բոլոր յարմարութիւններով շրջապատուած անգլիացի գինուորը հերոս է, երէ մասնակցել է մի երկու պատերազմների, ուր բշնամու երեսն անգամ չի տեսել:

Աժա՞ն հերոսութիւն...

Բայց զիտէ՞ նա զիշերները քրտնաբոր վազել, ահազին բեր շալակին, վազել, որպէսզի դեռ լոյսը շրացուած այսինչ լերան կատարին դիրք բռնի: Գիտէ՞ նա երկու-երեխ օր անօրի մնալուց յետոյ՝ զոհանալ ոչխարապահ շների համար պատրաստած կոպիտ, «Ենոք»ով (քէժահաց): Գիտէ՞, թէ ինչ է նշանակում լերան կատարին, մի ժարդ տակին կծկուած՝ ծարափց տապակուել, երբ մօտակայ ձորի միջով աղբիրն է կշկում: Կոռե՞լ է նա փամփուշտները համբելով՝ ձիւնի վրայ փռուած առաւօտից երեկոյ. զիտէ՞ նա երգել ու «կլոր» պար բռնել զնդակների տարափի տակ՝ ցրտից փայտացած ձեռներն ու ոտները բանալու համար...

Ամրոդ զնդից հազին մի տասնեակ մարդ կորցրած անգլիացի կամաւորները ընդունում են ամրոդ ազգի կողմից իբր առանձին պատիւնների արժանի հերքաներ, իսկ հարիւրապատիկ բռուվ բշնամինների դէմ օրիհասկան կոիւ մզած եւ ընկերների կեսը գոհ տուած հայ գինուորները ամենաբարեյաջող դէպենում միջբարութիւն են գտնում միայն իրենց սրտակից մտերմների ևնդ շրջանում:

Իսկ դէս ու դէս ցրուած հայածական գինուորնե՞րը. իսկ զոհուածների անտէր մնացած բնտախիքնե՞րը, սուլրանի նանկերում բռնուածնե՞րը...

Հասարակութիւնը նրանց չի նանաշում, նրանցով չի գրադում. նրանց վիճակի մասին չի մտածում: Դեռ լաւ որ սուլրանի արտասահմանեան բռնաների հաշոցները նրանց շատ էշերի ականչն է հասնում:

Մեր անզգայ հասարակութիւնը այդ բեռն էլ է դրել դրել յեղափոխականների ու յեղափոխական կազմակերպութեան վրայ. այդ օգնութիւնն էլ նրանցից է սպասում՝ բողոքելով նոյնիսկ երբեմն. որ այսուեղ կամ այնուեղ ամիսնամ ձգուածներ կան: Բայց ո՛չ յեղափոխական ընկերները եւ ոչ յեղափոխական կազմակերպութիւնը. չնայած իրենց զործ դրած ջանքերին, չնե կարող զգալի օգնութիւն հասցնել այն պարզ պատճառով, որ իրենց նիւրական միջոցները չափազանց սահմանափակ են: Եւ այդ մինչեւ այն աստիճան, որ յանախ յանցանք է համարուում կենդանի զործից կորել եւ նպաստ տալ նոյնիսկ զործից նոր վերադարձած եւ դեռ աշխատանք չզտած ընկերոչ:

Ուրիշ կերպ էլ չի կարող լինիլ: Ամենամեծ պետութիւններն անգամ, իրենց միլիարդներով հանդերձ, անկարող են հանդիսանում հիւանդ գինուորների, վիրաւորեալների հոգատարութեան ծախտերը ամրոդովին իրենց վրայ առնել: Նրանք դիմում են ծողովդի աջակցութեան: «Կարմիր հաշի» հաստատութիւնները ամէն երկիր ունի: Եւ ամէն տեղ, ուր կայ կոիւ, կամ ուր սպասում է կոիւ, որի անխուսափելի հետեւանքը պիտի լինեն կեն-

դանի նահատակները, բուն մարմնին կից պէտք է գոյութիւն ունենայ եւ մի ուրիշ կազմակերպութիւն. որի նպատակը լինի խնամել վտանգուածներին, վնասուածներին: Այդ դէպքում միայն կը թերեւանայ բուն կոռուող մարմնի թեր, այդ դէպքում էլ կոռուողները աւելի սրոտի կը դիմեն առաջ: Ռուս «Ժողովրդային Կամք» կուսակցութեան կոռուի շրջանում Ցեղափոխական «Կարմիր Խաչի» շնորհին էր, որ հազարաւոր ախորեալներ, բանտարկեալներ, փախոտականներ հնարաւորութիւն ունեին ժիշ քէ շատ տանելի վիճակ ունենալու իրենց դժբախտութեան վայրերում: Դա մեր պահասներից մէկն է: Հայկական «Կարմիր Խաչի» հաստատութիւնն է, որի անհրաժեշտող թիւնը ծանրացած է մեզ վրայ տարիների ընթացքում եւ որի իրազորձման մենք զոնէ հիմա դիմենք: Դրամ, զգեստ, նիրմակեղէն քաշխել բանտարկեալներին, ախորեալներին. նախնական օգնութիւն հասցնել կոռուից դարձածներին, զործ զսնել այնպիսիների համար, որոնք ընդունակ են աշխատելու, հայրայրել կոռուի զնացողներին վերք կապելու համար անհրաժեշտ իրեր եւայլն. — ահա այն լայն ասպարէզը, որ ունի իր առաջ հայկական «Կարմիր Խաչը», մի զործ, որ նա կարող է տանել մի բանի դէպքերում օրինականութեան սահմանից դուրս չզալով:

Այս առաջարկը անելիս, մենք չենք մոռանում զործնական զանազան դժուարութիւնները: Բայց յոյս ունինք յաջողութեան՝ աչքի առաջ ունենալով, որ այս հարցը մի բանի անզամ դրուել է յեղափոխական ժողովներում եւ ընդունելութիւն գտել ընդհանրութեան կողմից: Մեզ յոյս է ներշնչում, մանաւանդ, այն հանգամանքը, որ «չէզոք» սրտերի, «չէզոք» ուղեղների մէջ նոյնիսկ ծագել է եւ մասամբ իրականացել բանտարկեալներին օգնելու ձրգումը:

Հայկական «Կարմիր Խաչի» ընկերութիւնը անհրաժեշտ է, մանաւանդ, ապազայ կոռու յաջողութեան համար: Պահանջը մեծ է եւ շարունակ պիտի մնայ: Մարդկիկ, որոնք մի ժամանակ ամենայն յօժարութեամբ զոհել են իրենց ունեցած-չունեցածը, իսկ հիմա քափառում են յետին բշուառութեան մէջ, տեղ չզտնելով իրենց չոր զլուխը դնելու համար. երիտասարդներ, որոնք դժբախտութիւն են ունեցել կրակի մէջ ամբողջովին շխորովուելու, բոլոր հաշմանդամները, իրենց ապրուստի միակ ապաւէնը կորցրած ընտանիքները, յեղափոխական բոլոր կենդանի մնացած զոհերը, վերջապէս, մրանք, որոնք աչքի առաջ ունին նոյն դրութեան մէջ ընկնելու տխուր հեռանկարը, — բոլորն էլ օգնութեան են սպասում մի հասարակութիւնից, որի համար իրենք այնքան բուն տեսչով կրակն են նետուել եւ դեռ պիտի նետուին:

Եւ մի՞րէ հայ զինուորը դեռեւս չի արժանացել այդ օգնութեան:

## ԿՈՎԿԱՍՍՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՐ ՀԱՐԵՒԱՆՆԵՐԸ

Հ. Յ. Կենտրոնական Դիւանից առնելով՝ Հրատարակութեան ենք տալիս Շերօնակչին խմբագիր Բնաւոնմբ ներկայ գրուածը։ Զեսագիրը կհսատ է, եւ մեղ յայտնի չէ, թէ արդաւոյ որեւէ անդ ապուած է։ Յօդուածը գրուած է 1905 մուին, Կովկասում տեղի ունեցող գէպերի ապաւորութեան տակ եւ այսորուայ համար է զեռ հնացած չէ։

ԽՄԲ.

Երբ Դաշնակցութիւնը, իբրև կազմակերպուած կուսակցութիւն, երեւան եկաւ Տաճկաստանում, առաջին ժայից յայտարարուեց, որ նրա կոփոր բացարձակապէս բոնակալ կառավարութեան դէմ է եւ ոչ դրացի ազգութիւնների, ինչպէս են տամիկները եւ ժիրդերը։ 15 տարուայ փորձերը ցոյց տրւին, սակայն, որ Դաշնակցութեան տրամադրութիւնը բարական չէ եղած խոչընդուները խորտակելու եւ իր կոփոր միմիայն բոնակալութեան դէմ կենտրոնացնելու։ Դեռ մինչեւ այսօր մենք սսիպաւած ենք մեր ուժերը զատել, դիմադրելով ե՛ւ վայրենի ժիրդական ցեղերին ե՛ւ քալանի ծարաւ ու մոլեռնանդ բուրք ամբոխին։

Սկսելով մեր կոփոր Կովկասում, մենք մեզ աւելի բարեյացող պայմանների մէջ էինք համարում։ Զէ թէ այլեւայլ հաշիւներ չանելինք մեր դրացիների հետ, չէ. բայց այն հանգամանքը, որ կովկասեան ցեղերի մէջ աւելի զիտակցութիւն կայ, ժան Թուրքիայում, որ բոլորն էլ անխսիր զգում են իրենց վրայ ծանրացած միապետութեան լուծը, որ յանախ դժգոհութիւնը արտայայտում է բողոքի այլեւայլ ձեւերով, այս բոլորը լուրջ զրաւական եր համարուում, որ միապետութեան դէմ յայտարարուելիք կոուի մէջ բոլորն էլ պատրաստ կը լինեն միանալու եւ փոխադարձ հաշիւները մոռանալու։ Հայ ժողովուրդը, որ յանդզուութիւն ունեցաւ առաջինը զէնքը ձեռին դուրս զալու բնդհանուր քշնամու դէմ, այն էլ բոնակալութեան ամենազօրեղ օրերին, երբ դեռ չկար պատերազմ եւ ամբողջ Ռուս կայսրութիւնը կաշկանդուած էր Պէտէի ճանկերում, այդ ժողովուրդը իրաւունք ունեէր սպասելու, որ նրա արած զիոնուրիւնները կը զնահատուին վիճակակից ցեղերի կազմից եւ մառացուրթեան կը տրուին մանր մունք հաշիւները։ Երբ հսկայի դէմ կոռուի էր դուրս զալիս մի ժողովուրդ, որ փոքրաբի էր միւսների շարիքերում, մինչեւ այդ ժամանակ վախկոսի համրաւ էր հանել, որ ընդունակ էր համարուում միմիայն տնտեսապէս կեղեելու ասպարէզի մէջ, երբ զէնքի է դիմում իր իրաւունքները պաշտպանելու համար, մի ժողովուրդ, որ դարերով սարկութեան մէջ էր ապրել, պէտք էր սպասել, որ աւելի նպաստաւոր պայմանների մէջ ապրած նրա դրացիները ոչ միայն համարելին, այլեւ հետեւելով նրա օրինակին, աւելի առաջ անցնէին։ Բայց այդպէս չեղաւ։

Համակրամք մեզ չզլացան, այդ մենք տեսանք բազմարիւ օրինակնե-

բով։ Հետեւելու փորձնք էլ եղան, նոյնիսկ մահմեդական ամրախի կողմից։ Բայց հետզիեւէ դրութիւնը սկսեց փոխուել, եւ այսօր մենք տեսնում ենք, որ բնակագուրեան տակ ննջուած, իր իրաւունքների մէջ վերջին ծայր սեղմրած մահմեդական ազգաբնակութիւնը իր միջից դուրս է հանում տարրեր, որոնք կոյր զորդիք դառնալով բնակալուրեան ձեռքին, մոլեգնաբար յարձակուում են հայերի վրայ։ Աւշագրութեան արժանի է այն, որ այդ կոյրերը իրենց քշնամուրիւնը պատճառաբանում են նրանու, որ հայ ժողովուրդը յեղափոխական է, որ նա բմբուստանում է կառավարութեան դէմ, այն կառավարութեան, որին իրենք միաբերան անիծում էին մինչեւ հիմա։ Տեսնում ենք մի ուրիշ, աւելի անսպասելի երեւոյք, — վրացիներն էլ սկսել են իրենց առանձները որել։ Մենք կարեւուրութիւն չսույնէ այն հանգամանքին, որ Բագրուայ դէպքի ժամանակ Խիֆիխում եւս ցրուեցին վրացերէն կոչքը, որով կրասիրում էին նրանց եւս յարձակուել հայերի վրայ։ Դրանից յետոյ վրաց ազգային օրգան «Խվերիա»յում երեւացին պահանջներ՝ չշելու Սեւ ծովի ափերից այնտեղ ժամանակաւորապէս բնակութիւն հաստատած հայ զաղքականներին։ Դրա վրայ արդէն չէր կարելի կանգ շառնել, բայց վերագրելով դա շովինիստական մի խթքակի ըրու տրամադրութեան, դարձեալ ուշադրութիւն չդրածքին։ հաւատացած լինելով, որ խնդիր հանդիները իրենք կ'ամացնեն եւ կը լուն, խոյ երէ շլոնն էլ, դա կը մնայ միայն «Խվերիա»յի էցիրում եւ արձագանք չի գտնի լրաց հասարակուրեան մէջ։ Բայց այսօր լըսում ենք, որ Քուրայշուում, նահանգապետութ տան առջեւ, ինչ որ ժողովրդական ցոյց է եղել, ուր պահանջել են չշել նահանգից բոլոր հայերին։ Ի հարկէ, լուրը չափազացնուրիւն է, բայց չկայ ծովի առանց կրակի, նշանակում է մի բան պատրաստուում է, եւ զարմանալի չի լինիլ, երէ, օրինակ, Բարումում տեղի ունենան արիւնահեղ ընդհարումներ նոյնիսկ մեր եւ վրացի բանուորմերի միջեւ։

Այս բոլորից պարզ է, որ հակառակուրեան, քշնամուրեան որոշ պատճունութիւն կամ։ Մենք միշտ կառավարութիւնն ենք պատճառ բռնում, հայենցում ենք Վերիւկոյին<sup>(\*)</sup>, Գալիցինին, սպանում ենք նակաշիձեներին, բայց սրա հետ միասն պարզ պէտք է լինի, որ որպէսզի կառավարութիւնը կարողանայ յաջողութիւն ունենալ, պէտք է, որ պատշաճ հող գտնի իր պրոպագանդի համար։ Թէ ինչո՞ւ է կառավարութիւնը մեզ քշնամի, դրա վրայ չարժէ կանգ առնել, խօսին այլ օրին, կտների մասին։

**Մեր դրացիները**. մահմեդականները : (Այսուեղ ձեռագիրը վերջանում է) :

«ԹՐՈՇԱԿ», № 5. Մայիս 1931

(\*) Հկաւեղոց պաշտօնաթերթի խմբագիր և Գալիցինի հայակեր գործակիցը։

## ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱԼՆ ԸՆԿԵՐԸ

Լոյսը դեռ նոր էր բացուել, երբ հասանի Ազի-չայ: Բուն Բարեկենդանի կիրակին էր: Դեպքերը այնպէս էին դասաւորուել, որ հենց նոյն օրը պիտի պատրաստուէինք արշաւել Խոնիմ խոնի դեմ, որ ամբացած էր Ալվար և Սալահին գլուղերում: Թաւրիզի եւ Սոփիանի մէջտեղը: Նոյն կէտի վրայ միաժամանակ պիտի յարձակուէին Մարանդի եւ շրջակայ վայրերի սահմանադրական ուժերը՝ համախմբուած Սոփիանում: Այդպէս էր ծրագրուած նախորդ օրերի ժողովներում:

Ես մենք ուզում էինք հաւատալ, որ իրօք թարիզից դուրս կը գայ 2000նոց մի բանակ, որ նրա աջ թեր զիշերանց կը գրաւի խնուղու ուղղութեամբ ձգուող լեռնաշղթան, ձախ թեր պատուար կը կանգնի Սամատ խանի ուժերի համզէոյ, իսկ կենտրոնը, բնափրուով, բնդախօների օգնութեամբ բուռն յարձակում կը գործի բշնամու վրայ:

Ուզում էինք հաւատալ նաև, որ Սոփիանում այդ ժամանակ նիշդ որ համախմբուած սպասում են 1500 սահմանադրական ձիաւորներ, որ նրանք էլ, համաձայն նախօրօք մշակուած ծրագրին, գրոհ կը տան Ալվարի վրայ, նոյն ժամին, նոյնպէս բաժանուած երեք մասերի:

Ամբողջ շաբարը, մանաւանդ վերջին զիշերը, անցընում էինք այն յոյտվ, որ երեկ կազմուած յատակապիծը նոյնիսկ կիսկատար իրացործուի, այնուամենային Ռահիմ խանը կը քախցախուի, եւ Թաւրիզը կ'ազստուի պաշարման շղայից:

Հայ մարտիկների համար մասնաւորապէս կարեւորութիւն ուներ նաև այն հանգամաները, որ Սոփիանի սահմանադրական բանակի մէջ կային մեր ընկերներից 15 հոգի:

Բայց այն ինչ տեսանի Ազի-չայ հասնելով, ի դերեւ հանեց մեր բոլոր երազները: Հաւաքուել էին հազիւ 250 հոգի: Այդ 250 հոգին պիտի կազմէին մեր կենտրոնը, մեր աջ ու ձախ թեւերը: Թնդախօները, որմանց վրայ էր մեր զիշաւոր յոյսը, նոյնպէս չկային: Սարար խանը կուրուած էր: Քեռին յուղուած՝ առաջ ու յեւ էր զնում: տղաները լուր՝ ձիաներն էին պատեցնում:

Ի՞նչ անել... Սարար խանը հաւատում ու հաւատացնում էր, թէ հազարուրներ կը լինենք, բաւական է որ առաջ շարժինք եւ կոիւր սկսուի: Քեռին հաւատացնում էր, որ, ընդհակառակն, եղած ժանակն էլ հատած կը տեսնենք, երբ կոռւի վայրին մօսեցած կը լինենք:

(\*) Այս յօդուածը Ռուսոսուց զրել է 1914ին, Կարնում: Լոյս տեսաւ Նոր Սահմասարեան վարժարակին նույիրուած «Հայրենիք»ի բացառիկ թիւում՝ «Հինգ տարի առաջ զերեազրով եւ Ականատես ստորագրութեամբ:

**Գնա՞լ, թէ չգնալ:**

Գնալ... բայց ի՞նչ ուժով, ի՞նչ վստահութեամբ եւ ո՞ւմ դէմ... Ռահեմի խանի հազարաւոր ծխաւորների<sup>9</sup>, որ ամենակատադիմներն էին թաւարիզը պայառդներից եւ, բացի այդ, արդէն իրենց համար ամուր դիրքեր պատրաստուծ :

Զգնալ... բայց ի՞նչպէս ձգել սովիանցիներին, երէ նրանից յոյն սերք մեզ վրայ դրած՝ զան ու մենակ մնան... Բայց կը զա՞ն արդեօք. որ բա՞ն նիշդ են մեզ հաղորդուած տեղեկութիւնները: Եւ Ռահեմի խանի դիմաց մենակ մնացողը մենք չե՞նի լինելու...

Լուսաբացը արդէն մօտենում էր: Դա էր, որ վերջ դրեց տատանման վլինակին: «Աթոշուեց», որ պարտաւոր ենք շարժուել: Ամէն մէկը զնաց իր տեղոր:

Քեռու նշանի վրայ մերոնք ձի նասեցին, միւսները՝ պարափկ եւ վրացի մարտիկները նոյնպէս պատրաստ էին: Այլ ձի չուներ՝ կառքի մէջ տեղաւորուեց:

Արշաւախումբը առաջ շարժուեց դանդաղ ժայլերով: Առաջ էինք գընում, բայց շարունակում էինք երթեմն յետ նայել հեռաւոր մրուրեան մէջ օգնական ուժեր նշշմարելու յոյսով: Տղաները խոյս էին տալիս իրարու հետ խօսելուց: Չիսները չէին ուզում իրարու առաջ կտրել: Որքա՞ն ժիշ էր յիշեցրնում խմբերի սովորական արշաւախները...

Անցանք Ազիշ-չայի կամուրջը եւ թնկանք լայն խնուղին: Լոյսը սկսում էր բացուել: Մի անգամ էլ չափեցինք աշխավ մեր ուժերը. իրօք որ, ինչպէս թեուին էր պիտում, մեր սիւր սկսում էր նուազել...

Գնացողներից ո՞րը պիտի մնայ, ո՞րը վերադառնայ եւ որի՞ն ընկեր-ները պիտի քերեն, այս բացուող առաւտոր որի՞ համար պիտի լինի վերջինը, — ակամայ մտածում էի նայելով ընկերների շարքերին:

Զախ թեր, որ բաժանուեց մեզանից, հետզինուէ աներեւուրացաւ խոր-խորատների յետեւում, աջ թեր առաջուանից պիտի բռնած լիներ յեռնա-շղրան. արշաւախումբը բաղկացած էր հազի 45 հոգուց: Նրա մէջ էին Սա-րար խանը իր մտերիմներավ եւ հայ ու վրացի մարտիկներու: Գնում էինք ձգուելով խնուղու ուղղութեամբ, բայց կարելոյն երկար. այդպիսով աւելի մեծ ուժի տպաւորութիւն կարող էինք բռնին:

Բաւական անցել էինք, երբ Մարտիրոսը(\*), որը Քեռուց սովորաբար չէր բաժանում, ձին պահեց եւ ինձ հաւասարցնելով՝ խորհուրդ տունց բա-ղավ վերադառնալ, իրենց հետ չզալ: Նրա առանց այն էլ տժգոյն դէմքը Ե՛լ աւելի էր զունատուել զիշերուայ անեմուրինից:

«Յանկարծ ինքը չխփուի», անցաւ մտնովս, երբ տեսայ նրա մեռելա-յին զունատուրինը: Եւ որտեղից-որտեղ յիշեցի, սկզբում կցկուր կեր-պով, հետզինուէ միայն ամբողջացնելով ու նշղելով երկու ֆրանսերէն տո-

(\*) Մարտիրոս Զարուիշեան, գողափարական յանդուկն ահարեկիչ, Դրոյի մտերիք ընկերն ու գործակիցը:

զեր, որ այն ժամանակ չգիտէի, թէ ո՞ւր եւ ե՞րբ էի կարդացել, — Un quart d'heure avant sa mort, il était encore en vie. (\*) :

Արշաւախումքը արազացրեց իր ֆայլերը: Դրութեան անորոշութիւնը կարծես շտապեցնում էր՝ անձանօր վտանգի հանդէպ ժամ առաջ կանգնելու:

Լոյսը արդէն բացուել էր, երբ մօտեցանք Վերի Ալվարին: Սպասում էինք կրակի, բայց ձայն, շարժում չկար: Պարզուեց շուտով, որ մեր բախտից զիւդում Ռահիմ Խանի մարդկանցից ոչ ոք չկայ, նոյնիսկ պահապաններ չեին դրել:

Հայի էինք, սակայն, զիւդր մտել, դեռ ճիշտերը չէինք տեղառըել, երբ Վարի Ալվարից լսուեցին քմբուկի ձայներ, եւ Ռահիմ Խանի ձիաւորները պահցան զիւդից դուրս: Կարծես լաւատեղեալ մեր յատակազգին՝ նրանց սոսուար մասը մի շրջան անելով՝ ուղղուեց դէպի լենիաշդրան: Միւսները, երկու թեւի բաժանուած, մեզ վրայ եկան: Գնդակները կարկախ նման տեղացին զիւդի վրայ: Մերինները, շտապով դիրքեր բռնելով, համազարկի բռնեցին յարակալողներին: Եւ կարճ ժամանակից յետոյ քեւերն էլ սոխուած եղան յետ հաշուել: Առաջինը կանգնած մնաց Սալավանի նանապարհի վրայ, իրացանի տարածութիւնից դուրս, միւսները իշան ձիերից եւ առուների մէջ մտնելով՝ սկսեցին լուսենալ մեր դիրքերին:

Կոռու բափր շուտով կոսրուեց: Նա վերածուեց Պարսկաստանի յատուկ իրացանաձգութեանը՝ տարսում, ապարդին: Պատերի, դիրքերի յետեւում պատապարուած՝ իրացան էին արձակում, առանց տեսնելու հակառակորդին:

Տղաները՝ ձանձրացան, սկսեցին կամաց-կամաց հաշուել դիրքերից: Մի ժամի հոգի միայն մնացին՝ հսկելու համար բշնամու շարժումները:

Զանազան դիրքերում հաշուած, պատերի տակ շարուած կոռուղները՝ փոխանակում էին իրենց տպաւորութիւնները: Քեռուց դժգոհ էին, որ հակառակ իր տուած իրամանին, ինքը շխամբերեց եւ կրակը բացեց, երբ քըննին բաւականաշափ լուսեցած չէր: Այդ էր պատճառը, որ նա միայն երկու գուն տալով է նահանջել: Ցանդիմանում էին Մարտիրոսին, որ դիրքի մէջ չի պահուել: «կանգնած» է կոռուել: Պարզուեց, սակայն, որ նոյնը արել են ե՛ւ Կարոն, ե՛ւ Թեոփին, ե՛ւ Միհասք: Մարտիրոսը, Կարոն եւ միւսները ժապատում էին ներքին զոհունակութիւնը ծածկել չկարողանալով: Հիացմունքով էին պատմում բշնամու մի ձիաւորի մասին, որը, զնդակների տարափի տակ, ազատել է ձիուց ընկած վիրաւոր ընկերոջը:

Հոգ տարին ձիերի մասին, ինչ որ տեղից գտան նրանց համար առույյու եւ մէկի պայուսակից ուտելու հաց: Գիւղը բալանուած էր անխնայ կերպով Ռահիմ Խանի ձեռնուք, բնակիչները ցրուած էին զանազան տեղեր. մի ժամի հոգի էին միայն մնացել աւերակների մէջ:

Մեր դիրքը արդէն պարզ էր: Դուրս զալ զիւդից չէինք կարող: Մեր յոյսը Սոփիանից զալիք բանակն էր, որին սպասում էինք ամէն բոլէ՛ յար-

(\*) Իր մահուանից քառորդ ժամ առաջ նա դեռ կենդանի էր.

ձակողականի դիմելու համար : Բայց նա չէր երեւում : Միայն Սաքար խանն էր , որ մի տան «քալտիսնից» հեռադիտակի օգնութեամբ գտնում էր նրա երեւու հշաները : Մենք էլ , յանախ , ուզում էինք հաւատալ , որ ժայռերի միջույղ հյամարուող ստուիրները իրօք մերոնք են :

Մի անգամ էլ մեծ յոյս ներճնչուեց մեր մէջ , երբ ժագամի կողմից երթաց մի անապին բազմութիւն : Յոյսը կրկնապատկուեց . երբ լսեցինք քրնակորի ձայնը : «Եկան , վերջապէս , օժանակ ուժերը , հասաւ քննանօրը » , մտածեցինք մենք :

Բայց այդ բազմութիւնը կանգնած մի կետի վրայ , այլեւս առաջ չշարժուց . երբեմն միայն արձակում էին քննանօր , Աստուած զիտէր , բէ ի՞նչ ուղղութեամբ ... Յետոյ իմացանք . որ բազմութիւնը մեծ մասամբ կազմուած է եղել հանդիսաւուներից . որոնք փուրացած են եղել դիմաւորելու «գերի բռնուած» մահիմ խաննին եւ նրա հարիւրաւոր ծիաւորներին , — այդպէս է եղել տարածուած ժագախում :

Խահիմ խանն էլ դուրս քերեց իր քննանօրը : Նրա քննանօրաձիգները աւելի վարժ էին երեւում . կարողանում էին արձակել ամեն մի 5 քաղեց յետոյ , ուումբեր անցնում էին նիշտ զիւդի ուղղութեամբ եւ երբեմն էլ պայրում էին զիւդի զլիխնի :

Կարբատե կենանուուրինից յետոյ , նորից տիրեց քննիանուր տարածուուրինը : Հրացանաձգութիւնը շարունակում էր ամնապատակ : Այդ բոլոր ժամանակում մեր կողմից վիրաւորուել էր միայն մի պարսիկ , այն էլ ոչ կուուուրինից :

Կես օրք մօտենում էր : Տղաներից շատերը պատկել էին պատերի տակ : Արեգակի ջերմութիւնը մի առանձին հանդի քմրութիւն է առաջ քերում յոզնածների ու բնատների վրայ : Մի ժամկան ննչում էին , միւները խորասուգուել էին յիշողութիւնների մէջ : Բուն քարեկենդանի օրն էր , երբ ակամայ անցնում էր բնատնեան յարկը , ընկերական շրջանակները , վերյիշում են մանկութիւնի :

Նորից բարձրացայ Սաքար խանի բռնած վերնայարկը : Նա շարունակում էր դիտել լեռնաշղան . երբեմն էլ երացան էր արձակում , ամեն մի անգամին , ինչպէս շրջապատ էր պնդում , մի մի քշնամի զլորելով :

Յետուած պատուհանի վրայ հանգստանում էի , երբ , յանկարծ , իմա կանչեցին : Վ . Դ նիչն էր մի ուրիշի հեկեկանիքի հետ միասին : «Մարտիրասը զարնուից» , լսուեց որոշակի : Տղաները դուրս վագեցին : Խնչչէ՞ս եւ ո՞ւր կարոյ էր սպանուել . մի՞րէ քշնամին անցել է դիրեկրի յետեւը : Հայերի մի խումբ եւ վրացի մարտիկները վազեցին դէպքի վայրը : Թշնամին խնուուու միւս կողմի խոր առուների մէջ լաւ պատսպարուած եւ անտեսանելի սաստկացրել էր իր կրակը : Մերիները պատասխանում էին խնուզու եզերից , ընդամէնը հազի 40-50 բայլ հեռաւորութան վրայ : Զարմուեց եւ վրացի պոլիխան . նա վիրաւորուած էր ծնօտից՝ կամուքի տակից արձակուած զրնդակով : Պարզ էր , որ դիրեկր շափականց աննապատ էին , եւ պէտք էր մեծ պատարիւութիւն եւ զգուշութիւն՝ նոր վսանգների չենթարկուելու համար : Գետք էր կծկուած մնալ եւ զլուխ շրաբրացմել : Բայց ահա ոսքի ելաւ կա-

բոն, տասնոցը ձեռին։ Բոլորը հասկացան նրա միտքը։ «Մի՛ զնա, դիբքդ մտիր», պոտացին ամէն կոյդմից. խոկ նա բարձրացաւ խնուղու վրայ, իր ամբողջ հասակով. զնդակի տարափի տակ, մէկ յետ գալու շարժում արեց՝ բնազդմամբ ծախ թեր զլխի առջեր բռնելով, մէկ էլ ոստին զործեց եւ վագեց դէպի թշնամին, վագեց միս-մինակ եւ այլեւս չերեւաց։ Տասնոցը 10 հարուածը շլացրեց, նշան, որ Կարոն արդէն ընկած էր։ «Վիրաւորուած եմ», լսում է ժիշ յետոյ խնուղու միսու եզերքից նրա ճայնը։ Այդ րոպէին բարձրանում է Սերոն, Կարոյի անբամանելի թնկերը։ Նոյնպէս տասնոցը արձակելով՝ նա իրեն նետում է առաջ՝ վիրաւոր բնկերոց մենակ չըռդնելու համար։ Տասնեակներով արձակուած զնդակների տակ. նա էլ է ընկնում, աւելի ծանր վիրաւորուած։ Գրգուումը պատել էր բոլորին. նորանոր զոհեր անխուսափելի կը լինէին, երէ տարիինու եւ փորձառու ի. տայու եւ իր խմբի ջանքերը չըրսպէին։ Թշնամուն դիբքերից հանելու ոչ մի հնարաւորութիւն չկար, պէտք էր միայն բոյլ չտալ, որ նա դուրս զայ մօտենայ վիրաւորներին։ Այդ է, որ յաջողութեամբ զլուխ թերին տղաները։

Մինչեւ երեկոյ արշուն հսկելով, նրանի կարողացան միջոց տալ Կարոյին, թշնամու կրակի բուլացած պահուն, արձակի զենքերը, փամփուշտները եւ թերեւցած իրեն նետել վերստին մեր կողմը։ Զիու վրայ դրած՝ Ս. ի պահպանութեան տակ նա ուղարկուեց քաղաք։ Կոյիան առաջուանից էր զընացել։

Խոկ մուրը բնկնելուն պէս, տղաները յաջողեցան քշել թշնամու մնացորդներին իրենց դիբքերից, առնել Սերոյի արդէն անշնչացած դիակը, Կարոյի զենքերը եւ նանապարհուել քաղաք։

Կարոն մեռաւ զիշեր՝ չկորցնելով իր գիտակցութիւնը։ Վերջին ժամերին նրան միայն մի բան է զբաղեցրել. բնկերներից ո՞րը ինչ վէրք է ստացած եղել…

Մանր էր կորուստը։ Երեքն էլ աչքի բնկնող ուժեր էին, սիրուած, յարգրած բնկերներ։ Այսպիսի կորուստ մինչ այդ ուրիշ անգամ չէին ունեցել. գրկուել էին մեր խմբի մէկ եօրներորդից։ Քաղաքն էլ սուզի մէջ էր։

Այսպէս անցաւ 1909ի մեր բուն թարեկենամբ։

Երեք բնկերների բնկնելը. կատարուած ընդամենը 10-15 րոպէի մէջ, ամփոփումն է մեր յեղափոխական պատմութեան հոգուն։

Մարտիրոսը, որը զնում էր զործի այնին եռանդով ու պատրաստակամութեամբ, որքան աւելի մեծ էր նրա հետ կապուած վտանգը, չէր կարող չուղղուել, առանց իսկ հրամանատարին լուր տալու, դէպի ամենալատագաւոր դիբքը, չէր կարող չուղենալ չափուելու թշնամու բազմութեան հետ մօտիկից, անպատրաստ դիբքի մէջ՝ զլուխը վեր բարձրացնելով նրանց գընդակների դէմ։ Նա յեղափոխական խոյանէի մարմնացումն էր։

Սերոն, որ ընկառ Կարոյի պատճառով, զահ էր բնկերասիրութեան։ Միասին էին եկել Կովկասից, միասին էին լինում միշտ։ Կարոյի բուռն բաֆին նա հակադրում էր իր հանդարտամտութիւնը եւ զգուշաւորութիւնը։ Մեծ նզրօր նման սանձահարում էր Կարոյին, որը կոիւր սկսելուն պէս կարցնում

Էր սովորաբար իր գլուխը եւ երբ չէր կարողանում պահել, նետում էր մրա ետեւից :

Կարոն արտայայտիչը եղաւ աւելի խոր զգացմունքի : Նա էլ նետուեց կրակը ուրիշի պատճառով . բայց այդ ուրիշը նրա մտերիմը չէր, նոյնիսկ ընկերը չէր : Կարոն ու Մարտիրոսը բաժանուել էին Մուժամբարի կոռից յետոյ : Կար ժամանակ, որ չէին խօսում իրարու հետ : Բայց Մարտիրոսը Կարոյի համար կազմակերպական ընկեր էր, որի հետ կապուած էր ուրիշ ընկերների, ընկած հերոսների պայտամունքով . այդ կազմակերպական զգացումն է, որ միացնում է ընկերներին, ինչպէս մի ընտանիքի անդամներին : Եւ դա է հայ յեղափոխութեան յատկանիշ կողմը, մեր մեծ գործերի գաղտնի զապահակը :

«ՀԱՅՐԵՆԻՔ» բացառիկ թիւ, թիւ 2, 1914

## ՌՈՒՏՈՄԻ ՃԱՌԸ

1917 Ապրիլ 6-ն. Թիֆլիսում. բաց ամելով Հ. Յ. Գաշնակցութեան ռայոնական ժողովի հանդիսաւոր նիստը՝ Ռուտոմը արտասանեց հետեւեալ նաոք:

«Բնկերնե՛ր. բաց եմ ամում Գաշնակցութեան առաջին ազատ Ռայոնական ժողովուր ազատ Ռուտաստանում: Մենք ունեցել ենք շատ ազատ միջավայրեր, որ գործել է մեր կուսակցութիւնը:— Ամերիկա, Եգիպտոս, Բալկաններ. Պարսկաստան եւ Տանիաստան: Եւ երեւ մենք այսօր աւելի զուսպ ենք ու չենք խանդախառում ուրիշների պէս, պատճառն այն է, որ մենք տեսել ենք Տանիաստանի «ազատութիւնը», որ այնքան աղէտաւոր եղաւ մեզ համար:»

Տանիաստանի եւ Պարսկաստանի ազատութիւններն անկայուն եղան, որովհետեւ նրանց կողմին ապրում էր բռնապետական Ռուտաստանը, որ խանգարում էր նրանց: Հիմա այդ բռնապետութիւնն այլեւս չկայ, եւ ուստի ազատութիւնը ազատութիւն է քերում ո՛չ միայն Ռուտաստանի ներքին ժողովուրդներին, այլեւ բռնոր տեղերի համար: Ռուտական յեղափոխութիւնը սկիբը է սոցիալխոսական յեղափոխութեան, որ մօտաւուտ է եւ որ ծայր տուեց համաշխարհային պատերազմի առաջին խկ օրում:

Պատերազմի սկզբին ամէն տեղ սոցիալխոսական կուսակցութիւնները գէներեր առած դիմեցին հայրենիքի պաշտպանութեան: Հայրենիքը վտանգուած էր, պէտք էր նրան պաշտպանել, եւ մի պահ վերացան բռնոր դասակարգային շերտաւորումները, եւ բռնոր դասերն անխոժիր նետուեցին պատերազմի գիրիք: Թւում էր, թէ սոցիալխոսական շարժումը հայքայւում է, բռնում էր, թէ աշխատաւորութեան ուժի վերջն է հասել, եւ ինտերնախոնալը այլեւս կորցրել է իր հմայքը: Իրականութեան մէջ, սակայն, այդպէս չեղաւ. պատերազմի թիրացին սոցիալխոսների ազդեցութիւնն աւելի մեծացաւ. նրանի մօտան կառավարութեան մէջ եւ ազդեցիկ գործօն դարձան, այնքան ազդեցիկ, որ այլեւս վնասական դեր են խաղում հաղաքական դէպերի վրայ:

Նոյնը պատահեց եւ Ռուտաստանում: Պատերազմի սկզբին ամէն բան իրար խառնուեց: Սոցիալխոսն ու բուժուան միացան միեւնոյն բանակի մէջ դիմադրելու համար զերմանական զրոհին: Բայց շուտով դեմոկրատիայի նշանակութիւնն այնչափ անեց, որ այլեւս պատերազմի յաղողութիւնն ամբողջապէս նրանից կախուեց: Ցարական կառավարութիւնը, որ առաջ էր քերել պատերազմը, յանկարծակի եկաւ եւ ստիպուած էր ընտրութիւն անել երկու կարելիութիւնների մէջ. կա՛մ ես հաշուել եւ անպատի հաշտութիւն կնեմել քննամու հետ եւ կամ ընդունել աշխատաւորութեան ազդեցութիւնը: Նա ընդունեց առաջինը եւ փորձեց վերջացնել պատերազմը, բայց այլեւս ուշ

էր : Ժողովրդի ցատումը հասել էր իր գագարնակէտին, եւ յեղափոխութեան փոքրիկ սրբեց տարաւ բռնապետութեան ամենավերջին հետքերը : Ծուս միապետութիւնը ինքը իրեն տապալեց :

Ի՞նչ եղաւ հայ ժողովրդի դերը այս իրադարձութիւնների մէջ : Նա առանց տատանումի իր համակրածին ու յոյսերը կապեց դեմոկրատական սկզբունքների պաշտպան դաշնակիցների հետ : Հայ յեղափոխական տարրերը զգում էին այն աննորման դրութիւնը, որ իրեն սովորուած են ուսւ բռնապետութեան հետ միասին զործել յանուն դեմոկրատիայի ուսնակոխ եղած իրաւունքների : Բռնապետութիւնը տապալուեց, եւ հայ ժողովուրդը նորից գտաւ իր դէմքը :

Այս պատերազմի բնբացքին առանձնապէս ծանր եղաւ տանկահայերի վիճակը . քայց նա էլ ամենապատուաւոր կերպով բռնեց դժուար բննութիւնը : Նա հրապարակ դուրս եկաւ որպէս դեմոկրատիկ զաղափարներավ տոգորուած եւ ազատատեսչ մի տարր, որ զոհարերուեց բաղաժակրթութեան սեղանի վրայ : Աշխարհաւեր պատերազմը սարսափելի եղաւ մեր ժողովրդի համար . քայց եւ այնպէս . այսօր էլ, ինչպէս երէկ, մեր առաջին զործը պէտք է լինի նապատել պատերազմի յաջողութեան, որովհետեւ դրա մէջ է ազատութեան ապահովութեան զրաւականը :

Պատերազմի բնբացքին հայ ժողովուրդը ցոյց տուեց մարտական բարձր ընդունակութիւններ, եւ նրա ներկայացուցիչները մեր մէջ են — Արամը, Շուրէնը, Վահանը — ողջոյն նրանց (զահիճը թնդում է ծափերքից) : Ողջոյն նաև մեր հերոս կամաւորներին եւ նրանց խմբապետներին, որոնցից մի քանիսը նոյնպէս հիմա մեր մէջ են (բուռն ծափեր) : Զմուանանք եւ այն ծանր կորուստը, որ մենք ունեցանք այս երկու ու կես տարուայ ընբացքին — Քեռին, Խէջոն, Աւոն, Կորիւնը, Մանոն, Արտաշէսը, Խշխանը եւ ուրիշ շատ շատերը, որոնք ընկան կոռուի դաշտում (ժողովը յոտնկայս յարգանք է մատուցանում) :

Ես յիշում եմ այն հիմակու խօսքերը, որ մեզ էր ուղղում 1903ին յայտնի սոցիալիստ-յեղափոխական Մինորը, ի տես այն աննման անձնազուհութեամ, որ ցոյց էր տալիս հայ երիտասարդութիւնը, որը ամվանելի մի զօրութեամբ դէպի երկիր էր վազում՝ մենանյու համար պատութեան նանապարհին . Մինորը բացազնչում էր . «Ի՞նչ է սրս պատերար, ո՞րն է այն ուժը, որը այսքան հերոսներ է ստեղծում ձեր մէջ : Մենք այնքան ուժ ու եռանդ ենք վատնում եւ հազիր մի քանի մի քանի հերոսներ պատրաստում, ինչպէս է որ ձեր կես զրագէտ, հասարակ երիտասարդները այդպիսի անձնազնութիւն են ցոյց տալիս» :

Այն ծամանակ որոշ բացատրութիւն էին տալիս Մինորին, քայց այժմ ինձ համար էլ անհասկանալի է . — ո՞րտեղից են այս հերոսները, ո՞րն է այն զօրութիւնը, որ առաջ է քերում Քեռիի եւ Խէջոյի պէս բարյալան տիտանները :

Ընկերներ, մեր նահատակներին յիշելիս ես ուզում եմ մի հին նահատակի յիշատակն էլ յարգել — Քրիստափորի, որը առաջին անգամ՝ 1884ին քառուցիկ հրատարակեց ուսւ կառավարութեան դէմ (ժողովը լուր ոտքի է

**կանգնում) :** Ես յիշում եմ նաև առաջին քանուոր յեղափոխականին — ընկեր Միքայէլ Խոջայեանին — մեր քանուոր Միխակին, որը ցրեց Քրիստովորի տպած բառցիկները (*որոտրնզուա ձափեր*) :

Ընկերներ, որուանկան բուականներից հայ ինտելիգենցիայի տրամադրութիւնն այս էր, թէ ոչինչ պէտք չէ խօսել ու զրել ուսւ կառավարութեան դէմ : Ես 1892ին Սիմոն Զաւարեանը եղաւ, որ կարողացաւ յաջողացնել «Իրօյական» մէջ յօդուած տպելու ուսւ կառավարութեան դէմ : Յարգա՞նք նրա յիշատակին (*բոլորը սորբի Են կանգնում*) :

Այնան շատ են մեր հերոսներն ու նահատակները, որ հնար չկայ բոլորին բուելու : Ես կ'ուզենայի, որ նրանց ոզին մեր մէջ լիներ : այս օրերին մենք չկորցնենք մեզ : Ես կ'ուզենայի, որ Դաշնակցութիւնը, ինչպէս Սիմոն Զաւարեան էր սիրում ասելու, «Հայ ժողովրդի բովանդակ շահերի պաշտպանը լիներ» :

Մեր կուսակցութիւնն իր վրայ ունի այնպիսի պարտականութիւններ, որոնցից ազատ են ուրիշ կուսակցութիւնները : Մենք ունենք ազգովին վրասեզուելու հոգոր, եւ մենք չենք կարող անտես առնել այդ հանգամանքը : Ամէն անկամ, երբ Դաշնակցութիւնը ստիպուած է եղել դուրս գալու ազգովին զործելու, նրան մեղադրել են, թէ նա բուրծուական է, կդերական : Եսկ այսօր, երբ թիգհանուր հայրենիքի վստանզուելու վախը կայ, մեզ մեղադրանները իրենին են գուրս եկել ազգովին զործելու : Ես կը կամենայի, որ Դաշնակցութիւնը ապագային էլ նոյնը լիներ եւ պէտք եղած ժամանակ պաշտպաներ ազգի շահը, ինչպէս այդ անում են այսօր անզիացի եւ Փրանսիացի սոցիալիստները :

Չենք տանի միւս յեղափոխական եւ սոցիալիստական կուսակցութիւններին եւ առաջ զնամբ : Ես յոտնկայս յարգենք յիշատակը այն մարտիկների, որոնք ընկան Շուտաստանի ընդհանուր ազատութեան համար :

«ՀԱՐԻՑՈՂ», 9 Ապրիլ 1917

«ԴՐՈՇԱԿ», № 8-10. Օգոստոս-Հոկտեմբեր 1926

## ՄԱԿԵԴՈՆՅԱԿԱՆ ՀԱՐԺՈՒՄԸ (\*)

Ռուսաստանի եւ Թուրքիայի միջև կմբուած Սան Ստեֆանոյի դաշնագրով, Թուրքարիայի իշխանութեան կազմի մէջ պէտք է մտնէին նաեւ Արեւելեան Ռումելիան ու Մակեդոնիան :

Այսպիսի ընդարձակ տարածութիւն եւ բաւական խիտ բնակչութիւն ունեցող մի նոր պետութեան կազմութիւնը չէր կարող, ի հարկէ, համապատասխանել Ցունաստանի. Սերբիայի. Ռումանիայի, Զերմագորիայի, անգամ Բայկանուրի վերաբերմամբ սեփական հաջիներ ունեցող հեռաւոր Աւստրիայի շահերին: Նևան մի պետութիւն շատ շուտով կարող էր դառնալ աւելի զօրաւոր ոչ միայն Սերբիայից ու Ցունաստանից, այլև Ռումանիայից, եւ լուրջ արգելք հանդիսանալ Սերբիայի կամ Աւստրիայի յառաջխաղացման դէպի էզգեյան ծովք: Բացի այդ, վախ կար եւ Ռուսաստանի ուժեղացումից, որի մուտքը Վասիլոր իր ազատած երկրների վրայով բուռմ էր այն ժամանակ ապահովուած, իսկ որ այդ երկրները պիտի լինէին իլրա գործիք ազատարար Ռուսաստանի ձեռքին, այդ եւս ոչ մի կասկածի չէր ենթարկուում այն ժամանակ: Ուստի եւ, այլազան շահերի համաձայնեցման նպատակով, Թերլինի վեհաժողովուում որոշուել էր Թուրքարիայի Սան Ստեֆանոյի դաշնագրով զրծուած սահմաններից հանել Արեւելեան Ռումելիան ու Մակեդոնիան եւ վերադարձնել Թուրքիայի իշխանութեան:

Այդ երկու նահանջները, սակայն, միատեսակ աննպաստ պայմանների մէջ չընկան: Արեւելեան Ռումելիան աւելի բախտաւոր դուրս եկաւ. նրան

(\*) Յայտնի է, որ Բալկանեան ազգերի պատագրական պայքարը մէծ պղեցութիւն է արել հայ յեղափոխութեան առաջիքաների մաքերի վրայ: Բարբարիայի ազատագրութեան բայկաներուում, Սուլթանին ջիր մնացել էին միայն Արևելեան թումելիան, Մակեդոնիան և Ալբանիան. այս վերջինս՝ հնագույղ մասունք անդամական Արցուու Համբարին: 1885ին Արեւելեան թումելիան փաստուու միացան Թուրքարիային: մնաց միայն Մակեդոնիան անազատ: Եւ բնական կերպով ծնունդ տոին մակեդոնական հարցը ևս մակեդոնական յեղափոխական շարժումը որը, հետ սկզբից, իր վրա գրաւեց զաշնացական զործիների ու շագրութիւնը: Դաշնակցական-մակեդոնական զործակցութիւնը չուտով զարձաւ իրականութիւն:

Թոստոմը ամենից շատ հնարքքրուել ու զրազուել է մակեդոնացիներով: Նրա Թուրքիա հստատուելու պատճառներից մէնին էլ այդ էր: Նրա ջանքերով առաւելապէս զրուխ էկաւ պաշտօնական համազործակցութիւնը Դաշնակցութեան և Մակեդոնական յեղափոխականների միջև: Հ. Յ. Դաշնակցութեան Դիմուում (թիւ 1877) մնացել է Թոստոմի ուստի էլ լեզուով զրած մէկ յօդուածիք ձևուադիր, զժրախտարար, անաւար: Յօդուածը՝ գրուած է 1904ին, նույնուու է մակեդոնական շարժման և, բայ երեսութիւն, պատրաստուէ ուստի սերէն պարբերականի համար: Այսուղ զնում ճնք այդ յօդուածիք թարգմանութիւնը, որպէս Թոստոմից մնացած թանկացին մէր նշանաւ: Նա ունէ ևս պատմական արժէք, հայ-մակեդոնական շարժման համեմատութեան տեսակէտից:

ԽՄԲ.

շնորհուեց տեղական ինքնավարութիւն. նա կառավարում էր առանձին ընդհանուր-նահանգապետի միջոցով, որին թէեւ Բարձր Դաւոն էր նշանակում, բայց անպայման մեծ պետութիւնների համաձայնութեամբ. ուներ սեփական ժամանակիրիա, երկրապահ զօրք, սեփական ժողովրդական ներկայացուցչական ժողով եւայլն: Այս առաւելութիւնների շնորհիւ, այլեւ իբրև հետեւանք քուրք դիւանագիտութեան գործած աներեւակայելի կոպիտ սխալի — մի սխալ, որ զրկեց Խուրքիան ինքնավար շրջանում զօրք պահելու ամէն հնարաւորութիւնից, — ուստինիացինների համար դժուար չէր հինգ-վեց տարի անցած վիճական ու համարձակ մի հարուածով խորտակել քրքական լուծք: Ըստ Բերլինի դաշնագրի մի յօդուածի Սուլրանին իրաւունք էր տըրուտ սեփական ամրութիւններ կառուցանել Արեւելեան Ռումելիայի եւ Թուրքարքիայի իշխանութեան սահմանների վրայ եւ զօրք պահել այնուեղ: Բայց անմիջապէս յետոյ, մի ուրիշ յօդուածով, բացարձակ կերպով արգիլում էր քրքական զօրքերին դէսի այս ամրութիւնները անցնելիս կանդ առնել որեւէ տեղ ինքնավար նահանգում: Այս պայմաններում, Բոլգարիական սահմանների վրայ ամրոցներ շինել, զօրք փոխադրել այնուեղ, կապ պահել զօրքի հետ հնարաւոր պիտի լինէր զուցէ օդապարիններով միայն:

1885ին. յայտնի բոլգար հայրենասէր-յեղափոխական Զաքարիա Ստոյանովի հանգահութեան տակ Թիֆլիպում հիմնուեց մի զաղտնի յեղափոխական կոմիտէ, որ շուտով տապալց Արեւելեան Ռումելիայի ընդհանուր նահանգապետ Կրեստովիչին, եւ նոյն օրը կազմուած ժամանակաւոր կառավարութիւնը շտապով հրաւիրելով Բոլգարիայի իշխան Ալեքսանդր Բատենբերգին՝ յայտարարեց Արեւելեան Ռումելիան միացած Բոլգարիայի հետ: Ռումելիայի յեղաշրջամաս յաջորդող սերբ-բոլգարական պատերազմը եւ բոլգարների փայլուն յադրութիւնը միայն արազացրին կատարուած փաստի նահանչումը Բալկանեան քերակզոր վրայ: Մէկ ամիս դեռ չէր անցել խաղաղութեան վերջնական հաստատումից յետոյ, որ Սուլրանը համաձայնուեց նահանչել բոլգար իշխանին միաժամանակ եւ՛ Արեւելեան Ռումելիայի ընդհանուր-նահանգապետ: Այսպիսով, Արեւելեան Ռումելիայի, կամ, ինչպէս բոլգարներն իրենք են ասում, Հարաւային Բոլգարիայի միացումով Հիւսիսային Բոլգարիային, փաստօրէն իրականացաւ այն, որ սահմանուած էր Ռուսաստանի կողմէց Սան Ստեփանոյում:

Բայց մնում էր դեռ Մակեդոնիան: Ռուս-քրքական պատերազմից առաջ նա միւս նահանգներից ոչ պակաս տառապել էր քրքական լծի տակ: Միւսների հետ համահաւասար մասնակցել էր ազատազրական պայքարին, բայց ինչ որ դիւանագէտների ինչ որ քաղաքական նկատումներով պէտք է նորից ընկնէր Սուլրանի ատելի լծի ներքեւ, մինչդեռ հիւսիսային նահանգները ազատուում էին նրանից՝ մասամբ կամ լրիւ կերպով: Եթէ մակեդոնացինները բնաւ տեսած չլինէին ազատ, աւելի լաւ օրեք, անընդհատ շարութակուուղ սովորական ննշումը պակաս զգալի պիտի լինէր: Բայց տասնեակ տարիներով փայքայուած ազատութիւնը ունենալ, յաղբանակ տօնել դարաւոր քշնամու վրայ, նոր կեանիք ծրագիրներ կազմել, վերջապէս, մարդ զգալ իրեն եւ ոչ թէ իրաւագուրկ սարսկ եւ վերջը տեսնել ամբողջ շէնքի փլաւու-

մը, նորից ընկնել շուն-գեավուրի վիճակի մէջ . դիւրին չէր տանել այս հարուածը : Բերլինի վեհածողութի որոշումների այս ձեւի սրբազրումը ընդհանուր վրդովում առաջ թէրեց ամբողջ նահանգում : Խայգուկների խմբերը նորից գէնիք ձեռք առին եւ խայուեցին անտառներին ու լիոները՝ զերադասելով մեռնել այնուհեղ . բան թէ շարունակել վկայ լինել բրժական տիրապետութեան ամօրանիքին :

Այն էլ պէտք է ասել, որ Մակեդոնիան բալորովին իրաւագրկուած չէր . Թերլինի վեհածողութի նրան խոսացուել էին զրերէ նոյն ձեւի բարենորուցումների ինչ որ մշակուած էին կրետէի հօմեր : 1868ի օլդանական կանոնագիրը : Բարձր Գուոր պարտաւորուում էր անյապաղ յասուոկ յանձնախմբերը կազմել՝ լայն ներկայացուցչութեամբ տեղական սարքերի՝ նոր կանոնները մշակելու իրաւանչիր նուանցի փարշութեան համար : Այդ յանձնախմբերի կազմած նախազգերը իրաւարակութիւննեց ու զործադրութիւննեց առաջ պէտք է բննէր ու վահրացներ Արեւելեան Ռումելիայի համար ստեղծուած երապական յանձնախումքը :

Չուր է ասել, որ մակեդոնացիներին այլ բան չէր մնում . բայց երեւ հնագանդուել նակատազրին եւ յոյս տածել, որ զնէ բարենորուցումները կը զործադրուին եւ իրենք զնէ մասամբ հնարաւորութիւն կը ստանան ազատուելու բուրք պաշտօնաների կամայականուրիւններից եւ ալրանական աւագակախմբերի շահատակուրիւններից : Զէ՞ որ Թուրքիան չէր որ խոստացել էր բարենորուցումները, այլ Բերլինի վեհածողութիւնը նրանց զործադրութիւնը երաշխատարել են ոչ թէ մէկ, այլ ամբողջ վեց պետութիւնները . որոնց համար ժժուար չէր լինի պատժել Թուրքիան, երեւ նաև յանդզներ խոսափել վեհածողովի որոշումներից : Վերջ ի վեցոյ, նաևսնցի ապագայ կառավարութեան մէջ տեղական տարրն էլ այն պիտի ունենար, ուրեմն եւ հնարաւորութիւն պիտի ստեղծուէր բռողի յայտնելու եւ իրաւունք պաշտպանելու . . .

Որ մակեդոնացիք իրենց այս ակնկալութիւնների մէջ էլ սխալուեցին, որ բարենորուցումները մնացին մեամծ տառ եւ մէկ պիտութիւնների երաշխաւորութիւնները ոչչոչվ չէր սպանում Թուրքիային, այլ աւելի վիսա երեսական կազմում մակեդոնացիներին, այդ յայտնի է ամէնքին, եւ մենք աւելորդ ենք համարում կանգ առնել այն կատակերգութեան վրայ, որ խաղաց Թուրքիան իր այլաբան փօքնէրով՝ մտցնելու համար չարաքաստիկ բարենորուցումները : Մենք յոյս ունինք, որ առիք կ'ունենանք մննելու յատկապէս այն հարցը, թէ Սուլթանի կառավարութիւնը որքան անկեղծութեամբ է ձգուում մտցնելու այս կամ այն բարենորուցումները, աւելի է ասել՝ ինչքա՞ն նա բնդունակ է, որքան ի վհածէր է մտցնելու, առանց երուպական այս կամ այն պետութեան միջամտութեան :

Սակայն . բաւական չէր, որ բարենորուցումները չէին մտցուում, պայմանները մակեդոնացիների համար աւելի եւս վատրարացան : Թուրք կառավարութիւնը, նարսիկ կերպով օգտուելով վեց պետութիւնների անհամաձայնութիւննեց, շտապեց կիրառել մի շարք միջոցներ, վերջնականապէս խեղդելու հարցը : Հարկ էր, որքան հնար է, տկարացնել քրիստոնեայ բնակչութիւնը, զրկել նրան մտաւորական ուժերից, քայլայել տնտեսապէս, մի խու-

բոլ' այնպիսի վիճակի հասցնել, որ մէկ անգամ ընդ միշտ կորցնէ ամէն յօյս եւ այլեւս չիրագէ բարելաւումների մասին :

Այս', բարենորոգումներ մացնում էին, բայց միայն սեփական, քըր- ֆական բարենորոգումներ : Իւ երէ թիրեցողը ժիշ-շատ հետեւել է լրազիր- ների Մակեդոնիայից հաղորդած լուրերին . համբորդների բերած տեղեկու- թիւններին . պետութիւնների ներկայացուցիչների պաշտօնական հաղորդա- գրութիւններին, դիւրութեամբ կարող է զաղափար կազմել այս դժոխիք մա- սին, որի մէջ ապրել է եւ ապրում է Մակեդոնիայի տանչուած թանչութիւնը :

Հարկ ենք համարում աւելացնել նաև . որ բացի այն վարչական մի- ջոցներից, որոնք մշակուում են բարձրագոյն շրջաններում գիտակցորդն տկա- րացնելու համար քիչատոնեայ տարրը . բացի այդ միջոցներից, որոնց դէմ զիջաւորապէս ուղղուած են բոլորն մամուլի յարձակումները, աննկատելի, բայց աւելի ծանր քի են քիչատոնեայ բնակչութեան համար այն գործոննե- րը, որոնք հետեւանք են բուրք կառավարութեան ողորմելի վիճակի, այս- պէս ասած՝ երա ներկայ զգութեան հետ օրգանապէս կապուած ազդակները : Այդ ազդակներն ահա հանդիսանում են այն ամուր հիմք . որի վրայ պիտի հաստատուին վերեւ յիշուած վարչական միջոցները :

Այս ամէնք աչքի առաջ ունենալով՝ բնական էր սպասել, որ Մակեդո- նիայի քիչատոնեայ բնակչութիւնը, յուսահատուած արտաքին օգնութիւնից, ինքը պիտի մտածէր իր ապազայի մասին եւ սեփական ուղիներ փնտաէր դա- րաւոր լծից ազատուելու համար :

Այս խմորումը գորացաւ եւ աւելի որոշ ձեւ ստացաւ Ռումելիայի յե- ղաշրջման յաջող զործադրութիւնից յետոյ : Մակեդոնացիները չէին կարող հասկանալ նախանձով շնայել իրենց աւելի քախտաւոր եղբայրների վրայ, որոնք դեռ շատ առաջ չէր . որ իրենց հետ քածանում էին արեամարհուած ռայայի բնդիանոր դառն նակատագիրը : Նրանք չէին կարող շինտեւել այն ուղիներին, որոնք բացել էին ֆիլիպէի եւ այլ զաղանի կոմիտները : Միւս կողմից, ազատ եւ միացեալ Բոլգարիայի ժողովուրդն էլ անուարքը չէր Թի- լայի միւս կողմը զանուող իր եղբայրների վիճակի հանդէպ : Այսպիսով՝ թէ՛ բուն Մակեդոնիայում եւ թէ Բոլգարիայում սկիզբն առաւ եւ հետզիեսէ ձե- ւաւորուեց նոր՝ մակեդոնական շարժումը, ծնունդ տոին մակեդոնական կո- միտներն ու ընկերակցութիւնները :

Սեփական կազմակերպութիւն ունենալու անհրաժեշտութիւնը մակե- դոնացիների համար ստիպողական էր եւ ուրիշ պատճառով : Նախընթաց դէպ- ֆերը ցոյց տուին, որ մակեդոնացիները ստիպուած էին զօրծ ունենալ ոչ միայն բուրք կառավարութեան, այլեւ իրենց համար բոլորովին մի օսարո- տի տարրի հետ, որ Թուրքիայի ձգութմների կողմէն ասպարէկ էին դուրս գալիս Սերբիայի, Յունաստանի, Ռումանիայի, Աւստրիայի եւ ուրիշների յաւակնութիւնները : Անիրաժեշտ էր մակեդոնական հարցում շահազրգուած բոլոր կողմների ձգութմներին հակադրել սեփական ձեւակերպուած կամքը, հարկաւոր էր սեփական ուժ կազմակերպել՝ քաղաքական այս կամ այն բար- դութիւնների դէպարտ դիւնազիտութեան ձեռքին խաղալիք չգտանալու հա- մար : Եւ ահա Բալկանեան բերակցու քաղաքական հորիզոնի վրայ, կամց-

կամաց, զլուխ է բարձրացնում մի նոր ուժ, որը ներկայումս ստիպուած էն հաշուի առնել ոչ միայն հարեւան, այլև հեռաւոք երկրները:

Նախապէտ այդ ուժը հազի նկատելի էր. սակա անգամներ եւ դժկումակութեամբ արժանացնում էին նրան ուշադրութեան: Նրա խաղաղ յայտարարութիւններին, պարբերական յաւշազբերին, անդադար յիշեցումներին գործադրուող զագանութիւնների եւ խոսսացուած բարենորոգումների մասին. վերջապէս, նրա սպառնալիքներին զինուած բողոքի անցնելու — այդ ամէնի շատ էից կարեւորութիւն էր տրուում: Աննկատ էին անցնում նաև առանձին իմբերի պատահական թնդարումների զանազան դէպէերը, առանձին անհատների սխրագործութիւնները եւ հերոսական անձնազուութեանց բազմարի օրինակները. նոյնիսկ այն ժամանակ, երբ կատարուեցին Խոսկից գործի անցնելու առաջին լուրջ եւ կազմակերպուած փորձերը, երբ սկսուեցին զինուած խմբերի կանոնադր գործողութիւնները փոխ-խմբավետ նաև կույի, գօրավար Սոնչեւի. կապիտան Պրոտոպերովի դեկալարութեան տակ. 1901 եւ 1902 բուականներին, նոյնիսկ այդ ժամանակ շխասկացուեց մակեդոնական շարժման իրական նշանակութիւնը: Տարօրինակ կերպով համարեա թէ ամէններ հակամէտ էին բացատրելու այդ շարժումը ո՛չ թէ իբրև մակեդոնացի ժողովուրդի խսկանան բողոքի արտայայտութիւն, այլ բոլգարական ժարողիքների գրդումով ինչ որ կողմնակի, անհատական նպատակներ հետապնդող մի երեւոյք: Կարծում էին թէ բաւական է ազդու ննշում բանեցնել բոլգար կառավարութեան վրայ, եւ բարողիքների սադրանենները, հետեւաբար եւ սկսուած շարժումները. վերջ կը զանեն: Բայց անցեալ տարաւայ ծայր առած թնդանուր ապստամբութիւնը, որ տարածուեց ամբողջ Մակեդոնիայում եւ նրա սահմաններից էլ դուրս. Ազրիանոպոլիսի վիլայէքր անցաւ, պարզ կերպով ցոյց տուեց. թէ ինչպէս խորունի կերպով սխալում էին թշնամինները — եւ նոյնիսկ բարեկամները — մակեդոնական շարժման ծաւալի եւ ուժի մասին: Ցիշենք, որ այդ շարժումը նշանաւոր եղաւ ոչ միայն բազմարի եւ զինուորական գործում հմտու խմբերի հերոսական եւ երկարաւու կոռուպ, այլև ապստամբութիւնների պատմութեան մէջ նախընթացք շունեցոյ ուումբերի եւ ականների անվերջ պայարիւններով:

1903ի ապստամբութիւնից յետոյ, որ ոսէի հանեց մինչեւ 300,000 քըր-քական զօրք եւ էից մեաց զինուած բախում առաջ բերէր Բոլգարիայի եւ Թուրքիայի միջեւ, գործերը Մակեդոնիայում որոշ չափով փոխուել են: Այժմ արդէն այստեղ է զանուում իտալական մի գօրավար տեղական ժամադարմերիայի կազմակերպութեան համար. այստեղ հաւաքուել են նաև օտար սպաներ, որոնք պէտք է տեղում պաշտօններ ստանան: Սելանիկ են զալիս նաև երկու հաղաքացիական գործակալներ, եւ ինքը հալի փաշան կաշուից դուրս է զալիս՝ ցոյց տալու իրեն «խսկական» բարենորոգիչ: Նիշդ է, դեռ ոչ մի գործ չի կատարուել. հաւաքուած կազմակերպիչները ժամանակ են անցկացնում բուրք բարենորոգիչների հետ ժողովներ զումարելով. դեռ համաձայնութիւն չէ կայացել այնպիսի կարեւոր հարցի մասին, թէ, օրինակ, քրքական ժառայութեան մէջ զտնուող եւրոպացինները ի՞նչ պիտի կրեն՝ քըր-քական ֆէ՛ս, թէ եւրոպական զլխարկ: Բայց եւ այնպէս են, որ

Մինցշտեգի համաձայնութեան կէտերը պիտի գործադրութեան դրուին : Միփրարական է նկատուում այն, որ առաջին բայլը առնուած է, երոպական իրական միջամտութեան, քէեւ շատ համեստ . «կիզր» դրուած է:

Արդ՝ ի՞նչ է լինելու յետոյ : Խաղաղ կ'անցնի՞ , միջամտութեան առաջին բայլերը նոր բարդուրիւններ ստաջ չե՞ն բերի . չե՞ն պահանջուի պիտուրիւնների կողմից աւելի գործօն բայլեր : Խալիլ Փաշան արդեօք չի՞ դառնայ մի երկրորդ Միդհաս Փաշա, որ ազատարար պատերազմի նախօրեակին Բոլգարիայում բարենորոգչի դեր էր կատարում . եւ արդեօք ներկայ դէպէնը չե՞ն յիշեցնում Բոլգարիայի եւ Կրեսէի ազատութիւնից առաջ պատահած դէպէնը պատմութիւնը : Թէ՞ , մի գուցէ, Երոպան կը նահանջէ, եւ այս ամենը կը վերջանայ գաւեշտով կամ աւելի վատ՝ ողբերգութեամբ . . .

Ահա հարցեր, որոնք կանգնած են այսօր մակեդոնական գործիչների առջեւ :

«Հ. Յ. Գ. ՎԱՐՍՈՒՆԱՄԵԼԱ», Պոստն, 1950

## ՀԱՅ - ՎՐԱՑԱԿԱՆ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հ. Յ. Դ. Կենտրոնական Դիմանում, թոստոմի նամակների և ձեռագիրների շարքում, պահուել է և այս զբուածքի բնագիրը: Երեք մէծագիր շորս էֆոնց թւրթեր՝ զբուածք թոստոմի պարզ ու յատկ զբաղված: Տեղանեղ ջնջուած ու բարեփխուած: Ոչ վերնագիր աւնի, ոչ տարեթի և ոչ ստորագրութիւն: Ե՞րբ է զբուած, ի՞նչ ժակատագիր է ունեցել դրուածքը, — յայտնի չէ: Մակայն ընդհանուր տապարութիւնը այն է, որ զբութիւնը յատկացւած է ՀՔօթակինի՝ հրատարակուելու: Կովկասից զբուած նամակի մէտով: Արգելօք իրօք Կովկասից է զբէլ թոստոմը, թէ ևնց ժրենուում, — այդ էլ կարելի չէ ասել:

Դրութեան բարակացնելութիւնից կրկնում է, որ զնուակէու դրուած է այն օրերին, երբ Հայ-վրացական բանակիւր առանձնատպութիւն սույն հանգամանքը էր ստացել ջնորջիւ Գոյիցինեան ազգամիջնան կրքերը հրտնրոց քաղաքականութեան: Թուսաստանի տառչին յեղափոխութեան նախորդող տարիներն էին դրանք, երբ թիվիսի ուսում և վրացի մամուլը մէջ շահատակութիւններ էին անում Վէլիչունների և Ակակի Մէրքելինների տիպի հայակեր առպանենք:

Թոստոմը Հայ-վրացական փոխարարերութիւնների հարցը զնում է սկզբունքային հոդի վրայ, քննում պատճեական, ընկերութիւն-քաղաքական մէկնակիսից ելնելով և իրեն յառաւել յատկամատութեամբ ներկայացնուում է Հ. Յ. Դ. Դաշնակցութեան տեսակիւու: Բնորոշ է մասնաւորապէս նիւթի Հայ-վրացութեամբ և զարգացման կզանկելութողը, որ իր մէջ խառացնում է թոստոմի իրայտուուկ զքմորդութիւնը: Թոստոմը նորոգով, անշուշտ արգուած էր մորգախատական աշխարհահայեածքից, բայց զտարին մարգարտս նրան, ի հարելի, Համարելի չի կարելի, ինչպէս զտարին նարողնի չէր և Քրիստուփորք. եւս առաւել անհեթեթութիւն է օնիշիստականց կամ, մասնաւոնց, «նեշայեւեց» ցոյց տալ Ս. Զաւարեանին: Հ. Յ. Դաշնակցութեան Հիմնակիր երրորդութիւնը, անտարակոյս աւելի կամ պակաս չափով ազգուել են երրորդական և ոստամական այս կոմ այն քաղաքական դպրոցի ուսմաններց, բայց նրանց զինուոր առաջնորդութիւնը հնաց նրանուում է, որ, ոչ յօրինակ հնչեական հքմնացիրների, մէկնել ևն Հայ իրականութեան տառնեայտառուկ պայմաններից, կարողացել են ձաւկի ու ձևակիրապէլ որու: Հայովս ինքնուրոյն աշխարհահայեածքը և ընկերութիւն-քաղաքական սեփական զաղաքարախօսութիւն:

Հայ-վրացական փոխարարերութիւնների ինդիքս, այնպէս ինչպէս ներկայացնում է թոստոմը, ըստ էութեան այսօր չէ մնում չ իր ուժի մէջ, սակայն, կարելի չէ շրնչունել, որ թոստոմը ինդիքսը չի առել բովանդակ ծաւալուու: Դասակարգային բացարութիւնը, անշուշտ, ճիշդ է, բայց ամրող ճշմարտութիւնը չէ: Խնդրի մէջ կամ և ներքին-պատճական պատճառներ, երկու ծովուուրզների քաղաքական մակատազրի բաժանման եւ քաղաքական հակամման նկատմաններ, ևս, ի հարելի, նաևս ուսու կատարութեան քաղաքական զտարեց հւայլն: Այսոք, նոր զիպքերի ու փաստերի լուսի տակ, թոստոմի Հիմնական միտքը կարելի է շատ աւելի լայնացնել ու խորացնել:

Այդուհանդերձ, թոստոմի զբութիւնը մէծապէս շահեկան է, ոչ միայն լոկ իրեւն պատճական վաւերագիր, այլև որպէս զործնական արժէք ներկայացնող զրուածք:

Ս. ՎՐԱՅԵԱՆ

\*\*

Այս նամակը վաղուց է զբուած, ուսու մամուլի եւ վրաց հասարակութեան որոշ մասի «ազգասիրական» արշաւանքը համարեա՛ քէ դադարել է,

ոռուս կառավարութիւնը արդէն «խեղդում է տանիքահայերի և ոռուսահայերի մէջ ծագում առաջադիմական շարժումը» (մենք մեր կողմից այդ, ի հարկէ, չենք վերագրում ոռուս և մանաւանի վրաց ազգասէրների արշաւամիմին)։ Բայց մենք գիտենք, որ իրենց ազգի շահերի համար անձը չխնայող այդ հաստատակամ զաղափարական գործիչները մի ժիշտ շունչ առնելով նորից կը բարձրացնեն իրեկից ազգասիրական կոկողը և նորանոր, աւելի անմիտ առասպեկտներ հնարելով՝ կը սրբուրեն նորից միամիտների մտքերը, աշխատելով ցոյց տալ, թէ իրենք են ազգի միակ արքուն հովիւները և թէ առանց իրենց ազգի շահերը բոլորումին ուսմասուկ կը լինեն։

Ոռուս ըրու ազգասէրների արշաւանիմին մենք վաղուց ենք բնտելացել, ինչպէս եւ Ռուսաստանում ապրող միւս ազգութիւնները. դրանց ընտելացել է եւ ըստ արժանաւոյն զնահատել եւ ոռու հասարակութիւնը, որի լաւագոյն մասը ատելով ատում է այդ ուղղութիւնը։ Սակայն, մեզ համար անսպասելի էր եւ միանգամայն ցաւալի՝ մեր հարեւան վրաց հասարակութեան անմիտ յարձակումը եւ այն էլ մի այնախիտ ժամանակ, երբ մենք աչք չէինք կարողանում քաց անել մեր զլիխին բափուռդ հարուածներից, երբ մենք «աւելի ժամ երբեւից» կարօտ էինք պաշտպանութեան։ Վրաց ինտելիգենցիան մոռացաւ իր «ասպետական բնաւորութիւնը», մոռացաւ իր ազգի իրական շահերը եւ տարաւ իր արշաւանիք ամէն կողմից՝ թէ՛ թերանացի, թէ՛ իր մամուլի միջօցով եւ թէ ոռու խաւարամիտ մամուլին նիւթ մատակարարելով։ Վրաց հասարակութեան մէջ եղան եղակի, բռյլ, հակառակ ձայններ, բայց չզտնուց մէկը, որ ասպարէզ դուրս գար եւ խիստ կերպով բռդոնէր այդ անտեղի արշաւանիմին դէմ։ Վրաց հասարակութեան լաւագոյն մասը իթէն էլ կ'ամաշի (երէ միայն չի ամաշե) այդ անմիտ, անտակու, փոխադարձ ազգային ատելութիւն գրգռող ժայլից։

Այս ի՞նչ արշաւանի է, ի՞նչ են պահանջում հայերից ոռու և վրաց ազգերի անոնից նառող ինքնակոչ վաստարանները, ի՞նչ թշնամութիւն կարող է լինել այդ ազգերի մէջ։ «Հայերը վաշխառուներ են, նրանք անխինն կերպով հարստահարում են հարեւան ազգերին, իրենց ծեռքն են ճգել առեւտուրը, յափշտակել են ամէն ինչ, մինչեւ իսկ... ուղղափառների սրբավայրերը (այս, շարագործներ'»)։

Նախ եւ առաջ, նի՞շ է արդեօֆ այս բռլորը։ Ճի՞շդ է, որ հայերը Կովկասում յափշտակել են ամէն ինչ։ Նրանից են միայն երկրի միակ հարստահարիչները։ Նոյն ոռուները, վրացիները, մանաւանդ իմերելները վաշխառուներ չի՞ն արտադրում։ Ցայց տա՞նիք արդեօֆ այն զաւառները, որտեղ քուրք վաշխառուներին ոչ ոք չի կարողանում դիմադրել։ Նորկեները, Շոտշիլդները, Շիքայեները, Մորոզովները, Ալեքսէյեները, Կորգիննիմները, ոռոնք ահազին կապիտալներով մուտք են գործել Կովկաս, հայե՞ր են միքէ։ Բործումի լայնատարած կալուածները փոխարժան չի՞ «յափշտակել»։ Այդ փախարքան չէ՞ր, որ ուժով իր հոգի վրաց բնակուող վրացի խիզաններին գրկեց իրենց դարաւոր իրաւունքներից։ Կախերի ամենալաւ մասը՝ Մուգուրկանը, Ցինանդալը Ռուսաց Կայսերական տունը չէ՞ «յափշտակել»։ Հայենցէ՛ք «յափշտակողներին»։ Ճեր հայենյանի ամենամեծ մասը քափում է

Ճեր պաշտած կայսերական տան վրայ : Այս բոլորը շատ լաւ է յայտնի յարձակում գործողներից շատերին . բայց դրանք դիտմամբ հարցին այս ձեւը տալով՝ աշխատում են մոլորեցնել հասարակական կարծիքը եւ դա իրենց բուն նպատակին ծառայեցնել :

Թուսաստանում վերջին ժամանակներս արդէն կազմակերպուել է խոշոր արդիւնաբերողների . խոշոր վաճառականների . կամ այսպէս անուանեալ բուրժուական դասակարգը : Բայց Թուսաստանն ընդարձակ երկիր է, բաղկացած բարգարիւ մասերից . որոնք գտնուում են կուլտուրական շատ տարբեր աստիճանների վրայ : Լեհաստանում մենք տեսնում են կապիտալիզմի ահազին գարգացում . բուն ուստական կենտրոնաւում Մոսկվայում եւ իւր շրջակայնում արդիւնագործութիւնն ույնովէս զարգացած է . բայց ոչ այնպէս, ինչպէս Լեհաստանում . այնուհետեւ Թուսաստանի միւս մասերում, ինչպէս օրինակ Կովկասում . խոշոր արդիւնագործութիւնը նոր է մուտք գործել . սրա հետ միաժամանակ այլիւայլ անկիւններաւմ պատահում ենք վայրեր, ուր դեռ տիրապետում է ապրանքների անմիջական փոխանակութիւնը եւ ուր իր դրամ գործ են ածում կենդանիների մորքին : Ենորիի Ռուսաստանի ընդհանուր տնտեսական սկզբունքի բոյլ զարգացման, նրա զանազան մասերի կազմակերպուող եւ կազմակերպուած բուրժուաների մէջ դեռ չէ կարող գոյացութիւն ունենալ շահերի ընդհանուր համերաշխութիւն . նրանց մէջ դեռ չի կարող ծագել ընդհանուր դասակարգային գիտակցութիւն : Խրաբանչիւր մասսի բուրժուաները անխուսափելի կերպով պէտք է ուրեմն եւ մրցեն միւս մասերի բուրժուաների հետ . պէտք է ուրեմն եւ բշնամանան : Այս բշնամութիւնը շնորհիւ մի քանի պատճական հանգամանքների Ռուսաստանում կարողանուում է ենդարկուել ազգային զաղափարով : Բուն ուսւ նահանգների բուրժուաները յեն կարողանուում մրցել Լեհաստանի բուրժուաների հետ, որովհետեւ վերջիններս աւելի ուժեղ են եւ ոչ քէ միայն բոյլ չեն տալիս իրենց բայոնում տարածել առաջինների ապրանքները . այլի մեծ յաջողութեամբ տարածում են իրենց ապրանքը դրանց բայոնում : Պարզ բան է, քանի որ այդ մրցումը գոյութիւն ունի, բշնամութիւնը անխուսափելի կը լինի, լեհական Հարցը ասպարեզից չի ինչի, ուսւ մամուլի որոշ մասի արշաւանքը լեհացիների վրայ չի դադարի :

Թուս արդիւնագործողները ուզում են մտցնել իրենց կապիտալները Կովկասում . ուսւ վաճառականները իրենք են ուզում ապրանք արտահանել Կովկաս, սակայն դորա երկիր մէջ պատահում են լուրջ մրցակիցներ, որոնք զլխաւրապէս հայերն են, որոնք նոյնու մեռնամուխ են լինում խոշոր արդիւնագործական ձեռնարկութիւնների . նոյնու յաջող կերպով մտցնում են երկիր մէջ երոսական եւ ուստական ապրանքներ եւ աւելի լաւ նամաշելով երկիր պայմանները՝ կամ բոյլ չեն տալիս միւսներին հաստատուելու, կամ մեծ խոշընոտ են լինում հաստատուածներին :

Կառավարութիւնը գրաւում է Անդրկասապետան երկիրը, զցում է երկարուդու զիծը, ուսւ բուրժուան հրեւում է, այդ նրա տենչալի ցանկութիւնն է՝ իւր ապրանքները մտցնելու . այնտեղից ապրանքներ արտահանելու համար նոր երապարակ է բացում : Սակայն, մի քանի ժամանակից յետոյ, ուսւ

բուրժուան տեսնում է, որ ամբողջ Անդրկասպեան երկիրը պատած է դարձեալ... հայ վաճառականներով : Եւ հարկէ, այս պայմանների մէջ չի կարելի սպասել, որ զանազան Մորոզովները, Ալեքսանդր և ները, Կորգիմկինները բարեկամական աշխով նայեն հայերի վրայ. պարզ բան է, որ գրգռուած ուս բուրժուանները եւ իրենց բարեկամները, չուցենալով բշնամութեան բուն պատճեառը երեւան հանիլ, ամէն տեսակ յիմար գրպարտութիւններ կը քափեն «հայերի» վրայ եւ կը ծափակարեն Սուլրանին հայերի զիխին կատարած վայրագութիւնների առքի : Այս պարունները կովկասեան բոլոր ազգութիւնների մէջ միայն հայերին են մեղադրում ապաստաբութեան մէջ կառավարութեան դէմ : Նիծաղելի չէ՞ այս. Կովկասի մահմետականները միշտ պատրաստ են եղել ապստամբելու ուս կառավարութեան դէմ : Ամէնքը յիշում են ամշուշտ վերջին ուսու-տանիկական պատերազմի ժամանակ մահմետականների պատրաստութիւնները, եւ երէ տաճիկները ֆիշ էլ առաջ խաղային, Երեւանի գրաւէին. բոլոր մահմետականները ոտի կը կանգնէին : Լեռնական Ղազի-Ղուլուուցից դրան էլ չսպասեցին եւ ապստամբութեցին : Ոչ ոք էլ չի կարող ասել, որ վրացինների մէջ ձգուում չկայ ուսւական բռնակալ լժից ազատուելու : Բայց եւ այնպէս, կրիմում ենք, այդ պարունների աշխում միայն հայերն են մեղաւոր : Խնչո՞ւ : — Արովիեսեւ հայերն են դրանց առեւտրական ասպարէզում խոչընդուն հանդիսանում եւ ոչ վրացից, կամ բուրքերը : Պարզ է, որ այստեղ ոչ բաղաբանութիւնն է դեր խաղում եւ ոչ համայն ուս ազգի շահերը, այլ Մոսկուայի ծանրամիտ Տիտ Տիտիչների<sup>(\*)</sup> գրպանի շահերը :

Հաստափոր եւ ծանրագլուխ ուս բուրժուանները չեն կարողանում մըրցել իրեամերի ենաւ : Ահա իրէական հարցը սուր կերպարանք է առնում, իրեանները տասնեակ հազարներով քչում են Ռուսաստանից, մնացածնների իրաւունքները կրնաւում : Այս բոլորը կատարուում է ազգասիրաբար, յանուն ուս ժողովրդի բարեկեցուրեան եւայլին : Ցոյց տալու համար, թէ ինքը ուս ժողովուրդը ինչպէ՞ս է վերաբերուում այդ տեսակ ազգասիրութեան, առաջ բերենին մի փաստ : Հարաւային Ռուսաստանում, Բեսարաբիայում ահազին բուուի իրեայ վաշխառուներ կային, ցրուած զիւղերում : Հրէական արշաւանքի ժամանակ այդպիսի խոշոր կալուածատէրերը, հանդիսանալով գերմ պաշտպան զիւղացինների շահերի . սաստիկ աղմուկ էին բարձրացրել տեղական իրեամերի դէմ, աղաղակելով . թէ դրանք ժողովրդի արիւնը ծծողներ են եւայլին, պէտք է դրանց բոլորին քշել, որպէսզի ժողովուրդը կարողանայ մի ֆիշ շունչ բաշել : Սարակենիչի<sup>(\*\*)</sup> սերունդների նեարդները շատ էին նըրքացել . նրանք ժողովրդի քշուառ դրութեան վրայ բաւականաշափ աղի արտասույք բափեցին, նրա ազատութեան համար «արդարութիւն», «արդարութիւն» զոշելով կառավարութեան դիմեցին : Բարեխնամ Հայր-Թագաւորը լըսեց դրանց արդար բողոքները . իրեամերը հալածուեցան, Բեսարաբիան զգա-

(\*) Տիտ Տիտիչ — ուս գրական տիպ՝ կոսիտ վաշխառու վանաւական :

(\*\*) Գոզոյի հերօսներից մէկը՝ գուեկ կալուածատէր

իլ կերպով ազատուեց իր կեղեքողմներից, բայց յիշար ոուս ժողովուրդը սկըսեց... լալ՝ ափսոսանեով յիշելով մօտիկ անցեալը: Պատմառը շատ պարզ էր: Այդ գիւղացիները չունին սեփական հող. բոլոր հողերը պատկանում են խոշոր, շատ խոշոր կալուածատէրերին: Քանի կային հրեայ վաշխառուները, գիւղացիները փոխ էին առնում դրամ, կապալով վերցնում կալուածատէրերի հողը եւ վարում: Այդ իրենց աւելի ձեռնուու էր: Խոկ վաշխառուների հեռանալուց յետոյ, գիւղացիները ստիպուած եղան անպատճառ աշխատել նրանց արտերում, իրը հասարակ մշակ, որ ստանում է միայն իր օրավարձը, ստիպուած եղան իրենց հարկաւոր դրամի համար անպատճառ կալուածատէրին դիմել եւ այդպիսով ընկնել բացառապէս դրամց նամկը:

Եւ իշչպէ՞ս չլալ...

Քանի որ, կրիմում ենք, Ռուսաստանում կապիտալիզմի գարզացումը քոյլ է, նրա զանազան անկիւններում զոյուրդին ունի տնտեսական անհաւասար գարզացում, քանի որ մէկ անկիւնի արդիւնազորդողները, վանառականները աշխառում են ներս մասնել այսուեղ, ուր տեղացիներն արդէն տարածել են իրենց ցանցերը, դրամց մէջ անխուսափելի է խմբական թշնամուրիւնը, որ հետեւանք է պարզ տնտեսական մրցման: Եւ որտեղ որ հնարաւոր է, այդ տնտեսական թշնամուրիւնը բողարկուում է այս կամ այն զաղափարով՝ ազգային, քրիստոնէական եւայլն: Խոկ երը Ռուսաստան եւս մտնի կապիտալիստական գօրեղ կազմակերպուրեան մէջ, երբ երբեւեկուրիւնը դիւրանայ, իրարից հեռու անկիւններն բնդունեն ժիշ թէ շատ միատեսակ տնտեսական գարզացում, այն ժամանակ այդ խմբական թշնամուրիւնը կը վերանայ, այն ժամանակ մրցորդները կը լինեն ոչ թէ մի անկիւնի բուրժուաները միւս անկիւնի բուրժուաների հետ, այլ այս անհատը միւսի հետ, որ անկիւնին էլ դրանք պատկանեն: Եւ երբ վերանայ այդ տեսակ թշնամուրիւնը, այն ժամանակ երկրի մէջ կը բուլանան եւ հետզետու կը կորչեն զանազան ազգային թշնամուրիւնները: Ընդհակառակն, այն ժամանակ տեղի կ'ունենայ մի նոր երեւոյք. Մոսկուայի բուրժուան իւր քարեկամական ձեռքը կը մեկնի իր վաղեմի թշնամի՝ Կովկասի. Լեհաստանի բուրժուաներին: Նրանց մէջ կը զարգանայ դասակարգային ինքնանանաշողուրիւնը. նրանք իրար ձեռք ձեռք կը տան միացեալ ուժերով կոռուկուր բանուոր դասակարգի կազմակերպուրեան դէմ, ա'յն սարասպիկի ուժի. որ անխուսափելի հետեւանք կը լինի կապիտալիստական զարգացման: Խոկ մինչեւ այդ ժամանակ հայ ազգը, լիէ ազգը եւայլն կը կրեն անբնդիատ յարձակումներ ոուս բուրժուազիայի կողմից, ժաւելով իրենց բուրժուաների մեղքը:

Ահա ոուս մամուլի որոշ մասի արշաւանքի բուն դրդիչ պատճառները, մամուլի, որ արտայայտիչ է այս դէպքում ոուս բուրժուաների նպատակների: (Սրանով չենք ուզում ասել, ի հարկէ, որ այդ օրգանները բուն բուրժուական են. Ռուսաստանի տնտեսական կեանքը դեռ այն աստիճան չի գարզացած, որ բուրժուաները կարողանան որոշ ուղղուրեամբ ասպարէզ դուրս զալ): Դրա այդ ուղղուրիւնը զնահասուած է բոլորի կողմից, հասկացող դասի մէջ նա իւր յարձակումներով ու չնաշխարհիկ առասպելներով միայն ծիծաղ է կարողանում շարժել:

Այլ բան է մեր հարեւան վրացիների արշաւանքը, որը դեռ չէ բնադրատուած, դեռ չէ զահահատուած նոյնիսկ վրաց հասկացող դասի կողմից եւ որը մի ժիշ այլ բնաւորութիւն ունի:

Հայերը շատ վաղուց են ապրում Վրաստանում: Հենց առաջուանից հայերի մեծամասնութիւնը երկրագործ էր, բայց եւ այնպէս երկրի առեւտուրը եւ արհեստները շուտով անցան դրանց ձեռքը: Այդ ժամանակ վանականը, արհեստաւորը անհրաժեշտ էին քէ՛ կառավարութեան, քէ՛ ազնուականութեան եւ քէ՛ ժողովրդի համար: Նրանց դէմ քշնամութեան ոչ մէկ նրաշոյ չէր նկատում: Խուսաց տիրապեսութեան ժամանակ էլ հայերը կարողանան պահպանել իրենց դիրքը: Վրաց ազնուականներն այս ժամանակ իրենց շատ լաւ էին զգում: Նրանք ազնուականութիւնից՝ հայրենիքի պաշտպանութեան համար արիւն քափելու պատրաստակամութեամբ, իսկ այդ ժամանակից սկսած ազնուականները մրցում էին... զինի խմելու բնդունակութեամբ: Այդ խաղաղ, անդորր, անհոգ կեանեքը երկար չէր կարող տելել. երկրի մէշ այդ ժամանակ տեղի էին ունենում հշանաւոր փոփոխութիւններ, որոնք սկսում էին աւելի եւ աւելի վրդովիլ վրաց ազնուականութեան բռչնային անշարժ կեանեքը: Երկրի տնտեսական կեանեքը սկսեց արագ զարգանալ, արհեստները ծաղկեցին, առեւտուրը մեծ ծաւալ ստացաւ, նաև պարհեները լաւացան, լուսաւորուած երկրների հետ շփումը սաստկացաւ, կեանեքի մէշ առաջացան նորանոր կարիքներ, որոնց հարկաւոր էր բաւականութիւն տալ: Այդ կարիքները աւելի ծագում էին ազնուականութեան մէշ, իբր երկրի առաջադէմ տարրի: Նոր կարիքներին բաւականութիւն տալու համար հարկաւոր էր գրամք: Այդ դրամը ազնուականութիւնը չուներ, չէր կարող ստանալ իւր նորու զիւղացիներից: Վերջիններս միմիայն բնական նիւր կարող էին տալ: Ան այստեղ դրամատէրերը՝ հայ վանականներն ու վաշխառուները, կամ խօսելով բնդիանուր լեզուով՝ հայերը, սկըսեցին մեծ դեր խաղալ՝ մի տեսակ միջնորդի դեր կատարելով ազնուականութեան եւ զիւղական տարրի միջին: Ազնուականներն դրամ է հարկաւոր. նա ինքը անբնդունակ է առեւտրական ձեռնարկութիւնների համար, նա չի կարող ծախել ինքը իւր զիւղացիներից ստացած բնական տուրքը՝ ցարենք, զարին, բուրդը, մրգերը եւայլն: «Հայը» տալիս է ազնուականներ հարկաւոր դրամը եւ վերցնում է դրա փոխանակ նրա ստացած արդիւնքը եւ ահազին օգուտով էլ իւր գրապահի համար ծախում այլ տեղեր, նորից դրամի փոխանակում: Փիւղացուն նոյնպէս դրամ է հարկաւոր: Հայը նրան էլ է տալիս եւ մէկին երկու-երեք առնում նրա հասոյրից: Այսպիսով «հայը» կեղեկում է ազնուական էլ, զիւղացուն էլ եւ երկուսն էլ նրանից գոհ են:

Երբ նորտութիւնը վերացաւ, Վրաստանի տնտեսական կեանեքը աւելի ազնուական ստացաւ, հայը աւելի ստատիկ, աւելի մեծ դիրութեամբ շարունակեց իւր կեղեկումք: Այդ ժամանակ էլ չէր լուսում ոչ մի բողոքի ձայն ոչ մի կողմից. այդ ժամանակ էլ վաշխառուն անհրաժեշտութիւն էր երկու-

սի համար էլ. առանց այդ տարրի նրանք չեն կարող յարմարուել կեանքի նոր պահանջներին: Ազնուականութեան կարիքները հետզիեւէ մեծանում էին. գիւղացիներից ստացուած տարեկան հասոյրը չէր կարող բաւականութիւն տալ ազնուականի արժանավայէլ կեանքին: Շայլ ծախսերը ծածկելու համար հարկաւոր էր զրա դնել հոդերը. ձեռնամուխ լինել, «մայր զումարին», եւ վրաց ազնուականները միշտ զնում էին «չնչին, անպէտ հոդերը» նադի փող համարելով: Այսպէս. շատ բնական նանապարհով, մի կողմից ժայխայուում էր վրաց ազնուականութիւնը, իսկ միս կողմից հարստութիւնը դիմուում էր հայ եւ մասսաբ էլ նոր ծնունդ առած վրաց դրամատէրերի մօս: Այս ժամանակ ահա սկսուում են կամաց-կամաց լոււել բողոքի ճայներ հայ «վաշխառուների», «հայութեան» դէմ, եւ վրաց հասարակութեան այժմեան ազգափրական նաոները. նրա կոյր արշաւանքը «Հայութեան» դէմ արտափայլումն է վրաց ազնուականութեան տնտեսական ժայխայման: Գոյքա ուժասպառ եղած, բոլացած, իրենց անկումը զզացած ազնուականների անգօր նիշերն են. դրանք դէպի վանառականական, վաշխառուական ասպարէզը ձգառզ, բայց արդէն փորձուածների հետ մրցելու անընդունակ ազնուականների կատաղած աղմուկներն են. դրանք. վերջապէս, ձուից նոր դուրս եկած եւ իրենց նոր ասպարէզի վրայ արդէն ժիշ քէ շատ յաջողութիւն զտած վրացի դրամատէրերի իննաբարաւական մրբ մրբոցն են: Ես վրաց իմտելիզենտները, որը զիտակցարար. որը անգիտակցարար. որը կամայ, իրենց զցել են այդ հոսանքի մէջ, հետեւում են վերոյիշեալների շահադիտական միտումներին, մի կողմ բողնելով իրենց ժողովրդի խսկական շահերը:

Այդ արշաւանքի բուն աղբիւրը պարզ է մեզ համար. մենք չենք խարուի դրանով եւ չենք վերազրի այդ ամբողջ վրաց ազգին. ինչպէս չենք ընդունի ուսւ մամուլի որոշ մասի արշաւանքը իրը արտայայտիչ համայն ուսւ ժողովրդի ձգուման: Մենք տեսնուում ենք, որ հայ, վրացի, բուրք, ուսւ աշխատուոր տարրի մէջ վխուում են ամէն ազգի, ամէն դիրքի պատկանող արիւն ծծող վամպիրներ. որոնցից ուսանի ուժով, ուսանի ժաղցրութեամբ, ուսանի խարելով, ուսանի ժծնելով եւ նրա բոյլ կողմերը շոյելով՝ առաջարկում են իրենց ժառայութիւնը... նրան կեղեկելու: Նրաքանչիւրը դրանցից աշխատուում է հաւատացնել. որ երէ ինքը կների, աւելի լաւ կը լիմի:

Ճնշուած եւ տգէու ժողովուրդը այդ կեղեկումը համարելով շատ բնական երեւոյր եւ ընտրութիւնն անխուսափելի, հակուում է սրա կամ նրա կողմը, ի հարկէ. որքան դա կախուած է իր կամքից, որքան բոյլ են տալիս իրեն իւր տնտեսական եւ ժաղական պայմանները: Բացի այդ, նա յանախ ոչ քէ միայն չի նանաչուում իւր խսկական բշնամիներին, այլ խարուելով այդ վամպիրների նարպիկ խսկերդը, սկսում է բշնամարար վերաբերուել դէպի միւս տիպիրի իւր վիխտակակից աշխատաւորները եւ իւր այդ բշնամական վերաբերմամբ աւելի բան լաւ զործիք դառնուում վամպիրների շահադիտական նաբատակերին: Բայց այսպէս չի մնայ. կը զայ ժամանակ, երկիր դրութիւնը կը փոխուի. աշխատուոր տարրը կը տեսնի, որ պարտաւոր չէ անպատճառ ընտրութիւն անել կեղեկողների մէջ, որ կարելի է եւ չկեղեքէլ. նա կը

նաևոչի իւր խոկական բշնամիներին, կը նաևաչի եւ բարեկամներին. նա մից կունենայ բարձրացնել իւր հոկայական ջղուտ բազուկը, ջարդել այդ վաճապիքների գլուխը և լինել տէր իւր աշխատանիքին: Խոկ առօրեայ ծանր հոգերի մէջ խորասուգուած աշխատանոր տարրին կուուելու միջոց տալու պարտականութիւնը ծանրանում է երիտասարդ ուժերի վրայ, եւ իւրաքանչիւր երկրի երիտասարդութիւնը պարտաւոր է կրել այդ ծանր լուծը:

Մենիկ հաւատացած ենք, որ վրաց երիտասարդութեան այն մասն էլ, որ հասկանում է իրերի դրութիւնը. կը հասկացնի վրաց հասարակութեան այդ բշնամութեան, այդ բողոքների խոկական արժեքը. հաւատացած ենք, որ վրացի երիտասարդ ուժերը, որոնիք անկեղծ կիրապով ձգուում են իրենց ժողովրդի բարեկանութեան, քայլ տարրում են բնիհանուր հոսանքով, կը հասկանան, որ վրացի, հայ, ռուս, քուրք աշխատաւոր տարրերի մէջ չի կարող լինել շահերի անհամերաշխուրին, որ այդ անհամերաշխուրինը կարող է լինել միայն դրանց կեղեքող տարրերի մէջ. հաւատացած ենք, որ վրացի երիտասարդութիւնը չի հետեւի «Խվերիա»<sup>(\*)</sup> լրագրի օրինակին՝ ֆճնելով ուսու մամուլի սառը մասի առաջ՝ աշխատել ձեռք քերել երկրի համար առ դրութիւն, այլ ձեռք ձեռքի տուած բլուր միւս ազգուրինեների զործողների հետ՝ կը կոռուին հայ, վրացի, քուրք, ռուս հարստանարիների դէմ, կը կոռուին փոխարքայի, կայսերական տան ոտնձգուրինեների դէմ, կը կոռուին վերջապէս երկրի գլխաւոր չարիքի՝ միապետական բռնակալուրեան դէմ:

---

Յ. Գ. — Վրաց հասարակութեան մի մասին մէջ տարածուած է այն միտքը, իբր թէ հայերը ձգուում են Կովկասում ձեռք քերել ազգային անկախուրին եւ Թիֆլիզը դաշնենել մայրաքաղաք: (Ընթերցողները, անշուշտ, յիշում են «Եռույոյէ Վրէմիազյի»<sup>(\*\*)</sup> յօդուածը, որով ազատ Հայաստանի սահմանները հասնում էին մինչեւ Ռուսակով): Դա զարմանալի չէ. վրաց հասարակուրինը այժմ այնպէս է տրամադրուած, որ դրանից էլ աւելի անհերեր կարծիքներ կարող են իբր սոսոյզ լուրեր տարածուել, և մենք հասկանում ենք վրաց ազգասէրների արդար գոյրոյրը... Թիֆլիզը գրաւման առքի: Հասկանում ենք, քայլ ներել չեն կարող այդ աստիճանի միամտուրին: Կարող ենք հաւատացնել այդ կարգի բողոքներին, որ հայ յեղափոխականների կողմից չկայ ոչ մի լուրջ ձգուում ոչ Թիֆլիզը գրաւելու, ոչ էլ անհամարակ Ռուսահայաստանի անշատելու եւ նրա անկախուրինը երաշելու: Կարող ենք հաւատացնել, որ հայ յեղափոխականները ուսուահայերի դրութիւնը բարւունելու համար չեն դիմի անշատման, այլ Ռուսաստանի բոլոր միւս յեղափոխականների հետ կը կոռուեն երկրի ընդհանուր չարիքների դէմ:

(\*) Վրացական ազգայնամուլ-Հայաստաց թէրթ:

(\*\*) Թուս պահպանողական-Հայակեր թէրթ:

ձիշդ է, հայ սոցիալ-դեմոկրատական Հնչակեան կուսակցութեան ծրագրի մէջ կայ մի կէտ, որի համաձայն այդ կուսակցութիւնը, Տաճկաստանի ազատութիւնից յետոյ, պէտք է զբաղուի Պարսկահայաստանի եւ Ռուսահայաստանի ազատութեան զործով՝ աշխատելով կազմել այդ երեսից մի ընդհանուր հայկական կառավարութիւն (ուզում է ասել՝ պետութիւն. Ս. Վ.) : Բայց ամենայն վստահութեամբ կարող ենք հաւատացնել վրաց հասարակութեան, որ Հնչակեան կուսակցութիւնը ոչ մի ժամանակ այդպիսի տղայամիտ գոտում չի արտայայտի : Զէ՞ որ նրա ծրագրի համաձայն Ռուսահայաստանի ազատութիւնը ապազայի զործ է, դրանով նա կը զբաղուի Տաճկահայաստանի եւ զուցէ Պարսկահայաստանի ազատութիւնից յետոյ : Խնկ մինչեւ այդ ժամանակը Հնչակեան կուսակցութիւնը կը համոզուի իւր ծրագրի կատարեալ սնամտութեան մէջ, մենք հաւատացած ենք դրանում : Կարելի՞ բան է . որ այդքան ժամանակուայ ըմբացքում զիսական-սոցիալիստ Հնչակը շհասկանայ, վերջապէս, գիտական սոցիալիզմի ամենատարրական սկզբունքը :

Թո՞ղ վրացիք ի զուր տեղը չվրդովուին . հայերը Թիֆլիզը չեն «յափրշտակի» . մենք երաշխաւորում ենք Հնչակեան կուսակցութեան կողմից :

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԱԿԸ

Դանիական թէրթէ մը արտատպէլով, Փրանսական օրաթէրթը կը հրատարակէ ՀՀայ պատգամաւորք Տոքթ. Զօրեանի հետեւալ Էնթէգիուն, Հայկական բանակ մըշ վերեադրին տակ: Անտարակոյս Տոքթ. Զօրեան մեր յայտնի դաշնակցական դործիչ Ռուսութիւն է:

ՅՈՒՍԱՐԵՐ

Թուս հանրապետուական կառավարութեան մեր հայրենակիցներաւն հանդէպ ունեցած վստահութեան ամենէն փայլուն ապացոյցն է որ կ'երեւայ այն իրողութեան մէջ, որ որոշում տրուած է հայ զինուորները համախմբել առանձին բանակի մը մէջ: Առ այժմ հայկական վեց գօրազունդեր գոյութիւն ունին, որոնք զիխաւորաքար կը գործեն կավկասի եւ Պարսկաստանի նակատներուն վրայ եւ որոնք խառնուած են տարրեր ազգութեանց զինուորներէ կազմուած ուրիշ գօրազունդերու հետ: Բայց ուրիշ նակատներու վրայ եւս հայ զինուորներ գոյութիւն ունին եւ հիմա զուտ հայկական կիսարածիններ է որ պիտի կազմուին, հայ սպաներու հրամանատարութեան տուկ, եւ յոյս ունինք որ այսպէսով նուազազոյնը 150·000 հոգինց Հայկական Բանակ մը պիտի յաջողինք կազմել:

Թրքահայերը այդ բանակին մէջ չափուի մտնան, անոնք պիտի շարունակեն մաս կազմել այն կամաւորական զունդերուն, որոնք կը գործեն ուստահայկական բանակին կողէին: Ձեզ կրնամ վստահեցնել, որ այդ կամաւորական զունդերը խիստ օգտակար աշխատանք կատարած են եւ անոնց քաջազործութիւնները, Հայաստանի լեռներուն մէջ, ուստական բանակին հիացման արժանացած են: Թրքահայ պարզ արիեւստաորներ, քանի քանի առիբներու մէջ ամենափայլուն կերպով հրամանատարութիւնը վարած են հայկական կամաւորական մէծ խումբերու:

Նուազով ուրեմն հայկական բանակը ի վիճակի պիտի ըլլայ իր ռազմական ընդունակութիւնները ի յայտ թերելու հայկական նակատին վրայ: Անիկա այդպէսով ոչ միայն պիտի օգնէ մեր մէծ հայրենիքին՝ Ռուսաստանի, այլ նաև առիբը պիտի ունենայ լուծելու վրէժը՝ այն հարիւր հազարաւոր հայերուն, որոնց անմեղ արիւնը հոսւցաւ 1915ին Հայաստանի մէջ, նիւրատի երկայնիք եւ բոլոր այն նամբաներուն վրայ, որոնցմէտ անցան հայ տարագիրները խումբերով՝ առաջնորդուելու համար դէպի մահ, դէպի սուրիական անապատը:

Թուսական օգնութեամբ մենք արդէն սկսած ենք Հայաստանի վերաշինութեան: 300–400 հազար թրքահայեր յաջողած են ինքիններն ազատել եւ կովկաս ապաստանիլ: Մեր փրկած այդ փախտականները հիմա մաս առ մաս Հայաստան կը վերադառնան, վերականգնելու համար իրենց գիւղերը:

Վանի շրջանին մէջ բնդարձակ տարածութիւններ արդէն խսկ մշակուած են եւ այս ամսա այդ շրջանները նոյն բան արոտեղէն արտադրեցին . որքան պատերազմէն առաջ : Մեր բանակներուն առջեւ բուրժերը ամէն կողմէ խոյս տուած են : Շնորհի սպանուած հայերու Ամերիկա զունուող ազգականներուն՝ մենք ժառանգորդներ գտած ենք զրեք է ամէն մէկ լուսած օնախի համար : Մեր կոմիտէներուն միջցաւ մենք իմաց տուած ենք անոնց, քէ իրենց պարտականութիւնն է Հայրենիք վերադառնալ՝ օգնելու համար վերաշինութեան զործին : Մենք կը յուսանք որ մեր կենսունակ ցեղը, անհետացածներուն տեղը գրաւելով, ցոյց պիտի տայ որ ինք զնած է իր ապրելու իրաւունքը՝ այս պատերազմին ամենէն զարդարելի զոհողութեանց զնովը :

«ՅՈՒՆԱԲԵՐ», 16 Նոյեմբեր 1917

(ՆԱԽՕԹ .— Հարցազրոյցը ողէտք է արուած բԱՄ Ընկերվարական Մէջազգայնականի Համազուժարին առթիւ : Թէրթերու անունները կը պահպին) : Հ. Տ.

ԹՈՍՈՄԵՆ  
ՆԱՄԱԿՆԵՐ

«Դիմուն Հ. Ց. ԳԱՅՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» Ա. հատորէն առնուած են, ներկայ հատորի բը-  
ւագրումնի, թիւ 2էն թիւ 17 նամակները:

Նոյն երատարակուրեան Բ. հատորէն առնուած են հետեւալ նամակները,— թիւ  
18էն 29, թիւ 31էն 55, թիւ 57էն 60 և թիւ 62, 63:

Ս. Վրացեանի խմբագրած «Վ.Մ» հանդէսի Գ. տարուան 3րդ համարէն առնուած են  
թիւ 70էն 90 նամակները:

Թիւ 1, 30, 56, 61 և 65 նամակները, ցարդ ամտիպ, առնուած են Հ. Ց. Գ. Կեղ-  
րսական Արժիւէն: Մասամբ անոփ է նաև թիւ 64 նամակը:

Միւս նամակներու աղքիւրները յիշատակուած են:

Ս. Վրացեանի խմբագրութեամբ երատարակուած նամակներուն համար («Դիմուն»,  
«Վ.Մ» և «ՀԻՆ ԹԱԻՂԹԵՐ...») ամփոփով պահած ենք խմբագրական ծանօթագրութիւն-  
ները: Անհրաժեշտ նկատուած պարագային կարգ մը ծանօթագրութիւններ աւելցուած են մեր  
կողմէ (Հ. Ց.):

## 1) ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ (անտիպ)

Թոստոմի ձեռագրով գրուած առաջին նամակն է, որ կը գըտնի Հ. Յ. Թաշինկցութեան կեցրանական արխիվի թղթաժողովներուն մէջ: Ասորագրուած է՝ ԱՌՍԱՌՄ և ՑՈՒԱՆՆ (Դաւթեան) և ԱԼՄԱՆ (Շիման): Ձևնք զիտեր՝ ինչո՞ւ տեղ գտած չէ Դիմուն Հ. Յ. ԴԱՌԱՆԱԿՑՈՒԹԵԱՆ հատորին մէջ:

Գրուած է Ժընեվն: Անթուակիր է: Աւելի ուշ, մեզի անձանօթ ձեռք մը մակագրած է քառո 95-96: Սակայն նամակի բովանդակութիւնը ցոյց կու տայ, որ ան գրուած է 1894ի Սեպտեմբերի վերջը կամ Հոկտեմբերին: Բայց, Հ. Յ. անցրանիկ Մրացրի հրատարակութիւնը կամարտի ԴՐՈՇԱԿէ 1894 Սեպտեմբերի համարով, և ԴՐՈՇԱԿ իրեւ ամսաթերթ սկսած է կանոնաւորագու յոյը տեսնել 1894 Ցույիսին: Բավանդակութիւնն է նոյնպէս, որ ցոյց կու տայ թէ ԴՐՈՇԱԿի խմբագիրներու հաւաքականիք (թերեւ նաև՝ Վասպուրականիք) Հ. Յ. մարմիններուն:

Հ. Յ.

Թամիագին ընկերներ,

Պատախանում ենք ձեր նամակին եւ չգիտենք, թէ որտեղ, երբ կամ ինչ հանգամանքներում ձեզանից իւրաքանչիւրը ստանալու է մեր այս բարի կտորը...

Երկար ժամանակ է ձեզ ոչինչ չենք զրի: Խորկառոր է վերջապես վերջ տայ մեր այս անկանոն յարաքերութիւններին, որ բոլորովին պատահական կերպարանք ունին: Մենք էլ ի հարկէ մեղանակից ենք, — մենք խոստովանում ենք, — սակայն ձեր մեղքը աւելի ծանր է: Մեզ վիճակուած է միաժամանակ աւելի շատ տեղիքի ենու նամակագրութիւն պահպաննել, բայ թէ ձեզ մէկ էլ մենք հարցողին բան ամեն ժամանակ չենք ունենումք, բնիհակառակը, մենք ենք միշտ տեղեկութիւնների կարու: Բայց երեւ դուք պահպանէք մշտական ձեր նամակագրութիւնը, այս ժամանակ այս կամ այն արքի արքին կամայ ակամայ նամակագրութիւն կը համատառի: Նամակագրութիւնը դեռ ոչինչ, ահա 3-4 համարներ է դուրս եկել առանց որեւէ լուրիք [կամ] բդրակցութեան այդ կողմերից: Այս բանում դուք արդարանալ չէք կարող:

Մեր յարաքերութիւնը Տիֆլիսի(\*) ենու աւելի կանոնաւոր դարձնելու համար մենք մտադրուեցինք պարքերական նամակներ զբու շաբարը մի անգամ անոցատառ, երէ մինչ իսկ նիւր չիմի բոլորովին, բայց այս բանը ընդհանուց տփիիսցինների շնորհիւ:

Երէ կուզէք, ձեզ ենու էլ փոքրանք, ամիսը մի նամակ անպատճա գրենք: Այս ամսից յետոյ մէկն էլ կը ստանաք մեր կողմից:

Ինչ ասել կ'ուզէք, որ ձեր հաշուութեան լուրը սաստիկ լու (կամ ըստ Պետոյի՝ զեղցիկ) տպաւորութիւն բռնեց մեզ բոլորին վրայ:

Այժմ պէտք է շատ պարզ լինի ձեզ համար էլ, որ կենդանի գործի բացակայութիւ-

(\*) ԲԷՓԼիս, — Կ'ակնարկուէ Հ. Յ. Բիւրոյին (Արեւելէան Բիւրո):

Եթ որքան նշանաւոր դեր է խաղացել ձեր յարաբերութիւնների մէջ, որ դրա շնորհի այնպիսի տասներորդական խնդիրները, որպիսին նեն դպրոցական եւ այլ տնհանութան խոշիններ, որոնք անշուշնոր կը մռագունեն ուրիշ զելովիրաւմ. ձեր յարաբերութեամբ մէջ առաջնակարգ տեղ նեն բռնել:

Ապամայ շիշում եմ այն ժամանակը, երբ ես էլ ուս պի այդ նորքատը: Տէր Ասուածած, ինչի՞ր միայն չիմ կառաւուոմ այն ժամանակ, ի՞նչ բարեամեններ, ոսնձզու բինեններ, ինըրիզներ, խոռոշութիւններ... Դա մի պատճեր էք, որը մեր յեզտփոխութեան պատմութեան մէջ կը մնայ ընմեջու իրեւ մի ուս իւտ, իրեւ մի անչնչելի արատ: Միմիայն Պարսկաստանի նման մի երկրու կարող էին այնքան ներդրամիտ աշխայ նայել առաջարկութերից, ցանուն սուրբ զործի: Բայօթառակ' կառաւուած բոլոր խայտառակարիւնների վրայ: Եւ այդ բոլորի պատճուքը — նոյն զործի բացակայութիւնն էր:

Ցուսով նեմ, որ այդ երկու մեծ, ծանր փորձերից յանոյ խասաւուած կը լինենք՝ եւ տասնեաներու շենք բափուի անսունեց, ուր խասուի մի երկու մարդու զործ կայ:

Այս ի միջի այցոց: Այժմ կ'աշխատիմ մի նանի տեղեկութիւններ գրեւ մեր զործի մասին, որքան ի հարկէ այդ բոյլ նմ տալիս համարմանները: Մեր յարաբերութիւնը զեռ այնքան կանոնաւորուած չի, ու նամակազրութեան ձեւ չենք դեռ հասաւուել մեր մէջ, որով կարեի լիմի ամեն ինչ գրեւ:

Այսուղի, պատասխանուում, մեր զործը լոյ է զնում: Աւանողութիւնը մասնուու է մեզ աւելի եւ աւելի, բայց ընդհանրապէս ան շատ էլ գլուխ չի պատռուում: Աներիկա օրէցօր աւելանուու է մեր ընթերցանների եւ համակրողների թիւը, և արդէն մի երկու տեղից խոսացել են դրամական օճանակութիւն: Խոյնը և նուժանիայում ու նույզարիայում: Անելի միջիաբարական այն է, որ այդուղի բանութիւնների մէջ խորի նմ կազմուուր ինքնուրոյն կերպով, այդ խորին բանական են մեզ հետ և ցանկութիւն ունեն միանալու: Ապաւուում են միայն ծրագրեց (որն արդէն տպուուծ է համարում եւ այս երկու որերս լոյ է ու տեսնի:

Տանեկաստան այսուղից բաւական մեծ համակութեամբ եւ յաջողութեամբ ցրուում է: Այնուն աւելի լոյ է տարածուում, տան բէ նուսաստան, ուր համարեա բոլոր ուղարկուած համարները բռնուում են:

Ահա Յ ամիս է, թէրը կամոնմաւրապէս ամիսը մի անգամ լոյ է տեսնում: Ցուսով նեմ այդպէս էլ կը յարունակուի: Կամոնմաւր հրատարակութիւնը կարեի է պահուածած համարել, երէ միայն նիւթի պակասութիւն չիմին: Աշխատէք, ուրեմն, որքան կարեի է նիւթ շատ եւ շուտ ու ուղարկել: Երէ ձևանու մէկն ու մէկը հնարաւորութիւն աւմի. Քող ընդհանրութիւնը ևս անփոխ յօդուածներ գրի հարկային, հոդային, կեդեման, վաշխառուների զործունութիւններ... լոյ էին Շայափա, Տանեկալան բանտումք, Շնուգարիւրիւնք, «Տանեկալան դաստարան»...: Թէ չէ ընթերցանների զայիէն զնում է կարդալով միակերպ նկարագրութիւնները, թէ այսուեւ պահանցին, այնուն բալանեցին եւայլն...

Ես էլ վաղուց է տառարի եմ հեռանաւ այսուղից: բայց բէ այդ երբ կը յարողի եւ բէ ուր կը զնամ, զրա մասին շատ դժուար է մի որոշ բան ասել: շատ բան ինձանից չէ կախուած: Ամէն տասան ծրագիր ոչնչանուու է փոփի պակասութեան առաջ... Վաղոյէն հեռարկով մի գուար էինք պահանչել: բայց դեռ ոչինչ չկայ: Գետերուորդուու համարուած կար մի 500 ր.: Տայնենք նրա վրայ երէ երեկի իմացանք, որ այն էլ կուկումեանի խմբի վրայ են զործածել տփիսեցների կարգադրութեամբ: Գուցէ ինեն ինեն ստիպուած լինեն փոփի համար նուսան զնալու:

Բայց օրքան էլ դժուար լինի դրամական հարցը (որքան էլ փող լինի, դարձեալ փոփի պակասութիւն միշտ զգայու ենք. մեր դրութիւնը միշտ այսպէս է լինենու. երէ ուզում ենք զործ տեսնել), այնուամենայնիւ զործերի դրութիւնը միջիրաբական է: Չեր խումբը արդէն անսունեց է. Աշուար և նողով անցկացած կը լինի արդէն, պատրաստուու է անցնել Մարտիրոսը... Սա նշան է, որ ինչ էլ կովկաս զրաւ է զախիս իր բժիշա զորութիւններ: որ շափազանց ոգեւորութիւնց յանոյ ուրիշ բեկացիան վերը է ստիպուած լինեն փոփի համար նուսան զնալու:

Աերցացնուու եմ համարմար, աւելի մաքրամասն տեղեկութիւն (Պոլսոյ, Տրավիզոնի մասին օրինակ) գրեւ անյարմար ենք զտնում:

Ամեամբեր սպասում ենք տեղիկուրիստների ճեզամից: Թուով ենք, դեռ այս նամակը տեղ չհասած, ձեզանից մի որեւէ տեղիկուրիստ կ'իմանամք...

Մի ժամ խօս է:

Կուկունեանի պատմութիւնը շուտով լոյս կը տեսմի դատապարտեալների պատկերների և ետ միասին: Դա մեզ վրայ շատ է քանզ նստում, բայց ոչինչ. հասարակուրիստը զոհ կը լիմի շատ: Պատկերների մէջ հիմանի տիպեր շատ կամ. չգիտենք, տպաւած արդեօք յայռո դուրս կը զայ, բէ ոչ: Մի երկու օրից յետոյ լոյս է տեսնելու եւ ծրագիրը առանձին գրեոյնկան, ինչպէս արդէն զրել եմ մի ժիշ վերեւ: Փոփոխութիւններ շատ եր հարկաւոր մատցնել, շատ վատ է դասաւորուած, իմբազրուած, բայց նոյնը բողին (միայն մի երկու տեղ փոխեցին) արուունցինը շշարուանելու եւ ժողովի վճոի դէմ շգնալու համար: Մնաք բարեւու: Համբուրում ենք ձեզ բոլորի...

Զեր ՌՈՍՈՒՄ և ՅՈՆԱՆ և ԱՄՄՈՆ

Բարեւներ այժմ ձեզ անձանօք անձնապէս, բայց սիրող ընկերներից:

## 2) «ԴՐՈՉԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

1895, Հաւանարար Մայիսի վերջը

Սիրելին,

Նստած եմ Մէկնարսիու սեմեակում եւ զրում եմ այս նամակը: Պատմեմ, բէ ինչպէս պատահեց այս:

Ցիրիլի հասայ առաւուեան ժամը Տին: Ճամապարհը շատ անհանգիստ էր. վազաններն այնպէս էին օրուաւ, որ հանգիստ նստել անկարելի էր, ուր մնաց ընել. կարծես փորդունով զամակի լինելի: Առաւուեան դէմ մի ժիշ այս կապէլ էր, երբ ին զարդեցրեց մի հարրած եւրոպացի, առաջարկելով մի ժիշ բանք (մասուրկ) հացէլ: Աւուում էի բարկանալ, բայց սա ենայացաւած էր առաջարկուած անձեցէ անելով: Նրա կարծիքով ճամապարհորդի համար դա մի անքածեց բան է, մանաւանդ նրա համար, ում հունց տանուէ է: Ցիրիլի հասայ բէ չէ, ընկայ բաղացէ ման զայու: Այցելեցի մի ժամի զինախանութներ, հարց ու փոքր արի զինագործարանի մասին: Զինագործարանը գտնուում է բերնում, իսկ հրացաններ, որքան ուզում են, այստեղ էլ կարող են զնել, միայն օտարականների համար պէտք է բայլուուրին խնդրել Փարբիկայի վարչուրինից: Այդ բանը կատարում է զինավունաց: Գինը մինչեւոյն է — 110 ֆր. հոց. 1 թշովով. 55 ֆր.: Անմի եւ շվեյցարիկան ին սիստեմի հրացաններ (այնքան էլ ինձ դոր չեկան), աւելի ածան, 2 հատը 100 ֆր., կարելի է եւ աւելի ածան: Վեցըրը նրանցից 2 կատարուուց մէկը ուղարկեցի Պարսկաստան Ստեփաննեն, միւրը՝ ձեզ Տրապազմի համար: Աւեմն, բարեհանցեցէ այս տեղիկուրիստները կատալոգը հետ միասին այնուղի ուղարկել:

Երէ իմանայի որ զրծարանը թերթումն է, կը մնայի անպատճառ այթուել: Երէ բան է, հարկաւոր լիմի ձեզ զիմելու, ահա հասցէ՞ն Fabrique Fédérale à Berne. Մոռացայ զրել, որ շվեյց. ինչ սիստեմը, որը փոխուած է մի 4-5 տարի առաջ, կոչուում է Vetterli: Այս բանը զրէմ եւ Թաւրիզ: Թաւրիզ ուղարկել նաև Vetterli երացանի պատկերը ու նկարագրութիւնը: Գրավանառատերուամ կարելի է զնելու: Դա կազմաւած է զինագործարանի համար: Վերցին սիստեմները մի խանի ամիս առաջ առաջ առաջ եւ ուղարկեցի Արխանականին: Այդ ես այստեղ էլ կ'անէի, միայն այստեղ զերմաններէն է, իսկ Թաւրիզ գրամսերէն է հարկաւոր ուղարկել:

Ցայտոյ, բայլերս ուղացեցի դէմի բաղացի զանազան կողմերը, ուշադրութեամբ տընտեղով արձանները, շինուրիստները, կարդալով զանազան վերմագիրները: Հիմա ես զի-

տեմ. թէ որտեղ է ապրել Ցվինգիի օճախամբ. Ար. Գետրոս և կեղծեցու առաջին ժահաման, Մայիս թէ Մէկի բուրգոմիստրները եւայլէ... Այս բայրը պատերի վրայ կարելի է կարդալ:

Ման զայռվ Ժիշ-Ժիշ հասայ համայստամին. միշ-երկու անգամ անցայ մօտից աչ ու ձախ. տնտղելով ուսանողներին: Այդտեղ ես պատահեցի Գիմնարուրդին, որի հետ միահին զնացինք ման զայռ: Այցելեցինք. ի մէջի այլոց. ուսւաց զրադարան-ընթերցարամբ: Դա մերի հետ համեմտած փառաւոր կարելի է համարել: Պատերին կախուած են ամէն տեսակ պատակերներ. որոնք ապացոյ են ցիւրիլիցիների բազմազան (այսպէս խօսէ կայ): Ծխով(1) նաշակի. Մարքսի. Լասարի. Լավրովի. Եկվէնոյի... պատիերների հետ կախուած է եւ մի սրբի պատկեր համասայի հազուատուն: այսուհետեւ զայռ են սլավոնական տիպեր, չերունցոցիների կեանեցի պատկերներ եւ ուկեզօն տակերով տապարած ու նկարած Ալեքսանդր Ա-ի մի գրամոտաւ(2): Ընթերցարանը լին էր ընթերցաններավ: Անհասրած, ծա անհամեմատ լաւ դրույթան մէջ է. մի խորմ է կազմուել յատկապէս զրքերի բիլը աւելացնելու համար (երանի՝ ժքնեւում մի խումբ կազմուեր գտն ենու զրքերը պահանջնու համար):

Այդ օրերի թոստոմք հոգեկան պատեկը գլուխիկ կերպով բնորոշում է հետեւելու զէպքը։ Նախո-Ալեքսանդրիայից նա ձանապարհ է զբում մի ծերունի ժանդարմի ուղեկցութեամբ։ Ժանդարմը պէտք է նրան հասցնէր Ցղեա եւ զիւզապետից վկայական ստանար։

Հինդ-յեց օր տեսող ճանապարհորդութեան ընթացքին Ռուսումն ու ժանդարմբ բաւական մտերթանում են : Ռուսումը շատ լաւ տպաւորութիւն է թողնում ծերունու վրայ :

Երբ զնացքը մօտենում է Ազստաֆա կայարանին, Ռուսումը դիմում է ժանդարմբին, թէ —

— Գիտե՞ս, քեսի, հիմա մենք պէտք է թողնենք երկաթուղին եւ 4-5 օր էլ փոստային սայլակով ճամբորգենք : Խնչո՞ւ ի զուր տեղը դու էլ յոզնութիւն կրես : Անելի լաւ չէ՝ ինձ թողնես մենակ, իսկ դու դնաս քո դորձին :

— Ո՞նց թէ, ապչում է ծերունին, հազար որ փախչե՞ս — զիտե՞ս, ինձ ինչ կ'անեն :

— Զեմ փախչի, քեսի, պատասխանում է Ռուսումը, ազնիւ խօսք եմ տալիս, որ չեմ փախչի :

— Հազար որ խոստանաս ու խոստում շկատարե՞ս . . . ինձ պաշտօնից կը դրկեն ու կը պատժեն, բնանիքս էլ կը մնայ սոված :

Աւ պահանջում է, որ Ռուսումը երդուի :

— Ես երգուելու սովորութիւն չունեմ, պատասխանում է Ռուսումը, իմ երգումը ազնիւ խօսքս է : Ես կ'երթամ եւ կը ներկայանամ դիւզի ոստիկանութեան :

Ժանդարմը հաւատում է : Բաժանուում են բարեկամարար : Ժանդարմը գնում է Թիֆլիս, Ռուսումը՝ Ցինա, ուր ստանում է պահանջուած վկայականը եւ ուղարկում ծերունի ժանդարմբին :

Ցզնայում Ռուսումը երկար չմնաց : Ժարեց Արբահամեան անունով մի անցաղիք եւ մեկնեց Թիֆլիս, ուր նորից մտաւ յեղափոխական խմբակների մէջ : Քրիստափորը իր յուշերում (\*) պատմում է, որ 1887ին Ռուսումի հետ Թիֆլիսում փորձել են հիմնել զաղանի տպարան, բայց յաջողութիւն չեն ունեցել «նիւթական միջոցների պահանութեան պատճառով» : Միջոցներ հարկաւոր էին ոչ թէ տառեր զնելու համար — տառեր մենք ժառանգել էինք «Ազատութեան Աւետարեր»ի հիմնադիրներից, — այլ որպէսզի պահենք բնակարանը եւ մի ընկերող, որին տեղաւորել էինք այդ բնակարանում աշխատանքի համար : Այդ ամենքը մենք [Քրիստափորը եւ Ռուսումը — Ս. Վ.] փորձեցինք պահել անձնական միջոցներով, բայց մեր միջոցները բաւական չեղան : մենք ապրում էինք մասնաւոր, կոսէկանոց դասերով» :

Այդ ժամանակ արգէն Թիֆլիսի հայ երիտասարդութեան որոշ չրջաններ, որոնք մինչեւ այդ կանգնած էին համապետական, ուսուական տեսակէտի վրայ, սկսել էին ձեւակերպուել իրեւ ազգային, հայկական երեւյթ : Ռուսումն էլ, Քրիստափորի եւ ուրիշների հետ, ազգային-յեղափոխական կազմակերպութեան զաղափարի պաշտպաններից եւ իրականացնողներից էր :

Նոյն օրերին, Թիֆլիսում, Ռուսումը ծանօթացաւ եւ օր Լիզա Մելիք-Շահնազարեանի՝ իր ապագայ ամուսնու հետ :

Թիֆլիսից Ռուսումը անցաւ Բագու, Արբահամեան անունով յաջողու-

(\*) Հայրենիք ամսագիր, 1924 թ. № 10, էջ 61:

թեամբ աւարտական քննութիւն տուեց ոչալական գործոցում և 1889ին զնաց Մոսկուա ու մտաւ Գևորգվակօ-Ռազումովիկայա զիւզառնաևսական ճեմարանը, որը առաջաւոր ու ազատական գործոցի հաշակն էր վայելում: Ենզափոխական եւ ըմբոստ ուսանողութիւն ունէր: Հակակառավարական ցոյցերի ու կազմակերպութեան խնդրում նա, Մոսկուայի համայստրանի ուսանողութեան հետ միասին, միշտ ընթանում էր առաջին շարքերում: Ուսանողութիւնը եւ պրոֆեսորութեան որոշ մասը տողորուած էին ժողովրդական ու յեղափոխական զաղափարներով: Ճեմարանի հանրակացարանը, ուր ապրում էին հարիւրաւոր ուսանողներ, միշտ լիքն էր եռուզեռով — անվերջ եռկոյթներ, ժողովներ եւ ամէն տեսակ հաւաքոյթներ:

Խոստոմը [Ալբահամեան] այստեղ էլ մտաւ յեղափոխական խմբակների մէջ եւ զարձաւ պայքարող յեղափոխութեան զործոն անդամներից մէկը: 1890 թուին, ուսանողական մի ցոյցի ժամանակ, ճերքակալու եց ու նորից աքսորուեց Կովկաս: Դրանով էլ փաստորէն փակւում էր Խոստոմի ուսանողական ըրջանը:

Նոյն 1890ի ամառը, Թիֆլիսում գումարուեց իւժնի-Նոմիքականների նշանաւոր ժողովը. Դաշնակցութեան առաջին զործիչները զանազան կողմէն-րից հաւաքուեցին «Խմբնիա-Նոմիքա» հիւրանոցում: Եւ այդ հաւաքոյթը զարձաւ Դաշնակցութեան հմանադիր ժողովը, որի անունից մի կոչ էլ ուղղուեց ուսանողներին՝ հրաւիրելով նրանց մեկնել Թիվրքիա յեղափոխական զործունէութեան մասնակցելու համար: Ժողովից յետոյ, Ս. Զաւարեանը գնաց Մոսկուա՝ ուսանողութիւնը կազմակերպելու եւ կամաւոր զործիչներ արձանագրելու նպատակով:

Այս ժողովն ու կոչը զուգաղիպեց Խոստոմի աքսորին: Թիֆլիս հասնելուն պէս, նա ուղարկվելիս նետուեց յեղափոխական զործերի մէջ եւ անմիշապէս, ուսուցչի պաշտոնով, մեկնեց Կարին(\*) :

Էրզրումից հեռացաւ 1891 թուին եւ մինչև 1893 թ. աշխատում էր Թիֆլիսում, ուր նախապատրաստում էր Հ. Յ. Դաշնակցութեան առաջին Ընդհանուր ժողովը: Լուրջ փորձ էր կատարուած. շատ զործիչներ — Ս. Զագարեան, Յ. Խոսութեան, Յ. Արզութեան, Լ. Սարգսեան, Խոստոմ եւ ուրիշներ այցելել էին Թիվրքահայոստանի զանազան վայրերը՝ Վան, Էրզրում, Տիրապիզոն, ոմանք մնացել էին բաւական երկար, ուսումնասիրել Երկրի վիճակն ու յեղափոխական աշխատանքի պայմանները: Կար Կուկունեան խմբի արշաւանքի փորձը: Աշքի առջեւ էր Հնչակեան կուսակցութեան կազմակերպութեան օրինակը: Միւս կողմէից, Կովկասում էլ կատարուած էր խոչոր աշխատանք, պարզուած էին մի շարք տեսական ու կազմակերպական սկզբունքներ, պատրաստուած էր կուսակցութեան ծրագրի նախագիծը: 1890 և 91 թուականներին հրատարակուած էր երկու համար «Դրոշակ Խոստոմի Թիֆլիսը»: 1891ին, Թիֆլիսում, հրատարակուել էին «Դրոշակ»ի առաջին եւ երկրորդ համարները, իսկ 1892ին, Խոստոմի ուսումնակայում՝ «Դրոշակ»ի Յորդ եւ Գրդ հա-

(\*) Այս շրջանը Խոստոմի կեամբի ամենաամյայտ շրջանն է: Երախտապարտ կը լինէինք տեղիսկ մարդկանց, երկ տային մեզ լուսաբնութիւններ:

ժարները : Բնդ հանուր Ժողովը ահազին գործ ունէր կատարելիք :

Թոստոմը այս բոլոր աշխատանքներին անմեջական ու գործօն ժանակացութիւնն ունէր : Մասնաւորապէս «Դրօշակ»ի հրատարակութիւնը նրա գործն էր . ինքն էր փարում տպագրական մասը, ինքը նիւթ էր հայիմայթում, շարում ու ապում էր : Պատահում էր, որ սատիկանութիւնը առնում էր տպարանի հառը, Թոստոմը տեղից տեղ էր փախցնում տառերն ու զործիքները : Եւ հենց այդ չըջանում երեւան բերեց կազմակերպչական և զաղացի փոխական աշխատանքի արտակարգ տաղանդ, որ նրան շդաւաճանեց մինչ չեւ մահ :

Հ. Յ. Դ. առաջին Բնդ հանուր Ժողովին, 1892 թուին, Թոստոմը մըտցրեց իր անհատական ոպին նորաստեղծ կուսակցութեան ծրագրի և կազմակերպութեան ձեւի մէջ : Մրազը ի տնտեսական մասը պատկանում է Թոստոմի զբէին և ամբողջապէս արգիւնք է նրա զրական, մի քիչ մարքսիստական մատադրութեան : Այդ զիծը նա յայտնաբերեց և յետազային, զրած յօդուածներում և գործանիւթեան ասպարէզում :

Բնդ հանուր Ժողովից յետոյ Թոստոմը թիֆլիսում երկար շմնաց : 1893ի սկզբին նա արգէն արտասահմանում է, ուր մէկնում է Բիւրոյի որոշումով «Դրօշակ»ի հրատարակութիւնը կազմակերպելու համար : Թիֆլիսից հեռանալուց առաջ նա նշանում է օր . Լիզու Մելիք-Շահնազարեանի հետ, բայց որովհետեւ վերջինիս ծնողները հակառակ էին, ամուսնութիւնը յետաձւում է և տեղի է ունենում հինգ տարի յետոյ :

Առաջ Թոստոմը անցնում է Թիվումանիս, ուր լոյս է հանում «Դրօշակ»ի 4րդ համարը : Թումանիսի պայմանները, սակայն, հնարաւորութիւն չէին տալիս մի յեղափոխական կուսակցութեան պաշտօնաթերթի կանոնաւոր հրատարակութեան, և Թոստոմը տեղափոխուում է Փընեւ — այն ժամանակուայ Եւրոպայի ամենապատ վայրը, ուր համախմբուած էին պատական յեղափոխականները :

Հինգ երրորդ համարից սկսած «Դրօշակ»ը սկսում է կանոնաւոր կերպով լոյս տեսնել Փընեւում : Թոստոմը նրա եւ խմբագիրն էր, եւ զրաչարը, եւ փոստին յանձնողը — ամէն ինչ : Գրաշարանոցն ու խմբագրատունը նրա ուսունողական համեստ սենեակն էր : Ելեկեղ յաճախում էր համալսարան, ուր լուսում էր անտեսական և ընկերային գիտութիւնների դասախոսութիւններ, ազատ ժամերին կամ զիւշերը խմբագրում, շարում, սրբագրում ու փոստին էր յանձնում «Դրօշակ»ը : Այդ չըջանի «Դրօշակ»ների գլխաւոր նիւթերն էին՝ թղթակցութիւնները Երկրից և Ալյու ու բեն» (ծրագրի բացատրութիւն) խիստ հետաքրքրական յօդուածաշարքը : «Այդ ու բեն»ի առաջին մասը զրել են Քրիստուափորն ու Զաւարեանը միասին, Թիֆլիսում : Թոստոմը ամսէ ամիս ստանում և թեթեւ սրբագրելուց յետոյ ապում էր «Դրօշակ»ում : Շարունակութիւնը («Դրօշակ»ի 1894 թուի համարներում) զրել է Թոստոմը ինքը : Այդտեղ նա երեւան է բերում ու տեղ քննադատի և սրամիտ բանավիճույթի կարուղութիւնը : Առանձնապէս սատիրկ հարուածներ է հացնում հնչակեան կուսակցութեան, որի մէջ նա տեսնում էր «Հայեացքների քառս, խառնաշփոթութիւն եւ ինքնուրոյնութեան կատարեալ բացակայութիւն» : Հեղնում էր

Նրա մարքսիզմը, պրոլետարացման ոկզբունքը, դավագարական հակառակիւններն ու հայ իրականութեան անձանօթութիւնը:

ԺԵՆԵՎ, ապահով, չէր զոհացնում Ռոստոմին: Նա կենդանի զործի մարդ էր, և «Դրօշակ»ի հրատարակութիւնն ու զատախօսութիւնները նրան բաւարարութիւն չէին տալիս: Նրա սրտովը չէր եւ ժրմելի հայկական միջավայրը՝ ուսանողական մանր-մունք հաշիներով, նախանձով և ինտրիցիներով: «Աս ինդպատճեմ եմ այսուղ, ող չկայ», զրում էր նա իր նամակներից մէկում: Եւ հենց որ հնարաւոր եղաւ, «Դրօշակ»ը յանձնեց Յովան Դաւթեանին եւ ինքը, պարսկական անցազրով, մէկնեց Թիֆլիս, ուր 1855ի ամառը, մասնակցեց կոստակական մի կարեւոր խորհրդակցութեան եւ ապա անցաւ Կարքին կազմակերպական նպատակներով:

Քիչ յետոյ, Հայկական Նահանգները հասաւ հռչակաւոր Շաքիր փաշան: Ռոստոմը «Դրօշակ»ում (1895 թ. Նոյեմբեր) նկարագրում է այդ հրէշի զալուստը և հայ ժաղարփրի ցուցադրած թշնամական վերաբերումը: Շաքիր փաշայի զալուց յետոյ տեղի տնեցաւ Կարնոյ կոտորածը. Ռոստոմը 500 աշակերտների եւ ուսուցիչների հետ կոտորածի ժամերի անց է կացնում գրաւրոցում: «Դրօշակ»ի 1895 թ. Դեկտ. 15 համարում նա նկարագրել է այդ գէպերը:

Կոտորածից յետոյ, թիւրք կառավարութիւնը ուզում է ձերբակալել Ռոստոմին, բայց պարսից հիւպատոսի միջամտութեամբ, մի զաւադի և լինքի բարթուղիմէոսի վանքը, ապա Սամաստ ու Թուրիզ՝ բոլոր վայրերում մասնակցելով կազմակերպական գործերին ու խորհրդակցութիւններին, որոնց մէջ քննում էին Երկրի զործունէութեան վերաբերուող հարցեր: Պարսկաստանից «Դրօշակ»ին ուղարկում է Հետաքրքրական թղթակցութիւնների քրդական շարժումների եւ թիւրք-պարսկական սահմանագլխի գործերի մասին:

Պարսկաստանից Ռոստոմը վերադարձաւ Կովկաս եւ նուիրուեց կուսակցական-կազմակերպական աշխատանքներին: Նորից եղաւ Թաւրիզում գէնքի արհեստանոցի գործերով:

1898 թ. Ապրիլին, Թիֆլիսում, զոմարուեց Հ. Յ. Դանակցութեան երկրորդ Ընդհանուր ժողովը, որը հիմնական քննութեան ննթարկեց նախկին տարիների յեղափոխական գործունէութիւնը, կազմակերպական ձևեր եւ ապագայ գործունէութեան եղանակը: Յատկապէս լուրջ քննութեան տարրելայ եղան Բանկ Օթոմանի զրաւման եւ Խանասորի արշաւանքի արդինքները: Այդ երկու գործերի զեկափարներն էլ ներկայ էին ժողովում:

Այստեղ զրուեց եւ թիւրքայի ուրիշ յեղափոխական տարրերի և, մասնաւորապէս, մակեդոնացիների հետ համերաշխելու խնդիրը, որի ամենաչերմ պաշտպաններից էր Ռոստոմը: Առհասարակ, նա խոչըր նշանակութիւն էր տալիս օտար տարրերի հետ զործակցելու զաղագիրին եւ համականքով էր արտայատում թիւրք եւ քիւրդ ժողովուրդների արթնացման ու յեղափոխականացման մասին:

Երկրորդ Ընդհանուր ժողովը «ջանալ կապեր հաստատել մա-

կեղոնացիներու, յոյներու և ուրիշներու հետ, և Ռոստոմը ոգևորութեամբ փարեց այդ ծրագրի իրակողութեան:

1898 թ. Սեպտեմբերին Ռոստոմը ամուսնացաւ օք. Լիզայի հետ: Ինչպէս յիշեցինք, օրիսրգի ծնողները հակառակ էին այդ ամուսնութեան, այդ պատճառով հարսանիքը տեղի ունեցաւ Յ. Քաջազնունու տանը: Պասկից յետոյ անմիջապէս, նոյն զիշերն իսկ, սատիկանական հետապնդումից ազատուելու համար, անցաւ արտասահման: Ժընեւում նա խորհրդակցութիւններ ունեցաւ ընկերների հետ: Այստեղ էին Քրիստոփորը, Զաւարեանը, Արմէն Գարոն, Յովաննը և որիշներ:

1900ին Բուլղարիա անցաւ տիկ. Լիզան՝ դպրոց հիմնելու ծրագրով: Ենուանով հասաւ և Ռոստոմը՝ նպատակ ունենալով զլուխ բերել հայ-մակեդոնական գործակցութիւն: Տիկին Լիզան Ֆիլիպէում հիմնեց մի մասնաւոր մանկապարտէզ, որը 1901ից վերածուեց դպրոցի: Մի ամբողջ տարի Ռոստոմը գասաւանդեց այդ գալրոցում՝ ստեղծելով տաք մթնոլորտ իր չուրջը: Նրան յաջողուեց իրականացնել և հայ-մակեդոնական համերաշխութեան ծրագիրը: 1902ին Ռոստոմը ընտանիքով վերադարձաւ Կովկաս և 1903ին Փարտուղարի պաշտօն էր վարում Թիֆլիսի Հայ. Գիւղ. Ընկերութեան մէջ: Նոյն տարուայ վերջը ձերբակալուեց և աքսորուեց Օղեսա, որտեղից փախաւ արտասահման:

1904 թուին, Սոփիայում, տեղի ունեցաւ Հ. Յ. Կրրորդ Ընդհանուր ժողովը, որի օրակարգի մէջ կային մի շարք ծանրակշիռ հարցեր — Կիլիկիայի և Սամոյ շարժումներ, մարտական խմբերի արշաւանքներ գէպի Երկիր, ցուցական գործունէութիւն, սուլթանի մահվորձ եւայլն: Ռոստոմը գէմ էր սուլթանի մահվորձի ձեռնարկին և, առհասարակ, ցուցական գործունէութեան, գէմ էր և Քրիստովորի մասնակցութեան: Քրիստովորն ինքն էլ թերեւ սրտով չէր զնում այդ զործին, բայց հոգեբանական պայմաններն անհրաժեշտ էին զարձնում նրա անմիջական զեկավարութիւնը:

Ընդհանուր ժողովում բազմակողմանի քննութեան առարկայ եղան և կովկասահայոց գործերը: Ենկեցեցական գոյքերի պաշտպանութեան յաջորդող փոթորկայոյզ շրջանն էր: «Դաշնակցութիւնն էր վարչէլ ինքնապաշտպանութեան պայքարի, թէեւ հրապարակի վրայ երեւում էր անկուսակցական մի մարմին: Ամէն կողմից պահանջում էին, որ Դաշնակցութիւնը պաշտօնապէս իր ձեռքը առնէ շարժման զեկավարութիւնը: Ընդհանուր ժողովը ընդունաց այդ տրամադրութեան: Ընդունուած բանաձեւում ասում էր: «Դաշնակցութիւնը իր վրայ առնելով կովկասահայ տարրի ինքնապաշտպանութեան գործը՝ որոշեց յանձնել այդ՝ կովկասի Պատասխանառու Մարմին, որ պահելով իր «Ծնննապաշտպանութեան Կեղը. Կոմիտէ» անունը՝ պիտի շարունակէ գործել «Դաշնակցութիւն» պաշտօնական անուան տակ»:

Հետաքրքրական է յաջորդ կէտը. «Ժողովը կովկասի վերաբերմամբ ընդունեց բերանացի և գրաւոր պրոպագանատի, տեսորի, ժողովրդական ցոյցերու և զինուած զիմադրութեան տակտիկը՝ մնալով պաշտպանողական հողի վրայ»:

Աւելին դեռ. Ընդհանուր ժողովը ընդունեց և բանուորական շարժման

մասնակցելու անհրաժեշտութիւնը. «Դաշնակցական բանուորական խմբերը, այս զործարաններու սահմաններու մէջ, ուր անոնք կ'աշխատին, կը մասնակցին բոլոր բանուորական զործագուներուն և շարժումներուն, երբ անոնք կապուած են բանուորներու բնդհանուր վիճակին հետ այդ զործագուներու մէջ, իսկ ինչ կը վերարերի զործարանական կեանքին զուրա ցոյցերուն, որնք կրնան առաջարկուիլ տրիչ կասակցութիւններու կողմէն, բայց որոնց առիթներու ու նպատակները կրնան առարեր ըլլալ, իւրաքանչիւր դէպքի համար մասնակցելու կամ չմասնակցելու խնդիրը կը վճռէ Պատասխանատու Մարմինը»:

Խոստոմը այս քաղաքականութեան համոզուած պաշտպաններից էր: Ընդհանուր ժողովից յետոյ, իրեւ նորընտիք Արևմտեան Բիրոյի անդամ, նա անցաւ Ժընե: 1905 թ. Փետրուար-Մարտին, Ժընեում գումարուեց Դաշնակցութեան խորհուրդը, որին մասնակցեց և Խոստոմը:

Խորհրդից գրեթէ անմիջապէս յետոյ, Մարտ 20ին, տեղի ունեցաւ Քրիստափորի եղերական մահը: Խոստոմը շտապեց Բուլղարիա: Քրիստափորի յուղարկաւորութիւնից յետոյ, նա կազմակերպեց զինուորական զպրոցի բացումը և ուժեղացրեց հայ-մակեդոնական բարեկամական փոխյարդերութիւնները:

1906ին Խոստոմն այլէւս կովկասում է, որը բռնկուած էր հայ-թրքական ընդհարումների հրգեհով: Ինքնապաշտպանութեան զործը ամբողջապէս ամփոփուած էր Դաշնակցութեան ձեռքը: Անդրկովկասը բաժանուած էր շըբջանների, որոնց գլխին դրաւած էին պատասխանառու վարիչներ: Արմէն Գարոն՝ Թիֆլիսում, Դումանը՝ Երեւանում, Վարդանը՝ Ղարաբաղում եւայլն: Խոստոմը ամէն տեղ էր: Մերթ Ղարաբաղում, մեր Երեւանում, մերթ Շիրակում ու Կարսում: Հրդում, կազմակերպում ու քաջալերում էր, սովորեցնում էր ուժանակ բանեցնել, մակերունական ուումբեր զործածել: Մի քանի մնաց Շուշում շրջանում: Մոռացել էր Եւ՛ ընտանիք, Եւ՛ իր անձը — ապրում էր միայն կազմակերպութեան մտահոգութիւններով:

Հայ-թրքական պայքարից Դաշնակցութիւնը դուրս եկաւ յաղթական: Սակայն, կոփեների հետեւանքով և ու ուսական յեղափոխութեան ազդեցութեան տակ կուսակցութեան ներսը ծայր տուին ուժեղ զժգոհութիւններ — մի կողմից զինուորական շարժումները, միւս կողմից անջատողական հոսանքը, հայ բուրժուական խաւերի յարձակումները, ուսահայ-թիւրքահայ դատի շուրջ ստեղծուած թանձր մթնոլորաք: Եւ երբ 1907 թուի Փետրուարի վերջերին, Վիեննայում, բացուեց 4րդ Ընդհանուր ժողովը, մեր հակառակորդները շարաբինդրութեամբ ձեռքերն էին շփում՝ անհամբեր սպասելով Դաշնակցութեան քայքայման: Սակայն, այս անդամ էլ յուսախար եղան նըրանք. Դաշնակցութիւնը, հաստարմատ կաղնու պէս, մնաց անյոզդողդ: Խոստոմը մէկն էր, եթէ ոչ զլիաւորը նրանցից, որոնք ապահովեցին կուսակցութեան միութիւնն ու կենսունակութիւնը: Նրա Երկայնամտութեան, լայնախուութեան, համոզելու կարողութեան և անսահման հմայքին ենք պարտական, որ անհաշտելի մտայնութիւններն ու խառնուածքները կարելի եղաւ ոչ միայն պահել միեւնոյն ընդհանուր յարկի տակ, այլև միաձոււել, օրգանա-

պէս միացնել մէկ կազմակերպութեան մէջ :

Վիշնայում, տունց չափազանցութեան, հրաշք տեղի ունեցաւ : Հաւաքուել էին մի կողմից թ. ձեւարեանի պէս անհաջող հակառակորդներ բնկերգարութեան՝ բնկերգարական ծրագրին դէմ քոչ տալու մօռական հրահանգով, միւ կողմից՝ Աւ. Շահնիաթունեանի նման ժողեռանդ ընկերվարականներ՝ նորնայէս շզիջելու կարող համարականութիւնունիք : Դժուար էր հաշուցնել ջուրը կրակի հետ. Խոստամին և ընկերներին յաջողուեց ո'չ միայն հաշուցնել, այլև ընկերգարութիւնը մէրժուդ վառամեանի ու Զարդարեանի պէս ընկերներին դարձնել ընկերգարական : Վիշնայից Դաշնակցութիւնը զուրս եկաւ նոր ծրագրով, աւելի միաժայլ, աւելի կուռ ու զործօն :

Գլխաւորապէս Խոստոմի պնդումի վրայ, Ընդհանուր Փողովը բնդունեց ևս պարսկական զործունիքաւեան անհրաժեշտութիւնը : Բանաձեւը ասում էր. «Նկատելով որ պարսկական ներկայ շարժումը կարող է զառնալ ժողովրդական արթինացման բնոյթ ունեցող հասարակական խոչըր երեւոյթ՝ թէ՝ Պարսկաստանի, թէ՝ Արևելյանի համար ևս գտնելով զրա տարածուելու ու լայնանալը ցանկալի թէ՝ համամարդկային, թէ՝ հայկական տեսակէտից» .

Ընդհանուր Փողովը յանձնարարում է Պարսկաստանի զահնակցական մարմիններին ևս անհատներին՝ բոլոր միջոցներով նպաստել այդ շարժման զարգացման՝ մտցնելով պարսկական արթինացման մէջ այն ազատազրական, ուամկավարական ևս աշխատաւորական ողին, որը բխում է Դաշնակցութեան ծրագրից» :

Խոստոմին անձնապէս էլ ոգեւորում էր պարսկական յեղափոխութիւնը : Նա անվերապահ կերպով համոզուած էր, որ Դաշնակցութիւնը մէծ զերունի կատարելիք նրա մէջ, և ինքն էլ ձգտում էր անցնել Պարսկաստան՝ Դաշնակցութեան մասնակցութիւնը անմիջապէս կազմակերպելու ևս վարելու համար :

Խոստոմը ջերմ պաշտպանն էր ևս Դաշնակցութեան ու թիւրք ընդդիմադիրների համագործակցութեան :

Վիշնայից նա մեկնեց Բուլղարիա, ուր զրադուեց զինուորական զրպրոցի զործերով, տեսակցութիւններ ունեցաւ մակեդոնական պետերի հետ, ապա անցաւ Կովկաս :

1908թ. Մարտ 12-25ին տեղի ունեցան Հ. Յ. Խորհրդի հերթական նիստերը, որոնց մասնակցեց ևս Խոստոմը, Կովկասեան Խայլոնական ժողովի կողմից : Խորհրդի զրազման զինուոր հարցերն էին ուսութիւրքական պատերազմի հնարաւորութիւնները ևս Դաշնակցութեան զիրքը, հայ-թիւրքական ևս մակեդոնական համերաշխութիւնը, կազմակերպական խնդիրները, ծրագրի ամբողջացումը ևւային : Ի միջի այլոց, այստեղ Խոստոմին յանձնը-ւեց կուսակցութեան ծրագրի թիւրքիայի բաժնի մշակումը :

Խորհրդի նիստերից յետոյ, Խոստոմը անցաւ Թաւրիկ : Հետպհնէտէ սկսեցին այսուղ հաւաքուել կուսակցական-մարտական ուժերը՝ Դումանը, Քեռին, Խեչոն ևս ուրիշներ : Ստեղծուեց հայ-պարսկական ընդհանուր ոյժ. պարսից յեղափոխականները Սաթթար խնի գլխաւորութեամբ զործում էին ծեռք-ձեռքի դաշնակցական խմբերի հետ : Խոստոմը շարժման ողին էր, զա-

դափարական զեկավաբն ու ներշնչողը :

Պարսկական շարժումները ծանօթ են «Իրօշակ»ի բնիքեցողներին<sup>(\*)</sup> : Այդ շարժումներից մի գեղեցիկ զրուազ էլ նկարագրել է ինքը՝ Ռոստոմը<sup>(\*\*)</sup> :

Թաւրիզի անկումից յետոյ, Ռոստոմը Դամանի և որիշ բնկերների հետ անցաւ Վան, այնակայից՝ Մուշ, Կարին և արտասահման : 1909 թուի ամառը ճամանակացեց Հ. Յ. Դ. հինգերորդ Բնդհանուր Փողովին, Վառնայում, որից յետոյ, իրեւ Բիրոյի անդամ, զրագում էր կուսակցական գործերով Պոլում և արտասահմանում :

1910 թուին, Ե. Թոփչեանի սպանութիւնից յետոյ, Ռոստոմը հրամիրուեց Կարին՝ ազգային զպրցների բնդհանուր տեսչի սպաշտուով և այնաեղ մնաց մինչև 1914 թ. Սեպտեմբեր ամիսը, Ներկայացներով միաժամանակ և Դաշնակցութեան Հայաստանի Բիրոն : Ամառները միայն, կարձ ժամանակի, անցնում էր Պայտի կամ արտասահման — 1911 թ. Օգոստոս 17-Մելպոներ 17 ճամանակացեց Հ. Յ. Դ. վեցերորդ Բնդհանուր Փողովին — իսկ մընացած ժամանակը անց էր կացնում Կարինում կամ ձամբորդում Հայկական գաւառներում :

Ռոստոմի Հարամահեայ գործունէութիւնը Բարձր Հայքում, բացի Ենդհանուր կուսակցական հետեւանքներից, ահազին նշանակութիւն ունեցաւ Կարին ազգային-ճակութային կենաքի զարգացման, երիտասարդութեան կազմակերպութեան ու զամատիարակութեան և Հ. Յ. Դաշնակցութեան ուժի ևս հեղինակութեան աճման տեսակետից : Նրան պաշտում էր Կարին երիտասարդութիւնը : Ազգային-ազգայական խաւի կողմից բնդհունում էր պատկառանքով : Նրան հաջուի էին առնում անդամ կառավարական ըրջաններում : Մանասարեան դպրոց, Հոփիսիմեան, Արծնեան, թաղային վարժարաններ, տուանորդարան, Երիտասարդական Միութիւն, «Յառաջ», դասախոսութիւններ, զրական ու երաժշտական հանդիսներ, բնկերական հաւաքոյթներ — Ռոստոմը ամէն տեղ էր և ամէն ինչ :

Զարմանալի էր այդ մարդը : Առաջին ծանօթութիւնից, բացի համակելիք արտաքինից ու զրաւիչ ժպիտից, առանձին տպաւորութիւն չէր թողնում : Համեստ, մի քիչ թափթփած հազուում՝ սև փողկապը կողքի վրայ, տարատը միշտ արորուած, կօշիկը փոշու : Պարզ շարժուձեւ : Անպահոյն խօսքերը : Հուետոր չէր — զժուարութեամբ, կմկմալով էր խօսք զտնում, եւ խօսքն էլ անսեթեւեթ էր, սովորական : Բանախօսելիս աւելի շատ ձեռքերն էին զործում, քան լեզուն : Գրում էր նոյնպէս մեծ զժուարութեամբ, քիթն ու ճակատը տրորելով, զըշակորը կամ եղունզը կրծելով : Մէկ զրում էր, տասը լինում...

Բայց բաւական էր հետը մի քիչ ապրել, մօտենալ նրա հոգուն, որ ամենքի առջեւ բացւում էր այնպէս քնքչօրէն, բաւական էր խօսել հետը մտերմական ըրջանակում, տեսնել զործի մէջ, որպէսզի համոզուէիր նրա մտքի,

(\*) Տե՛ս «Իրօշակ», 1927 թ.:

(\*\*) Տե՛ս «Հայրենիք» բացակի թիւ ԱՇ 2, 1914 թ.:

Հոգու եւ կամքի արտակարգ մեծութեան։ Նա զիտէր զրաւել ու հմայել առանց ճիզի։ Նրա չնչի տակ ամենամեղկ կամքերն խսկ կենդանանում էին, վհատուածները սիրա էին առնում։ Ինչպէս արևը առազայիններ, թոստումն իր շուրջը տարածում էր Լուսնը, կենսունակութիւն, աշխոյժ եւ կեանքի ու զործի սէր։ Մեծի հետ մեծ էր, փոքրի հետ՝ փոքր եւ ամենքի հետ՝ հաւասար ընկեր։ Ինչպէս իր տան զուռը, այնպէս և սիրաց՝ բաց էր ամենքի առնել։ Եւ ո՞վ ասես չէր մտնում այսակդ...

Մանաւանդ քաղցր էր մտերիմների շրջանում, սրտակից զրոյցի ժամանակ։ Սիրում էր զրականութիւնը, արուեստը, զիտութիւնը։ Բայց ամենից աւելի սիրում էր երգիծական-հերսուական զրականութիւնը։ ՍանչօՊանսա, Պանտագրիէլ, Տարտարէն, Տարա Բուլլան նրա մտերիմ հերուներն էին, որոնց մասին կարող էր ժամերով խօսել, ամբողջ չջեր անզիր արտասանել։ Նրանց զործերով ու խօսքերով հրձւում էր մանկան պէս։

Հաճէլի էր տեսնել երբեմն, երբ զուրաը մոլեգին կատազութեամբ ոռնում էր Բարձր Հայքի հրէշաւոր բորանը, անչուք և աղօտ լուսաւորուած տենեակում, թէյի սեղանի շուրջ, թոստոմին զրուցելիս երբեմն Մշկ Կարին այցելող քժ։ Յ. Զաւրեանի հետ։ Ի՞նչ հակապիր բնաւորութիւններ և ինչպիսի սէր ու զուրգուրանք միմեանց հանդէպ։ Զաւրեանը՝ ջերմ հաւատացող քրիստոնեայ, խան ու աւետարանը միշտ մօտը, ոզեւորում էր արուեստի քնքոյց օրինակներով։ Էր անբաժան ընկերն էր Լոնզֆելյի «Հայագատա»ն, որը, աւետարանից յետոյ, նրա ամենից զնահատած զրուածքն էր։ Թոստոմը կրօնական հաւատ չունէր։ սիրում էր հերոսուական տիպեր, երգիծական չջեր, սուր հեղնանք։ Ժամերով կտորներ էին արտասանում կամ կարդում իրենց հեղինակներից և չին կշտանում։

Թոստոմի հեղնանքը հանրածանօթ էր։ Այնպէս էր ձեռք առնում, որ յաճախ շշմում էիր։ լուրջ է ասում այս մարդը, թէ կատակ անում։ Եւ լուրջն ու կատակը, շատ անզամ, այնպէս էին խառնում իրար։ Հեղնական արտայայտութեամբ, մի սուր խօսքով, մի զուրգնալի արարքով նա հասնում էր այնպիսի նպատակի, որի համար, ուրիշը երկար ճառեր պիտի արտասանէր և հանգին ճիզ թափէր։

Թոստոմի հեղնանքը եւ թոստոմի ժպիտը, եւ խորունկ նայուածքը յօնքերի տակից — կարելի՞ է մոռանալ երբեւից։

Յաճախ, Դաշնակցութեան հիմնադիր Երբորդութեան մասին ասում էն, թէ՝ Քրիստոափորը մարմնացումն էր խելքի, Սիմոնը՝ խզճ և թոստոմը՝ զործի։ Բատ իս բոլորովին ճիշդ չէ այս համեմատութիւնը։ Եթէ Քրիստոափորին և Սիմոնին կարելի է բնորոշել միակողմանի յատկանիշներով, թոստոմը համազրութիւնն է նրանց բոլոր յատկութիւնների — Եւ խելք, եւ խիզճ, Եւ զործ։ Թոստոմը ամբողջական անհատ էր — մարդ։ Համեստի «Մարդ» էր նա, Հորացիօ» խօսքը նրա մասին է ասուած — մարդ՝ մարդկային բոլոր յատկութիւններով։ Եւ նրանք ովքեր բախտ են ունեցել ճանաչելու նրան, վայելելու նրա հոգու բարիքները, նման բնորոշումը չեն համարի չափազանցութիւն։

Կարնում թոստոմը տարուած էր իր աշխատանքով և ոզեւորուած

Երկրի ժողովրդի ցոյց տուած յառաջդիմութեամբ : 1913 թ . Օգոստոս 11ին նա գրում էր . «Ժողովրդի վիճակը ընդհանրապէս լաւ է : Տնտեսականը աւելի քարձրացել է : Ապահովութիւն կայ այն վայրերում , որ ժողովրդի մօտ կան ինքնապաշտպանութեան միջոցներ : Մնունդը , մաքրութիւնը աչքի է ընկնում : Բաւական է ասել , որ ոչինների թիւը զգալապէս պակասել է : Ոչիւը մեր երկրում , իմ կարծիքով , պիտի նկատել ամենալաւ չափանիշը տնտեսութեան բարուքման» :

Այս տողերը գրուած են զէպի Ս . Կարապետ կատարած ուխտագնացութեան ժամանակ : Երկու տարի իրար յետեւից , 1912 և 13ին , բարձր զասարանի աշակերանների եւ ուսուցչեների հետ մոստոմը ճամրորդութիւն էր կատարում զէպի Տարօն : Ուզում էր վերականգնել Նաւասարդեան տօները եւ Ս . Կարապետն ու Աշտիշատը նորից զարձնել ազգային ուխտատեղի : Նոյն նամակում նա գրում էր . «Մի ժողովի մէջ , ուր ներկայ էին զանազան զաւառներից ընկերներ , որոշուեց ամէն տարի Վարզավառի օրը համախմբուել Ս . Կարապետում : Պիտի աշխատենք վերականգնել Նաւասարդւան օրերը խաղերով , մրցումներով : Եթէ ուրիշ տեղեր էլ մարմնամարզական խմբեր կազմուեն եւ ներկայանան հանգչսին , տօնը առանձին փայլ կը ստանայ :

Մտազըրութիւն կայ նաեւ այդ օրերը կազմել ուսուցչական համադումարներ՝ ընդհանուր մի ուղղութիւն տալու համար դպրոցական գործին :

Բացի այդ , եթէ հարաւոր լինի , պիտի կազմենք ընկերական հաւաքոյթներ՝ իրարու լաւ հասկանալու համար :

Յոյն ունենք առաջիկայ տարի ունենալ մեծ բազմութիւն կովկասից եւ ուրիշ վայրերից : Գուցէ Պոլսից էլ ուղենան զալ ...» :

Պոլսի մասին մոստոմը հեղինակ ունէր միայն :

Մոստոմի ճիգն էր Հայաստանը զարձնել համազգային ուշադրութեան կենտրոն : Նա ուզում էր Հ . Յ . Խոխեներոդ Ընդհանուր ֆողովն էլ գումարել Ս . Կարապետում . «Տեղի պիտի ունենայ առաջին Ընդհանուր ֆողովը Երկրի մէջ , զրում էր նոյն նամակում : Կաշխատենք , որ դա լինի պատճական մի ժողով : Միայն թէ պատզամարտուները ժամանակին հասնէին » : Սակայն , կառավարութիւնը արդեկ եղաւ , և ժողովը զումարուեց Պոլսում (\*) :

Պոլսի ընկերները պահանջում էին , որ մոստոմը թողնէ կարինը և տեղափոխուի Պոլսիս : Մոստոմը երկար ընդդիմութիւնից յետոյ , համաձայնուել էր՝ պայման դնելով , որ իր տեղը գնայ Զաւարեանը , բայց վերջինիս մահից յետոյ , վճռական կերպով մերժեց հեռանալ Երկրից :

Կուսակցական պատճառներից զատ կար եւ մի ուրիշ հանդամանք , որ պահում էր նրան Կարնում : Պոլսի աղանձը , տեսնելով Դաշնակցութեան աղդեցութեան ծաւալուելը Կարնում , որոշել էին Սանասարեան վարժարանը փոխադրել Սերաստիա՝ յուսալով , որ դրանով աշակերտութիւնը հեռու կը պահեն Դաշնակցութեան «Թոյնից» : Կարնի երիտասարդութիւնը ըմբռոստացաւ այդ քայլի դէմ եւ որոշեց բանալ նոր Սանասարեան վարժարան : Մոս-

(\*) Հ . Յ . Խոխեներոդ Ընդհանուր ֆողովը տեղի է ունեցած Կարնին : Հ . Յ .

տոմը այդ շարժման ոգին էր և Նոր Սանասարեանի ղեկավարը : Անսահման եռանդ, զոհողութիւն ու բարյական հեղինակութիւն էր հարկաւոր զործը գլուխ բերելու համար, և Խոստոմին յաջողուեց կազմակերպել օրինակելի մի կրթական հիմնարկութիւն : Մինչեւ Ամերիկա հասաւ նրա շունչը, կարնի Հայրենակցական Միութիւնը նպաստ ուղարկեց, «Հայրենիք»ը պատկերացարդ բացականի թիւ հրատարակեց (№ 2) Նոր Սանասարեանի օգտին :

1914 թուականը եղաւ Խոստոմի անչերից մէկի իրավորձման տարին . Հ. Յ. Դաշնակցութեան հերթական, ամերիկաց, Պաղպահութ գումարուեց Կարնում : Ամէն կողմից՝ Կովկասից, Պոլսից, Բաղկաններից, Եգիպտոսից, Ամերիկայից, Բուրբիայի և Հայաստանի զանազան կողմերից սկսեցին հաւաքուել պատզամանուրներ, որոնք ընդունում էին խանդավառ հանդիսաւորութեամբ : Պէտք էր տեսնել Խոստոմի ուրախութիւնը...

Աւազ՝, այդ ուրախութիւնը երկար շահեց : Ընդհանուր գումարութեամած՝ պայթեց համաշխարհային պատերազմը : Զուլումի ամպեր էին կուտակում եւ հայ ժողովրդի զիլին : Խոստոմի զգում էր իր արտակարգ բնազգով : Թշնամին կրնկակութ հետեւում էր նրան : Եւ միայն հրաշքով աղասուեց ձերբակալութիւնից ու Սևաստոնմերի սկզբին, Տրապիզոնի վրայով, անցաւ արտասահման : Եւրոպայում զերազոյն ճիզ էր թափում՝ փրկելու համար հայ ժողովրդը մահուան վտանգից :

1915ին, Սկանդինավան թերակղզու վրայով, անցաւ Խուսաստան եւ Կովկաս :

Կամաւորական շարժման յուղումնալից օրերն էին : Խոստոմը սխալ էր համարում այդ շարժումը, բայց քանի որ սկսուած էր, պէտք էր միջից պատուի զուրա զալ : Եւ նա փարեց այդ զործին : Ազգային Բիլոր, Կարգադրիչ Մարմին, ռազմաճակատ, կամաւորական խմբեր — ամէն տեղ էր : Այցելեց աղասագրուած Վասպուրականը : Երբ զրաւուց Կարբինը, շտագեց զնալ այնտեղ՝ փրկելու համար ինչ որ մնացել էր : Կարողացաւ պատել Սանասարեան դպրոցի գոյքի որոշ մասը, զրբեր, նկարներ, ձեռագրեր... կիսուեր եւ անհայ Կարբինը ընչիչ տպաւորութիւն էր արել նրա վրայ, որից երկար չէր կարողանում պատառել :

Ցանախ այցելում էր Թեուու և Անդրանիկի խմբերը : Թեուուն սիրում էր եղրօր պէս : Անդրանիկին աշխատում էր յետ կեցնել սխալ քայլերից, եւ Խոստոմը միակ մարզն էր, որի առջև Անդրանիկը իրեն պահում էր նորահարսի պէս :

Կամաւորական զնդերի լուծումը եւ ռուսական քաղաքականութեան փոփոխութիւնը դէպի հայերը Խոստոմի տառն այն էլ զառնացած սիրոր լինենում էին սուր վշտով : Նրա լայն ճակատը աւելի եւս ծածկուում էր կընճիռներով : Փափտը, հանաժները պակասում էին : Զարհուրելի տանջանք էր ապրում, առանց ցոյց տալու ուրիշներին, թէ ինքը տառապում է : Արտաքին աշխարհի համար աշխատում էր մնալ նոյնը, բայց ներսը կիցիչ կրակը լուփում էր հոգին : Կրակը աշխատում էր հանգցնել անվերջ ճամբորդութիւնների եւ աշխատանքի մէջ . նրա երկաթէ մարմինը միայն կարող էր զիմանալ այդ օրերի տանջանքներին, նրա վատնած եռանդին...

Բայց ահա վրայ հասաւ ուստական յեղափոխութիւնը. 1917 թ. Փետր. 28ին խորակուեց ցարական միահեծանութիւնը: Ամէն տեղ՝ աննկարպրելի խանդավառութիւն ու ցնծութիւն: Անսահման ուրախութիւն եւ հայկական շրջաններում: Տիսու է միայն մոստոմը. նրա զարմանալի բնազդը զգում է այն, ինչ որ չեն զգում սովորական մարդիկ. նոր ազտոներ, նոր փորձութիւններ հայ ժողովրդի գլուխի:

Սակայն, հարկաւոր է աշխատել, օգնել յեղափոխութեան ընծայած պատեհութիւններից՝ Հայաստանի եւ հայ ժողովրդի իրաւունքներն ապահովելու համար: Եւ մոստոմը զործում է անդադար. կուսակցական խորհրդակցութիւններ ու ժողովներ, հրապարակային հաւաքոյթներ, ազգային եւ ընդհանուր յեղափոխական կազմակերպութիւնների նիստեր, ճամբրողութիւններ զաւաները, թիւրքահայ նուաճուած վայրերը, ուսզմաճակատը: Նախագահում է Հ. Յ. Դ. Կովկասեան առաջին ազատ ժողովին, զիստուրում է Մահմադ ժաշնակցական թեկնածուների ցանկը, ուղղութիւն է տալիս կուսակցական պրոպագանաթին: Այսօր էլ զեռ կեռդանի են թայ. ժողովի բացման ճառում արտասահմած նրա խօսքերը.

«Եկեր կուսակցութիւնն իր վրայ ունի այնպիսի պարտականութիւններ, որոնցից ազատ են ուրիշ կուսակցութիւնները: Մենք ունենք ազգովին վըտանդուելու հոգուը, և չենք կարող անտես առնել այդ հանգամանքը: Ամէն անզամ, որ Դաշնակցութիւնը ստիպուած է եղել զուրս զալ ազդովին զործելու, նրան մեղադրել են, թէ նա բութուական է, կղերական: Իսկ այսօր, երբ ընդհանուր հայրենիքի ժամանուելու վախր կայ, մեղ մեղադրողները իրենք են զուրս եկել ազգովին զործելու: Ես կը կամենայի, որ Դաշնակցութիւնը ապագային էլ նոյնը լինէր եւ պէտք եղած ժամանակ պաշտպանէր աղդի շահը, ինչպէս այդ անում են այսօր անզիւցի և Փրանսացի սոցիալիստները»(\*):

Երբ Գետրողադի Բանուորական Խորհրդի եւ ընկերվարական կուսակցութիւնների կողմից հրապարակ դրուեց, հաշտութեան պայմանները մշակելու համար, ընկերվարական միջազգային համազումար հրաւիրելու հարցը, 1917 թուի աշնանը, մոստոմը շտապեց Պետրողադ: Այսող նա, տեղական ընկերների եւ զործիչների աջակցութեամբ, դրեց հայկական պահանջները եւ ընդունել առուց, որ մուսաստանի հաշտութեան պայմաններից մէկն էլ լինելու է հայկական հարցի յուծումը: Ապա անցաւ Շուենդիա՝ Սթոկհոլմի համազումարում Հ. Յ. Դաշնակցութիւնը ներկայացնելու առաքելութեամբ: Այսող մտերիմ կապէր հաստատեց միջազգային ընկերվարութեան պարագլուխներից շատերի հետ, նրանց եւս բնդունել առուց հայկական պահանջները, ընդարձակ զեկուցում ներկայացրեց համազումարի կազմակերպիչ մարմնին եւ բոլոր շրջաններում, ուր պէտք էր, անցկացրեց Հայաստանի պահանջը:

Սթոկհոլմի համազումարը, ինչպէս յայտնի է, ճախողեց: Երբ մոս-

(\*) «Կերոշակ», 1926 թ., № 8-10, էլ 236:

տոմը վերադարձաւ Ռուսաստան, արդէն ամէն ինչ երար էր խառնուած . աւելի եւ աւելի տարածւում էր քաղաքացիական երկրաշինջ կուրք : Հազորդակցութիւնը Կովկասի հետ կարուած էր : Ի՞նչ էր կատարւում թիֆլիսում, ի՞նչ կար Երեւանում, ի՞նչ վիճակի մէջ էր հայկական ռազմաճակատը — Հակասական ու վհատեցնող լուրեր էին հասնում : Պետրովագում, Առակուայում, Ռոստով-Նևախիճևանում, Վլադիկավազում հաւաքուել էին արեւմտեան ձակատից հեռացած բազմաթիւ հայ սպաներ ու զինուորներ, որոնք ուզում էին անցնել՝ ոմանք իրենց տները, ուրիշներ հայկական զօրամասերը մտնելու համար : Ռոստովը նրանց ուզում էր դէպի Բազու եւ ինչն էլ չտապու Բագու ա'յն հաւատով, որ այստեղ կարելի կը լինի համախիճը թել մի զօրաւոր բռունցք ու ճանապարհը բանալով՝ անցնել Ղարաբաղ ու Երեւան եւ յետոյ՝ ուղղաձակատ :

Ռոստովը մասնակցեց եւ Բագուի աղատամարտին, ամենատազնապալի ըըջանում : Այստեղ էլ նրա անձնական հմայքը չատ բարձր էր, ո՛չ միայն ընկերների, այլև հակառակորդների աչքին . Ստ. Շահումեանը, որ մի ժամանակ միահեծան տէրն էր Բագուի, ակնածանքով էր վերաբերում նրան եւ յաճախ հետեւում էր նրա խորհուրդներին : Բագուի դէպի բարձր մասնակիցներից չատերն են ազատ եւ կարող են, պարտաւոր են զրի առնել Ռոստովի գործունէութիւնը եւ կատարած գերը Բագուում :

Պայքարի ողբերգական վախճանից յետոյ, Ռոստովը եղաւ վերջին հեռացողը Բագուից : Հազարաւոր զաղթականների ու պարտուած մարտիկների հետ զնում էր Պարսկաստան՝ քամելու համար զանութեան վերջին բաժակը : Եւ այստեղ էլ նա հաւատարիմ մնաց իր բնաւորութեան, անմիջապէս յծուեց զաղթականների օգնութեան կազմակերպութեան գործին, յարաբերութեան մէջ մտաւ պարսից իշխանութիւնների եւ անզլիական ներկայացուցիչների հետ, գեկուցումներ եւ հրաշնակներ ու զարկեց արտասահման : Թըւում է թէ աւելի մուայլ, յուսահաւական վիճակ գծուար է երեւակայիլ, բայց Ռոստովը այս պայմաններում էլ պահնեց իր մտքի պայծառութիւնը, հոգու հաւասարակշուութիւնը եւ հօգը կամքն ու կորուլը : Քանի՛ քանիները ընկնուեցին, չղիմացան կեանքի ահաւոր հարուածներին . Ռոստովը միշտ մնաց առաջնորդի բարձր զիքերում՝ հաւատաւոր եւ անյոզգոզ :

Հենց որ թիւրք-զերմանական ոյժը խորտակուեց եւ ճանապարհները զարձան անցանելի, Ռոստովը շտապեց Կովկաս : Նրան քաշում էր Հայաստանը՝ իր կախարդական ուժով . ի՞նչ էր կատարւում այստեղ : Հայաստանի Հանրապետութիւն էր ստեղծուել — ի՞նչ էր այդ հանրապետութիւնը . ի՞նչ ձեւ էին ստացել հայ ազատադրութեան առաջիրանների տենչերը : Անկախ Հայաստան՝ — Ռոստովը չտապում էր՝ կարուով եւ անձկանք . . .

Թիֆլիսում նրան սպասում էր մի նոր, սարսափելի հարուած : Հազիւ ազատագրուած՝ Վրաստանն ու Հայաստանը պատերազմի էին բռնուել : Հոսում էր երկու զրկեց ու եղբայրական ժողովուրդների արիւնը, այն ժամանակ, երբ Թիֆլիսում եւ Երեւանում իշխանութեան զլուխ կանգնած էին ընկերվարականները : Տրէշաւոր ոճիր էր տիզի ունեցածը : Ռոստովն իր աչքերով տեսնում էր, թէ ինչպէս վրացի սատիկանները հայերին խումբ-խումբ

աքսոր էին ուղարկում, թէ ինչպէս փողոցում չուրջկայներ էին կատարուում հայորսութեան համար, թէ ինչպէս հայը Վրաստանի մայրաքաղաքում յայտարարուել էր օրէնքից դուրս, ծաղրի և հայածանքի առարկայ: Նա տեսել էր թիւրքական բարեիրն ու կարգերը, նոյնը և աւելին — այժմ տեսնում էր Թիֆլիսում, բնկերի վարական կառավարութեան նախագահ, իբ անձնական բարեկամ ժորդանքայի հրամանով...

Դժուար է ասել, թէ ի՞նչ էր կատարուում Ռուսական ներսը: Նրա հոդին, որ միշտ բաց էր ամենքի առջև, այդ օրերին փակուել էր ամսոր: Նա յայտնապէս տառապում էր: Չւմ կարծում, թէ իր ամրոցի փոթորկայոյդ կեանքում Ռուսումը այդքան զառն ապրումներ տնեցած լինէր: Պժդանքով զիմում էր իր երկուայ բնկերո՞ց ժորդանիային՝ խնդրելու համար, որ վերջ տրուի Հայկական հայածանքներին: Դիմում էր ամէն կողմ և ամենքին:

Յունուարի սկզբին վերջ գտաւ պատերազմը: Թիֆլիս էր Հասել Հանրապետութեան Փարփիդի պատուիրակութիւնը: Ակսուեցին մի շարք խորհրդակցութիւններ, որոնց մասնակցում էր և Ռուսումը:

Խոնաւ ու ցուրտ ձմեռ էր: Ռուսական ման էր զայխա առանց վերարկուի, ծակ կօշիկներով: Ճանապարհին մրսել էր, և այժմ տաքութիւն ունէր: Կարծում էր՝ մարտրիս է: Ժողովներից յետոյ, ուշ գիշերով, ոտքով էր վերադառնում տուն՝ ամէն անգամ կտրելով մի քանի կիլոմետր տարածութիւն: Մի գիշեր էլ, ուշ, նոյնպէս ոտքով, վերապարձաւ Ահարոննեանի մօտի ժողովից ու մտաւ անկողին: Ու այլեւս ոտքի չերաւ:

Բժշկական քննութիւնը պարզեց, որ յարակուած է բծաւոր տիֆոս: Քիչ յետոյ տիֆը վերածուեց թոքերի բորբոքման: Նոյն ժամանակ ևս միեւնոյն հիւանդութեամբ պառկած էր Արամը Երեւանում:

Հիւանդութիւնը Երկար չաեւց: 1919 թ. Յունուար 18ի գիշերը Ռուսումը այլեւս չկար: Մեծ սիրտը, որ յոզնել չգիտէր բնաւ, կանգ առաւ ընդմիշտ:

Եւ ի՞նչ անողոք ճակատագիր: Ամրոցի կեանքը Ռուսումը ապրել էր Հայաստանով, Հայաստանի զաղափարով և մեռաւ անկախ Հայաստանի դըրանը, առանց տեսնելու իրականութիւն դարձած Երազը...

Եւ ո՞վ գիտէ, գուցէ մի խորհուրդ կար այդ մահուան մէջ. Քրիստոփորի աչքերն էլ չտեսան Հայաստանի անկախութիւնը, Սիմոնինն էլ: Զէ՞ որ իսրայէլի առաջնորդներն էլ, որ իրենց ժողովուրդը ազատեցին եղիստական գերութիւնից, չտեսան Աւետիսաց Երկիրը...

«ԻՐՈՇԱԿ», թիւ 1-2, Յունուար-Փետրուար 1920

ՌՈՍՏՈՄԻ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

1887 թուին Ռոստոմը ուսանող էր Նոր-Ալեքսանդրիայի բարձրագոյն գիւղատնտեսական ճեմարանում, Վարչաւայի մօտ:

Ալեքսանդր Բ. կայսեր սպանութիւնից յևսոյ, 1881 թուականից սկզբան Ծովասառանում տիրում էր ուժեղ ուշակցիս: Ռուս յեղափոխական ամենամեծ կազմակերպութիւնը՝ «Նարոդնայա Վոլեա»ն սոսկալի հարուածների էր Ենթարկուել եւ համարեա բոլորովին ջախճախուած էր. մնացել էին հատու կտոր անհատներ:

Նկատելով, որ բարձրագոյն դպրոցների ուսանողութիւնն է գլխաւորապէս երեւում յեղափոխական տապարիզում, կառավարութիւնը հաստատու վճռական կերպով այդ դպրոցները իր խիստ հսկողութեան եւ հակակըռի տակ էր զնուում: Որպէսողի ուսանողները զիւրութեամբ զառուեն հասարակութեան միւս խաւերից, նա մտցրեց համալսարաններում եւ միւս բարձրագոյն դպրոցներում յատուկ համազեստներ, փայլուն կոճակներով, զեղեցիկ ուսանոցներով, կազմակերպեց շատ ուժեղ տեսչութիւն՝ իր ստորաբաժններով ամէն մի Փակիւլոչի ու մասնաճիզզի համար եւ ամէն մի դասարանի համար «ցեատել» կոչուած հսկիչ «լրտես»ով. պետելը պաշտօն ունէր արձանագրելու գասահօսութեան ներկաների եւ բացակաների անունները եւ թէ ի՞նչ խօսակցութիւններ կամ երևոյթներ տեղի կ'ունենային զասահօսութիւններից դուրս, կամ ընդմիջումներին, մանաւանդ երբ զասահօսը կասկածւում էր ընդդիմազիրաների կողմնակցութեան մէջ:

1887 թուին Մոսկուայի համալսարանում էր խստութիւններով մեծ հոչակ էր ստացել տեսուչ բրդզալովը: Եւ ահա համալսարանի տարեզարձի տօնակատարութեան օրը, խուռն բազմութեան եւ, մանաւանդ, բարձրասատիճան պաշտօնէութեան առաջ ուսանող Մինեաւուկին ապտակեց այդ բրդզալովին: Մինեաւուկին աքսորուեց Սիրիի, բայց նրա ապտակը արթեացրեց հասրակութիւնը. Ռուսաստանի համարեա բոլոր համալսարաններում եւ բարձրագոյն դպրոցներում ցոյցեր կատարուեցին, բրդզալովը պաշտօնանկ եղաւ եւ փոխարինեց Դորրովը, որ շատ սիրուած էր ուսանողների կողմից, թէեւ կառավարական ռեժիմը մնաց նոյնը:

1887 թուին Ռոստոմն էլ մասնակցում է այդ ցոյցերին, ձերբակալում, արտաքաւում է Նոր-Ալեքսանդրիայի ճեմարանից եւ աքսորում կովկաս: Հազիւ մի տարի անցած, Աբրահամեան անունով, նա յաջող քննութիւն է տալիս Մոսկուայի մօտ զանուուղ Պետրովսկայա-Ռազումովսկայա բարձրագոյն գիւղատնտեսական ճեմարանը եւ ընդունուում իրեւ ուսանող:

1890ի գարնանը Մոսկուայի ուսանողական կեանքը նորից է ալեկոնդւում: Պետրովսկայա ճեմարանում էլ կառավարութիւնը մտցրել էր խիստ օ-

բէնքներ ու հսկողութիւն եւ այժմ ուղում էր հակակշոի տակ զնել նաեւ ճեմարանի «կաղենկա» կոչուած ուսանողական հանրակացարանը, ուր ուսունացների կենանքն անցնում էր շատ ազատ եւ ուրախ։ Նոր կառուցուած եւ վերջին յարձարութիւններով օժտուած էրիք յարկանի տուն էր այդ, 200 սենեակներով, ուր ամսական 7-10 բուրյիս կարելի էր ունենալ կոկիկ, մաքոր սենեակ, թէպէտ անգամոյն կահաւորուած, բայց ելեկտրական լուսաւորութեամբ, մշտական տաք ու պատ ջրով եւ կենտրոնական վառելիքով։ Տան մէջ կար բաւականին ընդարձակ ընդունելութեան սրահ դաշնամուրով։ Երիտասարդ կենանքն եռում էր այնտեղ։ Հանրակացարանում ծնունդ էին առնում յանդուզն ծրագիրներ ու բոլողներ այն ժամանակուայ տիրապետող քաղաքական ոչակցիայի այս կամ այն արտայայտութեան դէմ։

1890 թուի Մարտ ամսին, ճեմարանի տեսչութիւնը որոշեց արգելել հանրակացարանում հաւաքոյթներ եւ երեկոյթներ սարքելը՝ պատրուակ բրոնելով, թէ դրանք խանգարում են ուսանողների աշխատանքներին ու դրազումներին, եւ կարգադրեց նախ եւ առաջ ընդունելութեան սրահից հեռացընել գաշնամուրը։ Բայց այդ բանը նրան չչափողուեց. ուսանողները ընդդիմացան, ցոյցեր կազմակերպեցին։ Տեսչութիւնը հեռախօսով հրաւիրեց ոստիկաններ։ Ջերբակարուեցին 150-200 ուսանողներ եւ բանտարկուեցին Մոսկուայի «Բնուտիրկի» հոչակաւոր բանուում։

Հետեւեալ օրը, Մարտ 6ին, Մոսկուայի համալսարանում տեղի պիտի ունենային համակրական ցոյցեր, այգում եւ նրա մօտի փողոցներում։ Լայիշում եմ. մենք, թշկական Փակիւլտէի առաջին լսարանի ուսանողներու ընդիտութեան դասախոսութիւն ունէնք։ Դասախոսում էր պրոֆ. Սաոլետովը, մի լաւ եւ շատ պահանջկու դասախոս։ Ամփիթատրոնի ընդարձակ սրահը լեցուն էր ուսանողներով։ Ճիշդ ժամը 2ին, մերի նստարաններից լրաւեց բարձրաձայն հրաւէր. «Ժամանակ է հաւաքոյթի երթուու»։ Բոլոր ուսանողները մէկ մարդու պէս սկսեցին դուրս գալ։ Պրոֆեսորը ծամածուութիւն արաւ եւ ինքն էլ դուրս գնաց։

Բակում ուրիշ լսարանների եւ Փակիւլտէնների բազմաթիւ ուսանողներն արդէն հաւաքուել էին եւ ազմուկ ու ճառախօսութիւններ անում։ Մէնք շարժուեցինք դէպի փողոցը, որը շրջապատուած էր բազաթիւ ժանդարմենով, ճիշտոր ու հետեւակ սոստիկաններով, որոնք երկու կողմից սեղմում էին մեր շարքերը։ Այսպէս, 1000ից աւելի ուսանողներ առաջնորդուեցին «Մանեմ» կոչուած ճիկերի մարզարանի հսկայ սրահը եւ դիշերը փոխազրուեցին «Բուտիրկի» բանար, ուր տեղաւորուեցին մեծ մեծ սենեակներում։ Մէնք այդ սենեակները մկրտեցինք «առողիտորիաններ» (լսարան)՝ № 1, № 2 եւային։ Շուտով մեզ համակրող հասարակութիւնից ստացանք մեծ բանակութեամբ սպիտակ հաց, կարագ, ժամբոն եւ ուրիշ չոր ուսելիղէններ։ Երբ կշտացանք, սկսուեց անմէրջ վիճարանութիւններ, կատակներ, երգեցողութիւն։ Գիշերը անցկացրինք շատ գուն, երեւակայելով մեզ մէկ մէկ «Հերոս»։ պառկեցինք չոր տախտակների վրայ եւ լաւ քննեցինք։

Ընդարձակ կենտրոնական բակի դիմացի կողմը տեղաւորուած էին Գետրովսկայա ճեմարանի ուսանողները։ Երկրորդ օրը ցոյցերը համալսարա-

նում եւ ուրիշ դպրոցներում կրկնու եցին : Երեկոյեան մեղ մօտ թերին մօտ 600 ուսանողներ, Երրորդ որր դպրձեալ մօտ 400-500, յևոյ սկսեցին թերի մէկ-մէկ հոգի : Մէնք պատու հաններից դփառմ էինք : Հայ ուսանողներից յիշում եմ Տիգր, Յովհաննիսւանին, Միքայէլ Արքունին, Մարգարիան-Լանին, իսկ «ողևորոցիցներից» Ալ, Սահակեանին, Մ, Շամիրեանին :

Մէկ էր բարձր լսարանի իբարաւան ուսանողներից մէկը, հետազային յայտնի փաստաբան Խոմեանտկովսկին, ցոյց տուեց պատու հանից եւ ասաց . — Նայեցէ՞ք, ահա թերում են «պետրովից» Արքահամեանին :

Պատու հանից դուրս նայեցինք եւ տեսանք ամուր կողմուածքով, մի- ջահասակ, կրոր ու ամ զոյն զէմքով, փոքրիկ մօրուքով մի ուսանող, որը հա- զել էր բաւականին հնացած դպրոցական համազդես :

Ապագայ Խոստումն էր :

Ինձ անձանօթ էր, բայց ձանաշողները բացարեցին, որ նա կազմա- կերպիչ մարմնի մասին աշխատակիցներից է : Նրան անզաւորեցին առանձին սենեակում :

Անցան մի քանի տարիներ : Ես աւարտել էի ուսումս եւ մի քանի ըն- կերների հետ զնում էի էֆիածինը տեսնելու : Ազսաափա կայարանում պա- տաշեցի Խոստումնին : Իր ասելով՝ զնում էր հայրենիք, Ցղնու դիզը : Երբ ևս նրան անուանեցի «Արքահամեան», շատ գարմացաւ եւ ծիծաղերով հարցրեց, թէ ո՞րեղից եմ ձանաշում իրեն «Արքահամեան» անունով : Ես պատմեցի միը «հանդիպումը» 1890 թուին «Բատիրիկ» բանտում :

Շատ վերջը արդէն նա պատմեց ինձ, թէ նոր-Այեքսանդրիայի ձեմու- րոնից արտաքսուելու պատճառով ստիպուած է Էղել՝ Արքահամեան մականու- նով զնալ Բազու, կրկին քննութիւն տալ ոչալական դպրոցում<sup>(\*)</sup>, որպէս- զի կարողանայ ընդունուել Պետրովսկայա զի զատնաեսական ձեմարանը, և Մոսկուայում յայտնի էր իրեւ «Արքահամեան» :

Ինչպէս պատմում էին իր դարնկերները՝ ուսանոց ժամանակ Խոստո- մը լսակեաց Երիտասարդ էր, թիչ էր խառնուում վիճարանու թիւններին, տար- ուած էր աւելի քաղաքական կեանքով, քան զասախօսութիւններով եւ զի- տութիւնով :

«ԻՐՈՇԱԱ», թիւ 1-2, 1929

(\*) Խոստումը շատ ուժեղ էր մարեմատիկայից եւ քննութիւնները անց է կացրել իշխան փայլում կերպով :



Դասառան, Աղոթական Հայության վարչութեան  
212 դպրոցական համայնքի աշխատավորությունը, Եղանձնական մասնակիությունը, 1943-1974

Խոսկը մը Անոնց մասնակիությունը, Եղանձնական մասնակիությունը, 1943-1974

**Նատած ձախէն աջ.—**

Հրաշեայ Լոյսպարոնեան  
Գառնիկ Լոյսպարոնեան  
Տիկին Աղաւնի Տէտէեան  
Ռուսոռմ Զօրեան  
Տիկին Հայկանոյշ Օտապաշեան  
Արտաշէս Գաֆավէեան

**Բ. շարք ձախէն աջ.—**

Օր. Արաքսի Մազմանեան  
. . . .  
Օր. Սիրանոյշ Արծնեան  
Օր. Նուարդ Դրմբեան  
Պրն. Կորիւն  
Օր. Աննիկ Չիլինկիրեան  
Օր. Մարինէ Սէխսեան

**Գ. շարք ձախէն աջ.—**

Պրն. Գալուստ  
Մարուքէ Մառանձեան  
Օր. Մանուշ Հայրապետեան

**ՈՒՍՏԱՌԱՋՈՒԹԵԱՆ ՀՐՁԱՆ, ՄՈՍԿՈՒԱ**

Ես Մոսկուայի Պետրովսկի գիշատնտեսական ճեմարանը մտայ 1887 թուականին : Հայ կեանքին ու մտաւորական զասն այն ժամանակ երկու պատմական խոչոր գէպքերի գորեզ ազգեցութեան տակ էին — ռուս-թիւրքական պատերազմը և Բալկարայի ազատազրութիւնը : Այս գէպքերն առաջ էին բերել մի տրամադրութիւն՝ Հայաստանն եւս պատազրել թիւրքական բարձրից : Մտաւորական թիւն մի ժամը խմբուած էր «Մշակ» լրագրի շուրջը, միւսը հետեւող էր ուսու յեղափոխական չարժման, որ այն ժամանակ զիկավարում էր «Նարովնայա Վոլեյ» (Ժողովրդական Ազատութիւն) կոչուած ուսական կազմակերպութիւնը :

Հայ ուսանողութիւնն այն ժամանակ բացառապէս կենարոնացած էր Մոսկուա և Պետրովրադ :

Մոսկուայում կային երկու կրթական հաստատութիւններ Եւս, որ Հայ ուսանողներ էին ուսանուած — Պետրովսկի գիշատնտեսական ճեմարանը և Տեխնիֆական գորոցը : Պետրովսկի ճեմարանի Հայ ուսանողները, որ 15-16 հոգի էին, երկու կարգի էին բաժանուած՝ մէկը՝ զիտութեան հետապնդողներ, որ քաղաքական գործունէութիւնից հետո էին մնուած և միւսը՝ ուսու յեղափոխական չարժման յարողներ :

Առաջին կարգին էին պատկանուած Խոստով Զօրեան, որ առաջին երկու տարին շատ քիչ էր հետաքրքրուած քաղաքական-յեղափոխական կեանքով, և Աւետիք Սահակեան :

Իսկ ուսու յեղափոխական չարժմանը չերժապէս յարած էին Միմէչոն Զաւարեանը, Արշակ Շահնազարեանը (Խոստովի աներոջ ազան), Գարրիէլ Դանիէլ-Բէկեանը, մի շատ ընդունակ երիտասարդ, որ վերջը խելազարուեց, Ցորութիւն Փիլարեանը, Անեփան Շահնիւրդեանը և ես, որ ամենից կըրտ-սերն էի նրանց մէջ :

Տեխնիֆական զպրոցում միայն մէկ աչքի ընկնող ուսանող կար մի թիգրան Ասեփանեան :

Պետրովսկի ուսանողութիւնն, ինչպէս ասի, այդ ժամանակներն ըստ կըսէլ էր ուժեղ ազիտացիոն աշխատանքը : Մի քանի անգամ նրանք զիմել էին Մոսկուայի ուսանողութեանը, որ մի համազումար հրաւիրեն Հայ ուսանողների, մշակելու համար ապահոյ գործունէութեան ծրադիր : Վերջապէս Մոսկուա համաձայնեց ևս վերը յիշած շորս հողին Պետրովսկից և կան Մոսկուա՝ ուսանողական համազումարին իրբեւ պատղամաւորներ Պետրովրադի Հայ ուսանողութեան :

Համազումարը անզի ունեցաւ Մոսկուայում 1889 թուականին : Այլր ճեմարանից մարդ չկար այստեղ, քանի որ մէրոնք հայկական ահամկէտ չու-

նէին եւ ազգային-քաղաքական գործունէութեան մասին չէին մտածում : Համալսարանի ուսանողութիւնն էր, որ մասնակցեց այդ համագումարին, ուր պարզուեց, թէ Երկու տարրեր տեսակէս կայ ապագայ գործունէութեան մասին .— Պետրովադի ուսանողութիւնը կողմնակից էր լեզալ եւ անմիջական գործունէութեան — ազիտացիա, համախմբումներ, մարտական խմբերի պատրաստութիւն : (Ծուս կառավարութիւնն այն ժամանակ կարծես թոյլատու ողով՝ էր նայում այս կարգի գործունէութեան) : Իսկ Մոսկովյայի ուսանողութիւնը կարծում էր, որ թիւրքապատկան Հայաստանը եւ Հայոց խընդիրը զեռ բաւկանաշափ լաւ ուսումնասիրուած ու պարզուած չէն, ուստի նախ պէտք է ուսումնասիրել Երկիրն ու Հարցը եւ ապա գործունէութեան ծրագիր մշակել :

Համագումարը դրական հետեւանք չունեցաւ իր առաջադրած խնդրի նկատմամբ, նա միայն պարզեց հայ ուսանողութիւնն մէջ տիրապետող մըսութերի Երկու տարրեր հոսանքները եւ մի քանի մոսկուացիներ յարեցին Պետրովադի պաշտպանած տեսակէտին :

Համագումարի զրգման առաջ զիւլատնահսական ճեմարանի հայ ուսանողներս սկսեցինք մտածել հայ ժողովրդի օգտին գործելու մասին : Յասկապէս այդ ուղղութիւնմբ մտահոգ էինք ես, Ծոստոմն ու Վարզգ . Քաջազնունին (Յովհ . Քաջազնունու մեծ Եղբայրը), որ այս ժամանակ ազատ ունկնդիր էր մեր ճեմարանում :

Ես եւ Ծոստոմը որոշեցինք մեր ճեմարանի հայ ուսանողներից մի յատուկ ժողով զումարել, պարզելու համար մեր զիւլատը հայոց հարցի հանդէս : Միւս ուսանողներն աւելի հասակով էին ու հեղինակաւոր . Յար . Փիրալեանն արգէն մի անզամ աքարուել էր Սիրիք իրեն յեղափոխական եւ վերադարձել էր ու նորից մտել ճեմարան իրեն ուսանող : Նա արգէն հասուն մարդ էր . տնահսական բովանդակութիւնը յօդուածներ էր տպագրում «Ծուսկայա Մըսլ» (Ծուսական Միտք) ամսագրում :

Ժողովը զումարեցինք : Այդուեկ Սիմ . Զաւարեանն ու Ստ . Շահնազար-եանը մեղ կատարելապէս ջախջախեցին իրենց տրամարանութեամբ : Մեղ աշխատեցին Համոզել, որ մեր առաջարկը մի զուտ հայկական, քաղաքական գործունէութեան սկսելու մասին՝ յիմար բան է . որ հայ ժողովրդի բախոն ու բարեկեցութիւնը կապուած է ուսուների հետ . որ մենք թուով քիչ ենք եւ անջատուել Ծուսաստանի յեղափոխական մեծ շարժումից նշանակում է չեղուել յեղափոխական ճանապարհից եւ կորստեան մատուել, ոչնչանալ :

Բայց այս ժողովը մի պարմանալի հետեւանք ունեցաւ : Այդ ժամանակ Հայ-վրացական յարաբերութիւնները վատ էին : Սիմ . Զաւարեանը, որ հոգով հայ մարդ էր, զգում էր, թէ մի բան պէտք է անել յատկապէս հայութեան համար : Նա այդ անելիքը համարեց հայ-վրացական մերձեցումը, որ նրա կարծիքով պէտք է սկսուէր ուսանողների մէջ եւ ապա կիրարկուէր ու տարածուէր Կովկասում :

Համագումարի ազդեցութեան առաջ իմ մէջ որոշ տրամադրութիւն արթնացաւ մտածելու եւ գործելու հայութեան համար : Ես կամաց-կամաց մօտեցայ համալսարանի ուսանողներին, որոնց շրջանում թէ՝ հայ լեզու կար,

թէ՛ հայ մտածում : Այդ շրջանում ես սովորեցի հայերէն, ծանօթացայ հայոց պատմոթեան հետ, կարգացի հայ հեղինակների զործերը, մի խօսքով կատարելապէս հայացայ հոգով :

1889թ. ամառը ես դառնալու էի Կովկաս — Թիֆլիս :

Քանի որ ես չատ մակրիմ էի Միմ . Զաւարեանին՝ նա ինձ մի նամակ տուեց ոմն Քր. Միքայէլեանի հասցէով եւ ասաց .

— Քանի որ զու չատ ես հետաքրքրում հայ կեանքով, Թիֆլիսում տեսնուիր հետը եւ խօսիր. նա կեանքի մարդ է եւ կարող է քեզ զոհացում տալ :

Հասնելով Թիֆլիս՝ ես առաջին իսկ օրերը զնացի այդ մարդու մօտ : Միմ . Զաւարեանը նամակի մէջ գրել էր, որ ես իր ամենամտերիմ ընկերն եմ, եւ Քրիստովորն ինձ հետ կարող է լիովին աղատ խօսել :

Քրիստ. Միքայէլեանը մօտ 30 տարեկան մարդ էր, կարճահասակ, կադ, գունատ՝ կարծես թէ թոքախտաւոր, մէծ-մէծ, խելօք եւ բարի աչքերով: Նա ինձ ընդունեց զարմանալի մտերմութեամբ ու չերժապին եւ, քանի որ մէծ գեր էր խաղում Թիֆլիսի յեղափոխական շրջանակներում, ինձ մանրամասն տեղեկութիւններ տուեց Կովկասի երիտասարդ նարոգովոյցիների մասին, որոնցից մէկն էի նաեւ ես :

Մօտ ամիս ու կէս մնացի Թիֆլիս եւ համարեա ամէն օր տեսնուում էր նրա հետ, որի հետեւանքն եղաւ մեր մտերմութիւնը: Զարմանալի ընդունակութիւն ունեցաւ մտերմանալու, սիրուելու: Նա կարողանում էր զրաւել, իրենը զարձնել մարդուն:

Մի տասնուշինգ օրից յետոյ եկաւ նաեւ մոստոմը: Թիֆլիս էին այդ ժամանակ Տիգր. Ստեփանեանը, որին բանտարկել, արձակել եւ վոնտել էին Տեխնիքական զպրոցից եւ աքսորել հայրէնիք իրբեւ յեղափոխականի: Այնտեղ էր Օր. Նատալիա Մատինեանը, որ ծանօթ էր Մոսկուայից, որ սովորում էր մանկարարութիւն: Այնտեղ էր Իշխ. Եղիս. Արզութեանը, Արշ. Թագէոսեանը, որ նոր էր աւարտել անտառազիտական զպրոցը, եւ Նիկոլ Մատինեանը, որ նոր էր վերապարձել Զուիցերիայից ու թարգման էր Փրանսական հիւպատոսարանի մէջ:

Նիկ. Մատինեանի տունը մի կենտրոն էր, ուր հաւաքում էր ժամանակի երկսեռ երիտասարդութիւնը եւ ամէն տեսակ հասարակական խնդիրների շարքում խօսում ու վիճում էր նաեւ հայկական քաղաքական խնդիրների մասին: Այդաեղ զալիս էին Տիգր. Ստեփանեան, երբեմն նաեւ Երաւանդ Թագիբանոսեանը, որ ազատ ունկնդիր էր Մոսկուայի համալսարանում: Այն ժամանակները շատերը կային, որ միջնակարգ կրթութիւն աւարտած չլինելով կամ ուրիշ պատճառով անկարող խիսկական ուսանող զրուելու, զալիս էին Մոսկուա կամ Թեարողագ, ապրում էին ուսանողական շրջանում, ծարաւ ունէին զիտութեան եւ ձգտում ինտելիգենտ զանալու: Ոմանք մըտնում էին համալսարան իրը ազատ ունկնդիր, ինչպէս Եր. Թաղիանոսեանը

Եւ Վարդգէս Քաջազնունին, իսկ ոմանք էլ պարզապէս գոհանում էին ուսանողական շրջանակում ապրելով եւ նրանց հետ շփուելով:

Բայց արդէն հասել էր Մոսկուա վերադառնալու ժամանակը: Այնտեղ այյեւս հնար չունեցայ այդ կարգի հարցերով զբաղուելու, որովհետեւ սկսուեց զուտ ուսանողական հոգսերի մի շրջան, որ վերջացաւ 1890 թ. Փ. Փետրուարի ուսանողական լայնածաւալ խառնակութիւններով:

Այդ ժամանակիները բարձրագոյն պարցներում ստորին կարգի աշակերտներ կային — պետքիներ, որոնք իրօք լրտեսներ էին կառավարութեան: Դիմագանական ճեմարանի ուսանողները պահանջ զրինք, որ պետքիները հեռացուին ճեմարանից: Պահանջը ներկայացրինք մեր ճեմարանի տեսչին, որ այդ ժամանակ նշանաւոր ակնարոյժ իւնդինն էր: Նա մերժեց մեր առաջարկը: Այն ժամանակ մենք պահանջեցինք, որ ինքն եւս հեռանայ մեր ճեմարանից, քանի որ մասնագիտութիւնը ոչ մի կապ չունէր զիւղանտեսութեան հետ: Նա մեր պահանջները հասկանալ չկարողացաւ:

Մենք գումարեցինք մի քանի ժողովներ, ուր ճեմարանի վարչութիւնը մտցրեց լրտեսներ եւ զրա հետեւանքով մեր ընկերներից մի քանիսին բանտարկեցին: Այդ բանտարկութիւններն աւելի մեծ ծաւալ ստացաւ: Բանն այնտեղ հասաւ, որ կառավարութիւնը ճերրակալեց ու բանտարկեց ճեմարանի բոլոր ուսանողներին: Ազատ մասցին նրանք, որ ճերրակալութեան ժամանակ պատահար քաղաք էին գնացել (Պետրովսկի գիւղատինտեսական ճեմարանը գտնուում էր Մոսկուայի մօտերքը):

Քաղաքում եղածների մէջ էինք ևս եւ Ռուսումը: Միւս օրը երբ ես ու Ռուսումը քաղաքից զնում էինք ճեմարան, որ մասնակցէինք այդ օրը նշանակուած մէծ միտինիին, զարմանքով տեսանք, որ զինուորների ուղեկցութեամբ մեր ընկերներին — 350—400 մարդ, ճերրակալած տանում են քաղաք: Վազեցինք որ միանանք նրանց, բայց ժամատարմեները թոյլ չտուին, ասելով՝ զնացէ՛ք ճեմարան, և մէ պէտք է, որ ճեզ ևս բանտարկեն՝ կը բանտարկեն:

Քանի որ ամենից անզուսպ ուսանողներից մէկը ևս էի, կասկած չունէի, որ պիտի ինձ եւս բանտարկեն: Երբ հասայ ճեմարան ամբողջ հիմնարկութիւնն աչքիս աւելիու երեսուց, մանաւանդ մեր հանրակացարանը, որ պետական մի չէնք էր:

Մի երկու ժամից յետոյ մէկ-մէկ հաւաքուեցին ճերրակալութեան ժամանակ ճեմարանում չեղածները — մօտ 15—16 հոգի: Ժողով արինք, որի ժամանակ առաջարկ նշաւ՝ ամէն կերպ աշխատելու, որ մեզ ևս բանտարկեն մեր միւս ընկերների հետ: Մեծ ամսանութիւնը համաձայն չեղաւ այս առաջարկին, բայց հօթ հոգի, որոնց մէջ երկու հայ — ևս ու Ռուսումը — կողմնակից եղանք այդ առաջարկին եւ կազմեցինք փօրի միուրիւն» և որոշեցինք թոյլ չտուլ, որ մեղանից մէկն ու մէկին բանտարկեն առանց միւսների: Ամէն մէկս մեզ հետ առած բաւական ծխախոտ, մի-մի փունտ երշիկ եւ երկուական

Փունտ հաց, պարկերն ուսերիս՝ ման էինք դալիս միասին և զիշերները քը-նում անտառում:

Նախ զիմեցինք մեր տեսչին և առաջարկեցինք՝ յայտնէ, ուր հարկն է, որ մեզ եւս բանտարկեն: Նա մերժեց մեր առաջարկը: Գնացինք սստիկա-նատուն և առաջարկեցինք, որ մեզ բանտարկեն: Մեզ պատասխանեցին, թէ երբ Պետրոպրատից հրաման ստանան՝ կը բանտարկեն: Տարօրինակ գրութիւն էր ստեղծուած. մենք, որ ամենից աւելի մեզաւորներց էինք, չէինք բան-տարկուած: «Ո՞նչ կը մտած են մեր բնկերները», — անցնում էր մեր մտրով:

Համալսարանի ուսանողները դանդադ էին շարժում և լաւ չէին պաշտ-պահում զիւզատնեսական ձեմարանի ուսանողներին: Նրանք զժղուհ էին մե-զանից և ասում էին, թէ ձեմարանի ուսանողները չարունակ մեր զլախին փոր-ձանք են բերում:

Համալսարանի 4000 ուսանողներից հազիւ 500 հոգի էին բանտարկուած, որոնց մէջ հայեր չկային: Արուեցինք մանել համալսարանի ուսանողութեան մէջ և յուզում առաջ բերել: Այս առաջարկը Խոստոմն արաւ. Ես հակառակ էի: Եւ քանի որ մեր նորատակը բանտարկուիլն էր, ևս առաջարկեցի յարձակ-ուել ոստիկանատան վրայ ևս զրանով առիթ տալ մեզ ևս բանտարկելու: Այդ-պէս էլ արինք: յարձակուեցինք սստիկանատան վրայ, պատուհանները ջար-դեցինք: Մեզ ձերբակալեցին, բայց հետեւեալ օրն եւեթ արձակեցին, որով-հետեւ Պետրոպրատից կարգադրութիւն էր եղած այլեւս ուսանող չեկերա-կալել:

Այդ օրերը մեր ձեմարանի զրան վրայ մի յայտարարութիւն երեւաց, թէ այսինչ ուսանողները պէտք է ներկայանան նահանդապէտին, առնեն ի-րենց վկայականները և հեռանան Մոռկուայից իրը արձակուածները: Թղթի վրայ նշանակուած էր 11 հոգու անուն, որոնց թուում իմն ու Խոստոմինը: Երբ ցանկը կարգացինք՝ մի տեսակ հանդստացանք: Վերջապէս մենք ևս պատիժ կրեցինք ևս կարուզ էինք համարձակ նայել մեր բնկերների երեսին:

Սակայն մեր «եօթի միութիւնից» հինգը հանդստացաւ. զրանց թուումն էի նաեւ ես: Իսկ երկուար — մեր «եօթի միութեան» դիմաւորը, որ մի հրբ-եայ էր Տերենտիւ ազգանանով և Խոստոմը չգոհացան զրանով: Ես իրեւ յեղափոխական՝ յոզնեցի. իսկ Խոստոմը կարծես նոր Լուսնի եկաւ: Առա-ջին անգամ ինձ համար այստեղ պարզուեց Խոստոմի բնաւորութեան ուժը: Խոստոմն առաջարկեց շարունակել ազիտացիան համալսարանի ուսանողու-թեան մէջ. նրան բնկերացաւ Տերենտիւ, իսկ մնացած հինգս դոհացանք մեր ստացած պատժով:

«ՀԱՅՐԵՆԻՔ» ամսագիր, թիւ 5, 1923

«Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից»

(Մարտին Շարիբեանի յուշերը),

գրի առաւ և Հանգոյց [Ն. Աղբալեան]

ՍԱՄՈՎԱՐԻ ԽՈՐՀՄԱՆՈՐ ՎԱՃԱՌԱԿԱՆԵ

1895 Սեպտեմբերի սկզբի օրերէն մէկն էր : Տրապիզոնի մէջ թէլլալ Ա-լքսան իր զոռ ձայնով շուկայի մասերը կը թնդացնէր՝ աւետելով թէյասէր հասարակութեան, որ առաջին անգամ ըլլալով Ռուսիային ժամանած է Թու- լա քաղաքի սամովարի դործարաններու ներկայացուցիչ այսինչ այսինչեան, սամովարներու ճախ մթերքով մը եւ շատ աժան գներով, ուստի ո՞վ որ կը փափաքէր շրկուիլ պատեհ առիթէն, պէտք է փութար Ենի խանի թիւ այս- ինչ և ներակը :

Շատեր փութացին եւ գեղեցիկ սամովարներ գրկած գուրս ելան : Ես ալ կը փափաքէր ունենալ զեղեցիկ սամովար մը, բայց իմ մէջ աւելի բուռն էր ցանկութիւնը, վայրկեան մը առաջ, տեսնել սամովարի մեծ վաճառակա- նը, որը բացի սամովարներէն, բերած պիտի ըլլար նաեւ շատ թանկարդին եւ հետաքրքիր տեղեկութիւննը Կովկասէն եւ պիտի հարթէր շատ մը տարա- կարծութիւններ, որ մէկ կողմէն ծագած էին Արեւելքան Բիւրոյի եւ Տրա- պիզոնի կոմիտէին միջնեւ, եւ միւս կողմէն մեր մէջ հետեւելիք թաքթիքի շուրջ : Բայց ի՞նչպէս կրնայի հակառակ երթալ մեր իսկ գրած արգելքին . ու երանի կու տայի մեր ընկեր Վրէնին, որ իր յարմարութիւններով տա- նին օրէն իսկ ելեւմուտ ունէր սամովարի մեծ վաճառականին մօտ, որ ուրիշ մէկը չէր, բայց եթէ մեր մեծ ընկեր Ռոստոմը, որ պարսկական անցագրով եւ սամովարի մթերքով Տրապիզոնի զծով Կարին կը մեկնէր :

Տրապիզոնի Կոմիտէի հետ նախապէս թղթակցելով՝ յարմար տեսնը- ած էր այդ մեւը, կասկածի տեղի շտալու համար : Կոմիտէի որոշումով, ընկեր Վրէն, իրեւ յանձնակատար՝ կը պահէր կապը Ռոստոմի հետ, մինչեւ յարմարութիւն առնէր տեղ մը հաւաքուիլը :

Ընկեր Վրէն ինձ համար ալ զնեց սամովար մը, զոր առանձին գուր- դուրանքով տարի տուն՝ զարմանք պատառելով մերիններուն :

Սամովարի թէյը յայտնի է, որ ախորժելի է, բայց ինձ կը թուէր, թէ այս սամովարի թէյը առանձին համ պիտի ունենայ . չէ՞ որ Ռոստոմի բե- րածն էր եւ զաւադքական ապրանք : Ասկէ զատ, իմ պատանեկան հոգու մէջ հպարտութիւն մը յառաջ բերած էր այն հանդամանքը, որ այդ սամովարը սովորական ապրանք չէր, ինչպէս եւ զայն ծախող վաճառականը, եւ ես ծա- նօթ էի զաղունիքին, ամբողջ քաղաքին մէջ միայն քանի մը ընկերներով : Ո- րոշած էի սամովարը առաջին անգամ գտնել որեւէ նշանակալից օր մը եւ ըն- կերներու հետ լաւ ժամանց մը ունենալ :

Ռոստոմ իր գերը լաւ տարաւ : Պարզ կեցուածքը, թաթարական ազճատ լեզուն եւ, մանաւանդ, գիմագծերը կը փարատէին ամէն կասկած : Բայց ոս- տիկանութիւնը անտարբեր չէր զէպի նա : Չէ՞ որ Տրապիզոն եղած էր ուս-

սահայ գործիչներու յաձախած վայրը : Խորէն Ասնգատեան , Ս . Զաւարեան , Յ . Արզումեան , Լ . Թաղէսուեան , օր . Ժենիք և ուրիշներ հեն բռնուած եւ կամ անկէ արտաքուած էին (Յ . Եւսութեան աննկատ դործեց և անցաւ Պոլիս) : Դեռ նոր արտաքուած էր յայտնի մանկավարժ և Տրապիզոնի հայ դպրոցներու տեսուչ Յ . Տէր Միրաֆեան : Բայց առոնք ամէնքը և կամ էին իրեւն տեսուչ կամ ուսուցիչ և չփութ տնեցած տեղական յայտնի հայերու հետ , ուստի սամովարի վաճառականին զէմ հւտապնդումը խիստ չէր , մասնաւանդ որ ոչ մի յայտնի հայք հետ յարաբերութիւն ունէր և յանձնակատարներու հետ կ'անցընէր իր ժամանակը :

Խոստոմ , սակայն , կ'աճապարէք . պէտք էր օր առաջ հաւաքուիլ : Մեր աւագ եւ զգուշութեան մասնագէտ ընկեր Արսէն (Մանուկ Թաղէսուեան) վրձուեց , որ առաջին ժողովը կայացնելու ամենայարձար վայրը ... բազնիքն է : Քաղաքին կեղրոնք , մէյտանի բաղնիքը ժամադրութիւն տրուեցաւ կիրակի օրուայ համար :

Որոշուած ժամին զացի բաղնիք : Ներկայ էին Արսէն (Մանուկ Թաղէսուեան) , Տաշրագի (Վրէն Գասպարեան , նահատակուած 1915ին) , Զաւէն (Յակոբ Գարագէօզեան , 1897ին Պուլույ մէջ ձերբակալու ելու ատեն անձնապան եղած) , Սուրէն (Օննիկ Թումանեան) քաշուած էին բազնիքի խուռնաներէն մէկուն մէջ : Անոնց մօտ թասը ձեռքին նստած էր լայն ու թուխ զէմքով , խոր ճակատով , տափակ քիթով և արտայայտիչ աշքերով անձանօթ մը . խոսք չկար , որ Խոստոմն էր ան : Մանօթութիւնը կարճ տեւեց . ժողովը սկսաւ խիստ ծիծագելի պայմաններու մէջ . թէւ բազնիքին մէջ բազմութիւնն չկար , բայց զգուշութեան համար , ջուրն ու սապոնը և թասերու ձայնը կը խառնուէին մեր օրակարգի հարցերուն , որոնք , սակայն , շատ լուրջ էին :

Կարծիքներու փոխանակութենէ յետոյ տեսնուեցաւ , որ այդ հարցերը , յամենայն զէպս , բազնիքի մէջ լուծուելիք բաներ չէին , մանաւանդ որ տարակարծութիւններ կային մեր մէջ ալ : Ընկեր Արսէնի գիւտը հանձարել էր՝ զգուշութեան տեսակետով , բայց զործի համար անպէտք : Խոստոմ իր քաղցրը քծիծագով միացաւ ընկերներէն մէկուն առաջարկին՝ անպայման տուն մը հաւաքուիլ եւ լրջօրէն զրագուիլ : Ընկեր Արսէն , ի վրէժ իր բազնիքի ծըրագրի անյաջողութեան , առաջարկեց իր տունը գումարել ժողովները . բոլորը համաձայնեցան եւ ա'լ սկսաւ սովորական լողանքը : Խոստոմին հետ կրկար խօսեցայ : Իր պարզ , անպանոյն խօսուածքին մէջ զզացի հոգու մեծ ճարտասանը եւ բարձր մարզը :

Անկէ յետոյ շատ տեղ եւ բազմաթիւ գործերու մէջ մենք իրար պատաւէցանք , բայց առաջին՝ բազնիքի մէջ ստացած տպաւորութիւնն մնաց ամենէն ուժեղն ու քաղցրը :

Այս տողերը զրած ատենս , 35 տարիներ յետոյ , դեռ իմ առջեւ կենդանի գոյներով կը ներկայանայ բազնիքի խուռնային մէջ թասը ձեռքին բըռնած սամովարի մեծ վաճառական Խոստոմը , շրջապատուած զաղափարի մը տերիմներով :

ԱՆԵՐԵՒՈՅԹ ՂԵԿԱՎԱՐԸ

1895 թիւէն հայութեան համար կը սկսի յուսոյ եւ յուսախարութեան շրջան մը : Մէկ կողմէն՝ բարենորոգմանց ծրագիրներ, և բոպական միջամը-առութիւններ յօգուտ հայ ժողովորդիք, հասարակական կարծիքի հետաքրր-քրութիւն Հայկական Դատով, միւս կողմէն՝ այդ բոլոր սպառնալիքներու ցնորականութիւնը, չարունակուող հարստահարութիւնները եւ տեղ տեղ կո-տորածներ Տաճկաստանի մէջ : Այս երկունքի շրջանին մէջ հայ ժողովորդիք առջև զրուած էր ցարդ Եղած յեղափոխական զործունէութեանց վերագնա-հատման հարցը : Ժողովրդական զանգուածները յուսալքման ենթարկուելով՝ բոլոր գժախտութեանց եւ անյաջողութեանց մէջքը փաթթեցին Հնչակեան կուսակցութեան վզին : Տնկի ու անտեղի քննադատութեանց կ'ենթարկուի մինչ այդ զեկափարոզ կուսակցութիւնը, որ չունենալով խոր արմատներ ժո-ղովորդիք մէջ եւ չդիմանալով աջէն ու ձախէն եկած հարուածներուն, կը քայլայուի եւ միայն անուանապէս կը չարունակէ իր զոյտիթիւնը : Բազմա-թիւ են այն պատճառները, որոնք 1895 թուականէն յստոյ կործանեցին այդ կուսակցութիւնը : Մեր նիթէն զուրս է այդ հարցի հետազոտութեամբ րդ-բազուիլ, այստեղ պիտի յիշենք միայն, որ ճիշդ այդ թուականէն իր ամրող հասակով հարպարակ կը նեստոր երիտասարդ Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ իր երկրորդական զիբքէն զուրս զալով տիբարար կը խէջ հայ ժողովորդիք զեկավարութիւնը :

Սասնոյ կոիւներէն եւ երդրումի ցոյցերէն յստոյ, Երբ ամէն մարդ շուարման ու վճառումի մէջ էր, Հ. Յ. Դաշնակցութեան հիմնագիրներէն Ռուսումը, թողով Ժընները, ուր կը խմբագրէր Պրօշալը, կ'անցնի երզում : Անոր գալով՝ նոր թափ եւ նոր ուղղութիւն կը ստանայ յեղափոխական դոր-ծունէութիւնը երզումի եւ Պիթիսի նահանգներուն մէջ : Անոր աշխատան-քին հետեւանքով է, որ այդ նահանգներէն ի սպառ կը վերնայ Հնչակեան կուսակցութիւնը եւ կը սկսի Հ. Յ. Դաշնակցութեան միահեծան դործունէու-թեան շրջանը :

Այդ աներեւոյթ մարդու անչօշափելի զործերը գժուար է ճշգել, կա-րելի է զգալ կամ առաւել զիտնալ, բայց գրեթէ անկարելի է փաստել : Հա-սարակ ուսուցիչ մըն է ան երդրումի մասնաւոր զպոցի մը մէջ . համեստ է իր ապրուսով ու հազուստով եւ ոչ ոքի ուշադրութիւնը կրնայ զրաւել իր պարզ շարժումներով . շատ քիչ կը խօսի եւ զրեթէ թնա չի նտուեր . կը խո-սափի ամէն տեղ իր մտքերը արտայայտելի . զինքը շրջապատողներէն շատե-րը յանախ չեն այ հաւատար, թէ ան յեղափոխական կրնայ ըլլալ եւ նոյնիսկ երբեմն յեղափոխութեան ու ըմբռստութեան դասներ ալ կու տան այդ ամէն բանէ անտեղեակ թշուառ վարժապետին :



Ղարաքիլսա, 14 Օգոստոս 1906ին

- (1) Կարապետ Պարոնսկեան, (2) Զինոտր, (3) Զօր-  
եան Բոստոմ, (4) Մատինեան Նիկոլա, (5) Օր. Քալանթար-  
եան, (6) ...., (7) ...., (8) ...., (9) Սարկոս Մատինեան,  
 (10) Տիկին Մարիամ Մատինեան-Զաարեան, (11) ....,  
 (12) Պրն. Մելիքեան, (13) Տիկին Մելիքեան, (14) Տիկին  
 Աթենիկ Արյութեան, (15) Տիկին Մոշելեան Էլիսօ, (16)  
 Տիկին Արաք-Մորքա Իռովա, (17) Օր. Ճալարեան Մաթենի,  
 Տիկին Արաք-Մորքա Իռովա, (18) Օր. Եղիազարեան Հերուշ, (19) Մելիքեան Ի., (20) Տի-  
 կին Մելիքեան, (21) Օր. Եանսպայեան Ալեքսանտրա, (22)  
 Արյութեան Յովսէփ, (23) Պրն. Լետնիկ, (24) Գրիգոր Միր-  
 կայեան («Սիլնի»), (25) Արտաշէս Աբենեան, (26) Անա-  
 րուեան Վարդգև, (27) Մելիք-Բեդրիխարեան Յովսէփ, (28)  
 Մեհրաբեան Ա., (29) Տիկին Պարոնամեան:



Հ. Յ. Ղըզը Ընդհանուր ժողով, Կարկն

Բայց այդ մթութեան մէջ թագնուող ժարդը խումբ մը զործիչներ էր բերած իրեն հւետ երկիր, որու հրահանգներով զանոնք ցրաւած էր Հայաստանի զաւաները և անոնց միջոցով է, որ կը տարածէր իր և իր կուսակցութեան զագափարները: Ան կարողացեր էր յեղափոխական զործիչներէն ընտրել այնպիսիները, որոնք ժողովուրդի մօս ըլլարայի իրենց հասկացողաթեամբ, վարք ու բարքով և միաժամանակ մարսած բլլալով Դաշնակցութեան սկզբունքները, ընդունակ էին հասկցնելու ժողովուրդին յեղափոխական զագափարները: Խոստոմ կրցած էր զանել այնպիսի մարդիկ, որոնք պատրաստ էին մոլեռանդօրէն կռուիլ և զոհուիլ իրենց դաշտաբներուն համար:

Թագնուած այդ տեսակ զործիչների ետեւ, Խոստոմ աննկատելի կերպով կը գեկափարէ անոնց զործունակութիւնը և հիմք կը դնէ զործի մը, որ անշեղ կերպով կը շարունակուի մինչեւ մեր օրերը: Անոր՝ զաւաները զրբկած զործիչներու չարքին մէջ կը դանուէին Հրայրը (Բասէն), Թաթուլը (Նախ Էրգում, ապա Սասուն), Տուրպախոր և Զայլազը (Խնուս և Սասուն), Սերորը (Ախտաթ), Արրօն և Թումասը (Տարօն, Սասուն):

Տևնենք թէ ի՞նչ զագափարներ է որ Խոստոմ կը քարողէ իր այս ժողովրդական զործիչներուն միջոցով:

Առաջին, Հ. Յ. Դաշնակցութեան ծրագիրը պէտք է դարձնել ժողովարքին համար սրբութիւն մը, որ համազօր բլլայ կրօնական զղացումներուն և նոյնիսկ գերազանց զանոնք:

Երկրորդ, Հ. Յ. Դաշնակցութեան դրօշին ատկ պէտք է կազմակերպել ըստ կանոնադրի քիչերը միայն, որոնք ո՛չ միայն կը հասկնան ու կը համակրին ծրագրին, այլ նաև պատրաստ կ'ըրյան անձամբ զործադրելու զայն և հորդ եղած պարագային նոյնիսկ զոհարերել իրենց կեանքը:

Երրորդ, Հայկական Դատար Թուրքիոյ մէջ միայն ազգային ու կրօնական զատ չէ, այլև զասակարգային, զատ ճնշուածներու լնդդէմ ճնշողներու: Եւ քանի որ թուրքերու և քիւրտերու մէջն ալ ճնշուածներ կան, պէտք է ջանալ անոնց հետ միանալ ընդհանուր ուժերով պայքարելու համար կառավարութեան դէմ, որ բոլոր ճնշող ուժերու՝ ազգային, կրօնական, զասակարգային՝ մարմնացումն է:

Չորրորդ, հայ ժողովուրդը, որպէս հարստահարուած տարր, միայն զէնքով կը նայ քիւրտիւն զանել և միժիայն անոր զինուած դիմադրութիւնն է, որ կարող է կասեցնել կամ սահմանափակել բռնութիւններն ու կոտորածները:

Հինգերորդ, յեղափոխական զործիչը, մարտիկը, իր անձնական օրինակով, կարգապահութեամբ, տառապանքով, հերոսութեամբ և նահատակութեամբ պիտի զասակարակէ ժողովուրդը ու պատրաստէ զայն բժրոստութեան պայքարին համար:

Առողջ են ահա այն գլխաւոր սկզբունքները, որոնցմով կ'առաջնորդուին զաշնակցական զործիչները երկրէ երկիր:

ՀԱՅՑ ՍԵՎԱՓՈԽԱԿԱՆԻ ՄԸ ՅԻՇԱՍԱԿՆԵՐԸ

Ա. տպագրութիւն, Գ. հատոր, էջ 125-127

ՌՈՍՏՈՄԻ «ԽԱՐԴԱԽՈՒԹԻՒՆ»Ը

Միութեան այս քայլայումը, իրբեւ հետեւանք ստեղծուած յօժարակամ Փեղերասիոնի, պիտի հարկադրէր Միութեան հաւատաւոր պաշտպաններն, — վերացնել Փեղերասիոնը, միանութե՛լ բոլոր խմբակները և ստեղծել մէկ և անբաժան կազմակերպութիւն :

Այս գործը կատարուեց՝ «Յեղափոխականներին» դարձնելով «Յեղափոխական» :

Ինչպէս վկայում են քչաթիւների ազօտ յուշերը՝ վիրարուժական այս ճարտար գործողութեան վարպետը եղաւ Ռոստոմը :

Կարո՞ղ է լինել: Այս սրբազան «խարդախութիւն»ը յարմարում է անգույքական Վարպետի խառնուածքին: Ռոստոմը կարո՞ղ է յդանալ մէ՛կ կուսակցութեան գաղափարը և ապա, «ների» յապաւումով, առաջ քեզ «սպակուաց», քէշ վերջ նաեւ այդ «կէտ»ը փոշիացնելու և «ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ»ը ստեղծելու համար:

Ցիւում ենք... շա՞տ մութ, շա՞տ ազօտ մեւով, թէ ինչպէս Ռոստոմը, մեր հետաքրքրութեանը գոհացում տալու համար, պատմում էր, իր հմայիչ ժպիտը դէմքին, այն «խարդախութեան»ը մասին, որ ինք գործել է մեր վերամկրտութեան և վերափոխութեան հարցի մէջ.

— Ցովնամը մի օր ինձ ասաւ, — աւարտեց իր զրոյցը Ռոստոմը, — թէ ես խարդախ եմ եւ խարդախութիւն եմ արել՝ «ների» տեղ «սպակէտ» դնելով. իրաւունք ուներ Ցովնանը. բայց պէտք էր այդ խարդախութիւնը. աւելորդ «կէտ»ն ալ յետոյ ինքնիրենը զնա...

Խիզախեցինք զրի առնել այս յուշը, որովհետեւ նա նմանում է մի պատմութեան, որ ունի մեր կինքը:

Հստ երեւոյթին՝ նոյն փուլերից անցած է նաեւ այս վերջինը:

Ռոստոմի անուան կապուած մեր յուշը ամբողջացնելու համար՝ զիմեցինք ընկ. Հ. Օչանջանեանին եւ ինդրեցինք զրի առնել ինչ որ յիշում է մեր կնիքի եւ զինանշանի մասին: Բնկ. Հ. Օչանջանեան իր 1940 Հոկտ. 30 թւակիր զրութեամբ հետեւեան էր յայնում մեզ.

«Յատրին զրած պատմութիւնը ինձ հացորդած է Ռոստոմը (թէեւ չեմ կարող հաստատապէս պնդել, որ իսկապէս Ռոստոմն է պատմողը, բայց Ռոստոման շատ լաւ էր յիշէ, որ նոյն բանը իրեն պատմել է Ռոստոմը):

«Յատուկ կնիքի եւ զինանշանի անհրաժեշտութիւնը զզացուել է Առաջին Բնդհանուր Ժողովից յետոյ, 1892-93 թուականներին, — իր եղերական մահից եօթը տարի առաջ վկայում էր ընկ. Համօն, — Ժընեւ գտնուող ընկերների մէջ: Սրանց մէջ է եղել նաեւ Ռոստոմը:

«Դաշնակցութեան գաղափարը և զործելակերպը արտայայտելու համար ընդունուել է, որ պէտք է կնիքի մէջ տեղ դանեն Դաշնակցութեան դրա-

շակը՝ իբրեւ նրա գաղափարը արտայայտող, եւ սուր, զրիչ ու բահ՝ իբրեւ այդ գաղափարին հասնելու միջոցներ :

«Այդ բոլորը — զրօշակ, սուր, զրիչ եւ բահ — իբրական առարկաներ դասաւորուելուց յետոյ, Ծոստոմքի իր ձեռքի մէջ բռնել է այդ կազմածը, որ եւ լուսանկարուել է : Այդ լուսանկարը օգտագործուել է կնիքը ժենելու համար :

«Եյսպիսով կարելի է ասել, որ ճիշդ է այն կարծիքը, թէ մեր կնիքի եւ զինանշանի մէջ երեւացող ձեռքը — Ծոստոմքի ձեռքն է» :

Ո՞րքան լաւ պիտի լինէր, եթէ ճներից ողջ մնացածները այսօր զրի առնէին այս հարցերին կապուած իրենց յուշերը, փոխանակ վազը այդ յուշերը իրենց հետ գերեզման տանելու :

«ԳԱՐԱՓԱՐՆԵՐԻ ՈԴԻՆԵ, 1951. Գահիք, էջ 19-21

## ՅՈՒՀԵՐ ՌՈՍՏՈՄԻ ՄԱՍԻՆ

Պուլկարահայ զազութը, կամ՝ առանձնապէս Հ. Յ. Դաշնակցութեան մարմինները յաճախ առիթը ունեցած են Խոստոմէն առաջ և անկէ յետոյ ձանչալու գաշնակցական զործիչներ, սրոնք բարոն ալ, անշուշտ, ձգած են մտքեր, զեղեցիկ յիշատակներ, ողեւորոդ ու չինիչ տպաւորութիւններ՝ դաշնակցական գանգուածներու. Եւ պուլկարահայ հաստրակութեան մէջ, բայց անոնցմէ ո՞չ մէկը չէ թողած այնքան խորոնկ հետաքեր եւ չէ բացած անջրն ջնիվ ակօս մը՝ հայ երիտասարդութեան մտքին ու սրաին վրայ, որքան Խոստոմը: Ահա թէ ո՞ւր պէտք է փնտուել զործիչն մեծութիւնը:

1899 թիւի կէսին Խոստոմ առաջին անգամ երեւցաւ Ֆիլիպէի մէջ, ուր եւ հաստատուեցաւ:

Այդ ժամանակամիջոցին հայ ժողովուրդը կ'ապրէր բէակցիայի ըրբ-ջան մը:

Օսմաննեան պանքայի ցոյցին յետոյ առաջ եկած կոտորածը եւ անոր անմիջական հետեւանք եղող արտազազթը, իրենց սարսուազդեցիկ պատկերներով եւ մանրամատնութիւններով, հողեսպէս եւ բարոյապէս ընկձած, խոռված էին հայ ժողովրդի խոչըր մէկ տոկոսի յեղափոխական տրամադրութիւնները: Անշուշտ, այս շրջանը կարելի էր համարել անցողակի բնոյթի ունեցող բնական երեւոյթ մը՝ ժողովրդական զանգուածներու համար: Երբ, սակայն, կ'աւելցնենք ասոր վրայ Արքիփարի, Զօղանեանի եւ արքանեակներու «Մարտափ», «Նոր Կեանք»ի եւ «Անահիւափ» միջոցաւ ըրած հակայեղափոխական թունաւոր քարոզներն ու մտքերը, կը պարզուի, որ ժողովարդը այս ուղղութեամբ գէպիք բարոյական սնանկութիւն կ'առաջնորդուէր՝ անոր մէջն իրցնել նետելով այն ամէնը, ինչ որ սուրբ, նորի բական ու յեղափոխական էին, վերջապէս, աղղային իտէալներու եւ բազմանքներու իրականացման համար ամենէն հզօր աղղակներն ու յենարաններն էին: Եւ որ ամենէն պժգալին է, այս բոլոր հակայեղափոխական մտքերը, բանաւոր ու գրաւոր կերպով պրոպականա կ'ըլլային արտասահմանի հայութեան՝ տաճկահայ անուանի մտաւորականներու կողմէ յեղափոխական» մակդիրին տակ, ինչ որ շատ աւելի վտանգաւոր էր, որովհետեւ աւելի գիւրութեամբ կընար խարուիլ միամիտ և արդին յուսալքուած ժողովուրդ մը:

Ճիշդ է, «Դրօշակ»ի կողքին «Եարժում» եւս կը ծագկէր, խիստ կերպով կը ժաքառէր այդ հիւանդու, սպանիչ արշաւանքին, մթնոլորտին դէմ, բայց պէտք էր ժողովրդականացնել զայն: Անհրաժեշտ էր կազմակերպել հոծ բազմութիւններ յեղափոխական դրօշին տակ:

Այսպիսի փոխանցման շրջանի մը, Խոստոմի մուտքը Պուլկարիա կարեւոր առաքելութիւն մըն էր:

Պէտք էր բարձրացնել ծողովրդի ընկենուած տրամադրութիւնները , կըրպելով նոր սերունդ յեղափոխական եւ ազգային առողջ դաստիարակութեամբ : Մամուլի միջոցաւ մերկապարանոց ընել հակառակորդի բոլոր ստուքի նները եւ քունաւոր պրոպագնանոր : Ահա թոսառոմի նշանարանը , որուն իսկապէս կառչած մնաց և որը հետապնդեց ու գործադրեց , ինչպէս պիտի գործադրէր ճարտարապետ մը , թուղթի վրայ պատրաստած իր յատակագիծը չինութեան պահուն :

Այս վսեմ նպատակին հասնելու համար , թոսառոմ զանած էր հետեւեալ միջոցները . 1. Ունենալ սեփական մամուլ , 2. Բանալ մասնաւոր վարժարան , 3. Զարկ տալ գեղարութեստին , 4. Կազմել դաշնակցական երիտասարդներու խումբեր , 5. Պուլկարահայութիւնը սիրցնել պուլկար ծողովուրդին եւ կառվարութեան՝ ամբացնելով անոր դիրքը զանազան տնտեսական ու քաղաքական ուսմագութիւններու դէմ :

1. Մամուլ — «Շարժում» թերթը արգէն կը հրատարակուէր Վառնայի մէջ , որուն կատարած դերի մասին յիշեցի արգէն : Երբ «Շարժում» սայթաքեցաւ իր ուղղութենին եւ նպատակէն , կորսոնցնելով զոյութեան իրաւունքը , լոյս տեսաւ «Խեզմիկ» Ֆիլիպէի մէջ՝ աւելի մեծ ծաւալով , իրմրագրապետութեամբ թ . Զարգարեանի : «Խեզմիկ» , վարսես , սիրուած ու փնտուած զրչի տակ , յեղափոխական չունչով , մեծ դեր կատարեց իր զոյութեան ընթացքին պուլկարահայութեան մէջ , մինչեւ որ Օսմաննեան Սահմանադրութիւնը վրայ հասնելով , իր խմբագրական կազմով անցաւ Պոլիս , ուր ճեռնարկուեցաւ «Ազատամարտ»ի հրատարակութեան :

2. Մասնաւոր վարժարան .— Որպէսզի անկաշկանդ կերպով կարենար կրթել ժամանակակից զաղափարներով օժտուած սերունդ մը , որ ամէն բանէ առաջ ըլլար առողջ մտածումի ու դաստիարակութեան տէր , զերծ որեւէ հիւանդու , վիճասակար եւ ազգային տեսակէտով սպանիէ մտայնութիւններէ , թոսառոմ որոշեց և իր կնոջ՝ տիկին Եղիշեաբէթի հետ բացաւ մասնաւոր վարժարան մը , ուր սկսան յաճախել նախապէս չորս-հինգ ազջիկներ եւ նոյնքան մանշէր , որոնցմէ առաջինները , կարծես , սահմանուած են եղեր կրթըւելու թոսառոմի չունչին տակ , ծառայելու համար նոյն ուղղութեամբ , միեւնոյն յարկին մէջ : Այսպէսով հետպհատ Զօրեան վարժարանը ժողովրդականացաւ եւ ահազին յեղացընում առաջ բերաւ Ֆիլիպէի հայ հատարակութեան մէջ : Հոն պաշտօնավարեցին ուսուցչական կոչման արժանաւոր եւ համապատասխան անձեր՝ Պիռնեան , Մանուէլեան , Մարզպետ :

3. Զարկ տալ գեղարութեստին .— Թոսառոմ կազմեց երգեցիկ թատերասէր խումբ մը , նպատակ ունենալով մէկ կողմէն գեղարութեստը սիրցնել հայ հատարակութեան՝ միանգամայն ստեղծելով ընտանեկան բոյներու մէջ համակիրներու մտերիմ մինուրում մը : Տալով թատերական ներկայացումներ հայկական կեանքէ՝ նպատակն էր կենդանի հետաքրքրութիւն ու շարժում ստեղծել հայ Դատին հանդէպ : Յոյց տալով հայաստանի զիւղացին

շիհակը, անմիերջ տառապանքները թիւրք անգութ պաշտօնեաներու լուծին ու քիւրտ պէկերու բռնակարսթեան տակ՝ այսպիսով յեզափոխականացնել հայ ժողովուրդը, վարժեցնելով դայն սիրելու Հայոսատանը և ընդունակ զարձնելու Հայոսատանի ազատապրութեան համար դոհովութիւններ յանձն առնելու : Թող շզարմանայ ընթերցովը, երբ յայտնեմ, թէ երդեցիկ խումբին ուսուցիչն ալ նախապէս ինքը թոստում էր : «Մէր Հայրենիք»ը եղաւ առաջին երգը խումբին : Հետպհնեմէ երգեցիկ խումբը եղաւ ստուարաթիւ և ունեցաւ իր պուլկար ուսուցիչը՝ Պոպով :

Թատերական ներկայացումներ սարքելու համար որոշ չափով ընդունակ երիտասարդներ ունեցանք . կը պահսկը միայն ազդիկ, որ բեմ ենելու համարձակութիւն ունենար . իսկ եթէ ասիկա զանել հնարաւոր ըլլար, ո՞ր հայ ծնողը պիտի յօժարէր տակէ ուղիղ ՅՈ տարի տալու իր աղջկան երենանալու բեմին վրայ հասարակութեան առջև : Այս ուղղութեամբ վնասուուքներ ու տարուած ջանքերը ապարդիւն անցնելով՝ որոշուեցաւ թատերախաղ մը ներկայացնել՝ վերցնելով ազջկան գերը : Դուրեանի «Սեւ Հոգերը եղաւ այդ խաղը : Թոստոմ, Մանուչէեան, Բարթող ևս ևս, քանի մը զիշերներ փորձեցինք տանել ազջկան գերը, բայց կէս համրուն վրայ իսկ տեսանք, որ խաղը կը դառնայ կմախք մը : Ընդհատեցինք մեր աշխատութիւնները մինչեւ որ, վերջապէս, կարելի եղաւ զանել զարգացած, ուսումնաւորա ազջիկ մը, որ առաջին անդամ բեմ պիտի ենէր՝ պատճառ զանալով, որ իր օրինակը վարակիչ դառնայ : Այդպէս ալ եղաւ . թատերական ներկայացումները մէծ ոգենորութիւն առաջ բերին Ֆիլիպէի հայ հասարակութեան մէջ, արթնցնելով խոր հետաքրքրութիւն և համակրութիւն ու սէր գէպի Դաշնակցութիւնը :

Ֆիլիպէի տենդու զործունէութեան արձագանքեցին միւս Հայաշատ քաղաքները : Եւ ամէնուրեք սկսաւ նոր ու տաք զործունէութիւն մը նոյն ուղղութեամբ :

Եւ այսպէս, թոստոմ յաջողեցաւ խաղաղ կերպով թափանցել հայ հասարակութեան ամէն խարի մէջ ևւ, որ զիխաւորն է, հայ տուներէն ներս մտցնել նոր մտքեր ու գաղափարներ :

4. Դաշնակցական երիտասարդներու խումբը — թոստոմէն առաջ Ֆիլիպէի մէջ զոյութիւն ունէր «Պետո Պուլկարացի» խումբը, որուն կը մասնակցէին Անտոն Գոչ, Թահմեզեան, Պետո, Նէվրուզ եւ ուրիշներ : Կազմուեցաւ «Արամեան» խումբը բոլորովին երիտասարդներէ բազկացած : Թոստոմ կ'անդամակցէր «Արամեան» խումբին, ամէն կիրակի կանոնաւոր կերպով ժողովներ կը գումարէին, ուր կը կարգացուէին յեղափոխական գրքոյիններ եւ այլ յարմար գրութիւններ . թոստոմ կու տար հարկ եղած լուսարանութիւնները, բացի ասկէ կը սորվեցնէր խումբին քաղաքատնտեսութիւն, որը խոր հետաքրքրութիւն առաջ բերաւ երիտասարդներու մէջ : Ֆիլիպէն այլին յեղափոխականացած էր : Շուտով «Արամեան» խումբը այնքան ստուարաթիւ եղաւ, որ անհրաժեշտ զարձաւ զայն երկուքի վերածել, երկրորդին անունն ալ մէրտելով «Վազգէն» : Այս խումբերէն զուրս եկան անձնազոհ երիտա-

սարդներ, որոնք եւ մեկնեցան Երկիր, ուր կատարեցին կարեւոր գերեր :

5. Պուլկարահայութիւնը սիրցնել պուլկար ժողովուրդին եւ կառավարութեան .— Պուլկարիոյ զիբքը աշխարհագրական տեսակէտով հայ յեղափոխութեան համար խիստ նպաստաւոր էր. իսկ պալկար յեղափոխական ժողովուրդը եւ անոր դեմոկրատ կառավարութիւնները բարեցակամ վերաբերում ունին հայերու. հանդէպ : Պուլկար ժողովուրդը իր մորթին վրայ զգացած էր թիւրք և աթաղանն ու բոնապետութիւնը : Եւ, սակայն, երկու առհմանակից զրացի պետութիւններու բարուոք յարաբերութիւններ ունենալու եւ քաղաքական անհրաժեշտութեան տեսակէտով, զոնէ առժամարար, կրնար Հ. Յ. Դաշնակցութեան նպաստակներուն եւ ընելիք ձեռնարկներուն արգելք ըլլալ Պուլկարիոյ մէջ : Իսկ տնտեսական տեսակէտով շատ հաւանական էր հականայ հոսանքի մը սաեղծուիլը, պուլկար ժողովուրդի լայն խաւերուն մէջ, որովհետեւ Պուլկարիա հիւրընկարուած եւ ապաստանած բոլոր հայերն ալ արհեստաւորներ եւ առեւտրականներ էին : Եւ պէտք է ըսել, թէ որոշ աշխատանքներ եղած էին պուլկար արհեստաւորներու կողմէ վառնայի մէջ, ուր հայութիւնը խոնուած էր շատ աւելի՝ հայ փախստականներու առաջին հանդրուանն ըլլալուն չնորհիւ :

Հոս պէտք է ի պատիւ պուլկար ժողովուրդին եւ անոր ներկայացուցիչներուն արձանագրել, թէ Վառնայի բողոքը եւ առնուած որոշումները Երեսփոխանական ժողովին կողմէ խստիւ մերժուեցան :

Նիստին նախագահող Վառնայի Երեսփոխան եւ դեմոկրատ կուսակցութեան պարագլուխներէն, երեսփոխանական ժողովի փոխնախագահ եւ նշանաւոր փաստարան պ. Նիփոլա Գընէքի հայոնպաստ հառէն յետոյ, ուր անհայերու ընդունակութիւնները, բարեմասնութիւնները եւ անոնց հալածական հանդամանքը ներկայացնելով՝ այնպիսի մթնոլորտ մը կը ստեղծէ ժողովին մէջ, որ նոյնիսկ հարցազնդում ընող երկու երեսփոխանները իսկոյն ես կը քաշեն իրենց զրութիւնը եւ ժողովը միաձայնութեամբ կ'որոշէ զգրադիլ անով եւ չընդդրկել հայահայած քաղաքականութիւն :

Ռեսուստ կը ջանար ամրացնել եւ ապահովիլ պուլկարահայութեան դիբքը յաշա պուլկար ժողովուրդին : Ուստի, պէտք էր գտնալ, որոնել յենարան մը : Այդ յենարանը եղաւ. մակեդոնական ներքին կազմակերպութիւնը : Ռեսուստ եւ Քրիստոնափոր մշակեցին յարաբերութիւններ նոյն այդ կազմակերպութեան հետ եւ շուտով մակեդոնահայ 11 յեղափոխականներէ կազմուած խումը անցաւ Թիւրքիոյ սահմանը, խտիրնէի ըրջանը : Մնացեալը ծանօթ է : Մակեդոնացի եւ հայ արիւնը իրար խառնուեցան՝ միեւնոյն թշնամիին դէմ կոռւելով եղբայրաբար : Երկու խմբապետներ՝ Մերձանօֆ և Պետո Սերէմճեան գէմ գիմաց կախուեցան խտիրնէի հրապարակը :

Մակեդոնահայ եղբայրակցութիւնը արիւնով նուիրագործուած էր :

Երեսուն տարի առաջ պուլկար պետութեան վարչական եւ զինուորական իշխանութեանց ամենաբարձր պաշտօնէութեան մեծագոյն մասը մակեդոնացիններն էին, ուստի զիւրին է այլեւս երեւակայել, թէ այս զէպքը ի՞նչ ահեղ ցնցում առաջ բերաւ եւ ի՞նչ եղբայրական համակրութիւն ստեղծեց

պուլկար ժողովուրդի բոլոր խաւերուն մէջ հայերուս հանդէս :

Եւ ինչե՞ր կատարուեցան ու դարբնուեցան Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ Պուլկարիոյ մէջ, միշտ վայելելով օրուան կառավարութեան ուղղակի կամ անուղղակի, իսկ ժողովրդի բացարձակ բարոյական օժանդակութիւնն ու համակրութիւնը :

Այստեղ արժէ յիշել երկու աչքառու գէպքեր : Մէկը՝ Քրիստափորի եւ ընկերոջ՝ Եղուարդի թաղման պարագան : Սոֆիայի թիւրք գեսապանը դիմում կատարեց նախարարութեան մօտ, որպէսզի անշուր կատարուի Քրիստափորի թաղումը՝ նկատել տալով, թէ ժողովրդական թաղում մը ցոյց մը պիտի ընդունաւէր իր կառավարութեան կողմէ՝ ուղղուած թիւրքիոյ զէմ : Քաղաքական կացութիւնը փափուկ էր եւ, սակայն, նախարարութիւնը անզօր էր, նոյնիսկ եթէ ուզէր ալ, զէմ երթալու մակեղոնական կազմակերպութեան եւ պուլկար ժողովրդի ցասումին : Եւ այն եղաւ, որ Քրիստափորի եւ ընկերոջ յուղարկաւորութիւնը զարձաւ չափազանց ժողովրդական : Դազազին կը հետեւէին մինչեւ գերեզման բազմանազար ժողովուրդ եւ 29 ծագկեպսակիներ :

Իսկ միւս պարագան, Սուլթանի մահափորձի հեղինակներ Թորգոմի եւ Քրիսի Թիւրքիոյ յանձնման խնդիրն էր : Նոյն թիւրք գեսապանը իմանալով, թէ Թորգոմ եւ Քրիս Ֆիլիպէ կը զանուին, կը զիմէ արտաքին զործոց նախարարին՝ պահանջելով յիշեալներու յանձնումը թիւրք կառավարութեան : Նախարարութիւնը նախօրօք հարկ եղած կարգադրութիւնները ըրած էր, որպէսզի երկու ընկերները փախցնենք անձանօթ վայրեր ժամանակաւոր կերպով : Եւ երբ Ֆիլիպէի նահանդապիտը կարգադրած է, որ, կէսօրէն յետոյ, ժամը 2ին, թիւրք հիւպատոսի գիտութեամբ յիշեալներու բնակարանները երթալոյ «Ճերբակալեն» զանոնք, արդէն մէկը Պայլովա, իսկ միւսը մօտաւոր գիւղ մը ճամբած էինք : Ու Երբ ոստիկանապետը ընկերակցութեամբ պաշտօնեաներու նախ ուղղուեցաւ Անտոն Գոչի բնակարանը, ուր կ'ապրէր Թորգոմ, պարզուեցաւ, որ այդպիսի զէմք մը գոյութիւն չունէր, ինչպէս նաև Քրիսի բնակարանին խուզարկութիւնը նոյն արդինքը տուաւ : Եւ արտաքին զործոց նախարարը տեղեկացուց թիւրք գեսապանին թէ, ճիշդ չէ, որ մահափորձի հեղինակները Պուլկարիա պապատանած ըլլան : Պուլկար պաշտօնեաները բթերնուն տակէն կը ծիծագէին Ֆիլիպէի թիւրք հիւպատոսին վրայ :

Շատ չանցած սոյն խնդիրը տարածուեցաւ պուլկար երեսփոխանական ժողովին մէջ, ուր բոլոր երեսփոխանները մէկ միտք մէկ հոգի վճռապէս ամէն զնով մերժեցին այդպիսի ստոր յանձնում մը զործել՝ հակառակ գլունլով զայն պուլկար սահմանագրութեան հիմնական օրէնքին :

Ես հոս զանց կ'առնեմ յիշատակելու շա՞տ նման զէպքեր ու պարագաներ, աւելորդ անզօմ հաստատելու, թէ ի՞նչ բարերեր ազգեցութիւն եւ հեղինակութիւն առաջ բերած էր մակեդոնահայ եղբայրակցութիւնը : Այսօր եթէ քաղաքական պայմանները այնպէս գասաւորուած են, որ այդ նոյն եղբայրութեան կապերը չեն կրնար իրական եւ չօշափելի ըլլալ, այնուամենայնիւ անոնք հօր ներգործութիւն ունեցած են, չնորհիւ այն հետատես քաղաքականութեան, որուն հիմը զբաւ թոստով :

Թոստով որպէս անհատ շատ բարի էր եւ բառիս ճշմարիտ առումով

սոցիալիստ, ոչ միայն գաղափարներով, այլև գործնականի մէջ։ Իր վերաբերութիւնը ձանօթ է «Դրոշակաբ բնիքեցողներուն։ Օրբինակ մըն աւ ես արձանագրեմ։

Ազանատես եղայ, որ որ մը ընկեր մը եկած էր Ռուսաստի մօտ հրաժեխտ առնելու համար։ Ընկերը Վառնա կը մեկնէր ամուսնանալու համար։ Ռուսաստի, հասկնալէ յետոյ թէ անիկա որբա՞ն դրամ ունի զրպանը, յայտնեց, թէ այդ զոմարը անրաւական էր ամուսնանալու եւ վերազառնալու համար, ու առանց սպասելու ընկերոջ տալիք պատասխանին, խնդրեց իր կնոջմէն, որ ոսկի ժամացոյցը եւ զդիան բերէ, ընկերոջ ալ պատուիրելով, թէ զնէ զանոնք աւանդ սեղանաւոր Պոյաձեանի քով, ինք շուտով ետ կը ստանայ վերազարձնելով զանձուած զոմարը։ Ընկերը ընդդիմացաւ եւ հազիւ կրցաւ համոզել՝ հաշիւ ներկայացնելով, թէ իր դրամը կը բաւէր յիւոլի։ Ու այսպէս, ետ կեցաւ Ռուսաստի իր առաջարկէն։

Հայ ժողովուրդը, ի մասնաւորի պուլկարահայ զազութը խորին յարգանքով եւ ակնածանքով պէտք է խոնարհի մէծ հայուն զերեղմանին վրայ, որ զիւցաւ ապրիլ ու մեռնիլ միայն հայութեան ազատագլուրեանը եւ բարորուրեանը համար։

«ԴՐՈՇԱԿ», թիւ 1-2, 1929

ՌՈՍՏՈՄԸ ՊՈԽՎԱՐԻՈՅ ՄԷՋ

Մարդիկ կան, որոնց մասին գրելը առաջին նայուածքով չատ հեշտ կ'երևայ: Ի՞նչ աւելի դիրին քան գրել մէկու մը մասին, որուն կեանքը կուռ եւ օգտակար գործունէութեան շարունակական շղթայ մը եղած է, բայց բաւական է զրիշը ձեռք առնել որ սկսիս տատանիլ, թերահաւատ ինքդ քու դէմ: Ինչպէ՞ս զրել, ինչպէ՞ս տալ զէթ էջ մը մէծ կեանքի մը ամբողջութեանչ:

Ահա թէ ինչո՞ւ զրիշը ձեռքս կը դողամ: Ինչպէ՞ս սկսիլ, ինչպէ՞ս տալ զէթ ուրուազիծը Ռոստոմի գործունէութեան մէկ մասին: Ռոստոմը իր ամբողջ կեանքին մէջ այնքան համեստ եղու, այնքան հեռու կեցաւ ցուցադրութիւններէ, որ իր մասին զրելու բնական դժուարութեան կը միանայ եւ այն վախը թէ արդեօք լար: Կ'ընեմ իր վրայ խօսելով եւ թէ ան, եթէ մեզի հստ ըլլար տակաւին, չպիտի՞ վշտանար, չպիտի՞ յանդիմանէր որ ես, իր աշակերտուհին, իր վրայ կը զրեմ:

Այդ տատանումը ինձ հետ է նոյնիսկ հիմա, երբ որոշած եմ խօսիլ Ռոստոմի, ըստ երեւոյթին, ամենախաղաղ գործունէութեան մասին: Խաղաղ անով, որ մահուան կամ ձերբակալութեան վասնզը չէր սպառնար իրեն: Խօսքս անոր Գուլզարիոյ մէջ անցուցած տարբիներու մասին է:

Անոնք որ ծանօթ են փոքր գաղութներու կեանքին, անոնք, որ զիտեն թէ հոգեբանութիւններու և բարգերու ինչ խառնուրդներ կային, զանազան հայկական անկիւններէ եւ աշխարհի չորս կողմենք հաւաքուած զաղութի մը մէջ, մանաւանդ 25-30 տարի առաջ, անոնք պիտի հասկնան թէ ի՞նչ կը նշանակէ գործել այդպիսի միջավայրի մը մէջ: Ֆիլիպէն, որ Ռոստոմ ընտրած էր իր գործունէութեան կեղրոնը, ունէր մօտաւորապէս 1000 տուն հայութիւն, մէծ մասամբ տաճկախօս եւ սաստիկ պահպանողական: Ոչ մէկ շարժում: Թաղականի եւ հոգաբարձուի ընտրութիւնները մէկ-մէկ փոքրիկ շարժում մը յառաջ կը բերէին, շարժում մը սակայն, որ միայն վերին խաւերու մէջ տեղի կ'ունենար. խօսքը աղայինն էր: Ահա այսպիսի միջավայրի մէջ էր, որ Ռոստոմ եւ իր տիկինը բացին մասնաւոր դպրոց մը:

Բանալ զպրոց մը, ուր ազաները արդէն իրենցը ունէին, հերոսութեան հասնող յանդգնութիւն մըն էր: Անհաւատալի աղմուկ մը առաջ բերաւ այդ զպրոցի բացումը: Ազաներու շշմանքին, զարմանքին այդպիսի յանդգնութեան դէմ՝ յաջորդեցին զպյոյթը և պայքարը ամէն զէնքերով: Անոնցմէ ումանք չվարանեցան անզամ տաճիկ հիւպատոսին միջոցաւ պուլկար կառավարութեան դիմելու եւ բողոքելու, որ Ռոստոմի զպրոցին մէջ ուումբեր կը պատրաստուին թիւրք կառավարութեան դէմ: Այնպէս որ պուլկար կառավարութիւնը ձեւական քամի մը խուզարկութիւններ կատարել տուաւ զպրոցին

մէջ : Զեւական, որովհետեւ կառավարական չըջանակները, որոնց մէջ աւքի կը զարնէին մակեղոնակոն յայտնի գործիչներ, շատ լաւ դիտէին թէ ի՞նչ էր զպբոցի նպաստակը : Ազաները այնքան առաջ զացին, որ պուլիտր կառավարութենէն պահանջեցին Խոստոմի հեռացումը Պուլկարխիչն, յուսալով անոր հեռացումով կանեցնել այն շարժումը, որ զպբոցի սկսած էր :

Ի՞նչն էր որ այսքան իրարանցման պատճառ եղած էր : Նախ այն, որ Խոստոմի և իր տիկնոջը զպբոցը այնքան համակրութիւն զբաւած էր, որ միջին զասակարգը և արհեստաւորները կը համարձակէին իրենց զաւակները անոր վարժարանի դրէել : Ալ չէին բայր այսինչ տղան բառ, այլ՝ Խոստոմը ըստու Խոստոմի խօսքը պատզամի պէս կ'ընկունուէր : Այնպէս որ երկու տարի վերջ ամբողջ Ֆիլիպէի հայութիւնը, աղաները շնչազուած, Խոստոմի հետ էին :

Վարժարանին հետ գուզընթաց մինչեւ այն ատեն չլսուած գործունէութիւն մը կը սկսէր : Կը կազմուի իին կանանց խմբեր, Կարմիր Խաչ, Շաքէի խումբ, Արիներու խմբեր, Խատրոնական և երած շտական խմբեր, Երդշախումբ, զիշերային զասախօսութիւններ աշխատաւորներու համար : Բոլոր այս խմբերու հաւաքատեղին վարժարանն էր : Ֆիլիպէի հայութիւնը քանի մը տարուայ մէջ անձանաւչէլի կը զառնոր :

Խոստոմ բոլոր խմբերու մէջ էր, անոնց ոգին էր . զպբոցին մէջ առուջ էր և զասախօսութիւնը մէջ իր չափնեցած ձայնով կ'երպէր միայն իր ներկայութեամբ քաջալերէլու համար . ներկայացումներու կարգադրէն էր, շատ անզամ յուշարարը, զիշերային զասախօսութիւններու զասախօսը, չարգաններու վարիչ, մարզական խմբերու առաջնորդ : Մարզիկ կը զարմանային թէ ինչ հրաշքով այդ անզայ զական մարզը կը համէր բոլորին : Այս բոլորին զատ ան ունէր և իր կուսակցական ժողովները : Պուլկարխին արդ ժամանակ յեղափոխական պատասխանառու գործերու կեղրոն էր : Հայմակեկոնական բարեկամութիւնը սկսաւ և հասունցաւ Խոստոմի օրով ու անոր չունչին տակ : Պուլկար վարչները դեռ մինչեւ հիմա ալ չեն մոոցած իրենց «սքանչելի» Խոստոմը :

Գացէք Ֆիլիպէ կամ Պուլկարիոյ ո՛ր քաղաքը որ կ'ուզէք և հետաքրքրութեցէք հասարակական բնոյթը կրող որեւէ հաստատութիւնով և պիտի տեսնէք, որ նախաձեռնարկը եղած է կոմ' Խոստոմի աշակերտներէն մին, կամ լարանը յաճախողներէն, վերջապէս մէկը, որը այսպէս թէ այնպէս կրած էր այդ մէծ մարդու բարոյական աղեցութիւնը :

ՌՈՍՏՈՄԻ ԿԵԱՆՔԻՆ

Թոստոմը ուր որ ըլլար, միայն կազմակերպական գործերով չէր զրադէր, այլ ամէն բանով, որ հասարակական զարգացման կրնար նոպաստել — երգեցիկ, թատերասէր, մարմնամարզական խմբեր, զպրոց, ընթերցարան — եւ ոչ մէկ դժուարութեան առջև կանք չէր առներ: Օրինակ, Ֆիլիպէի մէջ երգեցիկ խումբ մը կառավարելու յարմար մէկը շկար: պուլկար մը համարած էր, որը թոստոմի հանդէպ ունեցած համակրանքին պատճառով սիրով եւ շատ շնչին վարձատրութեամբ ստանձնած էր երգեցիկ խմբի ուսուցչութիւնը: Բայց երգեցիկ, թատերասէր խմբերէն, իր ջանքերով չէր, որ կազմը և եցաւ. «Վահագն» մարմնամարզական խումբը, պուլկար մարզիկներու խումբը օրինակով եւ առաջնորդութեամբ: Հետազային այդ խմբի անդամներէն շատերն էին, որ զանազան վայրեր հայերու մէջ մարմնամարզական խըմբեր կազմեցին:

«Վահագն» մարմնամարզական խմբի առաջին բացման հանդէսին մեր երգեցիկ խումբն ալ պիտի մասնակցէր քանի մը երգերով, բայց, մասնաւանդ, նորութիւն մը պիտի ըլլար միջազգային քայլերզը (Խոտերնասփոնալը): Թոստոմը Ժընեվէն բերել տուած էր նոթաները եւ բառերն ալ հայերէնի թարգմանելով երգին յարմարցուցած:

Այդ գիշեր առաջին անգամ ըլլալով հայ հասարակութիւնը ունկնդրեց այդ քայլերզին, որը շատ յաջող անցաւ: Խիստ լաւ տպաւորութիւն թողուց հասարակութեան վրայ եւ քանի մը անգամ կրկնուեցաւ:

Բայց հանդէսին հետեւեալ օրը թոստոմը հրամիրուած էր ոստիկանատուն, ուր իրեն ազգարարուած էր, որ այդ քայլերզը Պուլկարիոյ մէջ արգիլուած է եւ որեւէ հանդէսի պէտք չէ որ երգուի: Հանդէսներու մէջ այլ եւս չկրկնուեցաւ, բայց զպրոցական աշակերտներու եւ երգեցիկ խմբի անդամներուն միջոցաւ այնքան տարածուեցաւ, որ շատ ընտանիքներու մէջ սիրով եւ ոգեւորութեամբ կ'երգէին երկար ժամանակ:

Թոստոմի միջոցաւ միջազգային քայլերզը աւելի շատ եւ անարգել տառածուեցաւ երգումի մէջ, Օսմ. Սահմանադրութենէն յետոյ, ուր թոստոմը երկսեռ վարժարաններու ընդհանուր տեսուչ էր: Ի՞նչպէս շուտ կրցած էր անհամախմբել իր շուրջը երիտասարդութիւնը. ի՞նչպէս ամէն մէկսուն հետ վարուելու եւ ամէն մէկը գործի լծելու զազտնիքը գիտէր. իրեն համար անկարեւոր ոյժ չկար: Ի՞նչպէս Ակնունին Քրիստոֆորի վրայ դամբանական խօսած ատեն ըսաւ՝ «նա մարդ էր շինում...», նոյնը կարելի է ըսել եւ Թոստոմի մասին. ան ալ «մարդ էր շինում»:

Շատերը կը զարմանային, թէ ի՞նչպէս այսինչ ուսուցիչը, որ ժամ մը աւելի զասի համար ուսումնական խորհրդի հետ ժամերով կը սակարէիր,

Հիմա 2-3 ժամ կը սուսնանէ առանց զբամբի խօսք ընկլու : Կամ ուրիշ քանի մը ուսուցիչներ եւ ուսուցչներ, որոնք կարծես մենաշնորհ ըրած են Եղեր բնաւ մանկավարժական ժողովներու շյամախել, սկսած էին շատ կարգապահութեամբ ամէն ժողովին ներկայ լինել անորոշունջ, ի զարժմանս իրենց նախկին պաշտօնակիցներուն :

Ի՞նչ կրնային առարկել, պարտաձանաշութեան կենդանի օրինակը կար : Այն տարին թոստոմը ծրագրած էր Մայիս 1ը տօնել եւ Երկու ամիս առաջ սկսաւ երգեր պատրաստել տալ, զարձեալ իր սիրելի Միջազգայինը առաջին հերթին :

Աշակերտական մէծ զրոսանք մը կազմակերպուած էր . ծնողներն ալ հրամիրուած էին մասնակցելու : Մէծ զաշտահանգչս մը սիրտի ըլլար եւ, բարերախտաբար, եղանակն ալ նպաստաւոր էր : Այն օրը շատ երգեր երգուեցան, բայց ամենէն աւելի Միջազգայինն էր, որ կրկնուեցա : Ժողովուրդին շատեր ալ արդէն սորցած էին եւ կը մասնակցէին երգեցիկ խումբերուն :

Այնպիսի ոգևորութիւն կը սիրէր ամէն ասպարէզի վրայ եւ այնպիսի եռանդու զարծունէութիւն սկսուած էր, որ թոստոմը, հակառակ իր շատ յոդնելուն, երբեմն կը կրկնէր . «Շատ չէ, տասը տարի եթէ թիւրքերը մեզ այսպէս ազատ թողնեն, այս ժողովուրդը հրաշքներ կը զործէ : Տեսնում էք այսքան քիչ ժամանակուան մէջ ինչքան յառաջդիմութիւն»...

Շատ տարիներ վերջը, երբ բոլէւիկնան կառավարութիւնը եկաւ. հաստատուիլ երեւան եւ երբ առաջին անգամ Խնայերնասիռնալը լսեցի, սաստիկ յուզուած՝ չէի կրնար արցունքներո զսպել հակառակ բուռն ճիկերուս : Զէի ուզեր, որ մարդիկ նկատէին եւ սխալ մեկնութիւններ տային : Այդ վայրկեանին ամէն բանէ աւելի միայն թոստոմի կորուստն էր, որ անզամ մը եւս զառօրէն կ'ողբայի ու կը մտածէի .

— Կեանքի ի՞նչ զան հեղնանք, ան, որ այս երգը, զաղափարներն այ միամին, սիրով եւ օրինակով կը տարածէր, այլեւս չկայ . իր զաղափարակից ընկերները հալածական...

Ամենավսեմ զաղափարն ալ ինչքա՞ն կ'այլանդակուի, երբ ստոր քաղաքականութիւնը խառնուի անոր :

ԲԵԿՈՐ ՄԸ ՌՈՍՏՈՄԻ ԿԵՍՆՔԵՆ

Երեւանի մէջ, համեմատաբար երկրողական փողոց մը մկրտած էին թոստոմի անունով։ Զինքը շատ մօտէն ճանչողի մը համար ասիկա շատ քիչ զնահատում էր, բայց պոլէեփեան կառավարութիւնը այդ ալ շատ տևաւ իրեն։

Երբ առաջին անգամ նկատեցի նախկին Թարխանեան փողոցի փոխութը թոստոմի անունով, իր բնաւորութեանը եւ հոգիին չափազանց յատկանը-շական եղող հւետեւալ գեղեցիկ արարքը յիշեցի եւ ակամայ համեմատութիւններու շարք մը մկան մտքիս մէջ...»

Թոստոմը եւ տիկինը 1901ին Պուլկարիա էին եւ միասին հայ մասնաւոր վարժարան մը բացած էին։ Մէնք ալ՝ չորս օրիորդներ, նոյն զպրոցին մէջ աշակերտուհի եւ միեւնոյն ժամանակ վարժուհի էինք։ Հետզհետէ աւելի մտերիմ յարաբերութիւն կը ստեղծուիր մէր եւ անոնց մէջ, եւ փոքրիկ-ներու արձակուրդէն վերջ, երեկոյեան մէր դասերը մտերժական ու հետաքրքրական խօսակցութիւններով կը վերջանային։

Ուսումնարանը թէւ լաւ ընդունելութիւն գտած էր Ֆիլիպէի հասարակութեանէն, բայց նիւթապէս ապահով վիճակի մէջ չէր։ Ակամուտը ծախսը չէր զոցեր եւ զիտէինք, որ թոստոմը եւ տիկինը շատ զոհողութիւններ կ'ընէին ու ստիպուած էին շատ համեստ կեանքով ապրիլ։

Զմեռուան սկիզբն էր, եւ թոստոմը վերաբկու շոնէր։ Նախորդ տարուանը բնաւ ներկայանալի չէր։ Տիկնոջ թախանձանքով շատ դժուարութեամբ թոստոմը համաձայնած եւ իրեն համար նոր վերաբկու մը դնած էր։ Մէնք շատ ուրախացանք եւ նոյնիսկ չնորհաւորեցինք։ Կ'ուզէինք, որ մէր սիրելի ուսուցիչը եւ մէր վարժարանին ներկայացուցիչը լաւ հազուած երեւար։

Ճիշջ այն ժամանակ էր, որ պատահած էր Մուլթաֆա-վիաչայի տը-խուր դէպքը Պուլկար-Մակեդոնական կոմիտէի գործակցութեամբ եւ այդ դէպքին առթիւ Պետրոս Սերէմմէնան եւ իր մի քանի ընկերները էտիքնէի մէջ բանտարկուած էին։

Թոստոմը իր նոր վերաբկուն հագիւ երկու շարաթ անցած՝ նկատեցինք, որ ան նորէն սկսաւ իր հին վերաբկուն հագնիլ։ Մէնք միամբ-տութեամբ լաւ պահպանելուն վերազրեցինք։ Քանի մը օր վերջը, երեկոյեան, մէր սովորական դասը վերջանալէն ետքը, տիկինը մեղ դիմեց՝ «Աղջուկէրք, դուք հարցըւ էք ձեր պ. Թոստոմին, թէ ինչու իր նոր վերաբկուն չի հազնում»։ Մէր չորսին նայուած քններն ալ հարցական ուղղուեցան զիսի իրեն։ Թոստոմը ժամանեցաւ իրեն յատուկ արտայայտութեամբ՝ միեւնոյն ժամանակ, կարծես, մէր մտածումներու խորը զննող նայուածք մ'ուղղելով մէր գէմքին, իսկ տիկինը կը շարունակէր։ Ճամ իր նոր վերաբկուն ուղարկել է

բանտի իր ընկերոջ՝ Պետրոս Սերէմճճանին»...

Մենք շուարեցունք ու թէւ այն ժամանակ յետպատերագմեան այս ան-  
բարոյացուցիչ նիւթապաշտութեամբ չէին տողորուած մեր հոգիները և բն-  
դունակ էինք զազափարական զոհողութիւններու, բայց և այնպէս չկրցանք  
ըմբռնել այդ արարքին մեծութիւնը: Եւ մէկը մեր մէջէն հաղիւ լսելի մըր-  
մընջաց. «Հինն ալ կրնայիք զրկել»: Խոստոմը միայն ժպտեցաւ իր բարի և  
ամէն բան ներող ժպիտով...

Քսան տարիներ անցած էին: Խոստոմը մեզմէ հեռացած էր բացառիկ  
լաւ և զազափարական մէկու յիշատակը թողլոյ: Մենք ցիր ու ցան՝ շատ  
բաներ մոռցած էինք անցեալին: Բայց ամէն անզամ, երբ Խոստոմի փողո-  
ցէն կ'անցնէի, կը յիշէի զինքը: Մանաւանդ ամէն անզամ, երբ ցրտահար ու  
սովտահար անկիւնը կծկուած կնոջ կամ երեխայի մը քովէն նոր վարիչներու  
անցնիլը կը տեսնէի իրենց մուշտակներով կամ տաք վերաբկուներով, առանց  
նայուածք մը իսկ ու զզէլու այդ դժբախտ արարածներուն, կը խորհրդածէի.

— Քարոզել և քարոզածը զործազրել, որքա՞ն հեռու են իրարմէ, որ-  
քա՞ն քիչերը միայն ընդունակ են ատոր...

«ԹԻՇԱԿ», թիւ 8-10, 1926

Այդ երեկոյ իսկ հայկի առաջնորդութեամբ զացի թոստոմը տեսնելու : Դժուար թէ կարողանամ ձչգրտօրէն պատկերել իմ առաջին տպաւորութիւնս այդ սքանչելի մարզու մասին : Տարիներու երկար շարք մը և կատ անցաւ եւ սակայն ամրող քանակ տարրուայ ընթացքին չեղաւ եզակի դէպք մը , որ գէթ ժամանակաւոր կերպով զիս ասիպէր վերագնահատումի ենթարկելու իմ առաջին անգամին իսկ կազմածս անսահման հիացման տպաւորութիւնը : Ընդհակառակը , տարիներու ընթացքին աւելի հնարաւորութիւն տնեցայ խորապէս զնահատելու : Եւ սիրելու այդ եզակի մարզը , որուն անսահման բարութիւնը , պարզունակ հոգին , երիտասարդները քաջալերէլու անձիգ կերպը մեր կուսակցութեան մէջ բացատիկ զիք մը ստեղծեր էին իրեն :

Զես զիտեր , թէ ինչի՞ մէջ չը իր ուժը : Եւ սակայն չէիր կրնար չխոնարհիլ այդ ուժին առջին : Լիտըր մ'էր , առանց զիտանալու կամ զզացնելու , բարոյական խոշոր արժէք մը , որու զոհունակ ժպիտը միայն , բաւական էր ծայրակեղ զոհողութեան ընդունակ դարձնելու ոնեէ երիտասարդ :

Զեմ զիտեր ինչօ՞ւ , ես միշտ թոստոմը խոտերու մէջ թաղուած զարնան մանուշակի եմ նմանցուցեր . հազիւ թէ կ'երեւի եւ սակայն բուրմունքը կը զզաս , անով կը զինովնաս :

Ինձի կը թուի , թէ թոստոմին հանդիպելով ես Քրիստափորի շարունակութեանը կը հանդիպիմ , այնքան անոնք նման էին իրար որոշ զծերով :

Սիմոնի նամակը յանձնեցի իրեն , որով կը յայտնէր թէ իր աշակերտներէն եմ եղած Տքապիդոն , Ամերիկայի ընկերներէն , որ երկիր եմ անցնելու :

Վերէն վար զիս չափչիւով թեթև , բարի ժպիտ մը ուրուազծուեցաւ դէմքին : Յանձնաբարեց հայկին որ ինձ ուշաղրութիւն դարձնէ , քանի որ թէ՛ տեղական լեզուին եւ թէ՛ քաջարին բոլորովին անձանօթ մ'էի :

Բաժնուեցանք իրարմէ՝ յաջորդ օրը տեսնուելու խոստումով :

\* \*

Թանի մը օրեր անցան : Ես սկսնակի իմ անհամբերութեամբ կ'ուզէի , որ օր առաջ զրութիւնս որոշուէր , ու ... երկիր անցնէի : Ինձի կը թուէր թէ երկիր անցնելու միտքը բաւական է . զեւ չէի զիտեր , թէ ահազին զժուարութիւններ կային առջեւս : Խամ էի : Մինչեւ որ ես ալ իմ կարգիս հինցայ , շատ փորձանքներ անցան զիլովն :

Զորորդ կամ հինգերորդ օրն էր , եւ ահա նոր պատմութիւն մը : Խոստոմը իր հանգարտ կերպով առաջարկեց , որ «Փոքորիկ» մէջ մտնեմ , որպէս հարուստներուն ներկայացող զործակալը կուսակցութեան : Եւ երկարուէն բացատրեց ինձի Փօքորիկի հութիւնն ու կատարած եւ կատարելիք աշխատանքը :

Աելքիս պառկելու բան չէր, բայց դէ՛ս ինչ օրուան յեղափոխական էի, որ մերժէի... միայն ըսի, որ ոչ իզուն զիտեմ, ոչ ալ քաղաքը կը ձանձնամ, իսկ այդ երկու յատկութիւնները անհրաժեշտ են գործի յաջողութեան համար :

Պղտիկ քաղաքականութիւն մըն էր բրածս ու Ռուսումը հասկելով վարպետութիւնս, սկսաւ ծիծաղիլ : Զգաց, որ խելքս միտքս երկիր երթալու վրայ էր, մասմ ալ, խեր մը չպիսի բերեմ :

Բարեխախառութիւն էր, որ այդ ժամանակ Սալմաստի ներկայացուցիչ Սամսոնը, երկար տարիներ այդ չըջանը մնալին բեզարած, դիմած էր Բիւրոյին, յայտնելով, թէ կ'ուզէ զէթ ժամանակաւոր կերպով հեռանալ . Կը խնդրէր, որ իր տեղոր ուրիշ մէկը զրկուի :

Ռուսումը ըսաւ ինձ, որ երթամ ուղիղ թաւրիզ ու անկէ Սալմաստ, ուր թէ՛ գործերուն կը ծանօթանամ, ու թէ լաւ պատեհութիւն մը լինելու պարագային կ'անցնիմ երկիր : Քանի մը անդամ կրկնեց, թէ Ե՛՛ ամիս աահմանի վրայ աշխատիլը վերջին երկրին մէջ գործելու համար չատ օգտակար կը լինի :

Այն ժամանակ դեռ լաւ չէի հասկնար Ռուսումի հեղնական նուրբ ժը-պիսը : Շատ տկար թոքերով, նիհար, աղջկայ քնքշութեամբ, ելեր էի երկիր երթալու, կարծես այդ հարսնիք երթալ լինէր :

## ՄԻՔԱՑԵԼ ՎԱՐԱՆԴԵԱՆ

ՊԱՅՔԱՐԾ՝ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՆԵՐՈՒ ԳՐԱԽՄԱՆ ԴԵՄ

Տեսդի, յուզումի այդ օրերուն՝ հոն էր, Արարատեան Երկրին մէջ՝ «Դաշնակցութեան» հին, անխօնչ առաջամարտիկր, գևանայրիկերու, մոթ, խորհրդաւոր գարաններու հոյակաղ գաւաղիրը — Ռուսում:

Շատարշապ կազմակերպուցաւ, մերիններու նախածեռնութեամբ, միջկուսակցական յատակ մարմին, որ պիտի հանգիսանար պրոպագանդի ու արժման բերան։ Անոտանեցին արդ մարմինը «Հայկական Խնճապաշտանութեան կեդրուսական կոմիտէ»։ Անոր մէջ մտան այլ եւ այլ տարրեր՝ վարելու համար զործ մը, որ համազգային բնոյթ ունիք։ Մտան նաև սոց-գեմոկրատ հայազգի բնկերփարականները։

Ահա թէ ինչ կ'ըսէր այդ յատուկ մարմինը իր հրատարակած թոռուցիկներէն մէկուն մէջ, շարժման տաք վայրիկեաններուն։

«Փուս կառավարութեան զիմակր պատուած է։ Բոլոր հայ տարրերը հասկացել են նրա խարդախ նկատակները — ոչնչացնել հայ ժողովուրդի ինքնուրյանութիւնը, ոչ մի միջոց չինայել՝ ձուլելու նրան։ Եւ հայ ժողովուրդը ընդունեց ուրախութեամբ անհաւասար կոփեր, որ լիբր կառավարութիւնը յայտարարել է հայութեանը... Թշնամին ուժեղ է... ունի զօրք ու թնգանօթենք, իսկ մենք զբանից եւ ոչ մէկը։ Մեր միակ զէնքը արդարութիւնն է... մէկը այն բարձր ուժերից, որ կարողացել է... մեծամեծ պետութիւններ ջախջախելու...»

Ի՞նչ կ'ընէր էջմիածինը։ Աւելորդ է բաել, որ մեր վեկարաւորներու մտցոլիս անզամ չէր անցներ ցարի կամքին դէմ ըմբռատանայու զաղափարը։ Շատեր առաջին իսկ վայրկեաններէն ցոյց տուիք զիջելու տրամադրութիւն։ Ցարը յայտարարած էր, որ և կեղեցու սպասաւորները կանոնաւորապէս պիտի ստանան իրենց ոռոճիկները։ այլեւս ի՞նչ էր պէտք հայ կղերին... Ամենէն ըմբռուա եւ սրտցաւ վեկարաւորներն անզամ — եւ նոյն ինքը Հայոց կաթողիկոսը — չէին համարձակեր իրենց խորունկ վրդովմունքը արտայատել — այնքան զարհուրելի կը թուէր անոնց՝ ցարիզմի վրիժառու բռունցքը... Հայոց կ'ըմբռուանար սուլթանին դէմ, զիանալով, որ իր ու այդ սուլթանին միջեւ կայ Եւրոպան, կայ միջազգային դաշնազրի «հովանին» ու երաշչիքը։ Բայց այստեղ, Ռուսաստանի մէջ, ցարը գերազոյն իրաւարար էր եւ ոչ ոք կարող էր միջամուխ լինել անոր ներքին զործերուն...»

Զարմանալի չէր այն սահմակումն ու խորտակուած տրամադրութիւնը, որ կը տիրէր իջմածնուում։ Վտանգ մը կար այդ կողմը... Հոգեւոր իշխանութեան զիջումը մէծապէս պիտի քաջալերէր թշնամին եւ պիտի վհատեցնէր ժողովուրդը։ Հարէ էր փութալ ազգելու նախ հոգեւոր զասակարգին վրայ։ Եւ ահա օր մը դաշնակցական պատզամաւորը յանուն Հայկական մինք-

նապաշտպանութեան կոմիտէի», գաղտնի, խորհրդաւոր այց մը տուաւ էջմիածին, քանի մը կարուկ բացատրութիւններ ու յորդորներ ըրտւ, մանաւորապէս թուլամորթ, ստրկամիտ ճանչցուած վեղարաւորներուն եւ հեռացաւ:

Նոյնինքը Խոստուն էր: Այցի զինաւոր նպատակն էր՝ համոզել հայոց կաթողիկոսին, որ հրատարակէ իր հանդիսաւոր մերժման կոնդակը, ի պատասխան ցարի ու կաղին: Մեր ընկերը կը խոստանար Դաշնակցութեան կողմէ ամէն աջակցութիւն: Կոնդակը հրատարակուեցաւ: Եւ անմիջապէս յետոյ լոյս տեսաւ նորակազմ Ինքնապաշտպանութեան Մարմնի առաջին «Ազդ»ը, որու միակ օրինակը գտեր է նոյն Խոստումը ուրիշ վաւերազրերու հետ, 1917ին, Պատերքութիւն ցարական կառավարութեան Դիւնին մէջ:

ՀՀ. Յ. ԳԱԵՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ», Ա. Խոր., էլ 336-337:

ԻՄ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՌՈՍՏՈՄԻ ՀԵՏ

Թոստոմին առաջին անգամ հանդիպեցի 1903ի դարնանը՝ առանց իմանալու, որ նա թոստոմն է եւ առանց գաղափար ունենալու այն զերի մասին, որ նա կատարել էր եւ կատարում էր Դաշնակցութեան մէջ։ Սակայն, այդ առաջին հանդիպումն իսկ անջնջելի հետք թողեց ինձ վրայ։

1901ի վերջերից սկսած կուսակցական կեանքը եռուղեռի մէջ էր Այդ գետանում (Գանձակ)։ Կարծէք վերահաս փոթորիկների կանխագգացութեամբ՝ հայ ժողովուրդը խուռներամ զիմում էր դէպի Դաշնակցութեան շարքերը թէ՛ քաղաքում և թէ՛ զիւղերում։ 1903ի սկզբին ես էլ մտայ Դաշնակցութեան մէջ։ Եւ որովհետեւ ազատ ժամանակ ունէի — սպառում էի աշխանը համալսարան զնալու համար — աշքի ընկնող մասնակցութիւն ունեցայ իսմբերի կազմակերպութեան զործում եւ մինչեւ իսկ ընտրուեցի Այդ գետանի կոմիտէի անդամ։

Գարդան սկզբներին կոմիտէն պէտք է մարդ ուղարկէր Թիֆլիս՝ Բիւրոյին դրամ տանելու եւ կազմակերպական զործերի մասին զեկուցում տալու համար։ Եւ որովհետեւ, ինչպէս ասացի, ազատ ընկերը ես էի, այս պաշտօնը յանձնեցին ինձ խստի պատուիրելով, որ դրամը առանց Բիւրոյի ստացականին ոչ ոքի չյանձնեմ։

Հաւ յիշում եմ, մի շարաթ օր էր, երբ ես ներկայացայ կոմիտէի նամակով թժ։ Տէր-Դաւթեանին, որի միջոցով յարաքերութիւն էինք պահում Բիւրոյի հետ — եւ բացատրեցի Թիֆլիս զալսու նպատակը։ Նա մի տոմսակով ճամբեց ինձ Կովկասեան Գիւղատանտաւական Միութեան զրասենեակներից մէկը, ուր ինձ ընդունեց վերին աստիճանի բարեհամբոյր զէմքով, թիկնեղ եւ բարձրահասակ — չզիտեմ ինչու նա ինձ բարձրահասակ երեւաց — մի անձնաւորութիւն։

Կարդալով ընկ։ Տէր-Դաւթեանի տոմսը եւ Այդ ստանի կոմիտէի նամակը՝ անձնանօթ անձնաւորութիւնը նախ ու շաղրութեամբ լսեց իմ զեկուցումը եւ ապա սկսեց ինձ հարց ու փորձ անել մեր կազմակերպական զործերի մասին այնպիսի մտերմութեամբ և հետաքրքրութեամբ, ինչպէս որ կ'անէր մի ծնող՝ հեռու օտարութեան մէջ զանուող իր զաւակների մասին։ Երբ բոլոր հարցերը սպառուեցին, ես նրա առաջ զրի բերածս դրամը։

— Հազար բուրլի՞ է։

— Այո՛։

Զրոցակիցս, որ առաջին անգամն էր ինձ տեսնում եւ անունս իսկ չը գիտէր, առանց համբելու զրամը ծոցի զրպանը զրաւ։ Նրա այս վարմունքի մէջ այնքան վաստանութիւն կար իմ հանդէպ, որ ես ամաչեցի ստացականի մասին խօսք անել։

Այդ եստանի կոմիտէն, ի հարկէ, զորս գու պատուիրեցիր, յանդիմանց ինձ, որ ստացաղիր չէի պահանջել: Ումանք սկսեցին մինչեւ անդամ կառակած յայտնել, թէ ես մի խարերայի զու եմ գնացել, որովհետեւ առում էին նորա, «Բիւրոն առանց ստացական տալու երբեք դրամ չէ ընդունում»: Կառակածներն ոյժ էին առնում մանաւանդ այն պատճառով, որ «խարերան» կարիք էլ չէր զգացել զումարն ստուգելու. ո՞վ է համրում «դուած» դրամը...

Մի քանի օրից անդորրակիրը ստացուեց, ի հարկէ, եւ կասկածները փարատուեցին. ստկայն, այն թմբերական վստահութիւնը, որ ես առաջին անգամ տեսայ մի անծանօթ անձնաւորութեան կողմից դէպի մի ուրիշ անձնօթ անձնաւորութիւն՝ չատ խորունկ տպաւորութիւն թողեց վրաս, թէեւ տարիներ պիտի անցնէին, որպէսզի ես հասկանայի, որ այդ վստահութիւնը մեր գաշնակցական ընկերականութեան հիմնական խարիսխներից մէկն է կազմում...

\* \*

Երկրորդ հանդիպումու եղաւ Վիեննայի Ընդհանուր Ժողովին (1907), որին մասնակցում էի իրրեւ Եւրոպայի զաշնակցական ուսանողութեան պատգամաւոր: Այդ ժամանակ ես այլևս թողթովախօս պատանի չէի, այլ «հասուն» երիտասարդ եւ մանաւանդ յաւակնութիւններ ունեցող զաշնակցական: Զէ՞ որ ես մի քանի հասարակագիտական զրքեր էի կարդացել եւ մի երկու շարք յօդուած զրել կովկասեան մեր թերթերում ընկերվարութեան եւ բանուորական շարժումների մասին: Եւ մի՞թէ այսքանը բաւական չէր, որպէսզի ես ինձ իրաւունք համարէի «քննադատական» վիերարեմունք ունենալու դէպի Դաշնակցութեան գործունէութիւնն ընդհանրապէս եւ դէպի նրա անդրկովկասեան գործունէութիւնը մասնաւորապէս...»

Պէտք է ասել, որ այս յաւակնութիւններով ես մէնակ չէի ընդհանուր ժողովում: Կային ուրիշ երեք հոգի էլ — Աւ. Շահիսաթունեան, Ս. Վացեան եւ Մաշուրեան: Չորսու միասին կազմում էինք Ընդհանուր Ժողովի «անշատական» հատուածը: Մեր նպատակն էր անջատել իրարից թիւրքահայ եւ ուսահայ դատերը, որոնցից առաջինի գլուխը պէտք է կանգնէր հին, «ազգային Դաշնակցութիւնը», իսկ երկրորդի համար ստեղծուելու էր մի «եռոր Դաշնակցութիւն», զուտ ընկերվարական ծրագրով, որ իր զրօշակի տակ պէտք է համախմբէր հին Դաշնակցութեան շարքերում զանուող աշխատանուրական եւ ընկերվարական տարրերին: Այս տեսակի տները պաշտպանելու համար, Շահիսաթունեանը եւ ես պատրաստել էինք զեկուցումներ, որոնց մասին յայտարարուած էր Ընդհ. Ժողովի դիւնանին եւ, բացի սրանցից, Դաշնակցութեան ծրագրի մի-մի նախագիծ՝ զուտ ընկերվարական սկզբունքներով կազմած, որ պիտի ներկայացնէինք Ընդհ. Ժողովի հաւանութեանը այն դէպում, եթէ երկու դատերի անջատման առաջարկը չանցնէր: Մեր մտածումն այն էր, որ եթէ այս նախագծերից մէկն ու մէկն անցնէր, երկու դատերի անջատումն ինքն իրեն տեղի կ'ունենար կարճ ժամանակի ընթացքում:

Զախակողմեան անջատականների հակոսնեան էր կաղմում ամերիկաց այ թովմաս Զելալեանի խմբակը, որ նոյնպէս հետապնդում էր ոռուահայ

Եւ թիւրքահայ զատերի անջատումը, բայց այն իմաստով, որ առաջինը է սպաս գուրս ձգուէր Դաշնակցութեան զործունէութեան չըջնակից եւ Դաշնակցութիւնը մնար միմիայն թիւրքահայ զատառ զրագուող մի համազային կազմակերպութիւն, տուաց ո՞րեւէ ընկերութարական երանդաւորման։ Այս խմբակին էին պատկանում Սարդիս Մինասեանը, Վաստեանը, Սափոն (Մարտիրոս Մարգարեան) եւ մեր Հին մարտիկների մեծամասնութիւնը։ Ամերիկահայ երկրորդ պատկամաւորը — Վահագն Տաթեւեանը նոյնպէս այս տեսակէտներով էր համարայ Ելել Ընդհանուր ժողովին մասնակցելու համար։ Սակայն, Անդրկովկասում, մեր ժողովրդի վիճակին եւ կազմակերպութեան արամազրութիւններին ծանօթանալուց յևաոյ՝ փոխել էր իր կարծիքները, կամ, ինչպէս Զելալեանն էր զառնացած ասում, «զաւաճանել էր իր սկզբունքներին»։

Եթէւալ երկու հատուածների միջև ընկած կենտրոնի հատուածը չէր ուզում խօսք անդամ լոել ուստահայ եւ թիւրքահայ զատերի անջատման մասին։ Նրա համար կար մի հատիկ զատ, որ կոչում էր հայկական զտու եւ մի հատիկ Դաշնակցութիւն, որ պէտք է վարէր այդ զատը թէ՛ Տաճկաստանում, թէ՛ Թուսաստանում եւ թէ՛ մինչեւ իսկ Պարսկաստանում։ Քանակով եւ որակով այս կենտրոնական հատուածը ամենաուժեղն էր, որովհետեւ նրա մէջ էին զանում կուսակցութեան բոլոր անուանի գէմքերը — Թոսոտը, Զաւարեան, Արամ, Ակնունի, Վարանդեան, Համօ, Զարդարեան, Վահազն, Սեպուհ, Մուրատ, Ահարոնեան, Թոփիչեան եւն., սուկայն, նա էլ իր հերթին բաժանուած էր երկու խմբակցութեան։ Մէկը, համեմատարար մեծը, անհրաժեշտ էր զտում կուսակցութեան հիմնական ծրագիրը յարմարցնել ժամանակակից ընկերվարութեան պահանջներին, որպէսզի կարելի իինչը ներդաշնակութիւն մատցնել հայկական զատի երեք ձիւզերի միջև, իսկ միւսը, ժողովում էր, որ հիմնական ծրագիրը չպէտք էր փոխել եւ, յամենայն գէպս, նրա ընկերութարական արամազրութիւնները չպէտք էր խորացնել, որպէսզի կուսակցութեան ազգային նկարագիրն անազարտ մնար։

Այս գլխաւոր հատուածներից զատ՝ կային եւ առանձին խմբաւորումներ զանազան կազմակերպական եւ զատական հարցերի շուրջը, ինչպէս Պոլսի մահափործը, միհրանական շարժումը, մարտական ուժերի վերակազմութիւնն ու զասաւորութիւնը, կուսակցական ուժերի բաշխումն եւայլն։ Վերջապէս, պահաս չէին Ընդհանուր ժողովում անձնական դժկամակութիւններ եւ մինչեւ իսկ ներհակութիւններ, որոնք յաճախ պիտի զժկամակութիւններ իրարհասկացողութիւնը այս կամ այն հարցի շուրջը։

Ընդհանուր ժողովը իր հակոռնեայ եւ տարամերժ արամազրութիւններով նմանում էր մի միացող հրաբուխի, որ ամէն վայրկեան կարող էր պայթել՝ ջարդ ու փշոր անելով իր պատեանը, որ Դաշնակցութիւն էր կոչում։ Եւ յաճախակի պատթկումները, որոնք տեղի էին ունենում մակար միջադէպերի առթիւ, օրհասական վախճանի նախանշաններն էին կրում իրենց մէջ։

Սակայն, այդ տագնապալի ժողովից Դաշնակցութիւնը զուրս եկաւ վերջնականապէս կազդուրուած իր ձախակողմեան եւ աջակողմեան հիւանդութիւններից, զուրս եկաւ մի ծրագրով, որից լաւը զժուար էր ենթագրել եւ

մի պողպատեայ, միաձոյլ կազմակերպութեամբ, որպիսին հայ ժողովուրդը իր պետական կեանքի յաւագոյն օրերին խոկ չէր տեսել:

Ինչո՞վ պէտք է բացատրել այս հրացքը: Ես բացատրում եմ երկու հանգամանքներով. նախ նրանով, որ Դաշնակցութեան առողջ բնազդը վերջին պահին միշտ յազդահարում է իր ներսի տաղնապներին և ապա՝ որ Ընդհանուր ժողովում մի Խոստով կար, որ կարողացաւ ժողովականների մէջ հրահրել այդ առողջ բնազդը եւ նրան տիրական դարձնել մնացած բոլոր նրա կատումների վրայ:

Պաշտօնական նիստարի ժամանակ Խոստով քիչ էր երեւում. աւելի եւս քիչ արտայալուում այս կամ այն հարցի քննութեան ժամանակ: Նրա աշխատանքները սկսում էին նիստարից աղաս ժամերին և դիշերները: Բացի Աստվածուց, որի հետ չէր խոսում մի որոշ արարքի պատճառով, նրան կարելի էր տեսնել ամէնքի հետ և ամէնքի մօտ: Ճաշում էր Զելյահեանի, Ա. Միհանեանի եւ իրենց համախնների հետ, ընթրում Անդրանիկի, Մուրասի, Սևոսի հի եւ միւս մարտիկների հետ, զիշերներն անցնում մէղ մօտ կամ ուրիշների մօտ: Այստեղ մի թիւրիմացութիւն էր պարզում, այնուեղ մի միտք լուսարնում, երբորդ տեղը հաշտութիւն առաջ բերում ներհակուած բնկերների միջեւ եւ այսպէս անմիերջ: Առանց որեւէ բռնազրոսիկ ճիզի, առանց որեւէ արեւստականութեան, նա ամէն մէկի հետ խոսում էր նրան հասկանալի յեղուով, որովհետեւ ամէնքի հետ էլ հոգով հարազատ էր. ամէնքին նա ի՞րն էր համարում եւ իրեն՝ ամէնքին:

Արամը գժգոհ էր Վանի իշխանից զանազան պատճառներով: Ինքը Խոստով էլ զժգոհ էր իշխանից: Բայց պէտք էր տեսնել, թէ նա Արամի հետ ինչպէ՛ս էր խոսում իշխանի մասին: Կարծում էր նուազեցնո՞ւմ էր նրա թերութիւնները: Բնաւ: Ինքը Արամն էլ — դրական թէ բացասական — նոյն զնահատութիւնն էր տայիս իշխանին, ինչ որ Խոստով: Բայց արդիւնքն այն էր, որ այդ խոսակցութիւնից յետոյ Արամն այլիւս այն ցաւալի վերաբեր մունքը չունէր զէալի իշխանը ինչ որ առաջ:

Մի ուրիշ օրինակ, որի մասին յիշողութիւնս աւելի վառ է :

Քննութեան էր դրուած թիւրքահայ եւ ուռասհայ դատերի փոխյարարերութեան խնդիրը, որին սրտատրով սպասում էինք «ձախակողմեաններու»: Առաջին զեկուցանողը ես էի: Զեկուցանս առաջին մասում պարզաբանուած էր, որ թիւրքահայ գատր առարկայօրէն անհրաժեշտ եւ ենթակայօրէն նուիրական դատ է ամէն մի հայ մարզու համար (կարծեմ այն ժամանակ հայ խոսքը չասացի): Խոկ երկրորդ մասում՝ որ մի կուսակցութիւն չի կարող այդ դատը ուռասհայ դատի հետ միասին վարել, որովհետեւ եթէ այդ կուսակցութիւնը բնկերմարական ծրագիր որդեգրի նա կը խրտնեցնի թիւրքահայ դատից ազգայնական տարրերին, որոնց օգնութիւնը անհրաժեշտ է նրան. խոկ եթէ ընկերմարական ծրագրից վագ անցնի՝ չի կարող ուռասհայ զանգուածներին համախմբել իր դրօչի տակ: Հետեւարար, այդ երկու դատերը պէտք է անջատել իրարից: Երբ ես զեկուցանս առաջին մասի ընթերցումն աւարտեցի՝ Խոստովը իրեն յատուկ չարաճնի ժողովով ընդմիջեց.

— Արշակ, լաւ է, որ դրանով էլ վերջացնես զեկուցումդ:

Ես շարունակեցի, ի հարկէ, ընթերցումը մինչեւ վերջը։ Բայց չղիտահինչու, մտքիս մէջ տպաւորուեց, թէ լաւ կը լինէր, որ թոստամի ասած տեղը կանգ տանէի։

Հերթը հասաւ Աւ. Շահնաթունեանին։ Նա էլ էր մեկնում այն տեսակէտից, որ թիւրքահայ դատը մի նուիրական զործ է, որի համար ոչ մի զոհողութիւն մեծ չպէտք է համարի հայ ժողովուրդը։ Բայց ևս այնպէս, տեւմի՛ եւս կուռ տրամարանութեամբ եւ կուռ փաստերով, յանդում էր այն եղբակացութեան, թէ երկու դատերը պէտք էր անհատել իրարից։ Զեկուցման ժամանակ այս ևս այն կողմէրից շարունակ բնորդիչում էին Շահնաթունեանին ևս դղայինացնում։ Նա երկու անդամ ծալլեց իր աետրակը եւ պատրաստում էր հեռանալ սրահից։ Սակայն, թոստումի աղդում միջամտութեան չնորհիւ, ժողովականները լուցին եւ Աւետիքը վերջացրեց իր զեկուցումը։

«Բայց եւ այնպէս սատանան այնպէս սարսափելի չէ, ինչպէս նրան նըկարում են» — սուսիրէն ասաց թոստումը իր ծախօթ ժպիտով, մօտենալով Շահնաթունեանին եւ ձեռքը մտերմօրէն դնելով նրա ուսին։ Ուզում էր ասել, որ նրա զեկուցումից դատելով՝ անհնարին չէր իրարհասկացութեան եղր զտնել։

— Մոյ ուվիծիմ, սրբաշէն իլի Այէ սրբաշէն, — (Կը տեսնե՞նք՝ սարսափելի չ՞ո, թէ սարսափելի չ՞), սպառնագին վրայ բերեց Շահնաթունեանը, որ բաւական յուզուած էր ժողովականների վերաբերմունքից։

Նոյն զիշեր թոստումը Շահնաթունեանի սենեակումն էր, ուր հաւաքուել էինք ճախակողմեաններաց։ Խօսեցինք երկա՞ր, երկա՞ր, զրեթէ մինչեւ լուսարց։ Նիւթն էր երկու դատերի միացման կամ անջատման հարցը։ Չեմ միշում թէ ինչ խօսեցինք։ Այնպէս էլ չեմ տպաւորուած, թէ թոստումը փաստե՞ր բերեց ի պաշտպանութիւն երկու դատերի միացման, որոնք մեզ անծանօթ էին, կամ աւելի՛ զօրեց տրամարանութեամբ հերքեց այն առարկութիւնները, որ մենք բերում էինք միմեանց դէմ։ Սակայն, երբ նա քրարի դիշեր» ասաց եւ հեռացաւ, ամենքս էլ զդացինք, որ մեր դիմադրական կորովից հետք չիմ միացել…»

— Լաւ, այս կտում էլ կը զիմենք։ Թող երկու դատերը միացած մը նան։ Սակայն, ծրագրի խնդրում ոչ մի զիջում։ Կամ մեր նախագիծը կ'ընդունեն, կամ կը հեռանանք ժողովից։

Այսպէս ամփոփեց Շահնաթունեանը այդ գիշերուայ մեր խօսակցութեան եղրակացութիւնը։

Հասաւ եւ ծրագրի քննութեան օրը։ Նախորդ գիշերը թոստումը նորից մեզ հետ էր, այս անզամ Մաշուրեանի սենեակում։ Նա հետը բերել էր Թիֆլիսի ընկերների մասնակցութեամբ իր կազմած նախագիծը եւ ուզում էր իմանալ, թէ մենք ի՞նչ զիտողութիւն ունինք նրա դէմ։ Մենք առաջուց արդէն ուսումնասիրել էինք այդ նախագիծը եւ ձեւակերպել մեր դիտողութիւնները, որ մէկիկ-մէկիկ շարեցինք թոստումի առաջ։ Նա սկսեց պատասխանել մեր զիտողութիւններին, բայց յօրանջելով, առանց հաւասի եւ առանց խորանալու նրանց մէջ։ Երեւում էր, որ նրան իր նախագծի «թերութիւնները» չէին զբաղեցնում եւ ոչ էլ մեր զիտողութիւնները, որոնցից մի քանիսը

պատրաստ էր առանց այլեւայլութեան նկատի առնել, որովհետեւ իր զործի եւ մեր ասածի մէջ բռների ասրբերութիւնն էր ժխայն տեսնում, իսկ բառերն նա այն նշանակութիւնը չէր ատիս ինչ որ մենք:

Թոստոմի բացառութիւնները մեզ չհամոզեցին. բայց, չզիտեմ ինչու, մենք պատրաստակամութիւն յայտնեցինք մի զիջում անելու: Առաջ մենք պահանջում էինք, որ ի փոխարինութիւն մեր արած բոլոր «գիշումների», թոստոմը յետ վերցնի իր նախազիծը և միայն Շահիաթունեանի նախազիծը<sup>(\*)</sup> ներկայացնի ժողովին: Սակայն, այժմ համաձայն էինք, որ նրկու նախազիծն էլ ներկայացնի ժողովին եւ ընտրութիւնը նրան թողուի:

Հստ երեսոյթին հենց սա էր Թոստոմի մատուցութեան պատճառը և նա մեզ մօտ էր եկել զիտաւորապէս այն նպատակով, որպէսզի ընդհանուր ժողովին երկու նախազիծ ներկայացնելու առաջն առնի: Եւ նա սկսեց հանգամանօրէն բացառութել երկու նախազիծ ներկայացնելու անպատճութիւնները: Ասաց, որ ժողովին անչու չու կ'ընդունի իր նախազիծը և կը մերժէ մերը, բայց ինքը վախենում է, որ զա վաս կ'աղդի մեր վրայ եւ մանաւանդ կովկասում եւ արտասահմանում զանուած այն երիտասարդների վրայ, որոնք զեռ եւս տատանում են Դաշնակցութեան և անջատականութեան միջև: Աւելացրեց նաև, որ այս մատուցութիւնն այնքան մեծ էր իր մէջ, որ, մեր յամառութեան դէպքում, ինքը կը զերազանէր իր նախազիծը յետ վերցնել, սակայն, երկիր էր կրում, թէ զա մեծ զգունութիւն կը պատճառի թիֆիո մնացած ընկերներին, որոնք աշխատել էին այդ նախազիծի վրայ. երկիր էր կրում նա'ւեւ, որ մեր նախազիծը ժողովում կարող էր պաշտպան մեծամասնութիւն չշահել և մինչեւ անդամ տապալու և մեծ դժուարութիւնների մատնելով կուսակցութիւնը եւայլն, եւայլն:

Թոստոմը խօսում էր երկար և չերծօրէն, խօսում էր ոչ թէ լեզուով, այլ սրտով: Եւ մենք զզում էինք, որ Թոստոմը մեր մատերով չէր շահազըրգուուած, քանի որ առանց այդ մատերի էլ նրա նախազիծի յաջողութիւնն ապահովուած էր — այլ մեր անձնաւորութիւններով: Նա զիտէր այն, ինչ որ մենք զեռ եւս զգիտէինք. զիտէր, որ ցնորք է Դաշնակցութիւնից զորս մի նոր Դաշնակցութիւն առաջ բրերէ հայ իրականութեան մէջ, եւ չէր ուզում, որ մենք, այդ ցնորքի յետեւից ընկնելով, տպարդին վատնէինք մեր ուժերը, եւ ազգային-քաղաքական կեանքից զորս չզրտուէինք — ինչպէս որ յետազային զորս չզրտուեցին անջատականութեան մէջ յամառած մեր ընկերները: Նրա այս անկեղծ սրտցաւութիւնը կատում կաշկանդում էր մեր լեզուները, եւ խօսակցութեան վերջին, մեր սկզբնական «ուժեղ առարկութիւնները» զարձել էին անձարակ թոթովանքներ...

Երբ Թոստոմը, սովորական «քարի զիշէր»ի տեղ կատակելով «քարի լոյս» ասելով — արդէն լուսացել էր — հեռացաւ՝ Շահիաթունեանը զարձաւ զէզի մէզ՝ իր ներքին յուղումը մատնող կատակախան հարցումով. — եա՛, սրա՞ն ինչ կ'ասէք:

(\*) Նախարարւնեանը մտցրել էր իր նախազիծի մէջ իմ առաջարկած ուղղումները, որպէսզի ես իրաժարուեմ իմ կազմած նախազից, որ, ի դեպ ասած, աւելի՛ դոզմատիկ էր եւ անյաջող, քան նրանը:

Ի՞նչ պէտք է ասէինք. «Դաշնակցութեան առողջ բնագլը» հրահրուած էր մէր մէջ և ափրականօրէն իշխում էր մէր մաքերի և սրտերի վրայ: Նրա ճնշման տակ մէնք պէտք է մէր վկրչին դիմաղրական դիրքն էլ լքէինք...

Որ Ռոստոմը աւելի՝ և մեծ եռանդով այս կարգի աշխատանքներ էր կատարում Ընդհանուր ժողովի «աջակողմնան» շրջանակներում — այդ մենք կուահում էինք այն հանգամանքներից, որ նրա ազատ ժամերի մեծ մասը նըրանց հետ էին անցնում: Բայց թէ նա ի՞նչ ձեւով էր նրանց հետ խօսում — շգփտէինք: Մէր մէջ կար մէջ կը — Գրիգոր Շահլամեան (այժմ վարդապետ), որ իբրև ուսանող և անձնական ընկեր միշտ մեզ հետ էր լինում, իսկ իբրև «պահպանովական» նետ: Նա էլ, իբրև յատուկ հաւատարմաւթեամբ, ո՛չ նըրանց մօտ տեսածն էր մեզ պատմում և ո՛չ էլ մեզ մօտ տեսածը՝ նըրանց: Սակայն, այն հանգամանքը, որ Ձերլաբանն ու իր համախոհները վերջ ի վերջոյ ոչ միայն ընդունեցին երկու զատերի միացումը, այլև համաձայնեցին, որ այդ միացեալ հայկական զատը վարող Դաշնակցութիւնը մի ընդհանուր ընկերվարական ծրագիր ունենայ և Ընկերվարական Միջազգայինին անդամագրուի՝ այս փաստն ինքնին կարող է զաղափար տալ, թէ Ռոստոմը նըրանց մօտ ի՞նչ դէր էր կատարում և ինչպէս էր կատարում...

Այդ ժամանակից սկսած, ամէն անգամ, երբ մէր կուսակցութիւնը կամ նրա որեւէ հատուածը ներքին գժուարութիւնների էր մատնում, և երբ զաշնակցական զեկավարութեան մէջ տարածերթ տրամադրութիւնները զերակշում էին իրարհասկացողութեան ոգուն՝ առաջին միտքը, որ ծագում էր մէջ, միշտ այս էր.

— Ա՛խ, եթէ Ռոստոմն այստեղ լինէր...



Երբ նորից բարձրացանք վանքը՝ Ռոստոմը սկսեց բացարել մեզ, թէ ի՞նչ նկատումներ ունի այս հինաւորց հաստատութեան մասին: «Աս, ասում էր Ռոստոմը, պէտք է մէր յեղափոխական-ազատազրական պայքարի Պանթէոնը լինի: Այստեղ կը կանգնեցնենք Քրիստուֆորի արձանը, իսկ այստեղ, հարաւային և հիւսիսային պատերի երկարութեամբ կը շարուն հրայրի, Գէորգ Զաւուչի, Վազգէնի, Միհարի և միւս նահատակների բըլիֆները»: Այսպէս խառը և պատահական ձեւով շէր շարում նա մէր նահատակներին, այլ իւրաքանչիւրի համար մի որոշ տեղ ունիր յատկացրած:

Վանքից գուրս առաջնորդելով՝ Ռոստոմը մեզ ցոյց տուեց արեւելեան պատի երկարութեամբ շարուած սքանչելի խաչքարերը, որոնց վրայ մակազրուած էին մէր հին պատմազրերի — Մովսէս Խորենացի, Եղիիկ Կողբացի, Դաւիթ Անյաղթ եւայլն — անունները: «Տեսնո՞ւմ էք, ասում էր նա, Ս. Կարապետը պզգային Պանթէոն զարձնելու միտքը մեզնից չէ ծագում: Մէր հին սերունդներն էլ մտածել են այդ մասին այս խաչքարերն այստեղ դնելով: Մէնք միայն լրացնելու ենք նրանց գործը՝ հին հերոսների կողքին նորերի համար եւս տեղ բանալով»:

Նորը հնին միացնելու այս ցանկութիւնը բխում էր այն քուն սիրուց,

որ Ծոստումն ուներ դէպի մեր հայրենի իին յիշատակարանները : Հայ յեղա-  
փոխական պայքարը, անկախի իր բուն, ազատագրական արժէքից, նրա տչ-  
քում մի տառանձին հմայք էր ստանում այն համոզում մից, թէ հայ ժաղավոր-  
ութ, ազատու ելով քաղաքական, ընկերային և տնտեսական կապանքներից՝  
ողէտք է վերաբենդանացնի մեր հին ազգային մշակոյթը և նրան նոր ստեղ-  
ծագործութիւնների հմայք զարձնի :

Ծոստումի սէրը դէպի հայրենի յիշատակարանները մի անգամ ևս տես-  
նելու առիթ ունեցայ երեք օր անց, երբ մենք Ս.Կարապետից իջնելով Առա-  
քելոց վանքը՝ տևոնում էինք նրա հութիւնները և մանաւանդ հոչակաւոր  
«Յայտաւորքը», որ իր զեղզեցիկ զրերով և հոյակաս մանրանկարներով,  
ամենասուածնակարգ և բոլողական թանգարանների զարգը կարող էր կազմել:  
Եւ երբ, վանքից մեկնելիս, Ծոստումը պատկառանքով համբորում էր ծե-  
րունազարդ վանահօր — Յովհաննէս վարդապետի աջը, զզում էր, որ նա ոչ  
միայն արժանի հարկին էր տալիս այն աջակցութիւնների, որ Յովհաննէս վար-  
դապետը տուել էր ժամանակին Առաքելոց վանքում և շրջակայ վայրերում  
զորող մեր հայուններին՝ այլև իր երախտազիտութիւնն էր յայտնում  
նրան՝ և յանձնին նրա՝ բոլոր զարերի հայ վանականներին, որոնք աշքի լոյ-  
սի պէս պահնել և մեզ էին հասցըել հայրենի երկրի այս թանկարին յիշա-  
տակները...

\* \*

Ս. Կարապետից պիտի վերադառնայինք էրզում, որովհետեւ մեզ լուր  
հասաւ, որ Ընդհ. Ժողովի միու պատզամատորները հաւաքուել էին այնտեղ  
և մեզ էին սպասում ժողովը բանալու համար :

Տպաւորութիւններ շատ ունեմ այս վերին աստիճանի հետաքրքրական  
և փոքրիկ արկածով համեմուած ճանապարհորդութիւնից . բայց ևս կանգ  
կառնեմ Ծոստումից ստացած ևս նրա համար խիստ յատկանշական մէկ տը-  
պաւորութեան վրայ : Դա նրա վառվուն սէրին էր դէպի մեր Երկիրը եւ նրա  
շնուրթիւնը : Ամբողջ ճանապարհի ընթացքին, մէ՛րթ իր անյաջող ջորու վը-  
րայ ճօճուելով և մէ՛րթ ստքով քայլելով, նա որոնող հայեացքով շարունակ  
նայում էր շորս կողմը՝ կարծէք ցանկանալով հայրենի ամբողջ բնութիւնը  
հաւաքը և ծրաբը իր հոգու մէջ : Նրա աշքից չէին վրիպում ո՛չ լեռ, ո՛չ  
բլուր, ո՛չ զաշա ևս ո՛չ առուակ : Իսկ երբ սրանց մէջ ուշագրաւ մի՛ բան էր  
տեսնում՝ անմիջապէս հրաւիրում էր մեր ուշագրութիւնը զրայ վրայ՝ մեզ  
եւս տպաւորելու ակնյայտ մտադրութեամբ :

Մէծ էր նրա հետաքրքրութիւնը ժանաւանդ զէպի այն երեւոյթները,  
որոնք չինարար ճեռքի արգիւնք էին հանդիսանում :

— Տեսնո՞ւմ էք այս մատղազ ծառերը . Սահմանագրութիւնից առաջ  
ծառ ասած բանը զոյտութիւն չէ ունեցել այս կողմի զիւղերում : Թէ ևս խիստ  
զժուարութեամբ, բայց ժողովուրդն սկսում է վարժուել ծառատնկութեան :

— Այս հնձած արտերը նախանցեալ տարուանից են սկսել մշակել :  
Դրանից առաջ այս բոլորը խոպան հողեր էին :

— Հիմա հօ տեսա՞ք, որ մեզ մօտ էլ զիւղական ուսումնաբանը կանո-

նաւոր չենք ունի, լուսամուտներով եւ ծեփած պատերով։ Կովկաս վերադառնալուց յիշոյ, էլ չառէք, թէ մեր Երկրում Տէր-Թողիկեան վարժարաններից զատ ուրիշ բան չկայ։ Նկատեցիք, որ զասարանում նստարաններ կային. զիւղացիք սեփական աշխատանքով են չինել։

— Քիչ է մնում, որ Մշոյ առաջնորդաբանը Թիֆլիսի առաջնորդաբանի հետ համեմատէք։ Ի հարկէ, նրա սրահը 17 տևակ թղթով պատառած կը լինի։ Սահմանագրութիւնից առաջ... կարծեմ, սակայն, մտադիր են նորը շինելու։

Հասնք Խնուս։ Մեզ առաջնորդում են Դաշնակցութեան Տունը, որ մի չենք ամբողջ Երկրորդ յարկը բռնող սրահ էր ներկայացնում՝ կանոնաւոր լուսամուտներով եւ որոշ կահաւորութեամբ։

— Այս ի՞նչ հրաշալի առն է, բացականչեց Խոստոմը հպարտ հայեացքը մեզ ուղղելով։ Այստեղ կարող է մինչեւ անգամ արտաքնոց լինել...

Եւ իրօք, այդ էլ կար, թէ բակի հեռաւոր անկիւնում եւ խիստ նախնական կառուցուածքով։

Ահա, թէ ինչպիսի երեւոյթներով էր ոգեւորում այս մարդը, որ իր կենաքում այնքան աշխարհներ էր պատել եւ քաղաքակրթական նուաճումների այնքան հոյակապ կոթողներ տեսել...

Ընդհանուր ժաղովից յիշոյ, Կարնոյ Երիտասարդաց Միութիւնը, ի պատիւ պատգամաւորների, Ընթրիբ-բանկէտ էր կազմակերպել։ Խոսեցին շատերը եւ շատ հարցերի մասին։ Մենք, Կովկասի պատգամաւորներս հարկ համարեցինք շեշտելու, որ բոլորովին ա՛յլ տպաւորութեամբ էինք Եկել Երկիր եւ ա՛յլ տպաւորութեամբ պէտք է մեկնէինք այնտեղից։ Մենք Եկել էինք մնչուած հոգով, խորապէս ազգուած այն բանախօսութիւններից, որ ուստ հրապարակապէք Օլդենինը անում էր Թիֆլիսում եւ Բագւում «Անհետացող Հայաստան»ի մասին։ Եւ պիտի հեռանայինք խորին համոզումով, որ Հայաստանը ոչ թէ անհետանում է, այլ վերականգնում է։

Խուզը պատկանում էր Խոստոմին։ Ես անգօր եմ նկարագրելու այն յափշտականթիւնը, որով նա խօսում էր վերածնուող Երկրի եւ նրա շինարարական հեռանկարների մասին։ Այդ վայրկեանին նա իմ աշքում մի մարմնացած հայրենասիրութիւն էր այս բառի ամենապարզ, ամենաժողովրդական իմաստով։ Խոսում էր նախասահմանադրական շրջանում եղած այդ Երկրի փոքրիկ յառաջդիմութիւնների մասին այնպիսի զուրղուրանքով, ինչպէս որ տարիներով սեփական այգու մէջ քրտինք թափած այդեպանը կը խօսի իր բացած ածուների, տնկած ծառերի ու քաղած արդիւնքի մասին։ Իսկ նրա հեռանկարները, իսկ նրա յոյսերը...

Ո՞ւմ մտքից կ'անցնէր, որ, ընդամենը Երկու տարի յիշոյ, դուխը պիտի փէք այս ամենի վրայ...

ԹԱՓԱՌՈՒՄՆԵՐ ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՀԵՐԻ ՄԵԶ

1906 թ. ամառը անցկացրի Թիֆլիսում՝ աշխատելով «Յառաջ» և «Ալիք» թէրթէրում:

Թիֆլիսում էր այդ ժամանակ և՛ մեր աննման Ռուսումը:

Ասեմ նախօրօք, որ այդ երջանիկ օրերին Դաշնակցութիւնը ներկայացնում էր մի հսկայ ընտանիք, որի անդամների փոխյարարերութիւնները պարզապէս հարազատների յարաբերութիւններ էին: Փոխաղաք ուր ու յարգանք, վատահութիւն և անկեղծութիւն, պատրաստակամութիւն ընդուաղձելու մէկը միւսի կարիքներին, վշատկից լինել նրա ցաւերին և ուրախանալ ընկերոջ յաջողութիւնների համար ու նոյնիսկ պարձենալ նրանցով, — ահա' այն զեղեցիկ օրերը, որոնց յատկանչում էին այն ժամանակուայ ընկերական փոխյարարերութիւնները:

Բայց կար եւ մի այլ նշանակալից երեւոյթ, որ Դաշնակցութիւնը վերածում էր իրօք մի մեծ ընտանիքի: Դա՝ մեծերի վերաբերմունքն էր զէպի կրտսերները: Այդ վերաբերմունքը միանգամայն մտերմական ու հայրական էր եւ երբեք չէր կրտսերմունքն ու կրտսեր կանգնած էին իրար կողքի որպէս հաւասարը հաւասարի հանգիպ: Ահա' թէ ինչո՞ւ մենք կրտսերներս, երիտասարդներս, կարող էինք չօշափել ամենալուրջ հասարակական-քաղաքական ու կուսակցական խնդիրներ և միշտ ստանալ բացատրութիւններ, որպէս հաւասարը հաւասարից, երբե՛ք չհանդիպելով ո՛չ հեղնանքի ե՛ւ ոչ արհամարհանքի:

Ահա' եւ փաստեր ու զէպեր Ռուսումի կեանիքց: Յաւում եմ միայն, որ չնայած իմ ունեցած բազմաթիւ հանդիպումներին Ռուսումի հետ, շատ քիչ բան է մնացել իմ յիշողութեան մէջ, իսկ այն մի քանի զէպերը, որ այսօր ես ուզում եմ զրի առնել, շատ պարզ եւ յատակ դրոշմուել են իմ յիշողութեան մէջ:

\* \*

Յաճախ «Յառաջ»ի խմբագրութիւնից Ռուսումի հետ գնում էինք ճաշելու մի հանրամատչելի ճաշարանում Վելիմինովսկայա փողոցի վրայ: Երբեմն մեկ միանում էր բժ. Զարբեկը:

Հայ-թքական ընդհարումների ժամանակացած հայ կամառը զինուորների լուծարքի ժամանակներն էին: Ռուսամն էր վարում այդ պատասխանատու ու ծանր եւ անխօրիդ զործը: Ճաշարանից մինչեւ խմբագրատուն՝ Ֆրէյլինսկայա փողոցը, ընդամենը 5 բուպէի ճանապարհ էր: Բայց Ռուսումի հազին էր կարողանում մի ժամանայ մէջ հասնել: Անընդհատ մտանում էին զինուորները իրենց խնդիրներով: Եւ պէտք էր տեսնել Ռուսումին այդ ժա-

ժամանկ : Ամանց նա քնդունում էր սիրով , իր անհման ժպիտը երեսին , ուշագրութեամբ լսում խնդրատուին եւ անմիջապէս բաւարարում . տալիս էր ձանապարհածախու ու բարի ձանապարհ ժաղթում : Ամանց ընդունում էր այսպէս ասած պաշտօնական ձեւով , բաւարարում նրանց խնդիրը և պատուիրում անմիջապէս վերադառնալ զիւզ ու նույիրուել զիւզական աշխատանքների : Ամանց էլ յանդիմանում էր , պատուիրում այլիս չերեւալ իր աչքին և վերջին անգամ տալիս էր զբամական նպաստ : Պարզ էր , որ սրանք մի քանի անգամ զիմում արել էին ու բաւարարուել , բայց կրկին ներկայացել էին . . . Այսպէս մի քանի ամսուայ մէջ զզալիօրէն պակասեց զիմողների թիւը :

\* \*

Այդ օրերին , «Մշակ» օրաթերթում Համբարձում Առաքելեանը շարունակ գրում էր զրգուի յօդուածներ Դաշնակցութեան և զաշնակցական գործիշների դէմ՝ համեմելով իր յօդուածները հայՀոյանքներով և պրովակացիաներով :

Մէկ օր խմբագրատնից Ռոստոմի հետ միասին դուրս եկանք և զրուցելով զնում էինք Երեւանեան հրապարակով : Ես նոր էի կարզացել Համբ . Առաքելեանի այդ օրուայ զրպարտիչ զրութիւնը Դաշնակցութեան դէմ և խորապէս յուզուած էի : Թարձայ Ռոստոմին եւ ասացի .

— Ռոստոմ , ա՞յս մենք մինչև ե՞րբ պիտի հանդուրժենք Համբ . Առաքելեանին եւ նրա զարշէլի ելոյթներին : Մի՞թէ հնարաւոր չէ լոեցնել այդ մարդուն :

Ռոստոմը հասկացաւ միտք եւ ժպաւալով ասաց .

— Սիրելիս , Համբ . Առաքելեանը իր ելոյթներով մեր դէմ վնաս չի տալիս մեզ . ընդհակառակը , նա մեր ջրազացին ջուր է կապում : Եթէ Համբարձում Առաքելեանը չլինէր , մենք մի ուրիշ Համբ . Առաքելեան պիտի հարէինք :

Եւ ապա աւելի զարգացնելով ու պարզաբանելով իր միտքը՝ նա միանգամայն ժխտեց որեւէ բռնութիւն զործ դնելու միտքն ու նպատակայարձարութիւնը նման դէպքերում : Նա մի շարք օրինակներով ապացուցեց ինձ , որ բռնի միջոցները ամէն դէպքում եւ ամէն ժամանակ չեն կարող օգտաւէտ լինել . ընդհակառակը , կարող են բացասական անդրադարձումներ ունենալ թէ՛ հասարակական կենսի բնականոն զարգացման եւ թէ՛ այդ միջոցները գործադրող կուսակցութեան կենսական շահերի վրայ :

Այդ օրուանից սկսած , ես սկսեցի կարզալ Համբ . Առաքելեանի յերիւրանքները ամենայն ստուգատութեամբ : Յիշում եմ , որ միայն մեր սիրելի նղիչ թոփշեանն էր , որ միշտ շատ յուզում էր եւ երբեմն խիստ պատասխաններ էր տալիս՝ հերքելով Համբ . Առաքելեանի ամբաստանութիւնները :

\* \*

Մի դէպք էլ Ռոստոմի մասնաւոր կեանքից :

Մի օր Ռոստոմը առաջարկեց ինձ զնալ տուն միասին ճաշելու : Նրա

բնակարանը գտնուում էր հեռու, քաղաքի մի համեստ թաղում։ Բնակարանը 2-3 սենեակից էր բազկացած, շատ աղքատիկ կահաւորումով և զուրկ առաջ լոյսից։ Տանը միայն պառաւ մայրն էր։ Թոստամբը հարցրեց՝ ճաշ ունի՞ թէ ո՞չ։ Մայրը շփոթուած պատասխանեց, որ նա չէր սպասում որդու գալուն, ուստի ոչինչ չի պատրաստել...։ Թոստամբը ժողովաց և գրամ տալով մօրը, խնդրեց որ մի քիչ միտ առնի, խորոված առնի և մի շիշ զինի թերի։

Հազիւ ճաշը վերջացրինք, թոստամբը ասաց, որ ժամադրութիւն ունի և պիտի գնայ։ Հրաժեշտ առնեց մօրը և զորս կեանք։

Ես վերապարձայ առն խոր ապաւորութեան առկ... Ահա՛ թէ ինչպէս էր ապրում մեր անզուզական թոստամբը...։

Պէտք է ասեմ, որ թոստամբը այդ կողմից մեր երեք ռահվիրաների մէջ միանգամայն բացառիկ էր։ Քրիստոֆորը (Միքայէլեանը), իմ մօրեղբայրը, որի մօտ թիֆլիսում 1895-1900 թթ. ամրան ամիսներին ևս ապրեցի, նոյնպէս շատ համեստ էր աղքում, պարզապէս մի աղքատ ուսանողի կեանք էր վարում, ազմուած երկու փոքրիկ սենեակների մէջ՝ նոյնովզ շատ հասարակ կահաւորումով, բայց ևս այնպէս ապրում էր բնաւանիքով, ընտանեկան կեանգով։ Իր կնոջ և մինուճար փոքրիկ տղայի՝ թուրիկի հետ։ Սիմոնը (Զաւարեանը) համեմատարար աւելի բախտաւոր էր այդ կողմից։ Ճիշտ է, Սիմոնի բնակարանը ևս սովորական համեստ կահաւորումով էր, բայց նա շըրջապատուած էր իր հարազատաներով ու վայելում էր նրանց խնամքն ու զուրգուրանքը։ Հայրը, մայրը ևս երեք քոյրերը պարզապէս ազօթում էին Սիմոնի վրայ, ևս Սիմոնն էլ շատ քննոյց զգացումներ էր տածում դէպի նրանց։ Նրա տունը իսկապէս մի նահապետական տուն էր, որ իշխում էր փոխադարձ սէր, յարդանք ու նուիրում, ևս որտեղ հիւրասիրութիւնը պարզ էր, չերմ ու անկեղծ, իսկ հիւրենը էլ անպակաս։

Թոստամբը չունէր նման ընտանեկան կեանք։ Նա թափառական կեանք էր վարում, ամբողջովին նուիրուած «զործ»ին...։

Զափազանց բնորոշ է այն զէպքը, որ ևս լսել եմ ընկերներից։

Պատմում էին, որ մի օր թիֆլիսում, փողոցում, թոստամբը հանգիպում է իր կնոջ՝ տիկին Լիզային։ Տիկինը զարմացած հարցնում է թոստամբին։

— Ե՞րբ ես եկել։

— Մի լոթ օր կը լինի, — պատասխանում է թոստամբը, — բայց շատ էի զրազուած, չկարողացայ տուն անցնել։

— Լաւ, — ասում է կինը, — երբ ժամանակ ունենաս, մէկ տուն էլ հանգիպիր...։

Եւ բաժանուում են։

Եթէ ենթաղրելու լինինք, որ այս պատմութիւնը անեկզոտային բնոյթ ունի եւ իրականութեան չի համապատասխանում, այնուամենայնիւ միանգամայն ճիշտ կերպով ցոյց է տալիս թոստամբի վարած անձնական կեանքի ըընոյթը՝ կատարեալ ինքնամոռացում — յանուն մի սուրբ ու վեհ զաղափարական գործի...։

«ՀԱՅՐԵՆԵՐ» ամսագիր, Կայեմբեկ-Դեկտեմբեր, 1946

## Վ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

### ԿԵՆԴԱՆԻ ԳՈՐԾԻ ՎԱՐՊԵՏԸ

Դաշնակցութիւնը ԳՈՐԾԻՑ ծնաւ, ՃԵԼԱՆՈՐՈՒԵց ԳՈՐԾԻ մէջ եւ եղաւ ու մնաց գերազանցարար ԳՈՐԾԻ Կուսակցութիւն:

Իր ինքնատպութիւնն ու ազգային նկարագիրը ամենէն առաջ արտայայտուեց ա'յս կէտի մէջ:

Մուս յեղափոխական աշխարհը, որի հօգոր կնիքը կայ Դաշնակցութեան վրայ, մոլեսանք սիրահարը մնաց խօսի, մինչ Դաշնակցութիւնը՝ Կործի:

Երկու յուշ միայն՝ այս կարեւորագոյն պարագան առանձնաբար ընդգծած լինելու համար:

«Ժընեւ էի, ոուս յեղափոխականների մի ժողովում, — ասաւ մի օր անձնան Վարպետը մեր կուսակցութեան՝ Ռոստոմը՝ իր իմաստուն և հեղնախառն ժպիտը զէմքին, — վէճ կար այս մասին, թէ ահարեկում պէ՞տք է կատարել թէ ոչ. վիճեցին մինչեւ ուշ գիշեր. ես լուս էի. երբ ժողովը փակուեց՝ երիտասարդներից մի քանի հոգի ինձ միացան՝ մինչեւ տուն ինձ ուղեցելու համար. որանք նոյն կրքու վէճը շարունակեցին նաեւ ճանապարհին, մինչեւ իմ տունը. ես զարձեալ լուս էի. երբ մեր տան զուռը հասանք, սրանցից մէկը, որ նոր նշմարած էր իմ լուսիւնը, յանկարծ զարձաւ ու ասաւ.

«— Ընկ. Ռոստոմ, գուք լուս մնացիք ամբողջ ժամանակ, մէնք ճեզ չլսեցինք. Հետաքրքրական է զիտնալ նաեւ ձե՛ր կարծիքը. պատմա-փիլիսոփայորէն ու քաղաքականապէս ահարեկումը ձեզ համար անդառնալիօրէն նըլշդը սկզբո՞ւնք է արգեօք»:

«Եյս հարցնողը, — նկատեց Ռոստոմը, — ճանաչում էր մեզ եւ մեծ կարծիք ունէր Դաշնակցութեան մասին: Ես գարձայ եւ ասի. — «Երէ Դաշնակցութիւնը այդքան խօսի՝ նա զործ չի կատարի»: Եւ ընդհանուր ծիծաղի մէջ մէնք բաժանուեցինք իրարից»:

Միւս յուշը զարձեալ կապուած է իր անուան:

Որքան յիշում եմ՝ 1907ին էր. մի քանի օրով հիւր էր Բագրում՝ այնտեղից Վիեննա՝ Ընդհ. Ժողովին մեկնելու համար: Օզառելով առիթից՝ ընկերները ինդրեցին, որ մեր անզուգական մարտավարը մի զրոյց ունենայ մեզ հետ Դաշնակցութեան զործելակիրափի մասին: Հաւաքոյթը տեղի ունեցաւ Բագրուի ծանօթ ընկերներից քժ. Գր. Սազեանի բնակարանում: Ռոստոմը, միշտ նոյն հեղնախառն եւ իմաստուն ժպիտը դէմքին, իր զրոյցը բացաւ հետեւեալ նախազատութեամբ.

— «Այնքան շատ զործով տարուեցիմք, որ խօսելն իսկ մոռացանք»:

ՀՀ. Յ. Դ. Գաղափարաբանութիւնը»

(«ՅՈՒՆԱՊԱՏՈՒՄ Հ. Յ. ԴԱՆԱԿՅՈՒԹԵԱՆ», էջ 108)

Ռ Ո Ս Տ Ո Մ Ը

(Մի էջ նրա Պարսկաստանում ունեցած գործունէութիւնից)

1908 թիւն էր : Պարսկաստանում յեղափոխութիւն էր ծագել : Արեւել-քի այդ մեղի, կին, զինի, երդ ու վարդ սիրող ժողովուրդն էր շարժուել եւ ուզում էր մի հարուածով տապալել «Հանձնութեա» ու հաստատել «Մարգութան» (ասհմանուղբութիւն) : Թաւրիզն էր այդ յեղափոխութեան կհնարոնը, նրա վրայ էին շարժուել Մահմադ Ալի շահի զինուորներն ու նրա կողմնակից ցեղացից կազմուած բազմահազար բանզաները : Այդ բոլորը չէր : Քաղաքի մէջ զտնուած յայտնի միապետականները իրենց շուրջն էին հաւաքել ընդդիմադիրները՝ բերզը ներսոց խորտակելու համար :

Իսկ ի՞նչ ունէին քաղաքում պաշարուած մի խումբ յեղափոխականները, — ոչինչ, բացի հաւատքից : Ո՞չ բաւականաչափ զինք ունէին, ո՞չ ուզմամբերք, ո՞չ թնդանոթ (եղածներն էլ հին էին ու ժանգոտած) եւ ո՞չ էլ ուտելիք : Մեծ մասամբ ամէն մի յեղափոխական ինքն էր իր մասին հոգ տանում, զինուում էին ու ինչով կարողանում էր . . . : Ժողովուրդը տգէտ էր . յաղթութեան շանսերը քիչ :

Չնայած այս բոլոր աննպաստ պայմաններին՝ Դաշնակցութիւնը իր պատուի գնով ասպարէջ նետուեց ազատելու համար մարտնչող դեմոկրատին բռնակալների ճիրաններից : Այդ զործի համար նա իր ամենալաւ ուժերը տըրամագրից : Նրա կոչի վրայ յայտեղ վաղեցին Քեսին, Մարտիրոսը, Նիկոլը, Խեցն, Սերգոն և ւային . զերչապէս եւ ինքը մեծ յեղափոխականը — Ռոստոմը : Եւ բոլորն էլ գիշեր-ցերեկ անդադար, առաջաւոր զիրքերում, պարսիկ դեմոկրատայի հետ կողք-կողքի կուրծք էին տալիս բռնակալութեան :

— «Մրագիր կայ, այժմ հարկաւոր է զործ», ասում էր Ռոստոմը :

Ու այդ զժոխային զրութեան մէջ, մենք մի խումբ ընկերներս մեզ միանգամայն անյազմ էինք համարում . չէ՞ որ մեզ հետ էր Ռոստոմը, միշտ բարի, միշտ ժպտուն, միշտ հանգիստ, կարծես ոչինչ չէր կատարում մեր շուրջը, կարծես հենց այդպէս էլ պիտի լինէր : Նրան կարելի էր տեսնել ամէն տեղ, ուր կարիք կար — մէկ իր հակողութեան տակ վոքքիկ «Թնդանօթներ», մենանոռումբեր, հրձիքներ շինող արհեստանոցում, մէկ առաջաւոր զիրքերում, մէկ փողոցները խուժած թշնամու հետ ճակատող մարտիկների մէջ՝ մաուզէրը ձևոքին, մէկ հիւանդանոցի մէջ վիրաւորները միիթարելիս . . .

Ցիշում եմ, մի խուլ փողոցի փոքրիկ բակի մէջ էր մեր զինուորական արհեստանոցը, այնտեղ էին պատրաստում մեր բոլոր «Թնդանօթները», ուումբերը և ւային : Մի օր, ևրեկոյեան ժամը 4ին, առվորական աշխատանքի ժամանակ՝ երբ Բուլղարացի Գէորգը իր ուումբի մէջ զինամիտ զնելով էր զբաղ-

ուած, յանկարծ ինչ որ ուժեղ լոյս եւ պայթումի ձայն լսեցինք, բոլորս սենեակից զուրով փախանք. բակի մէջ միայն հասկացանք, որ մեր սենեակի մէջ ուումք էր պայթել, մեր և դիմացի սենեակի բոյոր ապակիները փշրուել էին, եւ երբ սկսեցինք մեզ հաշուել, տեսանք որ Գէորգը պակաս էր, մեզնից մէկ սրտոտք ներս մտաւ սենեակ եւ եկաւ պատմեց, թէ Գէորգը սպանուել է պայթիւնից: Մէնք, Հրաշքով ազատուածներս, զուրս եկանք փողոց տուն գնալու. Համար: Պատահեցինք Ռուսումքին, որ պայթումի ձայնը լսածին պէս շտապով մեզ մտաւ էր վազել: Երբ ամէն ինչ պատմեցինք, նա առանց սառնութիւնը կորցնելու, ասաց. «Գէտք է սենեակի մէջ եղածները զոնէ պատմելու. ու շարունակեց իր ճամրան... մներ զիխիկոր հետեւեցինք իրեն...»

Մի ուրիշ օր էլ, երբ սանդուիների վրայ նստած ցոյց էր տալիս ինք թէ ի՞նչպէս պիտի պատրաստել պայթուցիկ վառողը, յանկարծ խառնուրդը պայթեց եւ մօտ զալով ցաւակցութիւններս յայտնեցինք իրեն, նա սովորական ժպիտն երեսին ասաց. «Ոչի՞նչ, ճախս զեռ կայ»(\*):

Եւ խկապէս՝ նա զնաց հիւանդանոց, կապեց վէրքը ու անմիջապէս եկաւ գործը շարունակելու...

Աչա՞ Ռուսումը:

Մէծ էր նրա ազգ կցութիւնը Սաթթար ու Բազրը խաների վրայ, նրանք այնքան էին հիացել Ռուսումքի ու նրա հնարած «թնդանօթների» վրայ, որ ամէն մի յաջող կոռուց յետոյ առանձին հաճոյքով սեղմում էին նրա ձեռքը եւ կրկնում. «Եթէ տասը հատ մեզ պէս մարդ եւ հազար հատ զաշնակ ֆետայի ունենայինք, շահի զօրքերը մինչեւ Բազզազ կը հալածէինք»:

Եւ արդեօք այդ հսկայական ոգեւորութիւնը չէ՞ր պատճառը, որ այդ մի բուռ հերսոնները երկա՞ր ժամանակ կարողացան դիմադրել օրբստօրէ անող թշնամուն, մինչեւ որ, վերջապէս, մի զեղեցիկ օր յաղթական զուրս եկան այդ կոռուց...

Այսու Ռուսումն այնտեղ էր, ուր իրաւումքի համար մղուող կոիւ կար: Փա՞ռք նրա անմեռ յիշտակին:

«ԻՐՈՇԱԿ», — թիւ 8-10, 1926

(\*) Տպագրական անուշադրութան մը հետեւամեխով, առ նուազն տող մը կը բուի փախած ըլլալ. հաւանքէն հետեւեալ բովանդակուրեամբ «...եւ վիրաւըց նրա աչ ձեռք. եւ երբ մօտ զալով...»: Պահած ենք հարազատ՝ «Երօշակ»ի բնագրին:

ՄԻ ԷԶ ԹԱԿԻՐԻՁԻ ԿԵԱՆՔԻՑ

1908-9 թուականներին տեղի ունեցան թաւրիզի յեղափոխական շարժումները : Կոիւների նախօրեակին թոստով այնտեղ էր : Ղեկավարում էր շարժումը և հայերի մասնակցութիւնը :

Երբ միապետական ուժերը կատաղի յարձակումներով գրաւեցին քաղաքը, պարսիկ յեղափոխականների պարագլուխներ Սաթթար և Բաղըր խանները, չըջապատուած 40-50 հաւատարիմ զինուորներով, ամրացան Լիլաւայի և Ղալայի հայկական թաղերի մօտի դիրքերում և օրհասական դիմադրութիւն էին ցոյց տալիս :

Յուսահատական օրեր էր ապրում նաև թաւրիզի հայութիւնը : Եթէ միապետականները ներս խուժէին, թալանն ու կոտորածը անխուսափելի կը լինէր :

Վերջին տագնապալից օրն էր յեղափոխականների համար : Թշնամին աւելի և աւելի յանդուզն էր զառնում : Պարտութիւնը թւում էր անխուսափելի :

Թոստով շատաղեց կոտուի վայրը և իր ձեռքը առաւ զեկավարութիւնը : Սառնարին, ինչպէս միշտ, մշակեց յարձակման ծրագիր, զասաւորեց ուժերը և ինքը արևի մայրամուտի մօտերը, ոսկետ նետող զործիքը ձեռքին, բարձրացաւ Լիլաւայի թաղի ամենաբարձր աներից մէկի կտուրը : Այս տեղից յարձակման նշան տուց և սկսեց աջ ու ձախ թշնամու դիրքերի վըրայ ուսկես արձակել :

Թոստոմի նշանի վրայ հայ ու պարսիկ մարտիկները, ձեռնառումքերի որոտով և հրացանների անընդհատ համազարկերով գրոն առին հակառակորդի վրայ : Թոստոմի նետած ոսկետները ան ու սարսափի էին մատնում միապետականներին : Նրանց չարքերում տիրեց սարսափելի շփոթ և իրարանցում : Եւ չուտուի լերցին դիրքերը և խուճապահար, անկարգ ու խառնիճաղանձ ամրուխի վերածուած՝ դիմեցին փախուստի :

Եղափոխականները զրաւեցին Արք միջնարերով : Ապա, միմնանց յետեւից, աէր զարձան և միւս թաղերին ու դիրքերին : Յաջորդ առաւօտ ամբողջ քաղաքն արդէն յեղափոխականների ձեռքին էր : Թոստոմը փրկեց Ատքը պատականի յեղափոխութիւնը : Յնծութիւնը ամէն կողմ աննկարապրելի էր ...

Քիչ յետոյ, ջուղֆայից հասաւ Քեռին իր 40 հոգինց խմբով : Թոստոմը նրան յանձնեց կոտու ընդհանուր զեկավարութիւնը : Բայց ինքը մնաց պարք ողին, թէեւ միշտ ստուերի մէջ, առանց առաջ նետուելու և իր անունն ու անձը ցուցադրելու :

# ՄԻՔԱՑԵԼ ՎԱՐԱՆԴԵԱՆ

## ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹԻՒՆ ՊԱՐՍԻԿ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԵՏ

1907ի Դեկտեմբերի վերջերուն թոստով կը հասնի Թեհրան՝ աղդեցիկ շրջաններու տրամադրութիւնը չօշափելու և բանակցելու նպատակով։ Իրեն կ'ընկերանար Յովսէփ Միրզայեան — լաւ ծանօթ երկրի պայմաններուն ու պարսիկներու հողերանութեան։ Եւ ամէն մի ժողովէ ետք՝ կը խորհրդակցէն երեք առիջական մի ժողովէ էր մեր հին ընկեր գործոր Ստեփանեան։ Մէջիսը այդ ժամանակ երերուն զոյութիւն մը ունէր։ ազատականները, կատարուած տեռորներէն յետոյ, մշտական վախի մէջ էին։ Բայց Շահն ալ երկիրի ու տաղնապի օրեր կ'ապրէր։ Պարսիկներու կողմէն բանակցութիւններուն կը մասնակցէին Վոստօ-օդ-Դովլէ, Մէջիսի փոխհանագաւը, Մոօթէշատօ-օդ-Դովլէ, երեսփոխան, պատգամաւոր Թաւրիզի, Հաջ-Ամեն-օդ-Զարրը, պատգամաւոր Թեհրանի վաճառականներու կողմէ, նըկատուած որպէս Պարտկատանի մեծազոյն հարուստը և սահմանադրականներու Ֆինանսական ուժը։ Հաջի-Մուբին-օդ-Թովար, նոյնպէս մեծաշարուստ մը, որ նախորդին հետ կը հոգար յեղափոխական շարժման ծափքերը։ Հաջի Միրզա Իրրահիմ ազա, պատգամաւոր Թաւրիզի, յեղափոխական անջումաններու պարագլուխ։ վերջապէս Ազա Սէյիդ Թաղը-Զաղէ, Մէջիսի ամենէն պերձախոս և աղդեցիկ անդամը։ Գրեթէ բոլորը Փրանսախօս։ Այդ խումբը կազմուած էր Մէջիսի զանազան խաւերէն և կը ներկայացնէր այն հոգենակաւոր կորիզը, որ ուզզութիւն կու տար ազատադրական շարժման։ Անոր հետ էին Թեհրանի ամենէն հեղինակաւոր հոգեւոր պետերը — Ազա Սէյիդ Արգուլահ և Ազա Սէյիդ Մոհամմատ մուշտայիզները, որոնք կը համար ուէին հիմնաքարերը Սահմանադրութեան<sup>(\*)</sup>։

Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ — Խոստով և Յովսէփ Միրզայեան։

Հինգ նիստերու մէջ (1908 թ. Յունուար) քննուեցան շարք մը կարեւոր խնդիրներ։ Անոնց պարունակութիւնը ցուցադրուած է Խոստոմի մէկ ընդարձակ գրութեան մէջ, որուն կցուած են Փրանսերէն վաւերազդիրները։ Որքան եւ հետաքրքրական ըլլան անոնք Դաշնակցութեան պատմութեան համար, ստիպուած ենք զանց առնել այստեղ։ Կու տանք հակիրճ տողեր միայն։ Օրակարգի խնդիրներն էին։ 1. Ռոբան ապահովուած է Սահմանադրութեան բնականոն ընթացքը Շահի հետագայ դաւերուն հանդէպ։ 2. Ի՞նչ յոյսեր ունին հեռացնելու տաճիկ զօրքը պարսկական հողերէն։ 3. Ինչի՞ մէջ պիտի կայանայ մեր աջակցութիւնը և ինչո՞վ իրենք կարող են մեզ օգնել։

Պարսիկ բանագնացները կը պատասխաննեն։ 1. որ Շահը կրնայ միայն

(\*) Պարսից կարք ենուազային մեծ մասամբ անցաւ հակայեղափոխականներու կողմը։

զանդաղեցնել ազատազրական զործը, բայց ոչ խեղղել. 2. որ եթէ թուրք կառավարութիւնը բացէ ի բաց մերժէ պարսկէ գրաւուած վայրերը, պատերազմը անխուսափելի կը դառնայ (\*\*) . 3. որ Դաշնակցութիւնը զզալի աջակցութիւն կարող էր բերել ազատական պարսիկներուն, եթէ իր ունեցած կապերով պաշտպանէր երիտասարդ. Պարսկաստանի զտար Երովոյի, մասնաւորապէս Ֆրանսայի մէջ, որ թերեւս Հնարաւոր էր փոխառութիւն մը կը ինքը: (Կողմանակի աղրիւներէ կ'իմանայինք, որ Ֆրանսա կը հրաժարէր զրամտաւ. Պարսկաստանի, առանց Խուսիոյ երաշխաւորութեան, որովհետեւ Իրանը պարագ էր Խուսաստանին (Յ) միլիոն):

Պարսիկ սահմանազրականները կ'ուղէին նաեւ, որ Դաշնակցութիւնը տրամադրէր իրենց մէկ-երկու ձեռնահաս սպաններ, այլ եւ քանի մը մասնագէտներ, պայմուցիկ զործիքներ բանեցնելու համար, պատերազմի պարտգալի:

Երիտասարդ պարսիկները նաեւ յանձնառու կը լինէին լայնացնելու հայոց ազգային իրաւունքները, զորս հայ տարրը կը վայելէր հին բռնապետական ուժիմինի տակ:

Կը խոստանային, վերջապէս, յատկացնել հայ փախստականներուն Սալմաստի ու մերձակայ շրջաններու «Խալիսսէ» (արքունի) կոչուած մշակելի հողերը:

Ժողովներու մէջ կ'էշխէր չերժ, բարեկամական տրամադրութիւն երկուստեք: Պարսիկ բարեկամները կը խոստանային մեզի — ինչ որ առանձնապէս կարեւոր էր մէր ժողովուրդի պաշտպանութեան համար — 1. Ազահողել եւ զիւրացնել մեր ուժերու փոխազրութիւնը Պարսկաստանի ներսում: 2. Դիւրացնել մեր զէնքի ու ուզմամբերքի փոխազրութիւնը արտասահմանէն Պարսկաստան:

Խոստացան նաեւ աջակցիլ մեզի համերաշխութեան քարոզը մղելու. հայ եւ թուրք տարրերու միջև՝ թուրքիոյ եւ Կոմիկասի մէջ, զրկէլ, ի հարկին, կ. Պոլիս յատուկ մարդ մը (պարսիկ ազատական քարոզիչ), որպէս սպի մեջ յարարերութեան մէջ զնէ օսմաննեան մայրաքաղաքի պարսիկ սահմանադրական տարրերուն հետ, որոնք կրնային օգնել մեզի համերաշխութեան այդ պրոզագանցին մէջ:

Խոստած եւ ընկերները խոստացան, ի հարկէ, որ Դաշնակցութեան Արեւմտեան Բիւրոն պիտի օգտագործէ պարսից զտար համար իր կապերը Եւրոպայի, մասնաւորապէս Ֆրանսայի հայաստական շրջաններուն հետ, նաեւ նիւթեր պիտի մատակարարէ արեւմտեան մամուլին, — բան մը՝ որ պիտի ընկինք նաեւ առանց պարսիկ բարեկամներու խնդրանքին (\*\*):

(\*) Թուրքերը, ի վերջոյ, հեռացան Անգլիայ եւ Խուսաստանի ննշման տակ:

(\*\*) Նույտով Թաւրիզէն ժըմն հստան սահմանադրական Պարսկաստանի համար պայմանագրութիւնները — մէկը կավկասահայերուն լաւ ծանօթ Կարպէկով — արան Արեւմտեան Բիւրոն չզլացաւ տալ ամէն անհրաժեշտ աջակցութիւն՝ մղելու իրենց քարոզչութիւնը մեր օտար բարեկամներու շրջաններում, Պարփակ եւ այլուր:

Բայց չառ չանցած՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը պիտի բերէր այդ խանգամատ, բայց անփորձ, անվարժ Պարսկաստանին՝ տարրեր ձեւի աջակցութիւն մը — միանդամայն ռազմական ու ռազմադիտական — որ մէկէն ի մէկ վտանգեց զուսոց ու յաղթական Մէնմէշտ Ալիի զահը, ահարեկեց անոր չըջապահն ու ողջ յետադէմ միապետական բանակը և միւս կողմէն զարմանքի, հիացամի, երախտազիսութեան հոսանք մը առաջ բերաւ երկրի աղատատեհնէ, ահանձանադրական տարրերուն մէջ...»

«Հ. Յ. Դաշնակցութիւնն ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ, Բ. Խատոր, Էջ 64-66

## Յ. ԷԼՄԱՐ

### **ՌՈՍՏՈՄԻ ԶԵՐՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ**

Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավարներից Խոստոմը իր անվերապահ աղակցութեամբ ու նույնուած աշխատանքով կարեւոր զեր է ունենում Պարսկական Սահմանադրական շարժումների մէջ :

Այդ գերը կայտանում է նախ բանակցութիւնների արդիւնքը կադարձածույնութեան մէջ, որ կուսակցութեան անունից կնքուել է 1908ին, թէ հրանում, պարսիկ սահմանադրական ղեկավարութեան հետ, կուսակցութեան բերելիք աղակցութեան ժամին :

Առաջ 1910ին, Թաւրիդի ազգատամբութեան օրերին, Ասթթար խանի հետ, միասնարար վարած կուների անուզգակի զեկավարութեան մէջ :

Իր՝ Խոստոմի առութեամբ, Պարսկաստանում սկսուած ժողովրդական խլրումները, հենց սկզբից զրաւել են իր ուշադրութիւնը :

Համատառոր յեղափոխականի հետաենութեամբ նա մեծ նշանակութիւն է առել պարսկական յեղափոխութեան, Միջին Արևելքի ժողովրդականի գործոնքի և յառաջիմական շարժումների առաջակետից : Այդ նկատումով նա անհրաժեշտ է զայել ամէն աճակցութիւն ցոյց տալ այդ յեղափոխութեան և չերք մասնակցութեամբ սատարել, ծաւարել ու խորացնել յեղափոխութիւնը, առաջնորդուած ընդհանուր, տեղական և հայկական շահերի եռակի անսակէտից :

Կարիք չկայ ասելու, որ Խոստոմի այդ ողեւորութիւնը բխում էր նրա համամարդկային զազափարի, յեղափոխական խառնուածքի և հայրենասիրական ոպուց :

Նա 1890ական թուականներին, թէ՛ իրը ուսուցիչ և թէ՛ իրը նորակազմ կուսակցութեան զոքճէց, կցել էր Աստրապատականում, Թաւրիկ, Ասրմաստ : Անկասկած անցել էր և շըջանները : Տեսել էր բան ժողովրդի — զիւզացիութեան և աշխատաւորութեան իրաւագուրք, թշուառ և ստրկական վիճակը :

Ականատես էր եղել պետական պաշտօնեաների, առատական իշխանների, աղաների, խաների և նրանց Փարրաշ-ռոստիկանների զործադրած անլուր հարստահարութիւններին, բռնութիւններին ու խոշտանգումներին : Անկասկած, խոր ցաւ էր զզացել իրքեւ իրաւ ընկերվարական և, հաւանականարար, այն ժամանակ իսկ պատրաստ էր եղել որեւէ կերպ օգտակար լինելու անկեղու, թշուառ այդ զանգուածներին, բայց չէր ունեցել այդ հարաւորութիւնը :

Այժմ, իրը քիչ-շատ զգաստացած ժողովուրզը, ուրքի կանգնած, իր իրաւունքներն էր պաշտպանում, պարզ էր, ի հարկէ, որ նա հոգով ու ուր-

տով աջակցութեան պիտի դար իր համար բարձր այդ նպատակի իրազործման :

Բայց նա պարսկական շարժումների յաջողութեան մէջ, բացի տեղական և ընդհանուր բնոյթից, տեսնում էր նաև Հայութեան չահր:

Նա այն հաւատն անէր, որ նախ՝ սահմանադրական իրաւակարգի բարդներից պիտի օգտուի պարսկահայութիւնը և ապաս պայմաններում պիտի արեւեան բէրի իր ստեղծագործական լայն աշխատանքները յօդուա երկրի և յօդուս իր պղպային իրաւունքների ու անհատական բարեկեցութեան:

Ապա, նա այն համոզումն անէր, որ յետամնաց Պարսկաստանի ժողովրդական շարժումները — բայց մանաւանդ յեղափոխութեան յաղթանակը — պիտի ազդի Թուրքայի ու Թուսաստանի, աւելի շուտ արթնացած ժողովուրդների վրայ և հարեւան այդ երկրներում ևս, առաջ պիտի բէրի տեղի ու ժեղեղ շարժումներ : Իրական մի յեղափոխութիւն, որ եթէ չխորասկի էլ բունապեսական այդ երկրների կարգերը, յամենայն զէսու, մեծ փոփոխութիւններ պիտի մտցնի նրանց գարշակարգի մէջ : Իսկ դրանից պիտի օգտուեն և ճնշամներից ու հալածանքից պիտի ազատուեն զոյզ այդ երկրների բաղկացուցիչ տարրերը, նրանց շարքում նաև Հայութիւնը :

1908 թուին Թուրքիայում կատարուած յեղաշրջումը, իր բնոյթով թէեւ զինուորական, բայց և այնպէս վարչածեւի փոփոխութեան տեսակէտից հաստատում էր Թուսատանի նախատեսութիւնը :

Պարսկական շարժումների հանգչպ ունեցած իր բուռն հետաքրքրութեամբ թուստումը, տեղեկանարով Մոհամէդ Ալի Շահի զործադրած հալածանքների ու բոնութիւնների հետեւանքով ազատական տարրերի մէջ առաջացած թուլութեան և յուսաքիշման մասին, ընկերների հետ խորհրդակցելոց յետոյ, 1907 Դեկտեմբերի երկրորդ կէսին մէկնում է թէնքան : Իրանի մայրաքաղաքան է շտապում, անձամբ իրազործելու կուսակցութեան Չորրորդ Ընդհանուր Ժողովի որոշումները, որոնք անցել էին իր առաջարկած բանաձեռով :

Թէնքանում նա շուտով յարաբերութեան մէջ է մտնում ազատականների ներկայացուցիչների հետ և յաջողում է շուտով բանակցութիւն սկսել նրանց հետ :

Այդ օրերին Մոհամէդ Ալի Շահը վերջնականապէս պարզել էր իր դիրքը և ասպարէդ իջել սահմանադրութեան կատաղի հակառակորդի թշնամութեամբ :

Մինչ այդ Շահը երկդիմի քաղաքականութեամբ աշխատում էր ժամանակակիով շահնականութեամբ նպատակով :

Նա մերթ երեւան էր զալիս նոր իրաւակարգն ընդունելու դիմակով, բայց մնքենայութիւններ էր լարում նրա զէմ, մերթ Ղուրանի վրայ երդում էր հաւատարիմ մնալու Սահմանադրութեան, բայց անմիջապէս դաւաճանում էր իր երդումն և զաւեր նիւթում նոր կարգերի զէմ :

1907 թուի վերջներին նա պատրաստ զգալով իրեն, ուզմաղաւու է իջնում իր իրական կերպարանքով :

Սկսում է խիստ հալածել, ձերբակալել, բանատարկել ու խոշտանգում-

Ների Ենթարկել ազատականներին եւ աստիճանաբար աւելի խռովցնել իր սարսափները :

Նրա հրահանգով կազմուած խոռովարար խմբակցութիւնները հւատապընդում Են սահմանադրականներին եւ մշտական երկիրի ու ահարեկման մէջ պահում Նրանց զեկավարներին :

Խոստումը թէնքանից գրած 10 Յունուար 1908 թուակիր նամակով հետեւեալ կերպով է նկարազրում քաղաքական այդ ծանր վիճակը :

«Ծահի կողմնակիցները շարունակում են զաղտնի գաւեր լարել Սահմանադրութեան զէմ : Կազմուել Են տեղական սեւ հարիւրակներ, որոնք տեսորի (\*) միջնորդ ձգտում են ընկճել սահմանադրականներին :

«Իմ գալու երկրորդ օրը տեսորի Ենթարկուեց, իր տան մէջ, սահմանադրական շարժման աֆակից յայտնի հարուստ արբար Ֆրէյդունը, հենց Շահի մտերիմ սենեկապետի մարդկանց ձեռքով :

«Մի օր անց հրացանաձգութեան Ենթարկուեց արտաքին գործոց նախարարը, նոյնպէս իր տան մէջ :

«Սա եւս յայնինք է իրը չերծ Սահմանադրական : Նրա հայրը Մուշիրը Դովլէն էր, որ Սադրազամ եղած ժամանակ կարուցացել էր համոզել Շահ Մոզաֆարէզինին Սահմանադրութիւնը ստորագրել :

«Մէջլիսի (\*\*) անդամները մշտական վախի մէջ էին շատերը տանը չէին քնում : Իրենց կողմից միջնոցներ էին խորհում թէ՛ իրենց անձը եւ թէ Սահմանադրութիւնը ապահովելու համար : Ահա թէ ինչու, իմ զալուց մի շարաթ անց, միայն Դեկտեմբեր 30ին տեղի ունեցաւ առաջին նիստը :

Համագործակցութեան բանակցութիւնները սկսուած 1907 Դեկտեմբեր 30ից, ունենում են յաջորդաբար (բացի Յունուար 1ից) վեց նիստ :

Բանակցութիւններին մասնակցում են վեց հոգուց բազկացած պարսիկ ազատականների մի խումը «Մէջլիսի զանազան խաւերից» . այս խումը ներկայանում է իրեւե մի կորիգ, որը իր հեղինակութեամբ կարողանում է ուզած ուղղութիւնը տալ գործերի ընթացքին» :

«Վեց հոգուն համախմբողն ու բանակցութիւնների նախաձեռնողը հանդիսանում էր Աչյիդ Հասան Թաղիզապէն, որ Լուսնգուն և ամենից ազգեցիկն էր եւ յենուում էր յեղափոխական անջնմանների (ժողով) վրայ :

Պարսիկ ազատականների ներկայացուցչութիւնը կազմուած էր հետեւեալ անձնաւորութիւններից .

Վըսուզը Դովլէ (Առողջորդաբանի փոխնախազան), Մոսթաշարը Դովլէ, Հաջի երրահիմ Ազան, Աչյիդ Հասան Թաղիզապէ (Երեքն էլ Թաւրիզի պատգամաւոր), Հաջի Ամինը Զարը (յայտնի հարուստ և փողերանոցի կապալառու), Հաջի Մուհիմը Թոջար (վաճառական) : Վերջին Երկուսն էին զլիաւորապէս հոգում սահմանադրականների ծախքերը (\*\*\*):

(\*) Ահաքեկում :

(\*\*) Խորիրդաբար :

(\*\*\*) Խոստումի նոյն նամակից :

Կուսակցութեան կողմից ներկայացուցիչներ էին ինքը՝ Ռուսուամը եւ տեղացի բնկերներից Յովսի Միրզայեանը<sup>(\*)</sup>: Նրանք ամէն մի նիստից յետոյ գրառում խորհրդակցում էին փորձառու և քաղաքական ինդիրներին իրազեկ երեք բնկերների հետ:

Հիմնուած ձեռքի տակ եղած փաստաթղթերի, ապա Թաւրիկում, նոյն 1908 թուին, այդ բանակցութիւնների ժամանակ Ռուսուամի տուած որոշ մանրամասնութիւնների յիշուութեանս վրայ, պէտք է ասել, որ բանակցութիւններն սկսուել եւ շարանակուել են չերմ և անկեղծ մթնոլորտում: Նիստերի բնիւացքում եղել են թեմիւ վիճարանութիւններ, այն էլ մտքերի պարզաբանութեան համար:

Վեց նիստերում քննութեան են առնուել առաջին հերթին 1) Սահմանադրական իրաւակարգի ապահովութեան եւ բնականութեացքի հարցը:

Ապա յաջորդաբար՝ 2) անդլուսուսական 1907ի համաձայնութեան զէմանուելիք միջոցների: 3) ներխուժած տաճկական գորքը Երկրի սահմաններից հեռացնելու, և այդ՝ զիւանազիտական ուղղութ չյաջողելու և պատերազմի գէպօտմ, զինական ուժերի պատրաստութիւնների մասին: Եւ ի վերջոյ՝ 4) սահմանադրականների ու կուսակցութեան փոխազարձ աջակցութեան, օղնութեան և յահճառառութիւնների կարեւոր հարցերը:

«Բոլոր խնդիրների շարք կատարեալ համաձայնութեան եկած, որոշուել է մօտիկ ապազայում զումարել մի նոր հանդիպում-ժողով, որը «կարող էին զրուել և ուրիշ հարցեր եւ որ համաձայնութիւն կը կայանար աւելի կոնկրետ հարցեր»<sup>(\*\*)</sup>:

Համաձայնութիւնն ամփակուած էր 12 յօդուածներում, որ բաժանուած էր երկու մասի — ամմիջական գործադրելիք և հետազայում (պատերազմի զէպօտմ) իրազործելի:

(\*) Յ. Միրզայեամը մասնակցել էր Խամասորի արշաւանքին: Այդտեղից նրա մտերմուրինը նետ, որ աւելի ջրմօրէն շարուանակուել է Թեհրաւուս:

Համբարյան եւ կուսակցական զարձիք Յ. Միրզայեամը որոշ դեր է ունեցել հայ-պարսկական քարեւական յարաբերութիւնները սերտոցներու մէջ եւ երկուսուելք արժանացել է յարաբերի ու զնատամանութեան:

Խորհրդարանի երրորդ նատաշշաբանից սկսած, շարուանակարար, մի քանի նմակամ ընտրուել է պարսկահայուրեան, ապա՝ երր պարսկահայուրեանը սրուեց երկու պատզամատրի իրաւունք, նա ընտրուեց հարաւային պարսկահայուրեան ներկայացուցիչ Խորհրդաբանում:

Իր այս համգամանեան նա զնահատելի ծառայութիւններ է մատուցել երկին եւ միաժամանակ պաշտպանել է իր ընտրողների համբային շահերը:

Իբրև շնորհափ քարզմանիք, Յ. Միրզայեամը խիստ օգտակար աշխատանք է կատարել նաև զրական մարզում: Տարբներ շարուանակ նա պարսիկ զառական մի շարք բանաստեղծների զնահարեցը ծանօթացի է հայ ընթերցողներին եւ դրանով նպաստել երկու ժողովուրդների կազմերի ամբազման:

Պարսկերէնից կատարուծ քարզմանուրիւններից բացի, նա հրատարակի է ամգիերէնից եւ ռուսերէնից քարզմանած առանձին զրենք: Ռուսերէնից քարզմանի է Անդրմանովի «Դեւը»:

(\*\*) Ռուսուամի նամակից:

Արձանագրութիւնները կազմւում էին երկու լեզուով — պարսկերէն և Փրանսերէն :

Համաձայնութեան իր առաջին մասի անմիջական դործաղբութիւն, կուսակցութիւնը յանձն է առնում իր հնարաւոր աջակցութիւնը բերել ահճանադրականներին թէ՛ ներքին և թէ արտաքին ձակասներում :

Արտաքին ձակասում — Եւրոպայում — նա պիտի պաշտպանի նոր Պարսկասատանի զատը և պիտի աշխատի չէզոք Երկրներից որեւէ մէկին շահագրուել Պարսկասատանով, որպէսզի ազատուի ուսուանդիմական կլանումից :

Այս տեսակէտից, նկատի աննենալով պարսիկ բանակցողների ցանկութիւնը, կուսակցութիւնը իր անեցած կապերի միջոցով այդ աշխատանքը մ'է մասամբ պիտի կատարի Ֆրանսիայում և ջանքեր գործադրի յաջողցնելու, որպէսզի որոշ գումարի փոխառութիւն արտօի Պարսկասատանին : (Ֆրանսիային շահագրգուելու խնդրամ բանակցող ազատականներն առաջարկում են օգտարեւ նաև Մելքոն խանի ու Յովհ. խան Մասենեանի օժանդակութիւնից, որոնք այդ ժամանակ Եւրոպա էին զանուամ) : Կուսակցութիւնը խոստանում է հնարաւորութեան զէպրում կատարել ահճանագրականների ցանկութիւնը և արամացըրել զիանական ու ուազմական օժանդակութիւնը, յանձինս փորձուած զինուորական զեկավարների և պայթացիկն նիւթերի մասնագէտների :

Պարսիկ ազատականները խոստանում են յանձնառու լինել ապահովելու և յարմարութիւններ տալու կուսակցութեան ուժերի տեղափոխութեան Երկրի ներսում և զէնք ու ուազմամթերքի փոխազդրութեան արտասահճանից Պարսկասատան :

Նրանք խոստանում են ահճանագրականների յազդանակից յետոյ աւելի լայնացնել այն իրաւունքերն ու արտօնութիւնները, որ պարսկահայութիւնը ունի, ի վազուց անզի հանական հրովարակներով իր ներքին, ազգային-մշակութային կեանքում :

Պարսիկ ազատականները յանձն են առնում հայ զայթականներին յատկացնել Սալմաստի ու շրջակայ վայրերի պետական հողամասերը (Խալլսէ) :

Նրանք յանձնառու են լինում ջերմ աջակցութիւն բերել՝ զարկ տալու համերաշխ գործակցութեան հայ և մահճեղական տարրերի մէջ, թէ՛ թուրքիայում և թէ Կովկասում :

Խոստանում են իրենց հաւատարիմներից մէկին կ. Պոլիս ուզարկել, որպէսզի կուսակցութեան անգամներին յարաբերութեան մէջ զնի տաձկական մայրաքաղաքում դանուոզ պարսիկ ազատականների հետ, օգնելու այդ համագործակցութեան աշխատանքում :

Համաձայնութիւնից անմիջապէս յետոյ կուսակցութիւնն անցնում է իր յանձնառութիւնների իրազործման :

Ֆրանսիայում նա օգտառում է թէ՛ իր բարեկամ Փրանսիացի պատղամաւորների ու քաղաքական գործիչների օժանդակութիւնից և թէ մամուլի քարոզութիւնից Պարսկասատանի հանգէպ համակրանք ստեղծելու ուզգութեամբ, որ յաջողում է : Բայց, գժրախտարար, այդ յաջողութիւնը մնում է բարոյականի ահճանաներում : Գործնական արդիւնք չի ունենում, որպէսեւ Փրանսիական կառավարութիւնը դաշնակից էր Խոստանի հետ և բա-

բեկամ Անդլիային : Փոխառութեան համար էլ պահանջում էր թուսատանի երաշխաւորութիւնը , որին Պարոկաստանը պարտք էր չօշափելի մի գումար : Ներքին ձակատում եւս կուսակցութեան աշխատանքը կատարում էր , աւելի քան ծրագրուած եւ կանոնաւոր կերպով :

Կուսակցութեան մարմինների ներկայացուցիչներն ու գործիչները բոլոր վայրերում էլ սերտ կատ են պահում սահմանադրական զեկավարների հետ , խորհուրդներ տալիս , գործունեցութեան ուղեղծեր մատնանըշում եւ երեմն էլ զնիք , ուղղմամթերք ու ոռմբ տրամադրում որոշ գործողութիւնների համար :

Ապա կազմում են քիչ-շատ կրթուած պարսիկ երիտասարդներից խըմբեր — Երեմն խառն , հայ և պարսիկ — եւ դասախոսութիւնների ու զբոյցների միջոցով մտքեր պատրաստում :

Այսպէս շարունակում է մինչեւ Թաւրիզի ապստամբութիւնն եւ ռազմական գործողութիւնները :

Իսկ այդ ժամանակ կուսակցութիւնն իրազործում է իր միւս յանձնառութիւնը : Մշկը միւսի յետուից սահմանադրական կոինների շրջաններն է ուղարկում մի շարք ուղղմավայրերում փորձառու զարձած այնպիսի յայտնի զէմքեր , ինչպիսիք էին՝ Քեւին , Դումանը , ապա Սամսոնը , Զուլումաթը , Սմբատը , Խեցն և Մարտիրոսը — փաղանցն այն հերոսների , որոնց շարքում անակնկալորդն երեւան է զայիս նաև . մեծ ուղղմագէտ Եփեմը : Իսուսումն ինքն էլ է շտապում կոինների կենտրոն Թաւրիզ (1908 Հոկտեմբերի վերջերին ) եւ ամբողջովին մխրճում ապստամբ քաղաքի պաշտպանութեան եւ յազդանակի աշխատանքների մէջ :

Այստեղ նա իրազործում է նաև Համաձայնութեան միւս խոստումը՝ պայթուցիկների նկատմամբ : Ծոստումը հիմնում է պայթուցիկների փոքրիկ մի աշխատանոց և անձամբ զեկավարում ոռմբերի , հրթիռների եւ պայթուցիկ այլ զէնքերի պատրաստութիւնը :

Ծոստումի հախածնուութեամբ Թաւրիզում եւս կուսակցութեան ներկայացուցիչների եւ սահմանադրական զեկավարների միջև տեղի են ունենում բանակցութիւններ , որոնք յանկում են հետեւեալ համաձայնութեան .

«Հայ մարտիկները զալիս են իրենց զէնքերով . իսկ սահմանադրական զեկավարութիւնը հողում է նրանց ուղղմամթերքը , ծիկը ու ապրուստի միջոցները :

«Կուսակցութիւնն ինք է հայթայթում պայթուցիկ նիւթերն ու զէնքերը . իսկ պարսիկ զեկավարութիւնն աջակցում է նրանց փոխադրութեանը արասահմանից :

«Հայ մարտիկների պետերը , իբր փորձուած խմբապետներ , պահում են իրենց այլ հանգամանքը , իսկ պարսիկ զեկավարութիւնը զինուած ուժեր է տրամադրում նրանց հրամանի տակ» :

Ծոստումի վարած այլ բանակցութիւններին , ինչպէս և նրա ու Սաթթար խանի ու պարսիկ զեկավարութեան փոխ-յարաբերութիւններին մաս-

հակցում էր Հ. Թ. Ասրպատականի Կ. Կոմիտէի քարտուզար վահան Զարգարեանը<sup>(\*)</sup>:

Դառնալով նրանց վարած բանակցութիւններին, ցաւօք պիտի ասել, որ սահմանադրական դեկաֆարութեան կողմից արուած խոստումները — ինչպէս թեհրանի, նոյնպէս և թաւրիզի համաձայնութեամբ — մէծ ժամամբ մնում են անդորրապէրի:

Դեկավարութիւնը գործադրում է թեհրանի համաձայնութեան այն կէտը, որ վերաբերում է կուսակցական ուժերի տեղափոխութիւններին և պայմուցիկ նիւթերի ներածման զիրութիւն տալու հարցին:

Բայց ոչ մի կերպ չի իրագործում սահմանադրականների յաղթանակից յևսոյ պարսկահայութեան կրթական-շահկութային ժարգում ունեցած արտօնութիւններն ընդարձակելու խոստումը:

Ընդհակառակն, ընդարձակուելու փոխարէն, հւեցէտէ կրթաւում են աւանդական այլ իրաւունքները և հասնում մինչեւ համարեա վերացման:

Սարմատի չրջանի պետական հոգերից մի թիղ անգամ չի տրամադրում հայ զաղթականներին: Մինչդեռ այլ խոստումի իրագործումը պիտի զարգացնէր զիւղատնեսութիւնը այլ չրջանում և միաժամանակ պիտի զրուպւէին քրդերի յարաւութիւններն ու աւազակային յարձակումները:

Նոյն անտարբերութիւնն են ցոյց տալիս սահմանադրական զեկավարները նաև թաւրիզի համաձայնութեան խոստումների նկատմամբ:

Այսպէս, Ասրպատականի բոլոր չրջանների կոիւների ամբողջ ընթաց-

(\*) Ծննդել է Թաւրիզիւմ 1883ին: Տեղական «Արամեան» դպրոցն աւարտելուց յետոյ, կեամբի ասպարեզ մտմելով. նա երածարում է այլ պաշտօններից, որոնի իրեն համար պիտի ապահովէին ապազայ ամեղոր և փայլուն մի կեամբ: Մերժելով այդ պաշտօնները, նա իրեն ամբողջովին տրամադրում է կուսակցութեան և ամենում կովկաս: Մօս երկու տարի հարողի հանգամանելով շրջազայում է մի շարք շրջաններ և խրախուսամբի արժանանում իր կոտարած աշխատանքի համար:

Թաւրիզի վերադարձական պահ աստաննում է Կ. Կոմիտէի գործավարի աշխատամբները: Ազա նոյն մարմնի անջամ ընտրուելուց յետոյ, յանձն է առնում հարտուզարի և ներկայացուցի պաշտօնը:

Շեղեւրուած պարսկական յեղափոխական շարժումներով, նա հենց սկզբից կողմնակից էր կուսակցութեան զարծօն մասնակցութեան և այդ ուղղութեամբ բուռն շարողաւրին է կատարում ընկերների շրջանում:

Ամբողջովին մնի իրաւած Թաւրիզի պատամբութեան, նա իր եռանդում գործունեութեամբ մէծ համակրութիւն էր վայելում պարսկի սահմանադրական բուլոր շրջաններում — զեկավարութիւնից սկսած մինչեւ շարժային մոշահիդը:

Նույն էր, որ կազմակերպութեան կողմից հսնդէս էր զայխ հանրային հաւաքոյթներին ու միտնակներին և իր կրակու նառերով ընդհանուր խանդավառութիւն ստեղծում:

Առանձին ներխուժմատից յետոյ, ինստ կերպով հեռանդուած, նա ստիպուած է լինուած հեռանդալ Թաւրիզից և իր կուսակցական աշխատանքները շարումակել Երևանացաւ:

Թաւրած փաշայի սպանութեան զործով կազմուած ներիմին դատարանում վերիմիս կողմից ընորուած այլ հմտու քարզմանն էր, որ այնքան յաջող կերպվ կատարեց իր դերը և գոկունակութիւն պատճառեց թէ՝ դատարանին և թէ մանաւանդ. դատի ելիմին անհամբերութեամբ սպասող հայութեան...

քում, հայ ժարատիկների բոլոր ծախքերը, — ապրուստի, ձիերի կերի և այլ կարիքների հոգացումը — կատարուած է կուսակցութեան միջոցներով:

Այդ նպատակով Բիւրոյի կողմից էլ շօշափելի զումարներ են փոխադրում թաւրիզ:

Բայց այդ վերաբերմանքը երբեք չի արդիում, որ կուսակցութիւնն անվերապահօրն անցնի իր յանձնառութիւնների կատարման և լծուի աշխատանքի:

Եւ ամենից առաջ թոստոմքը, որ իր հնաւանդ սովորութեան համաձայն այսուեղ եւս ոգեւորուած, իր անսպաս կորսօֆի անխնայ դործադրութեամբ միաձում է աշխատանքի մէջ եւ ինքնարերաբար զանում շարժումին Ազին եւ ուզգամական ու այլ զործողութիւնների անուզգակի զեկավարը:

Մի երկու բնկերների մասնակցութեամբ նա Սաթթար խանի ու իրայինների հետ կարգադրում են զինուորական, կամաւորական ուժերի զասաւորութեան, խմբերի կազի ու փոխ-յարաբերութեան, զինուորական խորհրդի կազմութեան, նրան պարտականութիւնների ու իրաւասութեան, ինչպէս և եւեւմտական խնդիրները:

Մինչ այդ բոլոր զործերի զանուում էին խառնաշփոթ զրութեան մէջ: Իւրաքանչիւր չըջան — թագ — անէր իր կիսանկախ զեկավարութիւնը:

Թագերից իւրաքանչիւրն անէր իր առանձին զանձարկը, իր մատաք ու ելքով, առանց հաշիների հակակայի:

Զէնքն ու ուզգամամթերքն էր, որ զանուում էր Սաթթար խանի իրաւասութեան տակ, նրա կողմից հշանակուած մի հոգու հսկողութեամբ, որ այդ պատճառով կոչուում էր Հոսէյն «Փշշանքչի» (փամպուշտների պէտ):

Մինչ այդ, խմբագլուխներից աւելի ազգեցիկները, անուանապէս էին ընդունում Սաթթար խանի ընդհանուր հրամանատարութիւնը, եւ երբեմն, ինքնազլուի զործողութիւններով խանգարում ընդհանուր ձակատի կարգը:

Թոստոմքը, Քենին ու Կ. Կոմիտէի ներկայացուցիչը Սաթթար խանի ու իր երկու խմբագլուխների հետ կանոնաւորում են զրութիւնը եւ կարգի ու հսկողութեան տակ առնուում բոլոր զործերը:

Կենարունացնելով ուզգամական եւ այլ զործողութիւնների իրաւասութիւնը զինուորական խորհրդի ձեռքում, նրանք աւելի սերտ յարաբերութիւնների մէջ են զնուում թաղերի խմբագլուխներին եւ յաջողուում են սուզձել միասնական ուժեղ ձակատ:

Իսկ ելեւմտական խնդիրների կարգադրութիւնն էլ յանձնուում են յատուկ մի յանձնախնդրի:

Երկու յանձնախնդրերը — ուզգամական եւ ելեւմտական — կազմւում են խառն՝ պարսիկ եւ հայ անդամներից<sup>(\*)</sup>:

Այս յանձնախումբը զործի անցնելուն պէս կիրառում է հակակշուի կարգը եւ որչուում է զանձել նաև պետական բոլոր եկամուտները, որոնք մինչ այդ անտես էին արուել:

(\*) Ա. Թագարաւին այս մասին յիշում է իր «Պատմութեան» ա. հատորի 710բդ էլում:

Յանձնախումբը սրոշում է նոյնպէս հաւաքել պետութեան հասանելիք հացահատիկի թերքի ժամը և կարելիին շոփ մեծ քանակութեամբ ցորեն ամրաբել և միաժամանակ կանոնաւորել ալիւրի բաշխման զորձը :

Զինուորական խորհրդի աշխատանքները մեծ ժամամբ ծանրանում էին թուստովի ու թեռու վրայ :

Նրանք էին, որ նախապէս մշակում էին ուղարմական ծրագիրներն և Սաթթար խանի հետ խորհրդակցելով և նրա համաձայնութեամբ զործադրութեան զնում միացելու ամենու կամ անգի վրայ, Սաթթար խանի հետ խորհրդակցելով, մշակում էին իրենց ուղարմական ծրագիրն ու անցնում զործութիւնների :

«... Ուրբաթ օրը վեց հոգի հայ զաշնակցականներից — որ Քեռի ֆեղայու զեկավարութեամբ վերջներս են հասել Կովկասից — Խաթիրի զիրքերը զիսերու համար անցնում են այնակ :

«Երբ չուս են զայիս զիրքի յետեի ժամը, որ յանզիման է Ախմէչէիկի զիւզին, նկատում են, որ մեծ թուայ պետական ձիաւորներ են հաւաքուել այդ զիւզում :

«Քիուորները նրանց տեսնելով, մօտ հինգ հարիւր հոգի, քառասմբակ սլանում են նրանց վրայ :

«Քաջարի Փեղայինները, հակառակ իրենց թուի փոքրութեան, իջնում են ձիերից և թշնամուն կրակի տակ առնում : Նրանք ուղարմական այնպիսի վարպետութիւն են հանգչու թերում, որ ձիաւորները չփոթում են :

«Մոջանիգները այդ կոսուի ժամսին տեղեկութիւն ստանալով, մի քանի կողմից համառում են և սկսում հարցանագութիւն թշնամու զէմ, որ փախչելու մէջ է զանում իր փրկութիւնը : Նրա մի ժամը խոյս է տալիս մինչև Սարգարուղ (պետական բանակի կինարոնը) : Թշնամին ունենում է մի քանի սպանուածներ, իսկ հայ Փեղայիններից մէկը թէթեւ վիրաւորում է :

«Եկյո պարտութեան պատճառով իր արժանապատուութեան վիրաւորանք զգալով, Սամազ խանը (\*) յաջորդ օրը՝ Շարաթ, իր ամրող ուժերը զորձի զնելով, կէսօրուայ մօտ Ախմէչէիկից յարձակման է անցնում :

«Վայ հասած մոջանիգները զիմադրում են : Փամբ մէկին այնքան է մեծանում, որ Սարգարն(\*\*) ինքն էլ ռազմակաչու է շտապում :

Հայ զաշնակցական Փեղայիններն ու սոցիալ դեմոկրատ վրացինները ամէնքն էլ նրա հետ են լինում :

Առաջին անգամն էր, որ կոիւր տեղի էր ունենում ռազմական կարգով : Բոլոր խմբերը թէեւ զանուում էին Սարգարի հրամանատարութեան տակ, բայց մեծ կամ փոքր խմբապետներից իրաքանչիւրը իր վայրում առանձին զօրծ էր կատարում :

(Հնդգծումը մէկնից) :

(\*) Պետական հեծեալների հրամանատարը : Տիտղոսավ Շուշա-Էդ-Գովլէ :

(\*\*) Խօսէլ Սարգար խանի մասին է :

«Հեծեալ կամաւորներն էլ ձիերից իջնելով, անցնում են շարքերը : Եթերք ժամուայ խիստ զօտեմարտում երկու կողմից էլ դիմագրում են, բայց երեկոյեան թշնամին թուլանում է :

«Կամաւորները միահամուռ զրոհով դուրս են մզում թշնամուն իր տասեւմէ կ զիրքերից եւ փախուստի մատնում :

«Զիւորները ունենում են սպանուածներ եւ վիրաւորներ :

«Կամաւորներից ոչ մի սպանուած :

«...Այս կոիններում (Աւար, Հոքմավար, Խարիբ և այլն) հայ եւ վրացի ֆեղայինները եւ որոշ մոջահիդներ մեծ անձնուիրութիւն ցոյց տուին»(\*):

Իր ներքին անզուսպ մզումով, Ռոստոմը Թաւրիզում ընդհանրապէս ներկայ էր լինում կոիններին: Նա համարեա միշտ էլ միանում էր մարտական խմբին, անցնում էր բնդհարումների գծերին շատ մօտ եւ անկասկած կուոզ մարտիկներից զուցէ աւելի մեծ չափով ապրում էր կոինների ելեւ չները եւ սրտի տրոփումները:

Հակառակ ընկերների խիստ զիմագրութեան եւ արգիլելու փորձին, զրանից բացի, նա համարեա միշտ էլ, անձամբ էր կատարում (մէկ կամ երկու տղաների հետ) պայթուցիկների զետեղումները: Այս էլ թշնամու գծին շատ մօտ: Նա միաժամանակ ցանկանում էր մօտկից հսկել ուումբերի արձակումների վրայ: Իր այս բնթացքով անձնուիրութեան բարձր օրինակ էր հանդիսանում շրջապատին, որ պաշտամունքով ենթարկւում էր նրա խօսքին, հրահանգին, բայց մանաւանդ նրա զաղափարական հմայքին:

Ինչպէս վերեւում յիշուեց, Ռոստոմի նախաձեռնութեան արդիւնք էր պայթուցիկների արհնեստանոցը, որ հաստատուած էր հայկական թաղի մի նեղ փողոցում, փոքրիկ մի տան մէջ, Գէորգ Կիրակոսեանի (Բուլզարացի տիտղոսով) անմիջական հսկողութեան տակ, կուսակցական մի խումբ երեւասարդներ՝ ուումբեր, պայթուցիկներ եւ հրթիռներ էին պատրաստում:

Ռոստոմի կատարեալ վստահութիւնը վայելող Գէորգը սակայն, երկար ժի մնում իր գործի վրայ: Նա զո՞ն է զնում իր մի անզզուշութեան եւ որը թողնում իր հսկողութեան տակ աշխատող մօտ տասր երիտասարդներին: Մոնղահինների մէջ առաջացած մի անախորժ դէպքի պատճառով յուզուած վիճակով արհեստանոց վերազառնալով, Գէորգն անզիտակցարար մի քիչ աւելի ուժեղ է սեղմում ձեռքում յցուած ուումբը, որ պայթում է եւ ուզզակի կտոր-կտոր անում, շիտակ, աղնի եւ ուրախ բնաւորութեամբ, ամէնքին սիրելի դարձած Գէորգին (1910 թ. Մարտ 25):

Պայթումը կատարւում է ուղղահայեաց, որով փրկւում են նոյն սենեակում աշխատող երիտասարդները: Առաջանում է թեթեւ հրդեհ, որ անժեղապէս հանգցնում են պայթիւնին ներկայ եղող երկու հոգի եւ ազատութ պայթուցիկների պահեստը:

(\*) Ա. Քառարակ «Թարիխը Մաշրութիաք իրամ» (Պատմութիւն իրամի Սահմանադրութիւն), հատոր ա. էջ 838, 862 և 871: (Վերոյիշեալ հասուածը հեղինակը մէջ է թերեւ տեղական ըլմչուման» եւ «Մուսաւար» բերերի հազորդազրաւրիւմներից):

իրենց սիրելի Գէորգին թաղելուց յետոյ, երիտասարդները, հենց յաջորդ օրուանից, անցնում են իրենց աշխատանքին, այս անզամ թոստոմի անժիջական հովանու տակ:

Ցիշենք, որ այդ արհեստանոցի պայմանուցիկներն իրենց զանազան ձեւերով սարսափ էին տարածում թշնամու վրայ:

Բայց այսգանով չէր սահմանափակում թոստոմի զործունէութիւնը թաւրիզի ազատամբութեան ժամանակ: Արը աննկուն պահակ, նա մի րոպէ իսկ հանդիսաւ մնայ չգիտէր: Նու ամէն տեղ էր, ամէն զործի: Ամէն աշխատանք ծրագրոց, հակոց եւ միաժամանակ զործագրոց: Նա Սաթթար իսանի ժօտ էր անցնում զրոների ծրագիրը միտսնարար մշակելու համար: ապա ինքայ էր լինում նաև նրանց զործագրման ժամանակ:

Արդու Հոսէյն Նաւային թոստոմի թաւրիզում ունեցած զործունէութեան մասին հետեւեալ յիշատակութիւնն է անում<sup>(\*)</sup>:

«...Ինթերցազները զիտեն, թէ Թաւրիզի կուիներում հայերը ինչ մեծ մասնակցութիւն ունեցան եւ ինչպիսի անձնազնաւթիւններ կատարեցին: Այդ ժամանակ զրեթէ բարոր հայերը «Խաչնակցութիւն» կուսակցութեան էին պատկանում եւ այդ կազմակերպութիւնը, որ ամրագի աշխարհի հարաշատ կենտրոններում ոյժ եւ հեղինակութիւն ունէր, առանց որինէ ակնկալիին եւ միայն ազատութեան զաղափարի համար (բնդզումը մեզանից) նետուեց պայքարի մէջ եւ բազմաթիւ կոփներ մզեց:

Թոստոմը, որ նրանց զեկափարն էր եւ եկել էր Թաւրիզ, կուիներին եւ հայերի տարած աշխատանքներին մօտից վերահասու լինելու համար, Բաղրը իսանի հետ եւս մի տեսակցութիւն է ունենում: Բաղրը խանը նրան ճաշի է հրատիրում:

Երբ ինքը՝ Բաղրը խանը իր համհարգներով տեղաւորուում են սփռոցի շուրջը, իր ծառային կարգադրում է, որ սենենակի անկիւնում, թոստոմի եւ նրա զործակից եւ թարգման Վահան Զաքարեանի համար առանձին մի սրբուոց վուել եւ յետոյ որպէս ներզութիւն, զառնալով Վահան Զաքարեանին, ասում է:

— Աշնա! (Մահօթ: — Թաւրիզիցիները այդպէս էին կոչում հայերին), կը ներէք, ի հարկէ, բայց մեր կոնր այդպէս է պատուիրում:

Հետազայում Վահան Զաքարեանը միշտ ասում էր, որ Բաղրը խանի այդ արարքը մեզ այնքան էլ անհանդասութիւն չպահանջանեց, բայց նրա ներզութիւն խնդրելու այդ ձեւի համար, — որ Թաւրիզի յեղափոխութեան ճանապահին այնքան մեծ զահողութիւններ էին անում, չափազանց ծանր էր»<sup>(\*\*)</sup>:

Թոստոմը մարտիկների հանրակացարանումն էր — խորհրդակցում էր Քեռու հետ, ուզմական ծրագիրներ էին մշակում, միաժամանակ հետաքըր-

(\*) Արդու-Հոսէյն Նաւայի, «Ոմիդ երան», թի 523, էջ 5:

(\*\*) Բնազիրը վերաբազրուած է Անյառեամբ: Լեզուական անհարութեան մը աւելի, տպագրական շարուածէն մէջ մէկ կամ երկու տողի փախուստի մը արդիւմէ կը բռնի ըլլալ: Հ. 8.

ՔԸԾՈՒՈՒՄ Է ՀՐ ԺԱՐՄԻԿՆԵՐԻ ԿԵՆՅԱԳՈՎ ու ՎԻՃԱԿՈՎ Է ՆՐԱՆՑ ԿԱՐՔԵՆԵՐԻՆ ու պահանջները լրացնելու ցանկութեամբ :

Նա ազգային իշխանութեան ներկայացուցչի հետ էր, և այ համայնքին վերաբերող խնդիրների մասին խորհրդակցելու համար :

Վերջապէս, Առաստամը ժողովներումն էր, բայց հազուազիւտ անցամ : Ընկերական այն հաւաքոյթներում, որոնք մնացած մների ու հրացանաձութեան որոտումների ոյսրաներում, տեղի էին ունենում «Հրարիսի վրայ»...

Առաստամն ամէն աեղ էր, իւչ իր ներկայութեամբ և թէ մահաւանդ իր բացակայութեամբ...

«ԵՓԲԸԱՄ» (էջ 125-145), Թեհրան 1964

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ, 1908 -- 1909

Հ. Յ. Դաշնակցութիւնը չէր կարող անտարբեր մնալ դէպի պարսկական շարժումը, ուստի և կուսակցական շարքերում սկսում են քննել հարցը. հրապարակ են զալիս երկու տեսակչտներ. ըստ ոմանց այդ շարժումների մէջ մեր մասնակցութիւնը պիտի սպասէր մէր ուժերը, որոնք այնքան պէտք էին թուրքահայ շարժման համար. միւսները կողմնակից էին մասնակցութեան. Խոստումը յատկապէս կողմնակից էր մասնակցութեան, գտնելով որ Թուրքիայի հարեւան պետութիւնները սահմանադրական կարգեր ունենալով՝ պիտի ազգէին նաև Թուրքիոյ ուժիմի մրայ:

1906 թուրք աշնանը Վ.րէժի կ. Կոմիտէն Շրջանային Ժողով է գումարում Թարթիզում. շրջանների պատգամաւորները իրենց հետ պիտի բերէին իրենց շրջանի ընկերների կարծիքը՝ պարսկական շարժումների առթիւ: Խաշտից (Գիլանի շրջան) զալիս է եփրեմը, իրեն հետ բերելով իրենց շրջանի խորհրդակցական ժողովի որոշումը, ըստ որի Գիլանի ընկերների մեծամասնութիւնը կողմնակից էր շարժման մասնակցելու (\*):

Վ.րէժի Շրջանային Ժողովը հարցը քննութեան առնելով, իր որոշումը ուղարկում է Հ. Յ. Դաշնակցութեան Կրկ Ընդհանուր ժողովին, Վահան Զաքարեանին ընտրելով իրեւ պատգամաւոր:

Ընդհանուր ժողովը քննութեան առնելով հարցը, հասնում է հետեւեալ որոշում-բանաձևի. —

«Նկատելով որ պարսկական ներկայ շարժումը կարող է դառնալ ժողովրդական արքանցման բնոյթ ունեցող հասարակական խոշոր երեւոյք՝ թէ՝ Պարսկաստանի եւ թէ՝ Արեւելքի համար, եւ գտնելով նրա տարածուելու լայնանալը ցանկալի թէ՝ համամարդկային եւ թէ՝ հայկական տեսակէտիք. —

Ընդհանուր ժողովը յանձնարարում է Պարսկաստանի դաշնակցական մարմններին ու անհատներին. բոլոր միջոցներով նպաստել այդ շարժման զարգացման, մտցնելով պարսկական արքանցման մէջ այն ազատազրական ու ամենավարական-աշխատարական ողին, որը բխում է Դաշնակցութեան Սրբազից (\*\*):

Բնդհանուր ժողովի այս որոշումից յետոյ տատանման մէջ եղող ընկերներն եւս, իրեւ կուսակցական կարգականութիւն, որոշում են ակտիւ-

(\*) Վկայութիւն Խ. Մ. Խամի:

(\*\*) «Իրօշակ», 1907 թ. թիւ 5:

մասնակցութիւն բերել պարսկական շարժումներին :

Թաւրիզում արդէն սկսուել էին կոխուները յեղափոխականների եւ միապետական գորքերի միջև։ Ժամանակի ժողովրդական հերոսներն էին Սաթթար և Բազրը խաները։ Սակայն աեզական աժերը բաւական չէին զէմ զրնելու համար պետական քիչ թէ չափավորությունը գորքին (որը սպառագինուած էր) եւ միապետական-հակայեղափոխական խաների միաւոր խմբերին, որոնք տողորսուած էին թայախեթենչութեամբ։

Թաւրիզի պարսիկ յեղափոխականները դիմում են Հ. Յ. Դաշնակցութեան, մարտական ուժեր խնդրելով, զէմ զնելու համար անրնդհատ յարձակումներ գործող թշնամուն, որը հաստատուած Թաւրիզի մի քանի թաղերում (յատկապէս Դաւաշի թազը, որ հակայեղափոխութեան միջնարերդն էր) ուժակոծում էր քաղաքի յեղափոխական թագերը և այնաեղ հաստատուած գիրքերը, երբեմն գրոհի անցնելով։ Ակսում էր զաշնակցական մարտիկների մուտքը Կարպատական։

Քեռու խումբը մուտք է գործում Թաւրիզ։ Քիչ յետոյ զալիս է նաեւ թէքիրդաղցի Գէորգը, որ ուումբ պատրաստով էր Խոստոմի ցուցուններով եւ զեկավարութեամբ։ Այդ գործում Խոստոմին օգնում է նաեւ Կարսապէտ Պիռնեան, որը Լիբաւայի «Հայկապէան - Թամարեան» պարոցի տեսուչն էր։ Խմբի վրայ հետազայում աւելանում են նաեւ Մ'նջոն եւ Արշակ Սիւնեցին։

Կոհիները տաքանում են։ ամէն անզամ, երբ պարսիկ յեղափոխականները մեծ յարձակումներ են կրում եւ գիրքերը վտանգուում են, լուր են տալիս հայ մարտիկներին, եւ Քեռին, իր խումբը վերցրած, օգնութեան է շտապում, սկսում են գործել հայ մարտիկների մոսիններն ու մասուզէրները եւ թշնամին խուճապահար՝ կորուսներ տարավ փախչում է։ Այսպէս ուժեղ բախումներ են տեղի ունենում Լալայում, Սարի Դաղում, Հոգժավարում, Ալ-Վարում եւ այլուր, որոնք Թաւրիզի արուարձաններն են։

1908ի Հոկտեմբերին Խոստոմն արդէն Թաւրիզ էր։ ունմբեր, ռակետներ եւ ականներ է պատրաստում, իրեն օդնական ունենալով թէքիրդաղցի Գէորգին։ Մեծ ազգեցութիւն են ունենում Խոստոմի նետած ռակետները, մարտիկների գործածած ուումբերը եւ թշնամու անցման ճամբին թաղուած ականները, որոնք պայթում են եւ զոհեր խլում։ Թշնամին խուճապի եւ արտափի է մատնում, բարձրանում է յեղափոխական մասսաների հողեկանը։ Այսպէս, Խոստոմը ականներ է թաղում (Զումշուղի Հետ) Սարի Դաղում, միապետական էյնջ Դովլէի բանակի գիրքերի տակ։ Մի այլ ական Մարտիրոս Զարուիչեանն ու Զումշուղի տանում թաղում են Լալայի ճակատում։ Այս ականները պայթելով, մեծ զոհեր են խլում յարձակուող թշնամու շարքերից<sup>(\*)</sup>։

Յեղափոխական Թաւրիզն ապրում էր արտակարգ եռուգեռ, չնայած հակայեղափոխական գորքերով շրջապատուած լինելուն։ տեղի էին ունենում միտինգներ, արտասանուում էին կրակոտ ու ոգեւորիչ ճառեր՝ պարսիկ, հայ

(\*) Տե՛ս Մարտին (Զումշուղ) Տէր Գալստեամի յուշերը (անտիպ)։

եւ վրացի յեղափոխականների կողմից : Թաւրիզահայ երիտասարդութիւնը խանդավառութեան ու ոգեւորութեան արտակարգ օրեր էր ապրում, մանակցում կոխներին, ուումբերի պատրաստութեան, զինքերի փոխադրութեան, նշանառութեան ևալյն : Այդ կոխներից մէկում է (Լայալի), որ զո՞ն է զրնում թաւրիզեցի երիտասարդ Սէր Մարտիրոսանը, իր անուանակոչչութեան տօնի օրը : Ընկում են, հերոսական մահով, նաեւ Քեռու խմբից մի քանի խիզախ մարտիկներ : Եեղափոխականին վայել թաղումներ են տեղի ունենում նուազախմբերով եւ յեղափոխական երգերով, արտասանում են կրակոտ դամբանականներ :

Թոստոմն ամէն տեղ է, զիբքից-զիբք, ճակատից-ճակատ, զիշեր թէ ցերեկ : Արտակարգ հղայրական համերաշխութիւն է տիրում այլազդի յեղափոխականների միջեւ՝ Հայերի, պարսիկների, վրացիների և կոմիսարի թուրքերի : Նրանց մէջ է նաեւ Մոսկովայից եկած մի ուսու յեղափոխական՝ սոցիալ-դեմոկրատ Ալեքսէւը : Նաեւ անդիխական մի թէրթի անդիխացի թղթակից, որ ատրճանակը կողքին, այցելում է բոլոր առաջաւոր դիրքերը և թղթակցութիւններ ուղարկում (\*): Վերջը այս թղթակցը սպանում է կոռումիջոցին :

Քաղաքը պաշարուած է, կտրուած են Հազորդակցութեան ճամբաններ, քաղաքում պարէնի սուր կարիք է զղացւում, սովո՞ւ քազցը տիրել են յատկապէս պարսկական զանգուածներին, բայց «յեղափոխական Թաւրիզ» հոգը չէ, նա տոկում է, տանելով բոլոր զրկանքները, նա ապրում է յեղափոխական ոգու վերելքը :



1909 թուի Ապրիլ ամսին ուսու ցարական բանակը, գեներալ Մնարսկու հրամանատարութեամբ, մուտք զործեց Առողջապատճեն և եկաւ Թաւրիզի Աղջի գետի կամրջի մօտ ճամբար հաստատեց : Թուաների զարով՝ կոխները դադարեցին : Նոյն ժամանակներում Եփրեմը զրաւեց Թէհրանը, սահմանադրութիւն հռչակեց, Մահմադ Ալի Շահը փախաւ :

Թոստոմը և զինու որական խորհուրդը որոշեցին, որ Քեռու խումբը Թաւրիզից հեռանայ : Վարչէի Կ. Կոմիտէի ներկայացուցիչ Վահան Զաքարեանը բանակցեց Սաթթար խանի հետ և պայմանաւորուեցին, որ Սաթթար խանը քանդել տայ քաղաքի հարաւակողմի այցիների պատերը, ճամբար բանայ, որպէսզի Քեռու խումբը աննկատ զուրս գայ քաղաքից և Աջի Հայի կամուրջից բաւական հնուու զետն անցնի և հեռանայ :

Վահան Զաքարեանը բանակցեց նաեւ գեներալ Մնարսկու հետ և պայմանաւորուեց, որ խումբը թօղնի քաղաքն ու հեռանայ : Թուաները կարծում էին, որ խումբը պիտի անցնի Աջի գետի կամրջով (\*): Բայց կուսակցական-

(\*) Տես Մարտին (Զաւմշուլ) 8էր Գալստեանի յաւշերը (անտիպ) :

վիճուուրական խորհուրդը, առ ի զգուշութիւն, իր հասկացած ձամբան քնարեց :

1909 թուի Մայիս 1ի օրը, զիշերուայ ժամը 12ին, Քեռու խումբը և Ռոստոմի կազմ ու պատրաստ խմբուեցին Թաւրիզի հայոց Լիլաւա թաղի գորսացի մօտ հրապարակուած եւ ձամբայ բնկան : Խումբն անցաւ այդիների քանդուած պատերի արանքով՝ լուսաբացի մօտ անցաւ Աջի գետը, կամուրջը թագնելով շատ աջ. իր առաջին կայանը ևզաւ Ալիշանչ զիւզը, ապա խումբը զիշերեց թասու : Յաջորդ օրը շարունակելով ձամբան Ալմա-Մարայի վրայով, երեկոյեան զէմ հասաւ Դալասար, ուր ընդունուեց Սամսոնի կողմից (\*):

Ասացինք, որ պարսկական յեղափոխութեան ըրչանին, Ասյի, Սալմաս-ար և Ռուբիսայի ըրջաններում կուռում էր հակայիշափոխականների զէմ խըմ-պաղեաւ Մամբար իր 25 հոգինց խմբով : Նրա խմբից սպանուել էին 5 հոգի (Զալումաթ, Յարութիւն, Մամբիկոն և այլքու ուրիշներ) : Մամբար եւս իր խմբով արդէն եկել էր Դալասար :

Սամբասում կար Սամսոնի մարտական խումբը՝ բազկացած տեղացի 25 մարտիկներից : Նրանք այլ ըրջանը գերծ էին պահում յարձակումներից և հակայիշափոխականների ազգեցութիւնից :

Սամբասում Ռոստոմը յուր է ասուում, որ Շարափ բէզը (Անանոսրի) հիւր է զայիս մեզ. նա պիտի զար Խոսրովա զիւզը : Ռոստոմը, Սամսոնը, Քեռին, Մամբար, Մշոն և Սարհամար իրենց ձիաւորներով, մձե խմբով մեկ-նում են Խոսրովա : Շարափ բէզն արդէն այնաեղ էր մի խումբ զինուած քրուերով : Հիւրասիրութիւն է աեղի ունենում և երկար զրոյց : Շարափ բէ-զի նպատակն էր՝ բարեկամածական կապեր ստեղծել՝ Դաշնակցութեան հետ, մոռանալ անցեալը : Այդաեղ է, որ քրուերը պատմում էն Անանոսրի կոսորի (1897) մանրամասնութիւնները : Նրանց պատմելով, Կարոն (Ստեփան Զօրեան, Ռոստոմի եղբայրը), որ պաշտուել էր քրուերի կողմից, մենակ կըու-ւել էր մինչեւ զիշեր, առաւօտեան քրուերը տեսել էին, որ Կարոն արգէն մե-սել է (\*\*):

Երեկոյեան Շարափ բէզը մեկնում է Խանասոր, իսկ մերոնք վերադառ-նում են Ղալասար :

Մի քանի օր յետոյ, զիշերը, Ռոստոմը նամակ է ստանում Քեօհնա-շահարից, Հաջի Փէջնամազից, որով վերջինս խողրում էր անմիջապէս օդնու-թեան հասնել իրեն, որովհետեւ իրենց և Թուրք կոնսուլատի միջեւ կորիւ էր ծագէլ : Թուրք հիւպասոսի գրութեամբ՝ Թուրք գորքը պիտի մանի Քեօհնա-շահար և քարուքանց անի :

Են լոյրը չքացուած՝ Ռոստոմը, Սամսոնը, Քեռին, իրենց հետ վեր-ցրնելով Մարտիրոսին, Խոսրովին և Զումշուղին, մեկնում են Քեօհնաշա-հար : Տաճկական մի վաշտ, արեւմուտքից զալով, կորում էր Դիլմանի և Քեօհնաշահարի միջն ընկած ձամբան, երբ վաշտապետը նկատում է Փեղա-յիների խմբին, զինուորական պատուի է կենում :

(\*) Տես Մարտին (Զումշուղ) Տէր Գալստեանի յուշերը (անտիպ) :

(\*\*) Ալայուքիւն Մ. Արքահամեամի:

Քեօհնաշահաբում տաճկական հիւպատոսարանի զինուորները կուռմէ էին փողոցներում, Ռոստոմն իր խմբով անցնում է զնում Հաջի Փէշնամաղի տունը : Վերջինս ուզում է հիւրասիրել, բայց Ռոստոմն անմիջապէս, չզիջելով ընկերների թախանձնաքին, մէնմէնակ զնում է տաճիկ հիւպատոսի ժամ : Ստանալով Ռոստոմի այցելամսը, Բուրք հիւպատոսը անմիջապէս եւ սիրալիր բնդունում է Ռոստոմին, որ յայտնում է, թէ ինքը Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյի ներկայացուցիչն է և խնդրում էր դադարեցնել կրակը . Բուրք հիւպատոսը պատասխանում է՝ «Այս ստիճագութիւնների համար ես Քեօհնաշահաբը պիտի պատմէի, քարը քարի վրայ չպիտի թողնէի, բայց քանի որ ինձ մօտ եկողը իմ կառավարութեան դաշնակցի բարձր մարմնի անգամն է, ես պատրաստ եմ զիջել», եւ անմիջապէս կարգադրում է կրակը զաղարեցնել, տաճիկ զօրքը հաւաքում է հիւպատոսարանում (\*) :

Ռոստոմի այս ազդեցիկ քայլը իիստ ուրախացնում է Հաջի Փէշնամաղին, որը խոստանում է երախտահատոյց լինել:

Ռոստոմն ու իր խումբը վերադառնում են Դալասար : Մի քանի օրից յետոյ կուսակցութիւնը կարգադրում է բոյոր Փեղայիներին թողնել Պարսկաստանը, նրանց մի մասը անցնում է Բուրքահայաստան, միւս մասը դէպի Կովկաս, մի քանիսն էլ մնում են Սարմատում : Այսպիսով փակում է պարսկական յեղափոխութեան առաջին շրջանը :

ՀՀ. 8. ԳԱՆՇԵԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ 1890-1918»

Թերապն, 1950 (էջ 55-77, հատուածներ)

(\*) Վկայութիւն Մ. Աբրահամեամի:

ՅՈՒՇԵՐ ՌՈՍՏՈՒՄԷՆ

1909 թուի Օգոստոս ամսի վերջերուն, Տրապիզոնի ազգային վարժա-  
րանի ընթացաւարաներէն քանի մը հոգի նոյն դպրոցին ուսուցիչ Բարունակ  
Տէր Յարութիւնեանի հետ մեկնեցանք Կարին՝ Սանասարեան վարժարանը,  
սովորելու համար: Թոփ սարի լանջերուն վրայ հանդիպեցանք Եղիշէ Խոփ-  
չանին, որ Կարինէն կու զար Տրապիզոն, Հ.Յ.Դ. Վառնայի Բնակ: Ծողովին  
մասնակցելու:

Զինքը չէինք տեսած, բայց անունը լսած էինք: Մեր ընկերներէն Մհա-  
րուպ Կակունեանը, որ արդէն Սանասարեանի աշակերտ էր, անձնապէս ծանօթ  
էր Ե. Թոփչևանին և հիացած էր անով:

Մանօթանալէ յետոյ, Ե. Թոփչևանը քանի մը բոսէ մեզ հետ խօսե-  
ցաւ: Եւ քանի մը բոսէի մտերմիկ ու սիրալիք զրոյցը թովիչ տպաւորութիւն  
թողուց մեր վրայ: Դիմագծի համաշափութիւնը, լայն ճակատը, աչքերը աղ-  
նըւական արտայրյալութեամբ, պատկառապլու էին:

Քանի մը ամիս վերջը Ե. Թոփչևանի գագաղը տեսայ Կարնոյ եկեղե-  
ցին մէջ: Ահապին չէնքը բերնէ բերան լեցուն էր Եւ, առանց բացառութեան,  
բոլորը կ'արտասուիին: Հայրուկները խոժոս զէմքով պահակ կանգնել էին:

Խորհրդաւոր թափծոս լուութեան մէջ երեւաց կարճահասակ, փոքրիկ  
մօրուքով, ճաղաս զլուխով մէկը, որ գագաղի առաջ կանգնելով՝ սկսեց իր  
դաշրանականը: Կը յիշեմ առաջին քանի մը խօսքերը.

«Այսօր Եղիշէն մեր մէջ չէ: Մեզմէ կը բաժնուի առյաւէտ: Դաւաճա-  
նի գնապակին դո՞ն: Անփոխարինելի կորուստ մըն է մեզի համար: Սա-  
կայն, Եղիշէն բացառութիւն մը չէր: Զայն ծնող ազգը կը ծնի շատ Եղիշէ-  
ներ»:

Եւ առակէ յետոյ, կարկուտի նման իրարու ետեւէ խօսքեր թափուեցան:  
Բազմութիւնը հեծկլուաց . . .

Խօսղը Ա. Վասմեանն էր, որ 5-6 տարի յետոյ նահատակուեցաւ Մեծ  
Եղիշէնի առաջին օրերուն:

Տիսուր էր Կարինեցին և զայրոյթով լեցուած: Քանի մը ամիս յետոյ,  
դաւաճանը կրեց իր պատիժը: Սակայն թափուր էր Ե. Թոփչևանի տեղը:  
«Յառաջ» չունէր այլեւս իր կարող խմբագիրը: Ազգային վարժարանները  
դրկուած էին իրենց սիրելի տեսչն:

Անցան օրեր ու ամիսներ: Կեանքը արագընթաց կը սլանար: Եւ օր մըն  
ալ Կարինի մէջ երեւաց ուսուցիչներուն ուսուցիչը, դործի ու յեղափոխու-  
թեան առաքեալ Ստեփան Զօրեան՝ Ուսուումը:

Կարին Եկատ, որպէս ազգային վարժարաններու տեսուէ: Գիտէինք, որ  
Դաշնակցութեան հիմնադիրներէն էր: Բայց անոր մեծութեան մասին գաղա-

փար շունէինք : Եւ այն օրերուն զայն ըմբռոնելու կարողութիւնն ալ չաւնէինք : Մէնք տակաւին կը սքանչանայինք միայն հայդուկներուն վրայ, որոնց ամէն մէկ քայլին կը հետեւ էինք : Մէնք կը տեսնէինք Տուրպախը, Զեմլեակը, Կայ-ծակ Առաքելը, Սևպուհը և Նիկոլ Դումանը :

Նիկոլը միշտ մինակ կը տեսնէինք : Զէր ծիծագեր, չէր խօսեր : Նիշար ու Երկարահասակ մարդ մըն էր : Երբ անոր կը հանդիպէինք, անպայմոն կանգ կ'առնէինք, որդէսպի լաւ դիտենք զինքը : Եւշտակի ու տապաւրիչ հայ-եացքով՝ լուս, կ'անցնէր, որսի հրացանը ուսին : Անոր սիրած զործն էր Եփ-րատի շամփուտներում սազեր որսալը :

Մէր ասացին տպաւորութիւնը Խոստոմի մէծութեան մասին ունեցանք այն ատեն, երբ տեսանք, որ հայդուկները զինուորական բարեւի կը կենա-յին, երբ իրենց մօտով կ'անցնէր ան :

Երեք տարի Խոստոմը մէր սիրած ուսուցիչը եղաւ, սակայն անոր կա-րեւոր զասախօսութիւնը կամ բանախօսութիւնը չլսեցի : Գերազանցօրէն զոր-ծի մարդ էր : Ամէն տեղ էր, ոմէնուն հւետ : Թէև սակաւխօս էր, բայց ուր որ ալ լինէր, անմէիցապէս կը զգացուէր անոր ներկայութիւնը եւ անոր կարծիքի անհրաժեշտութիւնը :

Անհուն սէր ու պատկառանք ունէր անոր հանդէպ եւ Սանասարեանի աշակերտութիւնը :

Պրով. Խաչատուրեանի տեսչութեան օրով, Խոստոմը Սանասարեանի մէջ բնական զիտութիւններ կ'աւանդէր : Միշտ կը խօսէր Լամարքի ու Դար-վինի մասին : Առոր լուսութեան մէջ կը հետեւէինք անոր մտքերուն : Որովհետեւ կը խօսէր կարճ, ամփոփ եւ բովանդակալից : պէտք է ուշադիր հետեւէինք :

Ամենէն շատ սիրած իր նիւթը Դարվինի էլուլիցին տեսութիւնն էր : Երբ կը խօսէր բնական ընտրութեան, զոյութեան կռուի մասին, որ ուժեկ-ները կ'ոչնչացնեն թոյները, կը մերժէր ընդունիլ այդ տեսութեան ճշգրտու-թիւնը բնութեան, առաւել եւս մարդկային հասարակութեան մէջ : Առ կ'ը-սէր, թէ մարդկային հասարակութեան մէջ կայ զիտակից անհատը եւ իրե-րօգնութեան կամ փոխադարձ օգնութեան բնական օրէնքը : Կենզանիներու մէջ ալ կը գործէ այդ օրէնքը, բայց բնազդարար, իսկ մարդոց մէջ՝ զի-տակացար :

Գիտական հարուստ ու բազմակողմանի հմտութիւն ունէր Խոստոմը : Ասիկա բաւական էր մեզի համար, որպէսպի պաշտէինք զինքը :

Շատ պարզ ու համեստ էր : Հազորդակից էր մէծին ու փոքրին, մատ-չելի էր հասարակութեան բոլոր խաւերուն :

Մէր մամիկ մը կը հարցնէ Խոստոմին .

— Տղամ, զուն ամուսնացած ես, զաւակներ ունի՞ս :

Խոստոմը քմծիծաղով պատասխաներ էր .

— Տանը մնալու եւ ընտանեկան հոգսերով զրազելու ժամանակ չեմ ունեցել :

Դասերէն զուրս մեղ հետ ընկեր էր : Կը խօսէր, կը կտտակէր, երբեմ ալ անուշ ծիծաղով կը ճաղէկը մէր թերութիւններն ու երիտասարդական մեղ-քերը : Անոր ծիծաղին մէջ, կարծես թախծութիւն, վիշտ կար, որ մեզի հա-

մար հրապուրիշ էր : Մենք այդ կը բացատրէինք անոր ծանրաբեռնուած լինելով : Աշակերտական գրոսանքներու ժամանակ, մեզ կը վարժեցնէր դիտելու բնութիւնը, զննելու զայն : Իր զիտողութիւններուն մէջ սբախօսութիւն կար, որմէ միշտ կը զգուշանայինք :

Խոստոմի բարկութիւնը հազուադէզ էր : Նման պարագային զգոյշ էինք, որովհետեւ զիտէր Ե՛ւ ապտակէլ : Անզամ մը ընկերս, աղջկանց վարժարանին մէջ անվայիլ արայայաբութիւն ունեցած էր : Խոստոմը երկու քառականչեցանոց : Ես, իր ընկերս պաշտպանող, բոլորովին ուրացայ ճշմարտութիւնը : Խոստոմի զէմքը այլայլու եցաւ :

— Այդ ընկերասիրութիւն չէ, — ըսկելով ապտակ մը տուաւ ինծի եւ ուսուցչանոցին զուրս ըրաւ, իսկ բուն յանցաւորը ապասուեցաւ :

Այլեւս կ'ամշնայի անոր երեսը նայիլ : Քանի մը օր յետոյ, առիթը զըտաւ զիս խրատելու :

Շատ կը սիրէր երգեցողութիւնը : Երգի զասերուն միշտ կը մասնակցէր, բայց ձայնը չէնինք լսեր :

Խոստոմ երբեք կարեւորութիւն չէր տար իր արտաքինին : Իր զիմարկին մինչև կօշիկները սև էին : Փողկապին ալ սև էր եւ շատ անզամ ծուռ կապուած : Հազուստները թէեւ արզուկուած չէին, բայց մաքուր էին : Կրքալքը դանդաղ, զլուխը միշտ առաջ թէրած : Դէմքը, որ ծածկուած էր սև ու միջակ մեծութեամբ մօրուքով, բնաւ ածելի տեսած չէր :

1911ի ամառն էր կարծեմ, երբ չըջապայից Արեւմտեան Հայաստանի բոլոր վայրերը եւ իրեն հետ խումբ մը աշակերտներ բերաւ զպրոց : Անոնց մէջ էին Ազրիւր-Սերորի երկու զաւակները՝ Սամսոնն ու Ազատը, առողջ, կայտառ ու յազմանդ պատանիները : Անոնց մէջ էր Ե՛ւ Հրայրի տղան, նիւհարակաղմ, փոքր, ձարապիկ ու վասվուն պատանի մը՝ կրակուտ աշքերով :

Խոստոմ կը զուրգուրար անոնց վրայ, ինչպէս անոնց հարազատ հայրը պիտի զուրգուրար :

Կը սիրէր կիւլէցը՝ բժրչամարտը : Իր սիրած վեհիվանն էր համագիւղացի ընկերս՝ Աւետիս Մաղումելանը : Զրունակներու ժամանակ, կը բանէր Աւետիսի թւելին եւ մէյտան կը կանչէր անվախները : Երբեմն, երբ թուրք աշակերտներու կը հանդիպէինք, Խոստոմի վեհիվանը մէյտան կու զար :

Բժրչամարտի ժամանակ, մենք աւելի կը դիտէինք Խոստոմի հրամ-ւանքն ու ոգեւորութիւնը՝ քան կիւլէը :



1912 թուի ամառը փակուեցաւ Սանասարեան վարժարանը, եւ ամբողջ աշակերտութիւնը որպէս «բժրոստ» զուրս թափեցաւ :

Դպրոցը նորէն բացուեցաւ Սերաստիոյ մէջ : Պոլոյ ինամատկայութիւնն այս կամակոր քայլը առած էր՝ հակառակ բարերարի կտակին, որուն համաձայն իր զպրոցը պէտք է լինէր մայր երկրի ծոցը, յատկապիս Բարձր Հայքի մէջ : Նորաստունկեաններուն պէտք էր, որ Դաշնակցութեան շունչին հեռու միջավայրի մը մէջ ըլլար զպրոցը :

Սանասարեանի մէջ դաշնակցական ուսուցիչներ միշտ ալ կային : Առակայն, աշակերտութեան մէջ ոչ կուսակցական հավաքերութիւն դոյսաթիւն ունէր և ոչ ալ այդ ողգութեամբ որեւէ աշխատանք էր կատարուած :

Վարժարանին զիշերօթիկ հանգամանքը և արագին կեանքչն բորորդին կարուած յինքը համական պատճառներ էին ծայրայեղ հուանքներու առջ գալուն : 1911 թուին, Վարժարանին մէջ գոյութիւն ունէր 18 հոդինոց անիշխանական խմբակ մը :

Ուսմբր ունէր իր վարչութիւնը, որ կը զեկովարէր զազտնի ժողովները : Ունէր իր ուսպական զրադարձնը, հարաստ փիփսովայական և հաստարակագիտական զիրքերով :

Մէր ձեռքին առակ էին Բակունինի, Կրապուտկինի և Ժան Գրավի զիրքերը : Տարուած էին նիցչով, որուն բոլոր հեղինակութիւններն ունէինը Փրանսերէն լիզուով :

Դպրոցական ներքին կեանքին և Սանուց Միութեան մէջ՝ այս խմբակը զեկավար զիրք ունէր :

Զիմացանք, թէ ինչպէ՞ս յայտնի զարձաւ այս զազտնի խումբին զոյտթիւնը, Բայց կը թուի, թէ առիթը նիցչէի զիրքերն էին, որոնք մէր ձեռքերուն մէջ տեսաւ տեսուչ Ա. Խաչատրնեանը և, առանց նեղանալու, բառ :

— Այսպիսի զրքերը զուք զես եւս չէք կրնար հասկնայ :

Ճիշդ էր նկատողութիւնը, բայց ո՞գ էք ուշազրութիւն զարձնազը :

Օր մըն ալ մէր խմբի մէջ էրեւաց Ս. Վրացեանը, որ անիցիանական անանը փոխեց Երիտասարդ Սոցիալիստական Խմբակ անուան : Ան մէդ տրուաւ «Յառաջ»ի զրադարանի զրքերուն ցոյցակը իրրեւ ընթերցանութեան նիթ : Սակայն, մընք այդ զրքերը կարգարու շրջանը անցեր էինք :

Երբ Ս. Վրացեանը Կարինէն հեռացաւ, մէր խմբակը վերանուանեցինք «Անարխիս-Սոցիալիստական Խմբակ» :

Սանասարեանի մինույորտի արդինքն էր այս :

Պոլսոյ խնամակալութիւնը 1912 թուի ուսումնական տարուայ վերջերը Կարին զրկեց զպրոցի նախկին սահերէն Պալազեան վարդապետը : Երկու ամբողջ ամիս զասերը զաքրեցան : Ոչ զասազուլ էր և ոչ ալ որեւէ շարժում կար աշակերտութեան կողմէ : Իսկ Յունիսի ամսու վերջերը, բոլոր զիշերութիւններ զրկուեցանք մէր ծնողներուն մօս, այլևս Սանասարեան վարժարանը չվերադառնալու պայմանով :

\* \*

Տրապիզոն քաղաքէն և Եսմարայի շրջանէն 4-5 հոգի, վերջինթեր զարարանն էինք : Կ'ուզէինը միջնակարգ զպրոցի վկայական ունենայ : Պէտք է զիմէինք Պոլս :

Զգոստու ամսուն մէկնեցանք Պոլիս, ուր զանազան տեղերէ տղաներ էին հաւաքուեր : Սակայն, ուր որ դիմեցինք, պազ ու անտարեր վերաբեր մունք տեսանք քրմբուանքունքու հանդէու :

Բ. Զարդարեանի և Գ. Խաժակի աջակցութեամբ Կեղրոնական վարժա-

բանը զժուարութեամբ համաձայնեցաւ ընկունիլ մեզ, պայմանաւ որ քննութեան ենթարկուէինք:

Առաջին քննութեան առարկան հայոց լեզուն էր: Յաջողութեամբ արտինք քննութիւնը կեւոն Շանթին: Երկրորդը՝ մաթեմաթիկան էր, որ անշառոց անցաւ: Իսկ Կուրտիկեան էֆենտին իր թրքագիտութեամբ ջարդութչուր բրաւ մեզ:

Յուսահատակցանք: Բոլոր զպրոցներուն դռները զայ էն մեր առջև: Ամէն օր Ալգատամարտափակութիւնը մէջ մէր տարաերու մասին կը խօսէինք: Առաջ ընկերներու հոգին շատ կը հանէինք՝ մէր զանգատաներով: Բոլորն ալ համբերութեամբ կը լուին եւ կը խրատէին մեզ, բայց ոչինչ կրնային ընկերնութեան աննպաստ արգիւնիքն զէմ:

Ահա օր մըն ալ «Ալգատամարտափակութիւնը» մէջ երեւաց մոստումը, որ աւետեց մեզ նոր Սահասարեանի բացումը:

Շատապ մէկնեցանք Տրավիզոն, անկչց ալ Կարին եւ Սեպտեմբեր մէկին նոր Սահասարեանի մէջ էինք: Խոստումն էր մէր տեսուչը:

Նոր Սահասարեանի շնչքին մէջ արտաքինապէս որեւէ փոփոխութիւն նկատելի չէր: Գոյքի մէծ մասը փոխազրուեր էր: Զկար միայն հանրակացարանը: Խնամակալութեան աչքին անհրազմալիք ուսուցիչները մնացեր էին: Բայց անոնք ալ աշակերտութեան սիրելիներն էին: Զգալիք էր միայն Ա. Խաչատրյանի բացակայութիւնը, որ Պոլիս էր տեղափոխուեր: Զայն փոխարինեց մեր Քաջարուանին, իսկ Փիզիքայի ուսուցիչը՝ Տիգրան Աղամալեանը Թիգլիսին էր Լկեր: Ան Լզաւ մէր սիրելի ուսուցիչը: Հեռաւոր տեղերէ եկած աշակերտները տեղաւորւեցան մասնաւոր տուներու մէջ:

Մոստումի շունչին տակ, ուսուցչութիւնը եւ աշակերտութիւնը յաջողութեամբ բոլորներին 1912-13 ուսումնական տարին: Տարին անցաւ շատ ուրախ եւ շուտ:

Կարնեցիք իրենց ծնողական գուրզուրանքը պահեցին մեզի հանգէպ: Տօներուն անոնց հիւրն էինք:

Բայց ամէնէն հարազատը մոստուն էր, որ այժմ մէր հայրիկն էր: Յաճախակի կ'այցելէր մէր բնակարանները, կը նստէր ու կը զրուցէր մեզի հետ, կատակներ կ'ընէր: Իսկ իր բնակարանը մէր հարազատ տունն էր: Իր գուռը միշտ բաց էր մէր առջեւ:

Ազատ ժամեր չունէր: Հանգստանալու մասին կարծես գաղափար չունէր: Պարզ ու շատ համեստ կ'ապրէր Աղամալեանի հետ միասին: Ննջասեն-Լակին մէջ երկու մահճակալ կար միայն, շատ թէթեւ ծածկոցով: Սենեկը երեք չէր տաքցուեր: Ի՞նչպէս կը զիմանային Կարնոյ ցրտին, մեզ կը զարմացնէր: Միւս սենեկը եւ խոհանոց էր, եւ հիւրասենեակ, եւ աշխատանոց: Հասարակ սեղան մը ու քանի մը հին աթոռներ կային հու:

Կերպուրը իրենք կը պատրաստէին: Դրսէն ջուրը իրենք կը բերէին:

Աղամալեանի հետ հետեւեալ ծիծաղելիք գէպքը տեղի էր ունեցեր: Ցուրտ առաօտ մը, ջուրի մօտ կը հանդիպի իր բրացիին եւ կը բարեւէ:

— Բարեւ, հարեւան:

Դրացին նեղացած կը պատասխանէ.

— Հայրիանը դուն ես :

Ազամալեանը շշկլած տուն կու զայ և կը պատմէ Ռոստոմին : Վեր-  
ջիս բացատրութիւնը լսելէ յետոյ կը հասկնայ, թէ ինչո՞ւ հարեւանը հայ-  
վան էր եղած :

1913ի ամբան Նոր Սանասարեանը տուաւ իր առաջին ընթացաւարտնե-  
րը, իսկ Սեբաստիա փոխազդուած Սանասարեանը կ'ապրէր իր կազմաւորման  
ըրջանը :

Ամառուայ արձակուրդներուն, վերջնիթէր դասարանի աշակերտներուն  
հետ, Ռոստոմ չըջակայեց մայր Երկրի խորերը, գնաց մինչեւ Մշոյ Ս. Կա-  
րապետ վանքը :

Բնիկերս՝ Աւետիսը կը պատմէր, որ այդ ուզեւորութեան ամբողջ ըն-  
թացքին Երեք հանգիստ շունեցաւ : Հայրաբար կը ինամէր աշակերտները  
և գիշերները, մինչեւ որ ազաները չքնէին, ինքը չէր առանձնանար : Ճա-  
սապարհին անոնց հետ կը քնէր, անոնց հետ կը ճաշէր :

Ռոստոմը այցելեր էր բոյոր սրբատեղերը ու պատմական վայրերը,  
Փետայիներու և նահատակներու տները, գերեզմանները : Յուզուած պատմեր  
էր անոնց մասին : Աշակերտները արցունքներ էին նկատեր անոր աչքերուն  
մէջ :

1914ի Սեպտեմբեր ամսու վերջերը, անսպասելիօրէն Հանդիպեցինքինքնի  
Ռոստոմին : Թուրքերը, թէեւ տակաւին պատերազմի չէին մասնակցեր, բայց  
Թուրքիոյ կեանքը կանգ էր առեր : Մեր չըջանի հայկական դպրոցները գոց  
մնացին :

Աւետիսին հետ գիւղէն քաղաք էինք զացեր քանի մը կիներու հետ՝  
զէնք ու փամփուշ տեղափոխելու համար : Տրապիզոնի շուկային մէջ յան-  
կարծ Հանդիպեցանք Ռոստոմին : Բոպէ մը վարանման մէջ ինկանք : Նոյն հա-  
գուստներն էին, բայց զիսուն թրքական ֆէս ունէր եւ պեխերն ու մօրուքը  
այնպէս էր խուզած, ինչպէս թթու թուրքերը : Կանապարէր, կ'երթար նաւ  
առնելու :

Շատ չխօսեցանք : Ինքը քանի մը հարցումներ ըրաւ, ձեռքերը մեր ու-  
սերուն վրայ դրաւ, թօթուեց եւ արագ քայլերով գնաց դէպի նաւահանգիստ :

«ՀԱՅՐԵՆԻՔ» ամսագիր, թիւ 3, 1952

ՄԻ ՔԱՆԻ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՒ ՃԾՂՈՒՄՆԵՐ  
ՌՈՍՏՈՄԻ ՄԱՍԻՆ ԳՐԱԾ ՅՈՒՊԻԱԾԻՍ ԱՌԹԻՒ

Ընկ. Յ. Յովակիմսան (Արշակութի) «Հայրենիք»ի մէջ լոյս տեսած իր այս գրութեան լուսապատճենին կցած է ձեռազիք կարգ մը նշդում-լրացումներ, որոնցմէ կը բաղենի հետեւեալ մասերը.

Ընկ. Ռուբէն Դարրբինեանը շարք մը փոփոխութիւններ ըրած է, որոնք ըստ իս տեղի ունենալու չէին: Յօդուածիս խորագիրն էր «Աշակերտական յուշեր եւ տպաւորութիւններ»:

Նկարագրել եմ Տուրպախի սրճարանը, իր գրադարանը-բնթերցարանը, առանձին սենեակներով, ի հակազրութիւն Ամերիկայի ակումբներուն, որ լոկ խաղաղայրեր ու պարապ վախտի ժամանցներ են: Այդ սրճարանը Փետայիներու կեղրոնն էր, ուր երրեմն կը յաճախէինք Սանասարեանցիներու՝ լրագիրներ կարգալու համար: Բոլոր Փետայինները անխափը, ուր որ կը հանդիպէին Խոստումին եւ Նիկոլ Դումանին, զինուորական բարեւի կը կանգնէին:

Այո՛, 20 տարեկան հասակիս Խոստումէն ապատկ ստացել եմ, բայց ան զիս ուսուցանոցից դուրս չձգեց, այլ ես զուրս նեստուեցի ու այլեւս նրա աշքին կը խուսափէի երեւալ, ինչ որ ինքը նկատած էր: Օր մը զպրոցի դարպանին սուբք զուրս զրի թէ չէ՝ Խոստումը իրա յատուկ ժամիտով երկար ժագերէս բռնելով ասաց: — «Ինչք՝ ևս ինձանից խուսափում» եւ «ուզեղից գրսպողական կեղրոնը թոյլ է, պէտք է զօրացնեա բնելով թոյլ տուեց զնալ: Ես ու թէ նեղացել էի, այլ ամաշում էի նրան հանդիպէլ: Շատ անզուսով էի եւ շատ բորբոքող: Խոստումի այս հազուազէս բարեկութենէն կը զգուշանային Փետայիններն անզամ, ինչպէս պատմել եմ Տուրպախի դէպքը:

Գրութեանս մէջ չեմ յիշած մի քանի կէտեր, որոնք յատկանշական են մէծահոյի համեստ առաքեալին:

1912ի Մայիս 1ի զաշտահանդէսին հետեւեալ դէպքը պատահեցաւ: Բազմութիւնը կ'առաջնորդէին բոլոր Փետայինները՝ զինուորական քայլերգով. Խոստումը ամենից մերժնը՝ իր սովորական քայլուածքով, միշտ զլուխը զէպի առաջ թէքած ու խոհուն կը հետեւէք ամբոխին: Խումբ մը աշակերտներ եւս հետեւացնք, առանց շարքերը մտնելու: Երբ հասանք զաշտ — սեղանները կանաչ զաշտի վրայ բացուեցան եւ սկսաւ կերուխումը: Շատ չանցած մէր զպրոցի տեսուչ պր. Ա. Խաչատրեանը, որ նոր էր ամուսնացած նղիչէ Թոփչեանի այրիի հետ, եկաւ զաշտ ու Փետայիններու սեղանին քովէն անցած ժամանակ բարեւեց անոնց: — Սակայն անարդական բառեր շպրտեցին անոր: Փետայու ընթոնումով Խաչատրեանը իրաւոնք չունէր ամուսնանալու իր նըշանաւոր ընկերով կնոջ հետ...: Այլայլած դէմքով Խաչատրեանը մօտեցաւ

Առատոմին մի բան ասաց ու զաշտէն հեռացաւ : Առատոմը զանգաղ քայլերով զէպի Փետայիներու սեղանը զիմեց, բայ երեսոյթին իրենք կը զգային այդ ու Առատոմը զեռ իրենց չհասած՝ Աշատըրեանին վիրաւորական խօսքեր ասողները սեղանը ձգել եւ հեռացել էին զաշտից :

Ֆարոցական կեանքից յետոյ Առատոմին հանդիպել եմ երկու անգամ : Առաջինը 1914ի աշնան, Տրավիզոն քաղաքում, փողոցի մէջ — որը նկարագրել եմ : Մէկ էլ, վերջին անգամ, Առատոմին հանդիպեցի 1917 թուին Երեւանում, Արևմտահայերի 2րդ համազումարում, ուր Տրավիզոնից պատցամաւոր էի բնարուած : Այս անգամ ազատ պայքանների մէջ ազատ զրուցեց ինձ հետ . նոյնիսկ զիս ձաշարան տարաւ : Ինձ պատճել առուաւ 1915-16 թվականի մեր մի տարսւան կեանքը Տրավիզոնից յեռներում եւ խորհուրդ տուեց մանրամասն զրի առնել :

Տրավիզոն վերադարձիս զրի ատի և յանձնեցի նոյնայէս նոր Սահմարեանի սոսուցիչ Տիգրան Աղամարեանին, Առատոմին յանձնելու համար : Աղամարեանը Բասսաստանի քաղաքների Միութեան լիսագոր ներկայացուցիչն էր, որի մօս կ'աշխատէի ևս եւ ինձ միջակաւած էր ադքատ թուրքերին ձրի հաց բաժանել : Հաւանարար Աղամարեանի ողբերգական մահով այդ զրութիւնն էլ կորաւ :

Այնուհետեւ Առատոմը հետաքրքրուեցաւ Տրավիզոնի հայերու ներկայ կեանքով, և խորհուրդ տուեց բնարունիքները եւ հաւաքուած երեխաները հեռացնել Տրավիզոնից — համարելուի այդ կորուած եւ վանզաւոր ըրջան : Ինչ որ հետազային իրականացաւ :

Այստեղ կ'արժէ նշել համազումարում և անոր փակման հանդէսում տեղի ունեցած զէպքերը :

Համազումարում պատուոյ անդամներ էին Առատոմը և Անդրանիկը, բեմի վրայ նստած Նախագահութեան կողքին :

Առատոմը իր սովորութեան համաձայն ընաւ չէր խօսէր եւ կամ բայ կարգի որոշ թերագրութիւններ կ'անէր, չատ հակիրճ : Խոկ Անդրանիկը շարունակ կր խօսէր, կր պոսոր մէկի խօսածը որ իրեն ճաշակին չէր համապատասխաներ, կր սպառնար ու աթոռ էլ կր վերցնէր : Զինքը առաջին անգամ կր տեսնէի, հիասթափուեցայ և մասին բախ : — Երանի թէ զինքը շրտեսնայի . . . : Բայց պատահեցաւ աւելի վատը՝ փակման հանդէսի ժամանակ : Թեմականի սրանը լցուն էր : Սեղանին զիմին նստած էր Առատոմը, նրա ձախ կուշտին Անդրանիկը, խոկ աջ կուշտին Մատթ Եարոն : Առատոմը վերցրեց բաժակը մի քանի խօսք ըսկելու համար . ժամանակի սպատական համաձայն առաջին չերթին վանը յիշեց . . . մէկէն Անդրանիկը պառթիկաց . . . Առատոմը երեք անգամ կրկնեց, — Անդրանիկ, տեղը նստիր, — ու ան նստաւ : Սեղանակիցներէն փաշայապշտ մէկը (անունը չեմ յիշեր) պոսաց Առատոմի վրայ . . . զուն օ՞գ ես որ փաշան կը յաեցնես . . . : Առատոմը ի հարկէ չպատասխանեց նրան, բայց Արամը, որ սոտքի էր, մէկ էլ տեսնեմ ձեռքը զրպանը խոյացաւ այդ մարդու վրայ . ի հարկէ բնիերները վրայ ինկան եւ թոյլ չտուին : Այդ իրարանցման պահուն, բեմի վարագոյրը մի քիչ բացուեցաւ և Տէլի Կազարը զինուած, վայրկեան մը կանգնած մնաց . նա ուրիշ մի քանի ֆետայինե-

բով բեմում կը ձաւէիր։ Տէլի Դազարի երեսումով ամէն ինչ խաղաղուեց և սեղանը վերջացաւ համելի մթնոլորտում։ Արամը ի հարկէ շմասնակցեց սեղանին, ձգեց և հեռացաւ։

Առաջին անգամն էր որ այսպիսի հանդիսաւոր ժողովի և սեղանի կը մասնակցէի, դրա համար էլ այն առենուայ տեսածներս և տպաւորութիւններս անմոռանալի են մինչեւ այսօր։

ԿԱՐԻՆՈՒՄ

«Յառաջնից զատ իմ ժամանակի մեծ ժասը խլում էր կուսակցական աշխատանքը՝ Ռուսակամի անմիջական զեկավարութեան տակ։ Ռուսամը ոչ միայն կուսակցական, այլև ազգային կեանքում կենարունական համագրող ու զեկավարող դէմք էր՝ նոյնքան հեղինակաւոր Առաջնորդարանում ու կուսակցութեան առջեւ, որքան եւ հասարակական ու կուսակցական ըրջաններում։ Եւ ոչ մի գործից չէր խուսափում։ Հաւաքար ենանդով արհեստաւոր տղաներից երգչախումբ էր կազմում եւ ուսուցչական ժողովներ էր գումարում կամ դասախոսութիւններ էր կարգում ընկերներին։

Նոր էր հասել Կարին, երբ Արձնեան զպրոցի սրահում սկսուեցին Ռուսամի զիշերային դասախոսութիւնները ընկերների համար։ Ամէն Շարաթերեկոյ Արձնեան սրահը բերնէ բերան լեցում էր, մեծ մասամբ արհեստաւոր երիտասարդութեամբ, որոնց Ռուսամը դասախոսում էր Հ. Յ. Դաշնակցութեան ծագման և զարգացման մասին։ Խօսելու շնորհըով օժտուած չէր։ Խօսում էր Հանդարատ, բառերը՝ փնտուելով, պարզ ու հանրամատչելի լեզուով, բայց ունկնդիրները ողոկ չէին զալիս նրա բերանից։

Գրեթէ շրբուհինզ ամիս նա խօսեց Դաշնակցութեան մասին։ Ես համարեա բառացի արձանազրում էի նրա խօսքերը։ Իրքեւ ատազդ, անգնահատելի գանձ էր Դաշնակցութեան պատմութեան համար։ Երեքչորս հարիւր էջոց հատոր կը լինէր։ Ռուսամից խնդրեցի, որ աչքէ անցընէ ձեռազիրը եւ սրբազրէ սիալիները։ Առաւ եւ մինչեւ իմ հեռանալի Կարինից, ժամանակ չունեցաւ կարգալու։ Խօսացաւ վերջը աչքէ անցընել եւ ուղարկել ինձ, շըստացայ։ Վերջը ի՞նչ եղաւ այդ թանկազին ձեռազիրը, չիմացայ։ Ռուսամը մէկին յանձնել էր, բայց չէր յիշում ում։

Եւ զարմանալի էլ չէր։ Խօսամը մի ժամ հանգիստ չէր մնում կարինում, միշտ գործի վրայ էր՝ ամէն տեղ, ամէնքի հետ, եւ ամէն բանի մէջ։ Մեծ ու փոքր գործեր գոյութիւն չունէին Ռուսամի համար։ Եւ նրա օրինակին հետեւում էինք և մենք, իր համհարզները Կարինում։ Փիլուը եւ ես։ Կուսակցական ներքին աշխատանքը եւ արտաքին պայքարը հակասակորդների հետ մեր վրայ էր ծանրացած։

Զիմ յիշում, ո՞ր ամսին, Կովկասում սոցիալ-զեմոկրատ եւ Թուրքիայում հնչակեան եսալէմը — Գ. Կողիկեան — եկել էր Կարին, հնչակեան քարոզութեան համար։ Դիմել էր մերոնց, որ իրն հնարաւորութիւն տրուի հրապարակային դասախոսութիւն կարգալու Արձնեան զպրոցի սրահում։ Փիլուը եկաւ, թէ հնարաւորութիւն տանք։ Ես որեւէ առարկութիւն չունէի։ Եւ մեր երիտասարդ ընկերները անցան գործի։ Ռուսամը դգուշացրեց տեսէք, խայտառակութիւն չհանէք։

**Պէտք** է ասել, որ Եսայէմը բաւական կարդացած, խօսելու որոշ գիրք ունեցող, պարկեցա զարձիչներից էր : Կովկասում անզամ էր Դասիթ Անահունի եւ Բախչի Խշանեանի սոցիալ-դեմոկրատական հաստատին՝ ազգային Հակոմիսներով : Արծնեան սրահում լաւ բազմութիւն կար եւ զասախօսութիւնը անցաւ չառ հարթ, միայն դասախօսոր իր խօսքի վերջում անխռչեմութիւնն ունեցաւ քննադատական մի քանի սուր բառեր արտասանելու Դաշնակցութեան հասցէին :

Սրահը արեկոծուեց : Ամէն կողմից լսուեցին բողոքի ձայներ : Կծու խօսքեր զասախօս Եսայէմի հասցէին : բուուղքներ...

Ի՞նչպէս եղաւ : Ի՞նչ պատահէց : Մէկ էլ Եսայէմը անհետացէլ էր բեմից, ամրիոնը անցել էր մեր բնկերների ձևոքը եւ մեր երիտասարդ բնկերները ձեռքբերի վրայ ինձ բարձրացնում են բեմ... Սրահի սրոտնդոսս պահանջի վրայ զրաւում եմ ամրիոնը եւ սկսում նոր զասախօսութեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան մտորն : Եսայէմը սարտափահար փախել էր յետեւի գոնից...

Եթի, դասախօսութիւնից յետոյ, Փիլոսի հետ յաղթական մտանք Խոստոմի մօտ, նա սեւ ամպի պէս մոռայ՝ յանդիմանեց մեզ.

— Զէ՞ք ամաչում, խայտառակեցիք մեզ...

Առանձին խայտառակութիւնը չկար մեր կարծիքով, բայց Խոստոմի կուսակցական պարզեցաւութիւնը չէր հաջուում անհաւատարմութեան հետ. մենք խօսք էինք տառել Եսայէմին օգնելու զասախօսութեան կազմակերպութեան, պարտաւոր էինք հաւատարիմ մնայ տրուած խօսքին :

Բայց նման դէպքեր յաճախ չէին պատահում . Կարինը զաշնակցական քաղաք էր եւ կուսակցական բախումների առիթներ չէին լինում : Ազգային իշխանութիւնը կազմուած էր անկուսակցական զետեի վրայ : Առաջնորդ Արմբարտ Եպիփառուուր իմաստուն եւ շրջանայեց մարդ էր : Դպրոցական գործի զեկավարը ընդհանուր ահուուց Խոստոմն էր, որին ամէնքը յարգում էին : Սահասրեան վարժարանի տնօրինն էր Փրուֆ . Ա. Խաչատուրեանը, թէեւ զաշնակցական, բայց նոյնպէս չափաւոր հայեցքների տէր մարդ : Հին ուժեժից մնացած ուսուցիչները, Փրուֆ . Սոգիկեան, Արույեան զործակցում էին որդուանց կամ ստիպուած : Դուրսը, հանրային կենանքը զանում էր երիտասարդաց Միութեան ազգեցութեան տակ : Եւ բոլորի վրայ, անկատելի կերպով՝ Խոստոմի շունչը : Գործէրը ընթանում էին սահուն եւ համելի : Կարինի ազգային կենանքը փոխորկուց վերջը, երբ խնամտկալութիւնը որոշեց Անաստրեան վարժարանը փոխադրել Սրբազ՝ հակառակ ժողովովի բուռն բողոքի եւ ընդդիմութեան : Ի՞նչ հաշիւ էր այդ, ինչը էին ձգտում Պոյսի ազաները, որոնք, հաւանական է, տեղեակ էլ չէին զպրոցի իրական կացութեան : Հետեւանքը եղաւ՝ հին ու նոր Սահասրեան վարժարաններ, որոնց շուրջը փրրթաւ կրցու պայքար :

Ի՞նչպէս ամէն տեղ, Կարինում էլ ազգային վարժարանների նիւթական վիճակը խեղճ էր : Շնորհիւ Սահասրեանի, դպրոցները, ընդհանրապէս, ունէին պատրաստուած եւ իրենց գործին գիտակից ուսուցիչներ : Խոստոմի ջանքը եղաւ, առաջին հերթին, բարելաւել ուսուցչական կազմի նիւթական դը-

**բութինը :** Կային ուսուցչուհիներ, որոնց ռոճիկն էր ամսական մէկ մէջիտ : Ես յիշում եմ սրանց ուրախութիւնը, երբ Ռոստոմի տուժարկով, հոգաբարձութիւնը բարձրացրեց երկու արծարիլ : Ճիշդ է, ապրուսար աժան էր և մէկ արծաթով. էլ կարելի էր սովամահ շվինել, բայց հասարակութեան հոգեբանութիւնը ամէն տեղ էլ նոյնն էր . զարժապեար ազդի ծառան է և փողի մասին մտածելու չե . . . Ռոնինը նորիրուած ուսուցչիներ եւ ուսուցչուհիներ հորեց եւ նորերից, որոնց զաղափարական շունչով զաստիքարակուում էր կարինի մատաղ սերունդը եւ որոնց շատերի անունն անզամ, աւաշզ, չի յիշում այլեւ :

... Մօտ մի տարի միայն մնացի կարինում : Այնուհետեւ շատ երկիրներ այցելեցի, շատ ժողովարգներ տեսայ, բայց զմայլելի թիոյում էլ երազում էի Կարինի աննման վերջալոյսը, Նիկաղարայի ժխորի առջեւ էլ աչքիրիս պատկերանում էին Սրատառիր եւ Խաչափայտի զուլալ ջրերը, և սըրտրաց շնորհինը Կարինի անմոռանալի հայութեան . . .

Բայց ամենից աւելի անմոռանալի է մնում մտերժութիւնը Ռոստոմի հետ : Իր կետնքի և զործի օրինակով նա ամբազնեց իմ մէջ այն զաղափարներն ու ոպին, որոնցով ապրում ու ոպեւորում էր մեր ժամանակի երիտասարդութիւնը : Առանց շափաղնոցութեան կարող եմ ասել, որ Ռոստոմը եղաւ իմ ուսուցիչը և կեանքի ուղեցոյց աստղը : Ամէն անզամ, երբ ևս մատնըում եմ զժուարութեան, երբ անլուծելի հարցեր մաշում են միտքս, ևս ինձ հարց եմ տալիս՝ իմ տեղը ի՞նչ կ'անէր Ռոստոմը այս պայմաններում : Եւ ինչ որ, իմ կարծիքով, պիտի անէր Ռոստոմը՝ անում եմ ես :

**Մի յատկանշական զրուազով փակեմ այս զլուխը :**

Կարինում և մօտից եւ աւելի լաւ ճանաչեցի Ռոստոմին : Ճանաչեցի եւ աւելի մտերժացայ :

Իր արտաքին երեւոյթը, իր ապրերակերպն ու մտածերակերպը սիրելի դարձան ինձ : Սոկրատի իմաստուն զլուխը՝ լայն եւ ամուր ուսերի վրայ, խորոնկ, բայց պարզ միտքն ու միտք հոգին, եւ իր անանձնական անհատականութիւնը անսահման տպաւորութիւն էին գործել իմ վրայ :

**Մի օր Փիլոսն ու ևս ասացինք Ռոստոմին .**

— Բացարիք մեղ, ի՞նչ է Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը :

Նա ժպտաց Ռոստոմի ժպիտով : Տրորեց ճակատը եւ պատասխանեց .

— Թէ Աստուած սիրէք, ինձ այլպիսի դժուար հարցեր մի տաք : Ես ինչպէս բացարեմ անբացարելի մի բան : Դաշնակցութիւնը կարելի չէ բացատրել . բացատրելու ամէն փորձ փոքրացնում է Դաշնակցութիւնը : Դաշնակցութիւնը կարելի է եւ պէտք է զգալ միայն : Զգալ, ապրել եւ հաւատալ : Մարդ հաւատում է Աստծու, բայց չի կարողանում ասել, թէ ի՞նչ է Աստուած :

— Այնուամնանայիւ, ի՞նչ է քո կարծիքը Դաշնակցութեան մասին :

— Դաշնակցութիւնը, իմ կարծիքով, ամենից առաջ ապրում է եւ զորդ : Ասուած է՝ ի սկզբանէ էր բանն . ես ասում եմ՝ ի սկզբանէ էր զործն :

— Մեծ զործ, վրայ բերեց Փիլոսը :

— Ոչ, մեծ ու փոքր զործեր չկան . կան միայն պատուաւոր եւ ան-

պատիւ գործեր, ինչպէս կան պատուաւոր եւ անպատիւ մարդիկ :

— Ուրեմն, ի՞նչ է Դաշնակցութիւնը, յամառեց Փիլոսը :

Բժ. Յովսէք Տէր-Դաւթեանը, որ ուշագրութեամբ հետեւում էր մեր խօսակցութեան, շղիմացաւ և ջղայնացած տաց Փիլոսին .

— Ի՞նչ ես թու թակի նման կրկնում՝ ի՞նչ է, ի՞նչ է : Դաշնակցութիւնը Դաշնակցութիւն է, պարզ չէ՞ միթէ : Իսկ եթէ քեզ համար պարզ չէ, դիմիր Վարանդեանին, նա կը բացատրի...

Աւելի հետաքրքրուելը իմաստ չունէր. բժիշկը շատ յստակ բացատրից ամէն ինչ բանը որ Վարանդեանին հասաւ, նշանակում է, որ մենք անյոյս տպէտ էինք :

Հակառակ իր մարքսիստական համբաւին, Խոստոմը բացառիկ անհատականութիւն էր : Նա, այսպէս ասած, ներքին գիտակցութեամբ էր ըմբռոնում եւ արտայայտում երեւոյթները, կարելի է ասել՝ բնազդով : Խոստոմի բնազդը զարմանալի էր. Բժ. Տէր-Դաւթեանը ասում էր ձիու բնազդ : Դաշնակցութիւնն էլ նրա համար աւելի բնազդական ապրում էր. դաշնակցական էր, որովհետեւ բնութիւնը նրան այդպէս էր ստեղծել : Միտքը, նրա համար գիտակցութիւնը, հարկա, անհրաժեշտ էին, որպէսզի մէկը գաշնակցական, այսինքն գիտակից անհատ լինի, բայց զրանից առաջ եւ զրանից աւելի կարեւոր էր անհատի բնական հակումը, տարերքը :

«Մեծ եւ փոքր գործեր ջկան, կան պատուաւոր եւ անպատիւ գործեր, ինչպէս կան պատուաւոր եւ անպատիւ մարդիկ» — մի ամբողջ բարոյական փիլիսոփայութիւն, մի ուրոյն աշխարհահայեացք, որ ամէն մարդու տրրւած չէ :

Բժ. Տէր-Դաւթեանը աւելի կարճ էր բանաձեռնում .

— Մարդը մարդ է եւ գործը՝ գործ, եւ Դաշնակցութիւնը՝ Դաշնակցութիւն :

Մի օր, երբ ես վրդովուած՝ գտնվաստում էի հայ մարդու տպիտութեան, ընչասիրութեան, խորամանկութեան եւ ուրիշ վատ յատկութիւնների մասին, Խոստոմը հարցրեց անվրդով .

— Դու Անին աւելի՞ ես :

— Անզուշտ, պատասխանեցի ես զարմացած :

— Անին հայ մարդն է կառուցել : Դու «Նարեկ» կարդացե՞լ ես :

— Ի հարկէ, կարդացել եմ :

— «Նարեկ»ը հայ մարդն է յօրինել : Դու Սասունցի Դաւիթը զիտե՞ս :

— Գիտեմ. ի՞նչ խօսք :

— Սասունցի Դաւիթը Հայ ժողովուրդն է ստեղծել...

— Ասս, ինդրեմ, զու ինչո՞ւ համար զաշնակցական ես :

Եւ ծակող հայեացքը ուզզեց տշքերին՝ հաղի նկատելի հեղնական ժըմիքը շրթունքին :

Այդ անսպասելի հարցամը ինձ շփոթութեան ժամանեց : Ի՞նչ կազ ունէր իմ զաշնակցականութիւնը Գէոր Բաշիի մանրափամանի հետ, որ երեք դրուշնող բրդէ ձեռնոցը ինձ տասը զրուշով ծախեց :

— Հայ մարդու մեծութիւնը հենց զրա մէջ է, վրայ բերեց Բժ. Տէր-

Դաւթեանը, որ քեզ պէս տառը համալսարան աւարտած փիլիսոփաներին երեք զրուցնոց ապրանքը տառը զրուցով է ծախում: Պէտք է հիանաս հայ մարդու հնարամտութեան վրայ եւ ոչ թէ գանգատուես: Հայը ապրելով զայշերի հետ՝ սովորել է զայշերի պէս սոնալ...

Խոստոմը, որ զարմանքով լսում էր թժիշկի երկար ձառը, նորից զարձաւ ինձ.

— Այսուամենայնիւ, զու չասացիր, թէ ինչո՞ւ: Ես դաշնակցական եղել:

Եւ խկապէս, ինչո՞ւ էր ես դաշնակցական: Ասել թէ Դաշնակցութիւնը մեծ կուսակցութիւն է և դրա համար ես դաշնակցական եմ եղել, այդ պատիւ չէր բերի ինձ. ուրիմն, զիրքի կամ վառքի համար եմ եղել դաշնակցական: Պատմել, թէ հանգամանքները այնպէս դասու որեցին, որ ես փոխանակ հնաշիւն դառնարու, եղայ զաշնակցական, ծիծաղելի պիտի զարձնէր ինձ: Խոկապէս, ես ինչի՞ց զրդուած, դաշնակցական էի:

— Դժուարանում եմ բացատրել, պատասխանեցի ես:

— Տեսո՞ր, չտապով վրայ բերեց Խոստոմը. ես էլ հնաց այդ եմ ասում: Դաշնակցութիւնը կարելի չէ բացատրել. պէտք է զգալ, ապրել եւ հաւատալ:

— Կարո՞ղ ես բացատրել, ինչո՞ւ զու Խոմիր չգնացիր, այլ եկար այստեղ:

— Զեմ կարող, ասացի ես, թէեւ կարող էի պատասխանել՝ «որովհետեւ զու հեռապրեցիր»:

— Ինչո՞ւ Փիլոսոփ քանի տարի է այստեղ է, այս ցուրտին, փոխանակապրելու Բագուում՝ անհամեմատ աւելի լաւ պայմաններում: Ինչո՞ւ թժ. Յոյժուի Տէր-Դաշնակցութեանը, Սաթենիկը այստեղ են: Վերջապէս, Ե՞ս ինչ զործ ունեմ ալստեղ, այս ժողովրդի մէջ, որից զու այնպէս դառն զանգաւում ես: Այստեղ ենք, որովհետեւ ողիլը մեզ աւելի հարազատ է, քան Բագուի ոսկին կամ Ամերիկայի զոլարը: Այստեղ ենք, որովհետեւ դաշնակցական ենք: Իսկ թէ ինչպէ՞ս բացատրել Դաշնակցութիւնը, այդ պարապ բան է: Թժիշկը բացատրեց. Դաշնակցութիւնը Դաշնակցութիւն է...

Սրտով և Խոստոմի հետ էի. Եթէ հաւատում ես, բացատրութիւնը աւելորդ է, բայց մարով բաւարարուած չէի. ամէն բան պէտք ունի բացատրութեան, որպէսզի հասկնաս, սիրես ու հաւատաս...

Կեանքը, սակայն, հաստատեց, որ Խոստոմի փիլիսոփայութիւնն էր ճշմարիթը: Ինչքան անհերքելի համարուած տեսութիւններ հիմնայատակ խորտակուեցան, փոշիացան եւ որքա՞ն անհեթեթութիւն կարծուած ցնորդներ իրականութիւն զարձան:

Իրաւունք ունէր Խոստոմը, երբ ասում էր.

— Դաշնակցութիւնը ապրում է, հաւատ է, զործ է:

Թերեւս պէտք է աւելյացնել.

— Եւ անձնազութիւն:

«Կեանքի ՈՒՂԻՆԵՐՈՎ», Բ. հաստը (էջ 165, 1974. Քաղուածէ)

ՌՈՍՏՈՄԻ ԱՌԱՋԻՆ ՃԱՌԸ

Տերայի մէջ «Իթթիհատ» անունով ճաշարան մը կար, որ զարձած էր զաշնակցականներու տեսակ մը ակոմբը : Ճաշարանը ունէր մասնաւոր սենեկ մը, որտան մէջտեղը կար միայն մէկ կլոն մեծ սեղան : Ցերեկուան ճաշի ժամերուն, Դաշնակցականներուն էր վերապահուած այդ մեծ սեղանը, թէ և սենեկին գուոր բաց էր միշտ և զէպի փողոց տանող պալասաժը զուրս կու զար :

Ցերեկ ատեն մանաւանզ, այդտեղ կու զային ճաշելու կամ զէթ սուրճ մը առնելու աշքի ինկող զաշնակցականներ, նաև ոչ-զաշնակցականներ, անզամ' օտարներ, որոնք կ'ուզէին ծանօթանալ զաշնակցական զեկամար շրջանուկին :

Պոլսոյ մէջ իմ անցուցած զէթ առաջին ամիսներուն ինծի համար ամենին հնաւաքքրական, հրահանգիչ և միանդամայն հանձիք ժամերը «Իթթիհատ» ճաշարանի այլ մեծ սեղանին շուրջ բոլորուած ընկերներու և բարեկամներու յանախ մաւերմական խօսակցութիւններն էին, մանաւանզ՝ որ հնու հրամցուած կերպակուրներն ալ բաւականին լաւ էին և համեմատարար աժան :

Այդտեղ էր, որ կը սիրէին զալ զաւառներէն եկած հայ մտաւորականները, որոնցմէ շատ բան կարելի էր իմանալ զաւառներու մէջ տիրող տրամադրութեանց և անցուզարձեարու մասին : Բնակոն է, որ ձգողական մեծ ուժ մը ունէր ինծի համար այդ ճաշարանը :

Օր մը, հրաւէր ստացայ «Բաֆֆի Լարանական Միութենէն» երթալու Ակիւտար՝ զասախօսութեան մը համար : Ես տրամադիր չէի ընդունելու հրաւէրը, մանաւանզ՝ որ զիշերն ալ հոն պիտի մնայի, անծանօթ տան մը մէջ հիւր ըլլալով :

Ճաշի ատեն, երբ թոսառմին յայանեցի այդ մտաին, ան վրդովուեցաւ և շանաց համոզել զիս, որ երթամ անպայման : Տեղի տուի, երբ ըսաւ, թէ ինքն ալ պիտի երթար խօսէր նոյն հաւաքոյթին մէջ :

Տարիներ ետք, երբ Ամերիկայի մէջ հանդիպեցայ Արտ. Վանարեսնին, ան ըսաւ, թէ «Բաֆֆի Լարանական Միութեան» վարչութեան կողմէ ինքն էր յանձնարարուած Պոլսէն թոսառմը և զիս առաջնորդելու Ակիւտար :

Երբ հասանք ժողովատեղի, սրահը լիքր-լեցուն էր : Առաջին խօսքը ինծի արտեցաւ : Զեմ խորհիր, սակայն, թէ ունկնդիրները լաւ տպաւորուեցան իմ ըսածէս, որովհետեւ անոնց ուղածը զասախօսութիւն չէր, այլ խանցավառ ատենախօսութիւն : Թոսառմը, որ թէ և նոյնպէս հռեառը չէր, բայց ինձմէ շատ աւելի տպաւորեց ունկնդիրները օրուան հրատապ հարցերուն աւելի համապատասխանող իր ատենախօսութեամբ :

Կէս զիշերին, մեղ առաջնորդեցին Շաւարչ Միութեանենց առւնը, երբ

անեցիք արդէն քնացած էին : Բայց թուստոմի և ինձիք համար երկրորդ յար-կը խալիք մը վրայ անկողիներ պատրաստուած էին :

Անմիջապէս անկողին մտանք :

Թուստոմը առառ կանուի, ինձէ առաջ, Երած էր անկողին և վար իշած : Ես ալ, երբ արթեցայ եւ գայն չափայ անկողին մէջ, հազուեցայ ու գացի վար : Թուստոմը արդէն սեղանատունն էր և կը խօսէր օրիսրդի մը ձևս : Քիչ ետքը, Շաւարչին մայրը եկաւ և մեզի նախաձաշ բերաւ : Զա-րաձիք փոքր տղայ մը ներս ինկաւ յանկարծ, որ մինչ այդ կը վաղվիքի սեն-եակներուն մէջ : Շաւարչի փոքր եղբայրն էր՝ Ժիրայրը, ապագայ «եւրո-պացին» :

Նախաձաշէն ետք, թուստոմի հետ հրաժեշտ տուինք տանտիկնոջ ու օ-րիսրդին՝ չնորհակալութիւն յայտնեցի իրենց սիրայիր հիւրնկայութեան համար և ուղղակի գացինք նաւամատոյց՝ Բերա վերտառանայու համար :

Նոյն օրը, ցերեկուան ճաշի ատեն, երբ թուստոմն ու Զաւարեանն այ միացան մեզի «Իմթիհատուշի ճաշարանի կլոր սեղանին չուրջ», ընկերները, ընտկանարար, սկսան հարցումներ ուղղել ինձի երկիւուն մեր ժողովին ստա-ցած տպաւորութիւններու մասին : Պոլսոյ համար ես զեռ բոլորովին նոր մարդ էի, և իմ տպաւորութիւններս կը հետաքրքրէին զիրենք :

Ի միջի ոյլոց, Ս. Զաւարեանն ալ հարցուց, թէ ինչպէս խօսեցաւ թուստոմը : Ըսի, թէ չառ սիրեցի իր բանախօսութիւնը :

Զաւարեանը, որ զուարթ տրամադրութեան մէջ էր այլ օր, զարմանք յայտնեց : Երբ ես հարցուցի իր զարմանքին պատճառը, ըստ խնդարով .

— Եթէ զու էր ինձ նման լսած լինէիր թուստոմի առաջին ճառը, զու էլ պիտի զարմանայիր :

Բոլոր ընկերներն ալ ամէն կողմէ ինդրեցին պատմել թուստոմի առա-ջին ճառի մասին : Եւ Ա. Զաւարեանը պատմեց հետեւեալը : —

«Ես թուստոմից առաջ ուսանող էի Պետրովսկօ-Ռազումովսկայա Ակա-դեմիայի մէջ, Մոսկուա : Այդ ձեմարանը իմ ժամանակ յեղափոխութեան հր-նոց էր : Ուսանողներից շատերը անդամ կամ համակիր էին յեղափոխական կուսակցութիւններին : Կադմակերպուած յեղափոխական կամ զաղափարական խմբակցութիւններ կային ուսանողութեան մէջ : Այնովէս որ՝ երբ մի նոր ու-սանող էր մանում մեր ձեմարանը, այդ խմբակցութիւնները աշխատում էին իրենց կողմը զրաւել նրան : Երբ թուստոմը երեւաց մեր ձեմարանում, քնա-կանարար, ուսանողները սկսեցին նրա ետեւից ընկնել, որ իրենց կողմը զրաւ-ւեն նրան : Բայց թուստոմը յուս էր մէծ մասամբ և վերապահ, իր կարծիք-ները խուսափում էր արտայայտել : Եւ ոչ ոք զիտէր, թէ թուստոմը համա-կի՞ր էր յեղափոխութեան, թէ հակառակ էր :

«Բայց ահա մի օր, մի մեծ ուսանողական ժողով ունեցանք մեր ձեմա-րանում : Խօսողներ չառ կային : Յանկած թուստոմն էլ ճայն խնդրեց : Բոլոր ուսանողները չափազանց հետաքրքրուեցին եւ անհամբեր էին իմանալու, թէ ի՞նչ պիտի ասէր թուստոմը, վերջապէս :

«Երբ խօսէլով հերթը եկաւ թուստոմին և նա ուսանողների բազմութիւ-նը մեղքելով գանդաղ քայլերով բարձրացաւ ամպիոն, սրահի մէջ կատարեալ

լուսթիւն տիրեց : Բոյոր ներկաներն էլ լաբուած ու շաղրաթիւն էին դարձել : Առաստամը շփոթ հայեցքով նայեց առանողների բազմութեան , փորձեց յիշել , թէ ի՞նչ էր ապում ասել , բաւական երկար փորձեց : Եւ , ի վերջոյ , յուսահատած՝ առանց մի բառ իսկ արտասանելու՝ ծոծրակը քերելով և ձեռքի յուսահատական շարժումով յանկարծ սկսաւ ամպիսից վայր ի՞նել : Ամբողջ սրահը ահռելի մի քրքիջ արձակեց : Բայց մեր Առաստամը , լուս եւ անլրդով զնաց ու իր տեղը նստեց , կարծես ոչինչ չէր պատահել :

«Ահա այս էր մեր Առաստամի առաջին ճառը : Հիմա տեսնում էր , թէ նա ի՞նչ մեծ առաջդիմութիւն է արել ճառախօսութեան մէջ» :

Բոյորս ալ կուչա խնդալով՝ նայեցանք Առաստամի կողմը : Եւ մեղմէ մէկը հարցուց , թէ ձի՞չդ էր Ս . Զաւարեանի պատմածը , թէ ան կատակ էր կ'ընէր :

Առաստամը քիչ մը կարմրելով , ընդունեց որ ամբողջովին ձիշդ էր :

«ԵՐԿԵՐԻ» , Ա . Խանոր , (էջ 106-108)

ԶԱԿԱՐԵԱՆ ԵՒ ՌՈՍՏՈՄ

Ս. Զաւարեանէն բոլորովին տարրեր մարդ էր Ռոստոմը : Թէև Ռոստոմն ալ հոգածու , նոյնիսկ հայրական վերաբերում ունէր զէպի երիտասարդ-ները , բայց միայն այն երիտասարդները , զորս կը զնահատէր և . իրենց յեղափոխական նուիրումին համար կը սիրէր : Այլապէս , Ռոստոմի վերաբերումին մէջ ո՛չ միայն վերապահութիւն , այլև երրեմն չորսթիւն ու հեղնանք կար այն երիտասարդներուն հանդէպ , որոնք իր զնահատանքին չէին արժանացած կամ տակաւին չէին արժանացած : Եւ այդ չորսթիւնն ու հեղնանքը , բնականարար , չէր կրնար զրաւել այդ երիտասարդները , նոյնիսկ ետ կը մը-զէր զանոնք Ռոստոմէն :

Պէտք է ըսել ըսպէս հանրապէս , որ Ռոստոմը Զաւարեանի նման չերմ և հազորպական չէր և . Զաւարեանի նման մանկական պարզութեամբ չէր վերաբերեր զէպի մարդիկը : Ան շատ աւելի վերապահն էր իր յարաբերութիւններուն մէջ և զանդազօքն կը կազուէր ընկերներուն : Հետզնետէ միայն , երբ սկսէր աւելի մօտէն ճանչնալ զիմացինը , իր հետաքրքրութիւնը աւելի կը զորանար :

Անկասկած , Ռոստոմը աւելի հաւասարակշռուած մարդ էր , քան Զաւարեանը ևւ անկէ աւելի համեստ : Թէև Զաւարեանն ալ անհամեստ մէկը չէր երբեք , բայց անոր մէջ կը նկատուէր նրեն երեւալու , աչքի իյնալու , կերպնական դեր կատարելու մզումը : Ան , օրինակ , կը սիրէր նախաղանէլ ժողովներուն , կուսակցական ըլլային անոնք թէ ազգային ժողովներ :

Օրինակ , կջմիածնի Ազգ-Կեղրոնական ժողովին մէջ՝ բուռն մրցումի ելած էր Աւետիս Ահարոննեանի հետ՝ այդ ժողովին նախազահ ընտրուելու . համար : Նոյնը ևւ Պոլսոյ մէջ , Սահմանադրութեան ըրջանին , Երբ Ակնունիի զէմ էր լարուած ծայր աստիճան , որովհետեւ ան իր հսկուորական փայլուն ընդունակութիւններով ևւ ցցուն անձնականութեամբ , ոչ-դաշնակցական հանրութեան կողմէ Հ. Յ. Դաշնակցութեան առաջնորդը կը նկատուէր , մինչդեռ կուսակցական ըրջանակի մէջ առաջնորդը ինքը էր :

Կասկած չունիմ , որ Եթէ Ռոստոմը ըլլար 1906ի Ազգային Կեղրոնական ժողովի պատգամաւոր , հաճոյքով պիտի զիջէր Աւետիս Ահարոննեանին այդ ժողովին նախազահելու պատիւը՝ ո՛չ միայն այն պատճառով , որ Աւետիս Ահարոննեան իրմէ աւելի լաւ պիտի կարենար զեկավարել , այլև ա՛յն պատճառով , որ ինք Երեւանի չէր սիրեր , միշտ կ'ուզէր ստուերի մէջ մնալ : Միշտ այդպէս վարուելով հանգերձ , Ռոստոմը ստուերին մէջին իր կարելին կ'ընէր՝ օգնելու իր առաջ քաշած ընկերներուն , որպէսպի անոնք լաւաղոյն կերպով կատարէին իրենց ստահնած գործը :

Ես շատ քիչ եմ տեսած մարդիկ , որոնց մէջ անձնական փառասիրու-

թիւնը այնքան տկար ըլլար, որքան Ռոստոմի մօտ : Այդ էր պատճառը, որ ան-  
ունի մէկոն մէջ նախանձ չէր արթնցներ : Բնկերները կը զգային ու կը տես-  
նէին իր անձնական փառասիրութենէ զերծ ըլլալը և կը խոնարհին անոր նե-  
րողամիտ ու մեծահոգի վերաբերումին առջև, դոր ցոյց կու տար փառասի-  
րութենէ տուած եկած կոփեներու . հանգէու :

Իր այդ բացառիկ յասկութեան շնորհիւ էր, որ Ռոստոմ կը յաջողէր  
յաձախ հաշտարար, խազազաւէր գեր կատարէլ, ուր ալ ըլլար : Եւ Եթէ Զա-  
ւարեան կամ Ակնունի, ինչպէս եւ կուսակցական միւս ականաւոր դէմքերը  
զիրենք սիրողներ ու չսիրողներ ունէին, Ռոստոմ իր զարմանալի յատկու-  
թիւններով ո՛չ միայն իրեն չարջ հակառակութիւն չէր ստեղծեր, այլև  
կը յարգուէր ու կը սիրուէր բոլոր ընկերներէն անխտիր :

Կուսակցութեան մէջ, Ռոստոմ տեսակ մը հայրական դեր կը կատա-  
րէր : Ու շաղիր և հոգածու էր բոլոր այն ընկերներուն, մանաւանդ երիտա-  
սարգներու հանգէու, որոնք որեւէ կերպով օգտակար էին կամ կրնային օգ-  
տակար ըլլալ կուսակցութեան կամ մեր դատին, մեր ժողովուրդին : Կր քա-  
ջայերէր անոնք, որոնք զրելու ընդունակութիւն ցոյց կու տային : Յաձախ  
նիւթեր կու տար անոնց գրելու համար : Եթէ անոնք զժզոհ կամ յուսախար  
էին բանէ մը, ևս կամ ներքին տագնապ մը կ'անցընէին՝ Ռոստոմ իր սուր  
հայեացքով կը նկատէր այդ եւ, առանց որեւէ խօսք բաներով : Իր սեն-  
եակը կը հրաւիրէր թէյ խմելու և մտերմական զրոյցի մէջ ամէն տեսակ հե-  
տաքրքրական նիւթերու մասին խօսելու, երբեմն ալ նոյնիսկ համերգի կամ  
թատրոն կը տանէր :

«ԵՐԿԵՐ», Ա. հասոր (Էջ 130-132)

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՌՈՍՏՈՄԻ ՀԵՏ

Կ. Պոլիս. 1911ի աշունը, ամբան վերջերն ու աշնան սկիզբը, այն օրեւուն՝ երբ բնութիւնը հատնող քաղցրութիւն մը կը դառնայ, հորիզոնները ամպերով կը շղարչուին ու վերջալոյաները, երկար ու հրափայլ, կը սկսին նուպիլ: Կեանքը կը խրտի, զպրոցական երիտասարդութիւնը նոր ոգևորութիւն կ'առնէ և համախմբումներն ու հաւաքոյթները կը փոխարկուին ոգեշունչ մակրնթացութեան:

Այդ օրերուն, արտակարդ ալեկոծումի մէջ էր դաշնակցական ուսանողութիւնը՝ համալսարաններէն և Ազգ. երկ. վարժարաններու վերջին դասարաններէն՝ չուրջ երկու հարիւրեակ: Խանդավառ, անհանգիստ ու սորվելու եւ զործելու ծարաւ ուսանողութիւն մը, թշուառ իր նիւթական կացութեամբը, բայց հարուստ հոգիով ու իր անզուսպ ցանկութիւններովը: Անընդհատ վազք մը, ծակ կօշիխներով յաճախ, ու մաշած տարատով, ժողովէ ժողով, դասախոսութենէ զասախօսութիւն կ. Պոլոց բոլոր թաղերը, ազա թատրոնները լեցուելու համար, կէս զինով կամ ձրի երեմն, միւս օրն ալ զպրոց վագելու, զա լսելու կամ զա ըսելու համար:

Ամիսներէ ի վեր հակամարտութեան մէջ է ուսանողութիւնը. տարուած՝ վիճարանութիւններէ, զպրոցներէն ներս, զուրսը, ակումբներու ուրբանները, սանդուխներուն վրայ եւ թատրոններու միջնարարներուն. ամէն ուր, որ կարելի է վերսկսիլ ընդհատուած խօսքը: Գաղափարական հովեր կ'անցնին իր մէջէն. ընկերվարական ու այլ վարդապետութեանց հոսանքներ կ'ողողեն, կը քչեն զինք և ինք կը լողայ ամէն ուղղութեամբ: Կ'ուսանի՞ այս ուսանողութիւնը, թէ կը վիճէ, կը զործէ, կը պայքարի: Այս բոլորն ալ կը թթուի կեանքի մէջ, այլ մանաւանդ կ'որոնէ, ու չի գտներ, եւ կը մնայ միւս զգոն ու միշտ բողոքող...

Այսպէս է ուսանողութեան, մասնաւորապէս դաշնակցական ուսանողութեան տրամադրութիւնը, չուրջ երեք տարիէ ի վեր. այսպէս պիտի ըլլայ կեռ ան երեք տարի ալ, մինչեւ մէծ ու արինուտ եղերեզութիւնը, որ 1914ի պատերազմը եկաւ ու չլատեց ամէն բան...



Վերեքի ու ազգային վերածնունդի մէջ եղող սերունդ մը՝ որ զժգուհ է հին կարգերէն, զոր փտած կը կոչէ. հին մարզերէն՝ զոր տիրացու կ'անուանէ, կ'ուղէ գեր կատարել, ինչպէս եւ բովական մէծ ոստաններու ուսանողները. կը տարուերերի ու կը պողոթկայ յաճախ, կաչկանդումի երկար տարիներէ ետք: Առշոր շարժումներ կը զիտէ և յաւակնութիւններ ունի անոնց

մէջ նետուելու, զէր խաղալու աղղային ճակատագրին մէջ. կուսակցական ձեռնարկներու մէջ, ընկերային ալեկոծութերէն ներս : Դժգուհ է հայ գրականութենէն, զոր տժգոյն՝ զաղափարազուրկ կը նկատէ, հայ լրագրութենէն՝ զոր «Հերթաթձի» կ'անուանէ, հայ Եկեղեցականութենէն՝ որ յետադէմ կը թուի իրեն :

Եւ գժգոհ՝ իր իսկ կուսակցութենէն, որ բաւականաչափ վճռական չէ, ընկերագրական չէ, յեղափոխական չէ...

Այս օրերուն է :

Ուսանողութիւնը կը խլրտի ամիսներէ ի վեր. ինք կ'ուզէ ընել ամէն բան. պարտազրել իր կամքը. պողթկալ իր զժզոհանքը, իր սեփական օրկանով, զոր ունեցաւ տարի մը ետք, ուր առաջին թիւին մէջ իսկ աղաղակեց, հրեղէն ու անզուսպ բառերով, յոսետեսութեան թանձր մշուշի մը մէջէն :

Զորս տարուան սահմանադրական շրջան մը բոլորեցինք: Բերա՞ ան վերածնունդ մը մեր մտաւոր հասարակական կեանքին համար: Բաւական է անզամ մը ևս նայիլ եւ ահա խորչակարեր անապատ մը, որ կը տարածուի մեր կեանքին մէկ ծայրէն միւսը: Դալիկահար ու զգետնուած հասարակական կեանքի այդ մեռելութեան մէջ պոլսահայ մամուլը իր կարեւոր գերն ունի միշտ:

Առաջին տողերը իր օրկանին՝ «Երկունիք»ի առաջին խմբագրականին, Ալւանող սերունդը՝ խորագրով, 1912ի մամաց, Յուլիսին:

Դատապարտութեան խօսք հին սերունդին դէմ ու «զաղափարազուրկ» ու «անջիղ» ուսանողութեան դէմ: «Մեր խօսքը հայ ուսանողութեան մասին է, որ կենսունակ ու յարաշարժ գաղափարի սրբազն խորանին առաջ, կարմիր արշալոյներու եւ հեռաւոր հորիզոններու երկունքն ունի, երկունքը՝ նորանոր հեռապատկերներու եւ ապագայ արդարակուոր կարգերու»:

Վերջին խօսքերը նոյն խմբագրականին, որ պայքարի հրաւէր մը կը դառնայ, յանուն մէծ զաղափարներու, ուսանողութեան «արարչագործ» լը-զացումներուն ու վարդապոյն երազներուն:

Դժգոհների տարական այդ օրերուն (1911) Հ.Յ.Դ. Երդ Բնդհանուր Փողովի գումարումէն առաջ ու գումարման պահուն, իթթիհատի հետ համաձայնութեան վերականգնումն է. մէծ ընկերներու անտարբերութիւնն է, առօրինայ խնդիրներու եւ ընկերական ժողովներու հանդէս: Զէր ուզեր նըստիլ ու վիճիլ երիտասարդութեան հետ, որ սակայն տէրն է թաղային կազմակերպութիւններուն:

Զեն զար ժողովի. հրաւէր, ազգարարութիւն ու կրկին ու կրկին հրաւէր. ի զուր. եւ օր մըն ալ Հ.Յ.Դ. Բերայի Կոմիտէին կողմէ վերջնազիր բոլորին, հակառակ պարագային «Հրամագործ նկատուելու» սպառնալիքով, եթէ յառաջիկայ կիրակի չզան ժողովի...

Հրաշը:

Կիրակի օր բազմամբոխ ժողով Բերայի ակումբին մէջ. հոն Են բոլորը, Ակնունի, Շահրէկեան, Վասմեան, Տէր Մինասեան, Գ. Բարսեղեանն իսկ. քիչ մը ետք՝ Միամանթոն ալ... ուրախութեան ճառագայթ երիտասարդներու ճակատին. եւ վէճ ու լուսաբանութիւն եւ խանդավառութիւն հը-

բապարակ գրուած աւնդագին հարցերու շուրջ։ Ինչ խնդիրներ։ բայց ո՞ր մէկն յշել ու թուել։

Առաջին աեզր սեղանի վրայ՝ իթթիհատի հւտ համաձայնութիւնը — պէտք չէ վերանորոգել։ պէտք է փոխել պայմանները, պէտք է դառնալ ընդդիմադիր։ Յետոյ, ազգային ներքին քաղաքականութիւնը. դժուհ հօս ալ. ու գաղափարոքն զեկավար գեր տնէր Վուամեան, ամբաստանութեան աթոսին վրայ՝ ուսանողութեան աշքին, որ համակրանքով կը զիտէր Շահրեկեանը, աւելի ճախ ու ընկերվարական մինչեւ իսկ, որ ուսանողական խումբը կ'ընդունէր իր փոքրիկ սենեանին մէջ, որ Քրովութիւնին կը կարդար ու կը թարգմանէր «իրեն օգնութիւն»ը, որ զործաորական սենտիքաներուն հւտ կապ կը պահէր ու Մայիս մէկին ճառ կը խօսէր զործաորական միջազգային խառն բազմութիւններուն։ Ու վերջապէս զգոն էր ուսանողութիւնը՝ Արմէն Գարոյէն. Զեմբըրի ծրագրի օրերուն էր. Արմէն Գարոն ջատագով էր ու յուուած՝ տենդագին աշխատանքի. Շահրեկեան՝ հակառակ. խուլ հակամարտութիւն երկուքին միջեւ։ Մեզի ի՞նչ սակայն այս բոլորը. կարեւորը այն էր որ Արմէն Գարօ համակրանք շունէր ուսանողութեան շարքերէն ներս. ոչ խօսքը լսած էինք, ոչ ձառը, բայց զիտէինք, կը զգայինք որ զէմ էր ընկերվարական շարժումնեն. Հեղնանք ու արհամարհանք ունէր։ Իր շքեզ ու պատկառազդու կերպարանքը կը տպաւորէր մէկ. բայց իր լուս ու անժպիս երեւոյթը, ակնոցներու տակէն կարծէք անտարբեր, այլ մտախոն հայուածքը իրմէ հեռու տարած էր ուսանողութիւնը, որ սակ ցանկչին մէջ անցուցած էր զինք՝ Վուամեանին հւտ մխասին։

Ո՞վ երիտասարդութիւն, ի՞նչ ոժիրներ քու անունովդ. խիստ է «ոճիրը»։ բաէք անզթութիւն, բաէք անիրաւութիւն կամ միշ բառ որ կ'ուցէք…

Իրողութիւնները զորոկ են սակայն տրամարանութենէ և արդարութեան զգացումնն։ Կեանքը անմիտ է յաճախ ու մարդիկ ողորմելի՝ իթենց զընահատումներուն և իրենց յաւակութիւններուն մէջ։ Բազմութիւնները՝ աւելի չափով։ Մեծութիւններու բովէն կ'անցնինք յաճախ։ կամ անոնք մեր մօտէն, մեզի բախելով նոյնիսկ, ու մէնք՝ կոյք կամ կարմատես՝ չենք տեսներ. կը մեանք անզգած, առնաւազն անզէտ ու անտարբեր ու, հետեւարար, ազգատ ու չքաւոր։ Ուսանողութիւնը իր արամազքութիւններով, ալելկոծութեան մէջ, չէր կրնար բմբոնել Դաշնակցութեան ձեռնարկներուն էւթիւնը. և չէր տեսներ, ուրիշներու կարգին, ներքին աշխարհը Արմէն Գարոյի, ալդ լուս ու ապօղոնեան մարզուն, որ պէրճաշուք կերպով կ'անցնէր մայթերէն ու չէր ալ տեսներ մեզմէ շատերը։

Բազմաթիւ ջանքեր թափուած էին խաղաղութիւնը վերահաստատելու. վրզովուած միտքերն ու խիզները հանդարաւեցնելու։ Դաշնակցական գործիչներէն շատերը, որոնց կարգին նաև Խաժակը, այնքան զնահատուած ու սանողութիւնն, փորձած էին իրենց հաշտարարութեան տաղանցն ու պէրճախօսութիւնն, բայց ի զոր։ Ուսանողութիւնը մնաց կարծը ու անզրդուելի։

Ու օր մըն ալ հաւաքոյթ, երեկոյեան ակումբին մէջ։

Ուսանողը պիտի խօսէր։ էրզը ու էկած ժողովին եւ ուզեր էր «հանդիպում մը» ունենալ երիտասարդներու հւտ։ Սրահը լեցուած էր

դաշնակցական երիտասարդութեամբ և մասնաւորաբ ուսանողներով, զգոնն, խրառոն և սկեպափիկ: Կիսամութին մէջ, պատուհանի մը լայն խորշին, ասհմանին վրայ սեղանին տոքեւն է թուստոմբ, մտախոն, սեւ եռուն նայուածքով: Անչուք Երեւոյթ, տժոյն քիչ մը, բայց կարծէք նստած ըլլար ա՛լ շարժելու համար: ապառաժի թեկոր մը, որ յանկարծ մարդկային կերպարանքի փոխարկուած էր, պատրաստ խօսելու և պոռթկայու: Թեթեւ շարժում մը, հակում դէպի սեղանը և ապա, պոռթկումի տեղ մպիտ մը՝ որ կը լուսառոր իր զէմքը, մինչև իր լայն ու կնճռու ձակառը, յետոյ շոյով, մեզմ այլ կորովի շեշտ մը իր ձայնին մէջ: Անակնկալի առջև, ու լարումը վշըուած: Կր խօսի առանց հուտորաթեան, պարզ, անպանոյն, կտրուկ: Ի՞նչ բառ և ի՞նչովէս բառ: դժուար է յիշել: բայց զիտիմ թէ շատով նուածեց իր ունկնդիրները, որոնք պահ մը շարժեցան իրենց աթոռներուն վրայ, աւելի լարումով մտիկ բնելու համար: Ոչ հարցում, ոչ հականառութիւն, բանի որ ան կը պատասխանէր արդին մեր միտքերուն մէջ զծուած հարցումներուն:

Իիթիհասափ հետ համաձայնութի՞ւնը. բայց ան էապէս յետաղիմութեան դէմ էր. ձեռք բերուած ապառութիւններու համար երաշխիք մը: Եւ վերջապէս ուսանողութեան ի՞նչ զործն է. երբ կան կազմակերպական պատասխանառու մարդիններ, որոնք կը զրագին այդ հարցերով: Կարծիք յայտնել, տեսակէտներ պարզել՝ հասկամի՛, բայց «զալմազալ սարքէլ» ո՛չ... Դաշնակցութեան ոյժը՝ իր կարգապահութեան մէջ է. ո՞ւր կ'երթաք այսպէս...

Հուս էր ուսանողութիւնը և մտորումի մէջ: Թոստոմ զգացած էր իր տպաւորութիւնը. գարձած էր աւելի քաղցր, ժպտուն, այլ վճռական և անսասն:

Ներկանները կը զգային ապառաժին ծանրութիւնը: Թոստոմ պիտի փըրկէր Արմէն Գարոն, պիտի տար անոր պատկերը, պատռելով մեր մէջ նըստած մութը:

«Գիտեմ ձեր դժգոհանքը», — ըսան ան, — յանկարծական ոստումով մը, այլ ձակասի վրայ, Արմէն Գարոյի մասին ակնարկելով: Ձեմ ուզեր երկար փնտուել, բայց ձեզի ճանչցնեմ մարզը ու յետոյ դատեցիք զուք: Եւ եզրակացութիւն՝ Արմէն Գարոն դաշնակցական է. կրնաք պահանով ըլլալ: Նման բառեր եւ ապա պատկերը Գարոյի: Տարօրինակ խառնուածք ունի Գարոն. անկիւ երբեմն կը մոռնայ ամէն բան. կը մոռցուի ինքն ալ տարիներով. պէտք չէ խարուիլ ասկայն: Գարոն մեծ զորձերու և մեծ ձեռնարկներու մարզն է. հեռու առօրեայէն: զիտցէք ասիկա: Ահա քանի մը զիծ: Ուսանող էր. զործի մէջ շեար կարծէք. ու յանկարծ, ձգեց ամէն բան և զլուխն անցաւ պանքայի դէպին:

Տարիներ մարեցաւ նորէն. եւ օր մըն ալ երեւցաւ կովկաս, թաթարական կոփեններու մէջ, ողի ու բազուկ զարձած: Նորէն անհետացաւ. ու այսօր երեսփոխան է Օսմանեան խորհրդարանի մէջ եւ Զէսթըրի ծրագրին ետեւէն, Հայաստանը Երկաթուղային ցանցով պատելու համար:

Կրնաք վատահ ըլլալ որ վաղը տարիներ զարձեալ լուռ և անգործ պի-

աի տեսնէք զինք. բայց օր մը նորէն պիտի յայտնուի մեծ զործի մը մէջ, իր շափովը, իր բոլոր ուժերով նուիրուելով անոր, սրտով ու վճռակամութեամբ, որոնք մեծ են իր մէջ:

Այս է մարդք. պէտք է հասկնալ զայն և պահանջել այն՝ որ կրնայ տալ, իր ձեւովք: Գարոն գաշնակցական է ու զիտակից հայ. վատահ և զէք:

Լուծ էինք, ու մեր սրտերուն ալիքք իջած. իր շոյող ձայնը, իր համոցիչ չէտք ու պարզութեան չքեզանքը լիցացած էին մեզ: Գարոն մշուշին մէջին կը յառնէր ու կը մեծնար մեր աշխերուն առջեւ, մեր սիրտերուն ու միտքերուն մէջ: Յարզանքի զզացում մըն էր որ կը պոսթկար: Խոստոմ նուածած էր ու Գարոն փրկուած, յաղթական նոյնիսկ:

Խոստոմ ճիշդ ըստած էր: Տարիներ անցան. ու ժամանակը եկաւ հաստաելու թոստոմի բարյական կշռագառումքը: Արմէն Գարօ Կովկաս էր անցեր, ու կամաւորական խոռմերու զրախը. յետոյ՝ Աւաշինկըն, իբրեւ զեսպան Հայտատանի Հանրապետութեան: Աւելի քան զեսպան. զեկավար ու ողեւորող Ամերիկայի մէջ հայտանպաստ շարժման՝ քաղաքական չքչանկներու մէջ:

Խոստոմ այսպէս ճանշցաւ ուսանող այն սերանեղը, որ տարիներ ալիքք ու փրփորի մէջ ապրեցաւ, յուզուեցաւ, պայքարեցաւ, սիրեց ու ատեց, և օր մըն ալ խաղաղեցաւ համեստ երեւոյթով, այլ հզօր կամքով ու համոզումով կերպարանքի մը առջեւ, որ թոստոմն էր: Խաղաղեցաւ ու զզաց այլ արժէքներ, ու ասոնց կարգին Արմէն Գարոն, անոր էութիւնը, թափելով կիրքը էրմէ եւ լեցուելով յարզանքով:



Այսօր, յուշ այս բոլորը...: Ինչքա՞ն անիրաւ յաճախ կեանքը. երիտասարդ կեանքը. բայց ի՞նչքան գեղեցիկ ան, իր անիրաւութեան մէջ իսկ, երբ լի է զաղափարական թոփչքով, ոգեկան կրակներով ու անհուն նուիրումով:

Կեանքը, ինքն ալ այդպէս չէ՞.. դաժան ու անիրաւ յաճախ. բայց անհունօրէն գեղեցիկ եւ յուզիչ:

ՌՈՍՏՈՄԷՆ ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ. Յ. Դաշնակցութեան երեք գլխաւոր հիմնադիրներէն Զաւարեան եւ Ռոստոմ, որոնց տեսնելու եւ անոնց ձունչին տակ ապրելու բախտ ևմ ունեցած, մեր ազատազրական եւ հասարակական շարժման զրեթէ բոլոր խոչըր երեւոյթներուն մասնակցած եւ զինաւոր մղիչ ոյժը հանդիսացած են: Բայց անոնց անփառասիրութիւնը եւ մեծահոգի զեկավարութեան ձեւը զիրենք կը թողէին չուքին մէջ, մինչդեռ անոնց առաջ քաշած մարդիկ թմբին վրայ կը զառնային դիմաւոր դերակատարներ: Այսպէս ըլլալով հանդերձ մեր կուսակցութեան հիմնադիրներուն հմայքը արտակարգօրէն բարձր էր, եւ որքան կը լայննար Դաշնակցութեան զործունէութիւնը, այնքան այս անփառասէր խոցոր զէմքերը կը զառնային տիրական:

Ռոստոմը, մանաւանդ, շատ ինքնայատուկ դէմք է մեր կուսակցութեան մէջ: 29 տարի անընդհատ անիկա զեկավար դեր կատարած է մեր զաղտնի եւ յայտնի, մտաւոր ու զործնական յեղափոխական կեանքին մէջ, սակայն այսօր, մեծ գժուարութեամբ կարելի է վերականգնել անոր ամբողջական դէմքը:

Ո՞ր զործին եւ ո՞ր կողմէ ուղենաք մօտենալ Ռոստոմին, կարծէք թէ ան զործունէութեան թմբի վրայ միայն ներկայ է, հոն է, իսկ պատմութիւնը՝ ուրիշներուն: Մինչդեռ ծրագիրը յլացողը, զործը կեղունացնողը, չնքը պահպանող սիւնը Ռոստոմն է, իր համբերատարութեամբ, յատակ ու բազմակողմանի խելքով, բարի ու հաշտարար ժպիտովը:



Բազմաթիւ դէմքեր ու զբուազներ կապուած են Ռոստոմի անձին հետ, որոնք թէեւ աւելի ուրիշ անհատներու կեանքն ու զործը կը բնորոշեն, քան Ռոստոմի դերը, սակայն ուշազիր զիտողը զիւրութեամբ կրնայ տեսնել Ռոստոմի զեկավար ձևոքը եւ, մանաւանդ, յեղափոխական դաստիարակիչ ու գին: Ռոստոմ, լուսթեամբ, առանց քարոզի կը զաստիարակէր իր չուրջ հաւաքուղները, կամ անոնք, որ կուսակցական զործով կը կապուէին անոր հետ:

Նման խոր տպաւորութիւն կրած եմ Ռոստոմէն, երբ ուսանողութեանս օրերուն կ'անցնէի էրզումէն, ու քանի մը օր մնացի Ռոստոմի ու շարք մը ուրիշ ընկերներու մօտ:

1912ի նոյեմբերեան ցուրտ առաւօտ մը, քանի մը ուսանողներ, մեր փոքրիկ ծրարներով Ղալաթիոյ քարափն էինք: Ս. Զաւարեանը մեզի հետ նաւի 4րդ կարգի տոմսեր առած էր, այսինքն պիտի անցնէինք տախտակամածի վրայ, մինչև Պաթում:

Զաւարեան մեզ տարաւ Ղալաթիոյ խեղճուկ սրճարան մը, թէյ խըմցուց ըստ, որ կուսակցութեան զանձին խնայելու համար այդպէս աժան

տոմսեր զնած է, որ մենք երիտասարդ ենք, ու պէտք է վարժուինք դիմանալ ցարտին ու բարին ու բարին: Ասա բոլորին հաղուսաները նայեց, պատուիրեց, որ օձիքները հանենք: Ու յետոյ, մեր երերը խառնչակելէ վերջ, սրճարանն զուրս զնաց եւ կէս ժամ չանցած վերապարձաւ մեծ թէյաման մը, թէյ եւ շաքար բերելով:

— Կը վախնամ մաիք, նաւու մէջ ևուցած ջուր միշտ ձրի կու տան, առէք այս թէյամանը, յաճախ թէյ խմեցէք, որ տաքնաք...

Մեր խումբը կը բաժնուէր երկու ուղղութեամբ: Երեք ընկերներ մեկնեցան զէպի վան, Արամի տրամադրութեան տակ, խոկ ընկերու եւ ես Կարսի վրայով մէկնեցանք զէպի էրզում:

Ս. Զաւարեանի չունչով թեւաւորուած կ'երթայինք Ռոստոմի եւ Արամի մօտ, անոնց հարանգով ու առաջնորդութեամբ հայրենի ժողովուրդի մէջ աշխատելու:

\* \*

— Երր էրզում հասնիք, Ռոստոմի մեղի գործնական անհրաժեշտ հրահանգներու կու տայ: Պոյսոյ մեր խօսակցութիւններն ընդհանուր րոյսյթ կը կրեն, — այս եղան Զաւարեանի վերջին խօսքը:

Եւ արդէն հասած էինք ծինապատ էրզումք: Ռոստոմ մեղի դաս տալու պէս հարանդներ շատուա: Ընդհակառակը, բնկերական շարք մը խօսակցութիւններու ընթացքին մեղ խօսեցնել տուա: Մեր մտածումներն ու զիսցածները յաւ մը հասկնալին յետոյ, ինք միտյն աւելցուց ան անհրաժեշտը, որ մեղի կը պահսէք: Մեղի թուեց շարք մը գործիչներու անունները, անոնց նկարագիրը, անոնց հետ գործելու կերպը, մատուանչեց տեղական կարեւոր հարցերը, եւ անոնց լուծման հնարաւորութիւնները: Ամենէն վերջը, թէլադրեց, որ տեղական պայմանները եւ մեր ըրջապատը լաւ մը ուսումնասիրենք եւ ըստ այդ պայմաններուն շարժինք:

Այն քանի օրերը, որ մեացինք Ռոստոմի հետ, պարապ չանցան: Ընկերական ընդհանուր խօսակցութիւններու ընթացքին, անզգալարար ան մեղի կը ներարկէր բարոյական այնպիսի հասկացողութիւններ, որոնք երկար տարիներ մեր ականջին խրատական օգեր կը մնային:

Մէնք տակաւին մոռցած չէինք Պոյսոյ մեր յախուռն ձեւերը: Ազ ու ձախ քննադատութիւններ կ'ընէինք: Ընկերու (Ասլան) բաւական ծանր վերագրումներ ըրաւ մեր հին գործիչներէն մէկու հասցէին, քննադատութիւններ, որոնք, սակայն, գործնական կեանք, կտրուած ուսանողներէն միայն կարելի էր լսել: Ռոստոմ բարի-բարի ժպիտաց, ժպիտ մը, որու ետին մտածումը թաքնուած էր:

— Դուք լաւ չէք ճանչնար ու հասկնար այդ գործիչին, — ըստ Ռոստոմ, — գուգ առանց կշռելու՝ միշտ կ'ամրաստանէք, սակայն, եթէ զահնախուի, որ ոչ թէ ամրաստանութիւնն ապացուցանէք, այլ նոյնիսկ մտաւոր բացատրութիւն մը տաք, չպիտի կրնաք: Մէնք որքան որ խիստ պիտի ըլլանք բարոյական սայթագումներու վերաբերմամբ, նոյնքան տւելի խիստ քոնթրոլ պիտի ունենանք մեր վրայ՝ անարդար ու անճիշդ վերագրումներ

Հընելու սեւէ ընկերոջ հասցէին : Ես ընկեր մը ամբաստանելը ամենէն ծանր արարքը կը նկատեմ . առա 20 տարի է ինչ ևս մեր ընկերներէն մէկուն վրայ հեռաւոր, անփաստ կատած ունիմ, ապկայն, այսքան տարի ևս կը կշռեմ իրուզութիւնները եւ չեմ կարող դայն ամբաստանել, կամ սեւէ ուրիշ ընկերոջ խօսիլ այդ մասին, որովհետեւ տակաւին համոզուած չեմ, տակաւին հաւատքը հիմնապէս չէ խախտուած :

Ճնշիչ ու անմոռանայի խրատ էր : Մենք կամաց-կամաց կ'ազատուէինք պղուսական շատախօսութիւններէն :

Դէպի Մուշ մեկնելէ առաջ, որ մը, մեզ տարաւ իր գիտական աշխատանոցը : Խոսանմին հիմնական ընաւորութիւնն էր զարձած քիչ մը զրազելու պայմուցիկ նիւթերով ևս ուսւմբով : Դաշնակցութեան յեղափոխական պայքարի ընթացքին, Խոսանմի զործնական եւ գիտական միտքը միշտ զրազուած էր գանելու հասարակ ձեւեր, պայմուցիկ նիւթեր օգտագործելու համար : Եւ ան, յաւելեալ փորձառութեան մը պէս, ուսւմբի մասին բաներ մը կը սորվեցնէր մեր երիտասարդ զործիշներուն : Մեղի ալ սորվեցուց՝ ըսերով, որ յետամենաց ամբոփի վրայ կ'ազգէ եւ կրնայ կայնեցնել խուժանը, մանաւանդ, քաղաքի նեղ փաղոցներուն մէջ : Իր հնարած ձեւը պարզ էր . նիւթերը զիրութեամբ կարելի էր ճարել : Միայն խոսորէն պատուիրեց, որ ցուցամոլութիւններ չընենք, զանազան փորձեր չկատարենք, պարապ անզ թեւերնիւ կամ զլուխնիս վրայ առալով : Պարզ զուշութիւն մը բաւական էր պայքուցիկ վասնգէն ազատ մնալու . իսկ մնացածը՝ կապուած պիտի ըլլար հարկեցուցիչ զէպքերու, ուր վտանգուիին ինքնին նպատակի մը ծառայել կը նշանակէր :

Գործնական պաշարով կը մէկնէինք գէտի Մուշ . ուրախ էինք : Մեր իրերը պատրաստած էինք ու կը սպասէինք սահնակին, որ մեզ պիտի տանէր թառինէն Ալաշկերտ ու անկէ Բուրանըի վրայով՝ Մուշ : Խոսանմ մեր անեակն եկաւ, ևաեւէն այ Մարտիրոս վարժապէտը, երկու խոշոր կազոցներով, զրսւորուած վերմակներով ու հաստ պարաններով :

Խոսանմը քիչ մը քիմը ձմոթեց ու աւելցուց .

— Ցզա՞ք, այս վերմակները ձեզ տաք պահելու համար չեն . անոնց մէջ ծրարուած են Էօթը մոսին հրացաններ, որ ձեզ հետ Մուշ պէտք է տանէք . այս զինքերու փոխագրութիւնը ձամբու ծախքը կը թեթեցնէ : Եթէ տեղ հասցնէք, շատ լաւ, իսկ Եթէ բռնուիք՝ կը փորձուիք : Զգոյշ եղէք եւ հանգիստ պահեցէք ձեզ, յայս ունիմ, որ վտանգ չի պատահիր :

Ուրախ էինք, որ զատարկ ձեռքով չափանի մտնէինք Մուշ, ուր զէնքի կարիքը միշտ մէծ էր : Ուրախ էինք նոյնպէս, որ Խոսանմը մեզի արլպիսի յանձնարարութիւն կ'ընէր : Ուրախութեամբ, թէեւ ոչ առանց զժուարութեան, կատարեցինք այլ յանձնարարութիւնը :

...Եթէք օր յետոյ հասանք Մուշ : Հազիւ վար իջած էինք, մեր իրերը կը հաւաքէինք՝ Դաշնակցութեան Տունը մտնելու համար, երբ երեք սպահկաններ մեզի մօտեցան կեզդ քաղաքավարութեամբ մը : Բնկերողս հետ շըշմած՝ մեր շուրջը կը նայէինք զինքերու ծրաբները գտնելու, բայց Մշոյ երկաթեայ խմբի աղաքն արգէն ամէն ինչ թոցուցած էին, ու մէջտեղ կը մնար

մեր գրքերու եւ ճեղմակեզէններու ծրարը :

Այդ օր, արգէն անխառն ուրախութիւն ունէինք, որ դէնքերը ապահով տեղ հասած էին, որ մեր ճամբու ծախքը սուզի չէր նստած կուսակցութեան :

\*\*

1913ի ամառն էր : Ս. Կարապետի Նաւասարդեան տօնը այդ տարի շատ մեծափայլու էր : Մոտ 20.000 ժողովուրդ հաւաքուած էր այդ հին սրբատեղին վրայ տօնելու հայ գրերու զիւտի հազար հինգ հարիւրամեակը եւ զպրութեան հինգ հարիւրամեակը :

Ռոստոմ իր աշակերտներու հետ, Բիւրակնեան լեռներէն, ոտքով հասած էր Ս. Կարապետ : Ժողովուրդը կը զտնուէր բազմազան տպաւորութիւններու տակ : Կարծես Խոչոր ցուցահանդէս մըն էր մեր կրթական եւ մշակութային կեանքի, հայկական բոլոր նահանգներու վարք ու բարքի, հայկական ազատազրական-յեղափոխութեան : Վերածնունդի նախանշան մը :

Այդ հանդիսաւորութիւններու օրերուն, Ս. Կարապետի վարժարանի սրահին մէջ, տեղի ունեցաւ Հ. Յ. Դաշնակցութեան Հայաստանի առաջին թայոնական ժողովը : Որքան զիւեմ, Ռոստոմն էր այդ միտքը յլացած : Այդ ժողովին կը մասնակցէին էրզրումի, Վանի, Դուրան-Բարձրաւանդակի, Խարբերդի Կ. Կոմիտէները և Հ. Յ. Դ. Բիւրոյի քանի մը անդամներ : Ժողովի նախագահներն էին՝ Ռոստոմ, Արմէն-Գարօ, Վասահեան : Տիգրանակերտի, Սերամատիոյ և Տրապիզոնի մարդինները շկրցան ժամանակին իրենց պատգամաւորները զրկել ժողովին :

Ռոստոմի առաջարկութեամբ, որոշուեցաւ ամէն տարի հաւաքուիլ Ս. Կարապետ, տօնակատարութենէն օգտուերով, կատարել Հայաստանի բոլոր կ. Կոմիտէներու Խայոնական ժողովը և անմիջապէս յետոյ՝ զումարել Դաշնակցութեան Ընդհանուր ժողովը : Ս. Զաւարեան, Ռոստոմ և երկրի գործիչները վերջնականօրէն կը պնդէին Ընդհ. ժողովը Հայաստանի կեդրոններէն մէկու մէջ զումարելու վրայ, բայց այդ տարի կարելի չեղաւ(\*):

Ռոստոմ և Արմէն-Գարօ հրճուանքի մէջ էին՝ տեսնելով զանազան վայրերէն Ս. Կարապետ հասած բազմահազար կենսունակ եւ ուրախ ժողովուրդը : Դաշնակցութիւնն իր ամբողջ ուժով հոն էր, Խայոնական ժողովի մէջ, հայկական աղասապրութեան մամատութեներով, դուրսը՝ Ս. Կարապետի ընդարձակ բակերուն մէջ, բազմաթիւ ամրիններէ նոյն յեղափոխական մտաւորականութիւնը հայ մշակոյթի տօնի առթիւ՝ հայ հողիի և հանճարի զովքը կ'ընէր, աղազայ կեանքի վերածնունդի մեծ յոյսերով :

— Միայն տասը տարի մեզ այսպէս հանդիսաւ թողնեն, մեր ժողովուրդը կը վերածնուի, — կ'ըսէր Ռոստոմ :

Աւա՞զ, մեզ տասը տարի հանդիսաւ շթողուցին...

«ԻՐՈՅԱԿ», 1929, թիւ 1-2

(\*) Ս. Ալբացեանի մէկ զրուեան մէջ նկատուած քիրիմացուրիւնը կը կրկնուի նաև հետև: 1913ին Կարմայ մէջ զումարուեցաւ Հ. Յ. Դրդ, Ընդհանուր ժողովը (տեսնէլ «ՅՈՒՆԵԱՎԱՏՈՒՄ» Հ. Յ. ԴԱՆՆԱԿՑՈՒԹՅԱՆ, էջ 558):

ԱՐԱՄԻ ԵՒ ՌՈՍՏՈՄԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ (1915)

Մեր առջև կը բացուէր դործելու լայն հորիզոն մը: Բասէն արդէն կազմակերպուած ըրջան մըն էր: Հոն նոր վարչութիւն մը կը ստեղծէինք եւ զործերը կը յանձնէինք անոր, ու մենք կը մեկնէինք երեւան, հոն որոշելու մեր բոնելիք ուղին: Երեւան հանոնելուս պէս՝ հանդիպում մը կ'ունենայինք Ռոստոմի հետ եւ կը գեկուցէինք մեր կատարած դործերու մասին:

Թոստոմ, որ յաջորդ օրը ճամբայ պիտի ելլէր դէպի վան, կարգադրեց, որ վարչութեան անդամները իրեն ընկերանան: Պիթիսի, Տարօնի եւ Սատունի ազատազրման հրատապ խոդիրը բոլորին ժամանողութեան առարկան էր: Մարտական ուժերը պիտի շարժէին վանչն, Մարտակերտէն եւ Ախլաթէն՝ դէպի Մշոյ դաշտը:

Վանի յաղթանակին տասներորդ օրը, Ռոստոմի հետ մենք կը մտնէինք վան: Դիմաւորող երիտասարդները մեղ կ'առաջնորդէին ուղղակի Արամի պաշտօնատեղին, Հայաստանի առաջին նահանգապետը, ազատ կորիզը ապագայ յոյսերուն: Արամ կ'ողջապուրուէր մեզի հետ, բացսրտութեամբ, պարզութեամբ, ինչպէս պիտի ընէր խմբական ժողովի մը մէջ: Իր նկարազրի յատկանիշներն էին պարզութիւն, յստակատեսութիւն եւ զործի ընթացքին՝ վճռականութիւն: Այս պահուն խնարհ պարզութիւն մը կը ճառագայթէր անոր դէմքէն: Նշմարեցի, որ անոր նայուածքը միշտ Ռոստոմի վրայ է: Ռոստոմ գուրզուրանքի ժպիտը դէմքէն, լուռ, անշարժ, կարծես թէ կը շոյէր Արամը: Հպարա էր կուսակցութեան հիմնադիրը, իր ճեռնասուններու յաղթանակով:

**Արամ դարձաւ Ռոստոմին.**

— Ռոստոմ ջա՞ն, երէ մեր կուսակցական աւանդութիւններին անպատշան կը նկատես նահանգապետութիւն ստանձնելս, կը իրաժարիմ եւ իմ տեղը պաշտօնատար մի մարդ կը նարենք...

— Ի՞նչ ես ասում, Արամ, դու չե՞ս զգում, որ Հայաստանի պիտուրեան իիմբն ես դնում: Նահանգապետ, նախարար եւ նախագահ քնական պիտի քուին պիտական կազմին մէջ:

Թոստոմ բացուած էր մտերիմ զրոյցի: Մենք ուղեցինք զանոնք առանձին թողուլ ու ոտքի ելանք. կ'ուղինք «Աշխատանքի Տուն» երթալ:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԵՄԸ», (ԱՐԱՄԸ, էջ 529)

Ռ Ո Ս Ո Մ  
(Ստեփան Զօրեան)

Կամաւորական Առաջին Գունդին մէջ յամառ չշուկներ էին շրջում, թէ Անդրանիկը զայրացած՝ հրաժարական է առած հրամանաւարութիւնից, ուրովհետեւ զլխապէա Յովսէփիւմնը, որ ուստական բանակի ներկայացուցիչն էր և աեղեկութիւններ էր հաւաքում մեր գործերի, շարժամների և մեծագործութիւնների մասին, ֆերմ զովիստով արտայայտուել էր Սմբատի ուղարմական կարողութեան, զունդ վարելու ճարտարութեան և հերոսական յաջող զորդուութիւնների համար: Ուրիշի հասցէին ազգուած զովասանքը, Անդրանիկը համարում է իր սեփական արժէքին ուրացումը: Այնքան նեղսիրոտ, զիւրազզած ու անըմբեր էր զառել, որ համոզուել էր, թէ իր դէմ մի զաւ կայ՝ ձիքերու ու չնորհքները ժխտելու: Եւ իր արժանապատուութիւնը վիրաւորելու համար: Երրեք շեմ հանդիպել մի անձի, որ համարձակութիւնը ունենալու որեւէ ատեն Անդրանիկի տաղանգը և մեծութիւնը կասկածի հնթարկելու: Բոլոր կամաւորները, վաշտապեսները, ազգային եւ կուսակցական զեկավարներն ու մարմինները միայն մի ժխտում են ունեցել բարձր ու անխոցելի զարձնել հայոց անդուպական հերոսի վարկը, արժէքն ու պատշւը: Այդ նպատակով իսկ չին ինայել իրենց խոր յարդանքը, բոլորանուէր զորքուանքը և անհատում աքանչացումը: Մեր բոլորիս ցան այն էր, որ Անդրանիկը, իսկամ զայնիկ իր խառնուածքին բերումով, յաճախ տարուում էր ծուռ ու անզարկեցած մարդոց սազրանքներից, ենթարկուելով նրանց չողոմարար զարպասներին եւ վարպետորէն հրամցուած փաղաքչանքներին: Այս գետնի վրայ անտեղի ու անպատշաճ միջադէպեր ունեցաւ նա, մինչև իսկ առաքելատիպ բժ. Յ. Զաւրիեի հետ:

Անդրանիկի անսանձ զայրոյթի առանցքը այս անզամ Արարատեան գունդի կազմութիւնն էր: Ինչո՞ւ եւ ի՞նչ ծածուկ զիտումով Անհասորի հերոս՝ Վարդանին էին նշանակել այդ գունդի հրամանատար: Ինչո՞ւ իրանի սպառ անտեսել էին: Իրաւ է, Անդրանիկը սիրում էր փառքն ու փայլը: Փառատենչիկ էր, սակայն արտակարգ կերպով ու շիմ էր, սուր եւ թափանցող աչք ունէր եւ արագ ըմբռնողութիւն: Թէեւ անուս մարդ էր, բայց ինելք ունէր կացութիւնը ձզբուօրէն պատկերացնելու եւ հարցին էութիւնը հանկանալու: Իրողութիւնը այն էր, որ ոչ անտեսում, ոչ անզիտացում եւ ոչ էլ կուրացում կար: Ամսեղուկ ու օձարարոյ տականքներ, յերիւրածոյ վերացրումներով եւ չարանիթ թելազրանքներով, չղաղարեցին խաղալ Անդրանիկի տկար լարին վրայ: Չարմանալի չէ: Այսպէս են մեծ մարդոց մեծ միաւղները:

Մէկ առաւօտ, կայծակի արագութեամբ լուր տարածուեց, որ Բոստոմը թիֆլիսից հասել է բանակատեղի՝ կացութիւնը դարձանելու, վիստացող

թիւրիմացութիւնները փարատելու և Անդրանիկին ողոքելու:

Երբեք չէի տեսել Ռոստոմին: Լայ ու կարգացել էի, որ Քրիստովուր Հ. Յ. Դաշնակցութեան ուղեղն է, Զաւարեանը՝ սիրտն ու խիզձը, իսկ Ռոստոմը կամքը: Յորդոն յայսով խայտաց բոլորի սիրտը: Բոյորն էլ դոհանակութեամբ չաւնչ քաշեցին: Ամէն ոք հնտամուտ եղաւ միայն իր աշխատանքն, նոր Ռոստոմով յծուեց առօրեայ պարտականութեան, անդխոսանայով այն ախտոր վէճը, որ կատաղի կոհակներով խաւալում էր Անդրանիկի վրանին տակ: Անսահման բաւանասութեան մի ապահով զգացում պարտորէլ էր մող, թէ ճայթող ու շառաւչող ամէնի փոխորկին փատահարար պիտի յաջորդէ հաշտաթեան և անդորրութեան աւետարար ծիածանը:

Ուժգին եղաւ մէր ցնցումը և յայսի կործանումը, երբ լսեցինք, թէ փաշան անողոք էր, անդիջող և անդրգութիւն: Բոյոր հերքումները, բացատրութիւնները և լուսարանութիւնները անօգուտ էին դառել խազակեցնելու իր ալեկոն հոգին: Նոր անդիջօրէն պնդում էր, թէ զաւ էր սարքուած իրեն արժեկորդելու և վարկորեկելու համար: Ըստունայն էին եղած բոլոր թախանձանքները, ողարտումներն ու երաշխիքները իր անձնուէր մարտիկների ու զինակիցների, որոնք իրեն հաւամարտար Ռոստոմի փառքը հիւսիլ էին:

Անդրանիկը վճռել էր ընդմիշտ քեզ զանգը:

Դուրս եկել էր վրանից և ապաստմ էր, որ իր ճին թամբեն: Մօտակայ Խոյ քազաքը պիտի մէկնէր, այնտեղից Կովկաս անցնելու և առանձնաւալու, միանգամայն խոկելով իր կազզ կամաւորական զունդերի հետ:

Առաջին անգամ էր, որ մարմանկան աչքերով տեսնում էի Ռոստոմին: Դէմքը այլայլուած, մի խօս ու անմեկնելի թախիծ աչքերի մէջ: Փութկոտու մտասանջ, և մտածումները այնպէս սեւեռած, որ ոչ ոքին չէր նշարուում: Նայուած թը Անդրանիկին էր յառած: մի նայուածք, որի մէջ կար զորով, խանգակաթ բարեկամութիւն և զօրեղ ափսոսանք: Նկատելի էր, որ Ռոստոմը աճապարանքի մէջ էր: յարաշարժ ճիզ էր զործում Անդրանիկից առաջ ճի նստել՝ նրան ընկերանալու: համար: Նրա սեղմ շուրթները յայտնում էին, թէ ինդիրը փակուած չէ զեռ և Անդրանիկին զարծի պիտի բերէ: Այդ վճռամբիս համոզումով շտապեց, որ ճիւռն քամակը նետուի: յանկարծ կենդանին երկու ոտքի վրայ ծառացաւ, Ռոստոմին զգեստնեց, ապա ընկաւ նրա վրայ, որովհետեւ Ռոստոմը շարունակում էր ուժգնօրէն սահնձը քաշել: Աչ ու սարսափ տիրեց բոլորին: Այն տպաւորութիւնը ունեցանք, որ եթէ Ռոստոմը մեռած չէ, առնուազն յմահ խեղանդամ պիտի մնայ: Սևպուհ, Սըմրատ և խմբապետներ ու վաշտապետներ վապեցին օգնութեան:

Անդրանիկը դիտեց տէսարանը անհոգ, անտարբեր և անուշագիր: Այնպիսի պազութիւն ու անհոգութիւն տիրում էին իր նայուածքին մէջ, որ բոլորին մէջ սրգողանք յառաջացրեց: Մէկ էլ նկատեցի, որ Գրիգոր Ամիրեանը, Մատթէոս Լուսպատանը, երկուք ալ օգնական վաշտապետներ, առաջինը փաթաթուել է Եղոր Տէր Մինասեանին, միւսը՝ Եղորի մասուզէր ատըրձանակի փողը բռնած, աղաչում, պաղաստում են, որ ես կենայ իր յիմարութիւնից: Մինչ այդ՝ Անդրանիկը, իր Ասլանին վրայ հեծած, մէկնեց Խոյ:

Հետազային պատմեցին, որ Ռոստոմին վիճակուած սարսափելի արկածին հանդէս Անդրանիկի ցոյց տուած անկարեկից անպայնութիւնը այնքան վրդովիւ էր Եղորին, որ քաշել էր ատրամանակը Անդրանիկին սովաններու համար : Սոսկում Էմ, Էրը վերյշում Էմ ճակատագրական այդ սահմանկեցուցիչ պահը : Եթէ չինչին Գրիգոր Ամիրեանն ու Մատթէսոսը Եզորի կողքին, եթէ չինչին մէկի արթնամատթիւնն ու բարեկամական կասպը և միւսի վրձուական արգելքը, պիտի զործուէր մի քամնեցուցիչ ոճիր, որ պատմութիւնը պիտի չներկը ոչ ոքին և անարգանքի սիւնին պիտի զամէր բայրորին : Ի՞նչ սահմակառոր ժայնատան պիտի արձակուէր Հ. Յ. Ֆաջնակցութեան դէմ, ի՞նչ սույոզ Հեքիաթներ պիտի յօրինչին շաբախեզու բանարկուները, եւ շաբախինզ սպրուկուազ հայութեան հոգին թունաւորէին : Ոճիրը պիտի կրծէր մեր սիրաը, պիտի քամէր մեր աւէը եւ հայոց պատմութեան մէջ մի անցնջելի խարան պիտի մնար :

Եւ մտածում Էմ, ի՞նչքան փիրուն է մեր պատմութիւնը Եւ որքա՞ն յեզյեզուկ նրա բնթացքը : Ի՞նչքան քամածին և ափյափոյ է պատմութեան դէպքերի մեր զնահատութիւնը և ո՞րքան անիրաւ դատակիքները Են դրոշմուել արգարների մաքուր ճակատների վրայ : Եւ մտածում Էմ, դիպուածն ու պատահականութիւնը և մաքի բռնամուղ յաձախանքներից հալածուած խելյառը, իր մէկ խելազար արարքով, կարող էր չքչել պատմութեան հունը :

Ռոստոմը ողջ առողջ գուրս եկաւ : Երբ բոյրովին սթափուեց, առաջին խօսքը եղաւ .

— Ո՞ւր է Անդրանիկը :

Նոր ձի բերին եւ թամրեցին : Ռոստոմը հանդարտ, պայտարիւն և սոռ զատողութիւնով խնդրեց, որ բոյրս էլ զնանք և զործի զրուխ անցնենք : Այնքան անխոտով ու պազարին էր, որ կարծէս ոչինչ պատահել էր : Ոչ մի խօսք կամ ակնարկ միջազէպի մասին : ոչ մի խօսք կամ ակնարկ Անդրանիկի մասին : Նրա զէմքին վրայ սեւ խոչոր զիրելով եւ բացորոշ կարող էիր կարգալ անպատճ խանդազատանք եւ զուրգուրանք, հիացում և ազապատանք հայոց սիրելի ու պանծալի հերոսին՝ Անդրանիկի հանդէս :

\* \*

Խոյում Ռոստոմ էր յաջողի Անդրանիկի զայրոյթը սանձել : Տրապիզոնի մաղքնուած մթնոլորտում անհնար էր հանդարտ հոգեվիճակ սունդէել Անդրանիկի համար, որ ոչ միայն մերժում էր որևէ բացատրութիւն լսել, այլև հասկանալ չէր այսում : Զար լեզուներ քէն ու մախանք էին հրահրել, որով նրա զայրոյթը զէթ մեզմելու փորձերն խոկ նախօրօք դատապարտուած էին զերեւանքի : Անդրանիկը լոյսի մուտքը փակել էր իր մտքի առջեւ, փակել էր նսեւ իր վրանի մուտքը Ռոստոմի առջեւ : Այնքան կուրացել էր Անդրանիկը կիրքի բորբոքումից, որ յատկապէս հրամայել էր իր պահակներին՝ արգիւել Ռոստոմի իր վրանից ներս :

Խոյում մթնոլորտը հիմնալիքին տարբեր էր : Տանուտէրը, որի տանն էր օթևանել Անդրանիկը, հիւրամեծար ու ասպնջական մարդ, իր մօտ հրաւի-

բել էր նաև Ռուսականին և Ա. Զամալհանին, որոնք մինչեւ Առյ ուղեկցել էին Անդրանիկին:

Տանուտէր Ժամկոչչանը, սրտցաւ ու սրտակից ընկեր, առատաձիր ու զոհարերսկ մարդ, վագեմի մտերմը Անդրանիկի, պաշտամունքի հասնող Նիսացումով կապուած Ռուսականի, ընթրիքի ճոխ սեղանի շուրջ կը բոլորէ իր Նիսերին: Ռուսականը լուս է, խորասուզուած ծանր խոհերի մէջ: Անդրանիկի գէմքը կարմրած է ցասումի բոցից ու նրա խոչոր աշքերը փայլատակում ևն անհանոյ մի հուրով: Մի գիթխարի սառոյց կայ երկուքին միջեւ, որ պէտք է կոտրել: Զամալհանը չի համարձակում բերան բանալ:

Տանուտէրն է, որ յուզուած այս անօրինակ երեւոյթից, իր պարզ գեղշուրէի բառերով ոպեկոչում է Հին յեղափոխական, մարտական կոխւների տաժանքն ու զատանքր, ամենազարհուրելի պայմանների մէջ իսկ Փետայիների անհուն զոհարերութեան ողին, հազարաւոր նահատակների սուրբ արիւնը եւ աղեխարչ պազատանքով կոչ է անում չլքել այս անրախտ ժողովուրդը ու Հին ողիով գործը շարունակել:

— Մայս ձեզ զուրպան, հողիս ձեզ զուրպան: Առէ՛ք, բոլորն էլ ձերն է, մեղք է այս քամրախտ ժողովուրդին:

«Բոլորս Էլ խորապէս յուզուեցինք, պատմեց ինձ յետոյ, Գահերէկում, Ա. Զամալհանը: Այնքան իրաւ եւ ուժգին էր իր ազաշանքը, այնքան անկեղծ ու սրտարուխ էին իր խօսքերը և այնքան անձիգ ու ընտական կերպով էին հոսում, որ բոլորս Էլ յուզուեցինք՝ լուռ ու անխօս: Անդանատնից զուրս եկայ, որովհետեւ զզացի, որ աչքերս թրջում էին: Մի քանի բոպէ ետքր երբ վերապարձայ, Ռուսական ու Անդրանիկը զլուխ զիսի խօսում էին: Ռուսականի ինձ նետած զադուցիցի համացքից իմացայ, որ այլևս իմ ներկայութեան կարիքը չկար: Ռուսականը տէր էր կացութեան»:

Տիրապիզ վերապարձին նշարեցինք, որ Անդրանիկի գէմքը արտասովոր պայմանութեամբ փայլում էր եւ մեղք ու շաքար էր ծորում: Խատաշունչ քամին զայտրել էր, եւ առազատաները իջել էին: Այս բոլոր ցաւառիթ իրազարձութիւնները թէպէտ մի նշանախեց իսկ չազդեցին կամաւորների եռանդին ու իրանց պարտականութիւնների փարումին վրայ, բայց ակներեւ էր, որ հողիների վրայ մի մոռայլ թուխակ էր նստել:

Երբ լուրը արագօրէն շրջան ըրաւ մեր շարքերի մէջ, ցնծութեան հառաջանք արձակեցին բոլորը, և խազաղութեան օրհնութիւնը տիրեց մեր վրայ:

Շուտով հրաման եկաւ, վազն իսկ շարժուելու ենք զէպի ուազմանակատ:



### Ապրիլի սկիզբն էր:

Լեռները առատօրէն ծաղկել էին ու դաշտերը զմբուխաէ գորգեր փըռել ամէնուրեք: Գարնանային մեզմ ու անուշ զեփիւր շոյում էր մեր ճակատները: Վերապարթնող բնութիւնը նորոգ կորով ու ինքնավստահութիւն էր բաշխում:

Պատրաստւում էինք զալիք ահեղ ճակատամարտներին: Լուր էլ հա-



Ռուսական եւ Մատրէսն



Ռոստով՝ մօր և ըրոջ հետ

սել, թէ հերուսական վասպուրականը ապատամբել է, որ պաշարուած է թըշնամու գերակշիռ ուժերով և մեղնից չուտափոյթ օզնութիւն է հայցում:

Որոշեցինք մի վերջին անգամ ուխտի զնալ հայոց պատամիթեան անմաս հերոսի՝ Վարդանի գերեզմանին, որ մեղնից հազիւ մէկ քիլոմետր հեռու էր: Հասարակ քարերով մի զմբէթաւոր զամբարան էր նա, որ մեն մենակ կանգնած էր Աւարայրն ու Տղմուաը դիտող կարմրահող մի բլուրի վրայ:

Մեր հոգիները ուխտի ու ազօթքի մրմունջով առցուն, մեր հայեցքին առջեւ փոսուզ Աւարայրին վրայ անսանք Վարդան Զօրավարին՝ իր հրաշագեղ հասակով, փառաչուք սազաւարաը զիլին, արեւի շողերի տակ պըսպըզան զէնք ու զբանով, ոսկեզօծ թուրը ճեռին, իր հազար երեսունըլից նահատակիներով խոյսում և ահ ու սարսափ է տարածում թշնամու շարքերի մէջ: 15 զար է անցել, բայց Աւարայրը զեռ զզրդում էր հայ այրուձիի սմբակների զոփինից: զեռ լուսմ էինք շողջող սուրերի շառաչն ու շկահուր եւ հայոց գորքի դրսի աղազակը:

Տասնեւ հինգ զար է անցել, բայց զեռ տեսնում էինք հայ արիւնը մըշտահոս Տղմուտի մէջ: Եւ այժմ Վարդանանքի որոտումը անմար արձազանգով հնչում է Վասպուրական աշխարհում, որի բարձրաբերձ սարերը թումբ են կանգնել մեր զնացքին, մեր արշաւին զէմ:

Յաջորդ օրը գունդը ամբողջ եւ կարգապահ ճշլութեամբ շարուած, համախմբուած էր Տաւարակի բացաստանում: Անձկայրեաց անհամբերութեամբ եւ ակնդէտ սպասում էինք թոստոմին, որ բազծանք էր յայտնել բարի ճանապարհ մազթել մեզ: Ուրախութիւնը անսահման էր: Թոստոմը՝ Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրներից մէկը՝ զալս էր մեղ տարւ յեղափոխական շարժումի պատզամը: Այդ պատզամը պիտի լինէր միասնականութեան նուիրագործումը եւ վրէժի շեփորը:

Քիչ յետոյ հասաւ թոստոմը: Մտաւ գունդի մէջտեղ՝ իր բնական քայլուածքով, սովորական հազուածքով, լոիկ ու մնջիկ, խոհուն ու թախուոտ, սկսեց գիտել բոլոր վաշտերը, զունդի կազմածները եւ կամաւորներին: Նայում էր հին Փետայիներին սքանչացած գոհունակութեամբ, նայում էր ջահիլ զինուորներին, որոնց առողյ, քաջարի կեցուածքը ու հացայս նայուածքը վասում էին նրա հոգարտանքը: Այսպէս մի քանի վայրկեան մենք մնացինք լոիկ ու անշարժ, իսկ թոստոմը որոշապէս միգ էր զործում իր յորդուումը զուզումը զապէլու:

Ապա խօսեց: Խօսեց թաւլային քաղցրալուր ձայնով: Խօսեց պարզ, յատակ ու անպանոյն կերպով, մինչեւ անգամ որոշ տեղեր կմկմալով: Հուտորական ոչ մէկ շարժումնեւ, ոչ մէկ ճիգ հանգիստաւորութեան: Իր խօսքը ամբողջ յուզում ու հոգու ինքնել պոոթկում էր:

Այսպէս խօսեց թոստոմը.

«Կորիճներ հայ ժողովուրդի.

«Վանը ապստամբուել է: Վասպուրականի հերոս ժողովուրդը իր աշքերը ձեր վրայ է սեւեռում: Զեզնից չուտափոյթ օզնութիւն է սպասում: Դուք բախտաւոր զաւակներն էք այս առաքինի ու պատուական ազգին: Զեզ

վերապահուած է կենսական մի գործ և պատմական մի առաքելութիւն. փրկել օրհասական պայքարով մարտնչող հերոսական վանը և պատագրել վասպուրականի համայն հայութիւնը տաճկական զարհութելի զուրումից, որ մահուան մանգաղով է սպառնում նրան :

«Տարբիներով հաղի տասնեակներ էին զինուորագրում ահմանը անցնելու՝ նրապների աշխարհը մտնելու. և անրախոս հայութեան օդնութեան հասնելու : Նրանք անվախորչն զնում էին, թէ կուզ ոչ բաւարար կերպով զինուած, փոքրաքանակ ուղամամթերքով ու սարսափելի վատ պայմանների տակ : Այսօր այդ սոկաւաթիւ տասնեակները ամել, բազմացել են և վերածուել հարիւրաւոր տասնեակների և վարժ, ընտիր, մարզուած ու կարգապահ մի գործամասի :

«Ամփո՞ս, հազար ափսոս, որ զրկուած եմ արժանաւոր փառքից, որ ձերը պիտի լինի: Կարեւոր եւ անյնտաձգելի պարտականութիւններ ինձ պարտազրուած են մեկնիլ Կովկաս: Խնչպիսի՛ անզուսպ փափաք է ևսում հոգուս մէջ ձեզ հետ լինելու, ձեր զիւցազնական խոյանքներին մասնակից լինելու, ձակասամարտների մէջ ձեր ձակասազիբը բաժաննելու. և ձեզ բախտակից լինելու՝ ձեր տանջանքը, զրկանքը և տաժանքը կը բելով :

«Գնացէ՛ք, հայ' կտրիմներ: Բարձր ու մաքուր պահեցէ՛ք հայ հայդուկի նուիրական սուրբ զրոշը: Աշխարհի համօրէն հայութիւնը, ակնապիշ ու ամէն բուպէ հետեւում է ձեր քայլերին:

«Գնացէ՛ք, սրբեցէ՛ք հայ տառապակնոծ մայրերի արտասուրը. պաշտամն կանզնեցէ՛ք հայ անմեղ ու առաքինի կոյսերի սուրբ պատիւնի եւ ուժ սուէ՛ք, սրասազնգեցէ՛ք ազատատենչ եւ սաւզազործ հայ ժողովուրզին:

«Հայութիւնը հպարտ է ձեզով: Անսահմանօրէն հպարտ եմ եւ ես, որ ձեզ նման տոկուն, չարքաշ, անվեհեր ու մահը արհամարհող հայդուկներ է հասցըլ հայ ժողովուրզը:

«Գնացէ՛ք, ողջունեցէ՛ք հայրենի սարերը, ձորերն ու զիւղերը, որոնց ամէն մէկ թիզ հողը ներկուած է ու նուիրազործուած հայու արիւնով:

«Եթոր ու անսասան հատաք տնիմ ձեր վրայ. ձեր արիւութեան, ձեր վճռականութեան եւ ձեր կատարելիք մէծազործութիւնների վրայ: Երջանիկ էք զուք, որ ձեզ հրամանատար ունէք հայոց աննման ու թանկազին հերուները: Բախտաւոր էք զուք, որ ձեզ հայրենի երկիր պիտի պաշնորդեն Անզրանիկի, Սեպուհի, Աւոյի և Սմբատի նման փորձառու, քաջարի ուխտեալներ, որոնց բովանդակ կեանքը եւ մտածումը եղաւ հայրենիքի փրկութեան և պատագրութեան վսեմ խտէալ:

«Եղոր ու անսասան հաւատք ունիմ, որ չուտով, մօտ ապագային, նորէն իրար պիտի հանդիպինք, բայց այս անզամ անհուն ուրախութեամբ եւ հայրենի երկնքի տակ :

«Ալլըի՛ք, շատ ապրէք :

«Կեցցէն Անզրանիկը, Սեպուհը, Աւոյ և Սմբատը:

«Կեցցէ՛ հայ Կամաւորական Առաջին Գունդը:

Մինչ հրամանատարները յուզուած ու ողեւորուած համբուրում ու ողջագուրուում էին միստումի հետ, կամաւորները, միանարար, ինքնարերա-

բար, առանց վերին հրահանգի, զլիսխիւր բարձրացրին իրենց հրացանները և ողը մնացարին որոտածայն ու խացացիչ կեցցներով։

Յաջորդ օրը Ռուսակամք մէկնեց Կոյշկաս, իսկ Կամաւորական Առաջին Գունդը սրտապնդուած ու խանդագառուած Ռուսամի անժոռանալի պատպամով, դարրենց ու կերաւեց փառաւոր յազմանակը Դիլմանի պատմական ձակատամարտին։

\* \*

Դիլմանի ահեղ ու փառահեղ ճակատամարտը նախերգանքը եղաւ մի տասնեակ պանծայի յազմանակների, որ կերտեց Կամաւորական Առաջին Գունդը. կոտ, տենդագին խորանքով և թաթաւուն քինայոյզ վրէժով հայ սազմիկները կրնակոխ հւտապնդեցին և անխնայ հարուած հասցըն նալիլ փաշայի գերընակիր բանակին, որի զօրքը Դարգանելի զինաբախումներէն փորձառութիւն էր ձեռք բերած և սպառազինուած էր արդիական կատարեալ զինքերով։ Խանասոր, Բաշկալա, Խազան, Սիկունիս, Լիսին, Միրվանայ և ապա Մորք ու Դատաւան՝ Արարատեան գունդի հետ մինչեւ Բիթլիսի դուռները, հայ կամաւորները մեր մարտական նորագոյն պատմութեան մէջ արձանագրեցին հրաշագեղ մէծագործութիւններ եւ մէծաշուք յազմանակներ։

Ազատութեան ծագող բոսոր արշալոյսը հրավառեց անզամ թերահաւատ հոգիները։ Ողջ հայութեան սիրտը թրվաց աննախընթաց խոյանքով, երբ հայ կամաւորական գունդերի պողպատէ բազուկը իր հովանին տարածեց Գրգուորի և Նեմրութի բարձունքների վրայ, որոնք միշտ ասպար կանգնել էին մեր Փետայական խումբերին։

Կուսամակատ Գրգուորի և գրգուահեր ակնազրիւններով հարուստ Նեմրութի կատարներից, Յոյսի անշագելի հրճուանքով արբաշո, մեր կարոտակէզ աչքերը յառեցինք Մշոյ ոսկեթոյր զաշտին, որ ծփծփում էր արեւի ճամանչների տակ, և Տարօնի թխակարկառ սարերին, որոնք ամպերի հետ էին համրուրում։ Տարօնը՝ հոլաբեւ արծինների օրօրանը և հայոց պատմութեան շողպապակ փառքերի յուոթի արգանդը, որ այն պահուն զալարուում էր մահուան ճիրանների մէջ։

Աւազ, թաւալզոր փուլ եկաւ մեր երազը։

Թուսական բանակը նահանջի անակնկալ մի հրաման արձակեց։ Անդրանիկ, Քեռի, Դրա և իրենց աննման զինակիցները, վիրաւոր առիւծի նման անգօր կատաղութիւնից մոնչում էին և նզովում այդ պահը, որ խորտակից իրենց մէջքը. կարծես արեւը խաւարեց և թանձ մի թափիծ նստաւ մեր բոլորի հոգու մէջ։

Ի՞նչպէս թողնել, ի՞նչպէս լքել սէզ Տարօնի անզուգական մարտիկներին, որոնք անհաւասար դուպարին մէջ հեւապա՛ իրենց յետին ճիզովը մարտնչում էին։ Մարտնչում էին ջլապինդ բազուկներով և կրակէ աչքերով, որովհետեւ լսել էին կամաւոր եղբայրների անյազթ զինքի շաջումը և տեսել՝ փրկութեան յուսարեր լոյսը, յազմանակի թեւերով։

Ի՞նչպէս թողնել, ի՞նչպէս լքել յազմապան Վասպուրականի հայութիւնը, որ մէծախնծիզ ոգեւորութեամբ հայոց նորագոյն Անկախութեան ար-

ձանն էր քանդակում, և որ համակ աւիւն ու թոփշ՝ փարել էր ստեղծագործի վիթխարի աշխատանքի:

Անողոք հրամանը բռնազատեց մեկ նահանջել կորաքամակ, թեւարեկ ու մշտամորմոք, թողլքելով Տարօնի բազմատանջ ժողովուրզը զարհարելի մի արհաւիրքի մէջ: Այդ ճակատապրական նահանջը տեղահան որաւ Վասովուրականի ժիր, չշնոր և շինարար հայութիւնը, որ, անասելի խուճապի մէջ, փախատականի ցուպը ձեռին, չուեց զէպի նոր Քանանը, Արարատեան հայութեան հիւրընկալ ծոցը:

Հարիւր յիսուն հազար զաղթական անընդհատ խուժեց Արարատեան դաշար, որ վշտակից բնդունարանը եղաւ անվասում թշուառութեան, աղեկիզ խոցառուքի և անսփոփելի սուզի: Գրիշու չի գորում նկարագրելու սրտանմիիկ տեսարանը: Համաձարակ՝ վարակիչ և տարափոխիկ հիւանդութիւններ, անօթութիւն, որքերի և կորածների համատարած բազմութիւն, անտէր, անտիրական ու հիւանդկախ երախաններ ու մանուկներ, անթաղ զիակների շարան, և ողը ու կական:

Բժիշկի ու աշխատող զործիչ սով էր, Անհամբեր սպասում էինք նըսպատամառոյց և առողջապահական խուժերին: Մինչ այդ, Անդրանիկի հրամանով ու պատուիրով, վերցրի մեր բանակի ամրողջ գեղորայքը և լըծւցի զործի: Բժ. Հայկազուն Նալբանդեանը, զողէրոցքի բռնուած, անկողին էր զամուած:

Վազ առաւօտից մինչեւ ուշ զիշեր, առանձին ու հետիոտն, վազվզում էին զէս ու զէն, բժշկական օգնութեան հասնելու, յարմար վայրերի մէջ տեղաւորելու, ոմանց բնակարան ճարելու, անտէր մանուկներին հաւաքելու և դիակներ թաղելու համար կարգադրութիւն անելու:

Եւ այս բոլորը նեղիրի մէջ, որի ամառը հեղձուցիչ չոգ է եւ որի փոշեթաւ փողոցները գժուային հնոց են: Գետինը կարծես մի եռացող կաթսայ է, որի արձակած զոլորչին հրաշէկ ցանցի նման կպչում է մարմինիդ և սեղմում քեզ:

Երկարատեւ քայլելուց ոտքերս սկսեցին ուռչել, այնպէս որ այլեւս անհնար եղաւ մոյկ հազնել, մէկ զոյզ տրեխս ճարեցի իրրեւ լայն ոսնաման, որ կարենած ազատորէն ման գալ: Այսուհանդերձ, փոշին եւ քրտինքը ճաթըլուառներ ու վէրքեր էին գոյացրել ոտքերիս տակ եւ խոցեր՝ ցաւը ինձ այնպէս էր տաղում, որ տօթակէզ մի յետմիջօրէի գնացի նեղիրի հանրային պարտէզը, տրեխներս հանցեցի եւ հանգստացայ նստարանին վրայ:

Հաղիւ թէ քառորդ ժամ էր անցել, պատահմամբ քովս եկաւ Սիմոն Վրացեանը: Տեսու վիճակս, բայց ոչինչ չասաց: Անորապէս զգածուել էր ի տես զաղթականների խեղճութեան և ողորմիլի վիճակին, քաշած անօրինակ շարչարանքին և գոհերին: Իսկ ես ընկճուած էի ու յուսարեկ: Ահարկու նահանջը փլուզումի էր ենթարկել յօյներիս զզեակը եւ բարոյալքել ինձ: Փաղթականների այս տարապայման գողզոթան սարսուռ էր ազգել հոգուս: Ուզկարող հիւանդների անքոցը, տառապահար մայրերի սորինքների ցամաքումը, անկաթ ու անսնունդ երախանների սրտապատռ ճիշը, մոլորած մանուկների պաղատապին արտասուրքը հեղեղել էին յուզական էութիւնս: Քայ-

քայլուել էին ջիպերս և զարձել էի դիրագրպիռ :

— Կորցրինք Տաճկահայտաստանը, հայութեան մնացորդն էլ հիմա ամբողջութիւն մորթուած կը լինի : Խոկ այս զաղթականաւթիւնը օրէցօր կոտորուում է ջերմի, ախֆի, թանչքի, փորհարբինքի, թոքառապի և աղեսապի հետեանքով : Այժմ մեր միակ և զերազոյն մտահազութիւնը պիտի լինի փրկել Կովկասի հայութիւնը և խնայել նրան վերահաս սարսափներից և ազաներից :

Ասում էի Սիմոն Վրացեանին, խակ նա խրախսուում էր ինձ և յորդոր էր տալիս զառեպնդուելու և ամուր պահելու հաւատքու : Ինձ յիշեցնում էր, թէ հակառակ բազմաթիւ ջարդերի և ահաւոր աղէտների, այս ժողովուրդը ապրել է, որովհետեւ յայսր չէ կորել, չէ բարոյալքուել, այլ ընդմիշտ մընացել է հաւատուոր :

Ուշադիր լսում էի Վրացեանին, երբ նկատեցի, որ մէկը զալիս էր գէպի մէկ :

Ռոստոմն էր :

\*\*

Թոստոմ մօտեցաւ և կանգ տռաւ մեր առջեւ, առանց բարեւի :

Իր թուխ թէմքը այրուել, խանձուել էր կեզիչ արեւից, ապրուն էր ու պարտասուն . թուրի նման հատու հայեացքը ինձ վրայ սեւենեց եւ...

— Ի՞նչ ես անում զու այստեղ, հարցրեց մէզմօրէն :

Զայնին մէջ կոտակուած զանգատ և սքովուած յանդիմանութիւն կար : Լուսաբանութեան մտօք արձակուած մի հարցում չէր զա, այլ հարցական կազակարի մէջ զրուած մեզագրանք : Հարցումը ինձ խոռվեց : Տեսել էր, որ արեւեներս հանել եմ . ակներեւ էր, որ վիճակս վիճակ չէր, այլ Յովնան մարգարէի վիճակ :

— Եկել եմ մի քիչ հանգստանալու . ոտքերս վէրք են հանել և ուռել, պատասխանեցի խօստ շոր և վրդով շեշտավ :

— Լաւ, յարմար ժամանակ ես ընտրել հանգստանալու, ասաց սուր հեղնանքով, իր լեցուն ձայնով : Տեսնո՞ւմ ես այս ժողովուրդի զարհուրելի վիճակը . ծով կարիքներ ունենք, մարդ չունենք : Բոլորից աւելի զու ես իրազեկ վերահաս վտանգին : Գէ՞ս տեսնում, որ ժողովուրդը փանում, ձեռքից զնում է, նստել ես մի քիչ հանգստանալու . խիզդդ կը թողի՞ , որ այս փախստական ժողովուրդը ճանձի պէս կոտորուի :

Դիրազգած էի զառել : Թոստոմի խայթիչ հեղնանքը ու մտրակիչ մեղադրանքը ծանր պարասարի պէս իջան զիլիս : Արիւնը զլուխս խոռվեց . բերանս շորացաւ . կոկորդս սեղմուեց և . շունչս բռնուեց : Գիժը զարթնեց մէջըս, անկարող եղայ զապել կուտակուող մազքը և պոռթկացի :

— Պիտի կոտորուի՞ն, թող կոտորուի՞ն . ի՞նչ անեմ, խօսեցի եւ Պիտատոսի նման ուսերս թօթուեցի :

Կայծակ էր, որ շանթազին իջաւ ու ճայթեց : Թոստոմը քարացած էր իր կեցած տեղը : Անակնալ էր իմ այս ելոյթը : Մունջ շասումը վիթխարի կոհակներով ուռչում էր Թոստոմի աշքերի մէջ : Դիտում էր ինձ անշարժ,

լուս ու անթարթ, կարեկցութեամբ, բայց լեռնացած արգահատանքով:

Իր վերաբերմունքը զգասաւութեան թերաւ ինձ, յանկարծ: Զգացի, որ մեղանչել եմ սրբաթիւնների զէմ: Լոկ հայհոյանք չէր ու երկնքի և երկրի դէմ, այլ խոտացումբ Եօթի մահացու մեղքերի: Խղճի խայթը սկսեց սիրոս կրծել, Երր նկատեցի, որ ինձ նայում էր ոչ բարկացայս աշքերով, այլ անծիր ու անունջ արհամարհանքով: Այդ պահուն ո՞րքան կ'ուզէի, որ զանակուր, անարգէր, Անզրանիկի նման լուսանքներ տեղացնէր զլիխի, միայն թէ այդպէս լուս չմար: Նրա այդ լուս թիւնը սպանիչ էր ինձ համար: Տառապում էի, որ իր բարկութիւնը չէր ժայթքում: Ճէ՞ որ Եհովան իսկ չէր պահում իր զայրոյթը:

Շփոթ ու չուար, խզահար ու մեղապարտ, մի ակնարկ նետեցի Միմու Վրացեանի վրայ՝ օգնութեան ազերով: Բայց ի զուր կարծես թէ Վրացեանը տեսաղկու և յարանուն սասակութեամբ չշնչում էր ականջիս. «Աններելի մեղք զործեցիր, յանցաւոր ես, յանցաւոր . . .»: Այս բառերը արճիձի ծանրութեամբ մքահարում էին քունքերս:

Տրեխներս կապեցի, շարկեցի գեղերի պայուսակս և առանց բառ արտասանելու մեկնեցի: Ամբողջ օրը շարաշար տքնել եմ, հակառակ ոտքերիս ցաւին: Պէտք է մեղքս քատէի: միակ ապաշաւն էի համարում ոտքի վրայ անդուլ ժուռ զալ առանց հանգիստի, ծարաւ. ու քաղցած: Կը բազձայի, որ ոտքերս աւելի ուռելին, վէրքերս բազմանային ու խորանային, որ չքմեղանքս իինի արգար և ապաշխարանքս՝ ընդունելի:

Սրունքներս հազին կարող էին ինձ պահել, երբ կէս գիշերին վերադարձ վրանս: Երբ ներս մտայ, ի՞նչ տեսնեմ. միուսոմը:

Մի ժամ սպասել է վերադարձիս: Շտապէլ է ինձ մօտ. ապազրէլ է, որ չուր եռացնեն ոտքերիս համար: Միուսոմը յողնաքեկ ու քնաս էր: Այդ օրն էլ արիւն քրտինք էր մտել, ինչպէս նախընթաց օրերին: Հակառակ իմ ու ընկերոջս աղաշանքին, որ զնայ քնելու, հանգստանալու, միուսոմը չմեկնեց, մինչեւ որ ոտքերս ջուրի մէջ դրի, եւ իր թելազրութեամբ պաղեղով լուացի և անկողին մտայ:

Այդ գիշեր քունը թռաւ իմ աչքերից: Տարուած էի իմ մտածումներով, մինչեւ որ խաւարը սպիտակ դառաւ: Խոկում էի միուսոմի մասին:

Ի՞նչ ասազի ծնունդ էր այս անօրինակ էակը: Իր լայն հակառը մերթ վեհութեան և պատկառանքի կարկան ունէր եւ մերթ ցասումի և զգուհութեան կնճիռը: Իր աչքերը մերթ մելանուշ թախիծով ժպտուն, բարեհամբոյր եւ ներող եւ մերթ ծակող, սարսիչ ու նետածիգ: Իր ձայնը մերթ ամպրոպի զսուում ունէր, եւ մերթ ջերմութեան եւ քնքանքի չեշը: Եւ ի՞նչ սրտազին նուիրում, ի՞նչ անարաս ու ինքնարուխ համեստութիւն եւ ի՞նչ բարութիւն: Մի բարութիւն, որ ովկիանոսին նման լայնածաւալ է ու անյատակ, բայց եւ այլկոծ ու փոթորկայոյց:

Միուսոմը մէկն էր, որի էութիւնը հոգեկան ներդաշնակութիւնների մի գիւթական համանուագ էր:

Հետապայում առիթն ունեցայ նորէն հանդիպելու միուսոմին զանազան

առիթներով և այլապահ պարտպաների տակ, բայց մի անդամ միայն տեսել եմ նրան ջգազրգի վիճակում:

Իգդիր հասան Տարօնի թէկորները, գեկավարութեամբ թուրէնի և կոմսի: Ազգային Խորհուրդի անդամները և դաշնակցական մասաւորականութեան ընտրանին, որ Թիֆլիսից Իգդիր Նեկլ էին, շատապել էին զիմասրելու թուրէնին, Կոմսին և նրանց զինակից քաջամարտիկ Տարօնցիներին: Ներկաները եռոն թերկբանքով սղջապարուցին մանաւանդ թուրէնի և Կոմսի հետ, որոնք հազիր տրեխով և հնամաց հազարաներով հասել էին Կոմսի ամուսինից: Մազ ու մօրուս ահաւոր կեզրի մէջ, բոլորն էլ յոշնորեկ եւ տիտոր, բայց զո՞ն էին, որ կարողացել էին ձողազրել տաճկական զենքնից:

Մէկը կար այդ բազմութեան մէջ, որ թէ՛ ներկայ էր այնտեղ ևւ թէ բացակայ: Դա՛ Ռուսական էր:

Զլուցի իր բերնից ոչ միայն ողջոյնի խօսք, այլ մինչեւ անդամ չնըշ-մարեցի ուրախութեան ազօտ նշոյլ՝ իր տիրամած զէմքին վրայ: Ուրախ էինք և յափշտակաթեամբ ուրախ, որ զէթ այս կորինները պատուեցին այն բատմեկի ազէտից, որ վիճակուեց այնուզ մնացողներին:

Ռուսամբ չէր տեսնում ոչ ոքին: Մէրթ իր քիթն էր արորում ջղաճը-դութեամբ, կարծես իր ներքին փոթորքիկն մէջ տապկուած, ուրիշ բան չէր զոնում տրորելիք: Մէրթ ճակաան էր քերում, կարծես մի նեզից բան կար իր զանկին տակ, որին ջանում էր ճանկերով զուրս քաշել:

Խորասուզուած մի թանձր թախիծի մէջ՝ Ռուսամբ սաւառնում էր Տարօն-Տուրութեանի ստրերի վրայ: Անզօր ցասումով ևւ անսփոփ մրմուսով տեսնում էր Սասունի գիւղերը, որոնք բոց ու ծուխ էին փոխում, բայց ոչ անմար ծիններից, այլ հորյ ձարակ տներից: Տեսնում էր կոտորածի զարհու-րանքը գիւղերի մէջ ևւ սարերի վրայ:

Ռուսամբ ներկայ չէր այնտեղ: Մտքով Տարօնի զարզանդն էր ապրում:

\* \*

Մէ երէց ընկեր պատմեց ինձ, թէ Բազու՛ Մարդասիրական Ընկերու-թեան զպրոցին մէջ ընկերական մի ժողով էր, որ օրակարգի միակ հարցն էր Յար. Շահրիկեանի բողոքը մի երիտասարդ ընկերով զէմ, որ նախընթաց մէկ վիճաբանութեան ընթացքին յանդզնել էր յայտարարելու, թէ Շահրիկ-եանը իր իսկութեամբ՝ դաշնակցական չի: Շահրիկեան պահանջում էր, որ այդ յայտարարութիւնը փաստերով ապացույցի: Երիտասարդ ընկերը, նեզ կացութեան մատնուած, ոտքի կանգնում է յայտնելու, թէ ապացուցանելու և փաստեր բերելու հարկ չկայ, յաճախ մարգկային ներքին ձայնը, ների-մացումը բաւ. է եղբակացութիւններ հանելու համար:

Յ. Շահրիկեանի զէմ բազմաթիւ զժողոններ կային: Բայց նրանք լուս էին, նախընտրելով ուրիշի ձևոքով կրակից շազանակ հանել:

Ռուսամբ, այդ փողոցից անցնելիս, պատահարար ներս կը մտնի: Ա-կանջալուր կը լինի երիտասարդի բացատրութեան, բայց լուս կը մնայ:

Մէ հանրածանօթ հայդուկ, որ հայթաթարական ընդհարումներին ա-

կընթախ դեր է կատարած, մղուելով՝ երիտասարդի դրզումից, որ կուշտին էր նստած, խօսք առնելով ոտքի կ'ելլէ :

Հաղին թէ մի քանի անուանաբեկիչ եւ վարկաբեկիչ խօսքեր կ'արտասահնէ Յ. Շահնշահիկեանի դէմ,

— Ծո՛ն, կը զոռայ Խոստոմը լիաթոք հազարով եւ որոտաձայն զայրոյթով։ Բոլորը կը սարսուն՝ ցասումի սաստկութիւնից եւ զինաթափ կը լինեն իր խոժոս ու թափանցող նայուածքից։ Եւ ապա մատը ցնցելով հայդուկին վրայ, կը յարէ։

— Դու այն անարդ մարդը չէ՞ս, որ իր մոսին զնդակին ուժը սոսկ շափելու համար, Լոթը անմեղ թաթարներին իրար ետեւ կանգնեցրեց եւ բոլորին մէկ զնդակով սպաննեց։ Դաշնակցութիւնը քեզ չսատկեցրեց, որ զուայսօր վեր կենաւ եւ յանդզնես Շահնշահիկեանի նման զաշնակցականի վրա՞յ հաջել։

Ժողովականները՝ բոլորը չշմած ու չլմորած են հարուածի ուժգնութեան տակ։ Զայն ծպտուն չկայ։ Մեղադրող երիտասարդը, գլուխը գրասեղանին վրայ ծալուած թեւերի մէջ պահած, ամօթահար լուռ կը մնայ։ Մի բոպէ ճնշող լուռթիւնից յետոյ, մատնանշելով երիտասարդին։

— Բարենշան է, որ քո մէջ գէթ ամաչելու ընդունակութիւնը գեռ վառ մնացել է։

Այնուհետեւ ոչ ոք յանդգնութիւնը ունեցաւ այլպիսի մի յիմարութիւն գործելու։

Խոստոմը անսակարկ կամք էր Արարատի նման, սէդ ու վսեմ, պատկառազգու եւ հայրական, բայց հրաբուխ էր՝ լուռ միացող։

(ՀԱՅԹԻԵՆԻՔ ամսագիր, ԱՅ. տարի, թիւ 1-5 (հատուածներ))



Շռատով՝ կնոջ և աղջկան հետ



Առաստոմ եւ Տիգրան

## ՐՈՒՏԲԵՆ ԴԱՐԲԻՆԵԱՆ

ԲԺԳՈՒ, 1918

Սակայն, դառնանք 1917ի անցքերուն :

Երբ Հ. Յաշնակցութեան Ռայոնական Ժողովի եւ Հայկական Համագումարի փակումնեւ ետք, Բազու վերապարձանք, մեր առաջին գործը եղաւ, բնականաբար, Բազուի մէջ եւս կազմել Հայոց Ազգային Խորհուրդ մը, մանաւանդ՝ որ Բազուի թուրքիրը արդէն ունէին իրենց ազգային Խորհուրդը, որ ամբողջ Կովկասի Համար զեկավար զեր ստանձնած էր :

Մերինը, Հարկաւ, տեղական մարմին մը, մասնաճիւղ մը պիտի ըլլար Բազուի շրջանի Համար միայն, ենթակայ Թիֆլիսի մէջ ստեղծուած կեդրոնական Ազգային Խորհուրդին :

Սակայն, իրերու բերումով, երբ Բազուն կտրուեցաւ Թիֆլիսէն, Բազուի մեր Ազգային Խորհուրդը փաստօրէն անկախ մարմին մը դարձաւ՝ իր անկախ քաղաքականութեամբ :

Միւս կուսակցութեանց հետ Համաձայնութեան գալով՝ որոշեցինք Բազուի մէջ կազմել եօթի Հոգինոց Ազգային Խորհուրդ մը :

Սկիբրները հասկացողութիւն կար, որ այդ եօթէն չորսը գալնակցականներ պիտի ըլլային, իսկ մնացած երեքն ալ պիտի ըլլային միւս երեք կուսակցութեանց ներկայացուցիչները : Բայց ետքը, Դաշնակցութիւնը, նկատի ունենալով Բազուի բացառիկ պայմանները, հրաժարեցաւ իր մէկ ձայնէն, որպէսզի ունեւոր դասի յատուկ ներկայացուցիչ մըն ալ կարենար մասնակցիլ Ազգային Խորհուրդին : Եւ Բազուի Ազգային Խորհուրդը կազմուեցաւ հետեւալ անձերէն՝ Դաշնակցութեան կողմէ՝ Արքահամ Գիւլիսանդանեան, Խանասորի խմբապետ Վարդանը, Կ. Պարունակեանը : Սոցիալիստ-Յեղափոխականներէն՝ բժ. Լևոն Աթարէկեանը . Սոցիալ-Դեմոկրատներէն՝ Նարիման Տէր Ղազարեանը . Հայ Ժողովրդական կուսակցութենէն՝ Հ. Տէր Միքայէլեանը եւ ունեւոր զասէն՝ Ս. Տէր Ղազարեանը :

Ազգային Խորհուրդի այս կազմը հրաւիրեց զիս իրեւ իր քարտուղարը, իսկ նախագահ ընտրուեցաւ Արքահամ Գիւլիսանդանեանը :

Ազգային Խորհուրդի ասածին իսկ նիստին մէջ ոռոշուեցաւ Խորհրդակցական ձայնով Հրաւիրել Խոստոմը, Յովհ. Քաջազնունին եւ բժ. Խանանեանը : Շարաթներ ետք, նոյնպէս Խորհրդակցական ձայնով Հրաւիրուեցան նաեւ արկին Զապէլ Նսայեանը եւ թ. Քաջրերունին՝ իրեւ արեւմտահայեալու ներկայացուցիչներ :

Ծուառով, երբ Ազգային Խորհուրդը կարեւոր գործով մը Անդրկասպեան երկիրը (Թուրքիասան) զրկեց Կ. Պարունակեանը, անոր յաջորդեց Սարդիս Արարատեանը :

Թէւ Ռոստոմ Խորհրդակցական ձայնով կը մասնակցէր, բայց ան

փաստորէն դարձաւ Բազուիք Աղջային Խորհուրդին իրական գեկավարը։ Եւ, ինչ որ ուշագրաւ էր, դաշնակցականներուս չափ ոչ-դաշնակցականներն աւ մեծագոյն կարևորութիւնը կու առաջին Ռուսութիւնի խորհուրդին։ Աղջէն Ռուսութիւնի բնաւորութիւնն ամենէն դաշնաւուելի եւ սիրելի զիծերէն մէկն այն էր, որ ան փաստորէն կը զեկայարէր, լայց միշտ ալ ձեւական, պաշտօնական զեկայարութեան պատիւր կը ձգէր ուրիշներուն։

Միջանկեալ պէտք է ըսեմ, որ զառնալով Բազուիք Հայոց Աղջային Խորհուրդի քարտուղար, ևս այլեւս չէի կրնար շարունակել «Գործ» ամսագրին խմբագրութիւնը։ Դէպէւրը այնպիսի փոթորկայոյզ ընթացք մը ստացած էին, որ նախ՝ անկարելի էր արդէն «Գործ»ի հրատարակութիւնը, եւ երկրորդ՝ Աղջային Խորհուրդի քարտուղարութիւնը անհամեմտատ աւելի կարեւոր էր կուսակցական և աղջային տեսակէտով, քան ամսագրին խմբագրութիւնը։

\* \*

Մարտ 3ին (1918), Ռուսութ հետեւեալ առաջարկները ըրաւ Բազուիք Հայոց Աղջային Խորհուրդին։—

«Նկատի առնելով,

«որ մեր քրուրին նր օրէցօր աւելի է ծանրանում,

«որ քուրքերը մեզ հետ պարզապէս խող են խաղում՝ կամենալով հաշտութեան պայմանների միջոցով ժամանակ շահել միայն,

«որ, իմ խորին համոզումով, քուրքերի հետ կոիւը, ուզենք քէ չուզենք, պէտք է ընդունենք,

«որ, վերջապէս, զինուած դիմադրութիւնից դուրս ուրիշ փրկութիւն չկայ մեզ համար,

«Պէտք է օր առաջ ըմբռնենք այս դրուրին իւ բոլոր տրամադրելի միջոցները ձեռք առնենք՝ մեր կոիւր քուրքերի դէմ յաջողութեամբ առաջ տանելու համար։

«Իրա համար անհրաժեշտ եմ համարում ձեռք առնել հետեւեալ միջոցները։—

«1. Ընդհանուր օրակոչի ենթարկել մինչեւ 45 տարեկան հասակ ունեցողները։

«2. Խիստ եւ կտրուկ միջոցներով ապահովել պէտք եղած դրամը։

«3. Ճակատ ուղարկել մեր զինուած ու մերի մեծագոյն մասը, որպէս հետեւ ինքնապաշտպանութեան լաւագոյն ձեւը հակատի պաշտպանութիւնն է։

«4. Թիկունիքը պահել կարողանալու համար՝ ամէն կերպ աշխատել դրութեան տէրը դառնալու Բազուիք առնելում եւ Գանձակում, որոնք թիկունիքի զիյաւոր բանալիմերն են եւ քշնամու ամենալարեւոր գիրքերը։

Աղջային Խորհուրդը բնդհանուր առմամբ համաձայն դանուեցաւ Ռուսութիւնի առաջարկներուն և որոշեց հայկական զօրակոչ յայտարարել, ուզմաճակատ զրկել Բազու գտնուող հայ զօրամտաերուն մեծ մասը, Հիւսիսային

Կովկաս ուղեւորել յատուկ գործակալներ, որոնք պէտք է շահագրգռէին կողակները կովկասիան ճակատի պաշտպանութեամբ, եւ պարզէին անոնց, թէ ի՞նչ ահաւոր հետեւանքներ պիտի ունենար Անդրկովկասի եւ մանաւանդ Բազուի անկումը իրենց համար իսկ: Վերջապէս, Ազգային Խորհուրդը որոշեց կազմակերպիչներ ու ինքնապաշտպանութեան զեկավարներ դրկել Գանձակի նահանգը:

Այս միջոցներէն զատ, որոշուեցաւ առաջարկել Բազուի Գործաւորներու, Գիղացիներու և Զինուորներու Սովետին, որ պատրաստուի կռուելու Հայրենիքի ու Յեղափոխութեան թշնամիներուն դէմ եւ կոչ մըն ալ հրատարակէ այդ իմաստով:

Մարտ օի իր նիստին մէջ, Ազգային Խորհուրդը որոշեց կազմել Գերագոյն Զինուորական Մարմինը, բաղկացած երեք անձերէ — Խանասորի արշաւանքը զեկավարող Վարդանէն եւ ոռւական բանակի գնդապետներ Բախտամեանէն ու Ղազարեանէն: Այս մարմինը կոչուած էր ո՛չ միայն զեկավարելու Բազուի ինքնապաշտպանութիւնը, այլիւ զբաղելու մեր զինուորական ուժերու ուղմական պատրաստութեամբ:

Այսպէսով, սկզբնական անհրաժեշտ քայլերը առնուեցան՝ զայիք վըտանգը դիմագրաւելու համար:

«ԵՐԿԵՐ», Ա. Խանոր, էջ 227-237 (Քաղուածք)

## ՌՈՍՏՈՄԸ ԲԱԳԻՌԻՄ

1917 Փետրուարեան Յեղափոխութեան եռուզեռի օրերն էին Ռուսաստանում, երբ ամէն ինչ տակնուվը այս էր եղել։ Յեղափոխական կուսակցութիւնները «յատակի» տակից գործս էին եկել և դիրքորոշումներ էին անում հազարումի խնդիրների չուրչ՝ անդիրջ ժողովներ, միտինդներ, կոնֆերանսներ եւ այլ համախմբումներ կազմակերպելով։ Հայ հասարակական կեանքը եւս փոթորկուած էր, ընդհանուր համառուսական ընկերային խնդիրների հետ զուգընթաց։ Հայ միտքը դրացուած էր նաև հայոց հարցով անդրկոյդկասեան սահմաններում մասնաւորապէս եւ թրքահայաստանում ընդհանրապէս։

Ահա այս օրերին էր, որ Հ.Յ.Դ.հան կուսակցական շրջաններում յայտնի եղաւ, որ Ռուսուոմը զայխս է Բագու։ Զէի տեսնել նրան։ Գուցէ ե՛ւ իմ պատանեկան օրերին, նոյնիսկ մեր տանը տեսած լինէի, ինչպէս մեր շատ ականաւոր կուսակցական ընկերներից շատ-շատէրին, հօրս կամ աւագ եղբօրս հետ նրանց մօտիկ լինելուն չնորհի, բայց չէի յիշում։ Լոել էի Ռուսուոմի մասին ընկերների զրոյցներից։ Բնականարար, ես առանձին հետաքրքրութեամբ սպասում էի տեսնելու մեր կուսակցութեան հիմնադիր երրիակից մէկին՝ Ռուսուոմին։

Աւ նա եկաւ։ Առաջին անգամ տեսայ նրան «Արեւ»ի խմբագրատանը։ Ինձ ներկայացրին նրան։

— Մեր երիտասարդներից։

Զեռք թօթուեց, ապա հարցուփորձ արեց իմ մասին։ Հօրս ճանաչեց։ Ցիշեց ե՛ւ Ստեփան Ստեփանեանին, հօրեղբօրոք մէծ որդուն, որը քանջատականներից զեկավարներից էր թժ. Լ. Աթարեկիեանի հետ եւ յայտնի էր իր թէ՛ Բագուի և. թէ մանաւանդ կարսի զորձերի չնորհի։ Ցիշեց Ստեփանեանի եղբայրներին (Խորէն եւ Հայկ), որոնց զեռ չէր հանդիպել Բագուում։

Հարց ու պատասխանի ժամանակ խաղում էր իր փոքրիկ մօրուքի հետ եւ երբեմն ժպտում։ Ապա հարցումներ արեց թէրթի մասին՝ տպարանի, թղթի, տարածման և անտեսականի մասին։

Այսուհետեւ հանդիպում էինք համարեա ամէն օր կա՛մ խմբագրատանը, կամ կուսակցութեան կենտրոնական զրասենեակում, այսպէս կոչուած Բիրոյում, որը զանուամ էր Բոլշայա Մարսկայա փողոցը կտրող Գիմնազի-չիկայա (Եթէ չէմ սիալւում) փողոցի վրայ, Լոթներորդ թաղի ոստիկանատան մօտիկ։

Զարմանալիօրէն բոլոր երիտասարդ ընկերները միանգամից մտերիմ զգացին իրենց գէպի Ռուսուոմը։

Նրա գալու երրորդ շաբթին կազմակերպուեց իր առաջին ելոյթը։ Դա-

սախոսութեան նիւթն էր՝ «Քաղաքական կացութիւնը և մեր անելիքը», — մի ծեծուած նիւթ՝ Բայց այս անգամ կարծում էինք, որ խօսքը լինելու էր շատ հետաքրքրական ու արժէքաւոր: Զէ՞ որ խօսողը Ռոստոմն էր:

Հայոց զպրոցի սրահը լեցուած էր: Հանդիսականների մէջ երեւում էին քաղաքի աշխի ընկնող ժամանորականները:

Միջահասակ, թիկնեղ, լայն ճակատով, խորաթափանց հայեացքով մէկն էր Ռոստոմը: Հազուած էր շատ համեստ: Հոնեորական չորհնք բնաւ շունէր: Խօսելու ժամանակ պերճախօսութեան չէր դիմում: Սակայն, նա այնքան խորն էր զերլուծում ստեղծուած պայմանները, այնպիսի լրջութեամբ և պարզութեամբ էր մեկնարանում իրականութիւնը, հանում էր եղակի եղակացութիւնները և անում իր առաջադրանքները հայ ժողովրդի անելիքների մասին, որ իրացանչիր ունկնդիր աշխատում էր մէկ բառ իսկ բաց շխողնել նրա ասածներից:

— Դաշնակցութեան միտքը մեզ հետ է, ասում էին երիտասարդները:

— Մեր անօինելի առաքեալն է, — ասում էր Պապաշան:

— Ոնի վիճելի առաջադրանքներ, բայց ընդհանուր առումով պարզաւես ու իրատես է, — ասում էր Արքահամը:

Աւելի մէծ էր տպաւորութիւնը շարժեաւում: Բոլորը առանձին հպարտանք էին զգում Ռոստոմի Բագու զալուն պատճառով: Բոլորը գիտէին, որ դեռ շատ կնճիռներ առաջ պիտի դան, եւ Ռոստոմի ներկայութիւնը այդ կընճիռները լուծելու տեսակէտից փրկարար պիտի լինի:

## ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵջ

Այս ժամանակամիջոցին մեր կուսակցութիւնը լծուած էր կաղմակերպ-չական գործին թէ՛ քաղաքում և թէ նաւթային ըրջաններում: Գործը շատ-շատ էր: Ժողովները և միտինգները, մասնաւանդ միտինգները խլում էին գործիչ ընկերների ժամանակը, եւ խանգարում շինէ զործը: Միաժամանակ բոլոր կուսակցութիւններն էլ կազմակերպել էին իրենց պրոպագանդային դպրոցները, տեսարանական լուրանները և այլ զարմանթացքները՝ նպատակ ունենալով պատրաստել գիտակից ու զաղափարական երիտասարդութիւն:

Մենք՝ երիտասարդներս պահանջ դրինք, որ Ռոստոմը եւ զասախօսութիւններ կարդայ մեզ համար Հ. Յ. Դաշնակցութեան մասին: Եւ Կ. Կոմիտէի միջնորդութեամբ նա սկսեց իր դասախօսութիւնները:

Մենք՝ երեք ընկերներ, շատ արագ զրոյներ, որոշել էինք զրի առնել նրա զասախօսութիւնները, ապա, միասին ճշգելուց եւ իր վերջնական կարծիքը առնելուց յետոյ, հաւաքել: Շատ հետաքրքրական ձեւով սկսեց նա: Ալրդէն եօթութ զասախօսութիւն լսել էինք: Սակայն, իր տուած ահազին նիւթի՝ կուսակցական գործի մէջ ինքը բնաւ չկար: Նկատել էինք նաեւ, որ որոշ գործեր կատարուել էին առանց Կ. Կոմիտէի որոշման: Միաժամանակ հարցումներ էինք անում, թէ այս կամ այն գործի ժամանակ ինքը որտե՞ղ

Էր Եղել: Ի հարկէ, նոխագէս ճշգտմ էինք յինում Արքահամբից կամ Պապա-  
շոյից տուեալ զործում Ռուսումի մասնակցութիւնը:

Ռուսումը իր սփանչէլի ժպիտը զէմքին, խուսափողական պատասխան-  
ներ էր տալիս:

Օրի օրին Ռուսումը զառնում էր մեր մաքերի վրայ իշխող: Զանազան  
կնձուսու խնդիրներ լուծելու համար, միշտ դիմում էինք նրան:

Առանձնապէս Ստեփան Շահումեանը, Այլօչա Զափառիձէն, բժ. և.  
Աթարէկեանը և այլ հակառակորդ կուսակցական դեկամարներ հիացումով  
էին խօսում նրա մասին և յաճախ նրա հետ խորհրդակցելու էին դպիս:

Այդ ժամանակ զես ութիրորդ թազամասի (հայկական ամենամեծ  
թազն էր) կոմիտէի նախագահն էր: Հըլջ սպասարկութեան փողոցով զէպի  
աջ ու Բոլցայա Մատոսկայա փողոցից այն կողմբ թթական թազն էր սկըս-  
ուում: Գիտէի, որ Ռուսումը մասնակցում էր Կ. Կոմիտէի ժողովներին: Բայց  
նա յաճախ զալիս էր Եւ մեր թագային կոմիտէի ժողովներին, հատաքրքրուում  
էր նաև մեր միհանում: Անշուշտ, նա զնուում էր Եւ միս շրջանները: Ամէն  
տեղ կարելի էր նրան տեսնել: Սակայն, ամենից շատ նա լինում էր մարտիկ  
և մարտական զործը յարող բնիկերների հետ: Պարզ էր, որ այս խնդրով նա  
աւելի էր զրագուում: Գիտէի, որ նա զեկավարում էր ձեռնառումբեր պատ-  
րաստելու զործը:

Բայց անանակի նետեղորովոզ ընկերութեան կառավարիչը՝ ընկե:  
Աւտիս Աւետիսեանը (զոկ, յայտնի զաշնակցական), Հօրեղորս դասեր ամուսի-  
նը, իր զործարանում սենեակներ էր տրամադրել այդ զործի համար: Եւ  
սումբը շինող մասնագիտները Ստեփան Ստեփանեանի կրտսեր Եղրայրներն  
էին՝ Հայկը և Խորինը, որոնք աւարտել էին Վարչաւայի Պայտահանիկումը  
և այնտեղ էլ կատարել ազործուելի էին: Չեմ յիշում թէ ինչպիս էին նրանք  
միացել այս զործին: Սակայն զիտէմ, որ խոր յարգանք ունինի զէպի Ռու-  
սումը և զարմանալի նուիրուածութեամբ կատարում էին զործը:

Թումբեր էին շինում մի քանի տեսակ: Զրահապատճեր պայթեցնելու,  
յարձը տեղերից՝ պատուհանից, կտորներից վար նետելու (թեւաւոր), ամ-  
րոխ ցրելու համար սոսկալի զդրութիւն առաջացնող ևւային: Այս բոյորը, ի  
հարկէ, յարձարեցում էին քաղաքային (քաղաքամէջի) կոիների համար:

Թէ՛ կուսակցական շրջանակներում, թէ՛ Աւետիսի տանը Հայկի և Խո-  
րինի հետ յաճախակի հանգիպումներ էին ունենում Ռուսումի հետ: Եւ այդ  
հանգիպումների չնորհի, շատ մօտիկից ճանաչեցի Ռուսումին ևւ տնչափ  
սիրեցի ու յարգեցի:

\*\*

Մարտի զէպերին, երբ ազերները (կովկասեան թուրքերը), իրենց զե-  
կալար Մուսաֆաթ կուսակցութեան զլխաւորութեամբ, յարձակուեցին հայ-  
կական թաղերի վրայ՝ աշխատելով զրաւել քաղաքը և իշխանութիւնն առնել  
իրենց ձեռքը, Բանուորական Խորհրդի զործադիր կոմիտէն կորցրել էր իր  
զլուխը: Մուսաֆաթը, փոխանակ իր հարուածը հասցնելու իշխանութեան

կենտրոններին, կոուին տուեց ազգային բնոյթ և աջ ու ձախ սկսեց անդէն ու անպաշտպան հայեր կոսորել: Մեր կուսակցութիւնը, չնայուծ որ մեծ ուժեր դեռ չունէր, բայց անմիջապէս սկսեց կազմակերպել իր մարտական խմբերը և հրապարակ հանել: Այսաեղ արգէն ակնյայտնի եղաւ, որ ապամական գործոցութիւնների ամրող զեկավարութիւնը կենտրոնացել էր Ռուսութիւնի ձեռքը, որին եւ Հյուսակեւում էին բայրութիւնները:

Դեռ նոր էր սկսուել մեր մարտական խմբերի յարձակումը, երբ Ռուսութիւնը նստած էր արդէն մեր թաղային կոմիտէի սենեակում՝ Վերինէ Պրիւտսուկայա և Ստանիխալուկայա փողոցները կարող անկիւնի ներքնատանը և հեռախօսային գիծ հստատող խմբի միջոցով կարգադրութիւններ էր անում:

Երբ լուր տուա, որ Հրչէջ սպասարկութեան կենտրոնը դրաւուած է մեր կողմից, մինչ այդ շատ մասյ ու մտանող Ռուսութիւնը ժպաց:

— Այս մեծ թաղը այժմ անփանն է, — ասաց ու գնաց զէսի նոր զրաւուած զիրքերը:

Ապա յուցինք, որ Ռուսութիւնը վեցերորդ թաղամասի կուսակցական մարմնի զրաւուեակումն էր: Սա Հայոց հին եկեղեցու մօտիկում էր, թշնամու ամենաուժեղ զիրքերի զիմացը: Այսաեղ մերոնք ունեցել էին շատ ուժեղ կոփեներ, որոնք վերջացել էին մեր յաղթանակով: Մերոնք զբաւել էին քաղաքային ինքնավարութեան չինքը:

Նոյն օրը, կէս զիշերին, Ռուսութիւնը և Մարտան Շաթիրեռնը եկան մեր թաղային կոմիտէի զրաւուեակուր: Ռուսութիւնը հարցրեց, թէ կա՞ն արդեօք մեր թաղում մեծ զատարկի չէնքեր՝ զերիներ պահելու համար, որովհետեւ նրանց թիւը կարող է հազարների համենք:

Ընկերներս օգնութեան եկան եւ մենք մատնանշեցինք երեք չէնքեր, մէկը Նիմին-Պրիւտսուկայա փողոցում, միւսը՝ Ստանիխնայա փողոցում, իսկ երրորդը՝ Ստանիխալուսկայա փողոցի վերջում:

— Շատ լաւ է, — ասաց ինձ Ռուսութիւնը: — Քեզ էր տանք մի խումբ շատ վասահելի զինուորներ: Փերիները զանազան թաղերից կ'ուղարկուին քեզ, եւ դու, նրանց բնգունելով, կ'արձանագրես և քո զինուորներով կ'ուղարկես այդ չէնքերը: Պարսիկներին խիստ անմնաս պէտք է պահել եւ ազատ արձակել Հաշտութիւնից յետոյ: Նոյնու կու այն թուրքերին, որոնք անզէն են եւ մեր զէմ չեն կոուել: Նրանց բոլորի կեանքը պէտք է պաշտպանենք: Ուտեսատի խնդիրը էր կարգադրութիւն:

Օրեր տեսեցին կոփեները: Ահազին մտահողութիւն էր մեզ համար զերիներին անմնաս պահելու խնդիրը, մտնաւոնք կերակրելու: Բայց գործը տարուեց ամենայն բարեխզնութեամբ, Ռուսութիւնը ինքը օրը մի երկու անգամ այցելում էր գերիների հանրակազարանները:

Հաշտութիւն կերելուց յետոյ, Հայոց Ազգային Խորհրդի մի բանի անգամները, նախազահ Արքահամ Գիւլիանդանեաննը, Խոսոյիկոմի նախազահութիւնը, պարսից Հիւպատոսը իր պաշտօնեաներով եկան Հանրակացարանները, Հարցուփորձ արին մեր զերիներին, որոնք անսահմանորէն գոհ էին մեզանից, յատուկ արձանագրութիւն կազմեցին եւ ապատեցին բոլորին: Հարիւրաւոր գերիներ բոնում էին Ռուսութիւնի, Արքահամի և մեր (որ յաճախ

պատահել էին) ձևոները եւ համբուրում: Եսաւ շատերը արտասում էին: Լաց եզաւ նաև պարսից հիւպատոսը:

Կոխի վերջացաւ թուրքերի պարտութեամբ: Համեմատարար, մենք շատ չնչին գոհերով պրծանք: Խոստոմի հմայքը աւելի բարձրացաւ:

## ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

Բաղուի շրջանի Հ. Յ. Դաշնակցութեան Պատզամաւրական Ժողով գումարուեցաւ Տեխնիքական դպրոցի սրահում: Ժողովի ամենակարեւոր խնդիրը այս էր, թէ պէտք էր Բագուն յանձնել Աղբբէջանի կառավարութեան թէ ոչ:

Անդրկովիկասը յեղափոխութիւնից յեսոյ կարուել էր ուսական կենուրոնից եւ ստեղծան էր Անդրկովիկասի Դաշնակցային կառավարութիւն՝ յանձին Անդրկովիկասի Սէյմի: Սէյմում վրաց Սոցիալ-Դեմոկրատները գաշնակցել էին Աղբբէջանի աղաների եւ խաների կուսակցութեան՝ Մուսաֆաթի հետ: Եւ սրանք միասին քիչ ոճիրներ շգործեցին հայ ժողովրդի ղէմ: Այսպէս, փոխանակ միասին պաշտպանելու ամրող Անդրկովիկասը, նրանք լքեցին հայերին, դորո ևկան Սէյմից եւ իրենց շրջանները անկախ յայուրարաբեցին: Զանձնելու անհատական հրամանագիր-հեռազբույ Կարսը յանձնուեց թշնամուն:

Երբ կազմուեց անկախ Աղբբէջանի կառավարութիւնը, Մուսաֆաթականները անցան իշխանութեան դլուխ՝ Խան-Խոյսկու նախազահութեամբ: Նրանք պահանջում էին, որ Բագուն իրենց յանձնուի:

Խորհրդային իշխանութիւնը ոչ մի տրամադրութիւն ցոյց չէր տալիս Բագուն յանձնելու ազերներին, որովհետեւ Խուսաստանը չէր կարող ապրել առանց Բագուի նաւթիւն: Բագուն համայն թուսաստանի զոյտթեան յենարանն էր այդ տեսակի տիպ: Որոյ՝ «Բագուն Խուսաստանին է» կարգախօսը զառել էր Բագուի բանուուրութեան մտասեւում:

Ազերները սկսեցին մնջումներ զործ զնել Բագուի հայութեան վրայ: Նրանք դիմեցին նաև Հայոց Ազգային Խորհրդին, որ Բագուն յանձնուի իրենց: Նրանք ասում էին.

«Եթէ հայերը իրենց հաւանութիւնը տան, յետ քաշեն իրենց ուազմական ուժը եւ իրենց կողմնակցութիւնը յայտնեն Բագուն ազերներին յանձնելու, Բանուուրական Խորհուրդը ոչինչ անել չպիտի կարողանայ, մանաւանդ որ Խուսաստանից ուազմական ոչ մի օժանդակութիւն չի ստանում»:

Հայոց Ազգային Խորհուրդը չէր կարող վճռել այս խնդիրը՝ առանց Հ. Յ. Դաշնակցութեան կարծիքն առնելու: Սոցիալխառ-Յեղափոխականները եւ Սոցիալխառ-Դեմոկրատների հայկական հատուածը անհամբեր սպասում էին Հ. Յ. Դաշնակցութեան որոշման, իսկ իշխանութեան զլուխ կանգնած բոլցեւիկները մեր վճռից կախուած էին համարում Բագուի ճակատագիրը, քանի որ, եթէ մենք լրէինք նրանց, իրենք պաշտպանուելու ոչ մի հնարաւորութիւն չպիտի ունենային:

Ժողովին նախագահում էին ընկերներ Յ. Քաջազնունին և Սարգիս Ա-  
րարտեանը : Ի հարիչ, Քաջազնունին աւելի մեծ ազդեցութիւն ունիր ըն-  
կերների վրայ : Բայց պիտի արձանագրեմ, որ երիտասարդութեան մեծապոյն  
մասը, յարգանք ունենալով հանգեց նրա հանգչայ, համակարծիք չէր նրա  
հետ : Նա համարում էր խիստ պահպանողական : Բայց նա մասնակցում էր  
բոլոր նիստերին մեծ եռանդով, իր համոզմանը պաշտպանում էր յամա-  
սորչն և աշխատում էր իր համոզմանը ընդունել տալ ընկերներին : Սա-  
կայն, երբ հարցը մաս իր վերջնական փուլի մէջ ու գրուեց գուէարկու-  
թեան, նա մնաց ձեռնապահ, որով զժզնութիւն առաջ բերեց իր զէմ : Ի  
հարկի, այս կեցուածքը չէր խանգարում, որ նա մնար հաւատաւոր դաշ-  
նակցական և յարգանք ներշնչէր իր չքապատին :

Ուրիշ տիպի մարդ էր Սարգիս Արարտանը : Սա մեր՝ երիտասարդ-  
ներին տեսարանն էր, լաւ խօսել զիսէք : Պատահում էր յամախ, որ պրո-  
պագանդայի զպրոցից կամ միջկուսակցական վիճարանական հաւաքոյթե-  
րից յետոյ, երիտասարդ ընկերները մինչեւ ուշ զիսէք նրան պահում էին զր-  
բույցի համար, և նա անտրանիջ շարունակում էր զրոյցը, չնայած որ առա-  
ւտեան չուտ զործի զնալու պարագարանքի տակ էր լինում : Ինչ խօսք որ,  
Սարգիսը լաւ նախազան էր : Այնքան խելօք և ձարպիկ ձեւակերպութեար  
կ'անէր և ա՛յսպիսի փարզետ ձեւով կը տանէր ժողովը, որ սուր բախում-  
ների առաջն էր առնում և սուր վէճերը հմտորչն լուծում :

Ժողովի զիսաւոր հարցը, ինչպէս ասացի, Բագուն Աղրբէջանի կառա-  
վարութեան յանձնելու կամ չյանձնելու խնդիրն էր : Իրար դիմաց կանգնած  
էին երկու իրար խաչածեւող տեսակէտներ, որոնք պաշտպանում էին Երկու  
խոշոր զէմքեր՝ Խոստոմը և Արքանամ Գիւլիսնդանեանը :

Արքանամի տեսակէտն էր՝ քանի որ Դաշնակցութիւնը աղերի անկա-  
խութեան պաշտպանն է, մենք չէ, որ պիտի ընդդիմանանք Աղրբէջանի հողը  
իր տէրերին յանձնելուն : Մեր զարաւոր հարեւանութիւնը և ապագայի կե-  
նակցութեան պարագան պէտք է թելագրեն մեզ, որ մենք աջակցինք մեր  
հարեւան ժողովրդին իր անկախութեան տիրանալու : Մեր ընդդիմութիւնը  
թշնամութիւն պիտի առաջ բերէ մեր միջեւն և կարող է աղիտալի հետե-  
ւանքներ ունենալ ամբողջ Աղրբէջանի հայութեան համար, որ զանցառելի  
թիւ չի կազմում :

Այս տեսակէտը պաշտպանող բազմաթիւ ընկերներ կային, որոնք լրա-  
ցընում էին Արքանամի բերած պատճառաբանութիւնները :

Խոստոմը միանգամմայն հակառակ տեսակէտի վրայ էր կանգնած : Նա  
զտնում էր, որ թէեւ զաղափարականորդն Արքանամը ճիշդ էր, բայց զործ-  
նականօրէն, այսինքն՝ հայ ժողովրդի Փիզիքական զոյտութեան և հայկական  
հարցի լուծման տեսակէտից աղիտալի հետեւանքներ պիտի ունենայ, եթէ  
մենք այժմ Բագուն Աղրբէջանի թուրքերին յանձնելու վճիռ տայինք :

«Մենք զիտենք, — ասում էր Խոստոմը, — որ Աղրբէջանի կառավա-  
րութեան թիկունքում կանգնած է Տաճկաստանը : Նա և որ զծում է աղր-  
բէջանցիների անելիքը, իսկ Տաճկաստանի նպատակը մեր ազգային հարցի  
տեսակէտից պարզ է : Տաճկիները ձգտում են հայ ազգի Փիզիքական ոչնչաց-

ման եւ արգէն մէկ միլիոն սրածել են եւ ժայր երկիրը աւերել։ Նըանք նոյն զիտաւորութեամբ արշաւեցին Արեւելեան Հայաստանի վրայ, ամայացրին Կարսի շրջանը, Եփրակի շրջանի կէսը եւ շարունակում են իրենց յառաջիապացումը՝ առանց պահանասիք։ Եթէ Սարգարապատի, Ղարաբիլիսայի ճակատներում եւ այլուր հայ ժողովրդի բազուկը նրանց չկանգնեցնէր եւ պարտութեան շմատնէր, այսօր ոչ մի հայ մնացած չէր լինի Արարատեան Դաշտում, եւ սրբութ կը լինէր ոչ միայն Երեւանը, այլև՛ Զանգեզուրը։ Վազը, հենց որ բացուեն Բագուր գոները Աղրբեկյանի բանակի տուջեւ եւ ատճիկները տեղաւորուեն Բագուր, Խան-Խոյսկու ամրոխը եւ ատճիկան բանակը, ձեռք ձևաքի առած, պիտի սրբեն նաեւ Բագուր ու Գանձակի հայութիւնը, ապա պիտի բարձրանան Ղարաբաղ, պիտի իջնէն Զանգեզուր եւ Երեւանը ոտնատակ պիտի տան։ Ո՞վ է ընդգիտանալու այդ սանձարձակ մարդակերներին։ Եւ հայ այն ժամանակ ազգային-ազատագրական գաղափարը մէր գերեզմանը պիտի գտնոնայ։ Այ մի հաւատ թիֆլասում երեք ազգերի զաշնը քանդող եւ ատճիկների գործը կատարող ազերներին։ Այ մի զիջում մէր միասնական մակարը ձեղքող եւ թշնամուն մէր երկիրը բերող տաճիկների գործակալ-ներին։

«Միաժամանակ — պատճառաբանում էր Ծոստոմը — պիտի նկատի ունենալ, որ հայութիւնը Երբեք այնքան ուժեղ բռունցք կազմած չէ, այնքան մեծ թուով ուժ եւ անսպառ ուղղմամթերք ամբարած չէ, որքան այսօր Բագուրը։ Աղրբեկյանին յանձնել Բագուր՝ նշանակում է սրածութեան տալ 4000ի հանող հայ Երիտասարդ ուղղմական ուժը, որ Գանձակի, Ղարաբաղի, Զանգեզուրի եւ Երեւանի շրջանների Երիտասարդութիւնն է, ոռուական ուղղմանակատներից եկած հասած Բագուր եւ որը չի կարողանում անցնել իր թնակավայրերը։ Եթէ այս կենդանի ուղղմական ուժը կոուի թշնամու զէմ, յետ քչի տաճիկներին եւ իր ուղղմամթերքով մտնի հայկական զաւառները, զամի անչափի օժանդակութիւն կը լինի մէր մանուկ հանրապետութեան։ Բացի այդ, պատերազմը զիս հաջուեյարգարի չի ենթարկուել։ Տաճիկը զեռ պատերազմող կոզմ է ու պէտք է ժամանակ շահէլ, մինչեւ որ հաշտութիւն կնքուի եւ համեմատուկան խաղաղութիւն ստեղծուի նաեւ հայութեան համար։ Այժմ տաճիկ բանակը եւ թուրք ամրոխը, սահմանքանակ ու անպատճիանանասու, չոփել են մէր կրծքին եւ, եթէ այսօրուան մէր ուղղմական ուժը ցրուի, նրանք պիտի յօշտան մէկո։»

Այս պատճառաբանութեամբ Ծոստոմը առաջարկում էր պատերազմի մէջ մտնել Աղրբեկյանի թուրքերի ու տաճիկների զէմ եւ քչել ու հետապրնդել թշնամուն եւ համել մինչեւ Երկրի սահմանները։ Իսկ Եթէ չյաջողինք անել այդ, կ'ամբանանք Բագուր, կը վասնգենք Աղրբեկյանի ամրոխի եւ տաճիկ բանակի թիկունքը, որով՝ կ'արգիլինք նրանց խժգժութիւնները հարցաւ միւս զաւառներում։

Միաժամանակ Ծոստոմը յիշեցնում էր ե՛ւ այն, որ ոռուական յեղափոխական կառավարութիւնը իր բանակի եւ երկրի շահների համար օգնութեան պիտի հասնի Բագուրին եւ Հնարաւորութիւն պիտի տայ պաշտպանուելու բազուցիներին։

Բնկերների, մանաւանդ երիտասարդ բնկերների ճիշող մեծամասնութիւնը կողմնակից էր Ռուսամեծ տևսակէտին:

Դեկավար ընկերներից Ռուսատօնի տևսակէտի վրայ էր կտնզնած նաև Սարգիս Արարատեանը: Նա առաջարկում էր մեր բանակը շարժել առաջ և դրա ել Գանձակը, ապահովել ամրով ձահասպարհը, ողոք Բաղուի ամրով հայոթիւնը, նաև Շամախու շրջանի հայերը և առհասարակ համբու վրայի հայոթիւնը ամրով առցմական ուժով և ուղղմամթիերքով մացնել մեր նորասակեց հանրապետութեան սահմանները՝ Բաղուն թողնելով պաշտպանելու:

Սարգիսը շատ անկողմնակալ ձեւակերպեց երկու տևսակէտները և քուէտիւն թեան դրեց: Զայների զգալի մեծամասնութեամբ անցաւ Ռուսամեծի տևսակէտը:

Նոյն դիւներ Արքահամբ Հայոց Աղդային Խորհրդում դրել էր Խան-Խոյակու կառավարութեան պատասխաներու հարցը: Եւ որոշուել էր մերժել Խանոց: Սկսուեց կոխիր: Եւ Հ. Յ. Դաշնակցութեան Պատգամաւորական Ժողովին մէջ կոտիին կատաղի հակառակորդ Արքահամբ զիհաւորեց Բաղուի կոռուող հայոթիւնը:

## ՌԱԶՄԱՃԱԿԱԾԻՑ ՄԵՒՋԵՒԻ ԲԱԳՈՒԻ

Մերոնք հարուածային կարգով առաջացել էին եւ զբաւել Գեօդչայ քաղաքը, որ թշնամին թողել էր կէսօրին, ճաշի ժամանակ, բոլոր բնակարաններում ճաշը պնակների մէջ թողած եւ կաթսանելը օճախների վրայ:

Օդնական ուժեր ստանալով թշնամին մեզ նեղել էր: Սակայն, մերոնք չպիտի նահանջէին, եթէ թշնամին օգտագործած չինչէր խմելու ջրի խնդիրը: Նախ՝ ոչ մի հնարաւորութիւն չկար շարժուել երկամթուղագծով, կամ խճուղիով, որովհետեւ թշնամին քանդել էր ջրերի թուժերը եւ ողողել ամրով զաշտավայրը՝ անանցանելի զարձնելով այն: Մեր զօրքը ստիպուած էր եղել շարժուել լեռնավայրով: Սակայն, այսաեղ էր թշնամին կտրել էր բարձրից եկող բոլոր առուները եւ մեր բանակը թողնել առանց ջրի այդ տաք շրջանուու:

Մերոնք նահանջել էին մինչեւ կարամարեան: Սակայն, հնարաւոր չէր եղել կարգադրել ջրի խնդիրը: Կարամարեանում զինուորների եւ սպաների մէջ ծարաւից խելազարուելու գէպքեր էին եղել, ուստի եւ հրաման էր տըրւել զօրքին նահանջելու:

Մէնք՝ Բանուորական Խորհրդի Դաշնակցական Փրակցիայից մի խումբ երիտասարդներ, Կ. Կոմիտէի թոյլատութեամբ, զնացել էինք ճակատ՝ բժբշկասահմարդարական օդիութիւն հասցնելու համար բանակին եւ հսկելու համար նաև պարենաւորման զորքին: Մինչեւ Շամախի եւ զեռ մինչեւ Սաշեան ամէնուրեք կազմակերպչական աշխատանքներ կատարելով՝ հասանք Ազու։ զեսի ափին համանուն աւանը: Այստեղ իրացեկ եղանք Կարամարեանում մերոնց վիճակին:

Գիտէինք, որ մեր բանակը, նահանջելով կարամարեանից, պիտի անցնէր մի հսկայական անջրդի տարածութիւն և յոզնած ու ծարաւ զինուորների համար այդ պիտի լինէր մահացու վատանգ, որովհետեւ նրանց չպիտի թոյլատրուէր գլուխից չուր խմել: Բժշկական խմբակը հաւաքեց իր բոլոր ուժերը և մեզ էլ աղակցութեան հրաւիրեց: Մեծ թուով թիթեղի ջրաման թէրամանների տակ կրակ արինք եւ ջուր եռացրինք, որ հասնող զինուորներին թէյ տանք:

Արդէն սկսեցին զալ հատուկառ զինուորներ, յոզնած, ծարաւ, ուժասպա: Քանի և կուորները քիչ էին, հնարաւոր էր կարգը պահպանել եւ թէյ պատրաստել նրանց համար: Բայց երբ զինուորների մեծ զանգուածը հասաւ, թուում էր թէ դժուար պիտի լինէր նրանց պարտազրել, որ անմիջապէս ջուր չխմեն:

Ահա հնեց այդ ժամին, երբ գետափին զտնուով մէկ այլում ծառերի տակ նստած էինք, ձին թափ ու քրտինքի մէջ կորած հասաւ ուսանող Սոկրատը, վար թուաւ ձիուց ու ասաց:

— Ռոստոմը զայիս է, ծարաւից ձեռքից կը դնայ, ջուր հասցրէ՞ք:

Չորս հոգի, որտեղ եւ ում մօտ որ զինուորի ջրաման տեսանք, ջուր լցրինք, կախէցինք վզներովս, թուանք ձիերի վրայ ու քչեցինք կարամարեան տանող համբուլ:

Տաք, այրող արեւ էք: Բաւական հեռացել էինք Ազսուից, երբ սկսեցին երեւալ հատուկտոր զինուորներ, յոզնած, ոտները հազիւ քարչ այլով: Տղաներից մէկին թողինք հանդիպած զինուորներին մի-մի կում թէկուղ ջուր տալու, իսկ մենք երեքով քչեցինք առաջ:

Հնուուից երեւաց ձիաւորների մի խումբ, որի առջեւից զալիս էր մէկ՝ գլխին սպիտակ երեսորրիչ, զլիարկի տեղ, թոստոմն էր: Երբ հասնք, թոստոմը զարմացած նայեց մեզ, կարծես ուժ չունէր հարցնելու թէ՝ ինչո՞ւ էինք եկել:

— Ջուր ենք բերել:

— Հա՞, առու է՞ք:

Վեցրեց առաջին ջրամանը, թուաւ ձիուց վար եւ, մօտենալով քայլու զինուորներին, հերթով տուեց ջրամանը զինուորներին: Մի երկու կում հազիւ էր թոյլ տալիս խմելու, ջրամանը իսկոյն յետ էր քաջում եւ դէմ տալիս մէկ որդիչի շրթներին: Այսպէս մեր մօտի բոլոր ջրամաններից հերթով խմցրեց ծարաւ զինուորներին:

— Դու չխմեցիր, — զժզունց մերոնցից մէկը, — էլ չտնենք:

Փպտաց, ձեռին մի կիսատ ջրաման ունէր, զրեց շրթներին եւ, հազիւ մի կում խմած, ջրամանը տուեց իրեն հետ եկող ձիաւորներին:

— Բերաններդ թրչեցէ՞ք, — ասաց ու թուաւ ձիուն վրայ:

Ճանապարհին նա մօտենում էր յոզնած զինուորներին եւ իրախուսում:

Երբ բաւական հեռացել էինք եւ մեր շուրջը մարդ չերեւում, ծոցիցս հանեցի մի թաքցրած ջրաման եւ մեկնեցի նրան:

— Խմի՞ր, վերջապէս, — ասացի:

Նայեց ինձ, գոհունակութեան ոչ մի արտայայտութիւն: Ջրամանը հա-

զիւ էր զրել շրթներին, երբ նկատեց, որ խոտերի մէջ պառկած է մի զինուորը: Վար թուա ձիոց, չորեց, բարձրացրեց զինուորի զլուխը և ջուր տըւեց խմելու: Զինուորը խմեց ու բացեց աչքերը:

— Մի կում էլ, — խնդրեց:

Նորից տուեց: Զինուորը խմեց և նայեց թոստոմին:

— Էս խկազէս ոռոտոմավայել էր, — ասաց, ձեռքը մեկնեց թոստոմին և, նրա օգնութեամբ ստքի կանգնելով, բացականչեց: — Հիմա տեղ կը հասնեմ:

ՈՒ ՃԱՄԲԱՅ ԾԻԼՎԱ:

Դատարկ ջրամանը թոստոմը մեկնեց ինձ: Այժմ զոհունակութեան ժըսպիս կար ոչ մըքին: Մարտկեց ձին, բայց շատ մտահոգ էր: Ամբողջ ճամբրին ոշնչն խօսեց:

Երբ տեղ հասանք, անմիջապէս զնաց Հրամանատարութեան խրճիթը:

Դուրս եկաւ շատ մուայլ: Իր մօտ կանչեց մեր խմբից երկու հոգու ու ասաց:

— Մենք պիտի նահանջնեմ մինչեւ Բագուի շրջակայրը: Այս շրջանում ամբանալու հնարաւորութիւն չկայ, ապա անապատ է մինչեւ Բագու: Անմիջապէս այս ճամբրով կը զնաք և կը հասնիր նահանջող շերդ բրիգադայրին: Կը տեսնուիք հրամանատար է. Պահլաւունուն հետ: Ստացած կը լինի նա պաշտօնական հրաման թէ ոչ՝ նշանակութիւն չունի, իմ անունից կ'ասէք նըրան, որ նա իր բրիգադայրից պէտք է մնայ յետնապահ և: պաշտպանի նահանջող ժողովուրդը: Գաւառի ամբողջ հայութիւնը տեղահան ենք անելու և այս ձեւով բարձրացնելու ենք Ասպիան, ու այնահետց մինչեւ Բագու: Մինչեւ վերջին մարդը պէտք է նահանջի կոուերտ և պաշտպանելով նահանջող ժողովուրդը: Ուրիշ որեւէ օդիական գործադառ նա շցիտի ունենայ: Ուրեմն, թո՞ղ դաստորի իր ուժերը իր հայեցողութեամբ: Լուրը կը տաք, կ'առնէք դրական պատասխանը և անմիջապէս կը վերագտոնաք:

Տղերքը թուան ձիերի վրայ: Մատը մնացել էինք շորս հոգի: Քարտէսը զրեց ծնկներին և ասաց:

— Կ'անցնէք գետը և կը բարձրանաք դիմացի լերան ճամբրով: Բարձրաւանպակի վրայ փոռուած են հայկական զիւղերը, Մաղրասան կենտրոնում: Երեք հոգի բաւական է: Սոկրատը կը մնայ մօտս: Երեքդ կը բաժանուէք մէկդ աֆից, մէկդ ձախից և մէկն էլ կենտրոնից՝ կ'անցնէք բոլոր զիւղերը և տեղահան անելու հրահանզ կը տաք: Իրար կը հանդիպէք վերջին զիւղում և միասին յես կը զաք: Առաջին զիւղերը անմիջապէս պէտք է շարժուեն, որ յետիւից եկողները խճողում շառաջանեն: Թո՞ղ վերցնեն հետները, ինչ որ կարող են: Աշխատեցէք, որ խուճապի շմատնուեն: Միակ ճամբրան այս է: Պէտք է իջնեն այն կողմից, անցնեն զետը և այս զծով բարձրանան Սաղիան: Աւելի աջ արդէն անապահով կը գառնայ մի օրից: Դէ, ուշանալ չի կարելի: Քնել էլ չէք կարող, զիւղերը պիտի ճամբայ կտրէք:

Անցուղարձին շատ մօտիկ կանգնած էինք և լաւ զիտէինք, որ եթէ թոստոմը տեղին վրայ չլինէր, ոչ ոք պիտի մտածէր Շամախու զաւարի հայ զիւղացիութիւնը տեղահան անելու և նրա նահանջը պաշտպանելու մասին.

Տեղին է ասել, որ հայ զիւղացիութիւնը, զտնուելով զէպքերից հե-

ոռու, միանգամբ անկրապեկ էր անցուղարձից և չէր հաւատում մեզ: Մենք ուժով համոզեցինք նրանց և միայն, երբ մէկ զիսդ տեղից շարժուեց, միւսներն էլ հետեւ ցին նրան: Այնուամենայնիւ, տեղահանութիւնը հաղթակ եղաւ: Տնտեսադիս շատ կարող էր այդ զաւարը ահազին հարստութիւն լքեց:

Երբ ժողովրդի մի մասը իջել էր յեռը և անցել Ազսուն ու բարձրանում էր զէսի Սաղիան, միւս կէսր կտրուելու վտանգի էր Անթարկուել: Եւ Պահաւունու ջոկատը համել էր և կարել արշաւող տաճիկների ճամբան ու փրկել մի քանի տասնեւակ հազար հայեր: Մինչև ժողովրդի զէսի Սաղիան վերելքը ապահովելը, այդ ջոկատը յամառ ու քաջարար կոռուել էր թշնամու զէմ և կուսելով բարձրացել Սաղիան:

Այսական, վերելքի ծայրին զիրք մտած, 24րդ բրիգադան պահեց թրչնամուն աւելի քան երկու օր, մինչև որ մենք ամրոցը ժողովուրդը անցկացրելինք զէսի անապատ:

Պէտք է արձանագրել, որ Ե. Պահաւունին իր զօրքով հերոսարար պաշտպանեց նահանջող ժողովուրդը: Իր քաջարի զինուորները բազմաթիւ սաքնէնիլ զրուազներ արձանագրեցին: Բազուն քրաւելոց յետոյ, տաճիկ սպանները հիւանդանոցներում և զերի ընկած հայ զինուորների մէջ որոնել էին 24րդ բրիգադայի զինուորներին՝ վրէժինդիր լինելու համար: Զէր սըխալունել Ռուսաստը իր ընտրութեան մէջ: Երիտասարդ զինուորական Ե. Պահաւունին լիուլի արդարացրեց իր զրայ զրուած յոյսերը:

Նահանջի մէր ճանապարհին, Սաղիանից զէնը, բոլոր զիսկերը բռնել էին նահանջի ճամբան:

Մէր խումբը Սաղիանում ի մի եկաւ և շարժուեց զաղթող ժողովրդի հետ: Արդէն զրազում էինք՝ առաջին օգնութիւն հասցնելով հիւանդներին: Անօդնական կահանց ու երեխաների համար փոխազբական միջոցներ էինք ձարում, և այլն: Գործը շատ էր, մենք՝ քիչուր:

Ռուսաստը ժողովրդի մէջ էր շարունակ: Երբեմն յետ էր մնում, տեսներում մեզ հետ, հարցուափորձ անում ու նորից անյայտանում:

Մի փոքրիկ գետակի ափին էինք: Ժողովրդի վերջին մասն էր հանգը զրուանում: Մէզանից հնոու Երկու զիսդի ժողովուրդը էր հանգստանում: Ճանձից յետոյ հրաման ստացանք շարժել ժողովուրդը, քայլել ամրոցը զիշերը և առաւօտեան հասնել անապատի եղրին զտնուող Մալականների զիսդը, ուր պիտի հանգստանայինք մինչեւ կէսօր և կարէինք անապատը:

Գիտէինք, որ Ռուսաստը մնացին էր յետեւում:

Գետակի ափին շարուելով՝ օգնում էինք ժողովրդին անցնելու զետակը: Նրանց, որ սայլ կամ մի չունէին, կամ նստեցնում էինք ուրիշի սայլերը, կամ չլինելու զէպքում մէր ձիերով էինք անցկացնում:

Ռուսաստը հասաւ մեզ: Ուսով էր: Բոլորս մնացինք շուարած:

— Խչո՞՞ էք ոտքով, — հարցրինք:

— Զիս մի հիւանդի տուի: Վերջին կայանն է, կը քայլեմ:

Մի քիչ զրուցեցինք կացութեան մասին: Ասաց, որ ինքը առաջ է ընկնում և փորձեց նստել մի սայլ՝ ջրից անցնելու համար: Մի աննման մի ու-

նէի տակո, ցատկեցի վայր և սանձը տուի թոստոմին :

- Բազում ձիս կ'ուղեմ, — ասացի :
- Հազար դո՞ւ, — ժպտաց նա :
- Յսնէ՛, — կանչեցի, — էն սատկած քեր :
- Յոնէն բերեց մէր բռնակիրը, մի սատկած ձի : Վերցրի սանձը :
- Էս էլ իմ ձին, — ասացի :
- Գիտէի, որ եթէ չհամոզուէր, որ ձի ունեմ, ձիս չէր վերցնի :
- Արի փոխենք, — ասաց թոստոմը՝ նորից ժպտալով :
- Ոչ, — ասացի, — առ եթէ ինձ չկարգանայ բերել, մենք շատուոր Ենք, մէկի թարքին կը նսում :

Հեռում խճողում էր երեւում : Ճիշ ու ազազուկ լսուեց : Թոստոմը թուա ձիու վրայ, անցաւ զետակը և քչեց առաջ :

Էլ Եկուորներ չկային : ՄԵնք էլ անցանք զետակը :

Արդէն մութն ընկնում էր : Գիտէինք, որ տաճիկները այս գծով մեղ չպիտի հետապնդէին : Դեռ չէր երեւում 24րդ րրիզադան, որ շատ հեռում նահանջելով գալիս էր յետեւից : Մոթին հետ մանր անձրեւ ոկանց : Նոր հնածած արտօների մէջ էինք ընկել : Զիերը խրուտ էին : Իջանք ձիերից եւ սկը-սեցինք բայցիլ : Համ թրջում էինք, համ ցեխի մէջ կորչում : Խոսի կամ ցո-րենի խործերի կամ զէզի համեմիտ այրում էինք, չըջան կազմում և աշ-խատում չըրացնել մեզ, ապա շարունակում մէր ձամբան :

Լոյսը չըրացուած՝ հասանք Մալտկասների զիւզը :

Ցեխուա ու թաց էինք բուրու էլ : Փորձեցինք չըրացնել մէր չորերը, բայց չըաջողեցինք : Գիտը Երկուամի բաժանուց լայն փողոցում և զիւզից զորու, զաշտերում, հանգստանում էր ժողովուրդը :

Արեւը ծագելաւն պէս մասէ եցինք մեզ չըրացնել արեւի ջերմութեամբ : Պառկէլ էինք զետնին, բնկած մէջքի, կողքի, փորի վրայ : Սա վարակիչ ե-զաւ : Փողոցի ամրով երկայնքին և զաշտում բոլորը նոյն միջոցին զիւզի-ցին : Ցողնած մարգկանց համար սա կրկնակի շահաւէտ էր :

Յանկարծ տպաներից մէկը ձայն տուեց .

- Տպանե՞ր, նայեցէ՞ր, թոստոմն էլ է իրեն չորացնում :
- Գլորու ելով հասանք իր մօս : Նստեց : Ոչ միայն թրջուած էր, այլեւ մինչեւ ծնկները ցեխի մէջ էր : Նայեց բոլորիս :
- Լա՞ւ էք : Հիւանդ ունի՞ք, — հարցրեց :
- Նայեց ինձ ու ժպտաց :
- Ինչո՞ւ այս վիճակումն էք, — հարցրի :
- Զեղանից ոչ մէկը ինձանից լաւ վիճակում չէ, — ասաց :
- Այսո՛, բայց մէր ձիերը հալ չունէին, իսկ մեզ հրեղէն ձի էինք տը-ւել, — ասաց մէկը մեղանից :
- Այսո՛, բայց էն ծերունին ոտքով էր մնացել : Դուք նրան չէիք օգնել :
- Հասկացանք, որ խօսքը եպիսկոպոսի մասին էր, որը Եկել էր ճակատ և որի հետ մենք սուր վէճ էինք ունեցել թիկունքում :
- Թո՞ղ նա գուն մնայ, որ կենդանին է մնացել, չնորհիւ Ա.ի միջնոր-նորդութեան, — անհամարձակ ասաց Թաղոսը :

- Այդ մենք քաղաքում կը քննենք, — ասաց Ռոստոմը, — նա զանգաւառուր է ձեզանից :
- Ասոր ձին արուած էր ձևուած, — ասացի :
- Ես էլ յարմար համարեցի տալ նրան, — հարցը փակեց Ռոստոմը :

\*\*

Ճաշի մօտ արդէն ժողովուրդը, հազիւ մի բան կերած, սկսեց շարժուել :

Պիտի կտրէինք անջրդի անապատը տաք արևի տակ : Մէկ ընկերոջ հետ խորհրդակցելով՝ որոշեցինք Ռոստոմին բեռնատար ինքնաշարժով ճամբել, որպէսզի մինչեւ Խուրդալան ոստրով չքայլի :

Հեռախօսային կապի մի բեռնատար ընկել էր աչքովս : Գնացինք ու զտանք նրա վարիչին ևս սպային, որի տրամադրութեան տակ գտնեում էր բեռնատարը : Ոչ սովո՞ էր ծանօթ ևս ոչ էլ մեքենավարը : Խօսեցինք սպայի հետ Ռոստոմին տանելու մասին : Սպան, որ ոռու էր, ուրախութեամբ համաձայնուեց ևս կարգադրեց մեքենավարին վերցնել Ռոստոմին, իսկ ինքը զեռ պիտի մնար :

Պայմանաւորուեցինք մեքենավարին հետ, որ մինչեւ Խորդալան, ուր էլ լինի, ինչ էլ լինի, ինքնաշարժով չկանգնեցի ևս թոյլ չտայ, որ Ռոստոմը իշնի վայր : Մեքենավարը խօսք տուեց :

Եկանք Ռոստոմի մօտ :

— Ամրողջ ճանապարհին չէք քնել, ասացի, շատ յոզնած էք երեւում : Զին ձեռքից տուել էք, իսկ մենք վստահելի մի չունենք : Եկէք, ձեզ ճամբենք բեռնատարով : Ուր էլ ցանկանաք, կարող էք ինել ցած, մենք ձեզ կը հասնենք :

Ռոստոմը մտածեց :

— Աւելի յաւ է ձեզ հետ լինեմ, — ասաց :

— Բայց մենք վերջինը պիտի շարժուենք, իսկ առաջամասում կամ կենարոնում ի՞նչ է կատարուում, լուր չունենք : Ժողովրդի մի մասը լուսարցին է սկսել շարժուել :

Ռոստոմը կարծես դեռ տատանուում էր, երբ բեռնատարը կանգնեց մեզ մօտ :

— Էնկեր կոմիսար, — զիմեց նա ինձ, — ո՞վ է զալու ինձ հետ :

Պայմաններից մէկն էլ այն էր, որ մեքենավարը իրը թէ չէր ճանաշում իր ճամբրողի ով լինելը :

Ռոստոմը հասկացաւ, որ նախապէս խօսել էինք մեքենավարի հետ :

— Վեր կացէք, ընկ . Ռոստոմ, ահա ևս բեռնատարը :

Չորս կողմից վրայ տուինք, որ նա շատ յոզնած է, որ ինքնաշարժով շուտ աեզ կը հասնի, ևս, թեւը վերցնելով, ուղղակի ուժով տեղից բարձրացրինք ու օգնեցինք նրան բարձրանալու բեռնատարի վրայ :

— Ժիվէյ (չուտով), — ասացի մեքենավարին, — բարի ճանապարհ :

Բեռնատարը շարժուեց : Ռոստոմը, որ մի քիչ կանգնած մնաց, երե-

ւի չկարողացաւ պահել հաւասարակշռութիւնը, նատեց : Երբ բոլորովին մեր տեսողութիւնից հեռացաւ, հանդիսաւ շոնչ առինք : Ճանապարհին նա պահանջել էր, կանգ առնի ինքնաշարժը եւ ինքը վայր իջնի : Մեքենավարը մերժել էր : Եւսոյ, երբ Ռուսոմը բարկացել էր վրան, մեքենավարը պատասխանել էր :

— Եթէ ձեզ ցած իջեցնեմ, կոմիսարը ինձ էր գնդակահարի : Խիստ եւ կարուկ հրաման է տրուած ձեզ հասցնել մինչեւ Խորդալան :

Ռուսոմը տեսել էր, որ ձար չունի, համակերպել էր եւ քեռնատարով հասել էր Խորդալան :

## \* \*

Նկարագրել մեր ամրող նահանջը, ճանապարհին կատարուած աշխատանքները եւ ճանաւանդ այդ անջրդի անապատը արեւի տակ ստքով անցնելը կիներով եւ երեխաներով՝ իմ նիւթից գորս է :

Երեկոյեան դէմ հասանք Խորդալան : Մօտեցանք ջրի աշտարակին, որտեղից մի ծորակով ջուր էր հասում գորս : Եկողները յարձակուել էին ջրի վրայ : Հրմանոց, ճիշ ու ազգակը երկինք էր հասում : Ամէն ոք աշխատում էր մի բույտ շուր ջուր վերցնել եւ, իրար խանգարելով, ոչ ոք չէր ձեռք բերում այդ հրաշալի հեղուկը :

Մի տասնեակ տղամարդիկ աշխատում էին կարգ հաստատել, իսկ ջրի խողովակի մօտ, աշտարակի դրան աստիճանների վրայ, կանգնած էր մէկը եւ ձեռ ու սոսով ցուցմունքներ էր տալիս կարգ հաստատողներին :

Ռուսոմն էր :

— Ամր իր ի՞նչ գործն է, — արտնչացին մերոնք :

— Հասնենք, նրան տանենք քաղաք, — ասացի :

Մէծ դժուարութեամբ հասանք ջրի աշտարակին : Խոստացանք կարգ հաստատել եւ ջուրը այնպէս բաշխել, որ ազմուկ չլինի : Տղաները անցան զործի : Ես Ռուսոմին ուղեկցեցի մինչեւ զինուորական կայանը : Բարերախտարար, այնտեղ էին Պաւլի Բէկը եւ մի երկու սպաներ, որոնք իրենց տրամադրութեան տակ ունէին ինքնաշարժ :

Խոսակցութիւնից հասկացանք, որ Ռուսոմը ուզում էր մնալ կամ Խորդալանում, կամ գիշերել Բալաջարի կայարանում՝ զաղթողներին Բագուի շրջանները ուղարկելու գործին հսկելու համար : Ժողովուրդը արդէն ապահով վայրում էր զանուում, եւ Ռուսոմը կարող էր մի օր հանգստանալ, յաջորդ օրը անցնել Բալաջարի եւ Բագուի թիկունքում, Հայոց Գիւղ կոչուող արուարձանը, ուր պէտք է տեղաւորուէր ամրող ժողովուրդը :

Պաւլի Բէկին հասկացրի, որ Ռուսոմին պէտք է տանել քաղաք, որ նրա մնալը աւելորդ է եւ որ նա սասափկ յայնած է : Պաւլի Բէկը, երբ հասկացաւ մեր նպատակը, հրաւիրեց Ռուսոմին ինքնաշարժով շրջել շրջակայքը եւ դիտել դիրքերը՝ ուր պէտք է կանգ առնէր մեր բանակը եւ ուր արդէն խրամատներ էին փորւում : Ռուսոմը անմիջապէս ընդունեց առաջարկը :

Պաւլի Բէկը ժան էր ածել նրան Խորդալանի եւ մօտակայ բոլոր դիր-

Քերը, ապա տարել էր Բայաջարի և այս շրջանի մեր զիծն էլ էր ցոյց ուղւել, ապա իջել էր մինչեւ Գայլի Դուռը, այսինքն՝ Բազուն պաշտպանելու զիծը ցոյց տաել քարտասով և քչել տարել Բայլ:

Յաջորդ օրը մենք մնացինք ժողովրդի հետ՝ մի մասը Խորդալան և մի մասն էլ Բայաջարի տեղաւորելով։ Մնացինք այսուղ մի զիչեր եւս և ամերայ ինկանք զիպի Բայլ։

Մեր ձամբու վրայ էր Հայոց Գիւղը։ Խոստոմք զտանք այնտեղ։ Նա կազմակերպել էր արդէն զաղթականութիւնը ընկունող, տեղաւորող և պարենաւորող մի մարմին՝ Ազգային Խորհրդի հսկողութեան ներքոյ, որը եւ անցել էր զործի։

Մեր ասածին հանդիսումին Խոստոմք մեզ ասաց, որ մենք ժողովուրդը թողնենք Գաղթականական Կոմիտէին և ինքներս զնանք հանգստանալու։ Կարգագրեց մի շարաթ ոչ մի ակզ չերեւանք։ Երբ խմացաւ, որ Սոկրատը հիւանդանոց են ուղարկել, «Հետեւեցէք», որ լաւ ինամք տանին», ասաց։

Մեր բանակը արդէն քաշուել էր զիպի քաղաքի պաշտպանութեան զիւց, և մենք կարուել էինք աշխարհէց։

Խոստոմն էլ մնաց Բայլում։

## ՇՐՋԱՊԱՍՈՒԱԾ ԲԱԳԻՈՒԱՄ

Մենք շրջապատուած էինք մէկ կողմից՝ ջրով, որ Կասպից ծովն էր, Բիրի-էյրաթից մինչեւ Սպիտակ քաղաքի ծայրը։ Այսուհետեւ միջոցը Տիրի-էյրաթից մինչեւ Երկաթուղին, որ անցնում էր Բազուի թիկունքում և էլք գործում, ամրող զաշտամայրը ջրի տակ լինելու հետեւանքով։ Այդտեղից մինչեւ Խորդալանի բարձունքը և Խորդալանից մինչեւ Բայաջարի զտնը ուում էին թշնամու զիբրերը, իսկ զիմացը, հոյիսուի այս կողմը, մեր զիրքերն էին։

Խորդալանի ամենաբարձր զաղաթի վրայ ամբացուած էին թշնամու թնգանօթները, որոնք կարողանում էին ոմրակոծել քաղաքը։ Սակայն, քաղաքացիք զիտէին, թէ ի՞նչ ուզութեամբ էին թափուում թշնամու ուումքերը և զիչեր ցերեկ երթեւեկում էին փողոցներում ուումքերի անկման հակառակ զծերով, և անվտանգ։

Բարերախտարար, քաղաքի փողոցներում և տների վրայ ընկած ուումքերի մեծ մասը չէր պայմանաւում, իսկ պայմաներն էլ մեծ վնաս չէին պատճառում։

Յաձախ մերոնք քշում էին թշնամուն իր զիբրերից, սակայն նորից նաւահնջում։ Երկու անգամ միայն թշնամին մօտեցաւ քաղաքին և ահա ներս պիտի խումէր։ Բայց մերոնք յաջուցին նրանց յետ քչել։ Երրորդ անգամ միայն, մեր յետ քաշուելու հետեւանքով, թշնամին կարողացաւ գրաւել քաղաքը։

Առաջին անգամ Յուլիս մէկին էր, որ թշնամին ընդհանուր յարձակման անցաւ, բայց մենք, մեծ զոհեր տալով, յաջողեցինք նրան յետ քչել։

Այդ այն օրն էր, երբ մենք կողցըինք մեր հերոս Մուրատին, Մանուչարեանին (Համազառապի օգնուկան) և աննման մարտիկ Մկրտիչ Դանթոյեանին :

Երկուրդ անդամը նկարագրուած է Թաղկոս Ամերեանի զէպքի զրուազին մէջ: Սյո ժամանակամիջոցին Ռուսուոմը շարունակ քաղաքումն էր, ի բաց առևլալ այն ժամերը, երբ, ըստ պահանջի, զնացել է Բալաջարի կամ նաւթային շրջանները:

Բազում նա կամ Ազգային Խորհրդի հետ էր, կամ Հրամանատարութեան և կամ կ. Կոմիտակի մօտ: Մասնակցում էր բոլոր կարեւոր նիստերին և զործերին: Իրազեկ էր ամրով անցուղարձին: Ծառ յաճախ մենք չէինք իմանում, թէ ո՞ւր էր թէյ խմում ու նախաճաշում, ո՞ւր էր ճաշում կամ ընթրում: Լաւ էլ չէր քնում: Հիմուած էր ու յոդնած:

Սկսեցինք պահանջել, որ քնի անպայման Բիրոյի չէնքի մէջ, ինչպէս որ անում էին Բիրոյի աշխատակիցները: Ժամով ու պահակով: Համաձայնուց քնել երեք ժամ:

Ազգային Խորհրդի ժողովարտհում մի շատ մեծ սեզան կար: Սենեակը մի դուռ ունի թէջանցքից: Պատուհանները նայում էին զէպքի բարը: Պահակը կանգնում էր զրանք, և այլեւս ոչ ոք չէր կարող արթնացնել Ռուսամին, բացի հերթափահից, այն էլ արտակարգ զէպքերում:

Ես մէշտ Ռուսուոմից առաջ էի քնում և աշխատում էր նրա քնած ժամանակ հերթափահի մօտ լինել: Մի քանի անգամ, իր քնած ժամանակ, երբ բակում ազգուկ-ազգազակ էր լսուել, նա վեր էր կացել, պատուհանը բացել և հնատքրքրուել թէ բանը ինչո՞ւմն էր: Ապառնացի, որ պատուհանները մէխել կը տամ: Նա խոսացաւ էլ պատուհանը շրանալ:

Ազգային Խորհրդի չէնքին մէջ նրա քնելու այն առուելյութիւնն ունէր, որ արթնանալուց յետոյ նրան թէյ, կաթ, հաց ու պանիր էր տրուում:

Զարմանայիօրէն շարժուն և նուսդան էր Ռուսուոմը: Յաճախ ոտքով էր գնում հրամանատարութեան մօտ, ոտքով էր վերազառնում: Ինքնաշարժ պահանջել ու սպասել չէր կարողանում: արդքոն համբերութիւն չունէր:

Այդ օրերին թէ զեկավար և թէ երկրորդական գծում գտնուող և համեստ շարքայինների մէջ տարօրինակ համերաշնութիւն էր տիրում: Ճիշդ է, ականատես եմ եղել շատ սուր վէճերի, նոյնիսկ ատրճանակ քաշելու շատ նշանակալից զէպքերի: Բայց ինդիքները վճռահարելուց յետոյ, օրինակելի ջերմ մինուրաք վերականգնում էր իսկոյն:

Ռուսուոմի և Արքահամի փոխյարարերութիւնները խիստ մտերմական էին: Թէի կ. Կոմիտէի մէջ նրանք յաճախ վէճեր էին ունենում, բայց այդ չէր խանգարում նրանց ջերմ գործակցութեան:

Մի անգամ, երիտասարդ ընկերների ներկայութեան, Ռուսուոմը խիստ նկատողութիւն արաւ Արքահամին: Ես չէի տեսել զեռ Ռուսուոմին այդպէս բարկացած: Այդ պատահեց այսպէս:

Մի օր, երբ թշնամին շատ էր նեղում մեղ, զիտէինք, որ ճակատը վտանգաւոր դրութեան մէջ էր. մանաւանդ թուրքաց զերեզմանատան թիկունքում թշնամին նեղում էր մեզ: Արքահամը Բայիլովումն էր եղել: Թէ ինչո՞ւ էր գնացել ուսպմամթերք տանող բեռնատարով դիրքերի այդ մասը,

Հեմ յիշում : Միայն թէ՝ երբ նա հասել էր այն կէտին, ուր թշնամին արգին յազթական առաջ էր չարժուել, մեր ձականի պետը հրաման էր տուել հակայարձակման անցնելու : Բայց դինուորները չէին չարժուել աւզերից : Արբանամը խլել էր դինուորներից մէկ տասնոցը, կրակ էր բացել զեզի թշնամին եւ առաջ վագել զոռարկի :

— Յառաջ, հայ Նզրայրներ :

Սպիտակ բաձկոնը հազած, պորտֆիլը թւել տակ, մասուզերից կրակելով առաջ վագող Արքահամին անսնելով՝ մեր զինուորները ցնցում եւ ուռաջ զոռարկ դիմել էին հակայարձակման :

Առաջացող հայ զինուորները անցել էին Արքահամից և թողել նրան թիկունքում :

Տաճիկ զինուորները այս զրոհին չդիմանալով, յետ էին դարձել եւ փախել : Յազթութիւնը կատարեալ էր եղել :

Մեղ հնուախոսով յայտնեցին, որ Արքահամը ատրձանակը քաշել է եւ յարձակման է անցել :

Եփութութիւն բնկու մեր մէջ : Խոսանոմ մռայլուեց : Երեսում էր, որ ջղայնացած է :

— Անմիջապէս ինքնաշարժ աւզարկիր եւ երկու հոգի, որ բերեն նրան :

Երկու ընկերներ անմիջապէս զնացին զիրքերը : Արքահամին զտել էին փոշեթաթափ միջակում : Բներին Բիւրո (Դաշնակցութեան չէնքր) : Ներս մրտաւ կ. Կոմիտէի սենենակը :

— Է՛, յետո՞յ, — ասաց Խոսանոմը, — ջանել տղա՞յ ես, որ չհասկանա արածգ : Մի պատահական զնդակ պիտի ձեզքէր զլուխու : Հասկանո՞ւ մե թէ ինչ ես արել :

— Ի՞նչ պիտի անէի : Եթէ շանէի, թշնամին պիտի թափուէր Զամբարաքանդ (գերեզմանները), — փորձեց արզարանալ Արքահամը :

— Ի զոր ես այդպէս կարծել : Ինչ էլ որ լինէր, գո՞ւ չէիր, որ այդ զիհակովդ առաջ պէտք է վաղէիր...

Մի քանի սուր դիսողութիւններ էլ արաւ, որոնցից Արքահամը իրեն անշարժար զգաց : Բայց մընք հիացմունքով նայում էինք, թէ ինչպէս զաշնակցական մոտաւորական առաջնորդը, մեր ընկերը, պէտք եղած ժամանակ կարող էր զէնք վերցնել ու, մահն արհամարհնելով, զիմադրել թշնամուն, ոգեւորել զինուորները եւ յազթանակը առանցիւլ :

Արքահամը մեծ ընկերոջ սուր զիտողութիւններին արժանացաւ, բայց մեր աշքում շատ աւելի բարձրացաւ :

\*\*

Մի ուրիշ դէպք էլ յիշեմ՝ Խոսանոմին բնորոշելու համար :

Խոսանոմը երբեք շէր ցուցադրում եւ զգալ տալիս, որ իր խօսքը մեզ համար օրէնք էր, որ ինքն էր, որ ընթացք էր տալիս զործերին եւ իր ցուցմունքներով էին, որ ընթացքի մէջ ևն դրւում մեր բազմազան զործերը : Նա իրեն այնպէս էր պահում, որ ինքը եւս մի խորհրդատու ընկեր է

միւսների պէս, որ մենք բոլորս, միասնաբար, համախորհուրդ վճռում ենք բոլոր խնդիրները եւ քաղաքի ճակատագիրը։ Վէճի առարկայ խնդիրների մասին էլ նա իր կարծիքը յայտնում էր, առանց պարտադրանքի տակ դնելու մեջ։

Օգոստոսի վերջին օրն էր : Յաջորդ օրը, Սևալսմբեր 1ին, անզլիացիք պիտի թողնէին քաղաքը : Այդ մասին տեղեկացրել էին նաև Ազգային Խորհրդին : Ռուսաի, մենք պիտի ձշչէինք ոչ միայն մեր դիրքը՝ համաձայնուելու կամ ոչ, այլև երկու գէպքում էլ պիտի որոշչինք մեր անելիքը :

Պապաշան խնդիրը դրեց բնութեան : Ձեկուցովն էր Արքահամը :

Ռուսատօմը, ըստ իր սովորութեան, նատած էր անկիւնում դրուած մի երկաթէ սնտուեկի վրայ եւ լուս հետեւում էր ժողովի ընթացքին :

Բուռն եւ անհաշտ պայքար էր մզւում կ. Կոմիտէի մէջ։ Մէկ մասը այն տեսակիտին էր, որ պէտք էր թողնել քաղաքը, որ այս անհաւասար պայքարը շարունակելը արգէն շատ գժուար էր, որ ուստաները կեզրոնից, բացի զինամթերքից, ոչինչ չպիտի հասցնէին, որ թիֆլիսը թիկունքից ոչ մի ձեռնարկ շարաւ ու չպիտի անէր, եւայլն, եւայլն :

Հակառակ տեսակէտր պաշտպանողները այն կարծիքին էին, որ պէտք էր գեռ շարունակել քաղաքի պաշտպանութիւնը, որ անհնար էր լինելու տեղանեն ամրող ժողովուրդը ծովով, որ գեռ ուզգամթերքի մեր պահեստը կը բաւականանայ, որ հիւսիսից գեռ յոյս կայ օգնութիւն ստանալու եւ որ անզլիացիք պարտաւոր են մնալ ու կոռւել :

Վէճը շատ սուր բնոյթ ստացաւ : Վերին աստիճանի ջղային մթնոլորտ ստեղծուեց : Արշակը ուշաթափուեց եւ, ուշքի գալուց յետոյ, աչքերը լայն բացած՝ հարցնում էր, թէ ի՞նչ որոշեցինք : Ինքը քաղաքը պաշտպանելու կողմն էր : Ի վերջոյ, Արքահամի պահանջով խնդիրը քուէարկուեց :

Պապաշան առհասարակ շէր սիրում խնդիրները քուէարկել, մանաւանդ էր ուզում քուէարկել այսպիսի մի խնդիր :

Ռուսատօմը այնքան մռայլ ու ընկճուած էր, որ աչքերին արցունքներ էին երեւում :

Ի վերջոյ, քուէարկուեց խնդիրը եւ որոշուեց քաղաքը չտալ թշնամուն ու պաշտպանուել, քանի զեռ կարելի էր :

Ռուսատօմը տեղից վեր ելաւ, մօտեցաւ սեղանին ու ասաց .

— Միակ եւ խելօք վճիռն էր, որ արուեց : Ես էլ քաղաքի պաշտպանութիւնը շարունակելու կողմն էի : Հայութեան անունից Ազգային Խորհրդի նախագահը պէտք է ազդարարութիւն անի անզլիական զօրքի հրամանատարնեւ կարծում էմ, որ նոյնիսկ սպանալիքի նման մի արտայայսութիւն էլ պէտք է լինի այդ ազդարարութեան մէջ :

Բոլորը հանգիստ շունչ քաշեցին : Ոչ հակառակորդները ընկճուեցին եւ ոչ էլ կողմնակիցները հպարտացան : Ընկերական անկեղծ ու անկաշառ մտքերի բախում էր տեղի ունեցել, կ. Կոմիտէն անկաշկանդ վճիռ էր կայսեցը եւ մեր աւազազոյն ընկերն էլ ոչ թէ իր կարծիքը յայտնելով էր ձնչում գործ զրել, այլ խրախուսել էր կատարուած վճիռը :

Այս բարոյական բարձր մթնոլորտումն էր, որ աշխատում էր Հ. Յ.

Դաշնակցութեան Բագուի կ. կոմիտէն այդ պատասխանատու եւ ծանր օրի-  
րին : Եւ այդ մենք անջուշտ պարտական էինք նաև մեր մեծ թուտումին :

Այս տաղնապալի ու շարունակական զոհողովթեան մէջ աշխատում ու  
կուռում էր Բագուի հայութիւնը : Ինչ խօսք, որ ծանր եւ զեկավար դիրքե-  
րում էր Հ.Յ.Դ. ամբողջ կազմակերպութիւնը, իր մարմինների եւ կ. կոմի-  
տէի ղեկավարութեամբ, թուտումի շունչի տակ :

Տաղուն բնկաւ : Այլեւս հնարաւոր չեղաւ քննել, համաձայնուել կամ  
կանխել անկուռմբ, որովհեաւ այդ օրը առաւտակած սկսած անդիմացիք քա-  
շում էին իրենց զինուորներին դիրքերից եւ նստեցնում նաւերը : Նրանք զըն-  
դակահարում էին իրենց ձիերին եւ այրում օղանաւերն ու պահևանները : Ա-  
րով՝ մեր բնուհանուր ճակատում 10-15 տեղ լայն բացուածքներ զոյցան-  
որ մենք լցնել չէինք կարող : Այդ բացուածքներից թշնամին կարող էր ար-  
դին բաղմաթիւ կէտերում անցնել մեր թիկունքը, ըլջապատել մեր գօրամա-  
ռերը եւ մեծ վիասներ պատասխել մեզ :

Արդէն պարզ էր, որ այսոք է տայինք քաղաքը : Դեռ մինչեւ նահանջի  
ժամը որոշէլու, ընկ. Գ. Բալայեանը նշանակուած էր քաղաքը դատարկելու  
պատասխանատու հրամանատար : Իր տրամադրութեան տակ նա ունէր Բա-  
գուի ծովափին գտնուող բոլոր տեսակի փոխադրական միջոցները, փոքրիկ  
ինքնաշքը մակոյիներից սկսած մինչեւ մեծ առեւտրական կամ մարդատար  
նաւերը :

Ժամը 8ից ամէնօրեայ ժողովի նման կ. կոմիտէն հաւաքուեց : Դար-  
ձեալ զեկուցում առեւց Արքահամբը : Էլ տեղ չկար ընդդիմանալու : Արձանա-  
գրուեց կացութիւնը եւ որոշուեց անմիջապէս յատուկ ընկերներ ուղարկել  
թաղերը, հայոց Գիւղ, նաւթային ըրջանների բնակավայրերը : Նրանք պէտք  
է յորդորէն ծովովորպը, որ ինչ հնարաւոր էր, վերցնի եւ զիմի ծովափ՝  
նաւերը նատելու համար :

Որոշուեց նաև ժամը ձիչոց 12ին ճակատում զանուած մեր բոլոր զօ-  
րամասերը յետ քաշել եւ, առանց խումապ առաջ թիրելու, ծովափ տանել ու  
նստեցնել նաւերը :

Քաղաքում բնտանիք ունեցող զինուորները հրաման ստացան ճշգելու  
թէ իրենց ընտանիքների զնացել՝ էին նստելու նաւերը թէ ոչ . եթէ զնացել  
էին, իրենք էլ անմիջապէս պիտի զնային : Խոկ նրանք, որոնց ընտանիքնե-  
րը սպասել էին եւ չէին զնացել, խսկոյն պէտք է փոխադրէին նրանց ծովափ :

Ամէն ինչ էլ պէտք է կատարուէր շտապ, որպէսպի մինչեւ լուսաբաց  
մեր նաւերը կարովանային շարժուել զէպի ծովի բացերը :

Պէտք է արձանազգը, որ շատ գժուար էր համոզել Բագուի հայ բնա-  
կիչները, որ յշեն իրենց աները : Դրա համար էլ մեծ թուով հայեր մնացին  
քաղաքում եւ նրանց մի կարեւոր մասը զոհ զնաց թուրք խուժանի եւ տա-  
ճիկ զինուորների խժգժութիւններին :

Տաղուն մեծ թուով զոհեր տուեց նաև Պետրովսկու եւ էնզելու հան-  
րակացարաններում եւ նոյնիսկ այն նաւերի մէջ, որոնց անդիմացիք չընդու-  
նեցին էնզելում, եւ այդ նաւերը ստիպուեցին 6-8 օր մնալ ջրերի վրայ :

Թուտումի՝ Բագուն թողնելու մասին գրել եմ արդէն :

Հնդելիում նրան գէշէրը կարելի չեղաւ որեւէ մասնաւոր տուն տանել քնելու համար : Նա մնաց ժողովրդի մէջ :

Առաւոտեան, արեւը նոր էր ծագել, երբ տեսանք, որ թոստոմք, մի մէծ խորք խոս շալակած, զնում էր զէպի անդյիացիների լքած հանրակացարանների հսկայ փայտեայ չնքերը : Նրան շրջապատեցինք, երբ արդէն հասել էր մի հանրակացարանի :

— Այս ի՞նչ էք անում :

— Հանրակացարաններում բաւական թուով անհատ կանայք ու երեխաներ քնել են տախտակամած յատակների վրայ : Տանում եմ, որ փռեմ անկողնու փոխարէն :

Խոսր շալակից վար դրինք եւ տարանք ու փոեցինք իր ցոյց տուած տեղը :

Լուրը անմիջապէս տարածուեց Բագուի փախտականների մէջ : Բոլոր տղամարդիկ դորս եկան հանրակացարաններից եւ մի քանի ժամ դրազուեցին դաշտում անդյիացիների զիկած խոտերը շալակած տեղափոխելով հանրակացարանները :

Թոստոմը նայում էր այս աշխատանքին եւ ժպտում :

Այսակ էլ քոյերայի համաձարակ սկսուեց : Կազմակերպեցինք առաջին օդնութիւնը : Հիմք դրուեց պարենաւորման գործին : Եւ դարձեալ այս բոլոր աշխատանքների մէջ կարելի էր տեսնել թոստոմի մահակցութիւնը :

Զանազան ուղղութիւններով բնկերներ ուղարկուեցին էնդելուց (այժմ Փահէրայի) : Կ. Պարունակեանը գնաց՝ Ստեփան Շահումյանին եւ բնկերներին փախցնելու համար . Միքաքեանը զնաց Պետրովսկու եւ էնդելու միջև կապ ստեղծելու համար : Խոկ ևս էլ ուղարկուեցի Հիւսիսային Կովկաս՝ հասնելու համար միջնեւ : Կիսլովսկու՝ Մ. Շաբթիրեանի միջոցով դրամական օդնութեան գործը կազմակերպելու համար :

Զինորսական նաւով ես պիտի եխէի Կասպից ծովի հիւսիսային մասում զանուող կապայ գիւղը եւ այնտեղից ցամաքով պիտի երթայի Պղյար, ապա երկաթուղու առաջին կայարանից պիտի զնայի մինչեւ Կիսլովովու, խոկ եթէ պէտք լինէր, մինչեւ Թոստոմի՝ Պետական Դումայի անդամ Պապաշանեանին գանելու եւ ինդիրը նրա ուշադրութեան էլ յանձնելու համար :

Հրամանական պահան թոստոմը ասաց :

— Կը հանդիպինք Հայաստանում :

Բայց, աւա՞զ, ես Պետակիրսկում եւ կէս թաքնուած վիճակում էի, երբ մի օր Վլադիկաւկազի վրայուն եկած Թիֆլիսի մեր «Աշխատաւոր» առի ձեռու ու կարդացի թոստոմի մահուան զոյժը :

Սարսափելի ծանր ապրումներ ունեցայ այդ կորստի հանդէպ : Ինձ թուում էր, թէ մեր կազմակերպութեան մէջքը կոտրուեց եւ մէնք որրացանք : Եռուսաւորութիւնը ներս էր սողոսկում իմ հոգու մէջ : Եւ միայն Հիւսիսային Կովկաս զաղթած Սասունցիներից սկսած մինչեւ Կարսեցիները Հայաստան փոխազրելու գործը կարողացաւ ցրել ծանր մտարումներս եւ աղատել ինձ իմ հոգեկան տառապանքից :

# ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԱՆՈՐՈՒԹԵԱՆ ԿՈՏՈՐԱԾԸ

## ԵԽ Բ. Լ. ԱԹԱԲԵԿԵԱՆԻ ՄԱՀԸ

Թոստոմը զիտէր թափանցել ընկերոջ հոգևկան ապրումները եւ ներութամբու լինել, թէկու զ նա վրիպում ունեցած լինէր, կամ մեղք գործած լինէր, եթէ միայն այդ առաջ էր եկել անկեզծ եւ ազնիւ մօտեցումից :

Ահա նման մի զէպք պատահեց այն չարարաստիկ օրը, երբ սպաննուեց բժ. Լ. Աթաբէկեանը եւ ստոյգ մահուանից վրկուեց ընկ. Արրահամ դիւլ-խանդանեանը :

Մարտի զէպքերը հակայեղափոխական (Թուրք Մոռափաթ) եւ յեզափոխական (Հայ, ոռոս, թուրք) ուժերի արխանահեղ կոխութ վողոցներում նորից զունաւորուել էր հայ-թրքական զոյնով: Գուցէ պատճառը այն էր, որ հայ մարտական խմբերը նեզն էին լծել թուրքերին և քշել իրենց թագերը՝ միանդամայն անփառան զարձնելով նրանց՝ հայկական թագերի համար: Սոցիալիստ-Յեղափոխական եւ Սոցիալ-Դեմոկրատ կուսակցութիւնների զեկափառութիւնը, բժ. Լ. Աթաբէկեանի զլխաւորութեամբ, բանակցութեան մէջ էր մտել թուրք զեկափարների հնա եւ նրանց հաւանութիւնն էր ստացել յատուկ պատզամաւորութեամբ զնալու թրքական թաղը եւ, համաձայնութիւն կայացնելով իրենց հնա, վերջ տալու եղբայրասպան կոռուին:

Այդ օրը Հայոց Ազգային Խորհուրդը քննել էր այդ խնդիրը, հաւանութիւն էր տուել բժ. Աթաբէկեանի առաջարկին և որոշել էր պատզամաւորութեան մէջ մտցնել նաև իր նախազահն՝ ընկ. Ա. Գիւլխանդանեանին:

Հ.Յ.Դ. Կ. Կոմիտէի լայնացրած նիստը տեղի էր ունենում ամէն երեկոյ, ժամը 8ից սկսած: Այդ օրը բաւական ուշացած ժողովի եկաւ ընկ. Արրահամը: Նա հազորդեց, որ Հայոց Ազգային Խորհուրդը որոշել է մասնակցել պատզամաւորութեան և իրեն էլ մտցրել է այդ պատզամաւորութեան մէջ:

Ազգային Խորհրդի որոշման զէմ առարկութիւն եղաւ այն իմաստով, որ բանակցութեան պիտի զնայ այն իողմը, որը իրեն պարտուած է զզում: Խոկ մենք արդ չեն սեղմել ենք թշնամուն Շամախինկային եւ, եթէ մի երկու օր էլ չարունակութ կոխութ, նրանց զինուած ուժերը ցանուցրի կ'անենք եւ վերջնական պարտութեան կը մատնենք: Աւստի, մեր կողմից պատզամաւորութիւն ուղարկելը հաշտութիւն հայցելու տպաւորութիւն պիտի թողնի, եւ այդ՝ Հ. Յ. Դաշնակցութեան համար նուաստացուցիչ պիտի լինի:

Արրահամը պնդեց, որ կացութիւնը լուրջ է, որ սուսները, յատկապէս խոզուկումը եւ Ցենտրո-Կասպին գծոն էն, որովհետեւ կոխութ հայ-թրքական կոռութ բնոյթ է ստացած, որ Սոցիալիստ-Յեղափոխական եւ Սոցիալ-Դեմոկրատ հայ կազմակերպութիւնները տուել են արդէն իրենց հաւանութիւնը, որ մեր մերժումը բացասական տպաւորութիւն պիտի ճգի եւ, որ, վերջապէս, խնդիրը անցել է Ազգային Խորհրդի բովից եւ ինքն ու մեր միւս ընկերները հաւանութիւն են տուած որոշումին:

Վէճը սուր բնոյթ ստացաւ: Մակայն, Պապաշան մի կերպ հարթեց այն:

— Ակզրունքով, — ասաց նա, — քու էարկութեան չեմ գնում: Ազգային Խորհուրդը մեր ընկերների մասնակցութեամբ խնդիրը որոշել է: Թողնելուք, որ գործադրի իր որոշամբը: Մեր կուսակցութիւնը պէտք է խրախուսի ամէն մի ձեռնարկ, որի նպատակը խաղաղութեան վերականգնումն է:

— Թո՞ղ այդպիս լինի, չենք առարկում: Բայց մենք դէմ ենք, որ ընկերահամբը մանի այդ պատգամաւորութեան մէջ:

Այս տեսակէտին ընկերների մէծ մասը հաւանութեան նշան տուեց:

— Ինչո՞ւ, — զարմացաւ Արրահամբը:

— Ինչոնք չատ կան: Ամենակարևորը այն է, որ դու, Ազգային Խորհրդի նախագահ լինելուց բացի, Հ. Յ. Դաշնակցութեան լիդին եւ Հ. Յ. Դաշնակցութիւնն ես ներկայացնում: Բայց այդ, ես զէմ եմ յատկապէս քո գնալուն: Թո՞ղ Ազգային Խորհուրդը գործադրի իր որոշումը՝ քո փոխարէն ուրիշին ուղարկելով: Ի հարկէ, ցանկալի է, որ նա մեր ընկերը լինի, — առարկեցի ես:

— Պատճառարանութիւնդ թոյլ է: Եթէ որչումը գործադրում ենք եւ պատգամաւորութիւնը զնում է, ես եմ զնացել թէ ուրիշը՝ նշանակութիւն չունի: Էնդ հակառակն՝ վասահելիութեան տեսակէտից Ազգային Խորհրդի նախագահին մասնակցութիւնը խիստ կարեւոր է: Եւ իրենից անբաժան պորտուէլը զնելով թեւի տակ, ասաց Արրահամբը: Էնկեր նախագահը ինձ թոյլ կը տա՞յ, որ մէկնիմ: Կարեւոր տեսակցութիւն ունիմ այս ժամէն:

Եւ գուրս զնաց: Դուրս թռայ յետեւց եւ, հասնելով նրան, ասացի.

— Դու չես գնալու, Արրահամբ: Այդ ես ինչ գնով էլ լինի՝ թոյլ չպիտի տամ: Տեղդ մի ուրիշ մարդ նշանակի՞ր:

Արրահամբ յետ նայեց կէս բարկացած, կէս ժպտազէմ:

— Լու, լու, — ասաց իր սովորական եղանակով ու հեռացաւ:

Ժողովը վերջանալուց յետոյ, իմ թեւիցս բռնեց եւ մի կողմ քաշեց մեր Գիֆ Թագոսը: Սա մի բանուորական շարքերից առաջ եկած կէս-ժամաւորական, կէս-մարտական ընկերներից էր:

— Եղ շուրջ էր զնում Արրահամբը, որ ասում էիր թէ չեմ թողնի, — Հարցըց:

Շատ մտերիմ էինք: Թաքցնելիք չունէի նրանից: Պատժեցի ամէն ինչ: Մտածեց ու ասաց:

— Նամարտ ես, թէ թողել ես:

— Ուրեմն, ասուուս այստեղից չես հեռանայ, մինչեւ պատգամաւորութեան զնալը:

— Քեզ հետ եմ, մինչեւ վերջ:

Թէ ինչոչ անցկացրի «գիշերը», այսինքն՝ քնելու երկու ժամս, նկարագրել չեմ կարող: Վախենում էի, որ առիթ չպիտի ունենամ Արրահամբին խանգարելու: Բնագրական մի վախ էր ընկել սիրոս, որ եթէ զնար, մի դըքախտութիւն պիտի պատահէր:

Իմացայ, որ ժամը 9ին պատուիրակութիւնը ինքնաշարժով պիտի զնարէ. Կոմիտէի չէնքը, պիտի վերցնէր Արրահամբին եւ, թեքուելով զէպի թելեքոնակայա փողոցը, պիտի զնար մինչեւ Բոլշակա Մարսկայա, ապա Բա-

լախանսկայա փողոցով մինչեւ Ղարա-Մէջդան ու Շամախինսկայա փողոցը, Աղամեանի չէնքը:

Տևայ Գիծ Թաղոսին՝ փողոցի գրանը կանգնած։ Մէկ էլ փողոցում հնչեց ինքնաշարժի փողը։ Գլուխս պատուհանից հանեցի։ Ինքնաշարժի մէջ, մեքենավարքի մօտ նստած էին երկու հոգի։ Անունները չեմ յիշում, բայց մէկը հայ և միւսը թուրք Սոցիալ-Դեմոկրատ էր։ Յևսեւի մասում նստած էր բժ։ Լ. Աթարէկեանը և Սոցիալիստ-Եւզափոխական Դէնեժէկինը։

— Իմաց տուր Արբահամին, որ մենք իրեն ենք սպասում, — ասաց ինձ բժէշկը։

— Նա չի գալու, — պոռացի ես և վազեցի վայր։

Աստիճաններից փոթորկի պէս իջայ և չունչ առի մեքենայի մօտ։ Զարմացայ, երբ տեսայ, որ Արբահամը արգէն մտել էր ինքնաշարժը և տեղաւորում էր նրա մէջ, իմ կողմում, զրան մօտ։ Մեքենայորէն նայեցի պէտի ինքնաշարժի վարիչը։ Գիծ Թաղոսը կանգնած էր նրա մօտ։ Ոչ մի խօսակցութիւն չէինք ունեցել այդ մասին, բայց նա արգէն զրաւել էր մի շատ կարեւոր զիրք։ Ինձ զօտեանդուած զգացի։ Ինքնաշարժը չէր կարող տեղից շարժուել։

— Դու չախի զնաս, Արբահամ, — ասացի, — և մինչեւ որ վայր չիշնես, ինքնաշարժը տեղից չպիտի շարժուի։

Իմ եւ թաղոսի հայեացքները հանդիպեցան իրար։

— Ինչպէ՞ս թէ։ Հապա ինչպէ՞ս պիտի զնանք առանց Արբահամին, — զարմացած ասած բժէշկը՝ մէկ ինձ և մէկ Արբահամին նայելով։

— Արամ, — դիմեց ինձ Արբահամը։ — անյարմար բան ես անում։ Ես պիտի զնամ, եւ զու՞ւ չէ, որ պիտի արգիւես։

— Ոչ, չպիտի զնաս, — նորից ասացի ես, — ինդրում եմ իջնես վայր։

Արգէն ընկերներ էին հաւաքում մայթի վրայ և զարմացած դիտում էին վչճը։ Արբահամը ջղայնացած էր։ Զայնացած էր և՛ բժէշկը, որը այն քա՞ն իրաւոնք ուներ ինձ վրայ, որքան և՛ Արբահամը, որին չափից զուրս սիրում ու յարգում էի իմ պատանեկան օրերից սկսած։

Մէր վչճը Արբահամի հետ սկսեց սուր բնոյթ ստանալ։ Ես արգէն այնքա՞ն ջղայնացած էի, որ ոսներս գողում էին։

— Անհար է, Արբահամ, պիտի իջնես վայր։

— Դու չատ պատասխանատու։ Եւ մինչեւ իսկ անպիտան բան ես անում։ Հասկանո՞ւմ ես, — ձանձը բարձրացրեց Արբահամը։

— Պայմանաժամամբ մօտենում է, — ասաց բժէշկը, — վերջ տուէք ձեր վէճին։

— Քչիր, — հրամայեց Արբահամը։

Գիծ Թաղոսը մի շարժում արաւ, որից մեքենավարը հասկացաւ, որ էի կարող տեղից շարժուել։

Ես բոնեցի Արբահամի ձեռքը եւ սկսեցի ուժով վայր քաշել։ Նա ըստիպուած եղաւ ուտքը զարտ զնել ինքնաշարժից։ Նրա վայր զալուց յետոյ, իմ թափով քաշելու և ձեռքը բաց թողնելուս հետեւանքով, նա քիչ մնաց փռուէր մայթի վրայ։ Բայց ընկերները բռնեցին նրան։

— Եթէ ես ուժ ու իրաւունք ունենայի, — ասացի ես բժիշկին, — քեզ էլ կարգիլիք զնալ:

Բժիշկը զայրացած մի քանի որակումներ տուեց ինձ և հրամայեց մեռնավարին քչել ինքնաշարժը:

Թաղոսը արդէն իր զրաւած զիրքը թողել էր, և մեքենավարը քչեց ինքնաշարժը:

Արրահամը սաստիկ յուղուած ու ջղայնացած, պորաֆիլը թեւի տակ, արագ-արագ մտաւ բակը ու զնաց ու զիզ Կ. Կոմիտէի սենեակը:

Լուրը տարածուել էր, և ընկերները զարմացած քննում էին զիպը: Ես հետեւեցի Արրահամին և մտայ Կ. Կոմիտէի սենեակը:

Գոհ էի արածից, բայց միաժամանակ զժողով էի, որ պարտաւորուել էի այդ կոպիտ քայլն առնել, սակայն ոչ մի զջում չունէի:

Սեղանի յետեւում իր նստած տեղից նայում էր Պապաշան: Ակնոցները հանեց և նայեց ներքեւից վերև Արրահամին զարմացած:

— Պատգամաւորութիւնը չմեկնե՞ց:

Ներս էին եկել նստ. մի քանի ակնանատես ընկերներ:

— Ինչողէ՞ս թէ չմեկնեց, զնացին, — ասաց Արրահամը, խիստ բորբոքած և, առանց ինձ նայելու, պատմեց զէպքը՝ սպառնալով զատի տալ ինձ:

Մտեզծուել էր մի ճնշչ մթնոլորտ: Տեղի էր ունեցել մի անթոյլատրելի արարք մի կրտսեր ընկերոջ կողմից հանդէս աւագ ընկերոջ, այն էլ այդպիսի պատասխանառու պայմաններում:

Զգում էի, որ ընկերները զժողով էին ինձանից, իսկ Պապաշան նայում էր ինձ խիստ զժողութիւն արտայալուով հայեացով:

— Կարող էք պատժել ինձ, բայց ևս չեմ զջում:

Այդ միջոցին ներս մտաւ Ծոստոմը երկու ընկերների հետ: Թւում էր թէ նո մի բան զիտէր: Բոլորի զէմքին նայեց: Բոլորն էլ զզացին, որ նրա զալը պիտի փրկէր կացութիւնը:

Արրահամը նրան էլ պատմեց զէպքը և, աւելի յուղուելով, ասաց.

— Թուրքերը զիտեն, որ ևս պիտի զիխաւորէի պատուիրակութիւնը: Դա նրանց ցանկութիւնն էր: Այժմ, աւենելով իմ բացակայութիւնս, ուրիշ մնթաղրութիւններ պիտի անեն, ձևոնարկը պիտի վիժի և պիտի աւելի բարդանաց դրութիւնը: Եւ այս բոլորը Արամի անխորհորդ եւ անխոնիմ արարքի հետեւանքով: Պէտք է նման արարքների կրկնութեան առաջն առնել, — բացազանչեց Արրահամը:

— Էա՛ւ, Արրահամ, խազազոիր, մի քիչ հանգստացիր: Նրա արածը վերազրիր նրա երիտասարդական անկեղծ և աղնիւ բռնկումին: Ես երէկ չկարուցաց հետզ խօսել, որ յետ կենացիր այդ մտաղրութիւնից: Մի՛ յուղուիր, քո չգնալզ կը մեղմէնք ուրիշ կերպով:

— Դու քո պաշտպանութեան տակ ես առնում նրան: Բայց ևս պիտի պահանջեմ պատժել նրան:

Ես լուս էի: Զէկ էլ կարող խօսել: Յուղմունքս հասել էր ծայր աստիճանի: Քիչ էր մնում, որ պոռթկայի: Այդ նկատել էր Ծոստոմը և այն-

պիսի հայեացք ձգես վրաս , որ ասելիքս մոռացայ , միայն արցունքները ժայթքեցին աչքերեց :

Այդ միջոցին հեռախօսի զանգը հնձեց : Լսելի էր նաև զրաի՝ սպասման սենեակի հեռախօսի զանգը : Միբարքեանը վերցրեց ընկալուշը , յանկարծ գունատուց և շփոթուած կմկմաց .

— Ի՞նչ , կրա՞ի բացին . . . Ովքե՞ր են սպաննուել . . .

Ելեկտրականացած մթնոլորտ ստեղծուեց :

Դուռը ուժգին բացուեց , և ներս ընկաւ Ներսիսեանը :

— Աղէտ , ոճիր , սպանութիւն . . . ինքնաշարժի վրայ կրակ են բացել , և հաշտութեան պատուիբակութիւնը կոտորուած է թուրքերի կողմից :

Լուրը ռումրի պէս պայթեց : Յուզմունք անսահման էր : Թէ՛ թժէկը իմ շատ սիրելին էր և թէ՛ Դնենեժկինը իմ յեղափոխական ընկերը : Ընկայ երկարէ սնառուկի վրայ հեծկլուով :

Ռոստոմը մօտեցաւ ինձ եւ , ձեռը զնելով ուսիս , ասաց .

— Հասկանում եմ քեզ , Արամ : Մւնք մեծ կորուստ ունեցանք յանձին թժէկին , իսկ զու կորցրիր երկուսին , նաև . Դնենեժկինին : Բայց մի՛ մոռանայ , որ փրկեցիր Արքահամին :

Երբ մի քիչ հանգստացել էի եւ նայեցի շուրջս , սենեակում մնացել էինք ես ու Պապաշան : Արքահամը բարձրացել էր վերեւ , իսկ ընկերները չտապել էին աղէտի վայրը :

Կէս ժամ չանցած , պատուիբակութեան անդամների դիակները Տեկոնիքական Ընկերութեան սրահումն էին : Բազուն սպում էր իր թանկագին կորուստը :

Պարզուեց , որ Բարխանսկայա փողոցի ծայրին , ուր փողոցը թեքւում է դէսպի Շամախինսկայա , թէ՛ անկիւնի երկու կողմերի տների կտորների վրայ եւ թէ՛ Ղուրի-Մէյտանի բերանին զարան մտած թուրքերը , պատուիբակութեան ինքնաշարժի երեւալուն պէս , խաչաձեւ կրակի մէջ էին առել այն եւ բոլոր պատուիբակներին կոտորել :

Մեր ռազմիկները , այդ լուրն առնելուն պէս , այնպիսի կատաղի յարձակումներ գործեցին բոլոր ճակատներում , որ թշնամին մեծ կորուստներով սկսեց փախչել : Հետեւեալ օրը թուրքերից խառն պատգամաւորութիւն (կրօնաւորներ , բանուորներ եւ գամառականներ) սպիտակ դրոշներով մտաւ . Հայկական թաղերը՝ «Հաշտութիւն , Հաշտութիւն աղաղակելով» : Մեր պատղամաւորութեան կոտորածը իրենք՝ թուրքերն էլ էին պախարակում :

Կ . Կոմիտէի յաջորդ նիստին Արքահամը ինդիրը դրեց քննութեան : Թէեւ իմ Հակակարպապահական քայլի հետեւանքով ինքը փրկուել էր , բայց նա պահանջում էր , որ ես պատժուէի :

Խնդիրը փակուեց Սարգիս Արքահամի բանաձեւով : Համաձայն այդ բանաձեւին , քանի որ Կ . Կոմիտէն յատուկ որոշում չէր տուած Արքահամի՝ պատուիբակութեան մասնակցելու մասին , ես , ուրեմն , կուսակցական կարգապահութեան դէմ չէի մեղանչած . . .

## «ՊԱՐԱՊ ՏՂԱՅԻՆ ՃԱԿԱԾ ՈՒՂԱՐԿԻՐ»

Մի երեկոյ կայծակի արտագութեամբ լուր տարածուեց, որ Ռոստոմի, Արքահամի և զօր. Բագրատունու վրայ մահափորձ է կատարուել:

Անմիջապէս հասանք զէտքի վայրը: Բայց արդէն ուշ էր: Վիրաւորուած զօրավար Բագրատունուն արդէն տարել էին հիւանդանոց: Դէպքը պատահէլ էր Վերիննէ-Պրիուսկայա փողոցում, Ռեմելքնայա փողոցից քիչ վեր, զէպի կայսն տանող բլուրի վրայ, Երկյարկանի տան առջեւ, ուր բնակւում էր Արքահամը:

Արքահամի մօտ յաճախ էին ճաշում զօրավարը և Ռոստոմը: Նրանք ուշ էին ճաշում, ապա, մի ժամի շափ հանգստանալուց յետոյ, զուրս էին զալիս տնից միասին՝ ամէն մէկը իր գործին զնալու համար: Այդ օրը, երբ Նրանք զուրս էին զալիս, Ռոստոմը մի քիչ ուշացել էր: Դեռ աստիճաններից վրայ նա լսել էր ատրճանակի ձայնը, վագել էր փողոց և տեսել, որ զօրավարը բնկած էր զետին, Արքահամը զրկած էր նրա վլուխը, իսկ ոճրագործները փախած էին:

Այդ տունը զանուում էր Տրդ Թաղամասում, որ հայկական էր: Հարեւաններն իսկոյն զուրս էին թափուել տներից, սակայն կրակողներին չէին կարողացել բռնել:

Զօրավարը իսկոյն փոխադրուել էր հիւանդանոց: Բայց իր վէրքը այնպէս էր, որ զրկուեց ոտքից, ծնկից ցած:

Գնդակներից մէկը ծակել էր Արքահամի զլիարկը: Դրանից ենթադրում էինք, որ թուրքերի յարձակման նշանակչութ եղել էր եւ նա, զուցէ նաեւ Ռոստոմը:



Նոյն երեկոյեան, խօսելով բնկերների հետ, յայտնեցի, որ մի մի պահակ պիտի նշանակեմ երկու աւագ ընկերների վրայ, քանի որ նրանք նորից կարող են յարձակման ենթարկուել:

Յաջորդ օրը Արքահամը նկատել էր իրեն հետեւող մարտիկին: Նա հասկացել էր՝ համարելով շատ բնական նախազգուշութիւն մեր կողմից:

Ռոստոմն էլ հենց առաօտեան նկատել էր, որ մէկը իրեն է հետեւում: Տելերոննայա փողոցում մտել էր մի բակ, ապա զուրս գալով ստուգել էր, որ այդ մի հայ տղայ է եւ իրեն հսկելու պաշտօն ունի, ուստի այլ եւս չէր փորձել իր հետքը կորցնելու:

Յաջորդ օրը, կէսօրին, Ռոստոմը մտաւ կ. Կոմիտէի զրասենեակը, ինձ կանչեց մի անկին և ասաց.

— Այստեղ փողոցներում, մի բարձրահասակ, նիշար տղայ թափառուում է անօրոք: Երէկ ամբողջ օրը թափառել է, հիմա նորից տեսայ թափառելիս: Ի՞նչ իմաստ ունի այդ երիտասարդի պարապ ման գալը, երբ ճակատում այնքա՞ն կարիք ունինք մարտիկների: Չե՞ս կարծում, որ աւելի լւա է ուղարկել նրան ճակատ:

Աւելորդ էր համարում մի մարտիկի զրազեցնել իրենով:

Երեկոյեան, Կ. Կոմիտէի նիստից յետոյ, Խոստումը նայեց ինձ ու ասաց .

— Այս տղան զես թափառում է :

Այս անգամ իր ձայնի մէջ մի քիչ սաստ կար :

Յաջորդ օրը փոխեցի հակիշին և պատուիրեցի, որ խիստ զգոյշ լինի եւ շրոնուի : Պատմեցի նրան նախորդ հակիշի անզգուշութիւնը եւ ժամանուելը :

Մի առժամանակ հակողութիւնը պահուեց : Բայց յետոյ, երբ արդէն աւելորդ սեպուեց նաեւ Արքահամի կողմից, վերացրինք :

## Կ. ԿՈՄԻՏԵՒ ԺՈՂՈՎԱՏԵՂԻՆ ՓՈԽԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

Դա այն օրերին էր, երբ հրապարակուել էր անզլիացիների Յազու գալու խնդիրը : Բանուորական Խորհրդում արդէն սկսուել էր Ելեկտրականացած մթնոլորտ : Շահումեանի վարչութեան վերջին օրերին էր : Նա զես չէր ընկել, բայց ընկնելու վրայ էր : Այս մասին կը խօսիիք մանրամասն : Ցենտրոկասպիայի (Կասպից ծովի կենտրոնի) նաւաստիների բոլշևիկները մի կողմից, եւ Պետրովի տղաները միւս կողմից, ևն թակայ բոլշևիկների եւ ճախիսկների պրոպագանդային, գալաքած էին մեր զէմ եւ սպառնում էին պայթեցնել Դաշնակցութեան կենտրոնը եւ մեզ էլ օդը հանել : Նրանց յայունել էին, որ Դաշնակցութիւնը ուզում է Բազու բերել անզլիացիներին՝ խորհրդագյին կառավարութիւնը տապալելու եւ Բազուն զնելու համար ձերժակ սուսների տրամադրութեան տակ :

Ներսէ Զազէթեանը, որ Պործագիր Կոմիտէի (Բազուի փախստական հեխանութեան) հետախուզական բաժնի պետն էր, յայտնել էր Կ. Կոմիտէին, որ այդ օրը, մանաւանդ գիշերը պէտք էր շատ զգոյշ լինել :

Կ. Կոմիտէն գտնուում էր Կոլտուրական Միութեան նոր չէնքում, Տելերոննայա փողոցին մօտ, Խեմանութինայա փողոցի վրայ, մի հակայ հինգ յարկանի շէնքի մէջ, որի ամրոցը ներքնայարկը լիքն էր ամէն տեսակի ուղամաժթերքով : Ներքնայարկը փողոց էր նայում մայթից մօտ մէկ մետր բարձր պատուհաններով :

Զինուորականները ասում էին, որ բաւական է մի քանի զնդակ կամ սումք ներս նետուի այդ պատու հաններից, օգը կը ցնդի ամրոցը չէնքը : Գետրովի տղաները և Ցենտրոկասպիայի նաւաստիները կ'անէին այդ, Եթէ, իրօք, ուզէին իրագործել իրենց սպառնալիքը :

Ցենտրոկասպիայում և Պետրովի մօտ աշխատանք էր տարւում՝ այդ կամացնելու համար : Միտքամանակ շէնքի մեր պահակագունդը ուժեղացուած էր :

Կ. Կոմիտէի նախագահը՝ Պապաչան, անշուշտ մի քանի ընկերների հետ խորհրդակցելով, այդ երեկոյեան ժողովը փոխադրել էր Շրդ Բազամասի կոմիտէի զրասենեակը : (Տելեքոննայա փողոցի վրայ, Ստանիսլաւ բակայա փողոցին մօտիկ) :

Ճաշից յետոյ, չեմ յիշում ի՞նչ գործով, Հայոց Գիւղ էի զնացել : Երբ վերադարձայ, Կ. Կոմիտէի շէնքի պահակագունդը յայտնեց, որ ժողովի տեղը

փոխուած է : Հասկացայ, որ պատճառը այն սպառնալիքն է, որի մասին հազորդել էր Ն. Ջաղջթևանը :

Գնացի ժողովի : Կ. Կոմիտէն հաւաքուած էր : Օրակարգի նիւթն էր անգլիացիներին Բագու բերելու խնդիրը եւ զրա հետ կապուած պրովակաւունը մեր հասցէին :

Խոստոմը բացակայում էր : Ժողովը չէին սկսում՝ սպասելով նրան : Մէկ էլ հնչեց հետախօսի զանգը, որը զտնում էր սեղանի վրայ : Ընկալուշը վերցրեց Պապաշան : Նա սկսեց բացատրութիւններ տալ ժողովատեղին փոխելու պատճանների մասին :

Հասկնալի էր, որ խօսողը Խոստոմն էր : Երեւում էր, որ Պապաշան չի կարողանում համոզել խօսակցին : Վերջը շատ մեղանոր ձայնով ասաց .

— Լաւ, բայ, — և ընկալուր զրեց ցած :

— Վե՛ր կացէք, յև գնանք մէր չէնքը :

— Հը՞ ի՞նչ կայ, ո՞վ էր :

— Դէ՛, Խոստոմն էր, չէ՞՞ք հասկանում : Ասաց . «Անմիջապէս վերապարձէք» :

— Բայց դու չկարողացա՞ր բացատրել կացութիւնը, — հարցրեց Արքահամը :

— Էլ ինչպէ՞ս բացատրէի : լսել չէր ցանկանում :

— Դէ՛, մենք լսում էինք՝ ինչո՞ւ էիր բացատրում :

— Հիմա մե՞նք վիճենք : Ասում էր : «Անմիջապէս եկէ՛ք», պրծաւ : Ել՛ք, — ասաց առ, տեղից ելլելով, առաջ անցաւ :

Դուրս եկանք : Երջապատած Պապաշային՝ զնում էինք :

— Զէր թողնում, որ խօսեմ : Ասում էր այս հնկայ չէնքը ամայացրել էք : Հարիւրաւոր մարդիկ կարող են դալ, թէկուզ ամենաշնչին խնդրով եւ ձևուունայն վերապանակ : Մի՞սէ վայել է Հ. Յ. Դաշնակցութեան զեկավար մարմնին վախենալ ու թագնուել այս ճակատազրական օրերին, — պատճում էր Պապաշան :

Հասանիք մեր չէնքը : Մեծ թուով ընկերներ կային՝ զանազան խնդիրներով եկած : Խոստոմը չէնքումն էր : Ասուի ևւ պահակը չէր արգիլում եկող-ներին ներս մտնելու : Մէկ-մէկ մտանք կ. Կոմիտէի սենեակը :

Խոստոմը նստած էր անկիւնում, հեռախօսի տակը զրած սնտուկի վըրայ : Դա մեր արխիվի սնտուկն էր, որի վրայ ժողովների ժամանակ միշտ սիրում էր նստել Խոստոմը :

Պապաշան նստեց իր տեղում, քթին զրեց կրկնակի ակնոցը եւ ասաց .

— Ժողովը յայտարարում եմ բացուած :

Էլ ոչ մի խօսք չեղաւ տեղի ունեցած դէպքի մասին :

Մեր մուտքի ժամանակ Խոստոմը այնպիսի արտայայտութիւն ունէր, որ կարծես ոչինչ չէր պատահէլ : Եթոյ իմացանք, որ Խոստոմը Պապաշանին եւ Արքահամին նկատողութիւն էր արել՝ ասելով, որ Կ. Կոմիտէի արած քայլը անթոյլարելի էր թէ՛ իր զիրքի եւ թէ կուսակցական-յեղափոխական զաստիքարակութեան տեսակէտից :

## ԹԱԿՈՍ ԱՄԻՐԵԱՆԻ ԴԵՊՔԸ

Ճակատագրական ժամեր էր ապրում կռուսզ Բագուն։ Ապայակոյտի (շտարի) պետ գնդապետ Ղազարեանը յայտնել էր թուստոմին և Արբահամբին, որ Բագուի ճակատագրիր կարող էր վճռուել մի քանի ժամերց և և միայն մի խենթ ելոյթ կարող էր փրկել Բագուն։

Այդ խիստի ու խենթ ելոյթը պէտք էր անմիջապէս անել։ Մի խումբ ձիւորներ պիտի անցնէին Գայլի Դրունքը (Բագուն շրջապատող լեռնաշղթայի թիկունքը և երկաթուղու ճանապարհի վրայ), պիտի մանէին խորքը, ապա, այդ կէտից ցրուելով այս ու ձախ, միաժամանակ ու յանկարծակի պիտի արջաւէին զէպի թշնամու թիկունքը, կրակ բանային ու խուճապի մասնէին թըշնամուն։ Այս ելոյթը պատճառ կը զանար, որ թշնամին խուճապահար նահանջէր և այդ ժամանակ մեր ճակատում եղած զօրամասերը, հակայար ճակման դիմելով, թշնամուն կը հետապնդէին, և այդ կերպով քաղաքը կը փրկուէր։

Այդպիսի մի ճիւոր ջոկատ գնդ։ Ղազարեանը ինքը չէր կարողացել զտնել և միան դաշնակցականներից կազմուած մի ճիւոր խումբ կարող էր մահուան զնալ և այդ ելոյթը կատարել։

Արբահամը եկել էր այդ խնդրով զրադելու, իսկ թուստոմը մնացել էր գնդապետ Ղազարեանի և զօրավար Բագրատունու մօտ՝ ուրիշ որոնումներ անելու համար։

Զիւորների մի այդպիսի խումբ կազմելու մասին Արբահամը սկսեց բանակցել մեր մարտական զեկավարներից հետ, որոնք իրենց կողմից, դիմում էին այս ու այն ճիւոր զներից կանչելիք մարտիկներին, երբ պարզուեց, որ Թագոս Ամիրեանը իր ճիւորներով քաղաքումն է և ճաշում է «Նոր Աշխարհ» ճաշարանի ներքնայարկում։

Սա այս համբաւաւոր Թագոս Ամիրովն էր, որ առաջ եղել էր մեր մարտիկներից, յետոյ զառել էր անիշխանական և, կազմելով «Կանաչ Հարիւրեակ», զրամացրթութեամբ էր զրազուել՝ ահաբեկելով Բագուի Հարուսաներին։ Այժմ նա Բագում էր, մանակցում էր պատերազմական զործողութիւններին, ունէր երկու տասնեակից աւելի շատ խիզախ Գանձակեցի և Ղարաբաղցի մարտիկներ, մի քանի հերոս երիտասարդ սպաներ, բոլորն էլ ճիւոր և մինչեւ ատամները զինուած։

Արբահամը հեռախօսով հաղորդեց թուստոմին, որ Թագոսը իր խմբով նստած է «Նոր Աշխարհ» ճաշարանում և խորոված է ուտում ու խմում, և որ ինքը պիտի փորձէ կանչել նրան՝ այդ զործը նրան յանձնելու համար։

Արբահամը կանչում է Կոմիտէի շնչնքի պահակապետ Մկրտիչին, մեր խիզախ ընկերներից, և յանձնարարում նրան զնալ յիշեալ ճաշարանը ու յայտնել Թագոսին, որ Ազգային Խորհրդի նախապահ Արբահամ Գիւլանդանեանը խնդրում է նրան շատ կարեւոր գործով գալ Հ. Յ. Դաշնակցութեան շնչնքը։

Մկրտիչը գնաց : Նա իջել էր «Նոր Աշխարհ» ճաշարանի ընդարձակ սը-

բահը, ուր մի քանի իրար միացրած սեղանների շուրջ նստած են եղել թաղումը եւ իր զինուորները:

— Պարոն Թաղոս, — ասել էր Մկրտիչը, — Ազգային Խորհրդի նախագահ պրեն. Արքահամ Գիւլսանդանեանը կարևոր զործով խնդրում է շտագ դնալ Դաշնակցութեան թիւրոն:

— Տօ, քո Ազգային Խորհրդորդն էլ, քո Արքահամն էլ ու Բիւրոն էլ. կորի՞ր էստեղից, քանի լւաշդ չեմ փռել...

— Ամբ ուզում է բան ասել...

— Դուրս, շուա, շանորդի, — զոռում է Թաղոսը:

Տղաները վեր են թռչում տեղերից, բայց Մկրտիչը տեղի է տալիս ու հեռանում:

Ո՞վ չէր ճանաչում Արքահամին: Թաղոսը շատ էր յարգում նրան, ինչպէս ե՛ւ իր զինուորները: Բայց ժամանակները փոխուել էին, տրամադրութիւնները ուրիշ էին, և Թաղոսն էլ խնձած էր:

Մկրտիչը զեկուցում է Արքահամին Եղելութիւնը: Արքահամը հեռախօսով յայտնում է այդ մասին նոստառմին եւ տեղեկացնում, որ պիտի փորձէ երկրորդ անգամ ուղարկել Մկրտիչին:

— Նա հարրած է, պարոն Արքահամ, — ուզում է հրաժարուել Մկրտիչը:

— Ոչինչ, զնա՛, ասա, որ շատ կարեւոր է եւ խնդրում եմ անպայման դայ:

Մկրտիչը երկրորդ անգամ է զնում: Հազիւ աստիճաններից ցած է իշխում, երբ Թաղոսը քաշում է աստրանակը.

— Տօ, շան լակոս, էլի երեւացի՞ր: Մէջքդ ցոյց տուր, թէ չէ՝ տառը զնղակն էլ կ'արձակեմ վրատ:

Մկրտիչը ոչինչ ասել չի կարողանում եւ ընդհանուր հայնոյանքների ուղեկցութեամբ հեռանում է: Այն պահին, երբ նա ներս է մտնում Դաշնակցութեան չենքը, նրա յետեւից ներս է զալիս նոստառմը:

— Նրանք բոլորը հարրած են, — ասում է Մկրտիչը. — Ճթողին իսկ խօսել:

— Մեր միակ փրկութիւնը նա է, էն էլ լակած է, — ասում է Արքահամը. — Ի՞նչ անենք, — հարցնում է նա նոստառմին:

— Դրանց ձիեր կան, — զիմում է նոստառմը Մկրտիչին, — թոփի մէկի վրայ եւ զնա՛ Թաղոսի մօտ եւ ասա, որ նոստառմը Բիւրոյում ուզում է քեզ անմիջապէս տեսնել:

Մկրտիչը զոյնը նետում է վախից, բայց ոչինչ չի ասում եւ զուրս է զալիս սենեակից:

— Տղերք, ես զիւլի (զնղակի) բաժին եղայ, մնաք բարեւ, — ասում է Մկրտիչը ընկերներին եւ, հեծնելով առաջին ձին, մեկնում է:

— Զե՞ս կարծում, թէ լաւ կը լինի, որ մի հարցնես թէ ի՞նչ են արել մերոնք եւ քանի՞ն ձիաւոր են համախմբել, — հարցնում է նոստառմը Արքահամին:

— Այս՛, այս՛, ես կը զնամ Ազգային Խորհրդի գրասենեակը եւ այս-

**տեղից կը խօսիմ**, — ասում է Արքահամբ և դուրս գալիս :

Երբ Մկրտիչը «Նոր Աշխարհ»ի աստիճանների վրայ է երեսում կրկին, մեծ ազմուկ է փրթում, և մի քանի ատրճանակներ են ուզգուում դէպի նա:

— Ռոստոմը, Ռոստոմը, — սարսափահար կոչում է Մկրտիչը:

— Սպասեցէ՛ք, — զուռում է Թագուր և սովոր ելում:

— Առաջ արք, յակոս ի՞նչ ասացիք:

— Ռոստոմը ուզում է քեզ տեսնել: Բիւրոյում սպասում է, — Հաղիւ

կարողանում է ասել Մկրտիչը:

— Ռոստոմը, ասում ես:

— Այո՛, ինքը՝ Ռոստոմը:

— Զե՞ս խարում, շան որդի:

— Ազնիւ խօսք...

Թագուր մոայլում է, ապա դէմում է տղաներին:

— Տղերք, ձիերը, — ասում է ու առաջ անցնում:

Տղաները ազմէելով վեր են ցատկում և հւահւում Թագոսին:

Խմբի ձիերը պատրաստ՝ փողոցում էին: Բոյորը ցատկում են ձիերի վրայ և այնպէս սրանում, որ Մկրտիչը մնում է յահեւում:

Բիւրոյի փողոցում ձիերի սարսափելի դրդին լսուեց:

— Թագուր եկաւ...

Մենք՝ երիտասարդներս կոպանք պատերին: Վայրենին հարրած էր և գալիս էր վայրենիների հետ, ինչ ասես որ չէր կարող պատահել:

Դրովդոսիինով մինչևս ատամները դիմուած մի խումբ մարդկի ներս խուժեցին սպասման սրանը: Թագոսը բացեց ժաղովի սենեակի դուռը և ներս մտաւ, դէմքը կարծրած, աշքերը արինակայած: Իր հետ ներս մտան երկու սպաներ, որոնք յետոյ եկան Հայուստան և հերոսարար ընկան Դարաքիլիւսայի ճակատում:

Ռոստոմը, արմուկով յենաւած զրասելդանին, ձեռը ծնօտին, ցուցամտացի մէջ միբռած, ժպտայից բնդունեց Թագոսին:

Թագոսը և բնկերները զինուորական բարեւ տուին:

— Այս ճակատազրական ժամբն Արքահամբ քեզ կանչում է, շես զալիս, — ասաց Ռոստոմը ժպտալով:

— Արքահամբ ինձ ուզում է այն ժամանակ, երբ ևս հաղիւ հանգստանալու և ես կոկորդս թրջելու վրա եմ, — պատասխանեց Թագոսը և, նորից զինուորական պատուի կեցած, աւելացրեց: — Լսում եմ հրամանդ:

«Ճամանդ» բառը, կարծես, զիսաւորեալ կերպով չեշտեց, ասես ամել ուզելով, որ չն համանուի եմ եկել:

Ռոստոմը մի աթոռ քաշեց սենեակի տնկիւնը և նշան արեց Թագոսին, որ աթոռ վերցը ու նստի: Եւ նրանք սկսեցին մեզմ ձայնով խօսել: Թագոսը հարցումներ է անում և լսում Ռոստոմին շատ լուրջ, ասես մի բաժակ էլ խմած չէր:

Մէկ էլ Թագոսը շրջուեց դէպի իր սպաները և հարցրեց:

— Յուսիկ, քանի՞ ձիաւոր կարող ես հանել դէպի մահ:

— Ինձանով 30 հոգի, պարոն Թագոս:

— Բա ե՞ս, յակոս:

— 31 հոդի, — ժպատաց Յուսիկը:

Նորից շարունակուեց Ռոստոմի և Թաղոսի խորհրդակցութիւնը: Երեւի, Ռոստոմը նրան օգնական ուժեր էր առաջարկում:

— Ոչ, պարօն Ռոստոմ, ևս մենակ, իմ տղաներով միայն, — ասաց Թաղոսը և ելաւ ոտքի:

— Բւրեմն, Թաղոս, անմիջապէս:

— Անմիջապէս — ասաց Թաղոսը և, դառնայով Յուսիկին, — բոլորդ պատրաստ:

Յուսիկ բացեց զուռը և զռչեց.

— Բոլորը պատրաստ ձիերի վրայ...

— Եթէ ուղմամթերքի պէտք ունես, վերցրու ներքեւում պահեստապետից: Զենապումբեր շատ ունեցիր:

— Ամէն ինչ ունինք, բայց ուումբեր կը վերցնենք Հենց հիմա, — ասաց Թաղոսը և կարծես չըր իմանում ինչպէ՞ս հրաժեշտ տար:

Ռոստոմը հասկացաւ և ձեռք մեկնեց՝ տսելով.

— Յաջողութիւն, Թաղոս, քեզ և տղաներիդ:

Թաղոսը հաճոյքով թօթուեց Ռոստոմի ձեռք, ապա նորից դինուորական ձգուեց և տարաւ ճակատին.

— Պատիւ ունեմ:

Նայեց բոլորիս, որ ոտքի վրայ հիացմունքով դիտում էինք մահուան զնացող հերոսին, և զնաց:

Նոյնը կրկնեցին իր երկու զինակիցները:

— Ես զնում եմ զնզապէտ Ղազարեանի մօտ: Կարգադրիր, որ Հեռախոսը անընդհատ կապուած պահուի շտարի հետ և ճակատից եկող լուրերն էլ իսկոյն մեզ հազորդուին, — ասաց Ռոստոմը և զուրբ ելաւ սենեակից:

\*\*\*

Ի՞նչ լարուած վիճակ էր, նկարագրել չի կարելի: Մենք, որ իրազեկ էինք կացութեան, անասելիօրէն ճնշուած վիճակում էինք: Իրար հետ խօսել չէինք կարողանում: Թաղաքի և հայութեան ճակատազիրը այդ կէս-հարրած, բայց խիզախ մարգանց ձեռքումն էր: Պիտի կարողանայի՞ն արդեօք անցնել Գայլի Դրունքը, թէ պիտի ուշանային կամ բռնուէին թշնամու կողմից:

Ռոստոմը հեռախոսեց, որ ինքը շտարումն է: Արքահամը մի քանի անգամ վեր ու վար արաւ վերեւի յարկից մեզ մօտ՝ լուր առնելու համար: Թէեւ վստահ էր, որ լուրը անմիջապէս իրեն կը տրուէր, բայց և այնպէս անհանդիսու էր ու ինքն էր զալիս ստուգելու:

Որքա՞ն տեւեց մեր սպասողական վիճակը: Երկո՞ւ թէ երեք ժամ, չեմ կարող ասել, որովհետեւ մեզ յաւիտենականութիւն թուեց այդ ժամանակը: Մէս էլ շտարից հաղորդեցին.

— Խումբը անցել է Գայլի Դրունքը: Գնդապետ Ղազարեանը իննթի պէս վեր-վեր է թռչում և գոչում է՝ գփրկուած ենք, յաղթութիւն:

Մէկը իսկոյն պոկուեց տեղից և սրացաւ դէպի վերի յարկը՝ լուրը Արքաշմին հազորդելու :

Նորից ճնշող, սպասողական վիճակ : Բոլորիս մտածումը նոյնն էր : Չինի՞ թէ բոնոի Թագոսի խոմբը թշնամու կողմից :

Մէկ էլ հեռախօսը հազորդեց Բայիլովի դիրքերից .

— Թշնամու թիկունքից հրացանաձգութիւն է լաւում : Թշնամին նահանջում է, ուռուա՛...

Միւս հեռախօսով չտարից յայտնում էին .

— Թշնամին շփոթի է մասնուել, տեղ-տեղ նահանջ է նկատում : Բալաջարից հազորդում էին .

— Մեզ անյայտ պատճառներով թշնամին նահանջում է :

Եւ, վերջապէս, չտարից հազորդեցին .

— Թշնամին նահանջում է ամբողջ ձակատում : Մերոնք հակայարձակ-ժան անցան :

Մեր ուրախութեան սահման չկար : Շատեր գրկախառնում էին : Ու-մանց աչքերին արցունքներ կային : Պապաշան ակնոցները հանել եւ աչքերն է սրբում :

Թշնամին նահանջեց տասը վերստի չափ, որոշ տեղեր աւելի, եւ դեռ ամիսներ քաղաքը մնաց անվտանգ :



Կէս գիշերը անց էր, մենք դեռ չէինք ցրուել : Կ. կոմիտէի հերթական նիստը վերջացել էր, թէեւ մի քանի անգամ բնդհատուել էր Թագոսի խմբի խիզախութեան պատճութիւնով : Բայց զեռ ո՞ւր էր նա, չզիտէնք : Ակներեւ էր, որ Ըստառմք մտահող էր : Թագոսը իր խոմբով կարող էր բնկած լինել խաչաձեւ կրտկի տակ եւ մեծ զոհեր տուած լինել . զոյցէ ինքն էլ էր սպաննուել : Աշխնչ յայտնի չէր եւ հազի թէ յայտնուէր մինչեւ առաօտ :

Հետաքրքրական էր, սակայն, Ըստառմի պատճութիւնը դէպէի ժամանել :

«Իրօք, գրութիւնը կրիտիքական էր, իսկ Ղաղարեանի ծրագիրը՝ Հրաշալիք : Երբ նրան յայտնացին, որ Թագոսը արշաւեց, էլ հեռախօսից պոկ չեկաւ : Կարգագրութիւններ էր անում ձակատի բոլոր մասերին : Թիկունքը անցնող տղաների դիմացը, մէր դիրքերում, կազմել էր տուել մի ուժեղ ըլ-ուունցք, որպէսզի թշնամու թիկունքից հրացանաձգութիւնը լսելուն պէս՝ զնացիրային, ապա հրացանային անգամկար կրակ տեղային եւ յարձակուէին թշնամու վրայ : Միաժամանակ թշնամու աջ թեւից, Բայիլով-Բիրիէյրահից եւ ձախ թեւից, Խուրդուլայի զիմացից մինչեւ Բալաջարի, պատրաստում էին հակայարձակում զործելու :

«Եւու էինք երեք էլ : Ձակատից նկող զեկուցումները Ղաղարեանը հազորդում էր մեզ շշուկով, կարծես թէ ննջեցնալ կար հարեւան սենեակում : Մէկ էլ, երբ լուր առաւ, որ Թագոսը իր ձիաւորներով անփորձ անցել է Գայլի Դրունքը, Ղաղարեանը վեր թռաւ, սկսեց ծափ տալ եւ խենթի պէս Թռչկոտել՝ ասելով . «Յաղթութիւն, փրկուած ենք» :

«— Թշնամու թիկունքում համազարկի ձայն էր լսում, — յայտնեց Բայիլովը, — թշնամու ճակատում շփոթ է երևում:

«Այս լուրը ուղղակի խննթացքն Ղազարեանին, որը հեռախօսի մօտ կանգնած՝ պոսում էր մէկ այս ընկալուչի, մէկ միւս ընկալուչի մէջ:

«— Կրա'կ, ճակատից կրակ:

«Թւում էր, թէ ինքը ճակատումն է:

«— Գրոհ, միաժամանակ գրոհ, յարձակում ամբողջ ճակատով, — Հրամայեց նա:

«Մի փոքր անց ասաց.

«— Թշնամին նահանջում է: Մեր ամբողջ ճակատը շարժուեց եւ անցաւ յարձակումի:

«Այլին Ղազարեանին պէտք էր կապուել: Զօրավար Բաղրատունին իսկ ուզում էր ցատկուել իր կադ տեղովիք»:

Ռոստոմը շնորհաւորել էր եւ՝ զնզապէտին, եւ՝ զօրավարին ու եկել էր Կ. Կոմիտէի նիստին: Այնուհետեւ մի քանի անդամ կապուեց շարքի հետ եւ Հաւաստիացաւ, որ մեր առաջախազացումը շարունակելում էր եւ թշնամին նահանջում էր անկանոն: Թիւրոյի սենեկակում, Հերթապահն էր եւ չէնքում քնողներս: Ռոստոմը, Արքահամբ և Պապացան վերեւում՝ Ազգային նորհրդի սենեկակումն էին: Չորյոյ էին անում, երբ զուրոր բացուեց, եւ ներս եկաւ մի թիկնեղ, մինչև ատամները զինուած, փոշեթաթախ մարտիկ: Թաղոսի տպաներիցն էր:

— Պարոն Ռոստոմը կսեղ՞ ա, — հարցրեց:

— Ոչ: Եթէ զործ ունես, կր ճարենք, — պատասխանեցի:

— Այո՛, ինդիք ունի, կարեւոր ա:

— Գիա՛նք, — ասացի:

Եւ երեք ընկերներ, հետներս Հերթապահը, ու զեկցեցինք նրան վերիւ:

Դեռ Ռոստոմի քնելու ժամը չէր, բայց արդէն պահակը դրանն էր: Զարկի դուռը եւ ներս մտայ:

— Ճակատից եկած մի զինուոր կայ: Ուզում է ձեզ տեսնել, — ասոցի՝ դիմելով Ռոստոմին:

— Ներս բեր:

Մարտիկը ներս մտաւ եւ ձեռքը տարաւ ճակատին:

Յոյց տուի Ռոստոմին եւ ասացի:

— Հրամմեցէ՛ք, պարոն Ռոստոմը:

— Ճանաչում եմ, — ասաց զինուորը եւ դիմեց Ռոստոմին: — Պարոն թաղոս Ամիրօվը հրամայել ա, որ ասեմ ձեղ, թէ հրամանդ կատարել անք եւ եկել անք «Նոր Աշխարհ»ը՝ մեր ճաշը շարունակելու եւ խմում անք Ռոստոմին կենացը:

— Շատ շնորհակալ եմ: Ապրին թաղոսն էլ, իր տղաներն էլ, — Ժըստալով ասաց Ռոստոմը: Յոյս ունեմ, որ զոհ չէք տուել:

— Ոչ մի վիրաւոր չունենք: Բոլորը սաղսալամաթ են եւ ձեր հրամանին պատրաստ:

— Ապրիս, շատ ապրիք: Թաղոսին եւ տղերանց կ'ասես՝ կեցցէ՛ք:

Մարտիկը նորից ձեռքը տարաւ ճակատին.

— Պատիւ ունիմ, բարի զիշեր, — ասաց, յետ ու դարձ արաւ և զինուուրական քայլերով քայլեց անեւակից զորու:

Մեր եւ Թագոսի յարարերութիւնները այնքան էլ ջերմ չէին: Այդ առաջ էր գալիս թէ՛ նրա անցեալից եւ թէ մեր մարտական զեկավարների հետ ունեցած առանութիւնից:

— Այսուամենայնիւ, Թագոսը խիդախ եւ անփոխարինելի մարտիկ է: Նրան պէտք է զնահատել, — ասաց Ռոստոմը, — նրա այսօր կատարած գործը աննման ու եղակի հերոսութիւն էր:

Եւ իրօք, նա իր արդ արշաւով, որը ստոյդ մահուան գնալ էր, վըրկ կեց Բագուն, եւ թշնամին, քաղաքը մտնելու փոխարէն, նահանջեց, որով մէնք կարողացանք քաղաքը պահել դեռ երկար ժամանակ:

## ՌՈՍՏՈՄ ԵՒ ՇԱՀՈՒՄԵԱՆ

Ես չզիմամ, թէ մինչեւ Բագուի դէպքերը Ստեփան Շահումեանը որտե՞ղ էր հանդիպել Ռոստոմին եւ ինչ փոխյարարերութիւններ էին նրանք ունեցել իրար հետ: Սակայն, այն օրից, երբ Ռոստոմը եկաւ Բագու, Ստեփանը սկզբում, որպէս բոշեւիկների լիզրը, եւ յետոյ, որպէս կառավարութեան զլուխ, միշտ շիման մէջ էր մեզ եւ մասնաւորապէս Ռոստոմի հետ:

Յայտնի էր, որ Ստեփանը եւ իր շրջապատր խորին ակնածանք ունէին նրա հանդէպ: Նրա կարծիքը եւ առաջադրանքները Ստեփանի համար վճռական նշանակութիւն ունէին: Մէնք զիտէինք, որ բոլոր ծանրակշիռ խնդիրներում նա անմիջապէս զիմում էր Ռոստոմի օգնութեան:

Պատահէլ էր (եւ այդ մէնք ստոյդ զիտէինք), որ իրենց կեղրոնում, երբ մի խնդիրը լուծելու համար զժուարութեան էին յանդել, Շահումեանը խնդիրը առկախ էր թողել, ապա տակն ու վրայ էր արել քաղաքը, գաել էր Ռոստոմին եւ խորհրդակցել հետո:

Յիշում եմ նաև Գետրովի դէպքը: Սա մի հին, մի քիչ անիշխանական յեղափոխական էր, բայց իրեն բոլչեւիկ էր համարում: Ունէր մի շատ ուժեղ թնդանօթային ջոկատ, մի քանի սպաներ եւ մի երկու հարիւր զինուոր, բոլորը մինչեւ տատաները զինուած: Սրանք իրեն հույ հպատակ էին: Նա մի նաև էր խարսխած ծովիք ափին՝ վճռական գեր կատարելու համար ուազմածակատում եւ քաղաքում: Նա յաճախ չէր ենթարկում կառավարութեան կամ մերժում էր կատարել նրա ուազմական առաջադրանքները:

Մի օր, կէս զիշերանց, երբ Ռոստոմը քնած էր, Շահումեանը ինքնաշարժով եկել էր Բերդ եւ պահանջել էր իրեն տանել Ռոստոմի մօտ: Պահակը յայտնել էր, որ Ռոստոմը քնած է եւ ինքը իրաւունք չունի նրան արթնացնելու:

Շահումեանը գտաւ ինձ եւ ուզզակի պահանջեց, որ Ռոստոմին արթնացնեմ:

— Կէս ժամ չի լինի, որ քնած է, — առարկեցի, — չի կարելի արթնացնել:

— Բայց մի ժամից այնպիսի բարդութիւններ առաջ կը դան, որ յետոյ մարսի պիտի չկարողանանք :

Շատ պնդեց : Գնացի և արթնացրի :

— Ի՞նչ կայ, — հարցրեց :

— Շահումեանր խիստ չտապ ուզում է, — ասացի :

Շահումեանր ներս եկաւ : Այդ այն գիշերն էր, որ Պետրովիր րժբուտացի էր կառավարութեան զէմ : Խազմայեղափոխական Կոմիտէն որոշել էր ձերքակայի նրան իր խմբի հետ : Նրանք պատոնացել էին դէնքի ուժով դիմադրել, և Շահումեանր չէր յաջողել հաշտութեան եր զտնել : Գնացել էին բանակցութեան Զարարիմէն, Զեյինը և Գեյիրուրի : Պետրովիր սրանց վար էր գրել որպէս պատանդ և սպառնացել առաջին հերթին դնդակահարել նրանց, եթէ մերժուին իր պահանջները եւ իրենց ձերքակայելու փորձեր արուին : Խազմա-Յեղափոխական Կոմիտէն արդէն պատրաստութիւն էր տեսել շրջապատելու Պետրովի խումբը, բախումը անխուսափելի էր :

Շահումեանր հանդարտ խօսելու հզանակը կորցրել էր : Գունատ էր ու ջղագրդին : Երբ նա պատմեց այս բոլորը, Ռոստոմը, մի քիչ իր մօրուքի հետ խաղարուց յետոյ, հարցրեց ինձ :

— Պատրաստ ինքնաշարժ կա՞յ :

— Այո՛, — ասացի :

— Ես կը զնամ Պետրովի մօտ :

— Ոչ, — ասաց Շահումեանր, — այդ չի կարելի : Նրա պահակը կառող է կրակել :

Շատ դժուարութեամբ մեր հերթապահը դատաւ Պետրովին հեռախոսով մօտ : Նրան չէին միացնում, և Շահումեանին Հաղին յաջողուեց միացնել տալ : Խոստոմը կանչել տուեց Պետրովին, որ ուզում է նրան տեսնել : Բայց նա վախենալով ծուզակ ընկնելուց, շատ ներողութիւն էր ինդրել և յայունել, որ եթէ Խոստոմը ուզում է իրեն տեսնել, երկու սպաներ կը սպասն նրան Պետրովիկայա հրապարակի եւ Բոյլայու-Մորսկայա փողոցի անկիւնում ու նրանք Խոստոմին կուուեկցեն իր սենեակը, նաև վրայ : Նորից ու նորից ներողութիւն էր ինդրել, որ ինքը չէր կարող զայ :

Խոստոմը Շահումեանին չվերցրեց հետր և խորհուրդ տուեց նրան զնալ Խապուկու :

Խոստոմը վայր իջաւ սեղանից, որի վրայ քնած էր և գնաց՝ աշքերը ճմուելով : Նա տեսնուել էր Պետրովի հետ : Մի ժամից աւելի խօսել էր հետը, իր Երաշխաւորութեամբ ատրել էր նրան Խապուկու, ուր Խազմա-Յեղափոխական Կոմիտէն հետ համաձայնութիւն էր կայացրել և յոզնած վերադրձել էր Բիւրո :

Տղաները թէյ էին պատրաստում : Մի բաժակ զրինք առջնւը : Խմեց : Ժպտում էր և կատակում :

— Բոլորը խննթ են, — ասում էր : — զաղաղած եւ իիզամ յեղափոխութիւն են անում, եր պէտք է զործ անել :

— Հիմա ինդրեմ վերագառնաք ննջարանը, — ասացի, — մի ժամ ու կէս պակաս էք քնել :

— Լաւ, միայն մի ժամ : Կ'արթնացնէք, երբ լուսանայ :

Զարմացանք, որ համաձայնուից : Երեսում էր, որ շատ յոդնած էր : Պահակը փակեց զուոր : Բայց հազիւ ժամը լրացած՝ Ռոստոմը արգէն իջել էր ներքեւ :

Շահամեանը չափազանց մասհոգուել էր, երբ լսել էր, որ մերսնք արամագիր էին Ռոստոմին Թիֆլիս ուղարկել :

— Խենթացե՞լ էք, — ասաց նա .— անհնար բան է : Ես չեմ թողնի, որ նո հեռանայ Բագուից : Ձեր բոլոր յայտնի ու զաղտնի միջոցները ևս ուղը կը ցնդեցնեմ : Նրան ձերրակարուած պահելու զնով, հասկանում էր, ևս չեմ թողնի, որ նա հեռանայ այսակից : Ի՞նչ է, զուք ուզում էք մեզ անգլուխ թողնել :

Մեր կ. Կոմիտէի նիստումն էր, որ նա ասաց այդ, երբ խնդրի մը համար Էկել էր մեզ մօտ և ներկայ էր մեր նիստին :

Երբ քաղաքում՝ Բանուորական Խորհրդական, Խաղովկումում և այլուր բնորհանուր բնոյիլ կրոզ խնդիրներ էին ծագում և յուզում մտքերը, Սահմանականը, մեզ հետ բախում չունենալու համար, կանխաւ ցանկանում էր մեր կ. Կոմիտէի հետ համաձայնութեան զալ : Գիտէր մեր ժողովի ժամերը : Գալիս էր ինքնաշարժում, մանում էր մեծ ժողովի սենեակը ևս նըստում մեզ հետ ժողովի : Իրեն հետաքրքրուող խնդիրների քննութիւննից ևս նըստանց մասին որոշում տալուց յետոյ, լսելեայն զուրս էր զալիս սենեակից ևս . Հեռանում նոյն ինքնաշարժում :

Կ. Կոմիտէին շատ մօտիկ կանգնած ընկերներից շատ քիչերը ևս Բիւրոյի պահակասպետը միայն գիտէին նրա ովլ լինելը :

Որքան յուզումնալից ժողովներ ևնք ունեցել Սահմանականի հետ ևս որքան սուր վլչներ : Բայց, ի վերջոյ, երբեք չենք ընդհարուել ու վերջը երկու կողմբ բուարարող զիհոով փակել ենք խնդիրը :

Ի՞նչ խօսք, որ Ռոստոմի ներկայութիւնը փրկարար դեր էր կատարում, մանաւանդ Սահմանին համաձայնութեան բերելու տեսակիտից :

Գաղափարական հակառակորդներ էինք, անշուշտ : Սակայն, պէտք է խոստովանեմ, որ Սահման Շահումեանը իր զգացումներով լաւ հայ էր :

\* \*

Օգոստոս ամիսն էր : Սարգիս Արարատեանը, Ռոստոմի հետ համախորհուրդ, կազմել էր ծրագիր՝ Բագուի հայութիւնը, ինչպէս ևս Շամախից ու շրջանից Բագու զաղթողները, Ղարաբաղ ու հեռուները փոխազրկելու մասին :

Մրազիրը իր բոլոր մանրամասնութիւններով նա ներկայացրեց կ. Կոմիտէին :

Այս ծրագիրը իրագործելու համար, պէտք էր որ մէկ կարող ընկեր զնար Թիֆլիս :

Թիֆլիսի ընթացքը դէպի Բագուի մզած պայքարը մեղ զայրոյթ և մտահոգութիւն էր պատճառում : Թիֆլիսը իր ուղղմական ուժով մեծ աշակցութիւն կարող էր հասցնել մեղ՝ խփելով թշնամութիւններից : Բայց Թիֆ-

լիսի պատգամները, ուղղակի ապշեցուցիչ էին : Մենք համոզուած էինք, որ Թիֆլիսում միանդամյայն սխալ մօտեցում ունին խնդիրներին և չին պատկերացնում զրութիւնը ձգորէն : Թիֆլիսը թերագնահատում էր Բագուի պայտաբարի արժէքը : Թիֆլիսի աջակցութեամբ մենք առանձիներին պարտութեան կը մատնէինք, որովհետեւ մենք մենակ նրանց այսոյիսի վիճակի էինք մատնել, որ, ինչպէս երեւում է մեր ձեռքն ընկած փաստաթղթերից, նրանք արգէն պատրաստում էին լրել Բագուի ձականը և նահանջել, երբ անդիացիների նամարտ նահանջով ձականում ձեզքուածքներ առաջացան և մենք ստիպուած եղանք թողնել քաղաքը՝ Հազարաւոր զոհեր տալով :

Կ. Կոմիտէի մէկ մասոր, մանաւանդ Արքահամբ, Պապաշան և Սարգիսը (Արքարատեանոր), այն կարծիքին էին, որ Ռուսուում Եթէ Երթայ Թիֆլիս, պիտի կարողանայ յեղաշընէլ նրանց մտածամները և ապահովել մեր յաղթանակը, մանաւանդ հայութիւնը Բագուից Հայաստան աեղափոխելու մեր հոյակապ ծրագիրը :

Բայց Կ. Կոմիտէի մէջ երիտասարդների թեւր դէմ էր Ռուսուումի մեկնելուն Բագուից : Եւ այդ՝ երկու կարեւոր պատճառաբանութեամբ .

Առաջինը՝ Թիֆլիս Երթալու համար Ռուսուումը պէտք է նաւով մեկնէր Պետրովսկ, առաջ հիսուսային Կովկասում մինչեւ Վլատիկաւկազ, այս տեղից Բագմա-ցիրական ճամրով Թիֆլիս, կամ Պետրովսկից մինչեւ Սեւ Մովի տիքը, առաջ Բաթուում և այսուղից Թիֆլիս : Հիսուսային Կովկասի մէջ տիրող անիշխանութեան և համարականների այդ օրերին խսկապէս խննթութիւն կը լինէր այդ :

Երկրորդ՝ Բագուից հանել Ռուսուումին նշանակում էր զլիստել Բագուն, որին մէնք՝ երիտասարդներս չինք համաձայնուում :

Բուռն զէմեր տեղի ունեցան : Մենք՝ երիտասարդներս մինչեւ արցունք յուզուած էինք, բայց անձար մնացինք, երբ Ռուսուումը վճռականապէս յայտարարեց, թէ անհրաժեշտ է իր զնալը :

Մոտում էր նրան ուղեկցելու համար մի շատ ճարովիկ երիտասարդ ընկեր զանել, որ լաւ ծանօթ լինէր Հիսուսային Կովկասին և տեղական լեզուներին :

Որոշուեց խիստ զաղանի պահէլ Ռուսուումի զնալը : Սակայն, երեւում էր, որ ինքը՝ Ռուսուումը չէր ուղում իր զնալը անհաստապէս թաքցնել Ստեփան Շահումեանից :

— Այստեղ՝ Բագուում վճռուում է Կովկասի, հայ ժողովրդի և նոյնիսկ Ռուսաստանի խնդիրը, — ասում էր Ս. Շահումեանը, երբ Ռուսուումի մեկնելու մասին լսելով՝ եկաւ մէկ մօտ — իսկ զուք ուղում էր ուղարկել Ռուսուումին, որին ոչ չի կարող փոխարինել : Այստեղ բազմապիսի կազմակերպութիւններ շարունակական բախման մէջ էն : Այն ո՞վ է, որ պիտի կարողանար հարթել Ցենտրո Կասպիի (Կասպից ծովի նաւատորմի կենտրոնի) և մեր համանատարութեան բախումները, որոնք երբեմն այնքան սուր բնոյթ են ստանում, որ քիչ է մնում նաւերը իրենց թնդանօթները ուղղեն քաղաքի վրայ : Ո՞վ կարող է հարթել Բազմայեղափոխական Կոմիտէի, Ցենտրոկասպիի, համանատարութեան և կառավարութեան միջնեւ ծագած վէճերը : Մենք՝ բոլցեւիներս մէր մէջ ծագած և չհարթուող վէճերը նրա միջոցով

Անք հարթած : Մոռացե՞լ էր , որ , երբ մեր կենարոնը երկու մասի էր բաժանուել , թոստոմը մեզ համաձայնաթեան բերեց : Հապա զո՞ք՝ ինքներդ , ձեր Ազգային Խորհրդի և կ . Կոմիտէի , ձեր կ . Կոմիտէի եւ Բանուորական Խորհրդի Փրակցիայի , ձեր թթու ազգայնականների եւ ձախ ընկերվարականների սուր զէները ո՞վ պիտի հարթէ :

Սա . Շահումեանի պատմառարանաթիւնները ուժեղ էին , բայց որոշուած էր , և թոստոմը պիտի զնար :

Ճանապարհ պիտի զնէի նրան զագտնի , մի փոքր նաւով : Ոչ մի ընկեր ճամբրու զնելու համար նաւահանգիստ :

Թէ ի՞նչպէս էր Սա Շահումեանը լրտեսել թոստոմի մեկնումը՝ զգիտեմ : Բայց թոստոմը արգէն նաւի մէջ էր և նաւը պիտի շարժուէր , երբ Ստեփանը ինքնաշարժով եկել էր նոյն նաւահանգիստը և երկու զինուորանը ուղեկցութեամբ մտել նաւը :

— Ձեր ընկերները յամառում են , բայց այս քաղաքից ոչ ոք չի կարող մեկնել՝ առանց իմ թոյլտուութեան , — ասել էր նա թոստոմին . — Ճեզ հիմա զինուորանները նաւից ցած կ'իջեցնեն , եթէ զուք զուրս չպաշի ինձ հետ :

Թոստոմը փորձէլ էր համոզէլ Ստեփանին , որ ճեռք քաշի իր մատղրութիւնից : Բայց Ստեփանը չէր զիջել և , երբ տեսել էր , որ իր թախանձանքները չեն ազգում , յայտարարել էր .

— Ռերեմն , զուք ճերրակալուած էր տարուիք իմ բնակարանը :

Թոստոմը զիջել էր : Իր բնակարանը հասնելուց յետոյ , Ստեփանը հեռախոսւել էր Պապաշային .

— Պապաշա , թոստոմը ճերրակալուած՝ զտնուում է իմ բնակարանում : Մինչեւ որ ճեր կ . Կոմիտէն խոստում չտայ , որ պիտի թոյլ չտայ թոստոմին մեկնելու քաղաքից , նա կը մնայ ճերրակալուած : Եւ թէկուզ գործը հասնի զինուուած բախտումի , ևս պիտի չզիջեմ :

Զօրավար Բագրատունին , երբ լսել էր այս մասին , թոստոմին հանդիպելիս լաց էր եղել և ասել .

— Բա , անաստուած , զու ո՞նց էիր մեզ մենակ թողնում :

Կ . Կոմիտէն երխուսարգներիս պնդումի վրայ իր որոշումը փոխեց : Սակայն , պէտք էր մէկին ուզարկէլ : Ի վերջոյ , կանգ առանք մեր շատ փորձուած ընկեր լւուն Քալանթարեանի վրայ : Նա տարիներ զրազուել էր Զիփոնի գործով Վլատիկան կազում : Գիտէր ամբողջ հիւսիսային Կովկասը : Չափչիկը էր թագմանվիրական ճամբան : Նաեւ մարտական զեկավար ուժ էր : Համաձայնութեամբ էրթալ նոյն առաքելութեամբ և անմիջապէս մեկնեց :

Թէ ի՞նչ տառապանքներով էր նա տեղ հասել , տեղը չէ այսուել պատմել : Սակայն , Թիֆլիսի մեր ընկերները չէին համաձայնուել նրա հետ : Արով՝ միայն թշնամու թիկունքում մի քանի կամուրջների պայթեցման գործն էր նա կարողացել կազմակերպել : Հետեւանքը այն եղաւ , որ մենք մնացինք մենակ եւ , երբ անզիփացիք լքեցին նակատը , մենք եւս ստիպուած եղանք քաշուել , ջուրը նեսելով Բագուի հայութիւնը երկիր փոխադրելու փառաւոր ծրագիրը :

Եթէ թոստոմը Թիֆլիս երթար , թերեւս տարրեր պիտի լինէր : Բայց այդ էլ , ի հարկէ , ենթագրութիւն է :

Այս դրուազը թոստոմի կեանքից լրիւ չի լինի, եթէ այստեղ շտատ-մեմ նաև թոստոմի ջանքերի մասին ազատելու Ստ. Շահումեանին և ըն-կերներին գերութիւնից :

Ինդելիսմ (այժմ Փահլեւի) թոստոմը լուր էր առել, որ այն նաւր, որի վրայ զանում էր Ստեփան Շահումեանը, իր ընկերներով, փոխանակ Պետրոսիկ կամ Հաշտարիսան զնալու, խարիսխ էր նետել Կրասնաւողսկի նա-ւանգուտում և Ստեփանը իր ընկերներով ձերբակալուել են ուստ մենչեւիկ կառավարութեան կողմից : Դէպքը պատմում էին հետեւեալ ձեւով .

Ստեփանիր և ընկերները, Բագուի կառավարութեան անկումից յետոյ (անդիքայիններին հրաւիրելու առընչութեամբ), ապրում էին մեծ նաւում : Քաղաքը ընկելուց եւ նաւերը ափից հեռանալու պահին, երբ իմացել էին, որ իրենց նաւապեար մենչեւիկ է եւ իրենց անհաջող հակառակորդ, կամե-ցել էին նաւը տանել Հաշտարիսան : Թաղէսո Ամիրեանն էլ, որ նոյնպէս այդ նաւումն էր գտնուում, որովհետեւ իր եզրայրը այդ նաւումն էր, ատրճանա-կը ձեռին, պահակ էր կանզնել նաւապետի խցիկին մօտ հսկելու, որ նա չշե-զի Հաշտարիսանի ճանապարհից : Նաւավարը խոստացել էր կատարել նրա հրամանը : Սակայն, նա, աւելորդ պտոյաներ կատարելով, սպասել էր մո-թը ընկենալուն, եւ, օգտուելով մթսաթինից, քեզ էր նաւը ուզիզ զէպի Կրասնաւուղսկ : Խարիսխ նետելուն պէս, անյայտացել էր եւ, ափը իշխելով, իմաց էր տուել տեղական հակարուցեւիկ իշխանութեան, թէ բերել է Բա-զուիք բոլցեւիկ 20 կոմիսարներին : Կառավարութիւնը խսկոյն շրջապատել եւ ձերբակալել էր տուել նրանց :

Այս լուրը մեծ մահնոգութիւն էր պատմանել թոստոմին : Նա զիտէր, որ այդ անպատասխանաւու եւ խառնակ օրերին, երբ տեղական իշխանու-թիւնները, առանց խորը մտածելու, աջ ու ձախ ոչնչացնում էին իրենց հա-կառակորդներին, Ստեփանիր և ընկերների կեանքն էլ կարող էր վտանգուել : Ուսափ որոշել էր ընկերներ ուզարկել՝ նրանց փախցնելու համար :

Այդ նպատակով թոստոմը կրասնաւողսկ ուզարկեց փորձաւած եւ հին գաշնակցական Կարապետ Պարունակեանին, մի քանի խիպաթ ընկերների հետ, որոնք տեղական մեր կազմակերպութեան հետ շատ զաղոտնի կերպով պիտի կազմակերպէին Ստեփանիր և ընկերների փախուստը :

Կարապետ Պարունակեանը ընկերների հետ տեղ էր հասել ձկնորսական նաւով : Տեղական մեր կազմակերպութեան հետ անցել էր զործի : Բայց ար-դէն ուշ էր եղել : Այդ օրերին Կարմէր Բանակը սկսել էր ճնշել անդրկասպ-եան Սպիտակ ուժերին եւ այդ պատճառով հակարուցեւիկ իշխանութիւնը շատ հապճեպով, առանց դատի, գնդակահարել էր տուել Ստեփանիր եւ իր 26 բոլցեւիկ ընկերներին :

## ԱՆԳԼԻԱՑԻՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ԲԱԳՈՒ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ Փ Ո Փ Ո Խ Ո Խ Թ Ի Ի Ն Ը

Թագմական եւ քաղաքական կացութիւնը Ազգային Խորհրդին եւ կ. Կոմիտէին բերին այն եղբակացութեան, որ պէտք էր Անգլիացիներին հրաւիրել Բագու:

Խողիբը շատ լուրջ բնոյթ ստացաւ, որովհետեւ գժուար էր համոզել բոլութիւններին:

Էս-էբրները և էս-Դէկները իրենց հաւանութիւնը տուել էին եւ մենք կարող էինք խողիբը զնել Բանուորական Խորհրդում, տապալել կառավարութիւնը, որ գլխաւորում էր Ստեփան Շահումեանը, եւ կազմել նոր կառավարութիւն, որը և Անգլիացիներին Բագու կը բերէր: Բայց մենք չէինք ուզում խնդիրը այդ ձեւով կարգադրել, որովհետեւ զա կարող էր բախումեների առիթ ստեղծել: Բոլութիւնները ունեին քաղաքում իրենց զրահապատ ջոկատը եւ բոլշևիկնեան արագաղբութիւններով վարակուած մի երկու ուստական զնդիր: Կարնաւ Անգլանական կամքահական կամքահական գունդը, մեծ ժամամբ կազմուած վրացիներից, որ միանգամայն ենթակայ էր Ջապարիձէին: Այդ պատճառով Խոստումը մի քանի անգամ խօսել էր Ստեփանի հետ եւ, ի վերջոյ, նրանք համաձայնութեան էին եկել, որով Անգլիացիք ցամաք պիտի ինչին եւ Ստեփան Շահումեանը, Մուրմանսկի պէտքի օրինակով, իր կառավարութեան կողմից պիտի բողոքէր Անգլիացիների այդ քայլիք զէմ, եւ խողիբը պիտի փակու էր զբանով:

Այս համաձայնութեան նախապայմանն էր խիստ զազտնապահութիւնը: Ցենտրո-Կասպին էլ, որ արդէն մենշևիկների ձեռքն էր, որոշել էր լոռութիւն պահել անգլիական գործը Բագու փոխագրող նաւերը մեր ջրերը մըսնելու մասին: Սակայն, այդ լուսութիւնը չպահուեց: Մեր հայ Սոցիալ-Դեմոկրատներից մէկը, պարձենկուտութիւնից թելաղրուած թէ անփորմութիւնից, իր մտերիմ մի բոլշևիկ ուսւի հետ խօսելիս, յայտնել էր այդ զազտնիքը: Բոլշևիկը անմիջապէս խողիբ էր յարուցել եւ իրար խառնել իսպոլիկումը:

Նոյն երեկոյեան մեր ժողովին եկաւ Ստեփանը, խիստ վրդովուած, եւ յայտնեց եղելութիւնը:

Պարզուեց, որ զազտնիքը զուրս տուող Սոցիալ-Դեմոկրատը Հայոց Ազգային Խորհրդի անդամ էր: Նրան զտան եւ կանչեցին: Ստեփանը պարզեց նրա շնորհիւ ստեղծուած կացութիւնը եւ յայտնեց, որ այլւես իր տուած խոստումը յետ է առնում եւ Բանուորական Խորհրդի առաջիկայ նիստի մէջ պիտի հրապարակի: Ինչ խօսք, որ թէ կառավարութիւնը, եւ թէ բոլեւիկ պատգամաւորները եւ ձախ էս-էբրները պիտի ընդդիմանային եւ Անգլիացիներին հրաւիրելու խողիբը պիտի վիճէր: Երբ այդ լսեց մեր Սոցիալիստ-Դեմոկրատ, ուշաթափուեց, եւ նրան մեծ գժուարութեամբ ուշքի բերին սպասման սենեհակում:

Յաջորդ օրը Սառ. Շահումեանը տեսնուել էր Խոստոմի հետ եւ խնդրել, որ Դաշնակցութիւնը չտապալի իր կառավարութիւնը՝ խուսափելու համար քաղաքացիական կոսուց: Բայց Խոստոմը չէր կարողացել նրան խօսք տալ, քանի որ, առաջին՝ ինքը կողմանակից էր Անգլիացիներին Բագու բերելուն եւ,

Երկրորդ՝ նոյն զիշեր կ. Կոմիտէն սրոշել էր տապայիլ Ստեփան Շահումեանի կառավարութիւնը՝ Անգլիացիներին Բազու բրերի տալու համար:

Աշխատանքները բաժանուած էին արդէն, և մըր կ. Կոմիտէն իր լիակատար պահանջները տուել էր Բանասորական Խորհրդի զաշնակցական Փրակցիային, որ իր նիստոր անեցել էր և որոշել իր անելիքը: Ի միջի այլոց զաշնակցական Փրակցիային Հաղորդուած էր, որ կ. Կոմիտէն պիտի աշխատէր թոյլ շտալ բոլչեւիներին քաղաքացիական կոփի սկսելու: Հակառակ դէպքում զինու զօրութիւնը նու պիտի զործադրի տրուած որոշումը:

Նշանակուած էր Բանուորական Խորհրդի նիստը, որի օրակարգն էր՝ «Աշխատակման կուսակցութիւնների կողմէց Անգլիացիներին Բազու հրաւիրելու ցանկութիւնը»:

Բոլոր կուսակցութիւնները մասնակցում էին իրենց լրիւ կազմով: Առասարակ նասում էինք հետեւալ կարգով: — Զարի կողմում՝ բոլչեւիները, ապա ձախ Սոցիալիստ-յեղափոխականները, ապա մեր Փրակցիան կենտրոնում, յետոյ Էսէքները և ծայրայեզ աջ կողմում էլ է. Դեկները, իսկ թիւնքում անկուսակցականները:

Ստեփան Շահումեանը որպէս կառավարութեան գյուխ, գեկուցեց խընդիրը և շատ բուռն կերպով քննազատեց այլ առաջն բկը՝ խելելով բուռն ծափեր:

Առաջին խօսք վերցնողն էր Ալեօշա Զարարիձէն որ շատ սուր, խայթող քննազատական խօսքերով յարձակում զործեց մէջ վրայ՝ աշխատելով վարկարեկել մէզ: Մէրոնց վրդովմունքը այնքան մէծ եղաւ, որ, հակառակ տրուած հաշնանդին, մէր ամբողջ Փրակցիան սորքի լուս և ազմկալից բացազնչութիւններով փորձեց լուցնել Ալեօշային: Բանուորական Խորհրդի աջ թէւը մէզ հետ սորք երա: Առաջին և բոլչեւիները:

Ստեփանը յայտարարեց, որ Եթէ ժողովր շխազագուի, ինքը զինուուրական ուժ կր կանչէ: Այլ յայտարարութիւնն վրայ մի այնպիսի անասելի ժխոր սկսուեց, որ ամբողջ նախազահութիւնը սորքի ելաւ՝ ազերսելով խազազուել:

Մէր պահանջով, սոտք լուց բոլչեւինեան Փրակցիան, ապա մէր Փըրակցիան և մէզ հետեւեց ամբողջ աջ թիւր: Բայտ կարգի, մէր ընկերներից մէկը յայտարարեց, որ ոչ ոք թոյլ շտայ իրեն սպառնալիքներ կարգալու ժողովին, ինչպէս և վիրաւորական արտայայտութիւններ անելու:

Նախազահութիւնն արեց և խնդրեց, որ Ալեօշան մի անզոյց արտայայտութիւններ չունենան:

Բայտ կարգի խօսեց և Ստեփանը և խնդրեց կրերը չըորրոքէլ: Ասաց, որ գրուած է շատ լուրջ խնդիր, որը պէտք է վճռել ոչ թէ կուսակցական շահախնդրութեամբ, այլ Բազուի բանուորութեան և յեղափոխութեան շահերի տեսակէտից:

Ապա Ալեօշան շարունակեց իր ճառը, այս անգամ խիստ զգոյլ: Ի հարկէ, չէր խօսափում երրեմն ոլաքներ նետել մէր կողմը:

Խօսեց և Այուլոն, իս-դեկ լիդը և լաւագոյն խօսողը: Նա խիստ արամարանական ճառով ապացուցեց, որ մէր պայմաններում անհրաժեշտ

օգտուել Անգլիացիների ռազմական ուժից, և թոյլ չտալ, որ թշնամի, յետադէմ ու հակայեղափոխական փաշաների բանակը գրաւի յեղափոխական Բազուն։ Ճարոր լսուեց խոր ուշագրութեամբ։

Խոսեցին ե՛ւ մեր ընկերները, ինչպէս ե՛ւ կո-կրները։ Յետոյ բոլշեվիկները հրապարակ բերին իրենց ծանր թնդանօթները, մինչեւ իսկ Զերինին։ Վերջում խօսեց Ստեփանը, շատ քաղաքավարի, շատ ուժեղ եւ յոյժ յայտնեց, որ քուչարկութիւնը պիտի լինի ի նպաստ իր կառավարութեան եւ ընդդիմ Անգլիացիներին Բայու բերելու առաջարկին։

Դեռ քուչարկութիւնը շահուած՝ սրանի պատուահաներից երեւաց, որ չէնքը չընապատուած էր զրահապատ ինքնաշարժներով։ Կասկած չկար, որ զրանց բերել էին առուել բոլշեվիկները՝ իրենց համար անսպասա քուչարկութեան դէպքում մեղ ձերբակալելու և քաղաքացիական կոիւ սկսելու համար։ Քուչարկութիւնը ցոյց տուեց, որ մեր բանաձեւին ձայն էր տուել պատգամաւորների ճնշող մհծամանութիւնը։

Մեղանից մի քանի հոգի, որ զնացել էին րեմ խօսելու, այլեւս ցած չէին զալիս։ Նախազահութեան մէջ Լզած մեր ընկերները նկատել էին, որ Ստեփանը, Ալեօշան և միստ բոլշևիկ գեկավարները խորհրդակցում էին այս մասին, որ զրահապատաների զինուորները ներս կանչեն և կատարել տան ձերբակալութիւներ։ Թիշ յետոյ նրանց լուր են բերում, որ զրահապատաների բոլոր զինուորները և սպանները փոխուած են։ Ալեօշան իսկոյն շտապում է հեռախօսի մօտ, կանչում յատուկ զունդի հրամանատարին և կարգադրում, որ նա իր վրացի մարտիկներին անմիջապէս բերի Բանուորական Խորհրդի չէնքը։ Նրան յայտնում են, որ զունդը բաղնիքումն է և որ նրանց զնքերը յայտնի չէ թէ ո՛ւմ հրամանով հաւաքուած են եւ փակուած։

Ալեօշան, ուզգակի յուսահասուած, յայտնում է այդ մասին իր ընկերներին և պահանջում, որ երկու բոլշեվիկեան զնդեր բերուեն։ Նրանց հրամանատարը մօտենում է հեռախօսին։ Պարզում է, որ այդ զնդերից մէկը ուզգարկուած է անյայտ ուզգութեամբ, իսկ միւսը զինաթափ է արուած ու փակուած Սալիխանսկայա գօրանոցի մէջ։

Նախազահութեան և կառավարութեան անզամները, գունատ ու ջղալին, քննում են խնդիրը և ի վերջոյ, Ստեփանը զալիս է բեմի առաջամասը։ Նա յուզուած հազորուում է, որ Բազուի Յեղափոխութեան թիկունքին զանակ է խփուել, որ քուչարկութեան արդինքը ի նպաստ աջակողմեան բանաձեւին է եւ որ իր կառավարութիւնը ներկայացնում է իր հրաժարականը։

\* \*

Մանր ու ճնշող պահեր էին։ Հեռախօսով լուր տրուեց մեր Կ. Կոմիտէին, ուր թոստոմը սպասում էր լուրի։ Բոլշեվիկեան լիդերները հաւաքուել էին միասին։ Նրանց թոյլ տուին ընտրել որեւէ նաև եւ ապրել նրա մէջ։

Մինչեւ մէնք հասանք Կ. Կոմիտէի չէնքը, արդէն Արքահամը նշանակուած էր զիկտատոր և հրահանգներ էր տալիս աջ ու ձախ՝ թէ քաղքենի անզորութիւնը պահպանելու, թէ ճակատը ամուր պահելու և թէ առասարակ իշխանութեան հետ կապուած խնդիրների մասին։

Արրահամի իշխանութիւնը շարունակուեց, մինչև որ Բանուորական Ասրահարդ կարողացաւ կազմել իր նոր կառավարութիւնը, որը եւ՛ Բազու հրամարեց Անգլիացիներին: Յայտնի է, որ մեր պատգամաւորը Անգլիացիների ժամանելու Մարգիս Արքան էր:

Պատմութիւնը լրացնելու համար, պիտի աւելացնեմ, որ այդ օրուան մեր յաղթանակիր մասամբ միայն պարասական էինք մեր ձայների մեծամասնութեան, սրովհետեւ բոլչեւիկները հաստատ որոշած էին մեզ բոլորին ձեր բակարել, ապա զրաւել մեր է: Կոմիտէի չչնքրը, ցրել Հայոց Ազգային Ասրահարդի հայտարարել բոլչեւիկնեան իշխանութիւն: Եւ մենք պիտի պարտավիր էիմ նախարարէս զրաւածքն առած չինենք:

Այդ նախախնամական աշխատանքը, Խոսամի խորհրդով ու ցուցմունքներով կատարել էր Ներսէս Զաղէթեանը: Վերջինս հւտախուզական բաժնի վարդիչն էր և զիտէր ամէն ինչ: Նրա թերազրութեամբ էր, որ բոլչեւիկ Զարարիկէին ենթակայ յաստիկ զունզը բազնիք էր ուղարկուել եւ զինքերը զրաւուել էին: Նրա շնորհն էր, որ զրահապատ զնդի բոլոր սպաները եւ զինուորները փոխուած էին, իսկ երկու բոլչեւիկնեան զնդերն էլ անվտանգ զարձած:

Բոլչեւիկները վերջին վրէժին զրէժինով եղան, Ներսէս Զաղէթեանին ձերբակալեցին Ազրբէջանի խորհրդայնացման օրերին, տարան բանտարկեցին Բազուի մօտի Նարգին կղզում եւ այնտեղ էլ զնդակահարեցին, մեր մի քանի ուրիշ ընկերների հետ:

Ներսէսը անսպառ եռանդով, աննկարագրելիօրէն ճարպիկ, խելօք և հաւատաւոր դաշնակցական էր, կազմակերպչական մեծ ընդունակութիւնների տէր: Բազուի այդ ծանր օրերին անզնահատելի զործ կատարեց, եւ այդ զործն էլ յետոյ նրա զոհուելու զվահաւոր պատճառն եղաւ:

## ԲԱԳՈՒԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՑՈՒ

### ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

Ստ. Շահումեանի կառավարութեան անկման երկրորդ օրն էր: Արրահամի գիկոտասորութեան 25 ժամը լրացել էր: Պէտք էր ուժեղ նոր կառավարութիւն ստեղծել: Պէտք էր Անգլիացիներին Բազու բերելու խնդիրը կարգադրել, — մի ինդիր, որ արդէն սուր պայքարի առիթ էր եղած: Պէտք էր, վերջապէս, ուղամաձակամը փրկել սպառնացող փլուզումից, իսկ քաղաքը՝ անբշխանութիւնից:

Սակայն, զանազան քաղաքական հոսանքների միջև միակամութիւն էկար: Այդ զիշեր խառն նիստ էր նշանակուած՝ վերջնականօրէն վճռելու համար խնդիրը: Նիստին մասնակուում էին 8Ենտրոպասպիիք, Յամաքային Բանակի, Խուս Էկրների, Էս-Դեկների, Հայ Էս-էկների, Հայ Էս-Դեկների, Հ. Յ. Դ. ի, Արէնսուական Միութիւնների կենտրոնի եւ Բանուորական Ասրահը Փրակցիաների ներկայացուցչները: Կային նաեւ Բազուի նաւահան-

զիստը մտած երկու ուղղմանաւերի ներկայացուցիչները, որոնցից մէկը կրաս-նաւստելից (Անդրկաստղեան շքնանից եկած նաւի հրամանատարն էր՝ յազման-դամ և թիկնեղ Գոլուրեւը) :

Բայիլովում մէր կուսակցական ակումբներից մէկի մի ոչ շատ մեծ սենեակումն էինք: Հ. Յ. Դաշնակցութիւնը ներկայացնում էին Ռուսումը, Սարգս Արարտաւանը, Արդէյ Մէլիք-Եօլեանը եւ ես:

Ես նստած էի Գոլուրեւի եւ մի նաւային սպայի միջեւ, որի հետ շատ յաճախ հանդիպել էի Բանուորական Խորհրդում: Նա իս-էր էր եւ եկել էր ՑԷնտրօ-Կասպիի կողմից: Նա ինձ ներկայացրեց Գոլուրեւին.

— Աղջային Սոցիալիստ-Յեղափոխական, — բնորոշեց նա մէր կուսակցութիւնը:

Բուռն վէճէր սկսուեցին մի կողմից՝ ՑԷնտրօ-Կասպիի ներկայացուցիչ-ների ու իս-էրների եւ միւս կողմից էլ՝ իս-Դեկ(մենչեւիկ)ների ու Արհեստակցական Միութիւնների միջեւ:

Երբեմն նոյն կուսակցութեան պատկանող, բայց տարրեր մարմիններից Եկած ներկայացուցիչների միջեւ այնքա՞ն սուր վիճարանութիւններ էին լինում, որ քիչ էր մասում ժողովը պայմէր: Մի քանի անգամ մէր կողմից արտայարտուողներ եղան: Սարգիսը բազմաթիւ անգամներ բացարական լուսարանութիւններ տուաւ: Մէր տեսակէտը պարզ ու մեկին ձեւակերպուած էր Կ. Կոմիտէի կողմից: Սակայն, երեւում էր, որ միւս կազմակերպութիւնները վէրջնական տեսակէտները չունէին: Երբեմն ճառեր էին արտասանուում, որ ամէն բոլք պատում էինք պայմէրութիւն: Մենք պիտի գրուէինք շատ ծանր կացութեան մէջ, եթէ իրաւախոնութիւն տեղի չունենար:

Սարգիսը շատ էր աշխատում հող զտնել՝ կառավարութիւն կազմելու համար, բայց չէր յաջողուում: Նա նստած էր Ռուսումի մօտ եւ, խօսելուց առաջ, նրա կարծիքն էր առնում:

Ճիշդ է, որ ոստինները յատկապէս նրան շատ ուշադրութեամբ էին լը-սում, բայց յետոյ նորից բախուում էին իրար եւ, նորից ու նորից կրկնելով իրենց փոխադարձ մէղադրանքները, համաձայնութեան չէին գալիս:

Մօտու նստած մէր ծանօթը մի քանի անգամ ականջիս ասաց կամացուկ.

— Ինչո՞ւ Ռուսումը չի խօսում:

Նախագահ կազմիան Ֆլուտովը, որ Բագւում բաւական յայտնի դէմք էր, աշքով էր անում մեղ թէ՝ ասացէք, որ Ռուսումը խօսի: Ժամը գիշերուան երեխն էր: Մթնոլորտը այնքա՞ն էր ելեկորականացած, որ այլեւս շարունակել չէր կարելի: Սարգէյ Մէլիք-Եօլեանը բաւական բարձր՝ հայերէ-նով ասաց.

— Ռուսում, խօսի՛ վերջապէս:

Ռուսումը ոտքի ելաւ:

— Փառք Աստծու, — բացազանչեց նախագահը գոհունակութեամբ, — խօսքը պատկանում է Ռուսումին:

Ռուսումը ճարտասան չէր, սակայն, այդ օրը զարմանալի լաւ խօսեց: Զարմանալի դանդաղ ու պարզ, լսողի մտքերը մտրակող ուժով արտայայտուեց: Վերլուծեց տիրող կացութիւնը յատակ ու ճիշդ, պարզեց Բագուի բո-

լոր կազմակերպութիւնների վրայ ընկած ծանր պատասխանառուութիւնը : Աստօրէն բնորոշեց կողմէրի սխալ մասնութիւնը դրուած խնդրին, վեր հանեց նրանց ևսական նկատառութիւնը : Խոսեց այնպիսի անկողմնակալութեամբ և սրացաւութեամբ, որ չահեց բոլորի համակրանքը : Քննեց եղած առաջարկները, որոնք բախման պատճառ էին դառնում եւ մատնանշեց նըրանց վերացնելու միջոցները :

Փողովականների զէմքերը պայծառանում էին, եւ մարդիկ կարծես սկսում էին աղաս չնչէլ :

Ի վերջոյ, Ռոստոմը ձեւակերպեց ստեղծուած կացութիւնից դուրս զալու եւ Բագուն փրկելու միջոցները, ճղեց իւրաքանչիւր կաղմակերպութեան ցերն ու պարտականութիւնը, Բանուորական Առորդութիւնից առաջիկայ նիստում նոր կառավարութիւն կազմելու եղանակը :

— Կարծում եմ, — Նզրակացրեց նա, — որ ձեր յեղափոխական միտքն ու պատասխանառուութեան զպացումը պիտի թելաղբեն ձեզ ընդունիլ իմ առաջարկները, վերջ տալ անպատճ եւ վնասակար վէճերին եւ անմիջապէս անցնել զործնական աշխատանքների :

Երբ Ռոստոմը վերջացրեց, մի պահ բոլորը լուս մնացին : Ոչ ոք այլ եւս ձայն ուզեց : Նախազահը ոտքի ելաւ .

— Այս վերջին ճառով, — ասաց նա, — ես կարծում եմ, որ վերջանում են նաև մեր վէճերը : Ընկեր քարտուղարը արձանագրել է բոլոր առաջարկները : Կարծում եմ, որ պէտք է կարգանք եւ քուչարկենք :

Զարմանալի ճշգութեամբ արձանագրուած էին Ռոստոմի առաջարկները : Կարգացուեցին : Մի քանի լրացումներ եղան : Նախազահը առաւ Ռոստոմի հաւանութիւնը այլ լրացումների մասին :

— Ուրեմն, ընկերներ, համաձա՞յն էք քուչարկել այս առաջարկները ամբողջութեամբ, մէկ անզամին :

— Այո՛, այո՛ :

— Ովքե՞ր են դէմ :

Ոչ ոք :

— Առաջարկները անցան միաձայն : Նիստը յայտարարում եմ փակուած, — յայտարարեց նախազահը :

Փողովականները ուրախ բացագանչութիւններով վեր թռան տեղերից եւ շրջապատեցին Ռոստոմին : Առաջինը նախազահ Ֆլոտովն էր, որ սեղմեց նրա ձեռը եւ ասաց :

— Դուք, թէեւ ուշ, բայց փրկեցիք ե՛ւ մեզ ե՛ւ Բագուն :

Գոլուրենը, յաղթանգամ մարմինը առաջ հրելով, նոյնպէս մօտեցաւ Ռոստոմին, վերցրեց նրա ձեռը եւ, ուժեղ թափահարելով այն, իր բամբ ձայնով ասաց :

— Դուք իսկապէս Ռոստոմ էք — իստոր մաքի, ամուր կամքի եւ մեծ յեղափոխականի սրտի տէր Ռոստոմ : Ես երջանիկ եմ, որ ձեզ հանգիպեցի, եւ յեղափոխական Բագուն հպարտ է, որ ձեզ ունի իր մէջ : Եթէ թոյլ տաք, ես կը համբուրեմ մեր ձեռքը :

Ռոստոմը ձեռը յետ քաշեց :

— Այդ գէպում ձեր ճակատը, — ասաց Գոլուբեւը, կռացաւ ու համբուրեց Թոստոմի ճակատը:

Բոլորը յուզուած էին, իսկ մԵնք՝ զաշնակցականներս՝ աւելի եւս:

Լոյսը բացում էր, երբ եկանք Հ. Յ. Գաշնակցութեան շնչքը եւ տեղաւորուեցինք բազմոցների մէջ: Բայց մԵղնից ոչ մէկը չկարողացաւ քնել:

Նոյն օրը, Բանուորական Խորհրդի նիստում, զիշերուան խորհրդակցութեան որոշումների համաձայն, կազմուեց Բազուի նոր կառավարութիւնը, եւ Բազուն շարունակեց իր անհաւասար կորիր՝ շրջապատող թշնամու զէմ:

## ԹՈՍՏՈՄԻՆ ԶԻՆԱԹԱՓ ԱՆԵԼՈՒ ՓՈՐՁԸ

Իշխանութեան փոխանցման օրերն էին: Ցենտրոկասպին աշխատում էր կացութեան տէր զատնալ: Նրա նաւաստիները փոքր խմբերով շրջում էին փողոցներում՝ կարգը պահպանելու պատրուակով և զինաթափ էին անում բոլորին, որոնք զէնիք կրելու իրաւունք չունեին:

Մի երեկոյ, երբ ուրդէն ճրագները վառուած էին, Տերեդոննայա եւ Ստանիլուսուկայա փողոցի անկինում Թոստոմին շրջապատում է 6-7 հոգուց կազմուած նաւաստիների մի խումբ:

— Զէնք ունի՞ս, — հարցնում են նրան:

— Այո՛, մի ատրճանակ, — պատասխանում է Թոստոմը:

— Արտօնագիր ունի՞ս:

— Ո՞չ:

— Դէ՛ք, ուրեմն, ի՞նչ իրաւունքով ես կրում այդ ատրճանակը: Տո՛ք

Ժեղ:

— Զե՞զ տամ ատրճանակս:

— Այո՛, այո՛, անմիջապէս:

— Շատ լաւ, ատրճանակս կը տամ: Բայց յու է, որ զնանք այն խանութը, այնտեղ յոյս է, կը տեսնեմ թէ ո՞ւմ եմ տայիս զէնքս:

Նաւաստիները վիճում են իրար հետ եւ, ի վերջոյ, համաձայնում:

— Գնա՞նք, զնա՞նք:

Գնում են Թոստոմի ցոյց տառած խանութը, որը 7րդ թագամասի մէր Կոմիտէի զրասենեակի առաջամանն էր: Սա մի մեծ խանութ էր, որ ծառայում էր Կոմիտէի հետ զործ ունեցողներին որպէս ապաման սենեակ: Խանութի յետեւի սենեակներում գտնում էր մեր Կոմիտէի զրասենեակը:

Խանութին մօտենալով՝ Թոստոմը տառվ է անցնում եւ ներս մտնում:

— Տեսէք, թէ սրանք ի՞նչ են ուզում, — տառվ է նա եւ մտնում զրասենեակ:

Նաւաստիները ներս են իրուժում:

— Ո՞ւր զնաց, նա ատրճանակ ունի, դուրս կանչեցէք նրան:

— Ի՞նչ ատրճանակ, ի՞նչ էք ասում, — հարցնում են չորս կողմից:

— Գիտի զինաթափ անենք:

— Ո՞ւմ, — հարցնում են ներկաները, — դուք ճանաշո՞ւմ էք նրան:

Նա Թոստոմն էր:

- Ի՞նչ, Ծոստամբը: Տղաներ, նա Ծոստամն է եղել, — ասում է նը-  
րանցից մէկը: (Ծուսները նրա անունը Ծոստամ էին արտասանում):
- Ծոստամ, Ծոստամ, հապա ինչո՞ւ առաջ չէր ասում:
- Նա այդ չի սիրում, — բացատրել էին մեր ընկերները:
- Նու ոերեատա (զէ՛, տղաք), զնանք: Ծոստամն է եղել, ուրիշն,  
վերջացաւ:

## ԾՈՍՏՈՄԸ ԵՒ ԸՆԿԵՐՆԵՐԸ

Թէ՛ հնում եւ թէ մանաւանդ մեր օրերին մեր բոլոր ընկերները, մա-  
նաւանդ ղեկավար ընկերները շատ բան պէտք է սովորէին Ծոստոմից: Ոչ  
ոքի ոչ յիշատակը եւ ոչ էլ ներկայումս ապրող ու գործող ընկերների ինք-  
նասիրութիւնը շեմ ուզում վիրաւորած լինել, եթէ ասեմ, որ նա եղակի, ան-  
զուգական էր որպէս մարդ, ընկեր, ղեկավար՝ իր վերաբերմունքով դէպի  
բոլոր ընկերները:

Զեմ կարող ասել, ի հարէի, որ նա տարրերութիւն չէր զնում ատակ,  
փորձուած ու ղեկավար ընկերոջ եւ երիտասարդ, անփորձ ընկերոջ միջիւ՝  
նրանց լսելու, նրանց արժէքաորելու տեսակէտից: Սակայն, նա այդ անում  
էր այնպիսի ընկերական, անազմուկ, մեղմ ու անկեղծ ձեւով, որ ոչ ոք  
կարող էր տարրերութիւն տևանել: Իր վարմունքի մէջ Ծոստոմի համար հին  
ու նոր, ծեր ու երիտասարդ զոյտութիւն չունէր:

Դեռ աւելին: Երիտասարդների նկատմամբ նա աւելի ուշադիր էր, հո-  
գացող: Սակայն, ոչ մի ընկեր չէր կարող զպայ, որ Ծոստոմը իր վիճակից  
հետաքրքրուած է եւ կամ իր վիճակի անօրինութեամբ զբաղուած է: Գիտէր  
բոլոր ընկերների գոյավիճակը եւ մանաւանդ գտտէր օժանդակութեան կարիք  
ունեցող կամ հիւանդ ընկերների մասին յատուկ հոգացողութիւն անել: Երբ  
մի ընկեր հիւանդ էր, նա զիտէր, թէ՞ ո՞վ էր խնամում նրան, ուր էր պատ-  
կած: Միշտ հետաքրքրուում էր նրանով: Մի ուրիշ ընկեր զրամ չունէր,  
հիւսիսից էր եկել, ապրելու, զիշերելու աել չունէր: Երբորդը շատ էր ծան-  
րաբեկուած գործով եւ նեւուում էր: Չորրորդը պարապ էր, զործ պէտք էր  
գտնել նրա համար, և այլին: Բոլորի մասին Ծոստոմը մտահոգուում էր եւ  
կարգադրութիւններ անում:

Քանի՞ քանի անգամներ Ծոստոմը կանչել է ինձ եւ ասել:

— Ա.ր., ասում են, ապրելու միջոց չանի: զրամ վերցրու եւ յանձ-  
նիր նրան:

— Բ.ը եկել է հիւսիսային կովկասից: ապրելու եւ քնելու տեղ չու-  
նի: Տե՛ս, ի՞նչ կարող ես անել:

— Դրամ տուր Գ.ին: Ձե՞ս լսել, որ նա հացի զրամ չունի:

— Գ.ը շատ ուժասպան է: Նայի՛ր նրա զոյնին: Խօսի՛ր՝ ում հետ որ  
պէտք է եւ ապատել տուր գործից: Թո՛ղ մի քանի օր զնայ տուն եւ հան-  
գըստանայ:

Այսպէս անվերջ: Ես գիտէի, որ ով էլ որ լինէր եւ ինչ օժանդակու-

Թիւն էլ ստանար՝ չպիտի հասկանար, որ իսկական աղքիւրը թոստուն էր : Զարմանալի էր թոստունի՝ այս կամ այն ընկերոջ զործի զնելու եղանակը : Զէր հրամայում էրբեք, հրամայելիր նրան միանգամայն այսարիք էր : Նա ուզգակի ներշնչում էր, թէ Ի՞նչ ձեւով պէտք է կատարուի այս կամ այն զործը, և այն էլ այսպիսի ձեւով, որ ենթական համոզուէր, թէ ինքն էր գտել զործը :

Բազում յանձնաբարութիւններ է նա տրել ինձ և մեր աշխատակից ընկերներին այսպիսի ձեւով . . .

— Ի՞նչ ես կարծում: այսինչ զործը ի՞նչպէս պէտք է անել, որ թէ՛ ժամանակ շահուի եր թէ լաւագոյն ձեւով կատարուի :

«Ի՞նչ ես կարծում» թոստունի առաջին մօտեցումն էր : Ու այդ ժամեցումն հետ նա այնպէս էր ձեւակերպում կատարուելիք զործը եւ այնպէս էր քեզ ժամանակ տալիս, որ քո եղբակացութիւնը լինէր յար և նման իր մըտածածին :

— Լաւ ես ժամանակ, դէ՛ անցիր զործի :

Ահա նրա եղբակացութիւնը : Եւ զու կազմում էր զործի՝ ոչ թէ թոստունի հրամանը զործադրելու, կամ նրա յանձնաբարութիւնը կատարողի ըգացումով, այլ որպէս նախաճանունովը զործին :

Ընկերներին բարձրածայն զիտոպաթիւն անել թոստունը շգփտէր : Բարկացած էլ լինէր, չէիր հասկանայ, թէ բարկացած էր : Բայց ոչ նրա նըկառողութիւնից կը յուսահասուէր, որովհետեւ իր զիտոպաթիւնը այնպիսի ընկերական չեցամունք էր անում, որ յանցաւորը կը զզար իր յանցանքը : Բայց ևս ոչ աւելի մեծամիտ էր զառնար թոստունը յայտնած զոհունակութիւնից, որովհետեւ թոստունը զզացնում էր նաև, որ զոհունակութեան արժանի եղողը իր պարտքն էր միայն կատարած :

Թոստունը չառ չէր խօսի ժողովների ժամանակ : Երբեմն այնքան անմասն էր մնում վէճներին, որ թւում էր թէ նա միայն զիտող էր : Պատահում էր, որ նա իր կարծիքը յայտնէր միայն վճիռը կայտցնելուց յետոյ : Երբ նեղն էինք ընկնում, այն ժամանակ նա միջամտում էր վէճին : Սակայն, այսպէս եմ կարծում», «այսպէս եմ խորհուրդ տալիս»ը նրա հազուազիւտ մօտեցումն էր : Նա խնդիրը քննում էր, երեւոյթները պարզում էր մօտեցումի անկիւնից եւ մեզ մղում յանդելու իր ցանկացած եղբակացութեան :

Զարմանալի ստականապէտ էր թոստունը : Բնաւ չէր ժամանուում : Հագուստ-կապուտոր՝ համեստ, ինք՝ համեստութեան մարմնացում : Երեւալու, այսինքն՝ իրեն ցոյց տալու ունակութիւնից զուրկ էր իր ամրողջ էութեամբ : Սիրում էր միշտ ստուերի մէջ մնալ : Բայց հակառակ զրան, նա բոլորի պաշտամունքի առարկան էր, բոլորի սէրն ու յարդանքն էր վայելում :

\* \*

Իր ամիսների ձգուումը թիֆլիս ընկնելու յաջողւում էր : Նրան ճանապարհ են զնում երկաթուղով : Նոյն բաժնում պառկեցնում են թիֆլիս գնացող աբֆով հիւանդ թուրէն Քաջբերունուն :

Երրեք, երրեք ես չպիտի ներեմ իմ Բագուի սիրելի ընկերների այս անփութութիւնը:

Ծոսառմը ուղեկցում է Ծուրէնին դնացքում ու խնամում նրան, բայց ինքը վարակուում է տիֆուզ:

Գալիս է Թիֆլիս ճակատագրական օրերին: Ծառապ եւ լուրջ խնդիրներ կային կարգադրելու: Պէտք է տեսնուէր ժորդանիայի, Վրաստանի վարչապետի, եւ այլոց հետ: Պէտք է կարգադրէր հայ-վրացական փոխարարերութեանց վերաբերող անյետաձգելի խնդիրներ: Սակայն, Ծոսառմը արդէն յոզնած էր, վարակուած տիֆուզ: Նա զգում էր, որ ուժերը իրեն զատանանում են, բայց չի կարող մտնել անկողին՝ առանց տեսակցութիւն ունենալու ժորդանիայի հետ, առանց բանակցելու նրա հետ հայ ժողովուրդի համար իրաւուց կարեւոր խնդիրների մասին:

Վերջապէս, նա մտնում է անկողին: Ընկերները մատնուում են շփոթութեան: Բժիշկ, խնամք: Բայց ուշ է արդէն. հիւանդութիւնը իր քանդիչ դերը կատարել է: Եւ նա զոհ է զնում իր երկու մեծ սկրերին: 1919 թ. Յունուար 18ի զիշերը նա կնքում է իր մահկանացուն...

«ՀԱՅՐԵՆԻՔ» ամսագիր, 1956 թիւ 7, 8, 10, 11 և 1957 թիւ 1:

ԲԱԳՈՒԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ  
(Հատուած)

Հրամանատար Բիշերախովը իր կաղաքներով քաղաքից 40 վերստ հեռաւ որութեան վրայ դանուող Սումգայիս կայարանից բաժանում է հայկական զօրամասներից եւ զաղտնի կերպով մեկնում է դէպի Հիւսիսային Կովկաս, գաւաճանելով իր կոչումին եւ թողնելով մեր զօրքերը առանց օտարագոյն ուժերի օզնութեան։ Նրանից յետոյ հրամանատարութիւնը վերցնում է իր վրայ՝ շտարի պետ զնդապետ Աւետիսեանը։

Տաճկական զօրքերը, հետապնդելով մերոնց, նոյնպէս մօտենում են թագուին եւ կանգնում՝ հայկական զօրքերի զիմաց։

Հայ զինուորներն ու զինուորականները, չնայած իրենց ունեցած հրակայական կորուստներին եւ զրկանքներին, չստանալով եւ ոչ մի օզնութիւն, չէին մտածում, անդամ չէին երևակայում, որ իրենք պէտք է պարտուեն եւ քաղաքը տան թշնամուն։ Նրանք գեռ ևս լի էին յաղթութեան կորովով եւ ազատութեան ու Հայրենասիրութեան զզացումով։ Միայն զիմաւոր հրամանատարութիւնը, Աւետիսեանի զեկավարութեամբ, նկատի ունենալով կըսուզ ուժերի անհաւասարութիւնը եւ մերոնց յոզնածութիւնն ու հիւծուածութիւնը, կասկածում էր, թէ կարելի պիտի լինի երկար ժամանակ քաղաքը պաշտպանել եւ փրկել ժողովուրդը, մանաւանդ հարիւր հազարանց հայութիւնը։

Բալաջար կայարանից, որը գտնուում է Բաղուից 15 վերստ հեռաւորութեան վրայ, Աւետիսեանը մի շարք ստիպողական պահանջներ է անում եւ պաշտօնական հեռազերներ ուղարկում Շահումեանին եւ Կարգանեանին, ինդքելով օզնական ուժեր, առաջարկելով հակառակ զէպջում սկսել բանակցութիւններ թշնամու։ Հետ աւելի թեթևացնելու համար զալիք արհաւիրը ները։ Նա յայտնում է, թէ այլապէս, այսինքն՝ քաղաքը ուժով վերցնելու դէպջում, անխուսափելի է համարում զարհուրելի կոտորածը, մանաւանդ որ տաճիկ հրամանատարութիւնը արդէն ուղարկել էր վերջնազիր քաղաքը յանձնելու։

Շահումեան եւ իր ընկեր Կոմիսարները՝ Արտաշէ Կարինեանը, Սըմբատ Մարգարեանը, Գ. Կարգանեանը, Զափարիմէն, Զեւինը, Ֆիլեսոփը, Կոլեսնիկովայան եւ նրանց զործակիցներ Ս. Տէր Գարբիէլեանը, Աշոտ Յովհաննեսիս եւ ուրիշներ որոշում են զաղտնի հեռանալ քաղաքից դէպի Հաշտարիսան, տանելով իրենց հետ րոլոր կոմունիստ զործիչներին իրենց ընտանիքներով, թուով 400 հոգի, եւ վերցնելով իրենց հետ քաղաքի պահեստների ուազմամթերքը, պարէնը, զանգան ապրանքները եւ բանկերի վալիւտան ու բոլոր հարստութիւնները։ Այդ առիթ նրանք զաղտնի հրամանով հաւաքում

ևն 21 ամենախոշոր ապրանքատար նաւեր, երկու զինուորական («Արտահան» և «Կարս») նաւերի հակողութեան տակ եւ Յուլիս 28, 29 ու 30ին տեղափոխում են նրանց մէջ բոլոր վերեւ յիշուած ապրանքները, դատարկելով քաղաքը, թողնելով կոսուող բանակը առանց սազմամթերքի, դրամի ու դրաբենի եւ չյայտնելով այդ մասին ոչ հրաժանատարութեան, ոչ կոալիսին հիմունքներով կազմուած Գործադիր Կոմիտէին, ոչ Հ. Յ. Դաշնակցութեան կամ միւս կուռակցութիւններին եւ ոչ էլ Հայոց Ազգային Խորհրդին:

Այդ որոշումը նրանք կայացնում են Խորհրդի Յուլիս 27ի արտակարգ նիստից յետոյ, երբ նրանք արդէն հրաժարուած էին իշխանութիւնից, բայց գեր եւս չէին յանձնած այն եւ բռնի շարունակում էին մնալ իրենց պաշտօնի վրայ, միայն իրենց նպատակների համար:

Ի գուրք զնդապետ Աւետիսեանը սպասեց պատասխանի եւ կարդադրութիւնների: Ի վերջոյ, վրդովուած՝ նա ստիպուած եղաւ Յուլիս 30ին զիմել Հայոց Ազգային Խորհրդին, խնդրելով ազգել կառավարութեան վրայ այս կամ այն քայլն առնելու համար:

Եւ ահա այդ միեւնոյն օրը, Յուլիս 30ին, վերջացնելով քաղաքի ուղամաժերքի ու պարէնի պարպումը եւ տեղաւորելով ամենալաւ նաւերից մէկում իրենց ընտանիքները, Շահումեանը կարգադրում է շտապ կերպով ցերեկուայ ժամը 12ին հրաւիրել բանուորա-դինուորա-նաւաստինների Խորհրդի արտակարգ ժողով:

Շնորհիւ քաղաքում արդէն սկսուած խուճապին, այդ ժողովին 300 անդամների փոխարէն զալիս են միայն 70-80 հոգի:

Ժամը 1ին նախադահ Զափարիմէն բանում է նիստը եւ խօսք տալիս կառավարութեան նախագահ Ստեփան Շահումեանին արտակարգ յայտարարութեան համար: Եւ Շահումեանը յայտարարում է մօստաորապէս հետեւեալը.—

«Էնկերնե՛ր, տաճիկները օզակել են մեր քաղաքը եւ սպառնում են զըրաւելու զայն: Խուսաստանի կարմիր ուժերը չկարողացան հասնել մեզ օդ-նութեան: Այստեղ բոլոր կուռակցութիւնները, բանուորները, ժողովուրդը եւ նաւատորմի մի մասը արտայայտուել են, որ կ'ուզէին անզիցինների օդ-նութիւնը, իսկ Հայոց Ազգային Խորհուրդը եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը, ցանկանալով, որ անզիցիններն անպատճառ դան, վերջերս կրաւորական դիրք են բռնել: Դաշնակցութիւնը ներքչնել է իր դինուորներին, յանձինս ամուղջ բանակին, չկոռուել. իսկ Հայոց Ազգային Խորհուրդը մի քանի օր է բանակցութիւններ է վարում տաճիկների հետ քաղաքը յանձնելու համար: Այդ է պատճառը, որ մենք պարտում ենք. ուստի մենք, Կոմիսարներիս Խորհուրդը, որոշել ենք այսօր հեռանալ քաղաքից եւ թողնել վերջինը իր բախտին: Մենք յոյս ունենք, որ ապագայում ուստական կարմիր զօրքերը կը դան եւ նորից կը գրաւեն Բագունք:»

Տողերիս զրոյը, որը Հ. Յ. Դաշնակցութեան կեղրոնական Կոմիտէի անդամ էր, շատ լաւ տեղեակ էր թէ՛ Դաշնակցութեան քաղաքականութեան ու գործունէութեան եւ թէ՛ Հայոց Ազգային Խորհրդի քայլերին: Նա լաւ դիտէր, որ ոչ մէկը եւ ոչ էլ միւսը որեւէ բանակցութիւն չեն վարել թըշ-

նամու հետ եւ չէին էլ թոյլ տայ վարելու՝ առանց իշխանութեան։ Նա զի-  
տէր, որ Հ. Յ. Դաշնակցութեան Բագուի մարմինը մի ամբողջ տարի լարել  
էր իր առաւելագոյն ուժերը, գերմարդկային ճիգեր էր թափել եւ հազարա-  
ւոր լաւագոյն զոհեր էր տուել։ Եւ այսօր Դաշնակցութիւնը թողնուում էր  
իշխանութեան կողմից ուազմի ձափաներում մենակ, անօդնական, առանց  
ուազմամթերքի ու պարէնի։

Բնականարար, խորը յուզումով լցուած, Դաշնակցութեան ներկայա-  
ցուցիչը պատասխանուում է Շահումեանին ու իր բնկերներին։

«Զեր յայտարարութիւնը բացարձակ պրոֆուկացիա է եւ չէ հիմնուած  
ոչ մի փաստի վրայ։ Հ. Յ. Դաշնակցութիւնը ոչ մի բանակցութիւն չէ վա-  
րել թշնամու հետ։ Նա պատուով կոռուել է ու կր կոռու նորէն եւ մի զուցէ  
նաև մեռնի էլ պատուով։ Այդ յայտարարութիւնը տմարդօրէն արւում է  
կոմունխական կառավարութեան կողմից իրեն վախուսան արդարացնելու  
համար։ Բայց զիսցէք, որ գալիք կոտորածների եւ տասնեակ հազարաւոր  
անմեր կանանց, օրիորդների եւ մանուկների արեան պատասխանատուութիւ-  
նը ընկնուում է փախչող բոլցերի իշխանաւորների վրայ»։

Փողովը փակում է, եւ Շահումեանի կառավարութիւնը, առանց  
յանձնելու իշխանութիւնը որեւէ կազմակերպութեան, նատում է պատրաստ-  
ուած նաւերը և հեռանում Բազուից։

Փողովից յետոյ, սակայն, դաշիճի միջանցքում ես նորից բռնում եմ  
Շահումեանին, պատասխանում նրա քայլը եւ ասում։

— Արդեօք դուք չէ՞ք մտածում, որ ձեր բռնած դիրքով Բազուայ աշ-  
խատաւորութիւնը, միեւնոյն թւում եւ հայ զանգուածը եւ ամբողջ հայու-  
թիւնը զցում էք զարաւոր թշնամու զիրեր, որ պիտի բնաշնչի նրան վերջ-  
նականապէս։

Շահումեանը պատասխանում է ինձ։

— Ես ձեզ պատասխանում եմ բնկեր Անինի խօսքերով։ «Երբ ան-  
տառն են կարում, տաշեղները ցրում են»։ Մենք կատարում ենք համաշ-  
խարհային յնզարկութիւն, որի ժամանակ ժողովուրդներ եւ ազգեր կարող  
են ոչնչանալ։ Ի՞նչ ցաւ, եթէ սոցիալիզմը իրագործելու համար անզամ հայ  
ազգը զոհուի։

Ստեղծուեցաւ անտառների դրութիւն։ Երեք հարիւր հազարանց քաղա-  
քը մնաց առանց իշխանութեան այն ժամանակ, երբ մեր բանակը ճակատնե-  
րում հրամանի էր սպասում, իսկ տաճիկները ծիծում էին Բագուի զոները։

Այսպիսի դժոխային պայմաններում, յեղափոխական կուսակցութիւն-  
ների Կեղրոնական Կոմիտէնները ևս զանազան ազգերի միութիւնները առանձ-  
նահում են եւ մտածում իրենց անելիքների ու բռնելիք դիրքի մասին։

Հ. Յ. Դաշնակցութեան կեդրոնական կոմիտէն, որին փաստօրէն պատ-  
կանում էր բանակը, այսինքն՝ միակ կոռուող ոյժը եւ որին, բնականարար,  
վիճակուած էր ասել վճռական խօսքը, Ցուլիս 30ի երեկոյեան, ժողովի նըս-  
տաւ ելք գտնելու ստեղծուած անելանելի կացութիւնից։

Փողովը երկար տեւեց։ Զէր զանուում ոչ մի միջոց փրկութեան։ Բո-  
լորը զգում էին եւ պատկերացնում զալիք կոտորածների ու աւերումների

հսկայական չափերն ու ձեւերը : Բոլորին տիրել էր յուսահատական մի զգացում, և ամէն մէկը զժուարանում էր անել որեւէ յաւսատու առաջարկ : Առողջանու ոչ ոք չէր հաւատում, թէ կարելի է թշնամու հետ համաձայնութեան զալ :

Եւ ահա այդ ծանր վայրկեաններին, մօտառրապէս զիշերուայ ժամը տանեւմէկին, ներս մտաւ ժողովարահ Ռոստոմը : Նա կանգնեց սեղանի մօտ և ասեց հետեւեալը :

— Մի՞թէ մենք պէտք է պարտուինք : Մի՞թէ մեր արզար զատը ըլպէտք է իրականանայ : Մի՞թէ մեր ազգը պէտք է կառորսի և աշխարհին երեսից վերանայ, ինչպէս իր բազմաթիւ հարեւանները անցեալում : Մի՞թէ չկայ արդարութիւն : Մի՞թէ քաղաքակիրթ եւրոպան, որի ազատութեան և պատուին գոհարերում է հայութիւնը, չպէտք է օգնութեան հասնի : Մի՞թէ մեր զերմարդկային զոհարերութեամբ, յանուն ազատութեան, մարդկային իրաւունքների, յեղափոխութեան փրկութեան և Դաշնակիցների յաղթութեան, մենք նախախնամութեան կողմից պիտի զաւապարտուինք ու այս կրտսեկական բովէին թագնուինք մէնակ և անօդնական : Ո՞ւր է արդարութիւնը, ո՞րն է մարդկանց պարտականութիւնը :

Վերացնելով իր խօսքը, Ռոստոմը նստաւ սեղանի մօտ՝ մասնակցելու մեր ժողովին :

Այդ բովէին գուռը բացուեց և սոցիալիստ-յեղափոխական Միքայէլ Տէր Պողոսեանը ներս մտաւ խնդրելու, որ Ռոստոմը գուրս զայ :

Հարեւան սենեակում Տէր Պողոսեանը յանձնել էր Ռոստոմին Պարսկաստանի հնգելի քաղաքից ստացուած նոր ռազիօ հեռազիրը, որով յայտնւում էր, թէ անզիփական հնդկ հազարանոց մի զօրամաս այնուհետ պատրաստ է նաւերը նստելու և Բագուին օգնութեան հասնելու, ևթէ միայն քաղաքը երկու օր պաշտպանուի և պահուի :

Ռոստոմը վերագրածաւ բոլորովին փոխուած : Նա, կարծես, նորէն յարութիւն էր առած : Կարզաց ռոտիօ հեռազիրը և ասաց :

— Ինչ խօսք, որ կուռմ ենք, որ պահում ենք քաղաքը, պահում ենք ժողովուրդը, պահում ենք հայի պատիւը և պաշտպանում ենք մեր և Դաշնակիցների դատը... Ոչ մի խօսք բանակցութեան մասին թշնամու հետ : Կը ուի և անպայման յաղթութիւն :

Ժողովը որոշեց լարել բոլոր ուժերը և պաշտպանել քաղաքը մինչեւ անզիփացների օգնութեան հասնելը : Խսկոյն արուեցին շտագ կարգադրութիւններ և արուեցին համապատասխան հրահանգներ :

Քաղաքային կուսակցութեան կոմիտէները հաւաքեցին իրենց կոռուպ ուժերը և ուղարկեցին ճակատները : Ընկերները անցան կենդանի գործի, հրապուրուած կոուի ցանկութեամբ և յաղթութեան տենչով :

Գիշերը ժամը 12ին, Ռոստոմի հետ միասին անցանք Սալեանի զօրանոցները, ուր գտնում էր Համազասպի շտաբը : Յայտնելով ստացած լուրը և կոմիտէի որոշումը քաղաքի պաշտպանութեան մասին, անցանք ռազմահակատները : Հրամանատարները, սպայութիւնը և զինուարները, իմանալով ուրախառիթ նորութիւնը, կերպարանափոխուեցին : Իրեւ ընդհանուր նշա-

նարան զրուեց կոիւ, յաղբութիւն եւ պատութիւն: Անհատից անհատ, շարքից շարք, ջնկատից ջնկատ տարածուեց այդ նշանաբանը տասը հազար հայ մարտիկ զինուորների մէջ, զասաւորուած երեսուն վերստ տարածութեամբ ձականներում, Բագուի շուրջը, երեք կողմից:

Կէս զիւեր էր: Բոլորը, սուինները ձեռներին, իրենց դիրքերումն են և, կարծէք, զզում են, որ մօտենում է մենամարտի վճռական ժամը:

Դիմացը կանգնած է թշնամու քսան հազարանոց բանակը, սուլթանական Գւարդիան, Գոլիպոլիսում երկու հարիւր հազար անզիլացիների դէմ յազմութիւն տարած դիմիզիաները, զլիաւորութեամբ նուրի փաշայի, հեծեկազօրի պետ Մուրասլ փաշայի եւ զերմանական ու տաճկական ականաւոր զօրավարների ու սպանների:

Ժամը երեքն է, գեռ մութ է: Պարզ երկնքում աստղերը շարունակում են ցոլալ, իսկ բարակ մահիկամեւ կիսալուսինը պատրաստում է թագնուել հորիզոնի յետեւը: Նա, ինչպէս պաշտպանը իսլամի որդիներին, կարծես ըդդում է զալիք փոխորիկը եւ չկամքնալով ականատես լինել իր հովանաւոր-Լայների պարտութեան, հեռանում է:

Ի զուր սպասեց նուրի փաշան, որ Բագուի ներկայացուցիչները գնային իրեն յանձնելու քազաքի բանալիները... Ի զուր նա սպասեց Հայ մարտիկների ներկայացուցիչներին, որ զային եւ յանձնէին իրենց զէնքերը: Ի զուր նա սպասեց Հ. Յ. Դաշնակցութեան եւ Հայոց Ազգային Խորհրդի ներկայացուցիչներին:

Նա գիտէր արդէն Շահումեանի կառավարութեան հեռանալը: Նա տեսէ էր արդէն Շարան Դազի զազաթից տասնեակ նաւերի մեկնելը: Նա գիտէր, որ քաղաքում շկար իշխանութիւն: Նա կարծում էր, որ նաւթի աշխարհը արդէն գրաւուած էր: Նա զգիտէր միայն, որ Հայ մարտիկ զինուորի կամքը պոզպատի նման ամուր էր եւ նա պատրաստ էր ընդունել Հարուածն ու տալ համապատասխան զարկը:

Զստանալով իր վերջնագրի պատասխանը եւ չտեսնելով յիշեալ ներկայացուցիչներին, նուրի փաշան զայրանում է եւ հրամայում զօրքերին՝ շարժուել եւ պատժել ըմբռաստներին...

Ժամը երեք եւ կէսն է: Թշնամու կողմից լսում են ձայներ եւ նկատում շարժումներ: Մերթ ընդ մերթ փայլում են նրա զինուորների սուինները եւ լսում է ճիւների խրխնջոցը: Թշնամին առաջ է խաղում եւ բոլոր ճականներում սկսում է յարձակումը: Եւ ահա մի վայրկեան եւս, ու լըսում է տասնեակ գերմանական թնդանօթների ահութի որոտը, հարիւրաւոր գնդացիների ճոճողը եւ հազարաւոր հրացանների վզվզոցը...

Որոտում է երկինքը, զզում է գետինը...

Հաւատացեալ ասկեարները կարմիր ֆէսերով հազարներով, երեսուն վերստ տարածութեամբ, զազում են զէպի մերոնց դիրքերը եւ զոսում ևլլ-լա՞հ, Ալլա՞հ... եւ արձագանզի փոխարէն լսում են մեր զինուորների անհոդ համ գուռուանները: Դործում են մեր հրետանիները, կարկում են մեր գնդացիները եւ բացում են մեր հազարաւոր հրացանները...

Քաղաքը զարթնեց: Զարթնեցին քաղաքացիները: Սարսափը պատեց

շատերին : Մահու ուրուականն էին պատկերացնում : Լոյսը բացուեց : Թշնամին հասաւ մեր զիբերին : Երկու հակառակորդ բանակները խառնուեցին իրար, եւ սկսուեց կատաղի բռունցքամարտ :

Դժուար է նկարագրել կոռուի իսկական պատկերը : Հարկաւոր է հանձարեղ բանաստեղծի զրիչը եւ տաղանդաւոր նկարիչի վրձինը :

Այսպէս 1918 թիւ, Յուլիս 31ի առաօտեան սկսուեց անհաւասար ճակատամարտը հայ զինուորի և տաճիկ ասկեարի միջև : Սկսուեց եւ չարունակուեց անընդհատ զեց Երկար օրեր : Կոփուը չըր դադարում զիշեր ու ցերեկ : Քաջ զինուորները դարձել էին գերմանզիկ, Հերկուլիսեան հսկաներ : Նրանք չէին ուսում, չէին խմում, չէին էլ մտածում սնունդի մասին : Ժամանակ չունէին : Մտածում էին միայն յաղթել կամ մեռնել :

Կատաղել էր եւ թշնամին : Նրա զրոհը մեծ էր : Բայց նա չէր սպասում հայ զինուորի այս սոսկալի յամառութիւնը, կատաղի զիմադրութիւնը : Գերիներ չկային երկու կողմերի համար : Սպանում էին հարիւրներով, հազարներով : Թշնամու զիակները անթիւ ու անհամար էին : Թշնամին վերջի միգերն էր թափում : Նրա նոր հասած թարմ ուժերը շպրտուեցին կոռու դաշտը, իսկ սաւառնակները պտըսում էին երկնքում եւ կրակ թափում դիրքերի վրայ :

Քաղաքի հայութիւնը<sup>(\*)</sup> անխտիր զործում էր : Բոլոր խաւերը, հարուստ եւ ազգատ, կին թէ տղամարդ, ծեր թէ երեխայ իրենց լուժան էին թերում ընդհանուրի ազատութեան զործին — մէկը կոռուվ, միւսը զործով, երրորդը գրամով, չորրորդը հացով, հինգերորդը փամփուշտ կրելով ու ջուր մտակարարելով...

Այսուհետեւ էր միայն հայութիւնը : Խոկ մեր հարեւանենք :

Եօթանասուն հազար ուսու ազգարնակութիւնը անտարբեր էր : Կոփու նրան կարծես չէր վերաբերում : Մեծ Ռուսաստանի այդ հատուածը կարծես չէր հասկանում Բագուի նշանակութիւնը, նաւթի արժէքը եւ նրա ոյժը :

Բագուի քան հազարանոց հրէութիւնը «չէզո՞ի» զերում էր : Նրան հետաքրքրում էր միայն աշխատանքը եւ նաւթի առեւտուրը :

Բագուի իննըսուն հազարանոց թրքութիւնը թշնամու կողմնակից էր եւ ըստ հնարաւորութեան օգնում էր նրան :

Կողմնակից էր թշնամուն եւ հինգ հազարանոց վրացիութիւնը . բայց նա կրաւորական զիրք էր բռնած :

Զէզոք էին նոյնպէս ուրիշ մանր ազգերը, — լեռնացիները, լեհերը եւ զանազան եւրոպացիներ :

Օդնեց հայ զինուորին որոշ չափով միայն Սոցիալիստ-Յեղափոխական կուսակցութիւնը, որին կողմնակից էր զինուորական նաւատորմի եւ ծովակալների մնացած մասը : Դրա չնորհիւ հնարաւոր եղաւ, երեք օր կասպեան

(\*) Բագուի նահանգի հայութեան ընդհանուր թիւը հասնում էր հարիւր խան հազարի, սրբ խազու բաղանուն եօրանասուն հազար, 46 հայկական զիւկերում՝ երեսուն հազար եւ Եթորանուն, Սակեանուն, Ասուրայուն, Գեօզայուն, Նամախուն, Ներքենդուն, Աւրայուն եւ ուրիշ փոքր վայրերում՝ մոտ խան հազար :

ծովում փնտռելուց յետոյ, չը ջապատել եւ յետ բերել փախած բոլէեւիկներին, նաւերը ու ուազմամթերքը ու վերջինովս բաւարարել ուզմաճակատը:

Օգնում էր հայ զինուորին նաև բոլէիկներից մնացած զնդապիս Պետրովի պաշարման Հրետանին, որը բազկացած էր վեց հատ և 8 դիցմանոց թնդանօթներից եւ ունէր հայ Հրամանատար և զինուորներ: Չորս օր անդաղար քաղաքի կեղրոնից, Պետրովսկայա Հրամարակից, հազարաւոր ուումքեր նաև նետեց զէպի թնդանին եւ խաչաձեւ կրակով հերթով ոմբակոծեց թնդամու զիբքերն ու թիկունքը, նախառպէս բաժանելով քառակուսի չըրշանակների:

Գործում էին ե՛ւ Համազասպի չորրորդ եւ հինգերորդ հրետանիները, որոնք կարծրած թնդանօթների բերաններից անընդհատ ուումքեր էին նետում զէպի թշնամին:

Օղը սոսկալի տարացել էր. գետինը թնդանօթների շուրջը կրակ էր զարձել. թնդանօթնամբդիզները մեքենայ էին զարձել. նրանք տաքից այրում էին, հանել էին զգեստները եւ մերկ էին զործում: Հարիւրաւոր մարզիկ ջուր էին կրում եւ անդաղար շաղում թնդանօթների վրայ եւ չըջակայ զետինը:

Կռուի դաշտը իրենից ներկայացնում էր մի հրաբխային գետին: Օղը վառում էր, արիւնը հոսում եւ խկոյն չորանում: Կայծակահար որոտները իւլացնում էին ամէն ինչ. մահը կլանում էր բոլորին եւ կարծես տօնում էր իր յաջողութիւնը:

Դանաեան գծոխք...

Թշնամու Հազարաւոր դիակներին միանում էին մերոնց հարիւրաւորները: Ընկնում էին քաջարի զինուորները: Ընկնում էր խիզախ սպայութիւնը: Ընկաւ ազնիւ եւ քաջ Սերգոն, Համազասպի անվեհեր օգնականը, բրիգազի սիրար, սէրը եւ յոյսը: Ընկաւ «Քալլազեօզ» եւ կարիճ Խսակը, մեր հեծելազօրի պետը: Ընկաւ զեղցիկ, խիզախ, ազնիւ ու կրակոտ Արամ Դովլութեանը, 18րդ գումարտակի պետը, որը լինում էր միշտ զումարտակի առջեւը, մէջքը արած դէպի թշնամին, ձեռքերը բրածքացրած, զեկավարելով զումարտակը, որպէս պարահանդէսի օրէկսոր: Ընկաւ Սերաստացի հսկան՝ Մուրատը, հայ Հայդուկի իդէալը, Սուլթան Համբէխի ահն ու սարսափը: Ընկաւ եւ կտակեց իր հաւատարիմ ընկեր Սեպուհին շարունակել սուրբ զործը: Ընկան շատ շատերը: Եւ բոլորն էլ ընկան ու մեռան միայն մի կարօտով, — արգեօ՞ք քրէկեցին իրենց մահով հարազատներին եւ մեծ զաղափարը, արգեօ՞ք հասան անդիմացիները...

Աւա՛զ: Միայն հինգերորդ օրը մտաւ քաղաք անդիմական զնդապիս Ստորաց՝ քանազուն զանազան պաշտօնեաներով, թիկնապահներով ու կապիկներով(\*): Եկաւ, տեսաւ եւ գարմացաւ: Տեսաւ, ինչպէս հայ զինուորը պատժում է այն տաճիկին, որը Գալիպոլիում անպատուել էր իր զինակիցներին: Բայց ի՞նչ օգուտ: Թշնամին երկաթուղու գծով, թիֆլիսի վրայով եւ

(\*) Զինուորներից մի խնիսը իրենց զուարենութեան համար պահում էին իրենց մօտ փոքրիկ կտակիներ:

Հայաստանի միջոց, Ազստաֆա կայարանով անդադար ստանում էր նոր ուժեր, որոնց շպրտում էր կռուի գաշտը:

Կռուի հինգերորդ օրն է, Օգոստոսի 4ը:

Թշնամին կարծես սկսում է յաջողութիւն շահնիլ: Նրան թարմ, խոչոր ուժերը ամէն ջանք են թափում պատռել մերոնց ազթան, որի համար ընտրել են ամենազժուարին և ամուր ճակատը՝ Շիխովո գիւղի ծովեզը: Մի կողմից՝ ծովը, միւս կողմից՝ ժայռոտ բարձունքները, կախուած ծովի վըրայ: Թշնամին զիտակցարար այդ վայրն է ընտրել հարուածի համար: Նըպատակն է խարել մերոնց: Շղթան պատռում է: Թշնամու լաւան հոսում է զէպի Բիրեհիյաթի նաւ թահանքերի ձորը, ուղղուելով զէպի քաղաք: Պահնջուում է թարմ ոյժ, գուրս վոնաելու թշնամուն և նորից ծածկելու բացը:

Գնդապես Աւետիսեանը խնդրում է Հ. Յ. Դաշնակցութեան կոմիտէից ոյժ: Իր հայրուկներից և քաղաքացիներից, երեկոյեան ժամը 12ին, բեռնատար օտոմորիներով, կոմիտէն շտապ ուղարկում է հարիւր յիսուն հոգի՝ սպաններ թարապպարեանի և Սարումեանի զեկավարութեամբ: Հասնելով վըտանգի վայրը, մերոնք կռուի են բռնուում թշնամու հետ Բիրեհիյաթի և քաղաքամաս Բայիլովի միջնացքում, որտեղ թշնամու տասնեակ զնդացիները պատրաստ են լինուում մերոնց լափելու: Եւ լափում են: Ընկնում է Թարագգարեանը: Ընկնում է զինուորութեան մեծագոյն մասը: Վիրաւորուում է ծանր՝ Սարումեանը: Վիրաւորուում են մասցած զինուորները: Եւ թշնամին շարժուում է ծովափով Բայիլով քաղաքամասը եւ ապա՝ քաղաք:

Պատռուել է եւ կեզրոնի զղթան, Թշնամին գրաւել է Սալեանի զօրանոցները քաղաքի միւս ծայրում: Նրա ուժեղ 8 զիցմանոց թնդանօթները իրենց ամբողջ ուշադրութիւնը դարձրել են այդաեկ զործող մեր նրդ հրետանու վրայ, որի պէտն է զիլապէս Արգանովը եւ որի թնդանօթամիգները ամբողջապէս բազկացած են բարձրագոյն դպրոցների ուսանողներից: Խումբերը պայմուում են մերոնց զիմին, փշացնուում են թնդանօթները, սպանուում եւ վիրաւորուում են ուսանողներից շտաբին, որոնց թուում եւ թուրէն Շաթիրեանին<sup>(\*)</sup> — քառասուն եւ երկու տեղից:

Օգոստոս 5ն է, առաօտեան ժամը 8ը: Թշնամին ոգեւորուած է: Նա արդէն կարծում է, թէ քաղաքը իրան է, եւ անդադար գոռում է՝ Ալլահ, Ալլահ...

Գնդապես Աւետիսեանը, նստած իր գրասենեակում, զլխաւոր շտարում, խորհուում է եւ անում հեռախօսով վերջին կարգադրութիւնը: Նա հրամայում է տասներորդ գումարտակին, որը կատագօրէն գիմագրում էր թըշնամուն՝ վերեգմաներում, Բիրեհիյաթի բարձունքների վրայ: «Ալանց բռովի կորցնելու» թողել տեղը թշնամուն, իսկոյն յար իջնել նաւ թահանքերի ձորը եւ թիկունքից խփել ծովափով քաղաք հոսող հակառակորդին»:

Հրամայում է եւ յայտնուում պաշտօնակիցներին: — «Եթէ այս վերջին

(\*) Ռուբէն Շաթիրեանը մի տարի քծշկուելուց յետոյ եւ կորցմելով մի ոտք, մի աչքը, ծնօտի մի մասը, անցաւ Հայաստան եւ շարունակց իր զիմուորական ծառայութիւնը Հայաստանի զօրամասերում:

Հրամանս կատարուի շտապ եւ ճշգորէն, մենք փրկուած ենք, փրկուած է եւ քաղաքը. հակառակ դէպքում չուտով կը սկսուի քաղաքում տանկական վանդէան»:

Անցնում է մի ժամ:

Յանկարծ զնդակի արագութեամբ տարածւում է ամբողջ քաղաքում ուրախ լուրը.

«Թշնամին փախչում է»:

Եւ իրօք կատարում է հրաշքը: Տասներորդ գումարտակը մատեմատիկական ճշգութեամբ կատարում է հրամանատար Աւետիսեանի հրամանը: Նա իրեն զցում է ձորը, անցնում թշնամու թիկունքը եւ սկսում զրոհը:

Թշնամին յանկարծակի է զայխս եւ չուտով խուճապի է մատնում, փախուստի մէջ գնառելով իր փրկութիւնը: Եւ փախչում է յետ: Գլխակորոյս, թափելով զէնքերը, թողնելով զնդացիրները, մերոնց հարուածի տակ, նա միեւնոյն ձորով փախչում է եւ անցնում Շիխովո լեռների յետեւը, Պուտայի հովիտը եւ ապա Շարան Դազի բարձունքները:

Այդ փախուստը կայծակի արագութեամբ տարածւում է ուազմաճականներում: Ամէն տեղ թշնամին, սարսափով բռնուած եւ խուճապի մատնը-ւած, փախչում է ու փախչում, իսկ մերոնք, ոգեւորուած՝ հետապնդում են ու հարուածում:

Անողոք էր հարուածը, մեծ էր կոտորածը: Թշնամին միայն Պուտայի հովիտում թողնում է երկու հազարի չափ դիակներ:

Այսպէս փրկուեց Բագուն Օզոսառու օքն, 1918 թուին:

Այսպէս նա ցոյց տուեց համայն աշխարհին հայ մարտիկի հերոսական ոյժը:

Փա՛ռք նահատակուածներին:

«ՀԱՅՐԵՆԻՔ», ամսագիր, Գ. տարի (1925), թիւ 9:

## ԱՐԱՄ ԱԼՉՈՒՃԵԱՆ

### **Ի՞ՆՉՊԻՍ ՌՈՍՏՈՄԸ ՀԵՇԱՑԱԻ ԲԱԳՈՒԻՑ**

Ծոստոմի հանդէպ, որպէս կուսակցական հիմնադրի, խոր յարգանք ևմ ունեցել, մանկութեան օրերից : Սակայն, նրան մօտից ճանաչեցի միայն 1917ին, նրան Բաղու զալուց յետոյ : Երբ ճանաչեցի յարգանքը վերածուեց պաշտամունքի բազում ընկերների պէս : Նրա հետ եղայ անբաժան մինչեւ Բաղուից իրան զաղմքը : Նրա հրահանգով՝ Պետրովսկ զնացի, ապա այնաեղից անցայ Հիւսիսային Կովկաս և այսպէս միայն բաժանուեցի նրանից :

Հ. Յ. Դաշնակցութեան Կեդրոնական Կոմիտէի (ընտրուած ոռւսական յեղափոխութիւնից յետոյ) կազմի ամենակրտսեր անդամն էի : Եւ այն աշխատանքները, որ իմ ուսերի վրայ էին գրուած, պատճառ էին շարունակ, որ Ծոստոմի եւ Արքահամբի հետ լինեմ, նրանց հաւանութիւնը եւ ցուցմունքները ստանամ : Այսպէս որ լիսովին իրազեկ ևմ Բաղուի գէպքերին, ինչպէս եւ քաղաքը թողնելու վերջին ժամերի անցուղարձին :

Սեպտեմբերի սկզբներին արդէն անզլիխական զօրամասը լքել էր Բագուի ճակատը և հեռացել : Ճակատի կացութիւնը գառնում էր խիստ յուսահատական, բայց մենք գեռ յամառում էինք զիմաղրել : Սակայն, օրուուր զիմաղրութիւնը գառնում էր անիմաստ թէ՛ ուզգական և թէ քաղաքական մի շարք բարգութիւնների չնորհիւ, որոնց մասին տեղը չէ այստեղ խօսիլ :

Քաղաքը լքելու օրերը մօտենում էին, եւր ահա Սեպտեմբեր 17ի երեկոյեան, կ. Կոմիտէն լայնացրած նիստ գումարեց՝ քաղաքը թողնելու խընդիրը քննելու համար : Որոշուեց քաղաքը թողնել նոյն զիշերը, ժամը 12ին : Որոշումը կայացաւ բուռն վիճարանութիւններից, յուսահատական և զրամատիկ ապրումներից յետոյ, երեկոյեան ժամը 8ին : Որովհ՝ շատ կարճ ժամանակ էր մնում քաղաքը թողնելու մասին պէտք եղած կարգադրութիւններն անելու ամրող ճակատին, բոլոր մարմիննեցին եւ վարչական հաստատութիւններին, ինչպէս եւ ամրող ժողովրդին :

Ամրող ծովափում գանուող նաւերը, մակոյկները և ուրիշ փոխադրական միջոցները գրուեցին նահանջը զեկավարող բնդհանուր լիազօր՝ Գ. Բալյայեանի տրամադրութեան տակ : Նա, ի հարկէ, անմիջապէս անցաւ գործի :

Սակայն, անցնենք մեզ հետաքրքրող խնդրին : կ. Կոմիտէի պատճական այդ նիստի ամենաողբերգական պահը Ծոստոմի հարցն էր :

— Ես պիտի մնամ քաղաքում, — ասաց նա : — ամրող ժողովուրդը տեղահան անել եւ քաղաքից հեռացնել չպիտի կարողանանք : Շատերն էլ իրենք չպիտի ցանկանան թողնել տունտեղ : Անինք Շամախու ամրող զաւառի գիւղացիութիւնը, որ նահանջող բանակի հետ եկել հաւաքուել է Բագուում : Քաղաքը գրաւող տաճիկները անպայման պիտի կոտորած սարքեն : Բայց իմ

նրանց ձեռքը անցնելը եւ հրապարակով կախուելը շատ բան պիտի փոխի : Այս պայքարի ղեկավարներից մէկը պիտի մնայ ժողովրդի կողքին : Եւ կըրկ-նում եմ, զա միայն ես պիտի լինիմ :

Ահա մօտաւորապէս նրա պատճառաբանութիւնը, որ ոսումը պէս պայ-թեց ժողովի մէջ :

Մեր առարկութիւններն ու թախանձանքները չկուրեցին նրա յամա-ռութիւնը : Ընդհանուր յուզումը աննկարագրելի էր : Պապաշայի (Լեռն Թա-դէսեանի) զոյզ ակնցների տակից արդէն արցունքները սահում էին այսե-րի վրայ :

Եկաւ Ազգային Առորհրդի նախկին նախազահ՝ Հայկ Տէր Միքայէլեա-նը : Երբ այս պատուական ծերունին լսեց Խոստոմի որոշումը՝ մնալ քաղա-քում, ուղղակի ինքն իրեն կորցրեց : Երկար համոզում էր նրան հրաժար-ուել այդ ժամքից : Ինքը պատրաստ էր եւ պիտի զլիսաւորէր այն յանձնա-խումբը, որ պիտի ընդպատջ երթար տաճիկ հրաժանատարութեան : Ասում էր, որ Խոստոմը պէտք չունէր մնալու եւ որ նրա պէս մի զոյ մենք պէտք չէ տանք : Ի վերջոյ, ծերունին, արտասուրքները աչքերին, չորեց Խոստոմի առջեւ եւ խնդրեց, որ խօսք տայ, որ անպայման պիտի հեռանայ քաղաքից : Այզպէս էր ահա, որ զինց :

Հ. Յ. Դաշնակցութեան զիւցազնական պատմութեան մէջ այդ ժողո-վը պիտի մնայ եղակի : Սակայն, նրա մանրամասնութիւնների տեղը չէ այս-տեղ :

Բազմազան ու գժուարին խնդիրներ կային կարգադրելիք այդ կարճ ժամանակաշրջանում : Բայց հոգուս խորքում մի կասկած ծուարել էր Խոս-տոմի հեռանալու խնդրի առթիւ : Մեր անզուգական Յովսէփ Այլամազեանին կանչեցի եւ կարգադրեցի աչքը չհեռացնել Խոստոմից եւ հետեւել նրան շա-րունակ եւ մեզ իրազեկ պահել նրա շարժումների մասին :

Հեռախոսները անընդհատ զործում էին : Ձերաւորներ եւ մեքենաներով սուրհանդակներ թոշում էին ամէն կողմ : Բոլոր թաղամասերում տնէ տուն ըրջում էին խմբակներ լուր տալու ժողովրդին քաղաքը Թողնելու որոշման մասին, ինչպէս եւ յայտնելու իւրաքանչիւր թաղի համար նշանակուած մօ-տակայ նաւահանդիսար եւ նաւերը :

Արխիւներ, ուղմամթերք, հրանդ կամ վիրաւոր փոխազրելու մասին գեկուցում էր թէ՛ Արքահամին եւ թէ՛ Խոստոմին, որը ամէն տեղ էր եւ ան-միջական կարգադրութիւններ էր անում :

Կ. Կոմիտէի զանազան մարմինների եւ Ազգային Առորհրդի, ինչպէս եւ մեր շէնքի շրջանում բնակուող ժողովրդի համար յատկացուած էր «Պոչ-կին» նաւը, որը զնալու էր նրան եւ վերջինը թողնելու էր նաւահանդիսար :

Նաւերը թողնելու էին քաղաքը երեք ուղղութեամբ՝ դէպի Պետրովսկ, Կրասնաւուսուկ եւ էնդէլի (այժմ Փահէլի) :

Ճակատի զօրամասերը թողնելու էին զերքերը հրաժանատարութեան ցուցմունքներով : Արդէն ամենահեռաւոր Արմէնիքենդ կոչուող թաղամասից ժողովրդը իջև էր նաւահանդիսարները : Քաղաքում բոլորը զիտէին, եւ հե-ռացողը հեռանում էր : Մեր թաղային մարմինների չէնքերը դատարկուած

էին, եւ մեր կ. Կոմիտէի ու Ազգային Խորհրդի Հսկայ չէնքը իր բազմաթիւ աննեակներով ամայացած էր :

Արբահամը, իր անբաժան պորտֆիլը թեւի տակ, մի խումբ ընկերների հետ արդէն զնացել էր որոշուած նաւը, իսկ Խոստոմը գեռ չէր շտապում : Մօտեցայ իրեն :

- Խոստոմ, 15 րոպէ մնաց, զնա՞նք :
- Շշինչ, թշնամին անմիջաղէս քաղաք չի մտնի :
- Բայց, նաւը կարող է շարժուել :
- Նա վերջինը պիտի մեկնի :

Սրբնթաց ձիւաւոր սուրհանդակներ եկան, ապա զեկուցում տուին ու անցան :

Ժողովուրդը արդէն նկատելիօրէն պարզուում էր : Խոստոմը շարունակ հարց ու փորձ էր անում, թէ չի՞ մնացել արդեօք մի տեղ, ուր լուր տըրուած չէ քաղաքը թողնելու մասին : Էլ ոչ մի տեղից հեռախօսի պատասխան չկար : Լուց եւ հրամանատարութեան հեռախօսը :

Ճնշող ու ծանր վայրէեաններ էին ամայի եւ տակնուրբայ եղած մեր չէնքում :

- Գնանք, — ասաց Խոստոմը :
- Ես եւ Յովսէփը ընկերացանք իրեն :

Կ. Կոմիտէի չէնքի փողոցը տանում էր ուղիղ ծովափ, ուր գտնուող նաւահանդիսափ մօտ խարիսխ էր ձգել «Պուշկին» նաւը : Փողոցը թաղուած էր անթափանց խաւարի մէջ : Շամախուց զաղթած զիւղացիները սայլերով, եղներով գեր շարունակում էին զնալ զէպի ծովափ :

Բաւական զնացել էինք, երբ այդ մթի ու ժխորի մէջ կորցրինք Խոստոմին : Մինչեւ նաւահանդիսի վաղեցինք, փողոցի իւրաքանչիւր մայթը մէկս վերցրած : Զկար, բայց մեզանից արագ զնալ չէր կարող :

Որոշեցինք նորից զնալ կ. Կոմիտէի չէնքը աարբեր ուղիներով : Յարակից փողոցները կտրեցի, դուրս եկայ մինչև Բոլշայա Մորսկայա եւ Ցեղիփոննայա փողոցով վերադարձայ Դրդ թաղամասի գրասեննեակը, որը աւերուած ու դատարկ էր, ինչպէս մեր բոլոր հիմնարկների չէնքերը :

Յովսէփի հետ յուսահատ հանդիպեցինք ու վաղեցինք նաւահանդիսափ նաւ մտնելը շատ գժուար էր արդէն, բայց մտանք եւ ստուգեցինք, որ Խոստոմը չկայ :

Զգիտում ի՞նչ մզումով՝ նորից գուրս եկայ նաւից եւ վերապարձայ մեր չէնքը : Հեռուից արդէն նշմարում էի ափը թողնող նաւերը : Արդէն 12ից քառորդ անց էր, կէս ժամ վազվակել էի : Շէնքը նոյն պատկերն էր ներկայացը նում, բացի այն, որ մթերքների պահեստներով մի փոթորիկ էր անցել ու տակնուրբայ արել :

Զանգահարեցի մի քանի տեղ : Ապարդին : Յովնած ու յուսահատ՝ կրկն դիմեցի զէպի նաւ : Տեղը չէ այստեղ նկարագրել նաւը ընկերուու պարագաները...

Երբ արդէն նաւի վրայ էինք, Արբահամը մի խումբ ընկերներով շըր շապատեց երկուսիս :

— Երկու հոգի կորցրի՞ք նրան, — զարժացած հարցրեց Աքրահամը :  
Պատմեցինք մանրամասն :

— Դիմամմք խոյս է տուել, — եզրակացրեց ընկերներից մէկը :  
Ու այսպէս Ռոստոմը չկար :

Մեզանից առաջ զնացած նաւերով հեռացած լինել չէր կարող, ան-  
շուշան : Ափից շատ հեռու, ուր թշնամու ուումբերը մեզ չէին հասնում, նաւը  
կեցրել էինք և անցնող նաւերից նաւապետի միջոցով հարցնում էինք Ռոս-  
տոմի մասին : Սակայն, Ռոստոմը ոչ մի նաւի մէջ չէր :

Յուսահատութիւնը ընդհանուր էր : Լոյսը բացուել էր : Ել ոչ մի նա-  
չկար : Մինք արդէն մօտենում էինք ինզիլիին (Փահնեւի), երբ հորիզոնի վը-  
րայ նկատուեց մեզ հետեւող մի փոքրիկ նաւ : Մօտենում էր և արդէն որոշ  
էր, որ Կասպից ծովի ուղմանաւերից մէկն էր :

Նաւապետի սենեակի մօտ, բարձր տախտակամածի վրայ հաւաքուած,  
ամէն կողմից զիտում էինք մօտեցող նաւը, երբ ընկերներից մէկը գոչեց :

— Ռոստոմը...

Չեմ յիշում որի՞ հեռագիտակն էր : Ռուդակի պոկեցի նրա ձեռքից :  
Նաւի մէջ, տախտակամածի վրայ, աթոռով վրայ նստած էր մի զինուորա-  
կան, որից մի քիչ հեռու մի քանի զինուորականներ նաւի եղրին, իսկ նըս-  
տողի մօտ անց ու դարձ էր անում քաղաքացիական զգեստներով մէկը,  
որը կասկածից գուրս էր, որ Ռոստոմն էր : Քանի նաւը մօտենում էր, այն-  
քան արդէն որոշ էր դառնում, որ Ռոստոմն է նաւի մէջ :

«Պուչկինը իրօք լեփ-լեցուն էր : Բոլորը զիտէին, որ Ռոստոմը ան-  
յայտացել էր : Թէ՛ մեր ընկերները և թէ՛ ժողովուրդը յուսահատ ժամեր  
էին անցրել այն մտատանջութեամբ, թէ՛ Ռոստոմը մնացել է Բազւում : Եւ  
երբ ուղմանաւը, մեր նաւապետի հետ խօսելուց յետոյ, մօտեցաւ մեզ, ան-  
նկարագրելի ուրախութեան բացազնչութիւններ թնդացրին ողը, ի տես  
Ռոստոմին, որը փոխագրուեց մեր նաւը :

Թողնենք ընկերների հանդիպումը նրա հետ, պատմենք այն, ինչ որ  
նա ասաց ինձ : Տեղի էր ունեցել հետեւեալը : —

Ռոստոմը չէր կարողացել ստուգապէս իմանալ, թէ արդեօք զօրավար  
Բագրատունին, որ մի ոտքը կտրուած՝ գամուած էր աթոռին, տարուած  
էր նաւ, թէ՛ լքուած փախտստի ժիորի մէջ : Այս մտահոգութեամբ նա խոյս  
էր տուել մեզանից ևս գնացել հրամանատարութեան չէնքը, ուր ամէն ինչ  
տակնուվրայ էր եղած : Գտել էր նրան իր առանձնասենեակում՝ յուսահատ  
նստած : Մոռացել էին նրան տանել նաւը :

Ի՞նչ զժուարութիւններով, շալակած իջեցրել էր փողոց եւ ի՞նչ չար-  
չարանքով հասցրել ծովափ, աւելորդ է պատմել : Զինուորականների օգնու-  
թեամբ տարեկ էր նրան հրամանատարութեան նաւը եւ ցանկացել զուրս գալ՝  
մեր նաւը զալու : Սակայն, զօրավարը ընդդիմացել էր եւ հրամայել, որ իր  
նաւը թողնի ափը, վատահ, որ մեր նաւը արդէն ափից հեռացել էր եւ Ռոս-  
տոմը մեզ հասնել չէր կարող : Բայցմանուր կտրուել էր ափից այն պահին,  
երբ Բայկովի բարձունքներից եկող թնդանօթի ոումբերը արդէն պայմթելիս  
են եղել նաւի շուրջը :

Այդ նաւը — անունը չեմ յիշում — հեռանալով ոմբակոծութեան սահմաններից, մնացել էր Բագության դիմաց, բաց էր թողել բոլոր նաւերը եւ, երբ արդէն ծովափին ոչ մի նաւակ չէր մնացել, թողել էր Բագուն եւ, իիստ արագընթաց լինելով, հասել էր մեզ:

Ահա թէ ի՞նչ պայմաններում եւ ի՞նչպէս թոստոմը թողել էր Բագուն այդ ծանր ու դժնդակ օրերին:

Թոստոմի յատուկ էր մտահոգ լինել բոլորի մասին, բոլոր պայմաններում եւ երբեք իր մասին:

Արդեօք այդ չէ՞ր պատճառը նաեւ իր այնքա՞ն անժամանակ վախճանի...

«ՀԱՅՐԵՆԻՔ» ամսագիր, 1948, թիւ 1:

ԱՅԼ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ

Բազուի Հ. Յ. Դաշնակցութեան կեղրոնական Կոմիտէի մէկ ժողովը, որ կայսցաւ քաղաքի անկման՝ Անպտեմբեր 14ի երեկոյեան, յիշելն անհրաժեշտ է, մանաւանդ որ Կ. Կոմիտէի կազմից շատերը չկան այլեւս։ Ազգային Խորհրդը միաձայնութեամբ որոշել էր, որ նախագահ Ա. Գիւլիսանդանեանը և Ռուսուոմ Զօրեանը անպայման հեռանան քաղաքից։ Ազգային Խորհրդի ժողովից յետոյ կայսցաւ Կեղրոնական Կոմիտէի վերջին խորհրդակցութիւնը, ուր Ա. Գիւլիսանդանեանը, ներկայացրեց քաղաքի կացութիւնը, աւելացրենելով նաեւ Ազգային Խորհրդի որոշումը՝ իրենց քաղաքից հեռանալու մասին։ Ձեկուցումից անմիջապէս յետոյ, Ռուսուոմը զարձաւ Արբահամին։

— Արբահամ՝ դու պիտի մնաս և կախուես։

Շեշտը կտրուկ էր և հրամայական։ Ազգային Խորհրդի նախագահը պէտք է կախուէր…

— Լա՛ւ, պատասխանեց Ա. Գիւլիսանդանեանը, առանց որեւէ դժգոհանքի։

Զուր մազուեց բոլորի զլիին։ Պապաշան (Լեւոն Թադէոսեանը) խորյուղումի մէջ էր։ Պարզ էր, որ Ռուսուոմը Արբահամին մինակը ձգողը չէր բազու՝ զաժան թուրքերի ձևոքը։

Ու պիտի կախուէին Ռուսուոմն ու Արբահամը Բազուի փողոցներում, թուրքերի ձեռքով, իրենց կողքին ունենալով նաեւ ուրիշներ…

Ո՛չ։ Հ. Յ. Դաշնակցութեան Բազուի կեղր Կոմիտէն չէր կարող իւրացնել նման առաջարկ։ Եւ զերակշռեց հաւաքականութեան կամքը։

«ԱԶԴԱԿ» շաբաթօրեակ, 1946, Փետր. 1:

ՄԻ ԷԶ ՌՈՍՏՈՄԻ ԿԵԱՆՔԻՑ

1918 թ. Յուլիս աղիք 10ն էր Հայաթեան համար մի չարաբաստիկ օր, երբ զօրքի աջ թեւը՝ Համազասպի բրիգադան սովից ու ծարաւից թուրցով ու անկաղմակերպուած, թշնամու գերակշռող ուժից լքեց Մազրասա (Շամախու գաւառ) զիդի Շորուզինի ֆրոնտը և խառն ի խուռան փախաւ մինչեւ Բագուայ գոները, որից յետոյ Բագուն օղակուեց չորս կողմից եւ սկսուեց հայ մարտիրոսազրութեան պատմութեան զրքում մի փայլուն էջ եւս բացուել: Այդ նահանջի ժամանակ Համազասպի շարուում էր եւ Ռոստոմը, որը պատերազմի ամբողջ ընթացքում եղաւ յիշեալ բրիգադայի լաւազանի ընկերը: Խնչպէս չեշաեցի, Համազասպի բրիգադան, աւելի շուտ գունդը, փախչում էր երկար շարաններով, որոնց երկարութիւնը 100 վերստի էր հասնում: Զօրքի նահանջի հետ զատարկուեցին Շամախու, Գիոյչայի եւ Արէի գաւառների բոլոր հայկական զիւղերը: 40-50 հազար ազգաբնակութիւն բռնել էր Շամախու եւ Բագուի միջեւ եղած ճամբան: Բայորս լքուած, յուսահատուած էինք: Մեզնից իւրաքանչիւրը աշխատում էր շուտ փախչել, հեռանալ թշնամու հետեւող հեծելազօրքից, որը կտրել էր ճամբան եւ գիւղացիների մի քանի սայլեր յետ էր տուել զէպի տաճկական բանակը: Փախուատը այնքան անակնկան եղաւ, որ 3100 զինուորներից մի 30 մարդ չմնաց, որ զաղթականների թիկունքը պաշտպանէ: Այդ խուճապի ժամանակ, մայրերը խելակորոյս ձգում էին իրենց մանուկներին թիկերի տուկ, իսկ որդիները իրենց ծնողներին էին թողնում եւ առաջ ընթանում: Այդ պահուն բոլորի մէջ զորդում էր միայն փախուատի բնազդը: Հայրենիք, ընտանիք, պարտականութիւն բռնութեան բոլորը ի ղերեւ էին եղել մէր սրտից: Ահա մի այդպիսի վայնասունների, ճիշերի մոմենտից էր, որ հանդիպեցի Ռոստոմին մեն-մէնակ, ուռսական հասարակ զինուորի հագուստի մէջ, փոշիի մէջ կորած ուռսարընակ Մարազա (Շամախու գաւառ) զիւղում: Այդ զիւղում, բացի մեր սիրելի Ռոստոմից, ոչ ոք չկար: Նախօրօք աւտոմարիլիների մէջ փախել էին բռլեւիկեան կառավարութեան յեղափոխական, ուլորա-կոմունիստ կոմիսարները, մատնելով հիւանդ ու տղեն զթութեան քոյրերին ճակատազրի անողոք քմահաճոյքին: Զկար Համազասպի շտարից եւ ոչ ոք: Ռոստոմն էր, որ Մարգարէի նման ման էր զալիս զիւղի հիւանդունցները, վիրաւոր եւ հիւանդ զինուորներին հաւաքում Բագու տեղափոխելու համար: Երբ Ռոստոմին հանդիպեցինք այդ զթութեան մէջ, զարմացանք, որ չէր մտածում փախչել: Առաջին մեր հարցումն եղաւ նրան:

— Բնկեր Ռոստոմ, ինչո՞ւ էք մնացել այստեղ, չէ՞ որ փախչող փախչողի յետեւից է: Մեր այդ հարցումին նա չզատասախանեց՝ պարզօքն խուսափից:

— Անի՞ք ձեզ հետ Փուրպոններ կամ սայլեր, — զիմեց նա այս խօսքերով մեզ : Եւ երբ յայտնեցինք, որ մեզ հետ Բագու ևն զնում թեթև բռնաւորուած ուստ զիւզացիների վեց Փուրպոն, մի թեթև ժպիտ երեւաց նրա կնճռուած ճակատին : Խոկոյն խնդրեց, որ իրեն տանենք կառապանների մօտ, որոնք կազմ ու պատրաստ ազում էին մեկնել զիւզից : Այսուհետեւ սկսուեց Երկար ու բարակ մի սակարկութիւն Ծոստոմի և կառապանների մէջ, որոնք սկզբում մերժում էին նրա զիմումները : Ծոստոմը կողեւ էր կառապաններին և չէր ազում նրանցից բաժանուել : Եթէ անսնէիք, թէ ինչոքս էր խնդրում, ուզզակի կը զարմանայիք :

Հարազատ հայրը իր որդիների համար այնպէս շէր հոգայ, ինչպէս հանգուցեալը հայ զինուորի համար : Վերջապէս Ծոստոմին յախողուեց կառապանների գործը չարժել ու համաձայնեցնել, որ իրենց հետ վերցնեն վիրաւորներին : Իր զործը աւարտած համարելով, մեզ էլ ճանապարհեց, իսկ ինքը մնաց, պատճառարանելով, որ ինքը ձիով է, երբ մենք ևս Փուրպոնները անցնենք մօտակայ զառիվերը, ինքը կը հետեւի մեզ : Զառիվերը անցանք, գետ մի 20 վերսա էլ առաջ, բայց չկար Ծոստոմը : Կէս զիշերին հեռուից երեւացին երկու ձիաւորներ, որոնցից մէկի քրաքեւից իմացանք, որ Ծոստոմն է, որը մի կազ ձիու վրայ նստած, վեզարանման մեշոկը զիսին, անցաւ մեր մօտից : Այդ դէպքից յետոյ Ծոստոմը իմ աչքում շատ բարձրացաւ : Այդ ժամանակ միայն հասկացայ, թէ ինչու նա վայելում է բոլորի սէրն ու յարգանքը :

«ԱՌԱԽՈՏ» շաբաթաթերթ (Թիերան), 1919 Մարտ, թիւ 3:

ՌՈՍՏՈՄԻ ՀԵՏ

Բազուի կորոներու ամենատաք մէկ ըրջանին էր, որ Մուրատի, Սեպուհի, Ստեփան Շաղիկեանի ու բժիշկ Արքակ Պօղոսեանի հետ հասանք այն-աեղ:

Շամալիի — Կէօքչայ ճակատին վրայ զանուող մեր զինուորները՝ թըշ-նամու գերազանց ուժերու ճնշումին տակ՝ սկսած էին նահանջել: Թրքական բանակը, որուն միացած էին Աղրաքչյաննի ու Հետօփային Կովկասի խոլամ-ները, աներկիւր կ'արշաւէր դէպի Բազու...

Խուճապային օրեր էին: Բարերախտարար, Բազուն ուղարկուած նոր ու թարմ ուժերով ուղամաճակատի երերուն վիճակը սկսած էր մասամբ դար-մանուիլ, և այսպէսով հնարաւորութիւն կը տրուէր պաշտովանութեան զե-կավարներուն՝ նոր, արմատական միջոցներու մասին մտածելու:

Ստեփան Շահումեանի հրաւէրնամակին մէջ՝ մեդի յանձնաբարուած էր առժամապէս տեղաւորուիլ Բազու, իր շատ մօտիկ ընկերներէն մէկուն՝ Սերգէյ Մարտիկեանի տունը: Վերջինը Մուրատին ու Սեպուհին ծանօթ էր, ուստի չոգենաւէն ուղիղ զնացինք այսաեղ:

Բնակարանը բաւական մեծ էր: Դիրութեամբ տեղաւորուեցանք: Տե-սակ մը կայան էր Մարտիկեանի բնակարանը, ուր մեղմէ առաջ բնակած էին ուրիշներ ալ, ի միջի այլոց, կամաւորական Ա. գոնդէն իմ շատ մտերիմ ընկերու՝ Անաստաս Միկոյեանը, որ այդ օրերուն մեկնած էր Մոսկուա ու վերադառնալու էր շուտով:

Փակագծի մէջ, ըստ կարգին, ըսեմ, որ Միկոյեանը արգէն Բազուի մէջ յայտնի դէմք էր, և ևս անծանօթ էի այդ պարագային, որպէս հետեւ բոլցելիկ դառնալին յետոյ, բնաւ առիթ չէի ունեցած իրեն հանդիպելու: Շատ ուրախացայ, երբ լսեցի, որ պիտի վերադառնար ու պատեհաւ թիւն պի-տի ունենայի զինակից ընկերուն տեսնելու: Միամարէն կ'ենթադրէի, թէ բարի, առաքինի ու Հայրենաւէր ընկերոջ մը պիտի տեսնէի, ինչպէս որ ճանչացած էի զայն՝ մեր կամաւորական շարքերուն մէջ, կոուի առաջաւոր գերեթերուն վրայ:

Հիասթափութեանս մասին վաղաժամ է խօսիլ, յուշերուս ընթացքին պիտի տեսնենք:

Մուրատն ու Սեպուհը աճապարեցին շտար երթալու, որպէսովի Հան-դիպէին Ծոստումին ու միւս զեկավար ընկերներուն: Ստեփան Շահումեանի հետ ժամագրութիւնը ձգեցին, որ Սերգէյ Մարտիկեանը կարգադրէր յա-ջորդ օրուան համար:

Բաւական ուշ վերադառնան Մուրատն ու Սեպուհը: Իրենց ստացած տեղեկութիւնները Բազուի վիճակի մասին հետեւեալն էին.

— Բազուն ձգնաժամային զբութեան մէջ է : Մոսկուա վճռական կերպով մէրժած է օգնական ուժեր զրկել, իսկ Անդրբացիներու կողմէ էնդէլիքն օգնական ուժեր զրկուելու առաջարկին՝ բացարձակապէս դէմ է Ստեփան Շահումեանը : Մեզի յանձնաբարեցին, որ վագուան մէր տեսակցութեան ընթացքին հայ ժողովուրդին սպասնացող ահաւոր վտանգը մտանանշենք և մախունձանոք խնդրենք, որ չընդդիմանայ Անդրբացիներու առաջարկին :

\* \*

Մզմաւանջային զիշեր մը եղաւ Բազուի մէջ մէր անցուցած առաջին դիշերը : Անհամբերութեամբ կը սպասէինք առաւօտեան, որպէսզի լոէինք Շահումեանի որոշումը :

Սերբէ Մարտիկեանը շատ կանուխ արթնցած ու նախաճաշի պատրաստին տեսած էր : Երբ լսեց մէր ոտնածանիները, ներս մտաւ ու հազորեց, որ Շահումեանը պատրաստ է առաւօտեան ընդունելու Մուրատին ու Սեպուհին :

Հապճնապով նախաճաշ ընելէ յետոյ, անոնք մեկնեցան, իսկ մենք, բը-ժիշկ Պօղոսեանը, Մազիկեանն ու ես տոիթէն օգտուելով, դուրս եկանք, ծածոթանալու համար Բազուին :

Կամաւորական Ա. Գնդին մէջ ունէինք բաւական բազուցիներ, որոնք ամէն օր Բազուն գոմիկով մէզ ձանձրացուցած էին : Յատկապէս աչքի կ'իշնար այդ տեսակէտէն իմ վաշտիս քարառուզար Յովշաննէս Ղազարեան Բարյեանցը .

— Բազուն մէր տեսած քաղաքներից չէ : Պէտք է ապրել այնտեղ, ճանաչելու համար թէ ի՞նչ սքանչելի քազաք է ...

Անկեղծ ըլլալու համար ըսկմ, որ ընկերներս ու ես առանձնապէս ըստքանչանու որեւէ բան չտեսանք, հրապուրքէ որեւէ անկիւն չտանք դիտելու, հրացումի առարկայ որեւէ չչնք, հրապարակ, կոթող չտեսանք, այլ միայն տիտուր ու ազտոս փողոցներ ու հեռաւոր ռազմաճակատէն վերագրձող թափթափած ուստական բանակի կորուգազորկ զինուորներ ...

Մազիկեանը առաջարկեց անցնիլ զինուոր Շտաբը . թերեւս հոն հանդիպէինք Մուրատին ու Սեպուհին, որոնք հաւանաբար վերագրձած պիտի ըլլային Շահումեանի պաշտօնատունէն :

Շատարին մէջ զտանք բոլոր ընկերները, որոնք Բազուի պաշտապանութեան մէջ կարեւոր դէր կը կատարէին, — Ռոստոմը, Գիւլիանդանեանը, Ալբարտեանը, Բալայեանը եւ ուրիշ մէզի անձանօթ ընկերներ : Ամէնքն ալ անհամբեր կը սպասէին Մուրատի ու Սեպուհի վերագրձին՝ իմանալու համար Շահումեանին հետ իրենց ունեցած տեսակցութեան արդիւնքը :

Շատ չանցած՝ անոնք եկան : Բայց երկուքին ալ դէմքերը այնպիսի տիտուր ու զայրալից արտայայտութիւն ունէին, որ ամէնքս ալ սահմուկած մնացինք :

Թոստոմը, նկատելով անոնց յուղումալից վիճակը, իսկոյն Գիւլիան-

զանեանին հետ ոտքի էլաւ և Մուրատն ու Սեպուհը առնելով՝ մեկուսացաւ քոյքինտի սենեակի մը մէջ :

Բաւական սպասեցինք, մինչեւ որ անոնք վերջացուցին իրենց զեկուցուց : Սենեակին զորս և կան չորսն ալ՝ մահանդ ու խորասուզուած ծանր խոհերու մէջ : Ոչ ոք համարձակութիւն ունեցաւ որեւէ հարցում ընելու :

— Գիացէ՛ք ու հանգստացէ՛ք, — ըստե թոստոմը, — վաղը կրկին կը տեսնուենք :

\* \*

Դէպի տուն գնալու ժամանակ թժշկէ Պօղոսեանը փորձեց խօսեցին Մուրատն ու Սեպուհը : Բայց Սեպուհին խոժող նայուածքը անմիջապէս լուցուց զայն : Յուզարկաւորներու նման, անձայն, անշշուկ տուն հասանք, ուր, բարերախտարար, այդ պահուն ոչ ոք չկար :

Հազիւ տեղաւորուած էինք, երբ ներս մտաւ հառչեայ Աճառեանը, որ Շտարէն զորս զալու ժամանակ նկատած էր մեզ ու հետեւած մեզի :

Աճառեանին հանդէպ խոր յարգանք ունէին թէ՛ Մուրատը և թէ՛ Սեպուհը : Այսպէս որ, բնաւ տհանձնիլի չթուեցաւ իր ներկայութիւնը : Իսկ մենք չառ զոհ մնացինք, որովհետեւ վստահ էինք, որ Աճառեանը պիսի խօսք բախար Շահումեանի հետ տեղի ունեցած տեսակցութեան մասին :

— Երկուք ալ Աւազ Ուրբաթ զարձած էք, — ըստե Հրաշեան, — մարդ կը սարսափի երեսներուդ նայելու : Բայց մեր համբերութիւնն ալ չարաշար մի գործածէք : Ի՞նչ եղաւ ձեր տեսակցութեան արդիւնքը : Գոնէ երկու խօսք չէ՞ք ըսեր...

— Հրաշեա՛յ, լաւ արդիւնք որ ունենար՝ առանց հարցումիդ ալ պիտի բաէինք : Բայց ի՞նչ կրնանք ըսել, երբ յուսախար ու հիասթափ բաժնուեցանք Շահումեանէն : Մեր ևս անոր տեսակէտներուն միջն այնպիսի խոր տարրերութիւններ կան, որ անկարելի է լաւ բան մը սպասէլ իրմէն :

— Բայց զո՞նէ Բագուի մէջ խճողուած հարիւր հազարէ աւելի հայութեան գոյութեան սպասնացող վտանգը չի՞ զգար Շահումեանը...

— Այո՛, կը զգայ, բայց չ'ուցիր մեր առաջարկած ձեւով հեռացնել այդ վտանգը : Անդիացիները երբ Բագու մտնեն, — կ'ըսէ, — այլեւս չենք կրնար զանոնք հեռացնել : Մինչդեռ եթէ թուրքերը մտնեն, ուռները շատ գիւրութեամբ զանոնք գուրս կը չպրտեն :

Իսկ մինչեւ այդ չպրտումը ի՞նչ կ'ըլլայ հայութեան վիճակը այստեղ : Բագուն թուրքերուն կողմէ զբաւուելին յետոյ՝ ի՞նչ կ'ըլլայ Հայաստանի վիճակը : Զէ՞ որ Հայաստանը այժմ կապուած է զրեթէ Բագուի ճակատի անցուդարձերուն հետ : Բագուն զրաւելէ յետոյ՝ թուրքերը կը վերագառնան Հայաստան՝ ջարդելու համար մեր ժողովուրդը հոն եւս :

— Ճիշդ այդ հարցումը տուինք մենք : Բայց այդ հարցումը բոլոր Հայերուն չթիներուն վրայ է բացի բոլչեւիկներէն : Գիտե՞ս թէ ինչ պատասխանեց մեզի Շահումեանը . «Համաշխարհային Յեղափոխութեան յաղթանակին համար ի՞նչ նշանակութիւն ունի հայ ժողովուրդի գոյութիւնը»...

— Եւ դուք լսեցի՞ք այդ անգութ արտայայտութիւնը պաղարիւնութեամբ :

— Թքել ենք այդ յաղթանակին վրայ, որ պիտի շահուի հայ ժողովուրդին ոչնչացումով, — բայիք ու բաժնուեցանք :

Հրաշեայ Անտեսանը իր հայրենասիրական զգացումներուն մէջ ա՛յնքան բուռն կերպով արդուեցաւ Շահումեանի խօսքերէն, որ ուշադնաց եղաւ եւ բժիշկ Պօղոսեանի խնամքին յանձնեցինք զինք :

\* \*

Հայ-թաթարական կորիւներու շրջանին Մուրատն ու Սեպուհը շատ մոտէն ձանչցող ու անսոնց հիացող բարեկամ մը, որ սոցիալիստ-յեղափոխական մըն էր (ափսո՞ս, անունը չեմ յիշեր), դիմելով Ծոստոմին, ինդրած էր, որ ինք ալ ներկայ բլլար իր բնակարանին մէջ անոնց ի պատիւ տրուելիք ճաշկերոյթին ու հաւանութիւնը առնելէ յետոյ, երեկոյեան եկաւ մեր բնակարանը՝ անձամբ հրաիրելու համար :

Մուրատն ու Սեպուհը Բազուի ներկայ պայմաններուն մէջ անպատճէ զտան առաջարկը : Սակայն, երբ լսուեցաւ, որ Ծոստոմին ու Գիւլիանդան-եանն ալ պիտի մասնակցէին՝ համաձայնեցան :

Հակառակ Բագուի մէջ գրեթէ տիրող սովին, զարարացքի մէր բարեկամին օրհնեալ նահապետական սեղանին վրայ՝ ամէն տհասկի համազամները կարծես մրցումի ևլած էին իրարու հետ : Մետաքսեայ զգեստներու եւ զարդակներու մէջ պճնուած Ղարաբաղի տարազով խաթունիկ տանակիրուհին, մայրը մեզ հիւրասիրողին, սեղանին զլուխը փառաւորապէս բազմելով, հրաիրեց մեզ շրջապատելու սեղանը : Մօտաւորապէս, որքան կը յիշեմ, 20 հոգի կայինք :

Տանուտէրը՝ երիտասարդ, վայելչահասակ, սիրուն տղամարդ մըն էր, միաժամանակ զարգացած : Բնուրիս ալ բաժակները յեցնելէ յետոյ, ոսքի երաւու, իր մայրիկը ներկայացուց հրաիրեալներուն եւ, յուղիչ բարիզալուստի քանի մը խօսքերէ յետոյ, առաջարկեց ընկեր Բալայեանը թամատա ընտրել, որպէսողի կառավարէր սեղանը : Ներկաները միամայն հաւանութիւն յայտնեցին ու Գերասիմը անցաւ իր պաշտօնին :

Ո՞վ պատեհութիւն ունեցած է Գերասիմը մօտէն ձանչնալու, ան միայն կրնայ զիտնալ, թէ ինչ անպիճելի չնորհ ունէր ան թամատա ըլլալու :

Առաջին բաժակները առաջարկեց խմել հայ ժողովուրդի երկու աննը-ման հերոս զաւակներուն՝ Մուրատի ու Սեպուհի կենացը, մազթելով որ անոնց զալուստը բարերաստիկ ըլլայ Բազուի հերոսամարտին համար :

Յաջորդարար, Ռոստոմին, Գիւլիանդանեանին կենացներէն յետոյ, ան առաջարկեց խմել երկու հերոսներուն զինակից-գործակիցներուն կենացը՝ ակնարկելով բժիշկ Արշակ Պօղոսեանին, Մտեսփան Մազիկեանին ու տողեր զրոյին : Մասնաւորապէս ծանրանալով իմ վրայ՝ ան անդրադարձաւ յատկապէս իշխան Արզութեանի գունդին մէջ ունեցած իմ գործունէութեան (ընկեր Գերասիմ Բալայեանը օգնականն էր իշխանին, իսկ ևս երբորդ վաշտի պէտն

էի)։ զբուատեց ՌԵվանտուգի գրաւման ընթացքին վաշտիս կատարած գերը, ողջունեց իմ մէջս թրքական բանակի նախկին սպան, որ հայ կամաւորական Ա. Եւ է. զունդերուն մէջ, վաշտապէտի հանգամանքով ծառայած էր հայ ժողովուրդի ազատազրական պայքարին...

Ըսկէր Գերասիմին վերջին խօսքերը առանձին հետաքրքրութիւն արթընցուցին Ռոստոմի մէջ։ Սկսաւ ուշադրութեամբ դիտել զիս Եւ ըստ յանկարծ։

— Ամիրեա՞ն, ճաշից յիտոյ քեզ հետ խօսելիք ունեմ։

Բաւական երկար տևեց հացկերոյթը։ Ռոստոմն ու Գիւլիանդանեանը շապասեցին մինչեւ վերջանալը։ Մտիպողական զործեր ունենալը պատճառարանելով՝ ներոգութիւն խնդրեցին առանձիքն ու հրաժեշտ առին։

ՄԵկնումի պահուն մօտեցայ ընկէր Ռոստոմին՝ յիշեցնելով իր պատուէը։

— Վազը, առաւօտ, անցիր շտար, քեզ մի կարեւոր զործ պիտի տամ... .

Ուշ ժամանակ վերադարձնեանք տուն՝ առանց քէֆէ, խրախնանքէ վերադարձնի զոհունակութիւնն ունենալու։ Բազուի վիճակը շատ յուսահատական էր, և մեր ունեցածը ակամայ կերուխում մըն էր...



Յաջորդ առաւօտ, Մուրատին ու Սեպուհին ընկերանալով, զացի շտար։

Ռոստոմը զտայ իր զրասեղանին վրայ՝ միաբնուած բազմաթիւ խնդիրներ լուծելու աշխատանքին մէջ։ Աղջունելի յիտոյ, ըստ։

— Ամիրեա՞ն, թրքական բանակին վերաբերող ահազին վաւերաթուղթերի մի արխիս զրաւել են մերոնք։ Դրանք պրապտելու և որոշ մասերի էլ թարգմանութեան պէտք ունինք։ Երէկ, երբ Գերասիմը չետեց թրքական բանակի սպայ լինելու, անմիջապէս յիշեցի, որ մենք պէտք ունինք քեզ։ Անառեանը զրազուած է այդ զործով, բայց ասում է, որ զինուորական տէրմիններ, քեքնիք բառեր ու աացուածքներ կան, որ ինքը լիովին չի կարող թարգմանել։ Եթէ Մուրատն ու Սեպուհը համաձայնեն, պիտի խնդրեմ, որ օդինս Աճառեանին միասին կարգի զնելու համար այդ արխիւը։

— Ամիրեանը Զեր տրամադրութեան տակ է ե'րը Եւ ո'քչափ ժամանակ որ պէտք ունենաք իրեն, — ըսին Մուրատն ու Սեպուհը։

— Հիմա չափազանց կարեւոր զրազում ունեմ, — շարունակեց Ռոստոմը, — էկսորէ յիտոյ անցիր ինձ մօտ, որպէսզի միասին զնանք զինաւոր շտարը ու քեզ ծանօթացնեմ զնդապէտ Աւետիսեանի (շտարի պէտ) ու Աճառեանի հետ։

— Արդէն ծանոթ եմ Աճառեանին։

— Այդ աւելի լաւ, միասին պիտի աշխատէք։

Գնդապէտ Աւետիսեանը մէկ ընդունեց շատ սիրալիր կերպով։ Անմիջապէս զիս ծանօթացոց իր ստորագասներուն հետ ու ապա առաջնորդեց Հրաչեայ Աճառեանի գրաւենեակը։

Թուղթերու ահազին դէզի մը մէջ ընկզմած զտանք Աճառեանը։

— Հրաշեալայ, — բառ թոստոմը, —քեզի մի օզնական ևմ բերել, թըր-քական բանակի մի սպայ: Յոյս ունիմ, որ գոհ պիտի լինես:

— Բայց, Ամէիրեան, մէջ թէ թրքական բանակի սպայ ես, — մտէրմիկ չեսառվ մը բառ Ամառեանը: — Ծո՛, մնտովիկ, ինչո՞ւ մինչեւ հիմա ինծի չես բառած այս պարագան: Մինակս կը տանջուիմ այսուղ, իսկ զուն սուսուփու մէկ կողմ քաշուեր ես:

— Բայց ես ո՞րտեղին պիտի իմանայի, որ պէտք ունէք իմ ծառայութեանս: Այսօրու ընէ ահա արամազրութեանդ տակ եմ:

Նոր սեղան մը միացուցինք Հրաշեալայի զրասեղանին, եւ ես իսկոյն անցայ զործի:

Աւստրօ-Հունգարական ու գերմանական բանակներու կողքին զործող թրքական բանակին սպատկանող Տիվիզիայի մը զնդերէն մէկուն արխիւն էր, որ յանձնեցին ինծի սրբութեած համար: Գրաւուած էր Գանձակի մօտերը տեղի ունեցած բուռն կոռուի մը ընթացքին:

\* \*

Ուրեմն, թրքական բանակը Բագուի դէմ, ուժեղացած նոյնիսկ հեռաւոր Սլովաքիային բերուած միաւորներով, ա՞յնքան յանդուզն զարձած էր, որ սազմաճակատին վրայ ապահոված ըլլալով թուական գերակշռութիւնը, սկսած էր յարձակողական զործողութիւններու: Այդպիսի յարձակումի մը ընթացքին էր, որ ուժեղ ճնշումի մը զոհ գարձաւ մէր սիրելի Մուրատը:

Զօր: Սեպուշի յուշերուն մէջ այնքան խոր յուզումով եւ մանրամասնութեամբ նկարագրուած է Մուրատի հերոսական մահը, որ ես պիտի խուսափիմ կրկնութիւններէ: Միայն այսքանը պիտի բաեմ, որ անոր մահը խոր սուզի մատնեց Բագուի հայ ազգարնակչութիւնը: Մեր մէծ ընկեր Թոստոմը ա՞յնքան խոր ազգուած էր, որ կարծես կորսնցուցած էր իր հարազատ զաւակը: Այնուամենայնիւ ան բնաւ չկորսնցուց Բագուի պաշտպանութեան վերաբերող իր անսպառ ևռանդն ու կորովք:

Ինչպէս ընկեր Արամ Այչու ջեանը ա՞յնքան գեղեցկօրէն նկարագրած էր «Հայրէնիք» ամսագրի մէջ, նոստոմ ամէն օր նոր ծրագիր մը կր յզանար՝ սազմաճակատի զրաւթիւնը բարելաւելու համար: Անոր մէկ յանդուզն ծրագիրն էր Թաղէս Ամիրեանի խմբին կատարել տուած այն խիզախ յարձակումը, որ ուղղակի շմեցուց թշնամին:

Բագուն արդէն օղակուած (Ժիայն ծովային յարաբերութիւնը կը պահուէր)՝ թուրքերը կը սպառնային զրաւելու քաղաքը: Թնդանօթներու ուումբերը արդէն սկսած էին կատարել աւերը: Ժողովուրզին բարոյական կորուցը երերալու նշաններ ցոյց կու տար, ինչ որ կ'անդրադառնար Եւ ճակատի պաշտպաններուն արամազրութեան վրայ:

Այս պարագաները նկատի ունենալով՝ Կասպեան նաւատորմը, համախորհուրդ միւս կուսակցութիւններուն հետ, յայտարարեց Տիվարուրա, ձերբակալեց բոլոր բոլշեւիկ զեկավարները, Շահումեան, Զափարիմէ, գըն-

դապետ Պետրով և այլն, ու Հրաւիրեց Անգլիացիները, որ օգնութեան հասնին...

Ճիշդ այդ օրը Անաստաս Միկոյեանը Աստրախանէն ռազմամթերք բռնցուած նաւով մը կը հասնի Բագու: Դեռ ծովուն վրայ, լսելով Կասպէան նաւատորմի տիքամբուրա յայտարարելին ու բոլեւիկ զեկավարներու ձերակալութիւնը, անմիջապէս չողենաւին ցուուկը զարձնել կու տայ դէպի հիւսիս ու ամենայն արագութեամբ կը վերադառնայ Աստրախան:

Զար լիզունէր կ'ըսէին, որ չողենաւին վրայ զանուած ռազմամթերքը ծով թափել տուած էր՝ կասկածելով, որ Կասպէան նաւատորմը կրնար հետապնդել չողենաւը և, ձերակալման պարագային, Բագուի պաշտպանները կրնային օգաուիլ ռազմամթերքէն:

\* \*

Սկզբնական օրերուն, երբ անդիմացի զինուորները սկսան երենալ Բագուի փողոցներուն ու պաշտպանութեան դիրքերուն վրայ, թէ՛ մեր զինուորներուն և թէ՛ մեր ժողովուրդին կորովը բարձրացաւ: Ամենուն դէմքին վրայ սկսան նկատուիլ ժպիտ և ուրախ տրամադրութիւն: Դժբախտաբար, երկար չտեսեց այդ ողեւորսութիւնը: Անզիացիները ողորմելի միաւոր մը միայն զրկած էին, որ չուտով հիանամբ ըրաւ բոլորն ալ:

Բախտորոշ օրեր էին: Սեպտեմբեր, երբ Ազգային Խորհուրդէն վերագարձաւ, պատուիրեց ինձիք, որ ժամ մը յետոյ, թէ՛ ի Փոննայա և Զէրնոմորբակայա փողոցներուն անկիւնը գանուող զեղարանին առջեւը սպասեմ Խոստոմին կարեւոր հրահնագ մը ստանալու համար:

Անմիջապէս փութեացի ժամադրավլայրը՝ առանց սպասելու որոշեալ ժամին:

Դեղարանին ժամացոյցին ճիշդ դէմք կանգնած՝ անհամբեր կը սպասէի, երբ, յանկարծ, ձեռքի թեթեւ հպում մը զգացի ուսիս վրայ: Խոստոմն էր: «Հետեւիր ինձ», ըստ ու չարունակեց ճանապարհը:

Անկիւնի բազմութիւնը մեր ետեւ ճգելէ յետոյ՝ ան կանգ առաւ ու հազիւ լսելի ճայնով մը ըստաւ.

— Վազը առաւօտ, ժամը միշտ 10ին, այս հասցէով (զրուած հայերէն և ուստիրէն) կ'երթա Զօր. Բարդառունիին բնակարանը և կ'առես, թէ ևս զրկեցի քեզ: Այստեղ պիտի ինի նոյնուն անզիփական զօրամասի շտարի պետ՝ Գնդապետ Սթորոշը: Մի կարևոր զործողութեան մասին պիտի խորհրդարակցենք և քեզ մը կ'եր պիտի առաջարկենք: Յոյս ունեմ, որ կը ստանձնեմ և յաջողութեամբ էլ կը կատարես: Մի բան խստօրէն կը պատուիրեմ ու կը պահանջեմ նո՛յնքան խստօրէն, որ բացարձակապէս զարդնի պահես բոլոր անցուղարձը ու ոչ ոքի ոչինչ շասես: Նոյնիսիկ...

— Նոյնիսիկ Սեպտեմբեր:

— Այո՛, նոյնիսիկ Սեպտեմբեր, — հաստատեց Խոստոմ, պեխերու կըծկումով թեթեւ ժպիտ մը գծելու իր պատկառելի դէմքին վրայ:

Առանց դժուարութեան կարելի է երեւակայել, թէ ևս ինչպէս անցու-

ցի այդ գիշերը : Բարեբախտաբար , մեծահարուստ Աֆանասովներու բնակարանը բաղմաթիւ բաժանմունքներ ունէր , և անկողնիս մէջ աջ ու ձախ զառնալու ժամանակ մահմակալին հանած ազմուկը չէր խանզարեր ոչ Սեպուհին , ոչ թէ իշկ Պօղոսեանին եւ ոչ ալ Մագիկեանին , որոնք հանգիստ կը քը-նանային :

Աֆանասովներու բարի ծառան , ըստ սովորութեան , սամովարը արդէն եռացուցած եւ թէյի Հաճելի բարձունքով լեցուցած էր ամրող բնակարանը , երբ աչքերս բացի , Հաղիւ առաօտեան դէմ վրաս եկած թմրիրէն :

Բոլորուցանք նախաճաշի սեղանին չուրջ : Բայց , ի մեծ ցաւ բոլորիս , Ղազախցի մէր բարեկամը , որ հազիւ վերջացուցած էր իր ամէնօրեայ առաօտեան սազմոսը , մօտեցաւ ու յայտնեց , որ այդ օրուայ թէյը ինք պատրաստած էր հօրի ջարով , որովհեաւ քազաքին ջրամբարներու ջրերը սպառած էին : Խրականին մէջ , թուրքերը պաշարումը ամբողջացնելէ յետոյ , ու ընչացուցած էին հուր հայթայթող խողովակները :

Բաղո՞ւ եւ ջրհօրի ջո՞ւր...

Ազի ու նաւթի հոսով ջրհօրի ջուրերը անկարելի էր գործածել . մէր սքանչելի թէյը միայն զոյն ունէր եւ ոչ համ : Այդ օրուընէ սկսեալ զրկուեցանք զոնէ թէյ մը ունենալու հաճոյքէն : Մէր ծարաւը կը յակեցնէինք բռաննիս ցօղուելով ջրհօրի ջրով , որ բարեբախտաբար բաւական պաղ էր ...

\* \*

Զօր . Բազրատունիի բնակարանը չատ հեռու չէր : Դիւրութեամբ գըտայ : Գեղեցիկ շէնքի մը Երկրորդ յարկին մէջ կը բնակէր :

Զէի ճանչնար Զօրավարը : Եւ Երբ սկսայ սանդուխներէն բարձրանալ , մտահոգաւիին մը սկսու տանջել զիս . ի՞նչ լեզուով պիտի խօսէինք իրարուհետ , ևթէ ան ալ նազարելի կեանին նման սուսախոս էր :

Պահակ զինուորը , ստուգելի յետոյ ինքնութիւնն , զիս առաջնորդեց զրասենեակ :

Համակրելի դէմքով Երիտասարդ զօրավար մըն էր Բազրատունին : Փաստակէմ ընդանեց զիս՝ Երկարօրէն սեղմելով ձեռքս , առանց տեղէն չարժելու : Այդ պահուն ցաւով նկատեցի , որ հաշմանդամ էր :

— Բարո՞վ , հազար բարի , սիրելի՝ հայրենակից : Արի , ճիշդ դէմս նստիր : Խոստոմը քիչ առաջ հնառախոսեց արդէն : Մինչև . Գնդ . Մթոքսի գալը , ձեզ կը բացատրէմ , թէ ի՞նչ ծրապիր ունենք եւ ինչպիսի ծառայութիւն կ'ակնկալինք ձեղանից :

Այնքան դիւրութեամբ ու այնքան սահուն հայերէն մը կը խօսէր , որ ուղղակի աղշած մնացի :

— Ինչո՞ւ չփոթած Երեւոյթ առիք...

— Պարոն գօրամար , կը հիանամ ձեր հայերէնին վրայ : Մատանող էի , թէ ի՞նչպէս իրար պիտի հասկնայինք , եւ հիմա , Երբ ձեզ լեցիր , աղչեցայ :

— Այս աղայ , ախուցխացի եմ : Մեծ հայրս կը զրումէն եկած է : Մինչեւ մէր տունէն դուրս գալս՝ ուրիշ լեզու շեմ խօսած : Մայրենի լեզուս շեմ

մոռցած, թէեւ կը տիրապէտեմ ոստուբէն, դէքմաներէն, անգլերէն ու Փը-  
րաներէն լեզուներուն:

— Արեմն, խօսինք մեր հայրերուն լեզուսիք: Ես ալ բարերզցի եմ:  
Մեր ու երզումի բարբառները զրեթէ նոյնն են:

— Ահ, ուրեմն, խօսիքս հայրենակիցներ ենք: Հիմա լսիր. մօտե-  
ցիր, որ քարտէսի վրայ ցոյց տամ, թէ ի՞նչ է մեր ծրադիրը.

— Հականետափական պաշտօնանից մեզ իմացնում են, որ թըր-  
փական բանակը հետզհետէ նոր ու թարմ ուժեր պիտի ստանայ և վճռական  
յարձակողականի պիտի տնցնի: Մըր զրութիւնը զրեթէ յոսահատական է:  
Անզիւցիները արամազրէի ուրիշ ուժեր չտնին Բագուի համար: Բոլէւիկ-  
ները թուսաստանի ամբողջ տարածքին վրայ ա՛յնքան զրագուած են քաղա-  
քացիական պատերազմով, որ յէն կարսդ մեզ օդուոթեան հասնել: Մատ-  
ծում ենք թրքական օդուական ուժերու զարը դանդաղեցնել: Մեր ծրագիրը  
հետեւեալն է. —

«Կասպից ծովի ափին, Մուզանի անապատի արեւելեան կողմը, Լեն-  
քորան անունով փոքրիկ մի հաւահանգիստ կայ: Արոշած ենք այդտեղ ցա-  
մաքահանում կատարել 10-12 հոգինոց մի խումբով, որի մէջ պիտի լինեա  
զու: Այս խումբը պիտի ունենայ իր տրամադրութեան տակ մի քանի թէթէ-  
ւաշարժ մեքենաներ, որոնք պիտի ծառայեն որպէս արագ փոխադրական մի-  
ջոց: Բոլոր մասնակցողները պիտի ունենան զերժանական բանակի համագ-  
ղեստ: Քո գերը պիտի լինի այդ զերժանացիներին բնկերացող թուրք սպա-  
յի զերը, որպէսպի, ի հարկին, թուրք զիւղացիներին հանդիպելու պարա-  
գային, կամ թրքական զիւղերից անցնելու ժամանակ, թրքական սպայի հան-  
գամանքով յարարերութեան մասնես նրանց հետ ու զիւրացնես զործողու-  
թիւնը:

«Ահա եւ զործողութիւնը — .

«Մուզանի անապատը զուրս զալէ յետոյ, ամենաարագ կերպով պիտի  
չանաք համանել եւլսի: Մնացեալը կը կատարեն մասնագիտները: Երկա-  
թուզային կամուրջը պայմենների յետոյ, որաքան պիտի վերապառնաք Լեն-  
քորան, ուր պիտի զանելք ձեզ փոխադրու չողենաւրը:

— Բայց, Պրն. Զօրավար, ես անգլերէն չեմ զիտեր, ինչպէս պիտի  
կարենամ զործակցի անոնց հետ:

— Բնաւը մի մտահոգուիր: Խումբի մէջ թուրքերէն հասկցողներ կան:  
Միայն թուրք սպայի դեր կատարով չկայ, — մի սպայ, որ զիտենայ ու խօ-  
սի մաքուր պլուական թուրքերէն ու թրքական բանակի զինուորական զիտե-  
յիքներին տեղեակ լինի:

\* \*

Խօսակցութեան ընթացքին ներս մտաւ Գնդ. Սթոքու, որ զօր. Տէնո-  
թէրվիլի զօրամասին Շոտարի պիտն է եղեր:

Փոխազարձ ծանօթութենէ յետոյ, զօր. Բաղրատունին երբ բացա-  
տրեց, թէ ծրազրի մասին մանբամանութեամբ խօսած էր ինձի հետ, Գնդ.  
Սթոքու հարցուց, թէ թրքական բանակի սպայի համազգեստ ունի՞մ արդ-  
եօք:

— Ա՞չ, — պատասխանեցի :

— Մերիներն ալ չունին գերմանական համազգեստ : Եթէ չեմ սխալիր, գերման ու թուրք բանակներու համազգեստները՝ յար եւ նման են : Հետեւարար, անմիջապէս խաչի կտոր զնելով՝ 4-՛ օրուայ ընթացքին կրնանք պատրաստել տալ :

Նկատելով, որ Զօրավարն ու Գնդապետը սկսան անդերէն խօսակցութեան, աւելորդ նկատեցի այլեւս մնալս ու թոյլտուութիւն խնդրեցի մեկնելու համար :

— Դեռ սպասիր, Ամիրեան : Գնդապետը կը հետաքրքրուի ձեզմով ու կ'ուզէ գիտնալ, թէ դուք լաւ կընե՞լ չք ձեր ստանձնելիք պարտականութեան հետ կապուած բազմաթիւ վտանգներն ու ծանր հետեւանքները...

— Կատարե՛լապէս կ'րմրոնեմ այդ բոլորը, Պրն. Զօրավար :

— Երկրորդ պարագայ մըր . Գնդապետը կ'ուզէ գիտնալ, թէ նիւթական ի՞նչ վարձատրութիւն կ'ակնկալէք...

— Վարձատրութեան մասին ոչ մի խօսք : Ես պիտի կատարեմ մոռատոմի յանձնարարութիւնը : Միխան խնդրանք մը ունիմ Գնդապետէն եւ կը փափաքիմ, որ այդ խնդրանք նկատի ունենան ինծի ընկերակցողները :

— Ի՞նչպիսի խնդրանք է այդ :

— Յաջողութեան կամ ձախողութեան պարագային, եթէ ենթարկուինք գերի իյնալու անխուսափելիութեան, ու ես հնարաւորութիւն չունենամ անձնապանութեան, ընկերներս թող զնդակահարեն զիս :

— Ես' անյարձար է, Ամիրեան, այդպիսի առաջարկ մը անել . կարող է վիրաւորուել :

Զօր. Բազրատունիի դէմքին վրայ լուրջ հարցական երեւոյթ մը նկատելով՝ Գնդապետը միջամտեց :

— Ի՞նչ բանի մասին տարակարծիք էք :

— Գիտչոք ինչ, Պրն. Գնդապետ : Ամիրեանը կը խնդրէ, որ կարգադրէք, որ գերի իյնալու պարագային ընկերները զինք զնդակահարեն :

— Բայց ո՞վ ըստու, թէ անգլիացի զինուորը գերութիւնը կը նախընտրէ...

Զօր. Բազրատունին երբ թարգմանեց, անմիջապէս ըստ .

— Նոյնիսկ վիրաւորանք համարուելու գնով, թախանանօք պիտի խնդրեմ, որ այս պարագան խոստացողի ինծի : Իսկ ինչ կը մնայ անզլիացի զինուորին գերութիւնը չնախընտրելու պարագային, պիտի խնդրեմ նկատի ունենալ, որ Կուրք իլ Ամարայի մէջ գերի ինկող զինուորները՝ անզլիական բանակին կը պատեսնէին...

— Բաւական անախորժ զրութեան մէջ զրիք ինձ, Ամիրեան : Պիտի աշխատիմ մեզմացուցիչ ձեւով հասկցնել զնդապետին : Կենաց-մահու խընդիր է, հետեւարար, չեմ ուզում խիզն ծանրաբեռնել...

Չեմ զիտեր, թէ ի՞նչ ձեւով բացատրեց զօրավարը, բայց Գնդ. Սթորոտի դէմքին վրայի սկզբնական վրդումը հետզհետէ տեղի առուած զարմանքի, յանձելու համար բարեկամական ձեռքի սեղմումը մը :

— Հիմա այլեւս ամէն բան պարզուեցաւ թէ՛ մեզի եւ թէ՛ ձեզի հա-

մար : Մեր ծրագրին յաջողութիւնը ամբողջապէս կատուած է գաղտնապահութեան հետ : Ձերմօրէն պիտի խնդրեմ ու յանձնարարեմ, որ կատարելապէս պահես այս զազտնիքը ու բացարձակապէս ոչ ոքի չասես, — եղբակացոց զօրավարը :

— Գերմանացի սպաներու հետ շփում ունենալու առիթներ պատահած է ձեզի, — հարցուց զնղապեալը :

— Այս, բայց ոչ մտերժութեան մէջ, այլ միշտ պաշտօնական :

— Ճի՞շդ է, որ գերմանացիք միշտ վերէն նայած են ձեր վրայ :

— Այս, այդ պարագան միշտ ալ նկատած ենք մենք՝ թրքական բանակի սպաներու, բայց գտած ենք, որ անոնք իրաւացի են :

— Ինչո՞ւ :

— Եա՛տ պարզ կարգ-կանոնի, անիոնջ աշխատանքի տիպարներ էին գերմանացիք, եւ մենք ներքուստ թէեւ կ'ատէինք անոնց ինքնահաւանութիւնը, բայց միաժամանակ կը զզայինք, որ անոնք շատ ու շատ բարձր են մեզմէ :

— Ուրեմն, դժգոհ չէ՞ք մեար, եթէ գերմանացի դինուորներու հետ գործ ունենաք : Է՛ս, կը չնորհաւորեմ ձեզ, — ըստ եւ յաջողութիւն մաղթելով մեկնեցաւ Գնդ . Սթորաը :

Յաջորդ օրուան համար ժամազրուելով՝ ես ալ մեկնեցայ զօր . Բաղրատունիի պաշտօնատունէն :

\* \*

Տուն վերագանակալով՝ ամբողջովին անձնատուր եղայ ստանձնած պարտականութեանս հետ կապուած խոհերուն : Լենքորան, Մուղան, Եւլախ անունները կ'արձագանքին ականջներու մէջ :

Երեկոյեան, երր հաւաքուեցանք սեղանին չուրջ, ո՛չ Սեպուհը եւ ո՛չ ալ Մաղիկեանը որեւէ ակնարկութիւն ըրին Բաղրատունիի հետ ունեցած տեսակցութեանս առընչութեամբ : Ես ալ, բնականարար, բնա՛ւ չիսուեցայ այդ մասին :

Զօր . Բաղրատունիին երկրորդ այցելութեանս՝ անոր մօտ գտայ Ռոստոմն ալ, որ ինձ տեսնելուն պէս սկսաւ ծիծաղիլ՝ բսելով .

— Մեր տղա՛յ, այդ ի՞նչ ես ասել երեկ Գնդ . Սթորաին : Զօրալարը բաւական նեղ զրութեան մէջ ես զրել .

— Էնկեր Ռոստոմ, կը ցաւիմ պատահածին համար : Բայց կը խնդրեմ, ըսէք, իրաւունք չունէի՞ Կուր կը Ամարայի խայտառակութիւնը յիշելու, երր, անբարատաւան Անգլիացին կ'ըսէք, թէ անզիլացի զինուորը կը նախընտրէ մահը՝ զերութենչն .

— Եսատ լաւ ես արել եւ քարը ճիշդ տեղն ես դրել : Անպիտանները միշտ յոխորտում են : Հիմա տեսնենք, թէ այս ուշացած ձևնարկը ի՞նչպէս պիտի վերջացնես : Ի միջի այլոց, Աճառեանը պիտի մեկնի էնդէլիք : Յաճախ հանդիսպիր գլխաւոր շտարը . թերեւս թարգմանելիք բաներ գտնուին :

«Ուրբաթը, սակայն, աւելի կանուխ և կատ շաբաթէն», կ'ըսէ մեր ժողովութը:

Այդպէս այ պատուհցաւ մեր ծրագրին հւստ: Դէպքերը այնպիսի թաւարգլոր արագութեամբ բնթացան Բագուի մէջ, որ մռացութեան արուեցաւ որոշացաւած չառ մը ծրագիրները...

Բազուն շրջապատող թրքական բանակը անցաւ յճուական յարձակոցականի եւ անոր անկումը զարձաւ այլ ևս անխօսափիլի:

Գնդ - Բիշերախովը, իր գործառայ սակմածակատր լինուի, քաշուեցաւ զէպի հիւսիս՝ Պետրոսիկ: Անդինայինները սկսան իրենց ողորմելի միաւորները զանդագորէն յետ քաշէի եւ յեզնել չողենաւերուն մէջ:

Այս երկու պարագաները, միացած թրքական թնդանօթներու ուումբերուն յարուցած ազմուկին, շատ վաստ ազգեցին բանակին ու ժաղովուրդին տռանց այն ալ երերուն բարոյական կորումին վրայ՝ խուճապահար զէպի նաւահանգիստ, չողենաւերու վրայ ապաստանելու մղելով բոլորը, եւ զօրք, եւ ժողովուրդ:

Ենիկը Աբամ Ալիսունանի Բագուի պաշտպանութեան ողբերգական վերջաւորութիւնը աշխան յուղից ու մանրամասն նկարագրած էր, որ ես նոր բան մը չպիսի կրնամ աւելցնել, այս միայն պիտի չէշտեմ անոր այն հիացական տողերը, որոնցմով ան ներքոզած էր մեր մէծ ու պաշտելի բնկերոջ՝ Ռոստոմին կատարած յանդուղն ու անձնազն քայլը: Երբ ամէն մարզ զրադ էր միայն իր զլուխը ազատելու, Ռոստոմը վերջին պահան կ'անդրադանայ, որ Զօր, Բագրատունին հաշմանդամ է, անկարող է նոյնիսկ փողոց դուրս զալ, ուստի ամէն վտանգ ոչք առնելոյն կ'երթայ ազատելու խեղճ զօրավարը, կը շալէի զայն ու աննդուխներէն վար կ'իջեցնէ:

Շոգենաւը, որուն վրայ ապաստանած էինք մենք ևս որուն մէջ ծովու վրայ մեզի միացաւ բնիկը Ռոստոմը, խարսխեց Կասպից ծովու հարաւը զրտնուղ ինզէլի փոքրիկ նաւահանգիստ:

Մեր խմբակը (Սևակն, թժ. Պօղոսեան, Ստեփան Մաղիկեան եւ ինքն) զիմաւորեց Հրաշեայ Աճառեանիր, որ ուղղակի սուանուրդեց մեզ իր տունը:

Մոցայ ըսելու, որ Հրաշեայ Աճառեանին Բագու զտնուիլը պատահականութիւն էր եղած: Անիկա Թաւրիքին հրաւիրուած էր տեսչական պաշտոնով: Անզն մարզը շառ մը զժուարութիւններով Նոր Նախիջևանէն հազիւ հասեր էր Բագու, Երբ Թաւրիդը զրաւուէր էր թուրքերու կողմէն, ուստի ան չէր կրցէր շարտնակիլ իր ճանապարհու ու ստիգուէր էր մնալ Բագու:

Բայց Հրաշեայ Աճառեանիր անզործ նատող մարզ չէր: Դիմած էր Ալդ. Խորհուրդին ու ինքնինքը դրած՝ անոր տրամադրութեան տակ: Եւ ինչպէս տեսանք, ան նշանակուած էր թարգմանիչ զիփաւոր Շտարին մէջ, ուր Ռոստոմի յանձնարարութեամբ ես իրեն օգնական դարձայ: Հետազային, Երբ

Բագուի զրութիւնը գարձաւ յուսահատական, նկատի ունենալով իր ընտանիքան պարզաներով ծանրաբեռնուած ըլլալը, խորհուրդ տրուեցաւ իրեն անցնի էնգչի ու այնտեղ սպասել գէպքերու զարգացման...

Էնգչիի Ազգ - իշխանութիւնները, եկեղեցւոյ չըջափակին մէջ սենեակ մը տրամադրած էին Հրաչեային, ուր տեղաւորուած էին ինքը, իր համակրեյի տիկիննը՝ Արուսեակը, աները, զոքանչը ու քենին (վերջին երեքը զրեթէ անգամալոյց)։ Անտ այդ սենեակին մէջ էր, որ ան կ'ուղէր մեղ եւս տեղաւորել։

Ի հարկէ, մերժեցինք։ Հրաչեան քիչ մը քրթմնչեց, բայց վերջ ի վերջոյ համոզուեցաւ, որ խսկապէս անկարելի էր մէկ սենեակի մէջ խճողուած իրենց ընտանիքին վրայ հիւրբնկալել նաև մեզ։ Խնդրեց, որ զոնէ ճաշը միասին ունենանք։ Երբ տիկինն ալ միանալով՝ պնդեց, չկրցանք սրտերնին կոտրել, պայմանաւ որ կենսամթերքի հայթայթումը մենք ոգիտի կատարէնք, ու իրենք միայն սպարասատեյու յողնութիւնը պիտի կրէն։

## \* \*

Սքանչելի սպաւորութիւն թողուց իմ վրաս էնգչին։ Բաւական նմանութիւն ունէր Պոլսոյ։ Ուսկեցինքին նմանող ջրային անցք մը կը բաժնէր զայն երկու մասի։ Դիբքը գեղեցիկ, ծառերով, ծաղիկներով, զմբուխո կանաչութիւնով քաղաք մըն էր։

Կենամթերքի աշխարհիսի առասութիւն կար, որ սովահար բազուեցիներուն նախ տեսողութիւնը՝ ապա ստամորու գիւրութեամբ կշացուց։ Իսկ ընակչութիւնը։ Բարի, աշխատասկը ու խաղաղասկը պարսիկներ, որոնք աշխանքան զգուշութեամբ փողոցը կ'անցնէին բոլիղ, որ քեզ չանհանդատացնէն։

Ուստամը տեղաւորուեր էր հանդիպակաց կողմը, և զայն տեսնելու առիթ միշտ չունինք։ Սեպուհը զրեթէ ամէն օր կ'այցելէր ու մեղի նորութիւններ կը բերէր։ Զօր։ Բազրատունին սերու յարարերութեան մէջ էր անգլիական Շատրին հետ ու անոնցմէ տեղեկութիւններ կը ստանար։

Մեր շար բախտէն էնգչիի անձեռւային եղանակը սկսաւ։ Աւստի դիւրութեամբ կարելի էր երեւակայել, թէ ի՞նչ վիճակի մատնուեցան բացօթեայ ապրող մեր զաղթականները։

Ուստամի եւ զօր։ Բազրատունիի միջոցաւ բացօթեայ մնացողները պատսպարելու համար անզիւցիներուն կատարուած դիմումները մտսամը միայն բաւարարուեցան։ Քաղաքը շատ փռքը էր ու տեղ չունէր բոլորին համար։

Օր մը շատ ջղայնացած՝ Ռոստոմը անձամբ դիմում կը կատարէ անզիւցիներուն։ Վերջինները կ'ընդունին, որ շատ իրաւացի էր իր զրոյովումը։ Բայց հնարաւոր չէ այլեւս նոր պատսպարան գտնելը։ Միայն մէկ միջոց կայ, կ'ըսնե, — բանակի չորքստանիներուն համար պատրաստուած խոտի պաշարը, որ զիզուած է տախտակէ տաղաւարներու մէջ, կը տրամադրենք ձեզի։ Խոտը դուրս հրեցէք, մաքրեցէք ու բնակելի վիճակի վերածեցէք զանոնք

ու տրամադրեցէք բացօթեայ ապրողներուն :

Թոստոմին և Անպուհն համար անդյիացիներուն այս կարգապրութիւնը նախախնամական բարիք էք : Անմիջապէս կոչ կ'ընեն ժողովուրդին զործի անցնելու : Դժբախտաբար, իրենց կոչը կը մնայ ձայն բարբառոյ յանապատի : Հազարաւորներու համուզ բազմութեան մէջէն չեն զանուիր քանի մը ազնի մարդիկ, որոնք բնդառաջէին կոչին : Յուսահատ՝ երկու քով կ'երթան ապաշւարներուն մօտ, կը խորհրդակցին, թէ ի՞նչ ձևով կրնային խոտր դուր կը բել, և կու զան հետեւեալ նդրակացութեան . . .

Խոտր դուրս տանիք խործ առ խործ, պարաններով կապելէ յետոյ : Բայց պարան չկար : Հետեւարար, մէջիքինէն կը քանդեն իրենց զօտիներուն և կը միացնեն իրարու : Թոստոմը խործերը կը կազմէ, իսկ Անպուհն ալ կը սկսի դուրս կը բել . . .

Ո՞րքան կը տեէ այս զործողութիւնը, չեմ զիտեք : Բարեբախտաբար, այժմ, բազմութեան մէջ կը զտնուին մարդիկ, որ տեսնելով այս երկու մեծ անձներուն սկզիթեան աշխատանքը, իսկոյն կը փութան լուր տալու զաշնակական հայդուկներուն :

Եատ չանցած, տաղաւարները կը պաշարուին զաշնակական մարտիկներով : Անոնց խմբապետներէն Արշակ Պոլոյեանը ներս կը մտնէ և զրեթէ բռնութեամբ դուրս կը հանէ Թոստոմն ու Անպուհը :

— Արշակ, ձեզ պատասխանառու կը բռնեմ, եթէ այս տաղաւարները չմաքրուին, — կ'ըսէ Թոստոմը :

— Վաղն առաւօտուն տաղաւարները ձեղի կը յանձնեմ, աւլուած, մաքրուած, բնակելի վիճակի մէջ . . .

\* \*

Այդ օրը շատ ուշ վերադաւ Սեպուհը Թոստոմի քովէն, արիւնքրուինքի մէջ, փոշեթաթաւ ու տղմալից կօշիկներով :

Երբ ներս մտաւ, բոլորս ալ սարսափեցանք իր վիճակը տեսնելով : Այդ օրը անձրեւ չկար, հետեւարար, չէինք կընար ըմբռնել, թէ ինչո՞ւ անոր զգեստները խիսում կորած էին . . .

Բժ. Պօղոսեանը իսկոյն նկատեց, որ խոնաւութիւնը քրտինքի արդիւնք էք, եւ, չկընալով զավել հետաքրքրութիւնը, հարց տուաւ.

— Աղա՛ (այս փաղաքական բառը կը զործածէք մեր սիրելի թժէկը թէ՛ Սուրբատին և թէ՛ Սեպուհն համար), բնչ պատահեցաւ : Այս ի՞նչ վիճակ է . . .

— Թոստոմին հետ քիչ մը աշխատեցանք, զաղթականները տեղաւորելու համար :

Այսքան միայն : Մեզմէ ուեւ մէկը չհամարձակեցաւ ուրիշ հարցում ընկելու :

Հետաքրքրութիւնիս լիովին զոհացուցին ականատեսները, որոնք դիտած էին անոնց աշխատանքը :

Առաւօտուն, երբ Թոստոմին հետ այցելեցինք տաղաւարները, դուրը

գտանք Արշակ Պոլոյեանը, որ հպարտօրէն ու ինքնազոհ դիմաւորից մեղ ու ըստ։

— Եթէ զեռ պակասութիւն մը նկատէք, ինդրիմ ըռէ՛ք. անմիջապէս պատրաստ եմ լրացնելու։

— Ապրիս, Արշակ. ապրին քեզ օգնողները, բոլորն էլ ։ Սքանչելի է ։

Ահա այսպէս էր մեր մէծ ընկեր Ռուսոսմը, և այսպէս էին իր զեկավարձ կուսակցութեան մէջ դասախարակուած երէց ու կրտսեր բոլոր հետեւորդները։

\* \*

Վերստին մեծ փակագիծ մը պիտի բանամ այստեղ՝ խօսելու համար չափազանց հետաքրքրական անձնաւորութեան մը մասին, որովհետեւ չեմ զիտեր, թէ կեանքիս այս վերջայոյսին կրնա՞մ առիթ ունենալ զրի առնելու յուշերս, որոնք կր վերաբերին անոր հետ անցուցած օրերու։

Այս անձը, հայ մշակոյթին փառք ու պարծանքներէն Հրաչեայ Աճառեանն է։ Այնքան անկեղծ յարգանքով կր վերջիշեմ զայն, որ էնզէլի մէջ մասնաւորապէս շատ մօտէն ու մտերմութեան մէջ անցուցած օրերէս կուզեմ հակիրճ տպաւորութիւններ զրել։ Այլապէս անոր մասին ա՞յնքան երկար կարելի է զրել, որ չեմ կարծեր, թէ տհաճութեամբ պիտի կարգացուէր։

Հրաչեայ Աճառեանը շատ հետաքրքրական եւ անմեղ տարօրինակութիւններ ունեցող անձ մըն էր։ Սահմանափակուելով միայն էնզէլի մէջ միասին անցուցած օրերուն, պիտի բաեմ, որ երեւմն ծայրայեղութեան կը տանէր իր բժախնդրութիւնը։

Որոշած էր, որ կենամթերքի զնումներուն միասին երթայինք, որպէսզի օգնէի իրեն։ Որովհետեւ կասկածներ կային տարափոխիկ հիւանդութիւններու մասին, հացը կը գնէր ուղղակի փուռէն եւ պատառաքաղով կր քաշէր փուապանին թիակին վրայէն մաքուր սաւանի մը վրայ, զոր ես պիտի կարկառէի իրեն։ Անմիջապէս կը ծածէկէր զայն, որպէսզի ճանձ կամ փոշի չնատէր վրան։

Միսը կ'առնէր միայն այն մսագործէն, որ նոր մորթած էր կենդանին։ Կշխոքը մաքրել կու տար եւ դարձեալ պատառաքաղի օզնութեամբ կը զետեղէր տունէն տարուած մաքուր կաթսայի մը մէջ։

Բանջարեցիններն ու պատուները տուն տանելէ յետոյ՝ եռացած ջուրով անգամ մը կը ցօղուէր ու յետոյ կը գործածէր։

Աւելը բուրովին հեռացուցած էր տունէն։ Մաքրութիւնը պիտի կատարուէր թաց լաթով մը…

Սեղանի շուրջը հաճոյք էր անոր հետ նստիլը ու ճաշէն յետոյ զրուցելու։

Ոզնուծուծով հակարուշելի էր։ կ'ատէր ոչ միայն բառը, այլ զայն արտասանողներն ալ։ Հետեւարար, կընաք երեւակայել, թէ ի՞նչ կ'ուլար, երբ վէճի բռնուէր մարքսիստ-լինինստի մը հետ։

Օր մը, ուրիէ ուր, սեղանակից ունեցանք հնչակեան մը, որ մէճի բռնուեցաւ Հրաչեային հետ։ Հրաչեան, հողիով որքան բարի, լեղուով ալ նոյնքան կուտազան մարդ էր, ինքինքը զապել չէր զիտեր եւ՝ տուր թէ կու

տաս՝ վերէն վար լուաց հնչակեանը : Վերջինս դաշնակցական որակեց զինք .

— Բայց քեզի ո՞վ ըստ , թէ ևս դաշնակցական չեմ : Ոչ միայն դաշ-

նակցական եմ , այլ քիչ մըն ալ աւելի եմ , վեթերան դաշնակցական եմ . . .

— Այդ էր պակաս , — պատասխանեց հնչակեանը , — ցոյց տուր ան-

դամատերգ :

Եւ ո՞վ դարձանք , Հրաչեան դրապանէն դուրս հանեց անդամատերը

ըսելով .

— Բոլոր ազգասէր , հայրենասէր ու պարկեշտ մարդիկ դաշնակցական

են : Եթէ մինչեւ այսօր չէիր զիտեր , հիմա զիտացիր :

Հնչակեանը լոեց :

Բայց թող ներեն ինձի բոլոր դաշնակցական բնկերներս , եթէ րսեմ , որ Ստեփան Շաղիկեանն ու ևս ընա՛ւ չուրախացանք . Երբ Հրաչեայի դաշ-

նակցական ըլլալը իմացանք , թէւ պէտք է , որ հոգարտ ըլլայինք իմաստոն , այդպիսի մեծ արժանիքներով մարդու մը դաշնակցական րյալուն համար :

Չուրախացանք , որովհետեւ չէինք փափաքեր , որ այսպիսի զիտուն մը մր-

իւրենուէր կուսակցական թոհուրունի մէջ : Կը ցանկայինք զայն նուիրուած

տեսնել միայն իր մասնագիտութեան :

Մեր ամէնօրեայ սեղանին վրայ կը գտնուէր տիկին Արուսեակին շնոր-

հալի ձեռքերով գրուած Ալրմատական Բառարանի ձեռադիրը : Կը փափա-

քէինք զայն ամբողջացած տեսնել : Դեռ ա՛յնքան սքանչելի գործ կրնար տալ

հանձնարեղ լեզուարան Հրաչեան :

Բարերախտարար , Հրաչեան միայն սրտով ու հոգուով մնաց դաշնակ-

ցական . իր թանկացին կեանքը ամրողջութեամբ նուիրեց Հայ մշակոյթին

ու , թէւ բոլէւ իկները ձերբակալցին , բանտարկեցին ու տնաւսական ծանր

զրութեան մատնեցին զայն , բայց ան յամառօքն շարունակեց այն հոյակապ

զործը , որ նախախնամութիւնը անօրինած էր կարծես միայն իրեն : Իր լեռ-

նակուտակ զործերը , զորս թողուց յետ մահու , կենդանի կովողներ են . . .

\*\*

Ստեփան Շաղիկեանն ու ևս անտուն , անտէր մնացած մարդիկ էինք , անմիջական բնտանեկան հոգեր չունէինք : Բայց մեր Հրամանատարը՝ Սե-  
պուշչը շատ մտահոգ վիճակ ունէր : Խմացեր էինք , որ կինն ու զաւակները , Պաթումը թուրքերուն կողմէ զրաւուելցն առաջ , ապահով կերպով հնուացեր էին այնտեղէն : Բայց ո՞ւր էին զացեր : Անոնց հետաքրք զտնելու համար կա-  
տարուած բոլոր պրատումները անցան զորք : Յուսահատ՝ ան որոշեց անցնիլ  
Հիւսիսային Կովկաս՝ իրազեկներու հանգիստելու ենթագրութեամբ : Համա-  
միտ էինք իրեն հետ . բայց Սևակուհը չէր ուզեր , որ ընկերանայինք իրեն :

— Անթիւ ու անհամար , Երեւակայելի ու աներեւակայելի վտանգներ կան : Քաղաքացիական կոխներ են ամէն կողմ , ո՛չ թշնամին յայտնի է , ո՛չ ալ րարեկամը : Զեմ ուզեր մեր գերախտութեան պատճու զտանալ : Դուք մնացէք առայժմ այստեղ , մինչեւ որ հնարաւորութիւնն ունենաք Հայաստան անցնելու , ուր եւ կը միանանք վերստին : Իմ պարագաս բոլորովին տարբեր

է : Կին ունիմ եւ զաւակներ . անոնց սիրոյն , ամէն վտանգ պիտի դիմու-  
գրաւեմ :

Մաղթկեանին հետ միաբերան ըստնք .

— Աւոր զուն , այնուղ ալ մենք : Քեզի հետ մինչեւ դժոխք ալ որոշած  
ենք երթալ : Որքան շուտ , այնքան լաւ :

Ռոստոմին ու Գիւլիանդանեանին հանդիսեցանք : Սեպուհը բացատրեց  
իր ծրագիրը : Երկուքն ալ զտան շատ անխոհեմ ու վտանգաւոր եւ յանձնա-  
րարեցին քիչ մը եւս սպասել :

Անկարելի եղաւ համոզել Սևուհիր : Կնոջն ու զաւակներուն սէրն ու  
կարօտը ա՞յնքան զգայուն զարձուցած էին զինք , որ թոշունի թեւերով կու-  
զիր թոշիլ ու հասնիլ անոնց :

Ռոստոմը նկատեց Սևուհիրն հոգեկան ծանր ապրումները եւ խորհուրդ  
տուաւ անցնիլ Ռաչտ , որ անէինք շատ ապնիք բնկեր մը (ափսոս , անունը  
մոռցեր եմ , կարծեմ յուսանկարիչ էր) , յանձնարարական մը զրեց անոր ,  
որ պարսկական անցողիրներ հայթայթէ բոլորին ալ :

Անմիջապէս մեկնեցանք Ռաչտ , որ զիմեցինք մեր բնկերոջ : Խանու-  
թը փակեց , յաճախորդները ճամրեց ու մեզ տարաւ սինիլի պաշտօնատու-  
նը : Քանի մը վայրեկնենք բոլորս ալ այնուղէն դուրս եկանք պարսկահպա-  
տակներ :

Մեր ընկերներէն քժիշկ Արշակ Պօղոսեանք՝ Ռաշտին բաժնուեցաւ մեզ-  
մէ : Էնդէլի - Համատան - Պատաստ ուղղութեամբ ան մեկնեցաւ Միջազետք ,  
ուր կը յուսար զտնել իր կինն ու զաւակը , արսորայթայրերուն մէջ...

Գիշեր մը միայն մնացինք Ռաշտի եկեղեցիին բակին մէջ , որ սէնեակ  
մը տրամադրեցին մեզի : Եկեղեցին իր յարակից շէնքերով նոր շինուած էր :  
Ամէն կողմ մաքուր էր , նոյնիսկ արտաքնոցները ...

\* \*

ԲԺ . Արշակ Պօղոսեանէն մեր բաժանումը շատ աղդեց մեր վրան : Հրեշ-  
տակային բարութեամբ , քաջ , աղնիւ ու անձնուէր բնկեր մըն էր , որուն հետ  
կապուած էինք ընկերականէ աւելի եղբայրական կապերով : Բաւական ժա-  
մանակ առաւ , մինչեւ որ հաշտուեցանք անոր բացակայութեան հետ :

Էնդէլի վերապանալով՝ քանի մը օրուան մէջ պատրաստուեցանք մեկ-  
նելու : Արտասուալից աչքերով մեզի բարի ճանապարհ մաղթեցին Հ . Աճառ-  
եանը եւ իր ընտանիքին անդամները : Շոգենաւր պատրաստ էր , տոմսակնե-  
րը՝ պապակուած :

Վերջն անդամ զնացինք մնաք բարոր բոելու ընկերներ Ռոստոմին ,  
Գիւլիանեանեանին եւ զօր . Բազրատունիին : Վերջինը յանձնարարականներ  
տուաւ՝ Պետրովսկ զտնուող Գնդ . Բիշերախովին ուղղուած , Հիւսիսային  
կովկասէն մեր անցքը զիւրացնելու համար :

Սեպուհիրն հետ գրկախառնուեցան Ռոստոմն ու Գիւլիանդանը , Մա-

զիկանն ու ես ծոեցանք համբուրելու երկուքին ալ ձեռքերը : Ի՞նդդիմացան :  
— Բախտը մեղ դրկած է Հայրական ձեռք համբուրելու երջանկութե-  
նէն : Դուք ալ կը մերժէք մեղ այդ բանը...  
— Եթէ այդպէս է, մօտեցէ՛ք, որ մենք ալ համբուրենք ձեր ճակասո-  
ները...  
Սեպուհը արդէն բարձրացած էր կամրջակը : Մաղիկեանը եւ զիս քա-  
շեցին մէկ կողմ ու հազիւ լսելի ճայնով մը փսփսացին .  
— Սեպուհին խնայեցէք . երբ հարկ լինի, դուք նետուեցէք առաջ :

«ՀԱՅՐԵՆԻՔ» ամսագիր, ԱՌ. տարի (1980), թիւ 4:

## Յ. ՏԵՐ-ԴԱՒԹԵԱՆ

### ՌՈՍՏՈՄԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻՑ

Թոստոմը 1918 թ. Դեկտեմբերի վերջերին Բագուից վերադարձաւ Թիֆլիս և մտադիր էր շուտով մեկնել Հայաստան :

Բագուից դէպքերից յետոյ երեւում էր շատ յողնած : Հայ-վրացական պատերազմը, Հայերի զանգուածային հալածանքները վրաց կառավարութեան կողմից չափազանց ազգել էին նրա վրայ : Անգլիական ներկայացուցիչների միջամտութիւններն ու ակներեւ կողմանկալութիւնը յօդուա վրացիների, Հայաստանի տնտեսական ծանր տագնապը, սոսկալի մահացութիւնները սովից ու տիֆից՝ մոռայլ, յուսահատական տրամադրութիւն էին ըստեղծում : Թոստոմը ապրում էր ծանր հոգեկան վիճակ : Սակայն եւ այնպէս, Հայաստանը — Հայ ազգի զարգացման ազատ օջախը իրողութիւն էր, եւ նա ամբողջ էութեամբ շտապում էր որ առաջ հասնել Երեւան, անձամբ տեսնել ու զգալ այդ Հայաստանը, լծուել վիճարար աշխատանքի...

Բայց Թիֆլիսում էլ Թոստոմի ներկայութիւնը անհրաժեշտ էր . Երեւանից եկել էր եւ պատրաստում էր Երևան մեկնել Ահարոննեանի պատուիրակութիւնը՝ Հաշտութեան Վեհաժողովին Հայկական պահանջները ներկայացնելու համար . կարքի կար Խորհրդակցելու Թոստոմի հետ : Միւս կողմից, Հարկաւոր էր միջցներ ձեռք տոնել փոխելու համար վրացիների հայահայքաքանութիւնը . Թոստոմը զեռ ուսանողական օրերից՝ Ժընեւից մօտիկ բարեկամ էր վրաց կառավարութեան նախագահ Ժորգանիայի . պէտք էր տեսնել նրան, բացատրել վրաց իշխանութեան սխալ ընթացքը, պարզել մի շարք նուրբ խնդիրները<sup>(\*)</sup>...

Թոստոմը անգամար չարժման մէջ էր, թէպէտ արդէն հիւանդ էր և ծանր հիւանդ . զեռ Բագուից նա վարակուած էր բժաւոր տիֆուզ եւ կարծում էր, թէ մալարիա ունի : Գանգատում էր, թէ սաստիկ մրսում է, եւ ժողովներին միշտ տաք թէյ էր ինպում՝ մէծ քանակութեամբ :

Առաջին չորս-հինգ օրերը չյաջողուեց նրան անկողին պառկեցնել . քի-

(\*) Ժորդանիան առաջին անգամ Թոստոմին ընդունում է նախկին փոխարքայի պալատի Սպիտակ դահիինում :

Խօսակցութեան ժամանակ ժորդանիան մտերմարար ասում է Թոստոմին .

— Ե, Աստիքան, մեր ժընեւ եղած ժամանակ կարո՞ղ էիմ երեւակայել, որ ես ու դու այս պայտառում պիտի տեսնաւեմ :

— Որ այս պայտառում պիտի տեսնուիմն, կարող էի երեւակայել, բայց որ ես ու դու իրար հետ բանակցութիւններ պիտի վարէիմն իրեւ պատերազմող կողմերի ներկայացուցիչներ — այդ երբեք մտնուու չէր կարող անցնել . — իրեն յատուկ հեղանակով պատահանաւմ է Թոստոմը :

Ժորդանիան կաս-կարմիր է կտրում եւ շտապում է փոխել խօսակցութեան նիւք :

Նին էր ընդունում ու շարունակում էր ժողովներին մասնակցել եւ այցելութիւններ անել։ (Յետոյ իմացանք, որ նոյնիսկ իր միակ տաք բրդէ շապիկն էլ հանել էր եւ պարզում էր թեթև շապիկով)։ Նա շատ վստահ էր իր ուժող կազմուածքի եւ առկուն առողջութեան վրայ։ Միայն նրդ օրը, երբ արգին 40 աստիճան տաքութիւն ունէր եւ չէր կարողանում ոտքի վրայ մնալ, պառկեց, եւ պարզուեց, որ թոքերի բորբոքում եւ բծաւոր տիֆ ունի միաժամանակ։

Ութ-տասը օր միայն պայքարեց նրա ուժեղ, բայց խիստ յողնած կաղմուածքը։ Եւ Յունուար 18ի գիշերը, ժամը 4ին թոստոմը վախճանուեց։ Վերջին 2-3 օրը նա այլեւս կորցրել էր զիտակցութիւնը։

Պառկելուց երկու օր յետոյ, նա յիշեց նկամանի «Հայր Մեր»ը եւ շարունակ երգում էր՝ պնդելով, որ «Հայր Մեր»ի ամենազեղեցիկ ներդաշնակութիւնն է։ Խնդրեց, որ զանենք այդ հազուազիւտ հրատարակութիւնը եւ իր կողմից նուէր ուղարկենք Ընկերվարական Միջազգային Բիւրոյի քարտուղար Հիւխմանսին, որը շատ զնահատում էր հայկական եկեղեցական երգերը։

Թոստոմի վերջին կտակն էր այս։

«ԿՐՈՇԱԿ», 1929 թիւ 1-2։

## ՌՈՍՏՈՄԻ ՑՈՒՂԱՐԿԱՌՈՐՈՒԹԻՒՆԸ

Թաղման Յանձնաժողովը Թիֆլիսում հրատարակել էր .

I. Սպահանդէսի բնթացքը հանգուցեալի բնակարանից՝ Թուժանովը կայս ՆԵ 88, Անդամովսկայա Միխայիլովսկի պր. Նիկոլաեսկի կաժուրջով և Մատաթովսկայա փողոցներով գէպի Վանք. Վանքից՝ Մատաթովսկայա, Բարեւատինսկայա, Գոլովինսկի պրոս., Էրիւանսկայա պլ., Պոչկինսկայա, Մոխրանսկի կամուրջով, Ցիցիանովսկա պօդ. Կախեախնսկայա պլ. Լազարեւսկայա փողոցներով զէպի Խոջիվանքի Գերեզմանատունը :

Թաղումը Դաշնակցութեան պանթէռում :

II. ա) Քաղաքացիներին խնդրում ենք զդայից գուրս չգալ, բ) ՀՀ-ինազարել թաղման յանձնախմբի սահմանած կարգերը, գ) սպահանդէսի կարգը պահպանելու են դաշնակցական բանուորները :

III. Ճառեր արտասահմանելու են հետեւեալ կարգով.

Հանգուցեալի տան մօտ — ընկ. Իշխանը (Արեւելեան Բիւրոյի կողմից), Վահագի մօտ — ընկ. Մ. Յարութիւնեան (Հայաստանի Հանրապետութեան կողմից) :

Նոյն տեղը. — Ընկ. Հ. Մանուկեան (Տաճկահայ Դաշնակցութեան կողմից), Շահնշապունեան ընթերցարանի մօտ Դ. Դաւիթիսանեան (Վրաստանի կոմիտէի կողմից) :

Երեւանեան հրատարակ. — Ընկ. Ա. Արեգեան (Դումայի Փրակցիայի կողմից), և ընկ. Կորին՝ ոռուերէն :

Նոյն տեղը. — Ա. Խոնդկարեան (Սոցիալ-Յեղափոխական Շրջանային կոմիտէի եւ Հայաստանի Առբարդի սոցիալ-յեղափոխական Փրակցիայի կողմից) :

Կախետինսկայա հրատարակ. — Ընկ. Ա. Նալշաջեան (Բանուորական կազմակերպութեան կողմից) :

Գերեզմանատանը, 1) Կարսի Դաշնակցութեան ընկերների կողմից Հ. Նոհրատեան, 2) Ս. Աւազեան (Թիֆլիսի կոմիտէի կողմից), 3) Յ. Տէր Գրիգորեան (Հայ զինուորների կողմից), 4) Այվազեան (Դաշնակցական Աւանուղական Միութեան կողմից), 5) Յ. Սարգսեան (Զաքարալյայի Դաշնակցութեան ընկերների կողմից), 6) բանուոր Խաչատուր (Թիֆլիսի Դաշնակցութեան Ներկայացուցչական ժողովի կողմից), 7) Վ. Առքէնի (Վրաստանի Կենտրոնական կոմիտէի օրգան «Յառաջշի խմբագրութեան կողմից) :

4. Պատկներ չեն լինելու :

Ցուզարկաւորութեան ժամանակ խօսողներին աւելացել են Վ. Ահարոնեան (ոռուերէն), բանուոր Արտմ եւայլն :

Ցուզարկաւորութեան յատուկ ներկայացուցիչներ ունեին շրջանները, դաշնակցական մարմինները, քաղաքական կուսակցութիւնները, Հասարակա-

կան կազմակերպութիւնները, պարսից հիւպատոսը եւայլն:

Դագաղին հետեւում էր բազմահազար ժողովուրդ:

Սգերթը առաջնորդում էր կարմիր դրօշակներով եւ զոյք նուազախմբերով:

Դաշնակցութեան պանթէոնում՝ Սիմէռի, Շահիսաթունու, Դումանի, Քեռու եւ միու անմահների մօտ երբ Ռոստոմի զազաղը գերեզման իջեցուեց, երեկոյեան հողմից ծածանուող կարմիր դրօշակները խոնարհուեցին զերեզմանին, իսկ բազմահազար սզաւորները մի ակնթարթ ծունկի եկան, հնչեց երաժշտութեան մեղեղին: Վայրկեանի խորհրդաւորութիւնից լսուեցին հեկեկոցներ, մինչեւ մեղեղին ընդհատուեց: Վերջում նուազախումբը թնդացրեց «Մէր Հայրենիք»:

Յուղարկաւորութիւնը, ոկտուած առաւօտեան, վերջացաւ երեկոյեան ժամը 5ից անց:

ԱՄՆԱԽՕՏՀ շաբարարերը (Թեհրան), — 1919 Մարտ, թիւ 3:

## Ռ Ո Ս Ո Մ

Դաշնակցութիւնը կորսնցուց իր առաջին երեք գմբեթակիր սիւներէն վերջինը եւ յեղափոխական ու վերածնող Հայաստանը՝ իր մեծազոյն զաւակներէն մին։ Խոստոմը, որուն անուան միակ ողեկոչումը եռամեկ էր եւ սթափում, Խոստոմը, որ ծանր հիւանդութեամբ, քառասուն աստիճան տաքութեամբ, ստքի վրայ կ'անցնէր՝ մէկ ժողովն միւսը պտըտցնելով թափը իր կազմակերպչական ոգիին, Խոստոմը մեռած համաձարակէ մը։

Այն կուսակցութենչն, որ տարաւ հայկական հարցը այսօրուան փառաւոր հանգոյցին մէջ ձգող պայքարին մեծագոյն և գլխաւոր մասը, միայն Խոստոմը կը մնար, որ Դաշնակցութեան այսօրուան կեանքին սեմէն պիտի դիսէր հայկական եռագոյն գրօշակը գգուող առաջին արշալոյսը, որուն երկունքին մէջ զես իր կամքն ու եռանդը չէին յոգներ...

Խոստոմը այն լուսաւոր զէմքերէն էր, որուն առջեւ իր կուսակցութեան հակառակորդներն իսկ իրենց բաճկոնակները կը հաւաքէին ևս ոչ պիտի կրնայ փոխարինել զինքը այն մեծ աշխատանքին մէջ, որ պիտի տարուի վերածնուող Հայաստանի մէջ։

Ամենայուսահատական և լքման բոպէներու մէջ իսկ, ուր մահերու, ժամանակաւոր պարագութիւններու, ջարդերու լուրեր կը հանձին, Խոստոմը կը զանար խրախոյս ու ապաւէն, որուն զործունէութեան հետ կեանք կ'առնէին զագրած ու յուսալքուած ուժերու աշխատանքները։

Անոր անունը ո՛չ մէկ տեղ կը լսուէր, ոչ մէկ աթոռ ընդունած է ինք ևս ոչ մէկ ախտղոս իր անուան քով։ — Խոստոմ... Բայց ինքն իսկ է ինքնաշարժ մէքենան բոլոր շարժումներուն, բոլոր զործողութիւններուն։

Իր բազմակողմանի պատրաստութեամբ ու պաշարովը եղած է զատարակի բազմանդամ սերունդի մը, որ զինքը յարգելէ առաջ կը սիրէր, որ իրմէ բան սորվելէ առաջ իրեն՝ անհատին կեանքը նմանցնել կը ձգտէր։

Կովկասեան վերջին զէպիերու ըրջանին մէջ Խոստոմն այն էր պատուհանուած հայրենակիցներուն հանդէպ, ինչ որ Խրիմեան Հայրիկն էր, — այսպէս ըսկելու համար, — իր հօտին ցաւերուն հանդէպ։

Իր մեծ հողատարութեան մէջ կը մտնէին անհատական ցաւերու մտահոգութենչն մինչեւ ընդհանրական շահերու պաշտպանութիւնը, որոնք կը կատարէր ճշմարիտ հօր մը հարազատութեամբ եւ սրտակցութեամբ։

Իր միջամտութիւնը կը բաւէր, որ կնճուտ հարց մը պարզուէր և երկու պառակտուած ընկերներ իրարու ձեռք տային։ Ասոր համար էր, որ Խոստոմ ոչ մնայուն աթոռ մը ունէր, — ինչ հարկ աթոռի երր բոլորն ալ իրն էին, — ոչ սիտղոս մը եւ ոչ տեղ մը. ամէն տեղ էր անիկա. ան կը ծառանար յանկարծ վերջին ըրջանի կոմիկասեան քառօսին մէջ, իր մանկունակ ժպիտովն ու պատկառանքովը տալու համար իր խորհուրդները, կարգադրու-

թիւնները, որոշումները. ամէն տեղ էր անիկա, նաեւ ճակատը եւ մանաւանդ ճակատը. այս՝ Ծոստոմն անոնցմէ էր, որ զիտեն ճակատն ըլլալ, որ քաղինեւային աշխատանքնեւն գուրս՝ զիտեն կանգնիլ պատնէշին վայ: Եւ Ծոստոմը էրզբում էր, Երզնկա էր, Բարերդ էր, Ալաշկերտ էր, բանակին հետ, բանակին յետոյ, բանակին առաջ:

Ծշմարտի Ծոստոմը ոզի մըն էր, մաքուր, որքան ոզին աննիւթ է, ուժեղ՝ որքան ոզիները հզօր են, տարածուն եւ զաղտնի՝ որքան ոզիները ամէն տեղ են և անչշմար: Քրիստոփոր Միքայէլանին ու Միմոն Զաւարեանին հետ, Ծոստոմը պիտի մնայ նոր սերունդի մտքին մէջ այն լուսաւոր պատկերը, որ յեղափոխական, զաղափարապաշտ, վճիտ և անձնազոհ տիպարներն էին և որոնք իրենց մարզարէական կեանքովը բազմաթիւ տարեցրջաններ պիտի հրամայեն նոր սերունդին՝ իրենց փառաւոր ճամբայէն ընթանալ:

Եւ այդ Ծոստոմը ա'լ չկայ...

Հայկական պետութեան երկունքի միջոցին, այս սոսկալի աշնանային փոթորիկին մէջ այնքա՞ն, այնքա՞ն տերեւներ թափեցան, մէկը միւսին ետեւէն, անխնայօրէն, որոնցմէ իւրաքանչիւրին անկումը խաղաղ ժամանակներու մէջ ազգային մեծ սուզ պիտի զառնար, բայց Ծոստոմինը այնքան կոկտալի է, որ ծառին խորտակումը կը թուի ըլլալ...

Այս մէկ քանի տողերը գրելն իսկ, հեկեկանքները կուրծքին մէջ, Ծոստոմին մէկ շատ սիրած աշակերտին համար, որ երկրորդ անզամ կ'որբանայ իր հօրմէն անոր մահովը՝ տաժանելի չարչարանք մը կը զառնայ:

Բայց թոյլ տուր, պաշտելի Ծոստոմ, ցալլու իմ բերնովս, հազարաւոր աշակերտներուդ կողմէ քեզի և գու մեծ ընկերներուդ, — հանգիւստ ձեր ոսկերներուն, — քանի որ ձեր բոլոր աշխատանքը, ճիզերը, զոհողութիւնները միացած՝ հոյակատ և մեծ ծնաթով մը այսպէս կամ այնպէս ձեր սիրած հայրենիքին պետութիւնը կ'երկնեն ահա, ուր ձեր աշակերտները պիտի շարունակեն Զեր առաքեալի վսեմ ստուերներուն ընկերացած՝ այն գործը, որ դուք իր մեծ հանգրուանին փառաշուրջիք:

Խմբագրական «ՎերԱՄՆՈՒՆԴԻՒՆ»-ի, — Գ. տարի, 15 Փետր. 1919 թիւ 4:

## Ռ Ա Ս Ո Մ

Մուրատէն յետոյ մոստոմը...

Եւ ո՞վ կրնայ ըմբռնել ահաւորութիւնը այն պարապութեան, որ գաղաքարականութեան այս երկու բիւրեղ մարմնացումներու պակասովը կը բացուի հայութեան հոգիին մէկն:

Անուններ կան, որոնք հոմանիշ են դարձած իրենց ազգին հետ: Եւ մոստոմ մէկն էր այդ անուններչն: Ան խատացումն էր հայ ցեղի բոլոր ազնուական յատկանիշներուն:

Քիչեր միայն կրցած են տեսնել ցեղային այն անպարտելի ուժը, որ հայ ցեղը ապրեցուցած է զարերու բոնակալութիւններու ընթացքին եւ զայն քալեցուցեր է բանակալներու զերեզմաններու վրայէն: Այն անօրինակ եւ անանուն կենսունակութիւնը, որ մեռելներուն յարութիւն է տուեր, այն անիմանալի յանդզնութիւնը, որ այս ցեղին ճակատը բարձր բոնել տուեր է նոյնիսկ ժահի սպառնալիքին տակ: այն սրտառուչ զոհաբերութեան ողին, որով այս ցեղն է արտայայտուեր այնպիսի պահերու մէջ անզամ, երբ նման պահերու մէջ, աշխարհի ամենին տուկուն ցեղն անզամ դէպի խելազարութիւն սկիտի հակէր — ահա այս յատկանիշներու մաքուր բիւրեղացումն էր մոստոմ, ժառանգած տառապանքուին անմտահացած ու մարտիրոսութիւններովն հերոսացած իր ցեղին:

Ահա այդ ՄԱՐԴԻՆ է, ՄԱՐԴԻՆ, ՀԱՅԸ ու ԴԱՅՆԱԿՑԱԿԱՆԸ, որ այլեւ չկայ մէզի հետ:

Ու անկարելի պոռթկումով մըն է, որ իր Մահի երեսին կը հարցնեմ փլուզուող հոգիով մը.

— Եւ ո՞վ պիտի լեցնէ իր տեղը...

Մահէր կան, որոնց առջև մարդ հազիր թէ վայրկեան մը իսկ իր մահկանացութիւնը կը յիշէ ու կ'անցնի անոնց դադաղին առջև անտարեր:

Մահէր ալ կան, որոնց առջև մարդ իր հիւլէացումը կը զգայ ու կը զիտակցի այն ահաւոր իրոզութեան, թէ բնութեան օրէնքը չի զիտակցիր անզամ իր զոյութիւնը: Եթէ բնութեան անողոք ձեռքը կրնայ շանթել շանթամարտ զլուխը մոստոմի մը, ալ ի՞նչ կ'արդէ հասարակ մահկանացու մը, որ ծնելու ոճիրն է զործեր դիպուածարար ու անկամ:

Մոստոմի մահը այս ընկճող մահերէն մէկն է: որովհետեւ մոստոմները միշտ չեն ծնիր: անոնք ծնելու համար սերունդներ պէտք է որ երկունքի արիւնով քրտնին:

Ու եթէ զարձեալ իր՝ մոստոմի սրտապնդիչ խօսքը չըլլար, որ իր գաղաղէն անզամ դիտէ հոգի ներշնչել զինքը ողբացող սպառոր սիրտերուն, թէ այն ցեղը, որ իր տառապանքներէն ու յոյսերէն զիս կերտեց, կրնայ եւ շատ

ուրիշներ ալ ստեղծել, անկարելի պիտի ըլլար տեսնել թոստոմներու մահը և կանգնիլ նորէն:

Ճիշդ է, որ հայ ազգը ապացուցեր է իր աստակութիւնը գաղափարի կէս ճամբարյին ինկածներու տեղ նորերը կանգնեցնելու, բայց այս փաստն անգամ անկարով է տակաւին մժիթարելու այն սպաւոր հոգիները, որոնք զիտէին, թէ ի՞նչ էր թոստոմը և ի՞նչ կ'արժէր անոր ներկայութիւնը մահաւանդ այս օրերուն:

Ամենէն աւելի ինք զիտէր այդ ինք, որ հայ տառապանքին պէս սահման չէր ճանչնար բնաւ ինք, որ հայ զոհաբերութեան չափ անսպաս էր ու անհուն ինք, որ հայ կենաւնակութեան մարմնացած քուրմն էր ինք, որի մէջ ամէն զաւաճանուող յոյսի տեղ տասնեակներով յոյսի էր ծնէին: Եւ, ո՞վ զիտէ, ինչպէս կատաղօքէն մարտնչեցաւ ան հոգէառ հրեշտակներու գունդին դէմ, ո՞ւ քիչ մըն ալ ապրելու համար, որովհետեւ, ո՞վ աւելի լաւ զիտէր քան ինքը, թէ հայութեան այս արհաւիրքներէն յետոյ գեռ որ-քա՞ն շատ պէտք են անձնուէր զործիչները:

Մահը անողոք էր, սակայն, ու իր ուժերը սպառեցան: Ան փակեց իր աշքերը զեռ չտեսած պատմական Հայաստանի ազատ արեւը, որի համար երեսուն տարիներ աշքերը չփակեց ու կօշիկներուն կապերը չփակեց այս անըմբոնէլի ուխտաւորը Ազատութեան Գաղափարին:

Ու ահա ինկաւ ինքն ալ՝ տիեզերական օրէնքէն զուրս մարդկային բոլոր ուժերու զէմ պայքարելու, յաղթականօրէն պայքարելու չափ զօրութիւն ունեցող այս առաքեալը, ու գնաց միանալ Քրիստոնորին, Զաւաբեանին, հայութեան նոր սրբարանին մէջ աւելցնելու սրբանոց մըն ալ, ուր այսօրի իր կրտսեր ընկերները պիտի այցի երթան ներշնչում առնելու, հոգի սատնալու, ամէն անզամ որ զաւէր ու բռնակալութիւններ իրենց հոգին խորտակնեն, եւ ուր ուխտի պիտի երթան զալիք սերունդներ, զաղափարականութեան սեմին վրայ իրենց առաջին քայլը զննէ առաջ:

Ամենէն փառաւոր ու անմահ յուշարձանները հոգիներու մէջ միայն կրնան կանգնիլ: Եւ զուն, սիրելի՝ ընկեր, վատահ եղիր, որ ո՞չ միայն քու ընկերներուոց, այլև ամբողջ հայութեան հոգիին մէջ զուն քու յուշարձանդ ունիս կանգնած, որովհետեւ զուն հայութեան տառապանքին ու հերոսութեան մաքար խոտացամն էիր:

Իսկ վաղը, երբ Ազատ Հայաստանի արեւը ծաղիք, մէնք քու անիւններդ մասունքներու պէս կը հաւաքնինք, կը տանինք անոր սահմաններէն ներս ու կը կանգնեցնենք քեզ մարմար յուշարձան մը, որի արժանի զարձար քու ամբողջ կեանքով:

«ՀԱՅՐՆԵՆԻՔ» օրարերը, 15 Մարտ 1919:

## ԱՏԵՓԱՆ ԶՈՐԵԱՆ (Ռուսով)

Անխնայ հարուածները կ'իջնան իրարու ետեւէ :

Իբրև թէ բաւական չէին այն բազմաթիւ եւ անփոխարինելի զոհերը, որ տուաւ հայ ժողովութիւնը այս պատերազմի ընթացքին, մարտի դաշտի մէջ կամ թրբական բանակերուն եւ ափսորի երկարաձիգ ճամբաներուն վրայ, — հիւանդութիւնն ալ պիտի զար իր նախճանիք զործել :

Կորուսաը, որ կունենայ Հ. Յ. Դաշնակցութիւնը, յանձին Ռուսովմի, անփոխարինելի է եւ Հայաստանի վերածնութեան այս օրերուն՝ հայ ժողովութիւնն հասած մեծ հարուած մը :

Ռուսովմը սահմանափակ չըթանի մը միայն ծանօթ եղած է : Ետա հայեր չեն ճանչնար զայն եւ հետեւարար չպիտի դդան, թէ ինչ մեծ կորուստ է որ կունենանք վաստահարար այս զործիչի մահով :

Զօրեան կը պատկանի մեր մէջ ա'յն սերունդին, որոնք ԳՈՒՇԵԼ միայն զիտցած են զալտիկ կերպով եւ շատ քիչ, զրեթէ բնաւ երեւցած չեն հրապարակի վրայ :

Գործին նուիրուած այս Մեծ Հայը ժամանակ չունեցաւ հրապարակագրութեամբ զրադելու, թերթերու կամ զրքերու մէջ իր անունն ստորագրելու : Ոչ աշ բեմերէն երեւցաւ ան այնչափ յաճախ, որ կարենայինք ըսել, թէ հրապարակախօս է :

Յեղափոխական ներքին եւ դժուարին աշխատանքն էր միայն, որ գոհացում կու տար այդ մեծ մտքին : Անկէ դուրս, ամէն ինչ դիւրին էր, կը խորհէր ան, եւ իւրաքանչիւր ընկերոջ ալ կարողութեան սահմանին մէջ կ'իյնար :

Հպարտութիւնը չէր, որ այսպիսով կը խօսէր համեստութեան տիպար այս աննման զործիչին մէջ, ինք չէր ընտրած յեղափոխական ներքին կազմակերպիչի ընդարձակ եւ պատասխանատու զործը . կեանքը դէպի այդ ուղղութեամբ մզած էր զինքը, պահանջը այդ զերը տուած էր իրեն :

Օժտուած յեղափոխական կազմակերպիչի աննման միքազ, ան եղաւ Դաշնակցութեան գրեթէ բոլոր մեծ ճենարկներուն ծրագրող եւ մզող ուժը՝ իր անձը պահելով միշտ ստուերի մէջ :

Ներկայացնել ջանալ այս բեղմնաւոր կեանքի զոնէ զիխաւոր գիծերը, պիտի նշանակէր ընել ամբողջ պատմութիւնը Հ. Յ. Դաշնակցութեան, որուն հետ այնչափ սերտորէն հիւսուած է իր կեանքը :

Յիշենք միայն զիխաւորները իր կեանքի վերջին դրուազներէն եւ պազայ պատմագրին թողունք անոր ամբողջական զործի զնահատումն ու արձանագրութիւնը, եթէ այդ հսկայ աշխատանքին ընդունակ մարդ ունենաք, եթէ կարելի ըլլայ երեւան բերել անոր ամբողջ զործերը :

1905ի հայտթաթարը ընդհարումներուն, ինք կովկաս էր և Դաշնակցութեանը անմահացնող այս շարժման մէջ ունեցած է զեկավարողի արժանի գեր:

1907ի Պարսկաստանի յեղափոխական շարժումներուն ետեւը նոր յնպէս կ'երեւի հրոր ձեռքը մեր ամէն տեղ հասնող Ռուսականին: Ան դժուարոր ծրագրողը և իրականացնողն էր այդ յիշատակելի շարժումին՝ իր փորձ խորհրդական նվիրեմի, Քենիքի և բնկերներուն:

Իր անունը շլստեցաւ, ասկայն հայ հասարակութիւնը մնաց անծանօթ յեղափոխական այս հսկային:

1908ի հոչակատոր Օսմանեան ասհմանադրութեամբ դործունէութեան նոր ասպարզգ բացուեցաւ զործի սիրահար մեր սիրելի Ռուսականին, որ իր բեւ տեսուչ Կարինի ազգային վարժարաններու, կատարեց կրթական մեծ աշխատանք, միանգամայն պատրաստելով հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան գործը և հսկելով անոր վրայ:

1911ին, Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովին կ'ընտրուէր անդամ այն «զաղանի մարմնին», որ քաղաքական այն օրուան անստուգութիւնները աչքի առաջ ունենալով, պիտի հսկէր ժողովուրդի պաշտպանութեան:

Այդ մարմնի անդամներէն երկրորդն էր Սերաստացի անդերազանցելի ուղարկել Մուրատը, արժանի բնկերակեցը մարտիկի համրաւ չունեցող բայց մարտիկներ Կերաող յեղափոխական մեծ զարգես Ռուսականին:

Պատերազմի բռնկումին, ան արդէն կոմիտաս էր, յծուած կամաւորական գունդերու կազմակերպման և հայ զեկալիք մարմններու խորհրդատուի իրեն պատշաճող պաշտօնին:

Երբ, հակառակ բոլորի անդամակալութեան, պատերազմը կ'երկարէր, կամաւորական շարժումը կը կորսնցնէր իր սկզբնական թափը, Ռուսական թողուր Կովկասը և կ'անցնէր Մոսկուա ու Փեթրոկրատ, հայ դատի պրոպագանին համար աշխատելու ուսւական այդ կեղորններուն մէջ:

Հայ դատի յաջող լուծամն ապահովելու համար, տիրող դժոնակ պայտ մաններուն մէջ, պէտք էր փորձել ամէն միջոց, պէտք էր զարնել ամէն դուռ, ա'յս էր Ռուսականին:

1917ի վերջերը, ան անցաւ սրանահնաւեան երկիրները, ուր մեծ զարկ տուաւ հայանպատաս շարժման և Մթոքհով գումարուելիք սոցիալիստական համագումարին առջև ալ զօրաւոր կերպով պաշտպանելու համար հայկական դատը, ի զործ զրաւ մեծ աշխատանք:

Գերմանիա, Երեւութապէս անդամնելի և իր զօրութեան զադաթնակէտին էր այդ օրերուն. և Ռուսական շատ կը վախնար, որ մի՛ զուցէ փոխագարձ զիջողութեամբ հաշտութիւն մը կայանայ և Գերմանիա յաջողի պահպաններու համար հայկական դատը, անզամ մըն ալ զո՞ւ ըլլանիք անսիրտ դիմանագիտութեան:

«Հոսանքը մեղ քշում է և դեռ քշելու է. աշխատենք ժայռերի չզարնուել» կը զրէր Ռուսական Մթոքհովմէն 1917 Դեկտեմբերին և կը պատրաստուէր վերադառնալ Կոմիտաս, ուր քաղաքական նոր յեղաշրջումներ անհրաժեշտ կը դարձնէին իր ներկայութիւնը:

Անցաւ Փեթոկրատ, յաջողեցաւ իր հետ առնել դօքավար Բագրատունին, որ բոլչելիկեան կառավարութիւնը բանտարկած էր իրրեւ. Քերենսկիի կուսակցութեան պատկանող զինուորական, և փոխական գործի Կոմիսար :

Կուսի տաք օրերուն, մասնակցեցաւ Պարուի կոիներուն և քաղաքի իշխալէն վերջ անցաւ հիմնային Պարսկաստան, ուր սկսաւ, Բաղրատունիի հետ և անդիմական մժանդակութեամբ, նոր բանակ կազմակերպել, օգնութեան փոխարար համար պայքարող Կոմիկասին :

Անկէ վերջ, ա'լ չլսեցինք իրմէ :

Վերջին տարիներու անզույ և չարքաչ աշխատանքը և հայ տառապանքը արդեօք ընկճեցի՞ն այդ անրնկճելին, որ հիւանդացաւ և ա'լ ոտքի չկանգնեցաւ :

Յարդա՞նք քեզ, հայ ժողովուրդի արժանի՛ դաւակ :

Դուն ապրեցար կեանքը ինչպէս որ պէտք էր .— տիրելով անոր քաջի՛ պէս :

Քու կեանքդ պիտի ըլլայ առաջնորդը հայ նոր սերունդին, քու յեղափոխական սաներուդ, քու կըտակը բնիկերներուդ՝ որոնք կ'ողբան քու անդարձանելի և վաղաժամ կորուսաղ և որբի՛ մը պէս կու լան քու թարմ չի րիմիդ առջեւ. ծնրադիր :

Խմբագրական «ՀԱՅԻՆԵԼԻՔ» օրաբերքի, 15 Մարտ 1919

## ԱՐԱՍՈՒՄԸ

Այսօր բոլորում է ուղիղ մի տարին այն օրից, երբ մեր կուսակցութիւնը դրկուեց իր գեկավար ու ռահվիրայ Ռոստոմից։ Այս ծանր ու զածան տարուայ ընթացքում աւելի քան երրեք դրացուել է նրա բացակայութիւնը մեր գեկավարութեան շարքերում, զգացուել է նրա հեղինակաւոր խօսքի, կամքի ու բարոյականի թափուր մնացած տեղը։ Խոստոմի հետ միասին գերեզմանի իջաւ նաև նրա հաւատարիմ ընկերը, սիրելի Արամը, Հայաստանի անկախութիւնը զարդող զեկավարը։

Հ. Յ. Դաշնակցութիւնը երեսուն տարի անընդհատ ու շարունակ վարել է իր յեղափոխական գործը՝ մասսաներին առաջնորդելով, քաջերին առաջ քչելով և մոյլերին քաջալերելով գէպի յեղափոխութեան ու ազատութեան Գողգոթան։ Եւ իր առաջին շարքում միշտ ունեցել է Քրիստուափորին, Սիմէոնին ու Ռոստոմին — զործի ու զայտափարի այդ անրաժան արիադան։

Վերջինը գերեզման իջաւ հենց այն մաժենտին, երբ հայ յեղափոխութիւնը հասաւ իր յաղթանակի որոշ փուլին՝ Հայաստանի անկախութեան իրագործմանը, եւ երբ մեր կուսակցութեան առաջ բացուում էր քաղաքական գործունէութեան մի նոր ասպարէց՝ հաստատել ու ամրապնդել հայ յեղափոխական աշխատաւորութեան արիանց-քրատինքով ձևոք բերուած ազատութիւնը, ստեղծելով ազատ ու զեմոկրատիկ կարգեր և ընչազոր րկ զասակարգին համապատասխան պետական սոցիալական կեանքի ձեւեր։

Դժուար ու անհնարին է տալ Ռոստոմի կեանքի ու զործի ամրողջական պատկերն ու յեղափոխական լրիւ արժէքը, նոյնիսկ նրա մահուանից մի տարի յետոյ, — այնքան նրա դաւանած դադափարներն ու կատարած աշխատանքները մեծ են եւ նրա գէմքը՝ իրբեն Մեծ Արեւելացու՝ վիթիարի։ Հարկաւոր են տարիներ և նոյնիսկ տասնեակ տարիներ, որպէսզի պատմազիրը կոռուի ու պայքարի այժմէականութիւնից ազատազրուելով, կարող լինի տալ Ռոստոմի ամրողջական գէմքը, որոշել նրա տեղն ու զիրքը ոչ միայն հայ մասսաների ազատազրման գործում, այլև Արեւելքի յեղափոխութեան պատմութեան մէջ։

Այսօր, երբ Արեւելքը շարժումների ու բախումների շրջանն է ապրում, երբ յեղափոխական եւ Հակայեղափոխական ուժերը կուտակուած միմեանց գէմք, սկիզբն են զնում ապազայի քաղաքական կեանքին, Ռոստոմի հեղինակաւոր դէմքը աւելի քան երրեք անհրաժեշտ էր Արեւելքի այդ շարժման համար, նրան իսկական ու յեղափոխական հունի մէջ մացնելու, նրա ուղիղ ու պարզ զործելակերպը որոշելու համար։

Նաեւ մեր կուսակցութեան համար, երբ մեր շարքերը թուլացել են յեղափոխական թափի բացակայութիւնից, երբ մեր բարոյական մակարդակն ընկել է, երբ մեր անձնազոհութեան ու անհատական իրախութեան օրի-

նակները պակասել են, հարկաւոր էր նա, որի խօսքը յեղափոխականի համար նուիրական մեմոնտ էր և որի անձը՝ բարոյականի սիմբոլ։ Այսօր, մի տարուց յետոյ, աւելի ծանր է նրա կորուսափ ցաւը, քան նրա մահուան առաջին օրերին, երբ վշտացած զգացմունքը հնարաւորութիւն չէր տալիս զիտակցելու՝ թէ Ո՞ւմ և Ե՞րբ կորցրինք։

Այս տիսուր տարեղարձի օրերին խոնարհուելով նրա շիրիմի առաջ, Հ. Յ. Դաշնակցութիւնը ուխտում է մնալ հաւատարիմ հիմնադիր Ռոստոմի ընդդամն յեղափոխական ճանապարհին։

«ԱՇԽԱՏԱԽՈՐ» (Երևան), — 18 Յունիուր 1920

## ՀԱՅ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԽՐՆՃԲ

1919 թուի Յունուար 18ին Տփխիսում իր մահկանացուն կնքեց մեր արինոտ գոյամարտի և յեղափոխական աննախընթաց պոռթկումների ամենասկանաւոր սիւներից մէկը՝ Ռուսումը:

Հայ բնշագուրի զեմոկրատիայի մարմացած խիզն էր նա, եւ յեղափոխութեան կարմիր երախից փրթած այդ խիզնը, իր յաղթ թիկունքի յետեւը թուղած երեսունամելայ աղդային յեղափոխական աննահանջ պայքարի փոթորիկներն ու տաղնապները, միշտ մնաց մաքուր ու անրիծ, միշտ անսասան ու կորովի, միշտ անդասաման մէր ցեղի ազգային քաղաքական ու խտին, միշտ հաւատարիմ՝ հայ աշխատաւորութեան յեղափոխական սրբութիւններին:

Մի եղակի ու զժուարին, բայց և վսեմ ու հոգեթով առաքելութիւն էր վիճակուել Դաշնակցութեան յարկի տակ Ռուսառմին՝ մահաւանդ Քրիստովորից ու Սիմէռնից յետոյ: Ռուսական ու տաճկական բռնակարութիւնների յարուցած ամէնազաժան հարածանքներն ու բռնութիւնները կուսակցութիւնը զրել էին կեանքի ու մահու չափ նշանակալից խնդիրների առաջ. մէր աւագ ընկերների խոչոր մասը բանտերում էր կամ աստանդական. յուսարքումի մի յորդ ալիք ներս էր խուժել մէր կուսակցութեան շարքերը. Ռուսառմին եւ միայն նրան էր վիճակուած՝ այս ծանր փորձութեանց օրերը զիւմադրաւել, եւ նա յեղափոխական ուսուցչին վայել տոկունութեամբ ու անվհատ գիմաւորեց Դաշնակցութեան մհատաններորդ ժամկին:

Ռուսառմի մահը ամէնահուժկու ուրագանն էր, որ պայթեց Դաշնակցութեան եւ հայ աշխատաւորութեան զլիքին անսպասելիօրէն ճիշդ. այն ժամին՝ երբ Հայաստանն ու հայ ժողովուրդը լծուած կեանքի եւ մահու տաղնապալից պայքարին՝ անցել էին մէր պատմութեան ամէնէնի դաժան ու սոսկումներով լի ճանապարհը եւ միացեալ ու անկախ հայրենիքի հիմները խարըսիւել, մանաւանդ՝ երբ իր յեղափոխական հասարակական փոթորկալից կեանքի շրջանից յետոյ՝ Ռուսառմը զնում էր իր երազած անկախ հայաստանը տեսնելու եւ այնտեղ աշխատելու, որի կէս ճանապարհին փակեց յաւէտ իր իմացական աչքերը:

Երեսուն տարի շարունակ, Սիմէռնի ու Քրիստովորի կենդանութեան օրօք թէ մահուանից յետոյ, Ռուսառմը Դաշնակցութեան երկաթէ քոչերը հագած՝ շրջեց երկրէ երկիր, անցաւ մէր պատմական հայրենիքի համարեարոլոր անկիւնները՝ ամէնուրեք ուր արոփում էր հայ ժողովրդի մէկ փոքրաթիւ հատուածի սիրտը, եւ որպէս մէր ազատամարտի անյազթահարելի քուրմը՝ անդագրում քարողեց, հրավառուց ու մարդեց մի ամրող յեղափոխական սերունդ եւ իր երկու անփոխարինելի զինակիրների պէս՝ մի զիւ-

Թական ու վսեմ մահով ընկաւ պարտքի ճանապարհին :

Վերջին քառորդ զարու մեր հանրային կեանքի ու կամեցողութեան, մեր անկումի ու բարձրացման մէջ՝ թէ՛ մեր ցեղի զոյամարտի եւ թէ՛ կրր-թական կուլտուրական ճակատներում տեղի չի ունեցել մի նշանաւոր երեւոյթ, որի հետ այս կամ այն կերպ կապուած չլինի թուստոմի անոնք :

Զնայած թուստոմի այսքան բեզուն ու հարուստ կեանքին, նա անահ-մանօրէն համեստ էր պարզ. իր հանրական ողորումներին ծնունդ ու թր-ոխք առուղ դեմոկրատիայի նման, հասարակ ու չարքաշ, միշտ լծուած ուն ու դժուարին աշխատանքի՝ անտրտունջ ու անազմուկ: Իւր ողջ կեանքում երբեք հետամուտ չեղաւ մեծ պաշտօնների. կուսակցաթեան յարկի տակ երբեք չջանաց պատասխանատու. մարմինների մէջ մտնելու: Մեծ պաշտօն-ներից ու իշխանութեան աթոռներից միշտ հեռու, թուստոմը սակայն իր ուսերի վրայ էր տանում կուսակցական ամենապատասխանատու աշխատանք-ները՝ այդու մարմիններին ոգեւորում ու նոր թափով դործի մզում:

Ոչ ոք Քրիստոֆորից ու Սիմէնից յետոյ՝ մեր կուսակցութեան մէջ չունէր այնպիսի հեղինակութիւն ու բարոյական յեղափոխական կշիռ՝ ինչ-պէս թուստոմը եւ նա ըստ ամենայնի արժանի էր դրան:

Խնչո՞վ էր զի՞թում ու համակում թուստոմը իր յեղափոխական ընկեր-ների սրտերը. նա չունէր հոկտորական չնորհք, արտաքին շուք, խօսքի պեր-ճանք, ոչ էլ յախուռն տեմպերամենու. խօսում էր քիչ, բայց խօսելիս՝ իր տրամարանական յատակ, խորը մատանումների մէջ կարողանում էր դնել իր անսահման մաքուր հոդին, իր անպարփակելի անկեղծութիւնը, իր վսեմ զաղափարների հիմքում նստած աներեր հաւատք: Խսկ երբ այս երեք խոչոր ունակութիւնները լծորդում էին թուստոմի վերյուծող մտքի հետ՝ նա զառ-նում էր մարզպարէ, զի՞թող, հմայող ու զերող՝ իր պաշտպանած զաղափար-ների խորը անկեղծութեամբ ելեկտրականացած:

Որպէս յեղափոխական ուսուցիչ թուստոմը աւելի հաւատում՝ քան նա-նաչում էր մարզկանց: Նրա չութեան մէջ մարզը հետամտելու, տնտղելու եւ ամրողապէս ընդգրկելու ձգտում չկար՝ կամ եթէ կար թոյլ էր: Ինքը ամրողապէս կենդանի գործ էր եւ զրաւէչ օրինակ իր քարոզած զաղափար-ների եւ զրանով էլ ներշնչում, կապում էր իր հետ եւ իր յետելից քաշում ու տանում էր իր սաներին:

Թուստոմը իր յեղափոխական ընդգրումներն ու հանրական կամքը շատ յաճախ մեր երկրի ու ժողովրդի սահմաններից զորս է արտայայտել ու վեր ածել այն իր կենդանի մասնակցութեամբ իրական զործի: Պարսկական յե-ղափոխութեան մէջ, առանձնապէս Ատրպատականի շրջանում, թուստոմ իր պատուաւոր տեղն ունի թէ՛ որպէս անմիջական մարտնչող եւ թէ որպէս զե-կափարող ու կազմակերպող: Միջցեղային ամենաբարի յարաբերութիւնների եւ միջկուսակցական համերաշխ աշխատանքների ամենաջերմ պաշտպանն էր նա եւ այդ ուղղութեամբ իր ողջ կեանքում աշխատեց ու կապէր հաստատեց թէ՛ մեր հարեւանների մտաւորականութեան եւ թէ կուսակցական ականա-ւոր ներկայացուցիչների հետ, որոնք անսահման յարզանքով ու հաւատով էին վերաբերում նրան:

Չորս տարի է անցել միստումի ժաշուան օքից եւ չորս տարուայ ընթացքում թէեւ խոշոր փոխորիկներ են անցել մեր հայրենիքի, ժողովրդի ու կոսակցութեան վրայով՝ սակայն միստումի զաղադի առաջ մեր յեղափոխական շարքերի լուս վճռոր մնացել է անխախտ։ Վիտոչի բարձունքին ընկած Քրիստովորի յեղափոխական նշխարիները Բուլղարիայից, Սիմեոնի, Միստումի և Նըանց Հետ նաև մեր բոլոր ազգային զործիչների նշխարները Խոջիվանքի գերեզմանատնից պէտք է փոխազրել Հայաստան։ Եւ կը փոխադըրուեն՝ Հենց որ մեր ծուատուած հայրենիքի ու տանջուած ժողովրդի այսօրուայ լուս ու զսպուած զայրոյթը վեր ածուի յազդական երդի։

«ՆՈՐ ԿԵԱՆՔ» շաբաթաթերթ, Թեհրան, Փետր. 1923, թիւ 60։

## Ա Ռ Ա Զ Ն Ո Ր Դ Ը

Պատմակչիու եղան Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիր Երբորդութեան գերն ու առաքելութիւնը հայոց նորագոյն պատմութեան, հայ ազատազրական շարժման ծաւալման ու զեկալարման մէջ, — ՔրիՍՏԱԿՈՒՄ, ՍԻՄՈՆ և ԱՌՈՍՈՄ :

Երբորդութեան բազկացուցիչ եւ լրացուցիչ այս երեք անբաժան անունները յեղափոխական տիտաննեան գէմքեր չեն միայն, այլեւ անմեռանելի խորհրդանիշներ են :

Խորհրդանիշ՝ յեղափոխական հայութեան, Հայ Յեղափոխութեան մարդակերտ, ազգակերտ ու հայրենակերտ սիրանքին։ Խորհրդանիշ՝ Հայ Ժողովորդի հաղաքական, ընկերային ու յեղափոխական զարթօնքին, մարտունակ ու վերանորուգ հայութեան հայտակերտումին, իրբեւ ինքնաճանաչ ու ինքնակալ պետական ազգ։

Եւ զուր չէ, որ մէր շարքերուն ու նաեւ ազգայնօրէն առողջ՝ համայն հայութեան համար, Երբորդութեան մէջ եւ երեք հաւասարներուն մէջ առաջինը՝ Քրիստոափոր Սիբայէլեան կը խորհրդանչէր Հ. Յ. Դաշնակցութեան ՄԻՏՔԲ, Երկրորդը՝ Սիմոն Զաւարեան կը խորհրդանչէր անոր ԽԻՂՃԲ, եւ Երրորդը նոյն հաւասարութեան մէջ՝ Խոստոմ Զօրեան՝ Դաշնակցութեան ԿԱՄՔԲ :

Միտք, խլիզն եւ կամք, — ահա՞ Հայ Յեղափոխութեան բարոյական, մարդկային ու ազգային կերպարը կարկառող եռավիճը, ազրիւրը հայկազնաց ոպիի կենսական թոփչքին։

Այս եռավիճին մէջ ամէնէն ամբակուոը սակայն եղաւ Խոստոմը, ո՞չ թէ անոր համար լոկ, որ ամէնէն երկարակնացը եղաւ (բախտի խնդիր), այլ անոր համար, որ եղաւ ամենաներկան (ներգործութեան խնդիր)։

Եթէ Քրիստոափոր հոգիները կը վարէր իր իմացական հմայքով ու ոգեկան շաղապատումով եւ Զաւարեան իր մարզաքական շունչով ու նախանձայուգութեամբ, Խոստոմ կողենչէր իր պարզութեամբ, իր ողջախոհութեամբ ու առինքնող կորովով։

Երբորդութեան մէջ ամէնէն պարզն էր, անտարակոյս, իր խառնուածքով ու յարաբերական կեանքով, նաեւ ամէնէն համեստն էր, իր արտաքին ու ներքին փայլով։ Եթէ ամէնէն սակաւապէտը չէր, անպայման ամէնէն սակաւախօսն էր, նոյնիսկ ամէնէն սակաւագիրն էր, սակայն միաժամանակ ամէնէն զործօն, այլեւ ներգործօն նկարագիրն էր ան։

Սիեւնյն Երբորդութեան մէջ ամենամատչելին էր ան եւ ամենահասը նոյն ատեն, սակայն, հակառակ այս իրողութեան, անոր անձին ու զործին հմայքը չմաշեցաւ երեք, այլ, ընդհակառակն, հետզհետէ աւելի ամեցաւ

ու վարարեց յեղափոխական յաջորդական սերունդները:

Երրորդութեան ամէնէն սակաւախօսն ու սակաւագիրն էր թէեւ, սակայն նոյնքան պերճախօսն ու նոյնքան տիրական էր իր շունչը, չնորհիւ իր լուրջեան, լուռ, այլ յարածուն կերպով ծաւալուն իր գործունէութեան, կազմակերպական չնորհին ու հաղորդականութեան:

Հ. Յ. Դաշնակցութեան առաջին երեսնամեակի պատմութեան մէջ, առաւել կամ նուազ կարեւորութեամբ, շատ քիչ գործեր կան, զորս կարելի ըլլայ կապել ու զզակի իր անունին թէ՛ իրբեւ յլացում և թէ՛ իրբեւ իրացում:

Սակայն նոյն երեսնամեակի ընթացքին Դաշնակցութեան յեղափոխական ձևոնարկներուն մէջ հազուադէպ են անոնք, որ ուղղակի կամ անուղղակի դրոշմը չեն կրեր Խոստումին:

Դրոշմ ունեցող մեծերէն էր ան, իր պարզութեան մէջ՝ վսիմ, իր հմատութեան մէջ՝ պատկառազգու, իր լուութեան մէջ՝ պերճախօս և իր անձի օրինակին մէջ՝ անխոցելի:

Բեմի մարզ չէր, յետսարեմի՛ մարզն էր, բեմավա՛րն էր:

Հոն, ուր ներկայ էր Խոստում, — և ան ներկայ էր ամէնուրեք, — հոն իսկոյն կը զադքէին բոլոր վէճերը, կը հալչին բոլոր քէներն ու կիրքերը եւ բոլորին ակնարկը կը սեւեռուէր միակ նշանակչուի մը, — զործի:

Երրորդութեան մէջ ամէնէն իրապաշտն էր ան, ամէնէն գործնապաշտն ու գործունեան հաւանաբար. սակայն մաքրամաքուր ու լայնահուն գաղափարապաշտութեան մը Փոնին վրայ վսիմացեալ իրապաշտութիւն մըն էր իրը, որ ողի կը ներշնչէր եւ անձնուիրութեան կը հրաւիրէր:

Կամքերու կրանիչն էր ան, անզուգական կազմակերպիչը յեղափոխական կամաւոր բանակին եւ անոր անուսազիր զօրապետը անձնուէր ու արի:

Պարզ ու պայծառ ճակատով, պարզ ու պայծառ հոգիով, պարզ ու պայծառ վաստակով եւ աւելի քան պայծառ յիշատակով առաջնորդը հայկազնաց անմեռ ցեղին:

